



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

5 Երանելի Ներսես Լամբրոնացու Ներբողն Աստուծոյ Ամենասուրբ Հոգու Գալստեան մասին

ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆԵՐ

22 ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ Յաղագս հանդերձելոյ (Չարունակութիւն)

45 ԱՐԷԼ ՎԱՐՂԱՊԵՏ ՕՂՈՒԳԵԱՆ Համառօտ ակնարկ Հայ Եկեղեցոյ վարդապետական աստուածաբանութեան գրականութեան

72 ՄԵՍՐՈՊ ԶԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը (Չարունակութիւն)

95 ՊԱՐՈՅՐ ՍՈՒՐԱԴԵԱՆ Դաւանական հանդուրժողութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում

109 ՅԱԿՈԲ ԶԵՆՍԵԵԱՆ Հայ Եկեղեցու աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում (Չարունակութիւն)

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

134 ՄԵՍՐՈՊ ԶԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Ս. Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը» Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

136 Ա. Ամենասուրբ Երրորդութեան մասին

138 Բ. Սուրբ Երրորդութեան Անձերի մասին

150 ԺԶ. Մարտիրոսների մասին

154 ԺԹ. Յորդորակ խոստովանական ապաշխարութեան

163 Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ասած աղօթքը, երբ մէկ դրոգայթի մէջ է ընկնում

165 ՅԱԿՈԲ ԶԵՆՍԵԵԱՆ Ս. Բարսեղ Կեսարացու՝ Սուրբ Հոգուն նուիրուած ճառի հայերէն թարգմանութիւնը

174 Սուրբ Բարսեղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկացիոց ընդդէմ այնոցիկ...

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՄԵԿՆՈՒԹՅԱՆԵՐ

216 ՅԱԿՈԲ ԶԵՆՍԵԵԱՆ Անանիա Սանահնեցու «Մատթի մեկնութիւնը»

233 Անանիայի հայոց վարդապետի՝ ի խնդրոյ...

Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ
Արամեան

Պատ. քարտուղար՝
Տիգրան
Խաչատրեան

Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս Կիզողեան

Վերստուգող
սրբագրիչ՝
Շուշան Վարդանեան

Նկարիչ՝
Արմէն Զիրքչեան

ՎԱՐՁ ՍՐԲՈՑ

- 262 Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետի, նրա հետ եւ՝ սուրբ Մարուգէ ճգնաւորի վարքը
- 283 Սուրբ Բարսեղ Կեսարացու վարքը
- 295 Սուրբ Յովհաննէս Ոսկեբերանի վարքը

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

- 306 Թամար Սոկացի
- 309 Անդրեաս քահանայ
- 314 Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան

ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

- 318 ՎԻԳԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ Թուային խորհրդաբանութիւնը խորանների մեկնութիւններում
- 324 ԼԵՒՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ Միջնադարեան շարականը մշակութաբանական տեսանկիւնից
- 335 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ Պատկերասոյց գիրք (շարունակութիւն)



ԳԱՆՁԱՍԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
375019, ԵՐԵՒԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24 Գ
հեռ. 271520

ԵՐԵՒԱՆ 1993

**Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ.Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. ՊԱՐԳԵԻԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱԶՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ**

**ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐԻՈՒՄ Է
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱԶՆՈՐԴ
Տ. ՎԱԶԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ**

Ներսէս Լամբրոնացին (1153-1198 թթ.) հայ Եկեղեցու ակնառու դէմքերից է: Նա յայտնի է ոչ միայն որպէս ազգային-եկեղեցական գործիչ, այլ նաեւ՝ որպէս հմուտ մատենագիր, որի մատենագրական ժառանգութիւնը մեծ ներդրում է աստուածաբանական եւ մեկնողական գրականութեան մէջ¹:

Լամբրոնացու գրական ժառանգութեան մէջ մեծ տեղ են զբաղեցնում ներբողները, որոնց մէջ առանձնանում է Հոգեգալստեանը նուիրում ներբողը՝ իր գործնական կիրառութեամբ եւ Հայ Եկեղեցու Մաշտոցում² իր առանձնայատուկ դիրքով: Մաշտոցի մէջ մուտք գործած ընթերցումներից ամենատեղաւորն է սա, որին կարող է մօտենալ միայն Եղիշէ վարդապետի՝ Այլակերպութեանը նուիրում ճառը:


Այս ներբողում «ներբողաբանն ի վեր կը հանէ մարդկային ազգի փրկագործութեան խորհուրդն ի ձեռն Որդոյ եւ յետ այնորիկ գալստեան Սուրբ Հոգոյն... Մտքի յափշտակութեան եւ հոգւոյ երկնաւայաց թռիչներու մէջ խորասուզում անձն է, որ կը գրէ ոգով եւ ափսոսով՝ իր գրութեան իւրաքանչիւր տողին նորօրինակ կենդանութիւն մը տալով կարծես»³: Այս պատճառով Գ. Յակոբեանը չի վարանել իր մատենագրութեան մէջ Լամբրոնացու սոյն ներբողը (միւս ներբողների հետ) տեղադրել չափածոյ ստեղծագործութիւնների շարքում՝ համարելով այն արձակ բանաստեղծութիւն⁴:

Մենք հեռու ենք սոյն ներբողը բնագրագիտական, բանասիրական կամ վարդապետական վերլուծման ենթարկելուց: Արդէն իսկ Սմբատ եպիսկոպոսի եւ Գ. Յակոբեանի մէջբերումների եւ վաղարշապատի Մաշտոցի համապատասխան հատումների համեմատութիւնից զգացում է, որ գոյութիւն ունեն բնագրային լուրջ տարբերութիւններ: Ուստի չի կարելի սոյն գործը մանրամասն գիտական քննութեան ենթարկել՝ առանց վերջինիս քննական բնագիրն ունենալու: Մեր մօտեցումը Հոգեգալստեան ներբողի նկատմամբ զուտ գործնական է՝ հիմնուած Եկեղեցու ծիսակարգում իր կիրառութեամբ. այն ընթերցում է Հոգեգալստեան կիրակի օրը՝ երեկոյեան ժամերգութեան ընթացքում (այժմ գրեթէ չի կարդացւում իր ծաւալի եւ գրաբար տեքստի պատճառով): Ուստի մեր նպատակն է՝ սոյն տեքստի արեւելահայերէն թարգմանութեամբ փորձել վերակենդանացնել բանաստեղծական այս անզուգական գործի կիրառութիւնը մեր Եկեղեցում:

Թարգմանութիւնը կատարուած է ըստ վերոյիշեալ վաղարշապատեան Մաշտոցի:

Միքայել վրդ. Աջապահեան

1 Լամբրոնացու կեանքի եւ մատենագրական վաստակի լիարժէք քննութիւնը տես Սմբատ եպիս. Մատենութեան, «Ներսէս Լամբրոնացի», Անթիլիաս, 1981. նաեւ՝ Գրիգոր Յակոբեան, «Ներսէս Լամբրոնացի», Երեւան, 1971:
2 Տես «Մաշտոց գիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ», վաղարշապատ, 1872, էջ 466-474:
3 Տես Սմբատ եպիս. Մատենութեան, «Ներսէս Լամբրոնացի», էջ 149-150:
4 Տես Գ. Յակոբեան, «Ներսէս Լամբրոնացի», էջ 205-208:



ԵՐԱՆԵԼԻ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՆԵՐԲՈՂՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

Սրտիս բաղձանքի սիրուց ստիպում եմ իմ աղքատ մտքի խօսքերը նուիրել այս մեծ օրուան: Իմ տկարութեան համար աղօթքի պարգեւներ հանգանակեցէք, հանդիսադիր ժողովուրդ:

Տուէք ինձ այսօր աշխարհին տրուած շնորհները, որպէսզի իմ անձն անվեհերութեամբ նետեմ Աստուծոյ գիտութեան իմաստների խորքերը եւ սեղանատր լինեմ հոգիները պարարտացնող անապական կերակրին:

Այսօր երկրի վրայ առատ ձիրք հեղուեց. մաղթենք, որ նրա Աշոյի-ներից ճառագայթի մեր մտքի հայեացքների մէջ եւ առաջնորդի աստուածային խօսքերին հետեւելու շաւիղներով:

Ո՛վ սքանչելիք, այն, ինչ աղօստ ակնարկութեամբ նկատել էին ցանկանում հրեշտակները, այսօր, շնորհով իջնելով ստորին գաւառները, սփռուեց:

Եւ ո՛վ է, որ չի յուսայ Նրա պարգեւները վայելել:

Սուրբ Հոգին, Ում փափագելով՝ բերանաբաց մնացին սերովբէներն ու քերովբէները եւ Նրա որպիսութիւնը չկարողացան նկատել, այսօր, իրապէս իջնելով, մարդկանց յագեցրեց իր անճառ խորհուրդների գիտութեամբ:

Որոնց հետ եւ ես եմ սպասուորում՝ Նրա առատութիւնից իմաստուն կաթիլներ ընդունելու համար:

Արդարեւ, մարդն իր ձեռքը երկարեց կենաց ծառին, որից նախկինում հեռու վաճուեց, վերցրեց, կերաւ եւ անձին յաւիտենական կենդանութիւն սեփականացրեց:

Եւ ո՛վ է այս շնորհի միջնորդն ու մատակարարը, ուրիշ ո՛վ, եթէ ոչ մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ կենաքը, լոյսը, ճանապարհը, դուռը, հովիւրը, քահանայապետը, միջնորդը, բարեխօսը, յոյսը, կարապետը. Ով ինքնիշխան զօրութեամբ անցաւ երկինքների երկինքներով եւ հրաշալի կերպով մտաւ վարագոյրի ներքին կողմը՝ անճառելի հիացմամբ եւ մեզ համար Հայր Աստուծոյ դիմաց բարեխօս դրեց այն առհաստիչեան, որ մարդկանցից է:

Ուստի փոխարէնն առատ պարգեւ վերցնելով՝ տարածեց երկրում, որից զմայլուելով՝ արբեցինք եւ նախամայր Եւայի տրտմութեան երկունքները յաւէտ մոռացանք:

Այսօր աշխարհի պատրանքների խաւարի մէջ ընկղմուածներս ընդունեցինք հոգիները պայծառացնող եւ դէպի անմահների երկիրն առաջնորդող իմանալի լոյսը:

Այսօր այն թախծութեան զգեստը, որն ընդունեցինք մեր հայր Ադամից, դէն նետեցինք, որովհետեւ նոր Ադամը մեզ զարդարեց ոսկեհոտ պաճուճանքով եւ պսակներով:

Այսօր սքանչելի հուրը, երկնաւոր բոցաճաճանչ նշոյլներով արտափայլելով երկրի վրայ, բորբոքուելով կիզեց մարդկանց միջից անէծքի մեղքի փուշն ու սաստիկ պատիժները:

Այսօր հրեղէն լեզուների բախտին արժանացած ազգը, որ անմիտ անասունների էր հաւասար, կրկին ստացաւ խօսքի շնորհը՝ պատկերակից գտնուելով իր Արարչին:

Այսօր Հոգու քաղցր ցօղի սաստիկ հնչիւնը որոտաց երկրի վրայ, եւ անէծքի բարբառը, որն Ադամի պատճառով շարժուեց նրա վրայ, օրհնութեամբ փոխանակուեց:

Այսօր անապականութեան անուշահոտ կնդրուկի բուրմուճքը, ծաւալուելով եւ մահուան մատախլապատ թանձրութեան ծուխը ցրելով, անմահութիւն հաստատեց:

Այսօր զգալի պատարագը, որին զգալի աշխարհն ուղարկեց դէպի իմանալի գաւառը, փոխարէնն առհաստիչեայ ընդունեց իմանալի Հոգուն, Որը սոյն զգալի տարրը նորոգեց աննիւթական Քաղաքի պատկերի ձեւով:

Ո՛վ երկնայինների եւ երկրայինների մեծ տուրեւտութեան շահ:

Որովհետեւ սրանք մարմին տուեցին եւ նրանցից վերցրին Հոգին. Ադամի տունը Քրիստոսին ընծայեց, եւ Աստուծոյ տունը Նրա փոխարէն մխիթարիչ Սուրբ Հոգով հաստուցեց:

Մարդիկ մարդուն տուեցին Աստծուն, եւ Աստուած Աստծուն տուեց մարդկութեանը:

Սա է տուրեւտութիւնը՝ Աստուծոյ արդարութեան քարոզը:

Նախ մեզանից՝ խաղաղութիւնն Քրիստոս, Ով, ցանկապատի միջնորմը քանդելով, երկուսին մէկ դարձրեց, եւ ապա՝ Աստուծոյ անետիքի հնչումը, որը խաղաղութիւն անտարանեց հեռաւորներից ու մերձաւորներից:

Նախապէս Որդու նուաճած բնութիւնը Հօր կամքը դէպի քաղցրութիւն դրդեց, եւ ապա, Հոգին գալով, երկրաւորներից երկնայինների հանդէսին խառնեց:

Նախ Քրիստոս, խաչի մահուանը հնազանդուելով, թշնամութեանն իր անձի մէջ նահանջի մատնեց, եւ ապա Հոգին, մեր տկարութեանը թիկունք կանգնելով, Հօր մօտ բարեխօսեց:

Աստուծոյ լայն խորհուրդն ու գիտութեան ընդարձակ առաւելութիւնն է երեւում, եղբայրներ, քանզի Նրա արդարութիւնը լեռներ են, իսկ իրաւունքները՝ բազում խորութիւններ, ինչպէս վկայեց մարգարէն:

Պօղոսը աշակերտներին մաղթում է ընդունել այս իմաստութեան հոգին, որ հիացնում է քննողներին եւ անելացնում Աստուծոյ հանդէպ փափագի իղձը:

Ինչի՞ համար էր Որդու մարմնանալը, եւ ինչո՞ւ մարմնանալու հետ չեղաւ աշխարհի փրկութիւնը... Ի՞նչ պատճառով է անպարտին անհրաժեշտ նախատիքի խաչը, եւ ինչո՞ւ դրանից յետոյ մարդիկ կատարեալ չեղան...

Ինչո՞ւ Որդու հետ շրջած եւ բնակուած աշակերտները տօգէտ մնացին եւ ի՞նչ պատճառով Հոգու իջնելով միայն, այնքան շնորհներով զարդարուելով, պսակուեցին...

Ինչո՞ւ Բրիտանիայի այնքան մեծամեծ նշանները ոչ մէկին չհամոզեցին, իսկ Պետրոսն այսօր մի ելոյթով երեք հազարին աշակերտ դարձրեց, որն արժի քննել և Աստուծոյ իմաստութեան գանձերը սրտի շտեմարաններում ամփոփել՝ կարողանալու համար նախ սրտով արդարութեան հաւատալ և ապա՝ բերանով փրկութիւնը խոստովանել...

Որովհետև փրկագործութեան եղանակը զօրութեամբ չէ, այլ՝ իրաւամբ ու արդարութեամբ:

Որպէսզի Աստուծոյ ամենակարող զօրութեան հետ նաև ամենաբաւ ողորմութիւնը հաստատուի երկնքում և երկրում:

Բանի որ Նա, Ով մարդուն իր բարեարութեան պատկերով բարի արարեց և նրան բանասրկուի նախանձից դաւաճանուած ու մտած տեսաւ, իրաւունքի արդարութեան համաձայն չկամեցա՛ւ խաբելութեամբ բռնուածին թողնել որսողի ձեռքում:

Ասաց համագոյական Բանին. «Իջի՛ր, հաղորդուի՛ր այն բնութեան հետ, որ բարու մէջ ստեղծեցինք. չի՞նի թէ բնատրապէս է բխում չարութեան այն ծովը, որ իմ առջև է բարդում:

Իմացի՛ր, որովհետև եթէ բնական կրքի համաձայն է տկարանում իմ օրէնքի նկատմամբ, անմեղ չէ պատուհասից, որը նա չափով լցնում է իր վրայ:

Իսկ եթէ բնութիւնից օտար ու եկամտու են այդ արկածները, խաբողին դատապարտի՛ր յանդիմանելով, իսկ նրան նորոգի՛ր ողորմութեամբ և գթութեամբ»:

Հօրից այս պատուէրն ստանալով՝ Բանը հաղորդուեց մարմնի հետ և մարմինը միաւորեց Աստուծոյ հետ. միաւորումը՝ անճառ, և էութիւնների յատկութիւնը՝ անշփոթ:

Որպէսզի ճանաչի մարմնի ողջ ընթացքը՝ անձամբ անձի վրայ փորձելով:

Նրանով մնաց երեսուն տարի և բնութեամբ օտար ներգործութեան չհաղորդուեց:

Եկաւ Յորդանան և, ամենակատար մաքրութիւնը Հօրը նուիրելով, Նրա կողմից դաւանուեց որպէս հաւասարապատիւ սիրելի Որդի:

Հոգու կողմից տարուեց բանասրկու թշնամու մօտ՝ մարտնչելու և ճանաչեց թունաւոր օձի նետերի մեքենայութիւնները, որը բնութեան օրէնքի համաձայն մոլորեցնում էր սրանց՝ դէպի մեղքերի վիհը խոտորելով:

Կերակուրներից հրաժարուեց արդարների գնդի դասերին հաւա-

սար և մարմնին թոյլ տուեց շարժուել ըստ իր անհրաժեշտ ցանկութեան:

Իսկ թշնամին, առընթեր կանգնած, սպասում էր, և որքան Նա անձնիշխան կամքով կերակուրներ փափագելուն չէր ձգտում, նա էլ մեքենայութիւնները նպատակի մէջ ձգել չէր համարձակում:

Եւ երբ շարժուեց, յոյս դրեց պատկանդարանից՝ դէպի Տէրը սրուած նետեր արձակելու վրայ:

Ասում է. «Բարերը հա՛ց դարձրու Բո զօրութեամբ, որ այդքան պահքի ժուժկալութեան տոկացիր, և արարի՛չ եղիր՝ Աստուծո նկատմամբ»:

Եւ, լսելով, թէ գրուած է, որ ամէն մարդ Աստուծոյ խօսքով առաւել է ապրում, քան հացով, հնար էր փնտրում՝ գրքերով գողանալու Նրան:

Այնժամ ճանաչեց որոգայթները, խայտառակեց մեքենայութիւնները, պատուեց պարուրուած թակարդը, որոնցով մարդկանց էր որսում:

Իր Հօր և հրեշտակների առջև բացայայտեց և ինքնիշխանութեամբ հեռու վանեց խաբողին՝ այս խաբուած բնութեան օրէնքով:

Մանուկ Դանիէլն արդար դատաստան տեսաւ. ամաչեցրեց չար ծերերին՝ մարդկութեան զրպարտիչներին, որոնք իրենց մեղքերը նրա վրայ էին բարդում:

«Դու, որ հնացած ես չարութեան օրերով, - ասում է, - այժմ եկանհասան քո մեղքերը, որ գործում էիր նախապէս, որովհետև անիրաւութեան դատաստանով էիր դատում և մարդկանց անմեղ բնութիւնը քեզ կցորդ լինելու դատապարտում:

Բո չար նախանձը մոլորեցրեց քեզ, և մարդատեսացութեան ախտը շրջեց քո սիրտը:

Այդպէս էիք խաբում մարդկանց որդիներին, և նրանք վախից ենթարկուում էին ձեր կամքին, սակայն երկնաւոր Հօր Որդին անձի վրայ չընդունեց ձեր անօրէնութիւնները»:

Այս ասելով և ոտքի տակ կոխելով ծերացած օձին՝ իր Հօր և հրեշտակների առջև յայտնի դարձրեց առաջին յաղթութիւնն ու բնութեան անմեղութիւնը:

Այնժամ, երբ չարին յաղթեց բնական կերպով, հրեշտակները մօտեցան և ծառայեցին Նրան պէտք եղածով. և մեր բնութեամբ արդարացած Ջօրաւորը բազկով տիրեց հակառակորդ դեւերի բնութեան վրայ:

1 պատկանդարան - նետադարան, կապարճ, որտեղ պահում են նետերը

Արդ, քանի որ միայն Նա չարից անփորձ եւ Աստծուն հաճելի գտնուեց, այդ պատճառով սկսեց մարդկանց կենաց ապաշխարութեան հրաւիրել՝ արքայութեան յոյսով:

Իսկ նրանք, պատրանքներից խաւարած, դժուարանում էին կանչողին հետեւել, եւ երկրի վրայ սահողների համար դժուարանում էր երկինք նայելը: Աշխարհի ցանկութեամբ մոլորուածները չէին այտրծում վերին փառքը, իսկ բռնութեամբ մօտեցնելը հարկատր չէր նրանց անձնիշխան Ստեղծողին. եւ նշաններով ու վարդապետութեամբ քչերը համոզուեցին:

Ապա ի՞նչ էր անում... Ո՛վ սքանչելիք, քանի որ մարդիկ պատժի էին պարտակամ, պատիժը հատուցել էր պէտք եւ ապա՝ Աստուծոյ արդարութիւնից ողորմութեան արժանի գտնուել:

Նա, որ իր Հօր առջեւ անպարտ գտնուեց, գործի դնելով բազմապատիկ իմաստութիւնը, մեռաւ բոլոր պարտականներու փոխարէն եւ ջնջելով պատեց մեր յանցանքների ձեռագիրը: Իջաւ դժոխք Նա, Ում մահը չէր կարող բռնել, եւ արձակեց մեռելւորներին:

Եկաւ ողբերի մօտ նոյն ինքը եւ հաստատեց նրանց, իսկ ովքեր Ադամի յանցանքով մահուան դատապարտութեան տակ էին, նրանց իր անմեղութեան շնորհներով տեղափոխեց կենաց արդարութեան եւ անմահների երկրի մէջ:

Որովհետեւ այսպէս ենք իմանում Պօղոսից յայտնուած աստուածաշտուութեան մեծ խորհուրդը. որ երեսաց մարմնով, արդարացաւ հոգով, յայտնուեց հրեշտակներին, քարոզուեց հեթանոսներին, հաւատարիմ եղաւ աշխարհին եւ համբարձուեց փառքով:

Եւ, մտնելով վարագոյրի ներքին կողմը, մեծ Քահանան իր պատուական Արիւնը պատարագ ընծայեց Հօրը. ցոյց տուեց նաեւ դաւաճանողի խաբէութիւնները եւ բարեխօսում էր՝ մարդկանց հետ խաղաղութիւն հաստատել:

Իսկ բարի Հայրը, բարեհաճ լինելով սիրելի Որդու սքանչելի գործի նկատմամբ եւ քանդելով նախնի հօր դատապարտութեան կնիքը, տուեց Նրան՝ Հոգին սփռելու Արեամբ գնուած իր հօտի վրայ եւ մտքերի նայուածքները լուսատրելու վերին յոյսով:

Այնժամ Միածնին վերցնելով՝ Մխիթարիչին ցօղեց Սաղիմի վրայ եւ ձին իջեցրեց հաւաքուած թագաւորների վրայ՝ ըստ նախագուշակ երգողի:

Որը եկաւ ու բնակուեց մեր սրտերում եւ լուսատրեց Քրիստոսի սիրոյ առաւելութեան լայնութիւնն ու երկարութիւնը:

Եւ որովհետեւ ձրի էր շնորհում՝ Քրիստոսի մահուան փոխարէն,

այդ պատճառով հաւասարապէս տարածուած է արժանատրների եւ անարժանների վրայ:

Ուստի եւ Պետրոսի մէկ խօսքով երեք հազար հոգի աշակերտում է այսօր: Ուրեմն, խօսքը յիրաւի վկայեց մեծ օրուայ շնորհի սքանչելի լինելու մասին:

Որովհետեւ ինչպէս սերմանելուց աւելի ժողովելն է այտրծելի, այնպէս եւ Քրիստոսի խորհուրդի բոլոր սերմերի պտուղն այսօր է կթում:

Այս է Սուրբ Հոգին, Ում ինքը վկայեց ուսուցանել մեզ եւ իջեցնել իր բոլոր արածները:

Այս քաղցրութեան ցօղը զուարթացրեց Քրիստոսի խօսքերի բոյսերը եւ օրհնելով պսակեց իր տնօրինական գործերի տարիները, որի համար աղաղակում է Եկեղեցին. «Ձմեռն անցաւ, մեր այգիները ծաղկեցին եւ բուրմունք արձակեցին»:

Այս առաւօտ երկնատր Հայրը նայեց դէպի երկիր, արբեցրեց այն Սուրբ Հոգու յորդառատ գետով եւ բազմապատիկ տունկերի արմատներից առաքինութեան զանազան բոյսեր ծաղկեցրեց՝ փթթեցնելով, ինչպէս մարգարէն է ասում:

Ահա՛ ձիրք, որը չի չափուած, եւ պարգեւ, որին գործերի ոչ մի կշիռ չի զուգակցում...

Ահա՛ տուրք, որի բնութեան իսկութիւնը չի պարփակուած, եւ շնորհ, որին գերազանց մտքի ոչ մի զեղում չի հաւասարում...

Ահա՛ առատ ողորմութիւն, որ աշխարհի բոլոր թագաւորութիւններին հաւասարապէս փոքր է գտնում, եւ մխիթարութիւն, որին ոչ մի մարմնատր զբաղմունքի ուրախութիւն չի լծորդում...

Քանզի ո՞վ կարողացաւ աշխարհին տիրելու հետ միասին նաեւ անապականութիւն ստանալ. կամ ո՞ր թագաւորը կարողացաւ ձեռնարկել մահը կեանքի փոխելու. կամ մարմնատր ո՞ր երանութիւնը կարողացաւ յաիտեանական կեանք ընդգրկել: Իսկ Նա, այսօր իջնելով առաքելների դասերի վրայ, զօրացրեց նրանց բազուկները՝ այս բաները հանուր տիեզերքին բաշխելու համար:

Քանզի նրանք, իրենով աւուցուած, ստուերով հիւանդներ բժշկեցին, թաշկիմակով ցաւեր փարատեցին, ձեռքերով յարութիւն տուեցին մեռելացներին, քայլեցրին կաղերին, լուսատրեցին կոյրերին՝ աւելի շատ հոգիների աչքերը, քան մարմինների, երկինք հրաւիրեցին եւ անվախճան փառքի ժառանգորդ դարձրեցին մարդկանց:

Ապա յայտնի դարձաւ, թէ երկրատրներիցս ոչինչ զուգահաւասար չգտնուեց երկնայինների տուրքին. որ ոչ միայն բանական-

Անրիս ազգը Անրընդունակ եղաւ Նրան, այլեւ մարդկանցից առաւել՝
անշունչ տարրերը Նրանով զօրացած գոնուեցին:

Որով եւ նոյն Ինքը, իջնելով, նախ սքանչելի կերպով տունը լցրեց
եւ ապա սիրով հանգչեց այնտեղ նստածների վրայ:

Որովհետեւ ասում է. «Պենտեկոստէի օրերի աւարտին բոլորը
միաբան միասին էին, եւ յանկարծակի երկնքից հնչում եղաւ՝
սաստիկ հողմի մման եկած, եւ լցրեց ողջ տունը, որտեղ նստած էին:
Եւ նրանց երեւացին կարծես հրից բաժանուած լեզուներ, որոնք
նստեցին նրանց վրայ, եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով: Եւ սկսեցին
այլեւայլ լեզուներ խօսել, ինչպէս որ Հոգին էր նրանց բարբառել
տալիս»:

Ասում է՝ միաբան միասին էին, որպէսզի ցոյց տայ, թէ ոչ միայն
տասներկուսն էին, այլեւ կոյս Աստուածածինն էր նրանց հետ՝
կանանցով հանդերձ, ովքեր ծառայում էին Յիսուսին Գալիլիայում
եւ Յարութեան տեսնողները եղան, որոնց հետ եւ՝ եօթանասնից
գունդը՝ բոլոր ծանօթներով հանդերձ:

Արդ, Սուրբ Հոգին եկաւ նրանց վրայ՝ Քրիստոսի նախնական
խոստման համաձայն, որ ասաց. «Ահա՛ Ես ձեզ ուղարկում եմ իմ
Հօր անտիպը: Եւ դուք նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչեւ որ
բարձունքներից զօրութիւն հագնէք»:

Եւ հարուածեց հողմի որոտման հնչիւնը, որով ցոյց էր տալիս
հեղման առաւելութիւնը: Դարձեալ, որովհետեւ նոյն Հոգին էր, Ով
սկզբում շրջում էր ջրերի վրայով, տունը լցրեց իմանալի զօրու-
թեամբ, իսկ հրի զգալի ձեւը տղայամիտների սքանչացման համար
էր:

Եւ ապա այն հրից լեզուներ բաժանուեցին եւ իշան նրանցից
հորաքանչիւրի վրայ, որը խորհրդանշում էր այլատարազ լեզուախօ-
սութեան շնորհի պարգեւները:

Ուստի եւ նրանց զգալի մարմնի զգայարանների վրայ լեզու-
ներով իջնելիս, նրանց միտքն իմանալի զօրութեամբ իմաստնաց-
նելով, սկսեց նրանց լեզուներն այլատարազ խօսքերով շարժել, ըստ
որի ասում է. «Խօսում էին այլեւայլ լեզուներով, ինչպէս որ Հոգին էր
նրանց բարբառել տալիս»:

Ոչ թէ՛ որովհետեւ լեզուների շնորհը նախամեծար էր, այլ
որովհետեւ առընթեր ուրիշ երեւելի նշան չկար շնորհի համար, որով
զօրացան քարոզելու:

Իսկ այլատարազ խօսելով, քաղաքի բովանդակ ամբոխին
հիացնելով՝ նրանց մօտ հաւաքեց:

Ըստ որի ասում է. «Միաբան բազմութիւնը եկաւ ու խոնուեց, եւ
բոլորը զարմացած սքանչանում էին, իսկ ուրիշներ սքանչելի այլա-
փոխման մասին ծաղրելով ասում էին, թէ հարբած են»:

Արդ, շնորհն ամէն ինչով այսպէս ճանաչուելով, Հոգին իջնելուց
նրանց մէջ Անրգործեց ոչ թէ Քրիստոսի խոստմամբ, այլ՝ լեզուներ
ով:

Որովհետեւ Նա չասաց, թէ՛ Հոգով լեզուներ էք խօսելու, այլ թէ՛
սովորեցնելու է ձեզ եւ յիշեցնելու է այն ամէնը, ինչ ասացի ձեզ:

Որոնք եթէ սա ստացած լինէին ի սկզբանէ, ո՛չ այնպէս կամ-
բոխուէին, ո՛չ էլ իրենց այլատարազ խօսքերով բազմութիւն կձգէին՝
ի նշան տեսութեան:

Որի համար Ամենաիմաստունը նախ, ինչպէս մանուկներին՝
խաղերի տօնախմբութեան մէջ, զարմանալի փոփոխումով շփոթեց-
րեց նրանց:

Որովհետեւ նրանք, ովքեր երէկ եւ այսօր գոեհիկ ու շինական
գալիլիացի մարդիկ էին, ահա ասում են, ճարտարաբանում են
իմաստուն հելլենացիների մման, եւ ուրիշներ պարթեական տար-
աշխարհիկ բարբառներով նրանց պատասխանում են:

Պետրոսը, որը կափառնայումում է ծնունդ, լսում ենք, որ
խրոխտաբար հոռմէական լեզուով է արշաւում: Իսկ Փիլիպպոսը,
որը Գալիլիայի հեթսայիդայից է, իր խօսքը յօդատրում է արաբնե-
րի բարբառով:

Յովհաննէսը, որ Նազարէթում է մեծացել, ինչպէ՛ս է կիլիկեցի-
ների ձայնով մեզ հարցնում: Եւ սրանք Թովմասին են լսում, որ
եթովպացիների լեզուով մարգարէի խօսքերն է յիշեցնում:

Այն տգէտ Թադէոսը, տեսէ՛ք, որքա՛ն վայելուչ կերպով Մեծ
Հայքի բառերով իր խօսքն է ասում:

Եւ մանուկ Բարդուղիմէոսը, կարծես մարերի մէջ ծնուած լինելով,
նրանց խօսքն է հնչեցնում:

Ո՛վ սքանչելիք, զանազան զաւառներում ծնուեցինք եւ աշխա-
տութեամբ վարժուեցինք նրանց բարբառներին, իսկ ահա սրանք,
որոնք չտեսան այն քաղաքները, անաշխատ կերպով նրանց ձայ-
ներն են հնչեցնում:

Մեծ է, ասում են, սքանչելիքի արուեստը, եւ թէ՛ ինչո՞վ է
աւարտուելու, չենք կարող նկատել:

Այնժամ Պետրոսը, վեր կենալով տասնմէկի հետ, բարձրացրեց
իր ձայնը եւ սկսեց տարակուսանքներից լուծում շնորհել:

«Հրէաստանցի՛ մարդիկ եւ դո՛ւք, որ բնակւում եք Երուսաղէմում՝

ամէ՛նքդ, թող ձեզ յայտնի՛ լինի այս, եւ ակա՛նջ դրէք իմ խօսքերին:

Սա զինու արբեցութիւն չէ օրուայ երրորդ ժամին, ինչպէս դուք էք կարծում, այլ բաժակ է բերկրութեան եւ առհասարակ այն անապականութեան՝ նախագուշակուած մարգարէների կողմից. եւ այսօր խորհուրդը հասաւ իր լրումին:

Ո՛վ օրէնսուսոյցներ եւ մարգարէների աշակերտներ, սա այն է՝ Յովելի ասածը, որը միշտ ընթերցում էք, կատարուեց: Քանզի ահա վերջին օրերին Աստուած Իր Հոգուց հեղեց մարմնատր զանազան հասակների վրայ, եւ մարգարէանում ենք:

Այն Յիսուս Նազովրեցին, Ով ձեզ երեսց նշաններով ու հրաշքներով եւ յանդիմանի խաչուեց, ելաւ երկինք, նստեց Հօր աջ կողմում եւ, Սուրբ Հոգու այս պարգեւներն ընդունելով Հօրից, մեզ վրայ սփռեց: Նա, երբ փառքով երկինք էր համբարձում, ուխտեց մեզ եւ, երկինք մտնելով, Հօր եւ Հոգու հետ հաւասար նստելով, այս սասց.

«Ես այն գործերը, որ Ինձ վստահեցիք, կատարեցի երկրի վրայ, Քո՛ն՝ Իմ Հօր անունը փառաբանելու մարդկանց մօտ. չարի խարդախութիւններից եղծուածին՝ Մեր պատկերակցին, Աստուածութեանս բնութեանը խառնելով, սքանչելի կերպով սրբեցի:

Իմ մահը տալով ողորմելի եւ տառապած մարդկային ազգի փոխարէն՝ Արամ փրկեցի անէծքից:

Եւ այժմ նոյն մարմնով գալով՝ երկրպագութիւն եմ ընդունում երկնատրոններից:

Այսուհետեւ Քե՛զ հասաւ գործելու ժամանակը, ո՛վ իմ փառակից Հոգի. պարտաւոր ես նաեւ Քո մարդասիրութիւնը ցոյց տալ երկրի վրայ. այսուհետեւ Քեզ եմ վստահում՝ Մեր Աստուածութեան անունը մարդկանց մօտ յարգել տալու: Իմ Հայրն իմ Մարմնի պատարագով ներեց եւ թողեց այն պարտքերը, որոնց պատճառով Դու չկարողացար Արամը մօտ հեղուել:

Սա Ինձ մօտ առհասարակ է Արամից, եւ Քեզ խաղաղութեամբ տալիս է Արամը:

Սիրով իջի՛ր այժմ Արամը մօտ, սիրո՛յ Աղբիւր, եւ մխիթարի՛ր Արամը, որոնք պանդխտութեան վայրում տառապում են անդին ու անցատր կեանքով:

Դարձրո՛ւ Արամը սիրտը նանրութիւններից, որ զուր խոսկեցնում է թշնամին, որպէսզի նայեն դէպի այս բազմապատիկ օթեանները, որ պատրաստեցինք Արամը համար:

Նրանց առատ իմաստութիւն բաշխիր, որպէսզի եղեռնագործը

Արամը չմոլորեցնի:

Հաղորդուեցի Արամը կարիքներին եւ փորձով ճանաչեցի, որ տկար եւ դիրակործան բնութեան եմ վիճակուել:

Որի պատճառով աղաչում եմ. Արամից մի՛ հեռացիր եւ Արամը գօրացրո՛ւ ընդդէմ բոլոր փորձանքների, նահանջի՛ մատնիր մարմնի կամքը եւ գօրացրո՛ւ մտքի կամքը:

Քե՛զ եմ տալիս Արամը, Քե՛զ եմ յանձնում Արամը, Քե՛զ խոստացայ Արամը եւ այժմ Քո մէջ եմ ամրափակում բոլորին, որպէսզի իմ Արեան հեղումը զուր չլինի Արամը համար:

Նրանց մէջ առատացրո՛ւ, ո՛վ իմ համագոյակից Հոգի, բժշկութեան, մարգարէութեան շնորհները, վերինների մասին խորհելը, ստորինն ատելը:

Թե՛պէտ եւ բազմիցս Արամը հետ երկնքի արքայութեան ճառեր էի խօսում, սիրով չէիմ ականջ դնում:

Այլ երբ մարմինների բժշկութիւն էի կատարում, մեռելների յարութիւն տալիս, կաղերի քայլեցնում, կոյրերի լուսատրում, իմ հանդէպ բոլորի սէրն անելով առատանում էր:

Հոգիների հացը՝ իմաստութեան խօսքն էի տալիս, եւ ոչ ոք չէր զգաստանում:

Իսկ երբ առատօրէն մարմինների հաց տուեցի Արամը՝ յագեցնելու համար, այնքան յորդեցին իմ սիրոյ մէջ, որ մինչեւ իսկ կամեանում էին Ինձ յափշտակել եւ թագաւոր կարգել:

Սա է մարդկային ազգի մտքի ճանապարհը, որը փորձեցի. անկարող եմ դարձել խորհելու իրենց խոստացուած այս վերին բարիքների մասին:

Ծանօթ չեն երկնային փառատրութեանը, այլ միշտ երկրի վրայ են յաճում, կասկածում են այս ճշմարտութեանը, եւ Արամը մօտ այն է վայելուչ կեանք համարում:

Որի պատճառով Դու նախ Արամը տղայամտութիւնը զարմացրու նշաններով ու սքանչելիքներով եւ Արամը կարծիքը բժշկութեան շնորհով ուղղի՛ր դէպի հաւանութեան հաւատը:

Մի՛ արգելիր բաշխել Քո առատութեան շնորհները՝ ի փառս եւ ի գովեստ Մեր Աստուածութեան:

Մե՛ծ երեւոյթ է, որ ինչպէս երկինքը, այնպէս եւ երկիրը լցուի Մեր Աստուածութեան փառքով, եւ ինչպէս հրեշտակներին, նոյնպէս եւ մարդկանց ստանանք որպէս Մեր անուան օրհնաբանողների:

Չարմանալի չէ, եթէ Մեր մոլորուած արարածին Մեր բազմապատիկ գօրութեամբ դէպի Մեզ նուաճենք:

Արդ, իջի՛ր, աղաչում եմ, իջի՛ր, որովհետև տարակույսը պաշարել է նրանց:

Մահուան տնօրէնութեան ժամանակ փոքր-ինչ բաժանուեցի նրանցից, եւ ծննդկանի մասն երկունքը պաշարեց իմ աշակերտներին, մինչեւ որ, արագացնելով Յարութիւնը, միխթարեցի նրանց:

Տասնմէկից մէկն այնտեղ չէր եւ Յարութեան մասին տասի վկայութեանը չէր հաւատում, մինչեւ որ դարձեալ յայտնուեցի եւ շօշափել տուեցի կողերիս խոցուածքը՝ [որպէս] սպացոյց նրա մտքին:

Եւ այժմ, երբ Ես ճանապարհ ընկայ երկինք, թող կարճատրութիւնը նրանց չգայթակղեցնի՝ Քո յոյսի միխթարութեամբ:

Որի պատճառով արագացրո՛ւ միխթարել իմ որդեակներին ու աշակերտներին:

Գնա՛, բնակուի՛ր նրանց մէջ, ինչպէս որ խոստացայ, եւ վարդապետելով յիշեցրո՛ւ նրանց իմ բոլոր ասածները»:

Այնժամ ամենակարող Ջորութիւնը, փրկական Առատութիւնը, հեզութեան Աղբիւրը, բարութեան Հոգին, մարդասէր Ծնորհը, Աստուծոյ առատութեան Հեղումը, կենդանարար Բխումը, Աստուծոյ Պարգելը, ճշմարիտ Խաղաղութիւնը, մարգարէների կողմից Քարոզուածը՝ միխթարիչ Սուրբ Հոգին, սլանալով, ահեղ որոտումով անցնում էր անմարմնականների շարքերի դասակարգութիւններով. եւ սքանչանալով՝ հիացմամբ զարհուրեցին երկնային զօրքերի անհապետութիւնները:

Որովհետև Նրան, Ում ցանկանում էին աղօս տեսնել, նայեցին իսկական Էութեամբ՝ դիմելիս եւ մարդկանց ազգի վրայ սփռուելիս:

Որովհետև Հոգու Անձնատրութիւնն այսօր ամբողջովին իջաւ առաքելների գնդի դասերի մէջ, ինչպէս Միածինը՝ սուրբ Կոյսի արգանդը:

Եւ Նա, Ով եկաւ, այլեւս չմեկնեց, այլ մնաց Քրիստոսի Եկեղեցում՝ ըստ Իր Փեսայի անսուտ խոստման, որ ասաց. «Ձեզ հետ կբնակուի եւ յաիտեան ձեզ հետ կլինի»:

Ով եւ այսօր զօրացրեց առաքելներին եւ նրանց մատակարարութեամբ՝ ընդհանուր տիեզերքը:

Որովհետև Նրա համար նոյնպէս առաւել քաղցրացաւ մարդկանց փրկութեան համը, որոնց հետ մնաց եւ բնակուեց նրանց մէջ:

Ուստի եւ Պետրոսը, իր մէջ Հոգին կրելով, Անանիայի ստելը ներկայացնում էր ոչ թէ մարդկանց, այլ՝ Աստուծոյ առջեւ: «Ինչո՞ւ, - ասում է,- մտադրուեցիք փորձել Աստուծոյ Հոգուն. կամենալով ինձ

խարել՝ ոչ թէ մարդկանց ստեցիք, այլ՝ Աստծուն»: Նրա շնորհը, առաքելների ձեռք դնելով, իջաւ Ստեփանոսի վրայ, որը եւ դրանով զօրացաւ՝ նշաններ եւ մեծամեծ հրաշքներ ցուցադրելու:

Արդարեւ, Նա, որպէս Եկեղեցու Թագաւոր, Պողոսին եւ Բառնաբասին նշանակում էր Իր խօսքի սպասարարութեան գործին:

Նա ոմանց ընտրեց առաքելութեան, ոմանց՝ մարգարէութեան, ուրիշներին՝ հովութեան եւ վարդապետութեան, ինչպէս որ Մատաթիային առաքելութիւն վիճակուեց, Ագապէոսին եւ Տիմոթէոսին՝ մարգարէութիւն, իսկ Եփեսոսի Եկեղեցու երէցներին՝ հովութիւն եւ վարդապետութիւն:

«Ջոն՛ջ եղէք,- ասում է,- հօտի նկատմամբ, որի վրայ Սուրբ Հոգին ձեզ տեսուցներ եւ վարդապետներ կարգեց»:

Նա, արձակելով, համարձակութիւն տուեց միթեղէն լեզուին՝ Հայր կոչելու Աստծուն, Ով հրեղէն կառքի վրայ նստում եւ պաշտում է թեւերով սքողուած հրեղէն անմարմնական բանակներից:

Որովհետև ստացանք որդեգրութեան Հոգին, որով աղաղակում ենք՝ Աքբա՛, Հա՛յր:

Նոյն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստուծոյ որդիներ ենք:

Նա մէկին իմաստութեան խօսք է տալիս, միւսին՝ գիտութեան, մէկին՝ լեռները տեղափոխելու հաւատք եւ ուրիշին՝ սքանչելի գործեր կատարելու զօրութիւն:

Նա օծում է մեր մտքերը՝ ըստ Յովհաննէսի, քրիստոնէայ եւ քրիստոսընկալ է դարձնում, եւ այս օծութիւնից զօրանում ենք ամէն ինչ իմանալու մէջ:

Նա լուսաւորում է մեր սրտերի աչքերը՝ իմանալու մեր կոչման յոյսը, փառքի ժառանգութեան մեծութիւնը եւ Քրիստոսի սիրոյ լայնութիւնն ու երկայնութիւնը, որի պատճառով արհամարհեցիք երեւելիները եւ աներեւոյթներն ենք փափագում:

Եւ Քրիստոս, մեր մէջ բնակուելով, Հոգով մեռցրեց մարմնի հեշտութեան մեղքի զգայարանները եւ արդարութեան խորհուրդների յոյսով կենդանացրեց բանական հոգիները:

Որով զօրանալով՝ մարդիկ յաղթեցին նեղութիւնն ու անձկութիւնը, հալածանքը, սովը, մերկութիւնը, սուրը, ներկան եւ հանդերձեալը՝ Քրիստոսի սիրոյ գիտութեան մէջ հոգով պայծառացած:

Նա, Ով քննում է Աստուծոյ խորութիւնները, քննում է եւ մարդկանց սրտերը՝ եւ, տեսնելով բնութեան տկարութիւնը, թիկունք է

կանգնում մեր տկարութեանը եւ անմոռն հեծութիւններով Աստուծոյ մօտ բարեխօս է լինում սուրբ Եկեղեցու համար:

Եւ Ինքը Աստծուն սիրողներին մշտապէս գործակից է լինում բոլոր բարիքների մէջ:

Բոլորի փրկութիւնն է կամենում, բոլորի հաւատքին է սպասում, որպէսզի հաւատքը նուիրելու ժամանակ նրանց մէջ շնորհ եւ հոգեւոր գորութիւններ սերմանի:

Կամենո՞ւմ ես իմանալ մարդկանց հանդէպ Նրա սիրոյ չափը. միացի՞ր ներքինու կառքին, ինչպէս մի ժամանակ՝ Փիլիպպոսը, եւ տե՛ս, թէ ինչպէ՞ս Հոգին փոխհատուցեց հաւատքով արուած մէկ հարցմանը:

«Տէ՛ր,- ասում է,- աղաչում եմ Բեզ, ասա՛, ո՞ւմ մասին ասաց այս մարգարէն՝ ի՞ր, թէ՞ մէկ ուրիշի»:

Մտքի ուղիղ հարցումը ներքինու անձի մէջ Հոգու համար դուր եղաւ եւ տեղ պատրաստեց Փիլիպպոսի խօսքերի համար, մինչեւ որ եկան ջրին առընթեր. եւ իջած Հոգին՝ ներքինու ուսուցիչը, անելորդ համարեց այլեւս Փիլիպպոսին յոգնեցնելը:

Այսպիսին է Սուրբ Հոգու՝ աշխարհը պաշտպանելը, այսչափ է Նրա՝ մարդկանց մխիթարելը:

Ո՛չ եթովպացիների նկատմամբ է խտրութիւն դնում, ո՛չ հեթանոսներին է անարգում եւ ո՛չ էլ հրեաներին յարգում. ամենքին հաւասար ձիրք է ընձեռում: Միայն Իր շնորհի նիւթը՝ սրտի յօծարութեան հաւատքն է փափագում տալ մեզ եւ զանազան շնորհների նոյն փայլատակուած ջահերով Եկեղեցու մանուկների վրայ է ճառագայթում: Եւ նրանց, շնորհներով զրոգելով, աշխարհի զբաղմունքների հեշտութիւնից ձգում է դէպի երկնաւոր Հօր սէրը:

Որովհետեւ տղաներին Հոգուց խաղալիք են տրուում նշաններն ու լեզուախօսութիւնը, իսկ մանուկներին՝ կաթ՝ բժշկութեան շնորհներն ու գորութիւնների յաջողութիւնները:

Իսկ կատարեալներին հաստատուն կերակուր է մատակարարում, որն է Աստուծոյ սէրը, ինչպէս աղաղակում է ճաշակողը, թէ՛ «Եթէ ունենամ ողջ գիտութիւնն ու հաւատը՝ մինչեւ իսկ լեռներ շարժելու, եւ սէր չունենամ, ոչ մի օգուտ չունեմ»:

Սոյնը եւ աշակերտներին է ցանկանում՝ ասելով. «Աղօթում եմ եւ ծնրադրում, որպէսզի դուք ստանաք ոչ թէ նշանագործութեան հոգին, այլ՝ իմաստութեան Հոգին, որ լուսաւորում է սրտի աչքերը՝ ճանաչելու Քրիստոսի սիրոյ լայնութիւնը, բարձրութիւնն ու խորութիւնը»:

Որի պատճառով եւ Հոգու՝ նշաններով եւ լեզուներով ազդելը, որպէս անօգուտ մի բան, պակասեց մէջտեղից, իսկ իմաստութեան ու հանճարի Հոգին միշտ ներգործում է Եկեղեցու մէջ. եւ Հոգին նրա որդիների մէջ Քրիստոսի սէրն է պայծառացնում:

Թող ոչ ոք չկարծի, թէ Տէր կանուանի Յիսուսին, եթէ նախ Նրանից ազդում չընդունի: Ապա եթէ մէկն առաջ նետուի առանց սոյն հրամանի կոչման, ինչպէս Սուրբ Հոգուն փորձող կախարդ Սիմոնը, մերժուելու է Դաւթի տաճարից:

Ամուր կնիք է Քրիստոսի սուրբ Եկեղեցու իւրաքանչիւր անդամի վրայ, որոնք Նրանով պարսպուած են պահում շնորհի իւրաքանչիւր պատուի մէջ:

Որովհետեւ Նա, Ով մեզ ձեզանով հանդերձ հաստատեց ի Քրիստոս, Աստուած է, որ եւ կնքեց մեզ եւ մեր սրտերում դրեց Հոգու առհաւատչեան:

Վարդապետ է՝ Քրիստոսի կողմից ասուածները սովորեցնելու եւ յիշեցնելու մէջ, ինչպէս խոստացաւ, որ երբ գայ Նա՝ ճշմարտութեան Հոգին, առաջնորդելու է ձեզ ամենայն ճշմարտութեամբ:

Իմաստուն ճարտարապետ է, որն առաքեալների եւ մարգարէների հիմքի վրայ կառուցում է օտարներով եւ պանդուխտներով՝ Քրիստոսի հասակի չափը լրացնելու համար:

Մարդկանց մտքերը ռոտող յորդառատ գետ է, որն արբեցնում է մեր իմաստութեան ակօսները եւ Իր ցօղով արթնացնում առաքինութեան ծաղիկների զանազան բոյսերը, ինչպէս ասաց Քրիստոս՝ Իր հաւատացեալների որովայնից Հոգու միջոցով գետերի բխման մասին, որի մասին նախապէս ճառեց մարգարէն:

Արթուն վերակացու է, Եկեղեցու կարգերի հրահանգիչ եւ իւրաքանչիւր աստիճանի ու պատուի որոշող, Ով կարգեց նախ առաքեալներին, երկրորդ՝ մարգարէներին, երրորդ՝ վարդապետներին, որոնց հետ՝ գորութիւններն ու բժշկութեան շնորհները, լեզուների տեսակներն ու նրանց թարգմանութիւնները:

Ներգործութեան Հոգին յօրինում է տաճարի աստիճանների դասակարգութիւնը երկնաւոր դասերի համանմանութեամբ՝ հոգեւոր երգով միշտ Աստուծոյ հետ խօսակցելով:

Այս Հոգին Քրիստոսի Եկեղեցու մանուկներին ծնում է երկնաւոր Հօր որդեգրութեամբ՝ սրբաբար Ասագանի արգանդից:

Այս Սուրբ Հոգին զօրացնում է քահանայապետների ձեռքերը շնորհաբաշխութեան, քահանաներին՝ նուիրագործութեան, սարկաւազներին՝ սուրբ Եկեղեցու սպասատրութեան:

Նա է յարուցում աթոռի ժառանգներին, պատուոյ եկեղեցականներին. ոմանց նշանակում է խօսքի ծառայութեան, ուրիշներին՝ ձայնի հնչման, մի մասին էլ՝ գրքերի ընթերցման:

Նրանով վկաները զօրացան, նահատակները զինուեցին, տղամարդիկ քաջ դարձան, կանայք արիացան:

Նրա զօրութիւնը սքանչելի կերպով բխում է խաչանիշ փայտից, նշաններով՝ կառուցուած յարկերից, շնորհներով՝ սուրբերի ոսկորներից՝ ի բժշկութիւն բոլոր ախտերի:

Ողջ երկիրը լի է Նրա ողորմութեամբ, եւ օղը մաքրուեց Նրա իջնելով: Մեզ հետ է հանապազ, եւ մեր ամէն ինչը Նրա շնորհաձիր պարգեւն է, որի առջեւ արտասուքներով մաղթելու ենք՝ մեր երեսների վրայ ընկած:

Ո՛վ Աստուած Աստծոց եւ բոլորի նորոգիչ Սո՛րբ Հոգի, քաջ Հովիւն իր հօտը Քո պահպանութեան խնամքին վստահեց եւ Քո ճառագայթներն իր Եկեղեցու մէջ սփռեց մինչեւ յաւիտեան:

Քեզանով են շարժուում մեր լեզուները օրհնութեան պատարագին, եւ մեր անձերը նշանակուեցին ի սպասարորութիւն Քո զանազան շնորհների ծառայութեան:

Բոլորս միաբան Քեզ ենք աղաչում եւ համարձակ խօսում ենք Քեզ հետ՝ Քո արգանդի երկունքի ծնունդ որդիներս:

Մի՛ զգուիր Քո հօտից զազիր մեղքերի հոտի պատճառով եւ մի՛ տրտմիր անպարկեշտ խօսքի բարբառումից, այլ հաշտութեամբ մեզ հե՛տ մնա մինչեւ վերջին կէտը եւ ուղեկցի՛ր դէպի Քո երկնային խորանները:

Ո՛վ Տէր, նաեւ նժոյհութեան վայրերում արքայութեան արքայութեան պարսպի թշնամու նետերի խցոտումներից:

Զօրութիւն չունենք ճգնութեան մարտի մէջ նահատակուելու. հառաչանքով խնդրում ենք՝ մեզ մի՛ տար դէպի չար դարանակալի փորձանքները:

Ծարաւեալներիս տո՛ւր Քո սիրոյ արբեցման գինին, որն այսօր մատուակուեց սուրբ Վերնատանը:

Որպէսզի մխիթարուենք մեր տարտամութեան խշտեակների վրայ եւ յոյսով վստահենք հանդերձեալ կեանքիդ:

Ո՛վ Բարերար, եւ այս նուէրը, որ Քո ունեցածից Քեզ է տրուած օրհնութեան բոյրը, հոտոտի՛ր սիրով, Աստուած իմ՝ Հոգի՛ հեզութեան:

Եւ մեզանից միաբերան օրհնութիւն Քեզ՝ Հօր եւ Որդու հետ՝ մշտնջենաւոր եւ անվախճան կեանքիդ մէջ. ամէն:



ՅԱՂԱԳՍ ՀԱՆԴԵՐՁԵԼՈՅ

(շարունակութիւն)

235. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Հանդերձեալ կեանքի ճշմարտութեան մասին կը խօսի իմաստասիրութիւնը, երբ Հոգիին աննիւթականութեան եւ անոր անմահութեան վրայ կը ճառէ եւ կը հաստատէ, թէ բանական մարդը չ'ոչնչանար Հոգիին՝ մարմինէն ելլելէն եւ մարմինին դիակնճնալէն ետքն ալ, եւ թէ անդրշիրիմեան կեանք մը կը սպասէ անոր Հանդերձեալին մէջ:

Յայտնապէս նոյնն է քրիստոնէական վարդապետութիւնն ալ:

Աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլար Ս. Գրոց վկայութիւններով հաստատել այս ամէնը: Աւելի կարեւոր պիտի ըլլար մեզի համար քրիստոնէական յայտնութենէն իմանալ, թէ ի՞նչ է Հանդերձեալ կեանքի վիճակն ու կացութիւնը, Հատուցման ի՞նչ օրէնք կայ, ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի կատարուի ան, ո՞ւր են Հոգիին օթեւանները, եւ որքա՞ն են անոնք, մարմիններն ալ պիտի մասնակցի՞ն այդ եղելութիւններուն եւ ի՞նչ կերպով: Սակայն պէտք է կանխենք ըսելու, թէ բովանդակ քրիստոնէութիւնը միեւնոյն կերպով չի խորհիր այս խնդրին մասին, եւ Արեւմտեան ու Արեւելեան Եկեղեցիները կ'անջրպետուին իրարմէ՝ լիազոյն հատուցման ժամանակակէտի սկզբնաւորութեան մասին:

236. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Կարելի չէ այստեղ յառաջ բերել այն զանազան դրութիւնները եւ կարծիքները, որոնք միշտ ալ գոյութիւն ունեցած են, եւ մոլորը, երկբայականն ու ուղիղը զատել իրարմէ եւ յետոյ ձեռնարկել Հաստատելու մեր Ուղղափառ Եկեղեցոյ դրութիւնը:

Բայց որովհետեւ բազմամասն է Հարցը եւ մահուան բոպէէն կը տարածուի մինչեւ ցյաւիտեան ժամանակաց, եւ իւրաքանչիւր քայլափոխի պէտք է նիւթերու կարգին համեմատ կրկնել կարեւորները, այս պատճառաւ, դիւրագոյնին եւ համառօտագոյնին մտադիր ըլլալով, զանց կ'ընենք կանխաբանական ընդհանուր

տեսութիւնները եւ քայլ առ քայլ յառաջանալու համար կ'ուզենք խօսիլ զանազան կարծիքներու բազմակերպ մասերուն վրայ:

237. ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Գարտինք յիշեցնել, թէ այստեղ մենք պիտի չխօսինք առաքելական խօսքերուն մեկնութենէն ծագած վախճանաբանութեան (Escatologie) մասին, որ կը վերաբերի աշխարհի մօտալուտ վախճանին եւ Քրիստոսի գալուստին նկատմամբ առաջին քրիստոնեաներու ակնկալութեան, զոր անոնք կը կապէին Աւետարանի յաղթանակին եւ փառաց լրման՝ նմանութեամբ մեսիական փառաւոր գալուստին՝ ըստ նախապաշարմանց հրէից:

Մենք այստեղ պիտի չքննենք թէ ի՞նչ եղած է առաջիկաներուն կարծիքը այս մասին, եւ թէ արդեօք առաքելական խօսքերը ստուգու այդպիսի գալուստի՞ մը կ'ակնարկեն: Այսքանը ստոյգ է սակայն, թէ ակնկալուած գալուստը մօտալուտ բան մը չեղաւ եւ ոչ իսկ ցարդ տեղի ունեցաւ, եւ նոյնիսկ, Առաքեալներուն համեմատ, անորոջ է վերջնական ժամանակը:

Հարկ է, որ մենք մեր խօսքը դաւանաբանականին մէջ սահմանափակենք եւ, ինչ որ հիմա մենք պարտինք իրել քրիստոնէական վարդապետութիւն պահպանել, զայն միայն յառաջ բերենք: Վախճանական Հարցերուն մօտ ոմանք բաժանում մը կը դնեն, այսինքն՝ մարդուն եղածները կը զատեն աշխարհի եղածներէն: Բայց որովհետեւ երկուքին մէջ իրարու հետ խօսուած կէտեր շատ կան, մենք պիտանի եւ կարեւոր չենք գտներ այդ բաժանումը:

238. ՄԱՀ ԵՒ ՄԱՀԷՆ ՎԵՐՋ

«Կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ»։ փորձառական ճշմարտութիւն, զոր կը լուսաբանէ Յայտնութիւնը՝ բացատրելով անոր պատճառը. «Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, եւ ի մեղաց անտի՛ մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ» [Հռոմ. Ե 12]: Այլուր եւս կը գրուի. «Գիտեմք, զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք՝ առանց ձեռագործի յաւիտենական յերկինս» [Թ Կորնթ. Ե 1], ուր այնպէս կ'երեւի, թէ բնական բան մըն է մարդուն մահը, որովհետեւ ամէն երկրաւոր ի հարկէ պիտի լուծուի, մեռնի: Անհնար է մեզի չխոստովանիլ, թէ ամէն նիւթական բնութեան համար բնական է իր լուծումը, եւ թէ, ըստ այսմ, մարդուն համար ալ բնական է մահը:

Միայն թէ Մենդոզ Գիրքէն կ'իմանանք, թէ առաջնաստեղծ մարդուն վիճակը զերծ պիտի ըլլար մահէն ոչ թէ իրաց կարգին համեմատ, այլ Արարիչին գերբնական շնորհին համեմատ. ու երբ մեղքին պատճառաւ դադրեցաւ գերբնական շնորհը, մարդը դարձեալ իր բնական վիճակին մէջ ինկաւ, եւ յաջորդեց մահը՝ իբրեւ պատուհաս: Ըստ այսմ ալ՝ մահը կը կոչուի վախճան բնական եւ նոյն ատեն՝ արդիւնք գերբնական:

239. ՄԱՀ ԱՄԵՆՈՒՆ

Արդեօք բոլոր մարդիկ պիտի մեռնին, թէ ոչ՝ պիտի ըլլան այնպիսիները, որոնք պիտի չմեռնին, այլ ա՛յս կեանքէն նոյնիսկ պիտի փոխադրուին հանդերձեալ կեանքը՝ առանց միջանկեալ մահուան: Պողոսի վերեւ յիշուած խօսքերը, երբ բառացի իմաստով առնուին, կը թուին մերժել որեւէ բացառութիւն: Բայց որովհետեւ առաքեալը այլուր ինքն իսկ կ'ընդունի ոմանց՝ առանց մահը ճաշակելու՝ ասկից հանդերձեալ փոխադրուիլը եւ կ'ըսէ, թէ՝ «Մեք, որ կենդանիք եմք, մնացեալք ի գալստեան Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն», եւ թէ՝ «Մեք, որ կենդանւոյն մնացեալ իցեմք, նոքօք հանդերձ յափշտակեցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս» [Ա թես. Դ 14, 16], այս պատճառաւ շատերուն լաւագոյն թուեցաւ ըսել, թէ մահ չճաշակողներ ալ պիտի ըլլան: Եւ այս մտքով է, որ Հանգանակին մէջ կ'ըսենք, թէ՝ «Գալոց է ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»: Այսուհանդերձ, մինչ արեւելեայք ոմանք կ'ընդունին ոմանց կենդանի մնալը, արեւմտեայք ընդհանրապէս կ'ըսեն, թէ մնացածները թէեւ վայրկենական մահ մը պիտի ունենան, բայց պիտի մնան ընդհանուր դատակնիքէն եւ մահուան պատուհասէն:

Այս կարծիքներու տարբերութիւնը յառաջ կու գայ Պողոսի կարգ մը խօսքերուն տարբեր ընթերցուածներէն, զի ուր որ մեր սովորական օրինակները ունին՝ «Ամենեքեան ննջեցուք, այլ ոչ եթէ ամենեքեան նորոգեցուք յանկարծակի ի փող յետին, քանզի փող Հարկանի» [Ա Կորնթ. ԺԼ 52], ուրիշ կերպ կ'ընթանան ուրիշներ. յոյնը ունի՝ «Ոչ ամենեքեան ննջեցուք, այլ ամենեքեան նորոգեցուք յանկարծակի, յական թօթափել ի փող ետին, քանզի փող Հարկանի» եւ այլն, իսկ լատինը ունի՝ «Ամենեքեան յարիցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեցուք: Յանկարծակի, յական թօթափել, ի փող յետին, քանզի փող Հարկանի» եւ այլն: Յոյնը ըստ իմաստի համաձայն է մերինին եւ տարբեր է տնադրութեամբ միայն. իսկ լատին ընթերցուածը

օտարացած կը թուի բնագրէն, որուն աւելի կը յարմարի հնագոյն հայերուն կարծիքը:

240. ՀՌՈՄԷԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Շատ աւելի կը տարբերին կարծիքները, երբ պէտք կ'ըլլայ որոշել մարմինէն բաժնուած հոգիներուն վիճակը: Լատին եկեղեցին իր այժմեան վարդապետութեան համաձայն կ'ընդունի, թէ իր մարմինէն զատուած հոգին անմիջապէս կը դատուի եւ վճիռ կ'ընդունի իր գործերուն համար. եթէ ըստ ամենայնի արդար է, նոյն յետայն կը ժպտանաքէ արքայութիւնը, որ է Աստուծոյ երանաւէտ տեսութիւնը. եթէ ծանր յանցանքներով մեղաւոր է, դժոխքի կը դատապարտուի. իսկ եթէ ոչ մին է եւ ոչ միւրը, այլ թեթեւ մեղքով մեղաւոր է կամ չէ լրացուցած ծանր մեղաց ապաշխարութիւնը, կը դատապարտուի քաւարանի մէջ մնալու ժամանակաւորապէս՝ մինչեւ լրումը սահմանուած արգելականութեան, որմէ վերջ իսկոյն արքայութիւն կը փոխադրուի՝ մաքրուած եւ արդարացած: Իսկ եթէ անկնունք մասնակ է առանց ներգործական մեղքի, կը մնայ Լիմպոսին մեջ, որ է տեսակ մը արգելարան մշտնջենաւոր զրկման՝ առանց տանջանքի: Լրացնելու համար այս խնդրոյն վերաբերմամբ հարկաւոր տեղեկութիւնը, պէտք էր ըսել, թէ իւրաքանչիւր անձի համար կատարելի առանձնական դատաստանը ո՞ր պիտի կատարուէր արդեօք՝ Հոգիին՝ մարմինէն ելած տե՞ղը, թէ՞ Հոգիին՝ իրեն յատկացեալ տեղը փոխադրուելէն վերջ: Դարձեալ հարկ էր որոշել, թէ ո՞վ պիտի ըլլայ դատաւորը՝ Աստուած ինքնին՝ մարդեղութեան խորհուրդէն անկախաբար, թէ՞ Քրիստոս՝ իբրեւ մարդացեալ Որդի Աստուծոյ: Այս վերջին ենթադրութեան պարագային հա՞րկ է արդեօք կարծել, թէ Քրիստոս իւրաքանչիւր վախճանեալի քով պիտի անցնի եւ դատաստան կարգէ իւրաքանչիւրին համար: Հոռոմէականները թէեւ կ'ընդունին այս վերջին պարագաները, բայց չեն պնդեր, թէ ստո՞յգ են անոնք հաւատքի ստուգութեամբ, ինչպէս կը պնդեն վիճակներու անմիջական որոշման մասին:

241. ՀԻՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բայց այս չէ հին վարդապետութիւնը, որ երբէք չճանչցաւ առանձնական դատաստան իւրաքանչիւր վախճանեալի համար, այլ ճանչցաւ այն դատաստանը միայն, որ ներկայ կեանքի վախճանին պիտի կատարէ Քրիստոս մարմիններու յարութեան ատեն եւ այն

ատեն միայն պիտի տայ վճիռը արքայութեան յաւիտենական երանութեան եւ դժոխքի յաւիտենական տանջանաց համար: Այդ երկու վերջնական օժարաններէն դուրս, ուրեմն, պէտք է կենաց ուրիշ տեղ մը, ուր սպասեն մարմինէն զատուած հոգիները. այդ տեղն է այն, զոր սովորաբար կը կոչենք կայան հոգւոց: Իսկ որովհետեւ պատշաճ չի թուիր այդ կայանին մէջ խառնաշփոթ կերպով ընդունիլ արդարները՝ ամբարիշտներուն եւ սուրբերը անսուրբներուն հետ, ուստի, թէեւ ոչինչ յստակօրէն գիտենք վարդապետական տեսակէտով, բայց անբանաւոր չի թուիր մտածել, թէ եթէ ոչնչատաստանով եւ որոշումով, բայց գոնէ ընտրանքով կը պահուին նմանները նմաններու հետ. մինչ բոլորովին անդէպ պիտի ըլլար ըսել, թէ ամէնքը առ հասարակ կը տանջուին նոյն անորոշ տաճնապով հաւասարապէս հնարաւոր տեսնելով իրենց անձերուն համար. սուրբերը՝ տանջանքները, եւ անսուրբները՝ երանութիւնը: Այս պատճառաւ ընդհանրապէս կ'ընդունուի իւրաքանչիւր հոգիի տրուած մտքի լուսաւորութիւն մը իր վիճակին մասին, որով Դատաստանի օրէն ալ առաջ արդարները կ'ուրախանան երանութեանց ակնկալութեամբ, ինչպէս ամբարիշտները կը տխրին տանջանքի երկիւղով:

242. ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Եւ որովհետեւ անյայտ ապառնիներու վրայ կը խօսինք, որոնց մասին ոչինչ կայ Յայտնութեան մէջ, այս պատճառաւ պէտք է զարմանալ, եթէ երբեմն ոմանք ըստ իրենց տեսութեան տարբերեալ դրութիւններ կազմեն: Բայց այդ տարբերութիւններուն մէջ իսկ բան մը կայ, որ հաստատուն է մեզի համար՝ իբրեւ կոռուան ոտից. այդպիսի իրողութիւն մըն է սա, թէ հոռմէականաց առանձնական ըսած դատաստանը եւ անմիջական հատուցումը արտաքոյ է Աւետարանի վարդապետութենէն եւ հետեւաբար օտար՝ Ուղղափառ Եկեղեցւոյ հնաւանդ դաւանութեան. Սուրբ Գիրքէն յայտնի վկայութիւններ կը հաստատեն զայդ. ինչպէս Պօղոսի խօսքերը. «Կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ՝ արդարն Դատաւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն, որք սիրեցին զյայտնութիւն Նորա» [Բ Տիմ. Դ 8]. «Հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ» [Գործք Ժէ 31]. «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի Ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. Ե 10]:

Այս մտքով կ'իմանան նաեւ ոմանք այս խօսքերը. «Սոքա ամենեքին, վկայեալք ի հաւատոցն, չեւ եւա ընկալան զաւետիսն Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեսցին» [Եբր. ԺԱ 39]: Ու Յովհաննէս կ'ըսէ. «Յորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զՆա, որպէս եւ էն» [Ա Յովհ. Գ 2]: Քրիստոս ինքնին ըսաւ. «Երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնում զձեզ առ Իս» [Յովհ. ԺԴ 2]:

Բայց յայտնագոյն եւ վճռական է նկարագիրը Դատաստանին, զոր ինքն Քրիստոս չարչարանքէն քանի մը օրեր առաջ խօսեցաւ, եւ ուր մի առ մի յառաջ կը բերուին Ատենին բացումը, օրէնքներուն, արժէքներուն բաժանումը, գործերուն քննութիւնը եւ երանութեան ու դատապարտութեան վճիռները եւ սկզբնաւորութիւնը հատուցումներուն՝ մեղաւորաց մտնելը յաւիտենական տանջանքներուն մէջ եւ արդարներուն՝ յաւիտենական կեանքը [Մատթ. ԺԵ 31-46]:

243. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԿԱՅՈՒԹԻՒՆ

Ընդդէմ այս յայտնութեան ըսածներուն, որոնք ուշ կը ցուցնեն հատուցմանց վերջին օրը, անշուշտ ոչինչ կը զօրեն այն խօսքերը, որոնց մէջ կը յիշատակուին արդարներուն խոստացուած երանութիւնները եւ մեղաւորներուն սպառնացած տանջանքները, որովհետեւ անոնք մահէն ետքի անմիջականութիւն չեն ցուցաներ, այլ՝ հատուցմանց հաստատութիւնը եւ ստուգութիւնը: Գրուած է, այո՛, Աւետարանին մէջ. «Եղեւ մեռանել աղքատին եւ տանել հրեշտակացն զնա ի գոգն Աբրահամու: Մեռաւ եւ մեծատունն եւ թաղեցաւ: Եւ ի դժոխս ամբարձ զաչս իւր» եւ այլն [Լուկ. ԺԶ 22-23]: Սակայն նախ՝ առակ է ըսուածը եւ ոչ թէ՛ պատմութիւն, ուստի եւ եղելութեան մասին ոչինչ կը հաստատէ, եւ երկրորդ՝ լատինաց կէտադրութիւնը չի համապատասխաներ յունականին եւ մերինին, զի անոնք կ'ուզեն կարգալ՝ «Եւ թաղեցաւ ի դժոխս», որպէսզի իրենց կարծիքը հաստատեն: Եւ, ի վերջոյ, ի՞նչ է Աբրահամու գոգը, ո՞ւր էր Ղազարոս. ամէն պարագայի մէջ, յաւիտենական վարձուց արքայութիւնը չէր ան, դժոխքն ալ չէ, ուրեմն, յաւիտենական տանջանքի տեղը:

244. ԱՒԱԶԱԿԻՆ ԽՈՍՏՈՒՄԸ

Հռոմէականները յառաջ կը բերեն Քրիստոսի ըսած խօսքը աւագակին. «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» [Ղուկ. ԻԳ 43], պնդելով «այսօր»-ին վրայ: Սակայն ո՛չ «այսօր»-ը իսկոյնը կրնայ ցուցանել, զի, նոյնիսկ ըստ Հռոմայեցւոց կարծեաց, գոնէ Քրիստոսի Յարութեան եւ Համբարձման պէտք էր սպասել, եւ ոչ թէ «դրախտ»-ի յաւիտենական արքայութիւնը կրնայ նշանակել ըստ ինքեան, եւ որպէսզի կարող ըլլայինք մեկնողաբար տարածել իմաստը, պէտք էր որ ուրիշ տեղէն իմացած լինէինք ստոյգը: Յառաջ կը բերեն նաեւ Յայտնութեան Գրքէն արդարներուն Համար ըսուածը, թէ՛ «Կային առաջի Աթոռոյն եւ առաջի Գառինն՝ արկեալ զիւրեամբք Հանդերձս սպիտակս եւ արմաւենիս ի ձեռս իւրեանց» [Յայտ. է 9], որուն մէջ յաւիտենական երանութեան վայելքը կը Հաւաստուի՝ սպիտակ Հանդերձներով եւ Աստուծոյ Աթոռին առջեւ կենալով: Բայց դիտելի է նախ, որ տեսիլք է այդ գրուածքը, եւ է, որ կը խօսի, ինչպէս ամբողջ Յայտնութեան Հիւսուածքը: Եւ երկրորդ՝ անոնց Համար, որոնք սպիտակ Հազած են, այլուր յատկապէս կը նշանակուի ակնկալութեան վիճակ. «Տուաւ նոցա ագանելիս սպիտակս եւ ասացաւ նոցա, զի Հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա եւ եղբարք նոցա, որք Հանդերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա» [Յայտ. Զ 11]:

245. ԿԱՅԱՆՔ

Ծանօթ է նոյնպէս Եկեղեցւոյ ընդհանուր մէկ կարծիքը, որ մանաւանդ յայտնուած է եկեղեցական յաղթական երգերուն մէջ եւ ծիսական պարագաներու մէջ անգամ, որոնց մէջ անոնք, որ սուրբ են, կը նկարագրուին արդեամբք վայելող աստուածային տեսութեան եւ ամէն բարեաց եւ երանութեանց, որոնցմով պիտի լրանայ յաւիտենական Հատուցմանց ամբողջութիւնը: Աւելորդ է այս մասին յառաջ բերել վկայութիւններ. ամէն քրիստոնեայ տեղեակ է այս իրողութեան: Հարկ է, ուրեմն, որ ըստ Եկեղեցւոյ աւանդութեան ընդունինք, թէ վախճանեալներու Հոգիները ունին առժամեայ կացութիւն մը՝ ո՛չ անմասն ակնկալեալ բարիքներէ եւ ո՛չ գերծ երկուցուած չարիքներէ, եւ թէ Հոգիներու կայանները տարբերեալ են ըստ Հանգամանաց, եթէ չուզենք զատ-զատ որոշուած ըսել տեղոյ, կամ թէ բաշխուած է ըստ մասանց, եթէ չուզենք ըսել ըստ թոռոյ: Մեր վարդապետներուն կարծիքով, ըստ Տաթեւացւոյն, կը գատորոշուին երկու կայաններ՝ մին՝

երկնից վերեւը, միւսը՝ երկնից ներքեւը: Առաջինին մէջ ժողովուած են անոնք, որ թողուցին ամէն ինչ եւ գացին Քրիստոսի ետեւէն, իսկ երկրորդին մէջ կը գումարուին անոնք, որ այդպէս չեն ըրած. անոնք են, որոնք, սատանայի գործունէութենէն եւ աշխարհի կիրքերէն զրաւուած, կը մնան՝ սպասելով Հանդերձեալ Դատաստանին, որպէսզի գուցե՛ր քաւուին եւ ողորմութեան արժանան: Այս երկու կայանները կը կոչուին աջակողմեան խորան: Իսկ ձախակողմեան խորանը այն է, ուր կը ժողովուին Հոգիները չարերուն եւ մեղաւորներուն, որոնք Դատաստանով պիտի դատապարտուին: Աջակողմեան եւ ձախակողմեան կոչումը նիւթական զետեղման իմաստով չէ, այլ կը նշանակէ Քրիստոսի քաղցր Հայեցողութիւնը, որ աջն է, եւ դառն Հայեցողութիւնը, որ ձախն է: Ինք Տաթեւացին է, որ կը յայտնէ այս կարծիքը, թէ բոլոր Հոգիները մէկ տեղի մը մէջ են, բայց զանազանութիւն կայ անոնց գործերուն մէջ. ոմն լի է անմահութեամբ եւ խնդութեամբ, եւ ոմն՝ դառնութեամբ եւ յուսահատութեամբ:

246. ԿԱՅԱՆԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Իսկ թէ ի՞նչ բանով առաջին կարծիքը կը տարբերի Հռոմէականներուն կարծիքէն, դիւրին է նկատել, թէ ուրիշ է ընդունելի նախապատրաստական վիճակ մը յոյսի եւ երկիւղի՝ առանց որոշման Դատաստանի եւ վայելման վերջնական Հատուցման, եւ ուրիշ է ըսել, թէ ամէն ինչ վերջացած է, դատաստանը եւ վճիռը Հատուցուած են, որով այլեւ տեղի չի մնար Դատաստանի, Հետեւաբար այլեւս չեն արդարանար այն խօսքերը, զորս Քրիստոս կ'ընէ Դատաստանի օրուան նկարագրականին մէջ, որովհետեւ այլեւս պէտք չի մնար օղիքը բաժնել այծերէն եւ ոչ ալ՝ գործերը քննելու եւ Հետեւաբար՝ բարիները արքայութիւն մտցնելու եւ չարերը դժոխք նետելու, մինչ միւս կերպով սուրբերը արքայութենէն պիտի զրկուէին ատեն մը՝ վերստին դատուելու Համար, եւ մեղաւորները գոնէ առժամապէս պիտի զերծանէին դժոխքէն՝ կրկին դատուելու Համար Դատաստանով: Մարդոց Հոգիներու Համեմատ պէտք է խօսիլ նաեւ աննիւթական Հոգիներուն Համար, վասնզի շատեր կան, որ կ'ըսեն, թէ Հրեշտակներուն եւ դեւերուն Համար ալ դատաստան պիտի ըլլայ, եւ թէ բարի եւ չար Հրեշտակաց կայանները նոյն ինքն բարի եւ չար մարդոց կայաններն են, եւ ասկէց է, որ յաճախ արդարները բնականից կ'ըսուին Հրեշտակներուն, եւ չարերը՝ դեւերուն: Նմանապէս, սուրբերը յաճախ փառաւորեալներ եւ ի փառս Հանդուցեալներ կը կոչենք: Բայց փառքը կրկին իմաստ ունի, զի ուրիշ է գործոց փառքը, եւ

ուրիշ՝ Հասուցմանց փառքը. առաջինը կը պատկանի յոյսի կայանքին, երկրորդը՝ երկնից արքայութեան: Առաջինովը միշտ կը փայլին արդարները Դատաստանէն առաջ, երկրորդովը պիտի փայլին Դատաստանէն վերջ, որով աջակողմեանները փառքէ փառք պիտի բարձրանան, վերանան, երբ լսեն երանական օրհնութեան ձայնը, իսկ առ այժմ ամենուն կը մնայ բարեաց յուսով Հանգչիլ արդարոց օրհնանին մէջ՝ մինչեւ Քրիստոսի մեծ Գալուստը:

247. ԴՐԱԽՏԻՆ ԱՆՈՒՆԸ

Ռամիկը դրախտ անունը յաճախ կը գործածէ իբրեւ անուն այն տեղին, ուր է Հոգիներուն կայանը, եւ այս անունը կը համեմատուի եզեմական դրախտին հետ՝ կարծուելով նոյն այն տեղը, ուսկից արտաքսուեցաւ Ադամ, եւ ուր կը դառնան արդարներուն Հոգիները՝ մինչեւ Դատաստանին օրը յուսով Հանգչելու համար: Սակայն Տաթևացին «ի տգիտաց յարմարեալ» կ'ըսէ ատոր համար, որովհետեւ անմարմին Հոգիներու համար մարմնաւոր կայանի պէտք չկայ: Այս պատճառաւ խորհրդական իմաստով պէտք է հասկնալ՝ «էրանեալ աւազակին բացեր զդուռն Ադին դրախտին», եւ՝ «Յորժամ ել Ադամն Հին, եղ զաւազակն ի մէջ դրախտին», որոնք անշուշտ յարմարցուած են Քրիստոսի «Այսօր ընդ իս իցես ի դրախտին» խօսքին [Լուկ. ԻԳ 43]:

248. ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ ԿԱՐՄԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Յոյժ ի դէպ է այստեղ յիշեցնել այն խնդիրը, որ կը յուզուէր Արեւմուտքի մէջ՝ դոմինիկեան եւ ֆրանչիսկեան վարդապետութեանց միջեւ: Վերջինները կը պաշտպանէին, թէ արդարներուն Հոգիները, Յարութենէն եւ Դատաստանէն առաջ թէեւ երկինք վերացած, չեն վայելել աստուածային երանական տեսութիւնը, այլ միայն կեցած կը մնան Քրիստոսի առջեւ՝ ըստ մարդկային կերպարանին, որ է Գառն Աստուծոյ: Իսկ առաջինները կը պնդէին, թէ մահէն անմիջապէս ետքը, եթէ արդար են, կամ մաքրարանին մէջ սրբուելէ վերջ կը մտնեն արքայութիւն եւ կը սկսին վայելել յաւիտեանական Հասուցման երանական տեսութիւնը: Յովհաննէս ԻԲ Հոռմի Հայրապետը Հաստատեց ֆրանչիսկեանց վարդապետութիւնը (յամին 1320), իսկ իր յաջորդը՝ Բենեդիկտոս ԺԲ, քսանհինգ տարիներ յետոյ (1345) դոմինիկեանց կողմը բռնեց եւ Հաստատեց այն կարծիքը, որ այժմ կը տիրէ Լատինաց Եկեղեցիներուն մէջ, բայց յայտնապէս կ'երեւի, թէ

նորագոյն դաւանութիւն մըն է այդ: Յայտնի է, թէ դոմինիկեաններէն էին Ունիթոները, որոնք հայոց մէջ Հռոմէական կարծիքին առաջին պաշտպանները եղան:

249. ՀԱԶԱՐԱՄԵԱՅԲ

Հազարամեայց կամ քիլիաստայց կարծիքը Երեւեցաւ Եկեղեցւոյ առաջին դարերուն՝ իբրեւ վերջին նշխար ակնկալութեան Քրիստոսի մօտալուտ Գալստեան եւ իբր բառական մեկնութիւն Յայտնութեան խօսքերուն, ուր կը տեսնուին, որ արդարները հազար ամ կը թագաւորեն Քրիստոսի հետ [Յայտ. Ի 4]: Այդ թագաւորութիւնը պիտի տեղի ունենար երկրի վրայ, ուր Քրիստոս վերստին պիտի երեւէր իբրեւ Թագաւոր: Իր ընտրեալները, որոնք Իր հաւատքին համար նահատակուեցան կամ որոնք չուրացան Անոր հաւատքը, պիտի միասին թագաւորէին առաջին Յարութեամբ մինչեւ երկրորդ Յարութեան ժամանակը, որմէ վերջ երկնից արքայութիւնը պիտի մտնէին: Նախնի Հայրերէն ոմանք եւս, ինչպէս՝ Գալրոս, Յուստինոս, Երանոս եւ Լակրատինոս, հազարամեաններէն կը համարուին, սակայն անոնց կարծիքը տարբեր էր քիլիաստեայց կարծիքէն, որոնք հազարամեայ թագաւորութիւնը երկրաւոր հեշտութեանց մէջ կը հաստատէին, մինչ առաջինները սուրբ եւ Հոգեւոր վայելքներու մէջ կը դնէին զայն: Հազարամեայց կարծիքը նորոգուեցաւ Արեւմուտքի մէջ ԺԲ. դ., կալարարացի Յովակիմ արքայի ձեռքով, որ առաջնորդ եղաւ յովակիմեանց աղանդին, ու բողոքականաց ծագումէն ետքը անոնցմէ ոչ սակաւք ընդգրկեցին հազարամեայց վարդապետութիւնը՝ պատշաճեցնելով զայն Նեոին եւ պոռնկած Բաբելոնի անկման [Յայտ. ԺԸ 2], որուն մէջ ուղեցին տեսնել Հոռմի Եկեղեցիին պատկերը: Սակայն հիմակ այլեւս չեն երեւիր հազարամեաններ, եւ անոնց կարծիքը պէտք է դասել ի կարգ վաղնջական երեւոյթներու, որոնք արժանի իսկ չեն յիշատակութեան՝ իբրեւ վարդապետական դրութիւն:

250. ԱՇԽԱՐՀԻ ԿԱՏԱՐԱԾԸ

Հաստատելէ վերջ, թէ ո՛չ մէկ վճիռ եւ ո՛չ ալ Հասուցման գործադրութիւն կը լինին ննջեցեալներու վրայ իրենց մահուան ըրպէին, կը մնայ խօսիլ այն գործերուն եւ պարագայից մասին, որոնք պիտի կատարուին աշխարհի վախճանին: Շատ են այն խնդիրները, որոնք կը յուզուին կատարածին մասին, եւ Աւետարաններու եւ

Առաքելական Թուղթերու մէջ եղած կանխասաց գուշակութիւնները, թէեւ ամէնքն ալ, խորհուրդի եւ գաղտնութեան վարագոյրով ծածկուած ըլլալով, տեղի կու տան մեկնութեանց եւ բացատրութեանց՝ իւրաքանչիւր անձի քմահաճոյից համեմատ: Եւ այս՝ ոչ միայն այժմ, այլ նաեւ՝ նախկին եւ առաջին դարերուն: Պօղոս կատարածի ժամանակին մասին երբ կը խօսէր, իբր կանխագեկոյց նշան կը ցուցանէր Սուտ Քրիստոսի գալուստը, որ է ըսել, թէ պիտի տեղի չունենար Քրիստոսի Գալուստը, «եթէ ոչ եկեացէ նախ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան» [Բ Թես. Բ 3]: Այս իսկ է, որ կը կոչուի ըստ մեզ Նեոն՝ անունէն Ներոնի, որուն ուրիշներ կը պատշաճեցնեն հակաքրիստոսի մասին Յովհաննու խօսքերը: Նեոնի գալուստը եւ անոր ձեռքով կատարելի աստուածամարտ չարութեանց եւ ամբարշտութեանց գործերը, առանց մահը ճաշակելու վերացած Ենովքի եւ Եղիայի երեւիլը եւ անոնց վկայութիւնը, երկնքի անհետացումը, երկրի կործանումը, երկնային մարմիններու համանգամայն խառնակիլը եւ ներկայ տիեզերական դրութեան խանգարումը՝ այդ ամէնը, որոնք կատարածին իբր հանգամանքներ կը յիշուին, մեր խօսքին հետ որեւէ կապ չունին, որովհետեւ կարելի է զանոնք հաւատոց մասունք նկատել եւ ոչ ալ՝ իբրեւ դաւանական կէտեր՝ յայտնութեան զօրութեամբ, այլ առաւելն՝ իբրեւ ակնկալեալ գուշակութիւններ:

251. ՄԵՌԻԵԼՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Սակայն կարելի է նոյնը ըսել մարմիններու հանդերձեալ յարութեան մասին, որ իբրեւ դաւանակէտ արձանագրուած է Հանգանակին մէջ: Իսկութեան մէջ հիմնական նկատուածները հետեւեալներն են. նախ՝ թէ ընդհանուր է յարութիւնը. բոլոր մարդիկ, որոնք եղած են աշխարհի վրայ, պիտի կենդանան վերստին: Երկրորդ՝ յարութիւնը պիտի ըլլայ նորոգ մերձեցմամբ մարմիններու հետ եւ այն՝ իւրաքանչիւրին իր սեփական մարմինին հետ ու պահելով էական եւ սեռական հանգամանքները, զոր ունէր մահուան ատեն: Երրորդ՝ յարուցեալներուն մարմինները ի նորոյ պիտի ստանան անապակա-նութեան ձիրքեր, որոնցմով այլեւ պիտի չլուծուին եւ պիտի չմեռնին, թէպէտեւ այդ ձիրքերը տեսակ-տեսակ պիտի ըլլան՝ նայելով, թէ ո՛ր պիտի մտնեն յարուցեալները՝ յաւիտեական կենսաց, թէ՛ յաւիտեական տանջանաց մէջ: Ուրիշ խնդիրներ եւ յուզուած են, մասնաւանդ՝ դպրոցականներուն մէջ, մարմիններու նոյնութեան, բազկացուցիչ տարբերու հաւաքման, մասերու ամբողջութեան, անդամներու

խնդրութեանց եւ թերութեանց, հասակի կամ տարիքի, հասակի երկարութեան կամ չափի եւ մարմնին թանձրութեան եւ ասոնց նման արտակարգ մանրամասնութեանց շուրջ: Բայց ատոնց համար ո՛չ Ս. Գիրքէն կարելի է ստոյգ բան մը քաղել եւ ո՛չ ալ՝ դաւանական ստուգութիւններ ձեռք բերել: Այսպիսի հարցեր՝ դպրոցական մտայնութեան ծնունդ մեծ մասամբ, այժմ հռոմէականներուն մէջ անգամ չեն արծարծեր նախկին շահագրգռութիւնը:

252. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ

Մեռելոց յարութեան ճշմարտութիւնը աներկբայ է աւետարանական վարդապետութենէ, այնու, զի Քրիստոսի օրով սաղուկեցիները կ'ուրանային զայն, եւ Քրիստոս ուղղակի կը մերժէր անոնց մոլորութիւնը [Մատթ. ԻԲ 31, Ղուկ. Ի 38]: Նոյնպէս Պօղոս ալ քահանայապետին ատեանին մէջ սաղուկեցիները յանդիմանելու համար յարութեան խնդիրը մէջ կը բերէր [Գործք ԻԳ 6]: Բայց մենք զայն ուղղակի վարդապետութեամբ ալ քարոզուած կը գտնենք Քրիստոսէ, որ կ'ըսէր. «Եկեացէ ժամանակ՝ յորում ամենեքին, որք ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի Նորա եւ եկեացեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՛ ի յարութիւն կենաց եւ որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց» [Յովհ. Ե 28], ու առաքեալ կը գրէր. «Հաւատամք, եթէ Քրիստոս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի անցէ ընդ Նմա» [Ա Թես. Դ 13]. եւ հարկ է կարդալ, ինչ որ եղբայրօրէն կը գրէ առ կորնթացիս [Ա Կորնթ. ԺԵ] եւ Տիմոթէոս [Բ Տիմ. Բ] յանդիմանելու համար յարութիւնը ուրացողները: Իսկ այն փաստը, զոր կարելի է քաղել աւանդութենէն, հաստատուն է այն ակնկալութեամբ, որ եղած է բոլոր քրիստոնեաներուն միխթարութիւնը այս կեանքի տառապանաց մէջ, եւ զոր Եկեղեցին շարունակ քարոզած է՝ հետեւելով առաքեալին խօսքերուն, ուր հաստատել է վերջ. թէ «մեռեալք ի Քրիստոս յարիցեն», կը յարէր. «Այսուհետեւ միխթարեցէ՛ք զմիմեանս բանիւքս այսոցիւք» [Ա Թես. Դ 17], ուր ասոր կ'ակնարկէր Տերտուղիանոս, երբ կ'ըսէր. «Մեռելոց յարութիւն՝ քրիստոնէից ակնկալութիւն»:

253ա. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԷՆ Վ ԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէեւ մենք կը պաշտպանենք մեռելոց յարութիւնը իբրեւ քրիստոնէական վարդապետութիւն, բայց անդէպ չէ աւելցնել նաեւ Հին Կտակարանէն վկայութիւններ՝ ցուցնելու համար գոնէ այս վարդա-

պետութեան Հնութիւնը: Յոր կ'ըսէր. «Գիտեմ, թէ զի մշտնջենաւոր է, որ լուծանելոցն է զիս յերկրի՝ յարուցանել զմորթ իմ. որ կրեաց զայս ամենայն» [Յոր ժԹ 25]: Ու Դանիէլ կը գրէ. «Բազումք ի ննջեցելոցն ի Հող յերկրի յարիցեն՝ ոմանք ի կեանս յաւիտենականս եւ ոմանք ի նախատինս եւ յամօթ յաւիտենականս» [Դան. ժԲ 2]: Այս յոյսով կը խօսէր Շամուեայ որդւոց երկրորդը, «Այն, որ օշխարհաց Թագաւորն է, թէպէտեւ մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանս յաւիտենից, ի միւսանգամ ծննդեան ժամանակի կենաց ի կեանս դարձուցանէ», ու չորրորդը կը յարէր. «Յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեան յարութեան մեռելոց» [Բ Մակ. Ե 14]: Ու Մարթա՝ Ղազարոսի քոյրը, կ'ըսէր Քրիստոսի. «Գիտեմք, զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում» [Յովհ. ժԱ 24]: Իսկ փարիսեցւոց բովանդակ աղանդը ուժգնապէս կը պնդէր սաղուկեցւոց դէմ, թէ կայ յարութիւն [Գործք Գ 8]:

253ք. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԳԻՐՔԷՆ

Գիտենք, թէ Հին Կտակարանի Ս. Գրոց մէջ կան ինչ-ինչ խօսքեր, որոնք 'երկբայելի կ'ընեն մեռելոց վերանորոգումը: Ըստ այսմ գրուած է Սաղմոսին մէջ. «Յիշեաց, թէ մարմին են նոքա, Հոգի, որ ելանէ եւ ոչ եւս դառնայ» [Սաղմ. Հէ 39]: Դարձեալ՝ «Ոչ թէ մեռեալք օրհնեցսն զՔեզ» [Սաղմ. ՃԺԳ 17]: Դարձեալ՝ «Ոչ յարիցեն ամբարիշտք ի Դատաստան» [Սաղմ. Ա 5]: Նման են նաեւ Ժողովողին խօսքերը. «Պատահար է որդւոց մարդկան եւ պատահար անասնոց եւ պատահար յամենեսին ի նոպա, որպէս մահ սորա, նոյնպէս եւ մահ նորա, եւ շունչ է յամենեսին» [Ժող. Գ 19]: Բայց եթէ ճշտութեամբ զննուին այս խօսքերը, անոնք ըսուած են այս աշխարհի կենաց Համար, ներկային Համար, որ մինչեւ գերեզման կը տեւէ եւ կը դադրի երկրի վրայ: Եւ յետոյ, այդ խօսքերը ըսուած են ոչ թէ իբրեւ վարդապետական խօսքեր, այլ՝ միշտ իբրեւ այլաբանութիւն յառաջ բերուած՝ ցուցնելու Համար վիշտերու ծանրութիւնը կամ աշխարհիս անցաւորութիւնը: Ժողովողին վերջին խօսքին ծայրը կը կարդանք. «Ամենայն ի մի տեղի երթայ, ամենայն եղեւ ի Հողոյ եւ ամենայն դառնայ ի Հող, եւ ո՛վ գիտէ զոգիս ոգւոց մարդկան, եթէ ելանեն ի վեր, եւ զշունչ անասնոց, եթէ իջանէ ի խոնարհ յերկիր» [Ժող. Գ 20, 21], ուր Հակառակորդները կը տեսնեն իրենց կարծեաց Հաստատութիւնը: Ընդհակառակն սակայն՝ անոնց մէջ յստակօրէն կը տեսնուի մարմինին՝ Հոգիէն տարբերութիւնը, եւ մարդուն Հոգիին՝ անասնոց Հոգիէն տարբերութիւնը, մանաւանդ՝ բնագրին Համեմատ,

որ աւելի բացայայտ է. «Եւ ո՛վ գիտէ զոգիս մարդոյն, որ ելանէ ի վեր, եւ զոգի անասնոյն, որ իջանէ ի խոնարհ յերկիր»: Իսկ յարութեան խնդրի խօսք չկայ Հոս, զի այդ մասին չէ խօսքը: Նոյնն է նաեւ Սաղմոսին խօսքը. «Ոչ յարիցեն ամբարիշտք ի Դատաստան»: Ըստ բնագրին է. «Եւ ոչ կարասցեն ամբարիշտք Դատաստանի», որ է ըսել «Մի՛ կարասցեն արդարանալ յաւուրն Դատաստանի»:

254. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՆՈՒԹԵՆԷՆ

Ուրիշներ իրաց բնութեան կարգէն կը Հանեն իրենց տեսութիւնները, որպէսզի ցուցանեն, թէ մարմիններու յարութիւնը ո՛չ պատշաճ է, ո՛չ Հնարաւոր: Վասնզի, - կ'ըսեն, - մարմինը ինչ ո՛ւ Հատուցմանց ենթարկուի, քանի որ մարդկային եւ բարոյական գործոց արժէքն ու արդիւնքը Հոգիինն են եւ ոչ թէ՛ մարմինին: Եւ դարձեալ կ'ըսեն, թէ ինչ ո՛ւ այդ երկարատեւ բաժանումը, եթէ մարմինը կարելոր էր Հոգիին Համար, պէտք չկար, որ անկէց զրկուէր Հոգին մինչեւ կատարածը: Իսկ եթէ կարելոր էէր, ի զուր էր նորէն միաւորելու երկուքը: Սակայն ո՛չ ապաքէն մարդկային ենթական իր ամբողջութեամբն է մարդ՝ կազմուած Հոգիէ եւ մարմինէ, ու՝ եթէ գործերը ենթակայինն են, Հատուցումն ալ անորը պիտի ըլլայ, ապա ուրեմն եւ մարմինին մասնակցութիւնը շատ ալ պատշաճ է, այնպէս որ իմաստասէրներէն չատերը, այս պատշաճութեան վրայ Հիմնուելով, կը ջանան ապացուցանել յարութեան Հարկաւորութիւնը՝ Հետեւելով Պողոսի խօսքին. «Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. Ե 10], իսկ երկարատեւ բաժանումը Հետեւութիւն է իրաց բնական կարգին, որպէսզի լրանայ մարդկութիւնը, եւ գայ կատարածը, եւ Հատուցմանց ժամանակն ըլլայ: Առարկութեանց երկրորդը գուցէ զօրէ Հոռմէականաց դրութեան դէմ, որոնք արդէն Հոգիները միայնակ կը մտցնեն յաւիտենական Հատուցման մէջ, եւ երբ մէկը արդէն կ'ըսէ, թէ դատաստանները եւ Հատուցումները կատարուած են առանց մարմիններու, տկարացուցած կ'ըլլայ արդէն յարութիւնը ապացուցելու Հարկը:

255. ՈՒՐԻՇ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրիշներ անլուծելի դժուարութիւններ ցուցնելու Համար յարութեան նիւթական գործադրութեան խնդիրներ կը Հանեն: Կ'ըսեն. ա) Շատ մարմիններ ուրիշներու մարմիններուն մէջ լուծուած-կորսուած են, զոր օրինակ՝ սովորական կամ պատահական մարդակերութեան

Հետեւանքով: բ) Առանց մարդակերութեան ալ լուծուած մարդկային մարմիններու տարրերը ուրիշ մարդկային մարմիններու կամ բոսորու կամ օդի մէջ փոխանցուած են եւ վերստին ուրիշ մարդերէ իւրացուած են՝ անոնց սնունդ ըլլալով, եւ այսպէս անվերջանալի փոխարկութեանց հոլովմանց մէջ են: գ) Ինք՝ մարմինն ալ, կ'աճի եւ կը նուազի, տարրեր կ'ընդունի իր մէջ եւ կ'արտաքսէ եւ ամբողջ իր գոյութեան ընթացքին միշտ փոփոխութեան մէջ է, այնպէս որ դժուար կ'ըլլայ որոշելը, թէ որո՞նք են իւրաքանչիւր մարմինին իսկական տարրերը, որոնցմէ պիտի կազմուի յարուցեալ մարմինը: դ) Նոյնիսկ Հաշիւի կ'առնեն թիւը մարդոց, որոնք եղած են աշխարհի սկիզբէն մինչեւ կատարածը, ու կ'ըսեն, թէ անկարելի է, որ մեր Հողագունդը կարենայ պարունակել բոլոր յարուցեալները: Սակայն այս եւ ասոր նման խօսքերուն զիտումն է՝ Յարութեան վարդապետութիւնը տանիլ այնպիսի նիւթական եւ տարրական նոյնութիւններու, որոնց ոչ մէկ խոհական մարդ չի կրնար համամիտ ըլլալ: Զի մենք մարմիններուն նոյնութիւնը յիշեցինք գաղափարին պարզ առումովը, առանց խճճական պարագաներու, այնպէս որ կարենան յարմարիլ յաւիտեանական կեանքի նոր կացութեան, որ շատ կը տարբերի այս կեանքի անցաւոր կացութենէն: Ըստ այսմ, ո՛չ տեղի եւ ո՛չ ալ պարունակութեան խնդիր կարելի է ընել: Զի այսպիսի առարկութիւններ ոչինչ աւելի կը գորեն, քան ինչ որ եօթը եղբայրներու կնոջ մասին Քրիստոսի կը Հարցնէին սաղուկեցիները եւ պատասխան կ'ընդունէին, թէ Հանդերձեալ կեանքի պարագաները պէտք չկայ կերպարանելու այս կեանքի պարագաներու համեմատ, եւ մանաւանդ՝ մարմիններու պարագայից մէջ կայ եւ կը մնայ այնպիսի այլակերպութիւն մը, որուն գլխաւոր Հանգամանքները միայն կը յայտնէ Պօղոս՝ անշունչներու մէջ կատարուած փոփոխութեան նմանութեամբ, երբ կ'ըսէ. «Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան, սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառօք, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զօրութեամբ, սերմանի մարմին շնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր» [Ա կորնթ. ԺԵ 42-43]:

256. ԴԱՏԱՍԱՆ

Յարութենէն վերջ կու գայ Դատաստանը: Ինչ որ մենք պարզապէս կը կոչենք Դատաստան, Հռովմէականք կը յարանուանեն ընդհանրական, որպէսզի որոշեն ենթադրական առանձնականէն, որուն մասին խօսեցանք արդէն: Իսկ Դատաստանին կը Հակառակին նախ անոնք, որ կը մերժեն յարութեան եւ Հանդերձեալին Հետ կատարուե-

լիք որեւէ դատողական գործ: Կը Հակառակին նաեւ անոնք, որոնք, յարութիւնը մերժելով, կ'ընդունին միայն իւրաքանչիւր անձի Համար իր մեռած պահուն տրուած որոշում մը: Կը Հակառակին նոյնպէս Հռովմէականները, որոնք, առանձնական Դատաստանը ընդունելով, կատարածին ոչ մէկ դատողական գործ կը թողուն: Մինչդեռ Դատաստանին ստուգութիւնը աներկբայելի է այն ընդարձակ նկարագրականէն, զոր Քրիստոս ըրաւ՝ ըսելով. «Եկեացէ Որդի Մարդոյ փառօք Իւրովք... եւ նստիցի յաթոռ փառաց Իւրոց, եւ ժողովեցին առ Նա ամենայն ազգք, եւ մեկնեացէ զնոսա ի միմեանց... կացուացէ զօրին ընդ աշմէ Իւրմէ եւ զայծիսն՝ ընդ ձախմէ. ասացէ (ցառաջիւնսն). «Եկա՛յք, օրհնեա՛լք, (եւ այլն)»... ասացէ եւ ցայնոսիկ, որք ընդ ահեկէն իցեն. «Երթա՛յք յինէն (եւ այլն)», եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտեանականս» [Մատթ. ԻԵ 31-46]: Նոյնպէս եւ Պրոպատիկէի քարոզութեան մէջ մեռելոց յարութեանէն վերջ կը յիշուին դատաստանները [Յովհ. Ե 21-22]: Պօղոս եւս կ'ըսէ. «Հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ» [Գործք ԺԷ 31], եւ ինքը կ'ըսէ Փելիքսի՝ «վասն Հանդերձեալ Դատաստանին» [Գործք ԻԴ 25] ու կը գրէ Հաւատացեալներուն. «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի Ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար» [Բ Կորնթ. Ե 10]: Ու Պետրոս կ'ուսուցանէր անիշխաններուն, թէ ինքն Քրիստոս «պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն դնէ, թէ նա է սահմանեալն յԱստուծոյ, Դատաւոր կենդանեաց եւ մեռելոց» [Գործք Ժ. 42], եւ Յովհաննէս կը տեսնէր «զմեռեալս մեծամեծս եւ զփոքունս, որք կային առաջի աթոռոյն եւ գրեանք բանային, եւ այլ գիրք բացաւ կենաց, եւ դատեցան մեռեալք ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց» [Յայտ. Ի 12]: Իսկ աւանդութիւնը պայծառ է շատ բոլոր դարերու ս. Հարց վարդապետութիւններուն եւ եկեղեցական երգերու եւ աղօթքներու խոստովանութեանց մէջ:

257. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՏԱՍԱՆԻ ԴԷՄ

Այս ճշմարտութեան ընդդէմ, Հակառակորդները կը նկատեն նախ, թէ Դատաստանին այսքան նիւթական եւ զգալի մանրամասնութիւններով պատմուածքը յայտնի է, թէ այլաբանական պատկեր մըն է լոկ, ու իսկական չեն կրնար լինել ամպերը, աթոռը, փողը, գիրքը, կշիռքը եւ Դատաստանին միւս պարագաները: Բայց եթէ այդ մանրամասնութիւնները իբր այլաբանական ընդունինք իսկ, միթէ կրնա՞նք ուրանալ եղելութեան ճշմարտութիւնը: Ստոյգ են Յարութիւնը, Դատաստանը,

Հատուցմունքը, ու այդ զգալի պարագաները տրուած են՝ վարդապետութիւնը հասկնալի դարձնելու համար միայն: Կ'ըսեն նաեւ, թէ ըստ Քրիստոսի, Դատաստանը պէտք էր տեղի ունենար Երուսաղէմ կործանումէն անմիջապէս յետոյ, եւ կամ նոյնիսկ Քրիստոսի կարծեցեալ Գալուստը եւ Անոր յարակցած մեռելոց Յարութիւնը եւ մարդոց Դատաստանը նոյնիսկ ուղղափառ մեկնիչներ Երուսաղէմի վերջին կործանման մասին է, որ կ'իմանան:

Սակայն հարկ է դիտել, թէ երկու ճշմարտութիւններ կրնան լինի միասնաբար, եւ նմանօրինակ հնչող բառեր կրնան տարբերակ իմաստներ ունենալ: Ըստ այսմ՝ Ս. Գրոց վարժ եղողներու համար յայտնի է, թէ Քրիստոսի Գալստեան եւ աշխարհի կատարածին վարդապետութիւնը կ'ակնարկէ արդարեւ երբեմն քրիստոնէութեան յաղթանակին եւ երբեմն աշխարհի բուն կատարածին: Եւ այս աշխարհի կատարածը ատեն մը մտաւրուտ կարծուեցաւ: Բայց այս կարծիքը մոռցուեցաւ յետոյ ու անկէ շատ ակալի դիւրաւ՝ Հագարամեայց կեդակարծ վարդապետութիւնը, ու աշխարհի վախճանին, յարութեան եւ դատաստանին եւ Հատուցման իրադործութիւնը մնաց ժամանակին, զոր «ոչ է մեզ դիտել» [Գործք Ա 7], վասն զի ոչ ոք գիտէ զայն՝ Աստուծմէ զատ [Մատթ. Ի 7 36]: Անշուշտ, չենք կրնար խօսիլ եւ գիտնալ ակալի, քան ինչ որ Ս. Գիրքէն կը սովորենք, որովհետեւ ո'չ եղելութեանց մասին որ եւ է խօսք կայ եւ ո'չ որեւէ գուշակութիւն, այնպէս որ յաճախ ստիպուած ենք մեկնողաբար եւ մակաբերաբար բան մը ըսել:

258. ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Իսկ թէ այդ Դատաստանը պիտի տեղի ունենայ աշխարհիս վախճանին եւ ոչ թէ՛ իւրաքանչիւր մարդու վախճանին՝ ամէն մէկուն համար զատ-զատ, զայդ կրնան Հաստատել Հանդիսական պարագաներն ինքնին, զորս կարելի չէ անթիւ եւ անհամար կերպով բազմացնել եւ իւրաքանչիւր ակնթարթին աշխարհի զանազան կէտերուն վրայ այդպիսի դատաստաններու կատարում ենթադրել: Իսկ ինչ որ Պողոս կ'ըսէ՝ «կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ եւ յետ այնորիկ՝ Դատաստան» [Եբր. Թ 27], անհնարին է զայն իմանալ իբրեւ անմիջական Հետեւողութիւն, ինչպէս կը պնդեն Հռոմէականները, այլ՝ իբրեւ բոլոր մարդոց մեռնելէն յետոյ, զոր շատ իսկ բացայայտ կերպով կը Հասկցնէ առաքեալը՝ ըսուածներուն ի բացատրութիւն յիշելով Քրիստոսի Գալուստը մարդիկը դատելու համար. «Իսկ յերկրորդուն առանց մեղաց յայտնեցի այնոցիկ» եւ այլն:

259. ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎՃԻՌՆԵՐՈՒ

Դատաստանէն վերջ կու գան Հատուցումները, որոնցմէ երկուքը միայն կը յիշէ Քրիստոս իր մեծ նկարագրութեան մէջ՝ յաւիտենական կեանք արդարներուն համար եւ յաւիտենական տանջանք մեղաւորներուն համար, զորս սովորական բառով կը կոչենք արքայութիւն եւ դժոխք: Ինչ որ ըսուեցաւ Յարութեան եւ Դատաստանի մասին, եւ վկայութիւնները, որոնք Ս. Գիրքէն յառաջ բերուեցան, բաւական թող ըլլան՝ Հաւաստելու համար, թէ իրական են արքայութիւնը եւ դժոխքը, որոնք Դատաստանի մէջ արդարներուն եւ դատապարտուածներուն բաժինը պիտի ըլլան: Ուստի եւ կրնանք անոնց վերաբերեալ ապացուցութիւնները զանց ընել եւ քիչ մըն ալ խօսիլ անոնց զանազան Հանգամանքներուն եւ իրենց վերաբերած խնդիրներուն մասին:

260. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԷՆՈՒԹԻՒՆԸ

Արքայութեան էութիւնը, կամ, ինչ որ նոյն է ըսել, արդարներուն երանութիւնը, Հաստատուած է տեսութեանը վրայ Աստուծոյ, այսինքն՝ տեսնելու վրայ զԱստուած, որ աղբիւր է բարութեանց եւ լրումն երանութեան, ուստի եւ զայն վայելողը այլեւս պէտք չունի անկէ դուրս որ եւ է բարիի, եւ որովհետեւ, անշուշտ, իմանալին գերագոյն է, քան զգալին, այս պատճառաւ ալ յաւիտենական երանութիւնը իմանալի է բոլորովին, ու զգալին չի յիշուիր այլեւս, որովհետեւ զգալին իմանալին մէջ կ'ընկուզուի: Իսկ Աստուծոյ տեսութեան վրայ հիմնուած երանութիւնը երկու կերպով կը Հասկնան դարոցականք. մին՝ բնական, միւսը՝ գերբնական: Բաւական է պարզ տեսութիւն հոգեբանական ըմբռնումով եւ վերացական ծանօթութեամբ եւ սիրով ու խնդութեամբ՝ ըստ բնական զօրութեանց: Իսկ գերբնականը պայծառ եւ Հայեցողական տեսութիւնն է, որմէ կը բղխի սէր եւ ուրախութիւն՝ բնականէն գերազանց աստիճանով, ինչպէս որ պատճառն ալ բնականէն գերի վերոյ է: Իսկ այս վարդապետութեան վարդապետական Հանգամանքն է այն, թէ արդարները, իրենց մտքին մէջ երկնային լոյսով լուսաւորուած ըլլալով, դէմ յանդիման եւ Հայեցողաբար կը տեսնեն զԱստուած, բայց ոչ թէ կատարելապէս կ'իմանան ալ, ու ամէնքն ալ Հաւաստարապէս չեն վայելեր, Հետեւաբար եւ Հայեցողական տեսութիւններն ալ Հաւաստար չափով չեն ըլլար ամենուն մէջ:

261. ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այս բոլորը կը քաղուի առաքեալին խօսքերէն, որ կ'ըսէ. «Այժ տեսանեմք ընդ Հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ-յանդիման. այժ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ դիտացից, որպէս եւ նոյն ծանեալ գիս» [Ա Կորնթ. ԺԳ 12], ուր վերջին խօսքերը չափազանցօրէն կը ցուցանեն առաւելութիւնը, որովհետեւ անկարելի է, որ սահմանաւոր արարածը անսահման Արարիչին Հաւասարի: Ատոր է, որ կը վերաբերի նաեւ Յովհաննու խօսքը. «Գիտեմք, զի յորժամ Նա յայտնեսցի, նման Նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զՆա, որպէս եւ էն» [Ա Յովհ. Գ 2], եւ Հոս դարձեալ Հարկ է տեսնելը որոշել իմանալիէն, որովհետեւ տեսութիւնը որչափ ալ կատարեալ ըլլայ իմացութենէն: Իսկ վարձուց անհաւասարութեան կ'ակնարկէ Քրիստոսի սո խօսքը, թէ՛ «Ի տան Հօր Իմոյ օթեանք բազումք են» [Յովհ. ԺԴ 2], ուր յայտնապէս կը վկայէ Պօղոս՝ ըսելով. «Այլ փառք են արեգական եւ այլ փառք՝ լուսնի, այլ փառք՝ աստեղաց. եւ աստղ քան զաստղ առաւել է փառք» [Ա Կորնթ. ԺԸ 41]: Նոյնը հնար է քաղել նաեւ սո խօսքէն. «Այսուհետեւ կայ եւ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր Հատուցէ ինձ յաւուրն յայնմիկ արդարն Դատաւոր» [Բ Տիմ. Դ 8]: Վասնզի արդարութեան պսակը պէտք է Համեմատել իւրաքանչիւրի արդիւնքներուն:

262. ՅԱՐՈՒՑԵԱԼ ՆԵՐՈՒՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գալով այն խնդրոյն, թէ արդարեւ ինչպիսի մարմին պիտի ունենան իրենց արքայութեան մէջ, սովոր ենք ըսել, թէ անոնք պիտի ունենան փառքի ձիրքեր կամ փառաւորեալ մարմիններ՝ նման Քրիստոսի՝ Իր Յարութենէն վերջ ունեցած փառաւորեալ մարմինին: Դպրոցականները այս ձիրքերը սովոր են չորսի բաժնելու՝ անցաւորութիւն, թափանցութիւն, երազութիւն եւ պայծառութիւն, զորս Տաթեւացիներ Եօթնի կ'անցնէն եւ կը թուէ՛ գեղեցկութիւն, արազութիւն, ուժգնութիւն, ազատութիւն, կամաւորութիւն, առողջութիւն, անմահութիւն: Իսկ առաքեալը այլուր յառաջ բերած խօսքերուն մէջ կը թուէ անպականութիւն, փառաւորութիւն, գորութիւն, Հոգեւորութիւն [Ա Կորնթ. ԺԵ 42, 43], որոնց մասին պէտք չկայ երկարաբանելու, միայն թէ, ըստ պահանջից իրենց նորոգ դրութեան, այլեւս պիտի չլուծուին անոնք եւ պիտի չունենան այն պէտքերն ու կարիքները, զորս կ'ունենային այս կեանքին մէջ:

Իսկ մարմնական զգայութիւններն անշուշտ պիտի չկորսնցնեն, որպէսզի մարմինին էութիւնն ալ չկորսուի, բայց անոնց առարկաները եւ հանգամանքները պիտի տարբերին այժմեան կացութենէն, եւ երբ, ըստ Պօղոսի խօսքին, Հոգեւորութիւն, երկնաւորն ու մարմնաւորը պիտի ընկղմին իմանալիին եւ Հոգեւորին մէջ, բայց զգալի վայելքներու գաղափարը անպատեհ է արդարեւրուն խոստացուած Հոգեւորական երանութեան գաղափարին, եւ բոլոր այն խօսքերը, որոնց մէջ զգալի վայելքներու յիշատակութիւն կ'ըլլայ, պէտք է մեկնուին այլաբանական իմաստով՝ սկսելով բաժանումին Համար տուած խօսքէն. «Արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր Իմոյ» [Մատթ. ԻԶ 29]:

263. ԷՈՒԹԻՒՆ ՏԱՆՁԱՆԱՑ

Իսկ դատապարտեալներուն Համար սահմանուած տանջանքները ընդհանուր սկզբունքով բացատրած կ'ըլլանք՝ զանոնք ըմբռնելով իբրեւ Հակադրութիւնը երանութեան: Եթէ աստուածային տեսութիւնը լրումն է երանութեանց, աստուածային տեսութենէն զրկումն եւս պիտի ըլլայ լրում դատապարտութեան: Սակայն Ս. Գրոց այս խօսքերը, որոնք կը յիշեն «զտանջանս յաւիտեանականս» [Մատթ. ԻԵ 4], եւ, խօսելով գեհեանին մասին, կ'ըսեն «ուր որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջանի» [Մարկ. Դ 49], մեզի կը Հասկցնեն, թէ բացի զրկումին դատապարտութենէն, դժոխքին մէջ զգայական տանջանքներ ալ կան, որոնցմով կը տառապին դատապարտեալներուն մարմինները: Արդարեւ, երբ երանութեան մասին է խօսքը, անհնար է ըսել, թէ որեւէ զգալի Հաճոյք կրնայ բան մը աւելցնել Աստուծոյ Հոգեկան վայելքներուն վրայ, բայց նոյնը չենք կրնար խորհիլ ցաւերուն եւ պատիժներուն վրայ, որովհետեւ զրկումը բացասական բան մը ըլլալով՝ անոր վրայ որչափ ալ ցաւեր ու տազնապներ աւելցուին, միշտ տեղ կը մնայ զգալի տանջանքներու: Բնաւ ուրեմն անտեղի է ընդունիլ իրականութիւնը զգալի տանջանքներուն, որոնք Հուրով եւ որդով կը պատկերացուին: Որդով սովորական է խղճի խայթը իմանալ, իսկ Հուրը կը ներկայացնէ լրումն ու ամփոփումը բոլոր զգալի տանջանքներուն:

264. ԶԳԱԼԻ ՏԱՆՁԱՆՔ

Դժոխքի զգալի Հուրը առիթ կ'ըլլայ ինչ-ինչ դժուարութեանց, որոնց մէջ առաջինը այն կը Համարուի, թէ ինչպէս աննիւթական

Հոգիները կրնան տանջուիլ նիւթական Հուրէն: Բայց այդ դժուարութիւնը, որ յաճախ կը յածի բերաններու մէջ, աւելի Հոռոմէականներու դրուժեան դէմ կրնայ ուղղուիլ, վասնզի անոնք նիւթական Հուր կ'ենթադրեն դժոխքին մէջ եւ յարուժեանէն ալ առաջ այդ կրակին կը տանին Հոգիները, մինչ մեր Հնաւանդ դրուժեան մէջ դժուարութիւն չկայ այդ մասին, քանի որ անոր մէջ կ'ըսուի, թէ Դատաստանի Համար յարուժիւն առած մեղաւորները կը տանջուին գեհեանի Հուրովը: Բայց այն ատեն ալ կը Հարցուի, թէ ի՞նչ կրակ է այդ, որ անսպառօրէն կը վառի եւ անշէջ կը մնայ, ինչո՞վ կ'արծարծի, ինչո՞վ կը սնանի: Թէպէտեւ ոչ մէկ պէտք կայ բաղդատելու յետ Յարուժեան կացութիւնը ներկայի պահանջներուն Հետ, սակայն եւ այնպէս պէտք է աւելցնել, թէ դժոխքի Համար յիշատակուած բոլոր մանրամասնութիւնները՝ կիզիչ Հուր, կրճուում ատամանց, շօշափելի խաւար, անհամեմատ ժահահոտութիւն, ահացուցիչ տեսիլներ, կապանք, կտտանք, ամէնքն ալ այլաբանական բացատրութիւններն են իմանալի պատիժներուն:

265. ՓԱՍՏ ԾԱԻԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Թէ՛ պատիժներուն եւ թէ՛ երանութեանց, բայց մանաւանդ՝ պատիժներուն յաւիտենականութեան Համար ուրիշ բան չենք կրնար ըսել մենք, եթէ ոչ՝ քաղել ճշմարտութեան յայտնութիւնը այն վայրկեաններէն, զորս քանիցս յառաջ բերինք: Ամենէն աւելի՛ Հնար չէ հակառակը Հաստատել՝ նիւթին հանգամանքներէն զատելով եւ ըսելով, զոր օրինակ, թէ սկիզբ ունեցած բանը վախճան ալ պէտք է ունենայ: Ոչ մէկ բնագանգական ճշմարտութիւն չի պահանջեր այդպիսի Հետեւութիւն մը, ու ոչ մէկ կերպով չ'ապացուցուի, թէ անընդունակ է նիւթը անընդհատ տեսականութեան, որ սովորական լեզուով յաւիտենականութիւն կը կոչուի կամ աւելի ստոյգ բառով մշտնջենաւորութիւն: Այդ հանգամանքը անցաւոր այս աշխարհիս կը վերագրեն բնագէտները՝ Հաստատելով, թէ ոչ ինչ կ'ոչնչանայ, այլ միայն կը բաղադրուի, կը տարբաղադրուի եւ կը վերաբաղադրուի շարունակապէս: Նաեւ աշխարհի կատարած ըսելով՝ պիտի չհասկընանք անոր ոչնչացումը, այլ՝ այժմեան դրուժեան խանգարումը եւ ուրիշ նոր եւ տարբերալ դրուժեան մը փոխանցումը: Իսկ թէ ինչ է լուծուիլը, դիւրաւ կը հասկցուի Հանգամանքներու տեսողականութեանէն եւ ներքին կապակցութեանց զօրութեանէն, այնպէս որ Հարկ չի մնար ո՛չ արտաքին եւ ո՛չ ներքին առիթներու, որոնցմէ յառաջ գայ նիւթին իր տարրերուն լուծուիլը:

Բայց թէ այս ամէնը Հնարաւոր է, Հնար չէ բնաւ ցուցնել ներկայէն, իսկ ինչ որ ապառնին է, Հաստատուած է Յայտնութեան Հատուցով եւ Քրիստոսի եւ առաքելոց կանխագիկոյց վարդապետութիւններով եւ ոչ թէ՛ բնական կամ նիւթական ցուցմունքներով:

266. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԵԿԱՐԱ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի Դատաստանին նկարագրութեան մէջ պարզապէս յաւիտենական կը կոչէ դատաստանները, ու Եկեղեցին պարզապէս յաւիտենական կ'ըսէ դժոխքին Համար: Բայց կան մտածողներ, որոնք, Հիմնուելով աստուածային արդարութեան վրիժուց լրման եւ աստուածային ողորմութեան յաղթանակին, ինչպէս մարդկային գործոց չափաւորութեան փաստերուն վրայ, կը յօժարին ըսել, թէ ուր ուրեմն պիտի անցնի դժոխքը, եւ բոլոր Հոգիները պիտի Հասնին երկնային երանութեան: Սակայն այս կարծիքը կը Հիմնուի չափաւոր մեղաց անչափ պատիժներու Հետ անհամեմատութեան վրայ եւ շատ Հիմնաւոր չէ, որովհետեւ անչափ Աստուծոյ դէմ գործուած չարիքը, ըստ ուղիղ բանին, անչափ է: Իսկ եթէ կը Հիմնուի աստուածային գթութեան վրայ, աւելորդ է այդ բարեպաշտական զգացումն ալ, զոր կարելի չէ ընդդէմ հանել Քրիստոսի խօսքին, որ յաւիտենական որակեց տանջանքը: Ուստի ընդունելի չէ այդ կարծիքը, թէ եւ Հիներէն իսկ ոմանք անհնար չեն Համարած զայն:

267. ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՕԹԵՒԱՆՆԵՐ

Միեւնոյն նկարագրութեան մէջ երկու են Հոգիներու վերջնական օթեւանները, այսինքն՝ «կեանք յաւիտենականք» եւ «տանջանք յաւիտենականք»: Ու յաւիտենական տանջանքները պահուած են անոնց Համար, որոնք ներգործական յանցանքներով մեղանչած են, որովհետեւ, կ'ըսէ Դատաւորը, «քաղցեայ, եւ ոչ ետուք ինձ ուտել» [Մատթ. ԻԵ 42]: Միւս կողմէ՝ Ինք Քրիստոս ըսաւ. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» [Յովհ. Գ 5]: Արդ, անկնունք մանուկները եւ անոնց նմանները, անկնունք մնացած ապուշները եւ խելայեղները, մէկ խօսքով՝ ներգործական յանցանքի պատասխանատուութեանէն զերծ մնացած ամէն անձ, որ չունի ո՛չ մկրտութիւն, որ քաւութեան արժանանայ, եւ ո՛չ ներգործական մեղք, որ դժոխքի մատնուի, ի՞նչ պիտի ըլլան: Հոռոմէականները այդպիսիներուն Համար կ'ենթադրեն յատուկ տեղ մը արքայութեան եւ դժոխքի միջեւ, ուր չեն գտնուիր ո՛չ մէկին երա-

նութիւնները եւ ո՛չ միւսին տանջանքները, եւ այդպիսի գրկման բացասական վիճակի մէջ Հաստատեցին անկնուճք մանկանց դրութիւնը եւ տեղին անուճը կոչեցին **Լիմպոս**՝ լատիներէն բառէն, որ կը նշանակէ եզր՝ թերեւս ըսել ուզելով իբր գաւիթ՝ դժոխքին եզերքը: Բայց այդ երրորդական տեղը արտաքոյ կը մնայ այն տեղերէն, զորս Քրիստոս իբրեւ վճռական ցոյց տուաւ, եւ ի դէպ չէ բնաւ յայտնեալ վարդապետութենէն դուրս նոր բան մը կազմել: Իսկ անկնուճք մանկանց Համար, որոնք չունին ներգործական ոչինչ, կան, որ զանոնք բացարձակապէս կ'ենթարկեն դատապարտութեան, ուրիշներ դժոխքի մէջ անոնց լուկ գրկումի դիրք մը կու տան եւ ուրիշներ կը փափաքին ենթադրել, թէ անոնց Համար արտասովոր շնորհք մը պիտի ըլլայ երկինքը մուտ ունենալ... Բայց մենք կը բաւականանանք՝ ըսելով, թէ քրիստոնէական վարդապետութիւնը անոնց Համար յայտնեալ ոչինչ ունի, եւ անհնար է անյայտ բաներուն Համար նոր յայտնութիւններ ստեղծել:



Արէլ վարդապետ Օղլուգեան

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Վարդապետական աստուածաբանութիւնը՝ Եկեղեցւոյ ընդհանուր քարոզչութեան մէջ ափտայայտուող, Աստուծոյ ինքնաբացայայտման կամ Յայտնութեան մասին այն գիտութիւնն է, որ, դաւանուելով քրիստոնէական հաւատքին մէջ, պարտաւորիչ կը դառնայ քրիստոնէական կեանքին համար: Վարդապետական աստուածաբանութիւնը սովորաբար կը կոչուի նաեւ դաւանաբանութիւն կամ դաւանաբանական աստուածաբանութիւն: Սակայն այս երկուքին միջեւ կան որոշակի տարբերութիւններ, որոնք կարելի չէ անտեսել.

ա) Դաւանաբանութիւնը, իր նեղ առումով, վարդապետական աստուածաբանութեան մէջ գիտական առանձին ճիւղ մըն է, որ ուղղակի կը վերաբերի Եկեղեցւոյ «դաւանութեան» ձեւ կապ ունեցող հարցերուն եւ հաւատալիքներուն:

բ) Իր իմաստին լայն առումով միայն այն կը կիրառուի իբրեւ հոմանիշ վարդապետական աստուածաբանութեան, այսինքն՝ գիտութիւն Եկեղեցւոյ վարդապետած ընդհանուր հաւատալիքներուն մասին:

Դաւանութեան եւ վարդապետութեան միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնը Մաղաքիա արքեպսկ. Օրմանեան այսպէս կը բնորոշէ. «...Հարկ է տարբերութիւն մը հաստատել եւ իրարմէ որոշակի զատել դաւանութիւն եւ վարդապետութիւն կոչուած կէտերը: Դաւանութիւն Սուրբ Գիրքէն քաղուած եզրակացութիւնն է, ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն մըն է՝ յստակ եւ որոշ բառերով: Եկեղեցիի կողմէն այս կերպով հռչակուած սկզբունք մը պէտք է, որ

նոյն Եկեղեցւոյ ամէն հաւատացեալներու կողմէ բացարձակ կերպով ընդունոյ՝ չընդունած պարագային նոյն Եկեղեցւոյ ծոցէն դուրս մնալու պայմանով: Վարդապետութիւնն ալ մնանապէս Սուրբ Գիրքէն քաղուած եւ ճշդութեամբ բացատրուած նախադասութիւն մըն է, որ պէտք է միշտ յստակ ըլլայ եւ ասանդութեան մը հետեւողութեամբ հաստատուի, որով, իբր ողջմիտ եւ ճշմարիտ կամ ճշմարտամամ սկզբունք, կրնայ ընդունելի ըլլալ, բայց երբէք բացարձակ կերպով հաւատացուելու հարկ չի պարունակեր եւ չընդունուած աստեղ Եկեղեցւոյ ծոցէն մերժուած ըլլալու հետեւանքը չ'արտադրեր: Ուրիշ բացատրութեամբ՝ դասանութիւնը Եկեղեցւոյ հեղինակութեամբ զօրացած ճշմարտութիւն է, վարդապետութիւնը դարձուցնելու հեղինակութեամբ հաստատուած կէտն է: Դասանութիւնը կը պատկանի հաւատքին եւ կրօնքին, վարդապետութիւնը կը պատկանի ուսման եւ աստուածաբանութեան¹:

Գրաբարի մէջ վարդապետեմ բայի հոմանիշները ուսուցանեմ, քարոզեմ բայերն են: Եւ արդէն իմաստներու այս նոյնութիւնն ալ ինքնին կ'որոշագծէ վարդապետական աստուածաբանութեան բովանդակութիւնը, այսինքն՝ քրիստոնէական վարդապետութեան մասին Եկեղեցիին կողմէ պաշտօնապէս «ուսուցուած» հաւատալիքներու կարգը կը կոչուի վարդապետական աստուածաբանութիւն: Այլ խօսքով՝ վարդապետական աստուածաբանութիւնը կամ դասանաբանութիւնը աստուածաբանական անդրադարձ մըն է՝ Եկեղեցիին վարդապետած հաւատալիքները քրիստոնէական ընդհանուր հաւատքի սահմաններուն մէջ հիմնաւորելու եւ զանոնք մեկնաբանելու ուղղութեամբ: Այս առումով, վարդապետական աստուածաբանութիւնը կը հանդիսանայ աստուածաբանական գիտութեանց կենդրոնական առարկան: Եւ ինչպէս աստուածաբանութիւնն ընդհանրապէս, նոյնպէս եւ վարդապետականը, հիմնուելով աստուածաշնչական տուեալներու վրայ, կը փորձէ Յայտնութեան անտիսը մատչելի դարձնել իր հասցէակիրներուն (մարդոց) համաձայն մարդկային բոլոր չափանիշներուն եւ հնարաւորութիւններուն, ներառեալ՝ բանականը, ինչպէս որ ան յստակօրէն կ'ընդգծուի [Ա. Պետր. Գ 15] համարին մէջ, թէ քրիստոնէան պէտք է ամէն մարդու հաւատքի մասին հաշիւ տայ. «Պատրա՛ստ իցէք տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ»:

Դասական աստուածաբանութեան մէջ վարդապետական աս-

տուածաբանութիւնը կամ դասանաբանութիւնը հիմնականին մէջ կը ներկայանայ քրիստոնէական վարդապետութիւն (լատիններու մօտ՝ doctrina christiana, summa theologica, sacra pagina, institutiones, sententiae եւ այլն) անուան տակ: Սակայն պէտք է ըսել, որ աստուածաբանութեան մէջ դասանաբանութիւնը, իբրեւ գիտական մասնագիտ, յետագայ շրջանի գրուածք է, որ կապ ունի Արեւմտեան Եկեղեցւոյ աստուածաբանական գիտութեանց զարգացման պատմութեան հետ: Dogmatik արտայայտութիւնը, որ հայերէնի մէջ սովորաբար կը վերարտադրենք դասանաբանութիւն բառով, իբրեւ մասնագիտական բացատրութիւն, առաջին անգամ կ'օգտագործուի 1661-ին բողոքական աստուածաբան Reinhart-ի կողմէ՝ "Theologia christiana dogmatica" խորագրութեամբ: Հակառակ այն իրողութեան, որ Արեւելեան Եկեղեցին յանձին Յովհաննէս Դամասկացիի (740/750), որ իր «Յաղագս ողղափառ հաւատոյ» ("De fide orthodoxa") գործին մէջ խիստ համակարգուած ձեւով ներկայացուցած է Օրթոտոքս Եկեղեցւոյ հաւատքի հիմնական կանոնները, այսուհանդերձ հարկ է ըսել, սակայն, որ Օրթոտոքս Եկեղեցւոյ մէջ զուտ դասանաբանական բնոյթի գործեր լոյս կը տեսնեն հազիւ 18-րդ դարուն:

ՊԱՏԿԵՐ Յ. ԴԱՄԱՍԿԱՅԻՆՈՅ՝ «ՅԱՂԱԳՍ ՌԻՂՂԱՓԱՌ ՀԱԻԱՏՈՅ» ԳՈՐԾԻ

- Ա. Յաղագս առաջաբանութեան աստուածաբանութեան
- Բ. Վասն ճանելեաց եւ անճանելեաց, իմանալեաց եւ անիմանալեաց
- Գ. Վասն ցուցման, թէ գոյ Աստուած
- Դ. Վասն՝ թէ զի՞նչ է Աստուած եւ զի անհաս է
- Ե. Վասն յայտման, թէ մի է Աստուած եւ ոչ՝ բազում
- Զ. Վասն Բանին Աստուծոյ
- Է. Վասն Սուրբ Հոգւոյն
- Ը. Վասն Սուրբ Երրորդութեան
- Թ. Վասն ի վեր ասացելոյն
- Ճ. Վասն աստուծային միաւորութեան եւ բաժանման
- ԺԱ. Վասն մարմնապէս ի վերայ ասացելոյն

¹ Տե՛ս Մաղաքիա արքեպսկ. Օրմանեան, «Հայոց Եկեղեցին», Պէտրոպ, 1960, էջ 89:

- ԺԲ. Վասն նոցա դարձեալ
- ԺԳ. Վասն տեղեացն Աստուծոյ, թէ միայն Աստուած է անպարագրելի
- ԺԴ. Վասն յատկութեանց աստուածային Բնութեան
- ԺԵ. Վասն յախտեանցն
- ԺԶ. Վասն հրեշտակաց
- ԺԷ. Վասն աստամի եւ դիւացն
- ԺԸ. Վասն երեւելի եւ զգալի արարածոցս
- ԺԹ. Վասն երկնից
- Ի. Վասն հրոյ, լուսոյ եւ լուսատրացն ամենեցուն
- ԻԱ. Վասն ողոյ եւ հողմոյ
- ԻԲ. Վասն ջուրց
- ԻԳ. Վասն երկրի եւ որ ի մմա է
- ԻԴ. Վասն դրախտին
- ԻԵ. Վասն մարդոյն
- ԻԶ. Վասն ճաշակացն
- ԻԷ. Վասն տրտմութեան
- ԻԸ. Վասն երկիրի
- ԻԹ. Վասն տրտմութեան (սրտմտութեան)
- Լ. Վասն անրջոց եւ ցնորից
- ԼԱ. Վասն զգայութեանց
- ԼԲ. Վասն իմացականին
- ԼԳ. Վասն յիշողականին
- ԼԴ. Վասն՝ որ ի ներքոյ ներտրամադրական բան, արտաքոյ՝ տարբերական
- ԼԵ. Վասն ախտից եւ ներգործութեանց (յոյճն՝ ԼԶ)
- ԼԸ. Վասն ներգործութեանց (յոյճն՝ ԼԷ)
- ԼԹ. Վասն կամայի եւ ակամայի (յոյճն՝ ԼԸ)
- Խ. Վասն որոյ ընդ մեք ենթակային այս անձնիշխանութիւն (յոյճն՝ ԼԹ)
- ԽԱ. Վասն գործեցելոցն (յոյճն՝ Խ)²

² Հմտ. Զարբհանայեան, «Մատենադարան հայկական քարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳրդ.)», Վենետիկ, 1889, էջ 576-578:

Ի հակադրութիւն կաթոլիկ Եկեղեցու վարդապետական հասկացութեանց (յաճախ՝ Աեղմիտ ըմբռնողութեան հետեւանքով)՝ բողոքականութեան մէջ դաւանութիւն գաղափարի դէմ երկար ժամանակ գոյութիւն ունէր որոշակի հակակրօթիւն մը: Դաւանաբանութիւն բառի փոխարէն նախընտրելի էին սիստեմատիկ աստուածաբանութիւն (Systematische Theologie) կամ հաւատոյ վարդապետութիւն (Glaubenslehre) բացատրութիւնները: Սակայն այսօր բողոքականութեան մէջ այս հակակրօթիւնը այլեւս վերացած է շնորհիւ նորագոյն շրջանի բողոքական աստուածաբաններու, ի մասնաւորի՝ Karl Barth-ի՝ քրիստոնէական վարդապետութեան վերաբերեալ ստուար ստեղծագործութիւններուն:

Վարդապետական աստուածաբանութեան առաջադրանքը Յայտնութեան մէջ արտայայտուող աստուածային տնօրինութեան իմաստը եւ պատմութեան ընթացքին Եկեղեցոյ մէջ ձեռք բերուած իմաստային փորձառութիւնները համակարգուած օրինաչափութեամբ ներկայացնել եւ այդպիսով անոնք քրիստոնէայի առօրեայ կեանքին մէջ կիրառելի դարձնելն է: Այնքանով, ինչքանով որ վարդապետական աստուածաբանութիւնը հաւատքի վերաբերեալ Եկեղեցիին ցուցմունքները կը մեկնաբանէ իբր խօսք Աստուծոյ մասին եւ անոնց դրական տունեալները կը հետազօտէ պատմաբնական մօտեցումով, այն կը հանդիսանայ իբրեւ աստուածաբանական գիտութիւն մը: Եւ քանի որ վարդապետական աստուածաբանութիւնը հաւատքի բովանդակութիւնը գաղափարական ըմբռնումներու (հասկացութիւններու) միջոցով կը դրսեւորէ, կը դասաւորէ եւ կը զարգացնէ զանոնք, մեկնողական եւ հայեցողական (spekulativ), այսինքն՝ տեսական գիտութիւն մըն է, որ պէտք է անպայման ազատ ըլլայ՝ հաւատքի այդ ըմբռնումները ժամանակի ոգիին յարմար եւ հասկնալի կերպով ներկայացնել կարողանալու համար:

Վարդապետական աստուածաբանութիւնը կը ներկայացնուի պատմականօրէն, որովհետեւ Աստուած Ինքզինքը մարդկանց «մատչելի» կամ «ճանաչելի» դարձուց պատմութեան մէջ: Ուստի այդ կ'աւանդուի փրկագործութեան պատմութեան շրջագիծին մէջ, որովհետեւ Աստուծոյ տնօրինութեան հասցեակիրը մարդ արարածն է իր շրջաշխարհով: Փրկագործութիւնը ուղղուած է մեղանշական մարդուն եւ մեղքի տակ հեծող աշխարհին:

**ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ԱՌԱՐԿԱՆԵՐԸ**

Առարկայի անունը	Նիւթը
Իմացաբանական աստուածաբանություն կամ սկզբունքներու գիտություն (Erkenntnislehre)	Նկարագրություն հիմնական դրոյթներու եւ աղբիւրներու, որոնց միջոցով եւ որոնց հետ վարդապետական աստուածաբանութիւնը կը զարգացնէ իր տեսութիւնը
Աստուածգիտութիւն (Gotteslehre)	Նկարագրություն Աստուծոյ էութեան՝ համաձայն փրկագործութեան պատմութեան մէջ ասանդոտդ տունալներուն
Արարչագիտութիւն (Schopfungslchre)	Նկարագրություն փրկագործութեան պատմութեան սկիզբի եւ Աշանակութեան
Մարդաբանական աստուածաբանութիւն	աստուածաբանութիւն մարդու մասին՝ իրրեւ գազաթ եւ կառավարիչ աստուածային արարչագործութեան, նաեւ՝ դաշնակից Աստուծոյ
Քրիստոսաբանութիւն եւ փրկագործութիւն	Պարզաբանում Յիսուս Նազովրեցիի խորհուրդին՝ իբրեւ Հօր Էակից Որդի եւ Փրկիչ աշխարհի
Մարեմաբանութիւն	Ուսմունք Աստուածամօր մասին՝ իբրեւ Անձի ամբողջական իրականացում՝ ի Քրիստոս կատարուած Աստուծոյ փրկագործ տնօրինութեան
Հոգիաբանութիւն (Pneumatologie)	Ուսմունք Սուրբ Հոգոյ էութեան եւ գործունէութեան մասին՝ իբրեւ երրորդ Անձ Սուրբ Երրորդութեան
Եկեղեցաբանութիւն	Ուսմունք Եկեղեցիի մասին՝ իբրեւ խորհուրդ եւ Աշան Աստուծոյ փրկագործութեան՝ հաստատուած պատմութեան մէջ

Խորհրդագիտութիւն

Մեկնաբանութիւն եօթ խորհուրդներու՝ իբրեւ Եկեղեցիի՝ դէպի փրկութիւն կատարած ծառայութիւնը իրականացնող որոշակի ձեւեր

Ընորհաբանութիւն

Ներկայացում Աստուծոյ փրկութեան՝ իբրեւ ազատ գործողութիւն աստուածային փառքի

Վախճանաբանութիւն

Ուսմունք Աստուծոյ մէջ ամփոփուող պատմութեան կատարածի (լրումի) մասին

**ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ**

Թէեւ այսօր մեր եկեղեցական իրականութեան մէջ կը պակսին վարդապետական աստուածաբանութեան վերաբերեալ համակարգուած պաշտօնական ձեռնարկներ, այնուամենայնիւ այդ չի Աշանակեր, որ Հայ Եկեղեցին զուրկ է վարդապետական տեսութիւններէ եւ համապատասխան զարգացումէ: Ինչպէս միւս բոլոր Եկեղեցիները, նոյնպէս եւ Հայ Եկեղեցին, հիմնակէտ ընդունելով նախ Աստուածաշունչն ու առաքելական ասանդութիւնը, ապա՝ առաջին երեք Տիեզերական ժողովներու կանոնները, աստուածայայտութեան մասին մշակած է իր ուրոյն տեսութիւնները՝ մնալով միշտ ներդաշնակ Ընդհանրական Եկեղեցիին մէջ հաստատուած հաւատքի ուղղափառ դաւանութեանց հետ: Անշուշտ, մեր հայրերուն եւ վարդապետներուն կողմէ ներկայացուած վարդապետական աստուածաբանութիւնը, հիմնականին մէջ, յստակ դիրքորոշում մըն է, որ կապուած է Եկեղեցիի կեանքին մէջ հանդէս եկող եկեղեցաբանական-աստուածաբանական ճշգրիտ իրավիճակներու հետ. այսպէս՝ Քաղկեդոնի 451թ. ժողովին յաջորդող քրիստոսաբանական վէճերուն առնչութեամբ, Քրիստոսի երկու բնութիւններու, կամքերու եւ ներգործութեանց վերաբերեալ անդրադարձումներով, Քրիստոսի երկրաւոր մարմնի ապականացու, թէ անապական լինելու հակոտնեայ տեսու-

թեանց առթի ստեղծուած հարցերով, պատկերայագութեանը առնչուած խնդիրներով, մինչեւ միութենական եւ հակամիութենական այն շարժումները, որոնք յետագայ դարերու ընթացքին մշակուիլ փորձուեցան հայերու, յոյներու եւ լատիններու միջեւ, եւ այլն: Այս առումով, Հայ Եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութիւնը իր ընդհանուր գիծերուն մէջ կա՛մ ջատագովական, կա՛մ ալ հակաճատական է. ջատագովութիւն՝ սեպհական հաւատալիքներն ու ազգային-եկեղեցական աւանդութեամբ նուիրագործուած ըմբռնումները օտարամուտ ոտնձգութիւններու դէմ պաշտպանելու իմաստով, հակաճատութիւն՝ հիմնուած Աստուածաշունչի տուեալներուն, ինչպէս նաեւ՝ առաջին երեք Տիեզերական ժողովներու սահմանած հաւատքի հիմնական խորհուրդներուն՝ Սուրբ Երրորդութեան, Քրիստոսի մարդեղութեան եւ փրկագործութեան վերաբերեալ բանաձեւումներուն վրայ: Հերքուած են այն բոլոր վարդապետական տեսութիւնները, որոնք խոտոր են եղած այս աւանդական կարգին ու հաւատոյ ըմբռնումներուն: Եթէ այսպէ՛ս հասկցուած վարդապետական աստուածաբանութեան շրջագծին մէջ ընդհանրապէս խօսք պիտի ըլլայ մեկնողական գրականութեան մասին, մեկնողականի՝ իբրեւ նիւթ դասանաբանութեան, ապա այդ՝ ոչ թէ «Սուրբ Գիրքի մեկնութեան» այսպէս կոչուած Exegese-ի, այլ՝ ջատագովութեան եւ հակաճատութեան մէջ օգտագործուող Յայտնութեան տուեալները մեկնաբանելու եւ անոնք սուրբգրական հիմունքներուն վրայ հիմնադրելու դրոյթով:

Վարդապետական տեսութիւններու զարգացման կապակցութեամբ պէտք է ըսել, որ Հայ Եկեղեցիին դիրքորոշումը միշտ եղած է «ոսկէ միջինը». դասական գաղտնիքներուն եւ հաւատալիքներուն մէջ դիմել չափաւորութեան, չյանդգնիլ հաւատքի խորհուրդը վարդապետական զանազան տեսութիւններու բարդոյթով խրթնաբանութեան վերածել, այլ ըսել այնքան, որ այդ հաճոյ ըլլայ մարդկային մտքին ու սիրտին՝ իբրեւ բնական անդրադարձ՝ մարդուն ուղղուած Աստուծոյ ձայնին: Այս առումով, մեծագոյն սրբապղծութիւնը խորհուրդի խորհրդազերծումն է. «Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի» [Մատթ. ԺԲ 31]: «Ջի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ... նոյնպէս եւ ոչ զԱստուծոյսն ոք գիտէ, եթէ ոչ՝ Հոգին Աստուծոյ» [Ա. Կորնթ. Բ 10-11]: Մեր եռամեծ վարդապետները միշտ զգուշացած են նման հայհոյութենէ՝ ո՛չ իրենց մտաւոր համեստութեան, ո՛չ իմաստասիրական հասկացութիւններու սահմանափակուածութեան եւ ո՛չ ալ մեր

Եկեղեցւոյ ծոցին մէջ ծնունդ առած աստուածաբանական դպրոցներու սակաւութեան պատճառով, այլ՝ սրբութեան նկատմամբ անոնց ունեցած անհամեմատելի բարեպաշտութեան, երկիւղի եւ յարգանքի հետեւանքով, զի «սկիզբն իմաստութեան» երկեւ Տեառն, եւ խորհուրդ սրբոց՝ հանճար» [Առակ. Թ 10]:

Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, պատահական կարգով, այստեղ հարկ կը նկատեմ թուարկել վարդապետական արժէք ունեցող գրական ընտրանի մը, որու ուսումնասիրութիւնը յանձնարարելի է իւրաքանչիւր՝ Հայ Եկեղեցիի վարդապետական աստուածաբանութեամբ հետաքրքրուողի.

1. «ՅԱՄԱԽԱՊԱՏՈՒՄ ԾԱՌՔ սրբոյն Գրիգորի». ԻԳ ճաներու ժողովածու մը, որոնց մէջ յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել յատկապէս վարդապետական բնոյթ ունեցողներուն վրայ:

- Ա. Թաղազս Ամենասուրբ Երրորդութեան
- Բ. Վասն առանձնատրութեան Երրորդութեան
- Գ. Վասն մտաց հաւատոյ
- Դ. Վասն յանդիմանութեան մոլար մտաց եւ ընծայութիւն աստուածապաշտութեան
- Ե. Վասն հաստատութեան ճշմարտութեան եւ առաջնորդութեան կենաց խրատու
- Զ. Վասն յանդիմանութեան ծածկութից իրաց, որ զաներելոյսն յերեւելիս ածէ
- Է. Վասն յօրինուածոց արարածոց
- Ը. Վասն յանդիմանութեան դժնդակ վարուց եւ ընծայութիւն առաքիմութեան հանդիսից
- Թ. Վասն ամենարուեստ կատարեալ պահոց
- Ժ. Վասն երախտատրութեան անզեղ բարերար կամացն եւ յորդորումն ի լաւն եւ յառաւելն՝ ըստ ճշմարիտ առաքիմութեան
- ԺԱ. Վասն վարուց առաքիմութեան, որ հանդիսիւք լաւութեան պակեալ երանին
- ԺԲ. Վասն խնամոց Արարչին եւ կշտամբութիւն անհնազանդ ստահակութեան եւ առաջնորդութիւն բարութեան բարուցն լաւութեան
- ԺԳ. Վասն լաւութեան յիշատակաց ի պէտս օգտից՝ զաներելոյսն յերեւելիս ցուցանելով ի գործ առաքիմութեան փոխեալ ի յոյս կենացն
- ԺԴ. Վասն մարդկութեան, որ յԱստուծոյ խնամք տեսչութեան կան

ԺԵ. Վասն հոգւոց մարդկան բացայայտութիւն

ԺԶ. Վասն մարտիրոսաց վարդապետութիւն ուսմանց

ԺԷ. Զգուշութիւն զգաստութեան ընդ մտերիմս եւ ընդ դժնդակս պատիւ եւ պատիծս

ԺԸ. Վասն զովութեան Աստուծոյ երախտեացն՝ հանդիսիւք մարտիրոսաց քաջայայտ

ԺԹ. Վասն յորդորման ապաշխարութեան

Ի. Վասն խորագիտութեան եւ մարտից

ԻԱ. Վասն տրոց իմաստութեան, որ ի Հոգւոյն Սրբոյ պարգեւեցաւ

ԻԲ. Վասն անփոփոխ ինքնութեան էութեանն Աստուծոյ

ԻԳ. Վասն խրատու ճգնատրաց յառաքինութիւնս յորդորումն ի Քրիստոս Թիսու: Նորին աղօթք³

2. «**ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՆ** սրբոյն Գրիգորի». Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» Բ մասին մէջ զետեղուած աստուածաբանական կարեւոր ստեղծագործութիւն մը, որ մեր եկեղեցական մատենագրութեան, մասնաւորաբար՝ վարդապետական գրականութեան զարգացման պատմութեան մէջ ունեցած է վճռական նշանակութիւն: Մեր վարդապետներէն շատեր իրենց վարդապետական տեսութիւնները ներկայացնելու, զանոնք ջատագովելու կամ օտարամուտն հակաճառելու առիթով յաճախ վկայակոչած են այս գիրքէն: Սակայն արդի բանասիրութիւնը կ'ապացուցանէ, որ «Վարդապետութիւնը» պարզապէս Լուսաւորչի անուան կատարուած վերագրութիւն մըն է: Այն մեծ հաւանականութեամբ գործն է Ե դարու հեղինակ Թէոդորոս Մոպսուեստացիի, որ, ընդառաջելով Մաշտոցի խնդրանքին, յօրինած է «քրիստոնէական ճշմարիտ հաւատքի վերաբերեալ» այս «Վարդապետութիւնը»⁴:

3. «Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի ԵՂՄ ԱՂԱՆԴՈՑ». ոսկեդարի հայ աստուածաբանական-իմաստասիրական գրականութեան պսակը եւ փայլուն արտայայտիչը ժամանակի

3 Հմմտ. Զարբհանայեան, «Հայկական հին դարութեան պատմութիւն (Գ-ԺԳ դդ.)», Վենետիկ, 1886, էջ 176-177: Տե՛ս նաեւ «Թաճախապատում ճառք», Վենետիկ, 1838, Ա. էջ 116-117:

4 Տե՛ս Հ. Պ. Անանեան, «Վարդ Մարոպ Մաշտոցի», Վենետիկ, 1964, էջ 380-403. նաեւ Բ. Գոշոս Անանեան, «Փոս պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ», «Բագմավէպ», ք. 1-4, 1989, էջ 43-44. Ագաթանգեղոս, «Պատմութիւն», հրատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ս. Կանայեանց, Տիփլիզ, 1909. Ագաթանգեղոս, «Հայոց պատմութիւն», թարգմ. Ա. Տէր-Ղեռնդեան, Երեւան, 1983:

վարդապետական մտածողութեան: Գիրքին կարելի է իրաւամբ տալ նաեւ «Եղծ աղանդոց՝ ի ջատագովութիւն Աստուծոյ ճշմարտի» խորագիրը, որ կը բաժնուի չորս հիմնական մասերու՝ «Եղծ աղանդոց հեթանոսաց», «Եղծ քէշին պարսից», «Եղծ կրօնից յունաց իմաստնոցն» եւ «Եղծ աղանդոյն Մարկիոնի», այլ խօսքով՝ հերքումն հեթանոսութեան, պարսկական զրադաշտութեան, յունական բնագանցութեան եւ մարկիոնականութեան: Առասպելախառն կրօնքներ, իմաստասիրական-բնագանցական ուղղութիւններ եւ աղանդատական շարժումներ, տարածուելով Հայաստանի մէջ, կը սպառնային խախտել ուղղափառ հաւատքին հիմքերը եւ քակտել Եկեղեցիի միութիւնը: Ահաւասիկ, ստեղծուած այս սուր հակադրութեան կը ծնին հեղինակիս՝ քրիստոնէական վարդապետութեան վերաբերեալ հաւատքի խորաթափանց եւ հմուտ տեսութիւնները, որոնցմէ մի քանին կ'արժէ այստեղ թուարկել. «Նկարագիր Աստուծոյ ճշմարտի», «Պատճառ չարեաց», «Անհնքնագոյութիւն արարածոց», «Ծագումն չարին» (ընդդէմ վաղեմտիներէն):

4. «**ԿՆԻՔ ԶԱԽԱՏՈՑ** ընդհանուր սուրբ Եկեղեցոյ, յուղափառ եւ ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց՝ յաւորս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ». գիրքի նախնական վերտառութիւնը, որ աւելի ընդարձակ է, ինքնին կը բացայայտէ ժողովածուի իմաստն ու բովանդակութիւնը. «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցոյ, յուղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց՝ առ ի պահպանութիւն սուրբ հաւատոյ՝ համահաւաքելով, զի սովաւ լուծցեն զամենայն հայհոյչացն միաբանութիւն, եղծագործ կործանմանցն հերձուածողացն եւ հաստատեն ի ճշմարիտ սուրբ խոստովանութիւն Երրորդութեանն՝ աներկբայութեամբ ընթանալ զկնի կոչողիս այսորիկ, հոգեւոր սերմանողիս՝ զԱստուածաշունչ Գրոց ասեմ, որ յաւորս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ պիտանեցաւ առ ի պահպանութիւն սրբոյ հաւատոյս՝ քրիստոսատուր աւանդութեանս»: Այստեղ վկայութեան կը կոչուին Հնդհանրական, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցոյ ընտրելագոյն ներկայացուցիչներու ստեղծագործութիւններէն դաւանական տեսութիւններ՝ իբրեւ անհերքելի հիմք քրիստոնէական հաւատքի, որոս խոստովանութիւնը պարտաւորիչ է իրաքանչիւր հաւատացեալի համար: Ունի հետեւեալ գլուխները.

Բան Ա. Նախասացութիւն յանհատութեան Սուրբ Երրորդութեան
Բան Բ. Թաղազս մին գոյ զՏէր մեր եւ զՓրկիչն Թիսուս՝ հանդերձ Իրով Մարմնովն, եւ Նմա առ բաշխել զամենայն աստուածվայելուչս եւ

գմարդկային, և զի յերկուս բնութիւնս բաժանեն զՆա ամբարիշտք .
Բան Գ. Եթէ պարտ է անապական խոստովանել զՄարմինն Քրիստոսի՝
անդստին յարգանդէ կուսական Աստուածածնին Մարիամայ

Բան Դ-ը թերի է և վերտառութիւն չունի:

Բան Ե. Եթէ պարտ է գմարդեղութիւնն Քրիստոսի ըստ մախաստեղ-
ծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան զյաիտեանս

Բան Զ. Յաղագս մարմնական կրիցն Քրիստոսի, եթէ ոչ է Ինքնութիւն
ականայ և հարկատր և կարեկցութեամբք, այլ՝ ի վեր քան զկարիս
երկրատրս և գմարդկային բնութիւնս

Բան Է. Եթէ ոչ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի ըստ տնօրէնու-
թեանն, թէ պարտ է և ուրեք ձեւանայ անգիտանալ յաղագս իմիք
պատճառի⁵

5. «ԳԻՐՔ ԹՂԹՈՑ». հայ աստուածաբանական գրականու-
թեան անփոխարինելի հաւաքածոյ մը, մեր հայրապետներու և վար-
դապետներու դաւանաբանական տեսութեանց լուսագոյն արտայայ-
տիչը (Ե-ԺԳդդ.): Փաստօրէն, մեր եկեղեցական հայրերուն մամա-
կանին, ուր առկայ է աստուածաբանական-դաւանաբանական զա-
նազան հարցերու մկատմամբ Հայ Եկեղեցիի մնայուն դիրքորոշու-
մը, մասնատրարար՝ ընդդէմ մատրոսական և քաղկեդոնական վար-
դապետութիւններու, և, ի վերջոյ, հայ-լատին միութեանական շարժ-
ման առիթով արծարծուած դաւանական խնդիրները՝ գերազահու-
թիւն Հոռովմայ Աթոռի, երկու բնութիւնք, մերգործութիւնք և կամք
Քրիստոսի, Սուրբ Հոգու ի Հօրէ և յՈրդոյ բխումն (Filioque), քաւա-
րան և այլն⁶:

6. «ՎՐԹԱՆԵՍ ԲԵՐԹՈՂ՝ ԸՆԳԴԷՄ ՊԱՏԿԵՐԱՄԱՐ-
ՏԱՑ». Հայ Եկեղեցոյ կարեւորագոյն դիրքորոշումներէն մին է Բեր-
թող վարդապետին սոյն թուղթը, երբ Ը դարու սկիզբը բիզանդա-
կան միջավայրին մէջ բորբոքեցան պատկերամարտութեան և
պատկերայարգութեան վերաբերեալ միմէն թո՛ղար տետղ վէճերը:
Սոյն վիճաբանութեանց սկիզբ կարելի է համարել Լեւոն Գ կայսեր
հրապարակած մէկ հրովարտակը (730թ.), որով ի զին ծանր պա-
տիժներու՝ Եկեղեցոյ մէջ կ'արգիլէր պատկերայարգութիւնը: Ար-
քունի այս որոշումը բնականաբար կը հանդիպի բուն ընդդիմա-

դրութեան Գերմանոս Ա պատրիարքի, բայց յատկապէս՝ տեղի վա-
նականութեան կողմէ: Պատկերամարտներ կը մեկնէին այն տեսա-
կետէն, թէ Քրիստոսի ճշմարիտ պատկերը Տիրոջ մարդկային բնու-
թեան հետ միաժամանակ պէտք է ներկայացնէ նաեւ Քրիստոսի
աստուածային բնութիւնը. և որովհետեւ այդ անհնար է, ուստի
Քրիստոսի միայն մարդկային բնութիւնը պատկերելը պարտադիր
կերպով՝ մատրոսականութիւն է: Պատկերայարգներ, որոնց կարկա-
նուն ներկայացուցիչներէն էին Յովհաննէս Դամասկացի և Թէոդո-
րոս Ստուդիացի, կը հակառակէին վերոյիշեալ տեսութեան՝ փաս-
տարկելով, որ ճիշդ Քրիստոսի մարդեղութեան իրողութիւնը կը հեր-
քէ ամէն տեսակի երեսութեանութիւն՝ հնարաւորութիւն տալով
մարմնացեալ Աստուած Բանը ներկայացնել տեսանելի պատկերով,
որովհետեւ Քրիստոս արդարեւ շօշափելի «պատկերն է Հօր»: Պատ-
կերայարգութիւնը իր յարգանքն ու պաշտամունքը կ'ուղղէ պատկե-
րուած մկարի Նախապատկերին կամ Նախատիպին, որ է Քրիս-
տոս: Պատկերը էակից չէ Նախապատկերին, այսինքն՝ Քրիստոսին,
սակայն անոնց միջեւ զոյութիւն ունի որոշակի «միութիւն» մը: Ոչ թէ
մկարը կը յարգուի իրրեւ այդպիսին, այլ՝ Նկարուածը: Ահաւասիկ,
Ընդհանուր Եկեղեցիին կեանքը յուզող այս և մնան հարցերու
մկատմամբ դիրքորոշում մըն է Վրթանէս Բերթողի «Ընդդէմ պատ-
կերամարտացը», ուր հեղինակս կ'առաջարկէ հաւասարակշռուած
չափաւորութիւն մը՝ պատկերայարգութեան ընդունում, սակայն
պատկերներու հանդէպ ցուցաբերուած թէ հոգեւոր և թէ թուային
ծուծկալութիւն⁷:

7. Յովհաննէս Իմաստաւեր Օձնեցի, «ԾԱՌ ԸՆԳԴԷՄ ԵՐԵ-
ԻՈՒԹԱԿԱՆԱՑ» և «ԾԱՌ ԸՆԳԴԷՄ ՊԱԻՂԻԿԵՆԱՆՑ». երկա-
րաշունչ այս գոյգ ճառերը կը հանդիսանան հայ դաւանաբանական
մտքի պատմութեան կարեւոր փուլերը: Առաջինը ուղղուած է «ե-
րեսութեաններուն» դէմ՝ այն հերետիկոսներուն, որոնք Քրիստոսի
մարդեղութեան և չարչարանաց խորհուրդը, ինչ-որ հոգեւոր-տուա-
լիստական սխալ հայեցակետերէ առաջնորդուելով, կը համարէին
լոկ «երեսութեան» մը: Այսինքն՝ Աստուածորդին «առաջօք» էր մարմնա-
ցած և կրած Իր փրկագործ տառապանքները: Տարակոյս չկայ, որ
այստեղ կը վժանգուէր ամբողջ Քրիստոսի ճշմարտութիւնը՝ փրկա-
գործութեան խորհուրդով: Ահաւասիկ, նաեւ Հայաստանի մէջ տա-

5 Տե՛ս «Կնիք հաւատոյ», հրատ. կարապետ եպսկ. Տեր-Մկրտչեան, Ա. Էջմիածին, 1914:

6 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

7 Տե՛ս Վրթանէս Բերթող, «Ընդդէմ պատկերամարտաց», հրատ. Ե. Մելքոնեան, Ա. Էջմիածին, 1970, ք. 6-7, էջ 89-93. նաեւ Եզնիկ քհն. Պետրոսեան, «Հայ Եկեղեցոյ վերաբերմունքը սրբապատկերներու մկատմամբ» (յունարէն), Աթէնք, 1987:

րածուած այս վտանգաւոր հերետիկոսութեան հերքումն է Օձնեցի հայրապետիս վերոյիշեալ ճառը, որուն ողջ մեկնակէտը «Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններուն «անշփոթ եւ անբաժանելի միութեան» բացարձակ դաւանութիւնն է: Իսկ երկրորդը մտանապէս հակաճատութիւն մըն է, բայց այս պնդամբ պաւղիկեան հերետիկոսներու դէմ, որոնք, համատեղելով Պօղոս Սամոսատցիի, յովհաննիստներու, ապողիմարեաններու, մարկիոնականներու եւ սաբելեաններու մոլորութիւնները, կը մերժէին Եկեղեցոյ կարգն ու աւանդութիւնները՝ համարելով զանոնք կոապաշտութիւն, ինչպէս օրինակ՝ Խաչին եւ սրբապատկերներուն ընծայուող յարգանքը եւ այլն⁸:

8. «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ. Հայ Եկեղեցոյ վարդապետական աստուածաբանութեան անփոխարինելի եւ կարեւորագոյն աղբիւրներէն մին կարելի է համարել նաեւ այս գործը, ուր համատեղուած են մեր Եկեղեցոյ մէջ իբրեւ հաւատքի հեղինակութիւն ճանչցուած եւ ընդհանուր եկեղեցական, եւ ազգային եկեղեցական ժողովներու, ինչպէս նաեւ՝ հայ եւ օտարազգի սուրբերու, հայրապետներու սահմանած կանոնները: Այդ կանոններէն շատերը ունին ոչ միայն ծիսական, եկեղեցաբանական, կենցաղային եւ բարոյագիտական արժէք, այլ նաեւ՝ աստուածաբանական ու դաւանաբանական հեղինակութիւն, որ ի հարկէ դեռ մինչեւ այսօր Եկեղեցոյ մէջ ի գօրու է: Ստորեւ՝ մեզի աւանդուած կանոնախումբերու առանձին-առանձին վերտառութիւնները.

- Ա. Սահմանք եւ կանոնք, գոր եղին աշակերտքն Քրիստոսի
- Բ. Երկրորդ առաքելական կանոնիս (կանոնք Կղեմայ)
- Գ. Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի
- Դ. Կանոնք տեսոն Փիլիպպոսի առաքելոյն
- Ե. Կանոնք յետ առաքելոց հարանց հետետողաց
- Զ. Կանոնք Նիկիական
- Է. Կանոնք Անկիւրեայ
- Ը. Կանոնք Կեսարեայ
- Թ. Կանոնք Նեոկեսարեայ

8 Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ մատենագրութիւնը», վեճետիկ, 1833. նաեւ՝ Կ. Տէր-Մկրտչեան, «Պաւղիկեանց Բիզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ», Երուսաղէմ, 1938. «Պաւղիկեանց եւ թոնդրակեանց աղանդները արդի քննադատութեամբ», «Արարատ», 1900, էջ 328-333:

- Ժ. Կանոնք Գանգրայ
- ԺԱ. Կանոնք Անտիոքայ
- ԺԲ. Կանոնք Լաոդիկեայ
- ԺԳ. Կանոնք Սարդիկեայ
- ԺԴ. Կանոնք Կոստանդնուպոլսի ժողովոյն
- ԺԵ. Կանոնք Եփեսոսի ժողովոյն
- ԺԶ. Կանոնք երկրորդ Անտիոքայ
- ԺԷ. Խոստովանութիւն ժողովոյն Անտիոքայ
- ԺԸ. Կանոնք երկրորդ Նիկիական
- ԺԹ. Կանոնք Աթանասի
- Ի. Կանոնք Բարսղի
- ԻԱ. Կանոնք Կիւրդի Աղեքսանդրացոյ
- ԻԲ. Կանոնք տեսոն Եփրեմի արդիւնակատար կրօնատրի
- ԻԳ. Կանոնական գիր տեսոն Եպիփանու
- ԻԴ. Բարսղի գիր կանոնական՝ վասն պէս-պէս եւ քիրապատիկ ախտից
- ԻԵ. Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ՝ Աղուանից արքայի
- ԻԶ. Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի
- ԻԷ. Կանոնք Մակարայ Առաջնոյ
- ԻԸ. Կանոնք երանելոյն Եպիփանու Կիւրացոյ
- ԻԹ. Յովհաննու Երուսաղէմացոյ եպիսկոպոսի
- Լ. Հիպոդիտեայ սրբոյն բան
- ԼԱ. Նեկտատեայ Հոռմայ եպիսկոպոսի
- ԼԲ. Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ Ետրեպիոն
- ԼԳ. Սրբոյն Աթանասի Մեծի բան
- ԼԴ. Սեբերիանոսի
- ԼԵ. Ի Սոկրատայ
- ԼԶ. Սրբոյն Դիոնէսիոսի Արիտպագացոյ
- ԼԷ. Մանուէլի
- ԼԸ. Կղեմայ Հոռմայ եպիսկոպոսի
- ԼԹ. Կանոնք Շահպիվանի

- Խ. Կանոնք Դրամայ սուրբ ժողովոյն
- ԽԱ. Կանոնք սուրբ ժողովոյն... Կարնոյ
- ԽԲ. Կանոնք սրբոյն Գրիգորի
- ԽԳ. Կանոնք սրբոյն Սահակայ հայոց հայրապետի
- ԽԴ. Կանոնք վերջնոյ Սահակայ կաթողիկոսի
- ԽԵ. Սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի գիր ասանդութեան
- ԽԶ. Թուղթ Սեւանտեայ եպիսկոպոսի
- ԽԷ. Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի
- ԽԸ. Սահմանք եւ կանոնք կարգի Եկեղեցոյ՝ սրբոյն Ներսէսի
- ԽԹ. Կանոնք Յովհաննո Մանդակունոյ հայոց կաթողիկոսի
- Ս. Յովհաննո Մանդակունոյ... բան կանոնական
- ՍԱ. Կանոնք Յովհաննո Մանդակունոյ
- ՍԲ. Յովհաննո Մանդակունոյ հայոց կաթողիկոսի՝ Կոչումն ապաշխարութեան
- ՍԳ. Կանոնք Աքրահամո Մամիկոնէից եպիսկոպոսի
- ՍԴ. Կանոնք տեառն Յովհաննիսի Իմաստասիրի հայոց կաթողիկոսի
- ՍԵ. Կանոնք Սիոնի հայոց կաթողիկոսի
- ՍԶ. Կանոնք Եղիշէի վարդապետի⁹

9. «ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ» Ը դարու մեր ամենաինքնատիպ մատենագիրներէն մին, որ մեզի ասանդած է մեր Եկեղեցոյ պատմութեան եւ դաւանաբանութեան համար յոյժ կարեւոր երկ մը՝ հինգ գլուխներէ բաղկացած, որոնց մէջ կը քննարկուին քաղկեդոնականներու քրիստոսաբանութեան, յուլիանական եւ սելերեան վարդապետութեանց, ինչպէս նաեւ՝ երեսութեաններու մոլորութեանց վերաբերեալ հարցեր.

- Ա. Խոսրովկայ Թարգմանչի հայոց՝ առ այնոսիկ, որ ասեմ բնութեամբ անձեւ, անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած Բան ի Կուսէն
- Բ. Թաղազս՝ թէ պա՛րտ է զՄարմինն տէրունական համագոյ ասել Աստուածն Բանի, կամ Մարմնոյն եւ Բան ի մի բնութիւն ասե՛լ, թե՛ ոչ
- Գ. Առ այնոսիկ, որ յերկուս զմարդկայինքն անշատեմ բնութիւն, այլ

⁹ Տե՛ս Վ. Յակոբեան, «Կանոնագիրք հայոց», Ա, Երեւան, 1964, Բ, Երեւան, 1971. Մեղիք-Թանգեան, «Հայոց եկեղեցական իրաւունքը», Ա, Օտոշի, 1903, Բ, 1905:

- գոյ ասեմ յառաջ քան զյանցանսն եւ այլ՝ զկնի յանցանաց
- Դ. Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, թե՛ բնական պարտ է ասել, թե՛ անբնական: Նախադիր բանից առ Աթանաս Անտիոքացի
- Ե. Նորում Խոսրովոյ թուղթ առ տէր Սարգիս եպիսկոպոս Գերադիկորայ¹⁰

10. «ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆՔ» Յովհաննէս Սարկաւազ վարդապետի» այս խորագրի տակ նկատի ունիմ վեցնետիկի Միսթարեանց Մատենադարանի թիւ 504 ձեռագիր մատենանի ասանդած աստուածաբանական այն ստեղծագործութիւնները, որոնք աներկբայ արգասիքն են Հաղբատայ նշանատր վարդապետ Յովհաննէս Սարկաւազի: Ստորեւ՝ այդ գրութեանց ենթավերնագիրները.

վեցնետիկ, Միս. Մատենադարան, թ. 504	Էջ
Յովհաննո քահանայի՝ յաղազս նշանակ հաւատոյ Նիկիականն ԹԺԸ-իցն	399
Թաղազս Որդոյ	403
Թաղազս Հոգւոյն Սրբոյ	424
Նորին Յովհաննո քահանայի՝ ի խնդրոյ Գազկայ կրօնատրի՝ յաղազս քաղկեդոնականացն. գլուխ ԺԸ Առաջին՝ վասն մի եւ ոչ երկուս ասել զՏէր մեր Յիսուս Բրիստոս	432
Վասն տօնից միաբանութեան եւ բաժանման	433
Վասն յիշատակաց վկայից ճշմարտութեանն	435
Վասն մկրտութեան եւ ոչ թե՛ զիստի իցէ	435
Վասն քահանայութեան եւ քահանայից	437
Վասն աշխարհականացն ժողովրդոց	438
Վասն տաճարաց աղօթարանաց, որ են եկեղեցիք	439
Վասն վկայարանացն սրբոց եւ անուանելոցն միայն	440
Վասն սրբոյ Խաչին	441
Վասն պատկերաց	448
Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ՝ վասն պատկերաց դարձեալ	451
Նորին Յովհաննո քահանայի, առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն	465

10 Տե՛ս Գարեգին վրդ. Յովսէփեան, «Խոսրովիկ Թարգմանչի», Վարդապատ, 1899:

Նորին յաղագս՝ եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զատուածայնոց ձայնս՝ ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ՝ զառ յինքնէն զգործս կամ կիրս	510
Յաղագս՝ եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոս, ի հարկէ հետեւին նեստորականաց մտաց	528
Թէ զհարդ չարչարեալ Բանն, մարմին եղեալ եւ անչարչարելի մնացեալ, եւ կամ որպէս դարձեալ ձայնակցեն չառափառքն	535
Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի	544
Նորին հակաբանութիւն հնագիտական՝ ընդդէմ անգիտակաց ոմանց յիս գիտութեան, որք ստալոյ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց՝ հաւատալ անհաւաստի իրեանց կարծեաց	554
Եւսեբեայ Կեսարոյ լեկեղեցոյ պատմութենէն ի հինգերորդ դարութենէն՝ վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի	555
Նորին յաղագս բնութեան Բանի եւ միաորութեան Նորին՝ եթէ զհարդ ասի մի բնութիւն	569
Բանին մարմնացելոյ ըստ ճշմարտութեան	575
Յաղագս կամացն	585
Յաղագս ներգործութեան	591
Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ եւ յայլ ժամանակս յարանց բղջախոհաց	605
Վկայութիւնք սրբոց, եթէ մի բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ [անկատար] ¹¹	655

11. «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»¹². Հայ Եկեղեցոյ դասական աստուածաբանութեան զագաթն է սքանչելիօրէն համակարգուած այս վիթխարի ստեղծագործութիւնը: Եթէ վերը խօսքը այն մասին էր, թէ մեր Եկեղեցիին մէջ յիստ սակաւ է վարդապետական աստուածաբանութեան վերաբերեալ համակարգուած պաշտօնական ձեռնարկներու գոյութիւնը, ապա այստեղ, ի տես Գրիգոր Տաթևացիի յօրինած «Հարցմանց գիրքի», կարելի է ըսել, թէ ընդհանրապէս դաւանաբանութեան բնագաւառին մէջ, ակնարկուած պակասը

11 Տե՛ս Արէլ Արեղայ, «Մատենագրական հետազոտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացոյ գրական ստեղծածի շուրջ», «Համէս ամսօրեայ», 1-12, 1991, էջ 75-77:

12 Տե՛ս Գիրգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կոստանդնուպոլիս, 1729:

լրացնելու իմաստով, այն մեծ նշանակութիւն ունի: Նախ խորագիրը՝ «Գիրք հարցմանց», ստուար հատորիս էութեան բնորոշիչն է. այսինքն՝ ամբողջ գործը աստուածաբանական եւ վարդապետական բազմազան հարցերու ընդարձակ անդրադարձ մըն է, որ կ'առաջնորդուի սխոլաստիկական ոճին իրայատուկ հարց-պատասխաններու (Questiones disputatae) մեթոտով: Տարակոյս չկայ, որ Տաթևացին իր սոյն երկը յօրինելու ընթացքին ազդուած է Թովմաս Ալկուինացիի, Ալբերտոս Սուարեցիի եւ Սկովտոս Երինացիի նմանատիպ ստեղծագործութիւններէն՝ միեւնոյն զէնքերով մաքառելու համար Հայաստանի մէջ տարածուող ժամանակի լատինադասան յորձանքի դէմ: Ափսոս, որ, հակառակ իր ունեցած անհերքելի հեղինակութեան, Տաթևացիին սոյն գիրքը հրապարակային եւ պաշտօնական ճանաչում չէ գտած մեր եկեղեցական պատկան մարմիններու կողմէ՝ իրրեւ ուղեցոյց Հայ Եկեղեցոյ դասական աստուածաբանութեան: Այստեղ պիտի չուզէի բաժնել Օրմանեանի այն տեսակէտը, թէ «ժամանակին լատիններուն դէմ իրենց զէնքերով մաքառելու հարկը ստիպած է Տաթևացին»՝ «Հարցմանց գրքին» մէջ իրացնել եւ հայոց սեպհականեալ տալ նաեւ այնպիսի վարդապետութիւններ, որոնք լատիններէն առաջ կը դրուէին եւ թելալտ Հայ Եկեղեցոյ սեպհական չէին... Կ'երեւի, թէ Տաթևացին ուզած է այնպէս իմն ցուցնել, թէ Հայ Եկեղեցին թերի բան մը չունի իր ընդհանուր վարդապետութեան մէջ»¹³: Պէտք է ըսել, որ ինչքան ալ Եկեղեցիներ ունենան իրենց ուրոյն սովորութիւններն ու ազգային դիմագիծը, հաւատքին վերաբերող հիմնական հարցերու մէջ կղզիացած չեն կրնար ըլլալ, ի մասնաւորի՝ այն Եկեղեցիները, որոնք հաւատոյ աւանդութեան առնչութեամբ ունին ընդհանրական եւ առաքելական համընդհանուր ակունք մը: Հաւատքի ճշմարտութիւններ չեն կրնար ունենալ որեւէ ազգային դիմագիծ եւ դառնալ սեպհականութիւնը ասոր կամ անոր: Կրօնական հաւատալիքներ որդեգրելը քրիստոնէութեան մէջ գործող դրուածք մըն է՝ Եկեղեցիին գոյաւորման եւ զարգացման օրերէն սկսեալ, այնքանով որ անոնք խոտոր չեն եկեղեցական աւանդութիւններուն եւ Աւետարանի հաւատոյ ճշմարտութիւններուն: Արդ, եթէ Տաթևացին քրիստոնէական որոշ հաւատալիքներ որդեգրած է, ապա այդ կատարած է զուգէ մեր Եկեղեցոյ մէջ դեռ չբանաձեւուած, գրաւոր խօսքի չվերածուած, բայց եւ այնպէս հաւատոյ ըմբռնումներու մէջ առկայ հիմքերու վրայ եւ ազգային-եկեղեցական

13 Տե՛ս Օրմանեան, «Ազգապատում», Բ, Պէրոպ, 1960, էջ 2029:

աանդություններու սահմաններուն մէջ: Բաց աստի, Տաթեւացիի նախածեղծութեանը վերագրող Օրմանեանի նշած նորամտութիւններէն շատեր արդէն իսկ առկայ են մեր կարգ մը վարդապետներու գործերուն մէջ, որոնք ժամանակագրական կարգով աւելի առաջ են, քան Տաթեւացին, ինչպէս օրինակ՝ Վարդան վարդապետ Արեւելցին եւ այլն: Սակայն այս մասին՝ ուրիշ առիթով:

12. Գալով Տաթեւացիի՝ աստուածաբանական գիտութեանց վերաբերեալ ըմբռնումներուն՝ նոյն «Գիրք հարցմանցի» երրորդ հատորին մէջ «տիեզերալոյս վարդապետս» ամբողջութեամբ կը խօսի Դիոնեսիոս Արիոպագացիի աստուածաբանութեան մասին՝ հետեւեալ վերտառութիւններով.

- Ա. Ծառելի եւ անձառելի: Եւ բնութիւն Աստուծոյ՝ անգիտելի: Եւ թէ՛ անգիտութեամբ գիտելի [է] Աստուած: Եւ տգիտութիւնն է խաւար մտաց
- Բ. Զի՞նչ է հանգիստ մտաց
- Գ. Միութիւն եւ որոշումն
- Դ. Բաղդատութիւն Բանին Աստուծոյ եւ մարդկութեանն
- Ե. Վասն է՞ր կոչեմք Երրորդութիւն՝ եւ Հայր, եւ Որդի, եւ Հոգի Սուրբ
- Զ. Մի եւ միակ եւ բազում
- Է. Սկիզբն եւ պատճառ
- Ը. Վասն էի եւ ոչէի եւ նախագոյի եւ էր եւ է եւ եղիցի
- Թ. Վասն յարացուցի՝ մի է եւ բազում
- Ժ. Վասն անեղութեան եւ եղելութեան
- ԺԱ. Անժամանակ է Աստուած եւ յաիտեան եւ հին ատրց
- ԺԲ. Վասն յաիտեանից
- ԺԳ. Վասն կենաց եւ զանազանութեան Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան եւ կենդանեաց
- ԺԴ. Վասն տեսութեան Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան: Եւ ամենահայեաց է Աստուած
- ԺԵ. Զի՞նչ զանազանի եւ հաւասարի տեսութեանն Աստուծոյ եւ հրեշտակաց եւ մարդկան
- ԺԶ. Զանազանութիւն տեսութեան մտաց եւ զգայութեանց: Եւ բանականութեան սկիզբն եւ կատարումն
- ԺԷ. Վասն՝ թէ բան ունի Աստուած: Եւ վասն ճշմարտութեան եւ հաւատոյ: Եւ զանազանութիւն բնական քննութեանն եւ հաւատոյ

- ԺԸ. Քանի՞ է եղանակ աստուածաբանութեան
- ԺԹ. Զանազանիւն բացբարձականքն եւ ուրացականքն
- Ի. Արեգակն կոչի Աստուած Ի յատկութեամբ
- ԻԱ. Վասն զարմացմանն Աստուծոյ եւ նախանձում
- ԻԲ. Սէր եւ սիրելի եւ բարի է Աստուած
- ԻԳ. Լայն, երկայն, խոր եւ բարձր ասի Աստուած
- ԻԴ. Այժա եւ Օ
- ԻԵ. Ուրք է մարմինն

Անդրադառնալով Դիոնեսիոս Արիոպագացիին՝ ինչպէս ժամանակի բոլոր եկեղեցական հայրերը, անշուշտ Տաթեւացին եւս նկատի ունի Եկեղեցոյ մատենագրութեան մէջ քաջածանօթ այն հեղինակը, որ իբրեւ աշակերտ Պօղոսի կը յիշատակուի Գործ. ԺԷ 34 համարին մէջ. «Քանի մը մարդիկ, յարելով [Պօղոսին], հաւատացին. անոնց մէջ էր նաեւ Դիոնեսիոս Արիոպագացին»: Սակայն գիտութիւնն այսօր կապացուցանէ, թէ Դիոնեսիոս Արիոպագացիի անունով մեզի աւանդուած աստուածաբանական բոլոր գրուածքները գրական ժառանգութիւնն են կեղծանունի մը, որն ապրած է Ե դարու վերջը եւ Զ-ի սկիզբը: Բնական է, այս մասին չէր կարող գիտնալ ԺԴ/ԺԵ դարու հեղինակ մը, որպիսին է Տաթեւացին: Այնուամենայնիւ, խիստ հետաքրքրական են այս առթիւ Տաթեւացիին տուած մեկնաբանութիւնները՝ ըստ իւրաքանչիւր մասին: Օրինակ՝ «Յաղագս աստուածաբանական եղանակաց» ԺԸ ենթավերնագրին տակ Տաթեւացին տեսական աստուածաբանութիւնը կը բաժնէ չորս հիմնական մասերու.

- ա) տպաւորական,
- բ) պատճառաբանական,
- գ) նշանական,
- դ) խորհրդական:

«Առաջինն, որ է տպաւորական աստուածաբանութիւն, է ի Դեմս Ս. Երրորդութեան եւ Մի Աստուածութեան, թէ որպէ՞ս է Մի, որպէ՞ս՝ Երրեակ եւ Ծնող եւ Ծնունդ եւ ի թխումն եւ վասն մարդեղութեանն Բրիստոսի: Եւ է սա՛ առաջին, զի զոր նախ է, քան զյաիտեանն եւ զժամանակս. աստուածաբանէ՛ եւ քննէ՛»:

«Երկրորդն է պատճառաբանականն, որ է ի պատճառելեացս,

այսինքն՝ յարարածոց զգեղեցիկն տեսնալ՝ զՊատճառն եւ զԱրարիչն վերակոչենք եւ անուանենք. որպէս է՝ բարի, գեղեցիկ, լոյս, կեանք, իմաստութիւն եւ այլն: Եւ է սա՝ երկրորդ, զի ի պատճառտ ստեղծման էիցս՝ աստուածաբանութիւնս այս յառաջագայի»:

«Երրորդն է նշանական աստուածաբանութիւն, որ ի զգայի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն, թէ զի՞նչ նշանակէ մարդ երեւիլն կամ առիծ, գառն, հուր, լոյս եւ այլն: Եւ թէ որպէ՞ս ասենք ննջել, զարթոնուլ, սրտմտիլ կամ տրտմիլ Աստուծոյ: Եւ է սա՝ երրորդ՝ ըստ կարգի, զի երեւելեաց եւ ի մարմնականաց աստուածաբանութիւնս այս յառաջագայի»:

«Իսկ չորրորդն է խորհրդական աստուածաբանութիւն, յորժամ, զամենայն զգայի եւ զիմանալի էութիւն արտաքոյ թողնալ, ի խոր ընթանամք մտօք եւ մտանենք յամպն եւ ի մէզն՝ ըստ Մովսէսի. եւ ապա տեսանենք զՆա արտաքս որոշեալ յամենայն էից: Ջի ո՛չ մարմին է [Աստուած] եւ ո՛չ հոգի եւ ո՛չ միտ եւ ո՛չ այլ ինչ, զոր մեք գիտենք կամ իմանանք: Եւ ապա ասենք՝ անհասանելի, անընձելի, անճառելի [է Աստուած] ո՛չ միայն մեզ, այլ եւ ամենայն եղական իմացմանց անիմանալի է եւ չանյայտ: ... Եւ Նա նման է ի հրեշտակաց եւ անյայտ՝ ի մարդկային մտաց, թէ որպէ՞ս կամ զի՞նչ է էութիւն եւ բնութիւն Աստուածութեանն: Այս է ծայրագոյն գագաթն աստուածաբանութեան: Այս է երանութիւն իմանալեացն: Եւ այս է կարօտութիւն ամենայն ընտրելոց, այսինքն՝ Անհասիւն անհասապէս հասանիլ եւ զԱնտեսն անտեսութեամբ տեսանել: Սա կոչի խորհրդական աստուածաբանութիւն»:

Տեսական աստուածաբանութեան այս չորս եղանակներն, եթէ փորձենք այսօրուայ ըմբռնումներով արտայայտել՝ հիմնական, համեմատական (Analogia entis), խորհրդանշանական (Symbolism), միաստիկ կամ ներհայեցողական աստուածաբանութիւնք, սա կամ նա ձեռով կու գան միանալ աստուածաբանական մէկ ճիւղի՝ դաւանաբանութեան մէջ:

Վերոյիշեալ չորս բաժանումներէն բացի Տաթեացիս աստուածաբանութիւնը կը բաժնէ եւս երկու մասերու, որոնցմէ իւրաքանչիւրը դեռ իրենց կարգին կը բաժնուին երկու ստորաբաժանումներու.

«Ծանի՛ր եւ զայս ուշիմ մտօք, զի ամենայն աստուածաբանութիւն նախ յերկուս բաժանի, այսինքն՝ դրութեամբ եւ բացբարձմամբ: Եւ իւրաքանչիւր սոցա երկաստի, որ լինին չորս՝ ըստ Աստուածաբա-

նիս Գրիգորի, այսպէս. «է՛ եւ ասի, ո՛չ է եւ ասի, է՛ եւ ո՛չ ասի, ո՛չ է եւ ո՛չ ասի»:

«Նախ՝ դրութեամբն, որ է՛ եւ ասի, որպէս՝ Հայր, Որդի, Հոգի, Լոյս, կեանք եւ այլն: Այս է, զոր ինչ է ի յԱստուած, դնելով կոչենք զՆա: Եւ այսպէս է տպատրականն եւ պատճառաբանականն»:

Այլ խօսքով՝ այն ամէնը, որ Աստուած Իր բնութեամբ եւ էութեամբ է, յայտնութեամբ իմանալով, Աստուծոյ մասին կ'ըսենք, թէ Աստուած Իր երեք Անձերով՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի, անստուեր Լոյս, կեանք եւ Սէր է եւ այլն:

«Երկրորդն՝ ո՛չ է եւ ասի, որպէս՝ մարմին, ձեռն եւ ոտն կամ ննջել եւ զարթոնուլ, որ ո՛չ է ի յԱստուած, այլ, դնելով ի վերայ, ըստ ներգործութեանն տարացոցի: Եւ այս է նշանակաւ աստուածաբանութիւն»:

Արարիչ Աստուած բոլոր գոյերէն ու արարածներէն գերիվեր է: Աստուած Խորհուրդ խորին է՝ անհաս եւ անսկիզբն: Կարելի չէ Աստուծոյ որեւէ գոյացական մասնիկ կամ յատկանիշ վերագրել, զորօրինակ ըսել՝ «Աստուած Իր ձեռքով ստեղծեց ամբողջ տիեզերքը», «Աստուծոյ Աջը պաշտպանեց Իսրայէլը», «Եւ եօթերորդ օրը Աստուած հանգստացաւ» եւ այլն: Աստուած ձեռք կամ հանգիստի կարիք ունենալու տուեալներէն ու միութեան հասկացութեանց չարհանիշներէն գերազանց է: Բայց, առաջնորդուելով մարդկային իմացութեան եւ մտածողութեան սահմաններէ, Աստուծոյ մասին խօսելով մարդկային լեզուամտածողութեամբ, կ'ըմբռնենք Աստուծոյ ներգործութիւնը պատմութեան, ժամանակի եւ մարդկային մեր կեանքին մէջ:

«Իսկ բացբարձականքն ի խորհրդական աստուածաբանութեանն է: Նախ՝ որ է՛ եւ ո՛չ ասի, որպէս՝ անսկիզբն եւ անվախճան, ո՛չ բան եւ ո՛չ միտ, ո՛չ է եւ այլն: Եւ այս՝ ո՛չ ըստ պակասութեան, այլ՝ ըստ գերազանցութեան»:

Այստեղ յոյժ կարեւոր ըմբռնում մըն է Տաթեացիի գործածած բացբարձում բառը, որն այսօրուայ սահմանումով ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ անդրանցականութիւն, օտար բառով՝ «Transcendenz» հասկացութիւնը՝ իր իմաստասիրական եւ աստուածաբանական մտածողութեան ամբողջ տարողութեամբ:

Աստուած անսկիզբ եւ անվախճան է, եւ ի վերջոյ ինչպէ՞ս կարելի է իմանալ, թէ ինչ է անսկիզբն ու անվախճանը: «Ի սկզբանէ էր

Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ Աստուած էր Բանն» [Յովհ. Ա. 1] Աստուած Խօսք է, բայց այդ Խօսքը որչափ զուգահեռ է մարդկային խօսքին ու ըմբռնումին, անճառելի է. ուստի կարելի չէ նմանը Աստուծոյ վերագրել: Այո՛, կարելի չէ նոյնիսկ Աստուծոյ մասին ըսել՝ Աստուած է կամ գոյ է: Որովհետեւ իրաքանչիւր գոյութիւնն մարդն գոյացութեան եւ պատահարներու, այսինքն՝ որակի, քանակի, չափի, գոյնի, ձեւի, համի, հոտի յարաբերութեանց մէջ է, որ կ'ըմբռնենք ու կ'իմանանք, մինչդէռ Աստուած գերազանց է այս բոլորէն:

*«Երկրորդն՝ ո՛չ է եւ ո՛չ ասի, որպէս՝ այլայլութիւն եւ ապակա-
նութիւն, չար. ո՛չ է եւ ո՛չ ասի: Այս է աստուածաբանութիւն դո-
թեամբ եւ բացբարձմամբ, որ է՝ ստորասութեամբ եւ բացասութեամբ
եւ ճառելի եւ անճառելի»:*

Աստուծոյ կարելի չէ չարութիւն, այլայլութիւն, ապականութիւն եւ նման այլ ստորոգելիներ վերագրել, որովհետեւ այդպիսիք բացասութեան կամ թերութեան, պակասութեան յատկանիշներ են, մինչդէռ Աստուած անգերազանցելի կատարելութիւն է: Օրինակ՝ մութը պակասութիւնն է լոյսի, չարը՝ բացակայութիւնը բարիին, ապականութիւնը՝ մաքրութեան, եւ այլն: Ով որ նման չարադանդ ստորոգելի մը կը վերագրէ Աստուծոյ, անպայմանօրէն մոլորութեան մէջ է: Իսկ մոլորութիւնը պնդելու պարագային հերետիկոս է եւ մերժելի Եկեղեցիէն:

Աստուածաբանական գիտութեանց վերաբերեալ իր խորհուրդածութեանց ասարտին Տաթեւացին կը ներկայացնէ մեզի հետեւեալ ամփոփոյրը.

«Գիտելի է, զի առաջին աստուածաբանութիւնն նեղագոյն է եւ սակաւարան, որ է տպատրականն:

*Եւ երկրորդն, որ է պատճառաբանականն, առաւել է, քան գա-
նաջինն, զի յաղագս աստուածային անուանցն է քննութիւն:*

*Եւ երրորդն, որ է նշանակաւ, ա՛յլ առաւել եւ ընդարձակ եւ բազ-
մարան է, վասն զի խառնի ի զգալիսս, որ բազում է եւ բաժանեալ:
Ջի որքան ի վերուստ ի վայր իջանէ, ի բազումս բաժանի. որպէս ի սեռէ ի տեսակս եւ յանհատս իջեալ՝ բազմանայ: Կամ որպէս բունն մի է ծառոյն, եւ ճիւղքն եւ տերեւքն՝ բազում. նմանապէս եւ՝ աստուածաբանութիւնն:*

*Իսկ ի ներքուստ ի վեր՝ ի բազմութենէ առ մինն ընթանայ, որ-
պէս խորհրդական աստուածաբանութիւնն՝ արտաքոյ թողեալ*

*զբազմութիւն էից եւ ի մինն ընթացեալ, որ ամենեւին անբանութիւն է
եւ անիմացութիւն, անճառելի, անիմանալի եւ լռութեամբ պատուի
յամենայն արարածոց»¹⁴:*

13. **«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ».** Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով այստեղ աւելորդ չեմ նկատեր նշել նաեւ Մաղաքիա արքեպսկ. Օրմանեանի «Հայոց Եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրութեան իԱ-ԻԶ գլուխները, որոնք ամփոփուած են Հայ Եկեղեցւոյ «Վարդապետութիւնը» ընդհանուր ենթավերնագրի տակ. այսպէս՝ «Դաւանական սկզբունքներ», «Հայ Եկեղեցւոյ դաւանութիւնը», «Հաւատոյ հանգանակը», «Ներողամտութեան հոգին», «Եկեղեցւոյ խորհուրդներն» ու «Վարդապետութեան ճշդաբանութիւնը»¹⁵:

Քննարկին սկզբնաղբիւրներ Մ. Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ, Երեւան

14. Եսայի վրդ. Նչեցի, «Դաւանութիւն», թ. 7255, 8389. նաեւ՝ «Թուղթ առ Մատթէոս», թ. 8245
15. Պօղոս Տարօնացի, «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի», թ. 5787, 6517 եւ այլն. նաեւ՝ «Պատասխանի թղթոյն Թէոփիստեայ», թ. 8482
16. Գրիգոր Սկեւտացի, «Դաւանութիւն հաւատոյ», թ. 1217, 8065
17. Գրիգոր Վկայաւեր (Վահրամ Բաբունի*), «Յաղագս Սրբոյ Երրորդութեան», թ. 1712, 5586, 6988 եւ այլն
18. «Հարցումն Արձանայ եւ պատասխանիք Եզնկայ», թ. 1999
19. «Ջաքարիայի կաթողիկոսի եւ Մովսէս Քերթոյի՝ Ի փոխումն Աստուածամօրն», թ. 2042
20. «Վանական վարդապետի՝ Հարցմունք եւ պատասխանիք», թ. 2152
21. «Կոստանդին կաթողիկոսի՝ Դաւանութիւն», թ. 2174
22. «Հաւաքմունք վարդապետաց յաղագս դաւանութեան», թ. 2197
23. «Աղեքսանդր Ջուղայեցւոյ՝ Յայտարարութիւն ընդդէմ ֆրանկաց», թ. 2197
24. «Սահակայ Միայնակեցի՝ Դաւանութիւն», թ. 2220

14 Տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 122-123:

15 Տե՛ս Մաղաքիա արքեպսկ. Օրմանեան, «Հայոց Եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը», Պէլրոս, 1960, էջ 87-111:

25. «Անանիա Սանահնեցոյ՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաթնակաց», թ. 2245
26. «Յաղագս ճշմարիտ դասանութեան», թ. 2272
27. «Ստեփանոս Սիւնեցոյ՝ Պատասխանի առ վարդապետսն աղումսի», թ. 2042
28. «Ն. Ծնորհալոյ՝ Սահման հաւատոյ. Յաղագս դասանութեան», թ. 2043
29. «Ն. Լամբրոնացոյ՝ Սակս միաւորութեանց Քրիստոսի», թ. 2106
30. «Պօղոսի Էրզրումացոյ՝ Վասն հաւատոյ», թ. 2131
31. «Յաղագս միաւորութեան երկուց բնութեանց. Բանի եւ խորհուրդք Եկեղեցոյ. Դասանութիւն», թ. 2142
32. «Մովսէս Երզնկացոյ՝ Բան պատասխանատուութեան ուղղափառ հաւատոյ», թ. 2174
33. «Հարցումն ընդդէմ երկաթնակացն. Յաղագս աստուածաբանութեան», թ. 2189
34. «Վկայութիւնք վասն մի բնութեան», թ. 2335
35. «Վասն երկու բնութեան. Յաղագս Տիեզերական ժողովոցն. Յաղագս հայրապետացն հայոց, թէ որք կացին հակառակ Եկեղեցոյն Հռովմայ», թ. 2368
36. Ստ. Օրբելեան, Ան. Սանահնեցի, Մովսէս Երզնկացի, «Հակաճառութիւնք ընդդէմ երկաթնակաց», թ. 2678
37. «Վարդապետ. Կիլիկեցոյ (Արեւելցի՞)՝ Վկայութիւնք Աթանասի ընդդէմ երկաթնակացն», թ. 1838
38. «Վասն խնդրոյ Հոգւոյն Աստուծոյ եւ թուղթ Վանական վարդապետի: Դասանութիւն քաղկեդոնացոց. Վկայութիւնք ի հարանց՝ յաղագս դասանութեան», թ. 1850
39. «Համառօտ հաւաքումն վարդապետաց՝ Յաղագս դասանութեան ընդդէմ հերձուածողաց», թ. 1982
40. «Գէորգայ Կ. Պոլսեցոյ՝ Վասն միոյ բնութեան. Անհաւատութիւն ֆրանկ վարդապետաց. Պատասխանի այնոցիկ, որք երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Քրիստոսի. Գէորգայ Կ. Պոլսեցոյ՝ Վասն աղանդոցն», թ. 1983
41. «Գրիգոր Նարեկացոյ՝ Վասն ուղիղ հաւատոյ», թ. 1324
42. «Գրիգոր Նիւսացոյ՝ Խօսք յիմն երանութիւնսն», թ. 1385
43. «Եփրեմի՝ Վասն անքակ միաւորութեան Բանին եւ Մարմնոյ. Հարցմունք եւ պատասխանիք ընդդէմ երկաթնակաց. Հարցմունք Մամբրէի եւ

- պատասխանիք Դաւթի. Հարցումն հայոց առ երկաթնակսն. Սահմանք հաւատոյ, որ ի Նիկիայ», թ. 1555
44. «Վասն Եփեսոսի Բ ժողովոյն. Վասն Քաղկեդոնի ժողովոյն. Սակս Բ բնութեան», թ. 1666
45. «Թուղթ Վարդանայ վարդապետին ընդդէմ Հոմաց պապուն», թ. 1764
46. «Գործք Քաղկեդոնի ժողովոյն», թ. 1777
47. «Ստ. Դաշտեցոյ՝ Ընդդէմ հերձուածողաց», թ. 673
48. «Ժողովումն Սուրբ Գրոց յաղագս մի բնութեան Քրիստոսի», թ. 736
49. «Հարցմունք եւ պատասխանիք՝ Յաղագս մարդեղութեան Քրիստոսի», թ. 770
50. «Կիրակոս Երզնկացոյ՝ Թուղթ առ Կարնեցիս. Միս. Արծկեցոյ՝ Յաղագս միութեան բնութեան եւ Բանին Աստուծոյ. Պօղոս Տարօնացոյ՝ Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի. Ստ. Օրբելեան՝ Ընդդէմ ապականողաց զխորհուրդն. Հանգանակ Նիկիական. Կարգաւորութիւն ուղղափառ հաւատոյ. Նզովողք ժողովոյն Քաղկեդոնի. Կղեմէսի՝ Վասն հերձուածողաց. Վարդան Արեւելցոյ՝ Այլ ոճ վիճելոյ ընդ քաղկեդոնիկսն», թ. 774
51. «Պատասխանի ընդդէմ այնոցիկ, որ երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Քրիստոսի», թ. 841
52. «Գրիգորի Տաթեւացոյ՝ Դասանութիւն հաւատոյ», թ. 1712, 1850, 5128
53. «Ստ. Սիւնեցոյ՝ Վասն Բ բնութեան»
54. «Պօղոս Տարօնեցի՝ Վասն մարդեղութեան Քրիստոսի», թ. 714

* * *

Այստեղ հարկ կը նկատեն մասնաւոր շնորհակալութիւն յայտնել հոգշ. տ. Արքրահամ վրդ. Մկրտչեանին՝ Մատենադարանի ձեռագրաց բնագրային սոյն սկզբնաղբիւրներուն համարները նշելու առիթով ինձի ցուցաբերած օժանդակութեան համար:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ (շարունակութիւն)

ԴՐՈՇՄ

Ձեռագրերում Դրոշմի արարողութիւնը ոչ մի խորագրով բաժանուած չէ Ջրի Մկրտութեան արարողութիւնից: Արդէն իսկ Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդների առանձնացումը յատուկ է աւելի ուշ շրջանի դպրոցական (scholastic) մտայնութեանը եւ չունի որեւէ ծիսական լեւոյս, ընդհակառակը՝ ծէսը պահանջում է այս երկու խորհուրդների միեղէն-համաժական դիտարկում՝ փրկութեան համար անհրաժեշտ տնօրինական հերթականութեան ծաւալումով: Այստեղ հարկ է նշել, որ ծիսական աստուածաբանութեան համար ելակէտային է Սրբազան Ծէսը, եւ որեւէ աստուածաբանական կամ վարդապետական կառոյց պէտք է անհրաժեշտաբար կառուցուած լինի ծիսական իրականութեան վրայ: Իւրաքանչիւր ծիսական երեւոյթի դիտարկման համար սկզբունքային է նրա սրբազան տարրերի փրկաբանական միասնութիւնը, եւ վտանգաւոր են մեկուսացումը, բեկորային մտնեցումները, երբ ծիսական որեւէ բաղադրամաս չափազանց տարանջատում է որոշակի ուրոյն, սուկական իմաստով եւ նշանակաւորութեամբ: Ջրի լուացման եւ Միւռոնի օծման խորհուրդները խորապէս փոխներթափանցուած են. չէ՞ որ օծումը կատարում է այն իւղով, որը նախապէս հեղուել է ջրի մէջ... Այս առումով անհրաժեշտ է շեշտել, որ Մկրտութիւնը Դրոշմի արարողութեամբ հանդերձ մէկ միասնական ծէս է, որի իւրաքանչիւր տարր բացայայտում է իր տեղում՝ ծէսի օրինակաւ ընթացքի մէջ:

Այս երկու խորհուրդների լծորդուածութիւնը պատահական չէ, այլ ունի իր անտարանական նախափնթը, որը Քրիստոսի Մկրտութիւնն է: Այն, ինչ մէկ անգամ տնօրինաբար կայացել է Քրիստոսի հետ, մեզ հնարաւոր է դառնում Նրա հրաշափառ Յարութիւնից եւ

Հոգեգալուստից յետոյ, որոնց վրայ է խարխաւած մեր փրկութեան ողջ տնտեսութիւնը: Քրիստոսի Մկրտութիւնը մեզ համար փրկական խորհուրդ է դառնում Տիրոջ Մահով եւ Յարութեամբ. նոյնպէս էլ՝ Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու աղանակերայ էջքը մեզ համար հնարաւոր է դառնում միայն Սուրբ Հոգու տնօրինական յայտնութեամբ՝ Հոգեգալուստով: Ուրեմն, ծէսի հիմքը անտարանական իրողութիւնն է, որն իր մէջ հանգուցում է երկու կարեւորագոյն խորհուրդներ՝ Քրիստոսի Յարութեանը տնկակցուելու եւ Սուրբ Հոգու ստացման:

Դրոշմի արարողութիւնը միանշանակ չի եղել Հին Եկեղեցում. գոյութիւն են ունեցել զանազան ասանդութիւններ եւ ծիսական բազմակերպութիւններ: Այսպէս օրինակ՝ վաղ ասորական ծէսում բացակայում է Դրոշմը. օծման արարողութիւն կատարում է մինչեւ ջրի լուացումը, որն իր բնոյթով դիւանալաւծութեան (exorcism) եւ նախապատրաստական արարողութիւն է: Ասորական ծէսի մասին տեղեկութիւններ պարունակող հնագոյն բնագրերի¹ համաձայն՝ Ջրի Մկրտութեան եւ Հաղորդութեան միջեւ որեւէ արարողութիւն չկայ: Մկրտութիւնից յետոյ Դրոշմի արարողութեան մասին առաջին յիշատակութիւններն արեւմտեան աղբիւրներից են², եւ իրաւացի է ենթադրել, որ Դրոշմն Արեւելք է մուտք գործել Արեւմուտքից, ինչպէս օրինակ ս. Կիրել Երուսաղէմացու խորհրդական (mystagogical) ճառերում³ կամ Առաքելական հրահանգներում⁴ նկարագրուած արարողութիւններում է:

Հայկական ծէսը ձեւաւորուել է արեւելեան եւ արեւմտեան ասանդութիւնների խաչաձեւումով. աւելի հին ասորական ազդեցութիւններն ընդխառնուել են յետագայ բիւզանդական (արեւմտեան) ներմուծութիւններին⁵: Մկրտութեան արարողութեան մէկ ուշագրաւ

¹ "The Acts of Judas Thomas", "Documents of the Baptismal Liturgy", edited by E. C. Whitaker, London, 1979, p. 13-16; "The History of John the Son of Zebedee", նոյն, p. 21-23

² "The Apostolic Tradition of Hippolytus", նոյն, p. 2-7; Tertullian, "De Baptismo", նոյն, p. 7-10

³ Migne, PG, 33, 331-1180; R. M. Woolley, "Instructions on the Mysteries of St. Cyril of Jerusalem", London, 1930: Տակաւին անորոշ է՝ այս ճառերը թարգմանուել են հայերէն, թէ՞ ոչ:

⁴ "The Apostolic Constitutions", "Documents of the Baptismal...", p. 30-35: Այս անվանի կանոնախումբը գրուել է մօտ 375 թ.: Հայերէն թարգմանութեամբ չկայ:

⁵ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Gabriele Winkler, "The History of the

աւանդութիւն է եղել մեզ մօտ, որի մասին տեղեկանում ենք Ագաթանգեղոսի վկայութիւնից, ըստ որի՝ օծումը կատարում էր ուղղակի ջրում՝ սուրբ Իւղի հեղմամբ մկրտողները⁶ վրայ... Սուրբ Իւղի հեղումը նշանակն էր Սուրբ Հոգու էջքի եւ հայելացում էր Քրիստոսի Մկրտութեան հետ, երբ Սուրբ Հոգին աղանակերայ իջաւ Տիրոջ վրայ. «Եւ իւղն օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն, շուրջ զմարդկանն խաղայր»⁷:

Դրոշմի արարողութիւնը, ըստ իր ընդհանրացած ձեւի, ունի ինն օծումներ, որոնցից իւրաքանչիւրն ուղեկցում է իրեն յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Բացի այս ինն օծումներից, եղել են այլ օծումներ, որոնք չեն ընդհանրացել. այսպէս օրինակ՝ ՄՄ թիւ 1001 երկաթագիր մաշտոցն ունի նաեւ թիկունքի օծում. «Եւ ապա զթիկնամէջն [օծանէ]՝ ասելով. «Կնիքս, որ յանուն Քրիստոսի եղիցի քեզ պարիսպ ամուր շուրջ պատեալ զթիկունս քո Հոգին ճշմարտութեան, յանուն Հայր եւ Տրոյոյ եւ Հոգւոյն Սրբոյ»»: Թիկունքի օծում ունեն նաեւ օրինակ՝ ս. Ղազարի թիւ 1429, 487, ՄՄ թիւ 3822 մաշտոցները, սակայն՝ այլ բանաձեւերով: Ս. Ղազարի թիւ 182 մաշտոցն ունի երեսի օծում՝ հետեւեալ բանաձեւով. «Լոյս աստուածային ծագելով ի վերայ երեսաց քոց»: ՄՄ թիւ 3822 մաշտոցում առկայ է ծնկների օծում՝ այսպիսի բանաձեւով. «Կնիքս Քրիստոսի ուղղեացէ զծունկսդ տկարացեալ, զի գնացես սրբութեամբ ի տան Տեառն ըստ հաճոյից Աստուծոյ»⁸: Ինն օծումները կատարում են հետեւեալ յաջորդականութեամբ⁹.

Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", Pont. Institutum Orientalium Studiorum, Roma, 1978 եւ "Das Armenische Initiationsrituale", նոյն վայր, 1982: Վերջինս ծառայուն աշխատութիւն է, որ նաեւ ներկայացուած է մեր Մկրտութեան արարողութեան քննական քննագիրը ս. Ղազարի թիւ 457 հնագոյն ձեռագրի հիման վրայ:

⁶ Այստեղից հարց է առաջանում, թէ ո՞ր իւղն էր հեղում ջրի մէջ յետագայ դարերում, երբ մեր ծէսում դեռեւս առկայ էր նրախայտութեան օծումը (մինչեւ Ը դար):

⁷ «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Երեւան, 1983, էջ 464, ԾԺԸ

⁸ Բ. Ասոսակ Ժեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», Վննետիկ, 1972, Բ. 4, էջ 386

⁹ Այս հերթականութիւնը միանշանակ չէ ձեռագրերում, բացի այս, որոշ ձեռագրերում զանց է առնուած այս կամ այն օծումը:

Յետ այսորիկ օծանէ սուրբ իղովն նախ զնակատն՝ ասելով.

«Իւղ անոյշ, հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քո, կնիքն երկնաւոր պարգեւացն»:

Չաչսն.

«Կնիքս, որ յանուն Քրիստոսի, լուսաւորեացէ զաչս քո, զի մի՛ երբէք անջեցես ի մահ»:

Եւ զականջսն.

«Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն»:

Չհոտտելիսն.

«Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի հոտ անուշութեան ի կենաց ի կեանս»:

Ջրերանն՝ ասելով.

«Կնիքս այս եղիցի քեզ ի պահպանութիւն եւ դուռն ամրութեան շրթանց քոց»:

Չափսն՝ կիցս ունելով.

«Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի պատճառս բարեգործութեան, առաքինի գործոց եւ վարուց»:

Չսիրտն.

«Կնիքս աստուածային սիրութեան սիրտ սուրբ հաստատեացէ ի քեզ եւ զհոգի ուղիղ նորոգեացէ ի փորի քում»:

Սրանից յետոյ սուրբ Իւղով նախ օծում է նակատնը՝ ասելով.

«Քրիստոսի անունով քեզ վրայ հեղուած անուշ Իւղը երկնաւոր պարգեւների կնիքն է»:

Ապա աչքերը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբէք չանջես մահով»:

Եւ ականջները.

«Այս սուրբ օծումը թող լինի քեզ լսելութիւն աստուածային պատուիրաններին»:

Հոտտելիքը.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ անուշահոտութիւն կեանքից կեանք»:

Բերանը՝ ասելով.

«Այս կնիքը թող լինի քեզ պահպանութիւն եւ ամուր դուռ քո շուրթերին»:

Չեղքերը՝ կից պահած.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ պատճառ բարեգործութեան, առաքինի գործերի եւ վարքի»:

Սիրտը.

«Աստուածային սրբութեան այս կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մէջ եւ ուղիղ հոգի նորոգի քո ներսում»:

Ջրամակն.

«Կնիքս այս, որ յանուն Քրիստոսի, եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նեսսս մուխս չարին շիջուցանել»:

Եւ զոտսն.

«Կնիքս աստուածային ուղղեսցէ զզնացս քո ի յախտեանից»:

Մէջքը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ ամրութեան վահան, որով կարողանաս չարի բոլոր այրող նետերը հանգցնել»:

Եւ ոտքերը.

«Այս աստուածային կնիքը թող ուղղի քո ընթացքը դէպի յախտեանական կեանք»:

Օծութեան Իւղի կամ Միւռոնի խորհրդարանութիւնը նոյնքան բազմանշանակ է, որքան՝ ջրինը: Օծումը¹⁰ վաղնջական ժամանակներից ծառայել է որպէս սրբագործման եւ նուիրագործման միջոց [տե՛ս Ծճունդ. ԻԸ 18, ԼԵ 14]. իւղերը յանուն Աստուծոյ հեղում էին որոշակի իրերի վրայ եւ սրբութիւն ու նուիրականութիւն հաղորդում նրանց: Սուրբ Օծութեան Իւղը, որի արարչադիր բաղադրութիւնը յայտնուեց Մովսէսին [տե՛ս Ելք Լ 22/24], պէտք է գործածուէր միայն որոշակի պաշտամունքային առարկաների եւ ընտրեալ այրերի օծման համար. նրա գործածութիւնը խստօրէն սահմանափակուած էր *տաճարային, քահանայական* շրջանակներով, այն անմատչելի էր *սովորական* մարդկանց... Սուրբ Օծութեան Իւղով օծուած առարկաները սուրբ եւ նուիրական էին, որովհետեւ նրանց վրայ դրուած էին աներեւոյթ Աստուածութեան կնիքները, նրանց վրայ էր կենդանի Աստուծոյ սրբարար զօրութիւնը, իսկ օծեալները կամ քահանաները Տիրոջ սպասաւորներն ու ներկայացուցիչներն էին, նրանց շնորհուած էր բացառիկ աստուածային պատիւ, նրանք Աստուծոյ ներկայացուցիչներն էին երկրի վրայ:

Աստուածային օծման պատուի էին արժանանում նաեւ թագաւորները [տե՛ս Ա Թագ. Ժ 1, Ա Թագ. ԺԶ 13, Գ Թագ. Ա 39], սակայն՝ ոչ Սուրբ Օծութեան Իւղով¹¹:

Հնուց ի վեր օծում էին նաեւ անջնցեալների մարմինները՝

¹⁰ Օծումը նաեւ եղել է անուշափոստութեան եւ համեմտքի միջոց, ինչպէս նաեւ ծառայել է բժշկական եւ այլ նպատակների համար, որը դուրս է մեր քննութեան շրջանակներից:

¹¹ Թագաւորական օծման իւղի մասին որեւէ տեղեկութիւն չկայ Սուրբ Գրքում. հաւանաբար գործածուել է ինչ-որ թանկարժէք իւղ:

նրանց ապականութիւնից զերծ պահելու համար: Բեթանիայում, Միմոն բորոտի տանը, օծուեց նաեւ Տիրոջ Մարմինը (Մինչեւ մահը), որն, ըստ տէրուական վկայութեան, խորհրդանշում էր Իր թաղումը [տե՛ս Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3, Յովհ. ԺԲ 3]: Ուրեմն, օծումը նաեւ վախճանաբանական իմաստ է կրում, օծումով մարդկային մարմինը ներծծում է աստուածային անապականելիութեամբ եւ կատարելապէս պիտի նորոգուի մեռելների յարութեան ժամանակ: Յիշատակութիւններ կան սրբոց վարքերից, որոնք վկայում են, որ Աստուած որոշ սուրբերի բացառիկ պատուի էր արժանացնում՝ նրանց մարմինն անապականելիութեան յատկութիւններ շնորհելով, ոմանց մարմնից նոյնիսկ միւռոն է արտաքիւել նրանց մահից յետոյ¹², եւ այդպիսով Աստուած զարմանալի կերպով փառաւորել է նրանց մինչեւ Երկրորդ Գալուստ:

Այսպիսով, հինկտակարանեան օծումները կարելի է դասակարգել հետեւեալ կերպ.

- ա. սրբագործական,
- բ. քահանայական,
- գ. թագաւորական,
- դ. վախճանաբանական:

Հին Կտակարանում որեւէ նիւթական կամ զգայական նշանակ անկատար էր, քանզի այն կատարում էր Նրա անունով, որ պիտի գար եւ Իր անընդմիջելի մերձաւորութեամբ վերանիւթացներ նիւթը, զգայականի հետ Իր գոյաբանական միաւորմամբ աստուածացներ եւ փրկութեան առիթ դարձներ այն... Օծութեան Իւղի աստուածաբանական իմաստը խորապէս արտայայտուած է «Երգ Երգոցում», որ հինկտակարանեան բարձրագոյն մարգարէութիւնն է Քրիստոսի մասին: Հարսը Փնսային ասում է. «Քո անունը հեղուած անուշ իւղ է...» [Երգ Ա 2]: Ըստ Եկեղեցու հայրերի՝ *հեղուած անուշ իւղը*

¹² Օրինակ՝ այդպէս է փառաւորուել ս. Նիկողայոսի մարմինը. «Ըսկ զպատուական մարմինն նորա՝ զգարդարեալն ամենայն առաքինութեամբ, տարեալ ամփոփեցին պատուով յեկեղեցին, յորում պահու յանկարծակի բորեաց անուշափոստութիւն բազում, եւ թիւին այնուհետեւ զօրութիւնք ի տապանէ սրանչելագործ հայրապետին՝ ի բժշկութիւն հիանդաց եւ ամենայն ախտացելոց, որպէս եւ աիշկ անապկաս ի սուրբ մարմնոյ նորա՝ որպէս միւռոն կամ իւղ անոյշ...» («Վարք սրբոյն Նիկողայոսի սրանչելագործ հայրապետին Ջմիրոնոյ, այսինքն՝ Միոնայ», «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», Վննետիկ, 1810, էջ 913): Տե՛ս նաեւ «Պատմութիւն վասն Պաղոսի Լուստրացոյ» («Վարք սրբոց հայրանց եւ քաղաքավարութիւն նոցին», հատոր Ա, Վննետիկ, 1855, էջ 323-324):

Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իւրը հեղուս է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւորութեամբ նրա հետ, օծում եւ աստուածացումս այն: Նախայաւիտեան Բանը հեղուս է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից (Նիւսացի-Տաթեւացի)¹³: Ուրեմն, Մարմնացեալ Բանի անունով էին օծում մինչեւ Քրիստոս, այդ օծումը կատարեալ չէր, այն ստուերակերպ էր, որով հետեւ դեռ չէր եկել Օծեալը, Որով պիտի ամբողջանային բոլոր հինկտակարանեան կերպերը, եւ Իւրի հեղումը կատարեալ իմաստ եւ աստուածային խորհուրդ պիտի ստանար:

Քրիստոնէական ս. Միւռնն ամբողջացումն է բոլոր ստուերակերպ օծութեան իւղերի: Միւռննի աստուածաբանութիւնը ներքին ընդգրկմամբ բացայայտուած է սրբալոյս Միւռննի օրհնութեան կանոնի աղօթքներում: Աստուծոյ Ամենասուրբ Հոգու զօրութեամբ այն դառնում է իւր *ցնծութեան, զգեալ լոյսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, շնորհք հոգեւորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող՝ ընդդէմ ամենայն գործոց բանաւրկուին, ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական*¹⁴: Եպիսկոպոսապետը մաղթում է, որ այս վերստին ծննդեան իւղով օծուածները երկիւղած լինեն Աստուծոց եւ աներկիւղ՝ հակառակորդից եւ Դատաստանի Օրը երկնքի աստղերի պէս փայլեն սուրբերի պայծառութեամբ¹⁵: *Ճշմարիտ Օծեալով* Սուրբ Երրորդութիւնը միաւորութեամբ այս անուշ իւղի հետ եւ դարձնում այն *Իւղ զուարթ ամբիծ դաւանման*¹⁶ շնորհելով մեզ *ճառագայթ հոգւոց, լոյսաւորութիւն մտաց, տեսնագրութիւն երեսաց, պահապան շրթանց, զօրութիւն անձանց, պիտեան ընդդէմ դիւաց, փարատիչ ցաւոց, պահպանումն կուսից, անեցումն տղայոց, պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց եւ պսակ թագաւորաց*¹⁷:

Բանի մարդեղութեամբ արարածն ի զօրու է դառնում կրել Աստուծուն, որն իրականացաւ Հոգեգալստին՝ Սուրբ Հոգու տնօրհնական գալստեամբ: Քրիստոսի փրկագործութեամբ մենք ստանում

¹³ Տե՛ս «Երգ Երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց», «Գանձասար», Երեւան, 1993, էջ 23-24:

¹⁴ Տե՛ս «Կանոն օրհնութեան սրբալոյս Մեռոնին», Վաղարշապատ, 1876, էջ 16-17:

¹⁵ Տե՛ս նոյն, էջ 17:

¹⁶ Տե՛ս նոյն, էջ 28:

¹⁷ Տե՛ս նոյն, էջ 30:

ենք Սուրբ Հոգին՝ էապէս հաստատուելով Աստուծոյ թագաւորութեան կատարեալ իրականութեան մէջ. ահա ա՛յս փրկաւէտ հանգուցման վրայ է հիմնուած Մկրտութեան օծումը. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս եւ օծ զմեզ, Աստուած է, որ կնքեացն զմեզ եւ ետ զառհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր» [Բ Կորնթ. Ա 21-22]:

Քրիստոսի անունով մենք ստանում ենք նոր կեանքի սուրբ եւ աստուածային կնիքներ, այսինքն՝ հաստատում ենք նոր կեանքով եւ ստանում կատարելապէս նոր գոյավիճակ, որն օտար եւ անհասանելի է այս աշխարհի համար: Միախարհիչը՝ Աստուծոյ Սուրբ Հոգին, եկել է Քրիստոս-Օծեալի անունով եւ օծել մեզ անախտութեան, սրբութեան, յաւիտենական կեանքի կնիքներով: Մենք դարձել ենք Աստուծոյ որդիներ եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ:

Հոգեգալուստն Աստուծոյ արարչութեան եզրափակիչ վերջնակէտն է. Բանի մարդեղութեամբ արարածը կարողութիւն է ստացել կրելու Սուրբ Հոգին... Սուրբ Հոգին իր տնօրհնական գալստեամբ հիմնում է Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութիւնը երկրի վրայ, եւ արարածը կարողութիւն է ստանում գոյաբանօրէն հաղորդակցուել Աստուծոյ անճառելի խորհուրդներին: չեւեւաբար, Օծումը Մկրտութեան ամբողջացումն է, ինչպէս Հաղորդութիւնը՝ Օծման. այսպիսին է Մկրտութեան արարողութեան ամբողջական եւ անբաժանելի շղթան՝ իր անտարանական անդրադարձումով եւ արտապատկերումով...

Այսպիսով, Դրոշմը Սուրբ Հոգու ստացման սրբազան նշանակն է. «Իսկ Միւռննին կատարողականն անուսն անուշաբոստ առնէ զկատարեալն, քանզի սրբազանն կատարումն աստուածայնոյն ծննդեան միաւորէ զկատարեալն Աստուածպետականին Հոգւոյ»¹⁸: Ուր Սուրբ Հոգին է, այնտեղ աստուածային իրականութեան ամբողջութիւնն է, նա գալիս է Քրիստոսի անունով եւ լցնում արարչութիւնն իր սրբարար ներկայութեամբ: Դրոշմը Սուրբ Հոգու խորհուրդն է, եւ երբ ասում է, որ Դրոշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգու շնորհները, նկատի չպէտք է ունենալ շնորհների որեւէ մասնակիութիւն, այլ՝ յատկապէս աստուածային շնորհների ամբողջ-

¹⁸ ս. Դիոնեսիոս Արեոպագացի, "The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69

ջութիւնը¹⁹, որն արարածը ստանում է Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ եւ Աստուծոյ արարչութեան կատարեալ եզրափակմամբ...

Արարածը կնքում է Քրիստոսի կնիքներով, մենք մտնում ենք Քրիստոսի ժառանգութեան մէջ, մարդկային բնութիւնը Քրիստոսի անունով ստանում է աստուածային կնիքներ եւ պայծառակերպում ու աստուածանում... Մենք մուտք ենք գործում Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութեան մէջ, որը երկինք է երկրի վրայ, իր էութեամբ դուրս է այս աշխարհից:

Ըստ ս. Գրիգոր Նարեկացու՝ սուրբ Աւագանի լուսամասը ստացած սրբութիւնն ամբողջանում է Իւղի օծումով, որով մենք ստանում ենք Սուրբ Հոգու գորութիւնը. «Զի որպէս յիջումն լուսարանի սուրբ Աւագանին լուսամասը մարմնոյն զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն, սոյնպէս ի յաւծումն Իւղոյն պարարեալ լուսով՝ զՀոգւոյն զարութիւն սովիմք եւ ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի»²⁰: Այս փրկութեան լոյսով լի Իւղը, հեղուելով արտաքին մարդու վրայ, ծածկապէս կենդանածնում է ներքին մարդուն. «...սոյնպէս Իւղս այս՝ փրկութեան լուսով կատարեալ, հեղեալ ի մեզ, աւծանէ զարտաքին խորանս, իսկ զներքին մարդս, աներեւակ ծածկապէս մտեալ, նոր կենդանածնէ»²¹, քանզի նրանում բնակւում է Տէր Յիսուս Քրիստոսի կենդանական գորութիւնը²²: Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու տնօրինական յայտնութիւնը մեր շնորհական օծութեան նախահիմքն է. այն, ինչ կայացաւ Տիրոջ հետ յայտնաբար, մեզ հետ կայանում է խորհուրդով, որն ուղեկցում է սրբազնագործուած զգայական նշանակի կիրառմամբ. «...զմերս՝ կաթուածով ինչ շնորհագարդեալ, եւ զՔոյդ՝ իսկութեամբ ընդ Հարբ եւ ընդ Հոգւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ»²³: Քրիստոսի անուամբ կնքուելով՝ մենք դառնում ենք քրիստոսեաններ կամ քրիստոսեաններ, այսինքն՝ օծուածներ, ընծայւում Սուրբ Հոգուն եւ

¹⁹ Այդ ամբողջութիւնն անուանուել է շնորհք Հոգւոյն Արքայ, ինչպէս գրուել է ս. Գրիգոր Տաթևացին. «...Իւղովն ի շնորհք Հոգւոյն Արքայ միաւորիմք»: Տե՛ս «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 593:

²⁰ Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Երեւան, 1985, Բան ԴԳ, տ. 50-53

²¹ Այն, տ. 57-59

²² Տե՛ս Այն, տ. 295-296:

²³ Այն, տ. 140-143

որդեգրում երկնաւոր Հօրը²⁴: Դրոշմով նաեւ մենք նախապատրաստում ենք յաւիտեանական կեանքի. մեզ վրայ հեղուած սուրբ Իւղը լուսաւորութեան աղբիւր է լինելու հանդերձեալում. «Քանզի զոր արինակ պատրոյգ, թացեալ ի ճարպում, ոչ երեւեցուցանէ ինչ նշոյլ, մինչեւ հուրը լուցեալ վառիցի, սոյնպէս եւ այս աւծութեան լուսոյ, առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն ջախաւորի»²⁵:

Դրոշմի արարողութեան զանազան ասանդութիւնները, որոնք գոյութիւն են ունեցել հին Եկեղեցում, իրենց պատմական օրինաչափ փոփոխութիւններով առկայ են Արեւելեան Եկեղեցիների ծէսում²⁶: Թերեւս ոչ մի արարողութեան շուրջ այնքան վեճեր չեն եղել, որքան՝ Դրոշմի: Արդեօ՞ք ջուրն ինքնաբարարար չէ՞ Սուրբ Հոգին ստանալու համար. ո՞րն է Սուրբ Հոգու ստացման նշանակը՝ Դրո՞շմը, թէ՞ ձեռնադրութիւնը²⁷. անհրաժեշտ է արդեօք, որ Մկրտութիւնը եւ Դրոշմը միասնաբար կատարուեն... Ահա՛ հարցադրումներից մի քանիսը, որոնք առաջ էին քաշուում հիմնականում բողոքական աստուածաբանութեան կողմից: Այս տեսական ճնշումը պատճառ է հանդիսացել անցանկալի ծիսական փոփոխութիւնների Արեւմուտքում: Կաթոլիկ Եկեղեցում տեղի է ունեցել ծիսական խզում՝ Մկրտութեան եւ Դրոշմի²⁸ արարողութիւնները բաժանուել են միմեանցից, իսկ բողոքականներն ուղղակի մերժում են Դրոշմի խորհուրդը: Սակայն Արեւելեան Եկեղեցիները, հարազատ մնալով

²⁴ Տե՛ս Այն, տ. 278-279:

²⁵ Այն, տ. 400-403

²⁶ Տե՛ս "Documents of the Baptismal..." բիզանդական ծէսի մասին՝ էջ 69-82, դպտական ծէսի մասին՝ էջ 91-98:

²⁷ Այս կապակցութեամբ շահեկան անդրադարձ ունի Օրմանեանը. «Առաջին խնդիրը այն կրնայ լինիլ, թէ ո՞րն է այս խորհուրդին էական նիւթը՝ ձեռաց դրութիւնը, թէ՛ իւղով օծումը: Չորս կարծիքներ կան այդ մասին. առաջինը այն է, որ ձեռք դնելը կը համարի էական. երկրորդը իւղով օծութիւնը կը համարի էական. երրորդը բաւական կը համարի երկուքն ալ՝ անխտիր եւ առանձնակի առնելով. իսկ չորրորդը էական կը համարէ երկուքն ալ՝ միասին առնուած՝ իբրեւ իրարու ամբողջացուցիչ խորհուրդին լրումի համար: ...մեր կարծիքը այն է, թէ օծումին մէջ է խորհուրդին իսկութիւնը: Իսկ եթէ ըսել ուզուի, թէ կարելի չէ կորսուած եւ խափանուած համարել ձեռաց դրութիւնը, որ սկիզբէն էական էր, այդպիսիները ձեռաց դրութիւնը կրնան տեսնել Այն իսկ օծումին մէջ՝ իբրեւ երկու նիւթերը խառնուած ըսելով մի միակ օծողական եւ հարդական գործողութեան մէջ» (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Յաղագս Դրոշմի», «Տեղիք աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1985, էջ 249):

²⁸ Այս խորհուրդը Կաթոլիկ Եկեղեցում անուանում է Հաստատութեան խորհուրդը:

դարերով ձեւաորում ծիսական ասանդութեանը, շեշտադրում են այս երկու խորհուրդների անհրաժեշտութիւնը փրկութեան համար եւ նրանց ծիսական անբաժանելիութիւնն ու փոխադարձ ներթափանցումածութիւնը:

Ինչ վերաբերում է կնիքների թուին եւ յաջորդականութեանը, ապա այստեղ նոյնպէս կան զանազան տարբերակներ. ամէն Եկեղեցի ունի իր յատուկ ասանդութիւնը: Հայկական ասանդութիւնը ձեւաորում է երախայութեան օժման եւ բուն Դրոշմի միաւորումով մէկ միասնական արարողութեան մէջ: Երախայութեան օժման հետքերի հարցը մեր Դրոշմի արարողութեան մէջ առանձին ուսումնասիրութեան կարիք է զգում. Տաթեւացու հետեւեալ արտայայտութիւնը շատ առաձգական է. «Եւ գիտելի է, զի ո՞ր ի ճակատն եւ ի սիրտն եւ ի թիկնամէջն օծանէ, այն Դրոշմ է. եւ որ զհինգ զգայութիւնսն օծանէ, այն ի խորհուրդ օժմանն է ծածկապէս: Եւ որ զայլ մասունս օծանէ, յայնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զՄկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից»²⁹: Չայլ մասունս ասուածը փաստօրէն ձեռքերի եւ ոտքերի մասին է, մինչ նրանց օծումը մեծ մասամբ կցուած է եղել զգայարանների օժմանը: Սրտի եւ մէջքի օծումներ կան նաեւ երախայութեան օծումի արարողութիւններում³⁰, ուստի այնքան էլ ճիշտ չէ դրանք վերագրել միայն Դրոշմին: Զգայարանների օծումը որոշ ասանդութիւններում երախայութեան օժման մաս է կազմում, սակայն նաեւ անբաժանելի մասն է Դրոշմի արարողութեան եւ լծողութեան է ճակատի օժմանը: Այս օծումների աստուածաբանական իմաստները հակիրճ բացայայտած են իրենց բանաձեւերում: Այս մասին ուշագրաւ բացատրութիւններ ունի Տաթեւացին, որոնք հիմնականում ճակատի գլխաւոր օժման մասին են. «Եւ նախ՝ ի ճակատն. այն է խորհուրդն, զի ճակատն է տեղի, ուր հասարակ զգայութիւնն ժողովի. ի յեկեղեցիս ճակատ եւ տեսողք են մարգարէքն եւ առաքեալքն: Նախ նոքա ընկալան զՀոգին Սուրբ, եւ ապա՝ այլ հաւատացեալք, որք անդամ են Քրիստոսի: Վասն որոյ նախ զճակատն դրոշմեմք եւ ապա՝ զհասարակ անդամսն: Դարձեալ՝ Քրիստոս Քահանայ էր եւ Թագաւոր. զկնիք քահանայութեան շնորհին ընդունիմք Մկրտութեամբն եւ զկնիք թագաւորութեանն՝ դրոշմելով ի ճակատն: Դարձեալ՝ Մկրտութեամբն ծնանիմք ի յեկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ եւ

29 «Գիրք հարցմանց...», էջ 593

30 Այս մասին տե՛ս "Documents of the Baptismal...". քիզանդական ծես՝ էջ 81, դպրական ծես՝ էջ 92, 95:

դրոշմելովն լինիմք զինուոր Քրիստոսի՝ ընդդէմ թշնամոյն սատանայի: Եւ նախ զճակատն դրոշմեմք, զի առանց երկիւղի զինեցին, եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեցուցրք: Դարձեալ՝ ճակատն ցուցանէ, թէ առանց ամօթոյ յայտնի եւ համարձակ պարտ է, որ ցուցանեն զդասանութիւն հաւատոյն առաջի մարդկան եւ ոչ ծածկել եւ թաքուցանել. «Զի սրտի հաւատալն արդարութիւն է, այլ բերանով խոստովանիլն փրկութիւն է հոգւոյ» [տե՛ս Հոմ. Ժ 10]: Եւ ապա յետ այնորիկ զբոլոր մարմինն օծանելն նշանակէ զբոլոր առաքնութիւնն ծածուկ ունիլ»³¹: «Օծանելն զգագաթն ցուցանէ, զի շնորհք Հոգւոյն տուեալ լինի ի հոգի եւ ի միտսն խոկալ զԱստուած»³²:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ

<i>Եւ յետ այսորիկ ասացէ.</i>	<i>Եւ սրանից յետոյ թող ասի.</i>
<i>«Խաղաղութիւն ընդ քեզ,</i>	<i>«Խաղաղութիւն քեզ, փրկուա՛ծդ.</i>
<i>փրկեա՛լդ Աստուծոյ»:</i>	<i>Աստուծոյ»:</i>
<i>Եւ մկրտեալն ասէ.</i>	<i>Եւ մկրտուածն ասում է.</i>
<i>«Ընդ հոգւոյդ քում»:</i>	<i>«[Եւ] քո հոգուն»:</i>

Դրոշմին անմիջապէս յաջորդում է **Խաղաղութեան ողջոյնը**, որը եկեղեցական պաշտամունքի բարձրագոյն արտայայտութիւններից մէկն է: Ի՞նչն է պատճառը, որ Եկեղեցին այսպիսի մեծ ուշադրութիւն է ցուցաբերում այս խորհրդական գործողութեան նկատմամբ, եւ նրանով ուղղակի ներծծուած են Եկեղեցու բոլոր ծէսերը... *Խաղաղութիւնը*, լինելով Ամենասուրբ Երրորդութեան Անձերի փոխարարեցութեան եւ Աստուծոյ բնութեան էական յատկանիշը³³, ունէր իր արարչական արտապատկերը: Այս արարչադիր շնորհը խախտուեց չարի *խոռովութեամբ* նախ իմանալի աշխարհում,

31 «Գիրք բարոգութեան, որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացոյն» (Ամառան), Կ. Պոլիս, 1741, էջ 151

32 «Գիրք բարոգութեան, որ կոչի Ջենոան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացոյն» (Ջենոան), Կ. Պոլիս, 1740, էջ 61

33 Այս խաղաղութիւնը ս. Ներսէս Ենքոմալից անուանում է *ժայրագոյն խաղաղութիւն*. «Առաջին ժայրագոյն խաղաղութիւն է բնաւորեալ առ Սուրբ Երրորդութիւնն՝ յաղագս Երից Անձնաւորութեանցն՝ մի կամք ունելով եւ իշխանութիւն, ուր ո՛չ խոռովութիւն եւ ո՛չ պատերազմ, այլ՝ միշտ խաղաղութիւն» («Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսէ Ենքոմալոյ», Կ. Պոլիս, 1825, էջ 97):

ասպա ներմուծուեց զգալի աշխարհ՝ մարդու կամքով... Մարդկային բնութիւնը կորցրեց աստուածապարգեւ խաղաղութիւնը՝ լցուելով խոռվութեամբ, անհասանելիութեամբ, շփոթով... Քրիստոսով խաղաղութիւն է հաստատում երկնքի եւ երկրի միջեւ, մարդը ոչ միայն վերստանում է կորցրած խաղաղութիւնը, այլեւ՝ գոյաբանօրէն ներածում աստուածային խաղաղութեան մէջ՝ մի բան, որը դեռեւս անհասանելի էր առաջին արարչութեան համար: Այս աշխարհը չունի Քրիստոսի խաղաղութիւնը, այն օտար է այս աշխարհի համար. այն Բանի մարդեղութեամբ էացած նոր արարչութեան ներքին անբացատրելի օրինաչափութիւնն է. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ...» [Յովհ. ԺԴ 27]: Այդ խաղաղութիւնը վեր է ամէն տեսակ մարդկային մտքից եւ իմացումից [տե՛ս Փիլիպ. Դ 7]:

Իրաքանչիւր աստուածային յատկանիշ, անհասանելի լինելով մարդկային բնութեան համար, մարդու համար հնարաւոր է դառնում շնորհով. Քրիստոսի խաղաղութիւնը բարձրագոյն շնորհ է, որին անմիջականօրէն հաղորդակցում ենք Սուրբ Հոգու տնօրինական ներկայութեամբ: Սուրբ Հոգով լի է Քրիստոսի Եկեղեցին, որը Քրիստոսի խաղաղութեան թագաւորութիւնն է այս աշխարհում: Այդ թագաւորութիւնը ծածուկ է այս աշխարհի համար, այդ խաղաղութիւնը խորթ է աշխարհիկ ցանկութիւնների կապանքներով ստրկացած հոգիների համար... Սակայն այդ խաղաղութիւնն ամէն օր բաշխում է Եկեղեցում՝ երկնային սիրոյ բաղձանքով եւ յափտեցական բարիքների փափագով համակելով մեր հոգիները: Նրանով հաստատուած՝ մենք ի զօրու ենք յաղթահարել ամէն տեսակ աստանայական խոռվութիւն ու փորձութիւն եւ հասնել Տիրոջ խաղաղութեան Նաւահանգիստը: Կատարեալ խաղաղութիւնը լինելու է Քրիստոսի Երկրորդ Գալուստով, երբ Ահեղ Դատաստանին խաղաղութեան որդիները պիտի զատուեն խոռվութեան որդիներից եւ ծառանգեն Աստուծոյ յափտեցական արքայութիւնը: Ահա թէ ինչու Եկեղեցում **Խաղաղութեան ողջոյնն** ամենակիրառական ծիսական տարրերից է. այդ ողջոյնով մեր սրտերը հաստատում են Քրիստոսի խաղաղութեամբ [տե՛ս Կող. Գ 15], մենք կարող ենք անվրդով եւ աներկիւղ մարտնչել աստանայական փորձութիւնների դէմ, մենք դառնում ենք աստուածային խաղաղութեան կրիչներ եւ բաշխողներ՝ Աստուծոյ խաղաղարար որդիներ՝ այս կեանքում վայելելով Աստուծոյ արքայութեան ամբողջութիւնը մեր ներքում եւ դառնալով նրա վկան այս աշխարհում:

Առաքելական թղթերում Աստուած յաճախ անուանում է խաղաղութեան Աստուած [տե՛ս Հոով. ԺԵ 33, Ա Կորնթ. ԺԴ 33, Բ Կորնթ. ԺԳ 11, Փիլիպ. Դ 9]: Այս առումով խաղաղութիւնը ոչ թէ սոսկ մասնաւոր մի շնորհ է, այլ աստուածային գոյութեան ամենաբնորոշիչ եզրն է: **Խաղաղութիւնն աստուածային խորհուրդ է**, այն մարդկութեանն է պարգեւում Բանի մարդեղութեամբ եւ անմիջական արգասիքն է Սուրբ Հոգու տնօրինական գործունէութեան [տե՛ս Հոով. Ը 6, Գաղատ. Ե 22]:

ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒՄ

Ապա զգեցուցանէ եւ ասէ զաղօթս զայս.

«Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ զգեցուցանես ծառայի Բում հանդերձ փրկութեան եւ պատմունան ուրախութեան եւ եղիր սաղաւարտ փրկութեան եւ պսակ շնորհաց ի զլուխ սորա, զէն անվթար ընդդէմ հակառակորդին: Վասն որոյ եւ մեր գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտեցից. ամէն»:

Ապա զգեստաւորում է եւ ասում է աղօթքը.

«Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ Բոծառային հագցնում ես փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմունան եւ դրեցիր սրա գլխին փրկութեան սաղաւարտ եւ շնորհների պսակ՝ [որպէս] անվթար զէնք ընդդէմ հակառակորդի: Որի համար գոհանալով փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտեցից. ամէն»:

Հնագոյն մաշտոցների զգեստաւորման արարողութիւնն ամբողջանում է քահանային ուղղուած պարզ ցուցումով եւ աղօթքով: Այս համառօտ ցուցումը յետագայ դարերի ձեռագրերում հետզհետէ բեռնաւորում է. **զգեցուցանէ** պարզ բարին աւելանում են՝ **եւ թագ կապէ** կամ **պսակէ** կամ **զգեցուցանէ սպիտակ հանդերձ** եւ այլն: Որոշ մաշտոցներում առկայ են չընդհանրացած աւելի ճոխ տարբերակներ: Զգեստաւորման արարողութիւնն իր ճոխացման զագաթանակէտին է հասնում Գեորգ Երզնկացու խմբագրութեան ձեռագրերում, ուր զգեստաւորումը թատերական տեսք է ստանում՝ զգես-

տի իրաքանչիւր կտորի վրայ յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Զգեստաւորման աղօթքը, բացառութեամբ մի քանի շրճհանրացած ձեռագրերի, գրեթէ նոյնաբար պահպանուած է բոլոր մաշտոցներում:

Զգեստաւորման արարողութիւնը Մկրտութեան ծեսի կարեւոր հանգուցներից է. արարածը վերստացել է իր արարչակերտ գեղեցկութիւնը, որ կորցրել էր մեղքի անկումով. «Իսկ յետ օծանելոյն զգեցուցանեն հանդերձս պայծառս, որ զլուսաւոր վարս եւ զպայծառ հաւատս եւ զանմեղութիւնն նշանակէ»³⁴, ինչպէս նաեւ՝ «զսուրբ եւ զճոր կեանս»³⁵: Սպիտակ³⁶ զգեստը խորհրդանշում է այն հոգեւոր իրողութիւնը, որ տեղի է ունեցել Մկրտութեամբ. նիւթական նշանակը յայտածում է արարչութեան փրկութեան, աստուածացման վերնիւթական խորհուրդը: Բանի մարդեղութեամբ մարդկային բնութիւնը հագնում է փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմունքան: Այդ զգեստը խորհրդանշում է Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ պարգետուած արարածի յարութիւնը եւ անապականութիւնը՝ ներածելով մեզ Քրիստոսի Երկրորդ Գալստեան խորհուրդի մէջ, երբ մարմինները պիտի յարութիւն առնեն եւ ճոր անապականացու գոյավիճակ ստանան: Այս իմաստով սպիտակ հանդերձը վախճանաբանական խորհուրդ է կրում. արդարներն այդպիսի զգեստով պիտի սպասեն Տիրոջ եւ մտնեն Նրա յաիտենական ժառանգութեան մէջ:

Ըստ ս. Դիոնէսիոս Արեոպագացու՝ Զգեստաւորումը կատարում է մինչեւ Դրոշմը՝ Մկրտութիւնից անմիջապէս յետոյ. «Եւ զնոյն հետայն լուսատեսակս հանդերձս արկանեն ի վերայ նուիրելոյն: Քանզի այրականի եւ աստուածատեսակաւ անախտութեամբ ի հակառակիցն եւ որով առ մի յարաձգութիւնն եւ հետեւումն, անզարդ զարդարի եւ անտեսակն տեսականայ՝ բոլորովիմբ լուսատեսակ կենաւք պայծառացեալ»³⁷: Այս հերթոյթը պահպանուած է քիզանդական ծէսում:

34 Ամառան, էջ 148

35 Տե՛ս Ձմեռան, էջ 61:

36 Սպիտակ գոյնի խորհրդաբանութեան մասին տե՛ս «Երգ Երգոց հանդերձ...», էջ 37-38, 92-93, 127:

37 ս. Դիոնէսիոս Արեոպագացի, "The Armenian...", «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69

ՄԵՂԱՆԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ենտ այտորիկ հանէ ի բեմն եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ՝ Մեղանոյն եւ երիցս անգամ համբորի յերեսին կողմանն. եւ ասէ զաղօթս.

«Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Քեզ խոնարհեցուցանեն հաւատացեալք զգլուխս իրեանց: Զգեա՛ զաներեւոյթ աչ Քո եւ օրհնեա՛ զսա: Զգործս ձեռաց սոցա յաջողեա՛: Որք ի կուսութեան են, ամբացո՛. եւ զամենեսեան զօրացո՛ ծուծկալութեամբ յամենայն աստուածպաշտութիւն: Պահեա՛ խաղաղութեամբ զտղայս զայս, սնո՛ եւ ա՛ծ ի չափ հասակի. պարսպեցո՛ զամենեսեան յիրաքանչիւր յարկս՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, ընդ Որում Քեզ Հօր փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն»:

Եւ հաղորդեցուցանէ սուրբ Խորհրդոյն:

Մկրտութեան արարողութիւնը բաղկացած է երեք հիմնական փուլերից. Զրի Մկրտութիւն, Դրոշմ եւ Հաղորդութիւն: Այս երեք խորհուրդների ծիսական միասնութիւնը վերստին ակնարկում է

Մրանից յետոյ բարձրացնում է բեմ եւ երկրպագեցնում սուրբ Մեղանի առջեւ. եւ երեք անգամ համբորոյ՛ երեք կողմերը: Եւ ասում է այս աղօթքը

«Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Քեզ եւ խոնարհեցնում հաւատացեալներն իրենց գլուխները: Մեկնի՛ր Քո աներեւոյթ աչը եւ օրհնի՛ր սրան: Մրա ձեռքի գործերն առաջնորդի՛ր: Ովքեր կուսութեան մէջ են, ամբացո՛ւ եւ բոլորին զօրացո՛ւ ծուծկալութեամբ աստուածպաշտութեան բոլոր [գործերում]: Խաղաղութեա՛մբ պահիր այս մանուկին, սնի՛ր եւ հասցո՛ւ չափահաս տարիքի, բոլորին պարսպի՛ր իրաքանչիւր յարկի տակ՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որի հետ Քե՛զ, Հա՛յր, փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից. ամէն»:

Եւ հաղորդեցնում է սուրբ Խորհուրդին:

Մկրտութեան զատկական իմաստն ու ծագումը³⁸ եռաստիճան կարգաւորումով ներկայացնելով մեր փրկութեան տնօրինական ընթացքը՝ **Քրիստոս - Սուրբ Հոգի - Եկեղեցի**: Քրիստոսով արարածն ի գօրու է դարձել կրելու Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին, գալով Քրիստոսի անունով, լցնում է արարչութիւնն աստուածային ներկայութեամբ եւ առաջնորդում դէպի Քրիստոսի հիմնած Եկեղեցու նոր եւ կատարեալ իրականութիւնը: Տիրոջ Արեամբ փրկագնուած նոր-ընծան լի է Սուրբ Հոգով. քահանան նրան բարձրացնում է խորան, այսինքն՝ հոգեւոր երկինք, սրբութիւն սրբոց՝ երկրպագելու Աստծուն՝ այդպիսով նախապատրաստելով ս. Հաղորդութեան: Հաղորդութիւնը եկեղեցական աստուածաշտութեան կիզակէտն է. հաղորդուելով Քրիստոսի փրկագործ Մարմնին եւ Արեանը՝ մարդը դառնում է Քրիստոսի խորհրդական Մարմնի՝ Եկեղեցու անդամ: Եւ ինչպէս փոքրիկ թթխմորն է խմորում ողջ զանգուածը, այնպէս էլ Տիրոջ Մարմինը եւ Արիւնը, ընդխառնուելով մարդկային բնութեան հետ, աստուածացնում է այն:

Այսպիսով՝ ա) Ջրի Մկրտութեամբ մենք խորհրդաբար մուտք ենք գործում Քրիստոսի մահուան մէջ, այսինքն՝ մենք մեռնում եւ յարութիւն ենք առնում Քրիստոսի հետ, դառնում նոր արարած եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ. բ) փրկագնուելով Քրիստոսի զոհաբերութեամբ՝ մենք պատրաստ ենք կրել Աստծուն. Դորշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգին. գ) Սուրբ Հոգու տնօրինական ներհաստատմամբ մենք առաջնորդում ենք դէպի Սուրբ Եկեղեցի՝ գոյաբանօրէն դառնալու Քրիստոսի խորհրդական Մարմնի անդամներ. ս. Հաղորդութիւնը լրումն է իւրաքանչիւր խորհուրդի, այն խորհուրդների խորհուրդն է, որովհետեւ նրանով է տեղի ունենում կատարեալ եկեղեցացումը եւ աստուածացումը, որն արարածի փրկագործման վերջնական նպատակն է: Այս է պատճառը, որ Հին Եկեղեցում իւրաքանչիւր խորհրդակատարութիւն ծիսապէս լծորդուած է եղել Հաղորդութեան հետ: Յետագայ դարերում եկեղեցական կարգերի հետզհետէ ածանցման հետեւանքով տեղի են ունեցել ծիսական խզումներ. Հաղորդութիւնը, որը իւրաքանչիւր խորհուրդի անհրաժեշտ եզրափակումն է, դուրս է մղուել խորհրդակատարութեան կառոյցից: Այսօր այդպէս է, օրինակ, Պսակի Խորհուրդի դէպքում:

Մենք պէտք է նկատի ունենանք, որ Տիրոջ Մարմնի եւ Արեան Հաղորդութիւնը Եկեղեցու սիրտն է, այն պէտք ունենայ բնական

ներթափանցուածութիւնը իւրաքանչիւր խորհուրդի մէջ, քանզի Մարմնաւորուած Բանի զոհաբերութեան կենտրոնական գործողութիւնն է եւ ոչ միայն ծիսական, այլեւ առհասարակ եկեղեցական կեանքի շնորհական եւ խորհրդական աղբիւրն է: Մուտք դէպի Եկեղեցի, մուտք դէպի Քրիստոսի թագաւորութիւն՝ նշանակում է մուտք դէպի հաղորդական կեանք, մուտք դէպի շարունակական աստուածացման վերընթաց: Հաղորդութեամբ մենք միաւորում ենք մի մարմնի մէջ, մի ենք դառնում ի Քրիստոս Յիսուս: Հետեւաբար, հէնց Տիրոջ Մարմնի եւ Արեան բաշխման միջոցով է կայանում Եկեղեցու հաւաքական միութիւնը եւ եկեղեցացումը, եւ իւրաքանչիւր ծիսակարգ, որպէս Եկեղեցու սրբազան գործողութիւն իր փրկաբանական նշանակութեամբ, անհրաժեշտաբար պէտք է ունենայ հաղորդական ուղղորդուածութիւն:

ԱՐՁԱԿՈՒՄ

Եւ յղարկեն միմչեւ ի դուռն եկեղեցւոյն՝ սաղմոսելով.

«Երանի՛ որում թողութիւն եղեւ մեղաց» [Սաղմ. ԼԱ 1]:

Քարոզէ սարկաւազն.

«Վասն ի վերուստ օգնականութեան եւ փրկութեան եւ հաստատութեան նորակնքիս մերոյ զՏէր աղաչեացուք»:

Գ «Տէ՛ր, ողորմեա՛»:

Եւ սաէ զաղօթս զայս.

«Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաիտենական, որ աճեցուցանես եւ լցուցանես սուրբ զԵկեղեցի Քո լուսով հաւատոյ անհամար փրկելոց՝ ի ձեռն նշմարիտ աստուածածանօթութեան Քրիստոսի Քո, զորս հոգեւորական վերածնութեամբ արծանի արարեր որդեգրութեան Քեզ՝ հաղորդելով արծանաւորութեամբ Մարմնոյ եւ

Եւ ողեկցում են միմչեւ եկեղեցու դուռը՝ սաղմոսելով.

«Երանի՛ [նրան], ում մեղքերը ներուեցին...» [Սաղմ. ԼԱ 1]:

Սարկաւագը քարոզում է.

«Մեր այս նորակնունքին ի վերուստ օգնականութեան, փրկութեան եւ հաստատութեան համար աղաչեմք Տիրոջը»:

Երեք «Տէ՛ր, ողորմի՛ր»:

«Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաիտենական, որ աճեցնում եւ լցնում եւ Քո սուրբ Եկեղեցին Քո Քրիստոսի նշմարիտ աստուածածանօթութեան միջոցով անհամար փրկուածների հաւատ լոյսով, որոնց հոգեւորական վերածնութեամբ արծանացող Քեզ որդեգրութեան՝ արծանաւորութեամբ հաղորդելով Քո Միածնի Մարմնին եւ Արեանը:

³⁸ Տե՛ս սոյն յօդուածի սկիզբը նախորդ հատորում, էջ 64-65:

Արեան Միածնի Քո: Եւ արդ, Տէ՛ր, պահեա՛ զսա սրբութեամբ Հոգւոյդ Արքոյ՝ առնել անարատութեամբ զկամս Քո եւ անմեղութեամբ ժամանել ի կեանսդ յաիտեանից: Եւ զամենեսեան զմեզ՝ զմերձաւորքս, օրհնեա՛ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից. ամէն»:

Եւ, ողջունեալք ի ժողովրդոցն, յուղարկին ի տունս իւրեանց: Եւ ութ օր յեկեղեցւոցն կացցէ, սպիտակազգեստ լիցի եւ զգլուխն ծածկեացէ սպիտակ փակեղամքք: Զգոյշ կացցէ՝ աղօթից եկեղեցւոյն պարսպելով յամենայն ժամ, հաղորդուելով Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի:

Հաղորդութիւնից յետոյ սաղմոսելով գնում են դէպի եկեղեցու դուռը, եւ Մկրտութեան արարողութիւնը եզրափակում է քարոզով եւ աղօթքով, որով քահանան խնդրում է Սուրբ Հոգու պահպանութիւնը՝ այս կեանքում անարատ կենցաղավարելու եւ անմեղութեամբ հասնելու յաիտեանական կեանքին:

Եզրափակիչ աղօթքին յաջորդում է յոյժ ուշագրաւ մի խրատ, որն արտամղուած է այսօրուայ ծիսական իրականութիւնից, սակայն քացատիկ նշանակութիւն ունի եկեղեցական կեանքի համար, եւ նրան պատշաճում է պնդածեշտ ուշադրութիւն: Նոր մկրտուածն ութ օր³⁹ պէտք է սպիտակ զգեստներով, այսինքն՝ յարութիւնը

³⁹ Ութն, ըստ Եկեղեցու հայրերի, Քրիստոսի թիւն է կամ Յարութեան թիւը: Եօթը խորհրդանշում է հինկարակարանեան եւ առհասարակ երկրաւոր կամ արարչական կատարելութիւնները, որոնք մաթեմատիկական օրջկտներ են, այսինքն՝ հասանելի են յաջողականութիւնների շնորհիւ: Քրիստոսի քերած փրկութիւնը դուրս է այս աշխարհի կատարելութիւններից, ուստի այն դուրս է եօթնականների փակ պարբերութիւններից: Քրիստոս քերած նոր կեանք, նոր օրինաչափութիւն, նոր ժամանակ, որն անուանում է Առաջին Օր կամ

Եւ արդ, Տէ՛ր, պահի՛ր սրան Սուրբ Հոգուդ սրբութեամբ՝ անարատութեամբ կատարելու Քո կամքը եւ անմեղութեամբ հասնելու յաիտեանական կեանքիդ: Եւ բոլոր մեզ մերձաւորներս օրհնի՛ր մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից. ամէն»:

Եւ, ողջոյն առնելով ժողովրդից, ուղեկցում են իրենց տները: Եւ ութ օր թող եկեղեցւում մնայ, սպիտակազգեստ լինի եւ գլուխը ծածկի սպիտակ փակեղով: Զգոյշ լինի եկեղեցու աղօթքներում՝ ամէն ժամ պարսպելով, հաղորդուելով Քրիստոսի Մարմնին եւ Արեանը:

խորհրդանշող զգեստներով լինի եկեղեցւում՝ ութ օր ապրելով Յարութեան խորհուրդով: Դա նրա կեանքի առաջին կատարեալ փուլն է կամ յաիտեանը (էոն), որով նա նախապատրաստում է քրիստոնէական կեանքի՝ Քրիստոսի Յարութեամբ ապրելու եւ նրա վկան լինելու այս աշխարհում: Սպիտակ փակեղով գլխի ծածկուածութիւնն, ըստ երեւոյթին, հոգեւոր գոյությունն համար է, ինչն ակնարկում է խրատի շարունակութիւնը: Այդ ութ օրերը նրա համար աղօթքի եւ հոգեւոր վարժանքի օրեր են, նոր մկրտուածը ճգնաւորական կենցաղավարութեամբ եւ կրօնական պարկեշտութեամբ պէտք է անցկացնի այդ ժամանակը՝ վերապրելու իր հետ կատարուածը, սովորելու իր նոր գոյավիճակին. Մկրտութեան մեծ խորհուրդով ստացած շնորհները պէտք է ամրացունեն հոգեւոր հմտութեամբ եւ շրջափայլեացութեամբ:

Հին Եկեղեցւում այս օրերի ընթացքում նոր մկրտուածին ներածում էին հաղորդական կեանքի մէջ, որովհետեւ մինչեւ Մկրտութիւնը երախաները կամ Մկրտութեան նախապատրաստողները չգիտէին, թէ ինչ է կատարում Պատարագի վերջաւորութեանը, ս. Հաղորդութիւնը գաղտնիք էր նրանց համար: Խրատի վերջաւորութիւնը՝ *պարսպելով յամենայն ժամ, հաղորդելով Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի*, հենց այդ մասին է: Ուրեմն, Մկրտութեան ութօրեքը եկեղեցացման՝ Եկեղեցու խորհրդական կեանքի մէջ հաստատման համար է. Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, որ բաշխում է Եկեղեցւում, պէտք է դառնայ քրիստոնէայի հոգեւոր կեանքի աղբիւրը եւ Աստուծոյ հետ շնորհական խորհրդական փոխարարբերութեան կիզակէտը:

Այսօր, երբ եկեղեցական կեանքն աննախադէպ աղաւաղման է հասել, երբ մկրտուածի քրիստոնէական կեանքի կազմակերպման հարցը մատուած է կատարեալ անուշադրութեան, ցանկալի է անդրադառնալ անցեալի այս գեղեցիկ աւանդութեանը եւ իրագոր-

Ութերորդ Օր: Սակայն այստեղ մէկը եւ ութը ոչ թէ թուային, այլ խորհրդական եւ անդրաճական օրինաչափութիւններ են, նրանք դուրս են յաջողականութիւնների իշխանութիւնից եւ միաժամանակ նոր կեանք են հաղորդում եօթնականներին: Ութը յարութիւն առած եօթն է. ութնակը կատարեալ հոգեւոր պարբերութիւն կամ յաիտեան (էոն) է: Նաեւ՝ Ութերորդ Օրը պիտի գայ Տէրը՝ դատելու կենդանիներին եւ մեռելներին՝ այդ օրն անուանում է Վերջին Օր կամ Տիրոջ Օր կամ Դատաստանի Օր: Այսպիսով, ութը միաժամանակ խորհրդանշում է եւ՝ հոգեւոր յարութիւնը (Քրիստոսի Առաջին Գալուստ)՝ անուանուելով առաջին, եւ՝ մարմինների յարութիւնը (Մերկորդ Գալուստ)՝ անուանուելով վերջին: Քրիստոնէաները գտնում են Ութերորդ Օրուայ մէջ. նրանք, արժանացած լինելով Քրիստոսի քերած հոգեւոր յարութեանը, նաեւ մուտք են գործել Մերկորդ Գալուստեան մէջ (վախճանարանական սպասում):

ծել այն մեր կեանքում, եթէ մենք կամենում ենք մեր ծիսական կեանքին փրկարանական լիցք հաղորդել: Ծէսի բուն նպատակը պէտք է լինի մարդուն քրիստոնեայ դարձնելը. լինել քրիստոնեայ՝ նշանակում է Քրիստոսի քերած կեանքով ապրել, մշտապես առնչուել Տիրոջ հետ, որի խորհրդական աղբիւրը ս. Հաղորդութիւնն է:

ՅԱԻՆՆՈՒԱԾ

ՈՒԹ ՕՐ ՅԵՏՈՅ

Եւ յետ ութ աւոր վերացուցանէ քահանայն զպսակն՝ ասելով զաղօթս զայս ի վերայ նորս.

«Որք մկրտեցան եւ լուսաւորեցան, եւ ետուր զսրբութիւն Քո, Տէ՛ր, տո՛ւր եւ հաստատուն կալ ի սրբութեան Քում՝ պայծառացուցանելով ի լոյս Աստուածութեան Քո: Տէ՛ր, պահեա՛ հաստատութեամբ ի շնորհս, զորս ետուր: Հեռացո՛ ի մոլորութենէ թշնամոյն եւ ի պատրանաց նորս եւ ի գործոց անօրէնութեան, զի լուսով գիտութեամբ գնացել ի ճանապարհս Քո եւ ուղիղ վարուք հասցէ ի խոստացեալ հանգիստ Քո: Զհրեշտակ խաղաղութեան Քո առաքեա՛, որ եկեալ պահեսցէ զսա: Եւ ամենեքեան արժանի լիցուք յուսով Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Հօր, միանգամայն եւ Հոգւոյ Սրբոյ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ ութ օր յետոյ քահանայն վերցնում է պսակը՝ այս աղօթքն ասելով նրա վրայ.

«Ովքեր մկրտուեցին եւ լուսաւորուեցին, եւ [նրանց] տուեցիր Քո սրբութիւնը, Տէ՛ր, տո՛ւր նաեւ հաստատուն մնալ Քո սրբութեան մէջ՝ պայծառացնելով Քո Աստուածութեան լոյսով: Տէ՛ր, հաստատո՛ւն պահիր այն շնորհների մէջ, որ տուեցիր [նրան]: Հեռացրո՛ւ թշնամու մոլորութիւնից, նրա պատրանքներից եւ անօրէն գործերից, որպէսզի լոյսով [եւ] գիտութեամբ գնայ Քո ճանապարհներով եւ ուղիղ վարքով հասնի Քո խոստացած հանգիստը: Առաքի՛ր Քո խաղաղութեան հրեշտակին, որ գալով պահի սրան: Եւ բոլորս արժանի լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յայտնութեան լոյսով, Որի հետ Հօրը, միածամանակ եւ՛ Սուրբ Հոգուն, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Այս արարողութիւնը թէպէտ առանձին ծիսական միաւոր է, սակայն բնական շարունակութիւնն է Մկրտութեան արարողութեան եւ ձեռագրերում անմիջապէս յաջորդում է նրան: Ութ օր յետոյ քահանայն վերցնում է պսակը (որոշ յետագայ ձեռագրերում՝ նարսուղ կամ թագը)՝ բնականաբար *Միտոնից հանելով* կամ դրոշմուած տեղերի վրայից լուսնալով Միտոնը: Ութ օր յետոյ նորակնուցը պէտք է մտնի այս աշխարհ՝ որպէս կայացած, եկեղեցացած քրիստոնեայ, որպէս Քրիստոսի վկայ... Մէկ կատարեալ յաւիտենականութիւն՝ ութ օր ապրելով Յարութեան կեանքով, նա պէտք է մտնի աշխարհ որպէս նոր արարած, որը կրում է Քրիստոսի Յարութեան լոյսը: Այս աշխարհը չի ճանաչելու նրան, այս աշխարհում նա լինելու է նեղ եւ անձուկ ճանապարհով Տիրոջն ընդառաջ ընթացող անցուոր եւ օտարական. նրան սպասում են փորձութիւններ եւ մեծ պայքար ընդդիմամարտ ուժերի հետ: Խաւարի կրիչները ձգտելու են ունայնացնել Յարութեան լոյսը, սակայն նրանց խարդաւանքներն անզօր պիտի լինեն Եկեղեցու *ներսում* (ոչ թէ տարածքային, այլ՝ հոգեւոր) գտնուողների համար: Եկեղեցին, հաստատուած լինելով այս աշխարհում, այս աշխարհինը չէ. նրա *ներսը դուրս է այս աշխարհից*... Մկրտութեամբ մարդը մուտք է գործել Եկեղեցու խորհրդական *ներսը*, դարձել Անմահ Գառի զոհաբերութեամբ հաստատուած յաւիտենական թագաւորութեան ժառանգորդ. «Եւ շնորհօք թագաւորեցին հաւատովք, որ ի Սուրբ Երրորդութիւնն. եւ գտեալք զթողութիւն լուսաւոր Աւագանան եւ Մարմնով եւ Արեամբ Քրիստոսի, ընդունելութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ աղբիւրաբար բաշխեաց զշնորհս յարարածս: Զի, արդարացեալք ի հաւատոց անտի, զխաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ հաւատչեայ ժառանգութիւնն. զի նորոգեաց ի փառս անեղծութեան կամաւոր խաչելութեամբն Իրով եւ մահուամբ ելոյծ զմահ եւ Յարութեամբն Իրով զմեզ ի մեռելութենէ մեղաց յարոյց, զի մեք ի նորոգումն կենաց կացցուք եւ մնացուք յուսով Յարութեանն ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»⁴⁰:

Սակայն Քրիստոսի ժառանգութեան մէջ մնալու համար մարդուց պահանջուում են աստուածպաշտական ճիգեր՝ մշտապէս արտորոշելու չարի հրապոյրները եւ բացազատուելու աստուածային շնորհի առջեւ: Այս հոգեւոր ներընթացը հունարոյն է երախայու-

⁴⁰ «Սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Ս. Էջմիածին, 1894, ժառ Բ, տ. 490-502

թեան կարգով, խորհրդակցանքել Մկրտութեամբ, ապա եկեղեցա-
ցել ութօրէքի ներկրթութեամբ... Մկրտութեամբ մարդը ոչ միայն
ստացել է աստուածային շնորհներ, այլեւ՝ ձեռք բերել անհրաժեշտ
ներանձնական հմտութիւն՝ այդ շնորհները պահելու համար. նա
էապէս հաստատուել է հոգեւոր կեանքի ամրողչութեան մէջ,
որպէսզի անկորուստ ընթացքով հասնի փրկութեան նաւահանգիստ
եւ մասնակից դառնայ Աստուծոյ սուրբերի անեզրական ուրախու-
թեանն ի Քրիստոս Յիսուս:

Պարոյր Մուրադեան

ԴԱԻԱՆԱԿԱՆ
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԱԶԳԱՄԻՋԵԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Որք միանգամ ի Քրիստոս մկրտե-
ցարուք, գՔրիստոս գգեցնալ էք. չիք
խտիր ո՛չ հրէի եւ ո՛չ հնթանոսի, ո՛չ
ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ
ո՛չ իգի, զի ամենքեան դուք մի էք ի
Քրիստոս Յիսուս» [Գաղատ. Գ 27-
28]:

Տարիներ առաջ Հայագիտութեան անխոնջ վաստակաւոր Յակոբ
Անասեանը Մատենադարանի ձեռագրերից մէկում (N8356, ընդօրի-
նակուած հեղինակային ինքնագրից 1322թ. Կիլիկիայի Կամրիկ
անապատում) ի յայտ բերեց, հրատարակեց եւ վերահրատարակեց
Վարդան Այգեկցու գրչին պատկանող եւ մատենագրութեան
պատմութեան համար առանձնակի կարեւորութիւն ներկայացնող մի
թուղթ՝ «Վասն շատահալ քննողացն յանդիմանութիւն»¹: «Շատա-
հալ քննողք» նորահնար բնորոշումը վերաբերում է Ասորիքի Դուք
գաւառի Հայ, ասորի եւ յոյն այն հաւատացեալներին, որոնք բռնուած
են ազգային-դաւանական անհանդուրժողականութեան մոլուցքով,
«քանզի Հայն ասէ, թէ՛ ես եմ լաւ եւ ընտիր քրիստոնեայ, եւ Հայհոյէ
անմտութեամբ զՀռոմն եւ զԱսորին: Եւ Հռոմն ասէ Հպարտու-
թեամբ, թէ՛ ես եմ ազգ առաջին, սուրբ եւ գիտնական եւ ուղիղ
հաւատ, եւ Հայն եւ Ասորին ոչ են ի կարգս քրիստոնէութեան եւ ոչ
ունին առ Աստուած բաժին, եւ այսպէս նախատէ եւ Հայհոյէ: Իսկ
Ասորին ասէ ծածուկ նենգութեամբ եւ կեղծաւորութեամբ, թէ՛ ես եմ
ընտիր քրիստոնեայ եւ ունիմ անարատ հաւատ եւ սուրբ կարգ, եւ
Հռոմն եւ Հայն լցեալ են չար հերձուածաւք, աստար են Աստուծոյ եւ
զՅիսուս Քրիստոս ոչ ճանաչեն եւ դժոխոց են ժառանգք»: Եւ մինչ



1 Յ. Անասեան, «Վարդան Այգեկցիցն իր նորայայտ երկերի լոյսի տակ»,
«Բազմավէպ», 1968, էջ 273-277: Նոյնի՝ «Վարդան Այգեկցիցն՝ որպէս
համերաշխութեան գաղափարախօս», Ս. Էջմիածին, 1969, Է-Ը, էջ 56-58: Նոր
վերահրատարակութիւնը տե՛ս դոկտ. Յ. Ս. Անասեան, «Մանր երկեր», Լոս Անջելէս,
1987, էջ 217-220:

ամէն մէկը զբաղուած է իր հաւատն ու կարգը գովելով՝ «գայ խալի-
ֆայն ի Բաբելոնէ, եւ խատին՝ ի Հալպայ, եւ նախատնն զձեզ... եւ
ասեն, թէ՛ դուք՝ ամենայն քրիստոնեայքդ, աւտար էք յԱստուծոյ եւ
ոչ ճանաչէք զՆա...»:

Այգեկցիին յանդիմանելով խրատում է եւ պարսաւելով յորդորում,
թէ՛ դուք բոլորդ՝ հայ, ասորի, յոյն, «ի մի Քրիստոս կոչեցայք եւ ի
մի Աւագան մկրտեցայք, ի մի Հայր եւ ի մի Սուրբ Հոգի լուսաւորե-
ցայք եւ դարձեալ նախատէք զիրար եւ հայհոյէք...»¹: «Ընդէ՛ր ոչ
հայիք ի տունն Մսիմնաց, թէ քանի ազգ են բաժանեալ լեզուաւք եւ
կան խաղաղութեամբ եւ սիրով առ իրար՝ ի մի սահման եւ ի կարգ, զոր
առաջնորդն իւրեանց՝ Մահմէտ, կարգաւորեաց եւ սահմանեաց
զնոսա»:

Իրատես Այգեկցու դատողութեան հիմքում ժամանակի սթափ
զգացողութիւնն է դրուած... «Ո՛վ յիմարք եւ անմիտք, չգիտէ՞ք, որ
այս չէ՞ ժամ զհաւատքս քննել կամ հաստատել... այժմ որ ունի, այն է,
զինչ որ ունի»: Ուրեմն, աւելորդ է վիճարկել, թէ ո՞վ աւելի առաջ
«ծանեաց զՔրիստոս», ո՞վ է անարատ հաւատով եւ կարգով. «Ապա
աղաչեմ զձեզ, որդեա՛կք, ամէն ազգ կալէք զիւր Եկեղեցւոյն սահման
եւ սովորութիւնն եւ զկարգն՝ զպատարագելն, զտաւանելն, զպահքն,
զմկրտելն, եւ առ իրար սիրով կեցիք եւ խաղաղութեամբ, որ Քրիստոս
հանգչի առ ձեզ, եւ վասն կարգաց Եկեղեցւոյ մի՛ քննէք եւ բանավէճ
լինիք եւ անհանգիստք»:

Խռովարարները՝ հայ, յոյն, թէ՛ ասորի, Այգեկցու համոզմամբ,
սատանայի բերանով են խօսում, մանաւանդ որ «սատանայ բնաւ ոչ
եթող Եկեղեցի եւ ազգ եւ մարդ անարատ եւ անվնաս, այլ դեղեալ
ապականեաց զամենայն ազգ եւ զԵկեղեցի», «եւ թէ՛ կայ իրք մի չար
յԵկեղեցիս քրիստոնէից, զայն չհամարի նոցա ի մեզս, զի մարդիկ են
տկարամիտք, եւ սատանայ խարող է եւ նենգաւոր...»:

Այգեկցիին եւս կուզենար, որ՝ «ամենայն ազգ քրիստոնեայ թող
յիւր ազգէն առնեն խնամութիւն, որ չխառնակի մի ազգն ի միւսն, եւ
յիւր ազգն մկրտի եւ հաղորդի. եւ այս բարի էր»: Սակայն այլ է
իրականութիւնը. «Եւ ահա, ի Կեսարիա եւ ի Մելիտոնի, յՈւռհա եւ
յԱնտիոք եւ ի մեր աշխարհս կիրիկեցոց անխտիր կու խնամենան եւ
կու առնուն հարսն զգոտեբս միմեանց Ասորին եւ Հայն եւ Հռոմոն»,

¹ Այստեղ ձեռագրի 153բ եւ 154ա էջերի արանքից մէկ թերթ ընկած է, ուստի
բնակագոճ շարադրագոճ ընդհատում է, որ եւ նկատուած է հրատարակչի կողմից:

ուստի մի՛ յանդիմանէք ու վերամկրտէք իրար, այլ «պաշտեցէ՛ք
զամենայն ազգ զիւր կարգն եւ զսահմանն եւ զիւր Եկեղեցին»:

Այս ամէնը, յիրաւի, ազգամիջեան համերաշխութեան գաղափարի
դրսեւորման միջնադարեան մատնացուցելի նմուշն է եւ Կիրիկեան
Հայաստանում նախորդ սերնդի մեծերի՝ Ենորհալու, Լամբրոնացու,
Գրիգոր Տղայի մտորումների եւ համոզմունքների ակնյայտ զարգա-
ցում: Խօսքն աւետարանական համերաշխութեան ու մարդկայնու-
թեան մասին չէ [Գաղատ. Գ 27-28, հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 13], այլ՝
բազմազգի եւ այլադէն պատմական միջավայրում գաղափարական
դիրքորոշման:

Այգեկցու սոյն թղթի, ինչպէս նաեւ «Գիրք Հաստատութեան եւ
արմատ հաւատոյ» ժողովածուի յայտնաբերումով Յ. Անասեանը
Վարդան Այգեկցու ժառանգութեան ուսումնասիրութեան մարզում Ն.
Մառից յետոյ մի նոր շրջափուլ բաց արեց եւ մէկ անգամ եւս ապա-
ցուցեց, որ հայոց մատենագրութեան ուսումնասիրութիւնը համա-
մարդկային քաղաքակրթութեան արժէք ներկայացնող նոր էջեր կա-
րող է բացայայտել:

Յ. Անասեանն այնուամենայնիւ իր առջեւ խնդիր չունէր պարզել,
թէ 1210թ. յետոյ (բայց՝ մինչեւ 1215թ.) Այգեկցու գրած այս թուղթն
իր արծարծած հարցերով եւ աշխարհայեցութեամբ զուտ կիրիկեան
միջավայրի՞ ծնունդ է, թէ՞ համերաշխութեան այդ վարդապետու-
թիւնը համակել էր նաեւ Արեւելեան Հայաստանի երեւելի մատենա-
գիրներին: Ասել է թէ՛ անհրաժեշտ էր պարզել. սա մի մասնաւոր
դէպք է՝ պայմանաւորուած Կիրիկեան Հայաստանի եւ Ասորիքի տար-
ազգի համայնքների միջեւ ստեղծուած դաւանական կացութեամբ,
թէ՞՝ աշխարհայեցքային նոր դիրքորոշում առհասարակ: Առիթը
ներկայացել էր՝ հաստատելու կամ մերժելու դարասկզբին Ն. Ադոնցի
առաջադրած այն դրոյթը, ըստ որի՝ ԺԲ-ԺԳ դարերի հայոց եկեղե-
ցական գրականութիւնն իր հարստութեամբ մասամբ պարտական է
«այն կուսակցական քաջքրոճկներին ու ընդհարումներին, որոնք
տեղի էին ունենում. հայոց կրթականութեան երկու կենտրոնների
միջեւ», այսինքն՝ կիրիկեան եւ հիւսիսհայաստանեան: Ըստ Ն. Ադոն-
ցի զնահատութեան՝ «միարարութեան միտքը համակրութիւն էր
գտնում Եկեղեցու այն ներկայացուցիչների քով, որոնք դաստիա-
րակուել էին կիրիկեան նոր ոլորտում՝ աւելցուն արեւմտեան ոգով»,
մինչդեռ «հիւսիսային կողմանց» հայոց վարդապետները «վարդա-
պետութեան հարցում բռնել էին ծայրայեղական դիրք՝ կիրիկեցիների
լիբերալիզմին հակադրելով Սանահնի դպրոցի նուիրուածութիւնն

անցեալի պատգամներին»¹: Այս բնութագրութեան ազդեցութեամբ Հայ մատենագրութեան կիրիկեան լիբրալ թեւին Հակադրուեց «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» պահպանողական թեւը², որ ներկայացնում են Գրիգոր Տուտեորդին, Դաւիթ Քոբայրեցին, Մխիթար Գոչը եւ այլք: Վարդան Այգեկցու նորայայտ թուղթը լիովին արգարացնում է «լիբրալիզմ» որակումը՝ նշանակալիորէն ընդլայնելով այդ եզրի դրական ընդգծումը, բայց, ինչպէս կտեսնենք ստորեւ, ամենեւին չի ընդգծում միւս թեւի «պահպանողականութիւնը»:

Վարդան Այգեկցու անմիջական գաղափարական նախորդը նրա իսկ աւագ ժամանակակից Ներսէս Լամբրոնացին է: Տարսուի երիտասարդ եպիսկոպոսի 1177 կամ 1179թ. արտասանած «Ատենաբանութիւն վասն միութեան Եկեղեցւոյ»³ ճառը Հայոց քաղաքական, մշակութային եւ դաւանական պատմութեան առաւել նշանակալի ձեռքբերումներից է՝ արժանի մասնաւոր ուշադրութեան մեզ հետաքրքրող՝ ազգամիջեան Համերաշխութեան եւ դաւանական հանդուրժողականութեան կտրուածքով եւ⁴: 32 եպիսկոպոսների ներկայութեամբ ասուած այդ ճառի շատ դրոյթներ չեն տեղաւորուում միջնադարեան դպրութեան՝ դարերով մշակուած ու որդեգրուած պատկերացումների շրջանակներում: Ահաւասիկ դրանց մի քանի նմուշ.

1) «Մի գլխոյն է անդամ Սպանիա եւ Արեւելք, Յոյնք եւ բարբարոսք, Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Եգիպտացիք: Ի նա են յարեալ ամենեքեան հոգևով եւ զնա զգեցեալք հաւատովք» (էջ 35⁵):

2) «Նա թէ եւ առ հաւատոյ բան լսեն հաւանական խոստովանութիւն յայլ ազգաց, ոչ կամին ի սէրն խոնարհել, այլ բուռն հարկանեն

զայլ կարծեաց, թէ նոքա զմերս ատեն ազգ, վասն այսորիկ եւ ի մէնջ ատեսցին. կոփեն եւ կեղեքեն եւ հայհոյեն զմեզ, յաղազս այսորիկ եւ ի մէնջ հայհոյեսցին: Ո՛վ մտացի դու, եւ ո՛ւր ուսար վիրօք զվեր բժշկել...» (էջ 43):

3) «Հայն ի Հոռովմին խորշի հաղորդել յօրհնեալ պատարագն, եւ Հոռոմն՝ ի Հայոյն: Եւ զհաց, զոր մի աղօթիւք միով օրհնութեամբ, մի Քրիստոս անուամբ անուանեմք, միոյ Հոգւոյ շնորհիւ իւրաքանչիւրքն կատարեցաք, յետ այնորիկ անգոսնեմք զիրեարց» (էջ 51):

4) «Տեսցուք, թէ հատուածեալն ի մէնջ ազգ Վրաց, ի նոսա յեցեալ, որքան օրըստօրէ ի Քրիստոս պայծառանան. արդ, գոնեա անագան եւ մեք զնոյն խոկասցուք» (էջ 65):

5) «Ընէ՛ր այսչափ գալս խոտեալ՝ խորշիմք եւ խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս: Մինչ եւ յե՛րբ անդամքս լեզուօք զիրեարս խոցոտեմք՝ թուհիւք իժին լցեալ զբերանս, այսքան երկար ժամանակս անխնայ զմիմեանս հարաք» (էջ 65):

6) «Հայն միշտ աղաղակէ՛ Աստուած իմ, գոհանամ զՔէն, որ չարարեր զիս Հոռոմ, եւ Հոռոմն զնոյն բան երկրորդէ, թէ՛ որ ոչ արարեր զիս Հայ: Ո՛վ տմարդութեանս եւ անմիտ յանդգնութեանս...» (էջ 66):

7) «Անմիտ, կամք չար մտացան ոմանք ի մարդկանէ, եւ ոչ բնութիւն ազգին է չար՝ Հոռոմին կամ Հայոյն կամ այլոց սեռից, զի եւ ի Պարսից բազումք հաճոյացան Աստուծոյ եւ ընտրին: Արդ, քո այնքան կուրացեալ յատելութենէն, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլեւ զազգն ողջոյն բամբասես եւ ի նմանէ գոհութեամբ հրաժարես» (էջ 66):

8) «Արդ, այժմ չէ օգուտ ի միմեանց հրաժարելն կամ ընդ անհնազանդն ոչ հաղորդելն...» (էջ 67):

Ի՞նչ է առաջարկում Լամբրոնացին՝ «համաշուռնչ լինել, միախորհուրդ» (էջ 53), պահել սեփական աւանդութիւնը եւ «ընդունիլ զնորայն»։ «այդ է գովելի կարծիք» (էջ 60):

Որ այս դրոյթները յաւուր պատշաճի ձեւակերպումներ չեն, այլ՝ համոզմունք ու դիրքորոշում, կարելի է հաւաստիանալ նրանց մեծ մասի կրկնութեամբ նոյն Լամբրոնացու 1194-1195թթ. միջոցին հեղինակած «Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր ինքնակալու-

1 Н. Адонц, "Армянская литература", "Новый энциклопедический словарь Брокгауза-Ефрона", т. 3, с. 652-653

2 Տե՛ս Լ. Մելիքեան-Բեկ, «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց եւ Գրաց ինքնութիւնը» (վրացերէն), Տիֆլիս, 1928, էջ 3. Ասե՛ր Իլիա Արուստէ, «Աշխատութիւններ» (վրացերէն), հ. Դ, Թբիլիսի, 1985, էջ 5:

3 Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ», Վեներիկ, 1812, հրատ. Հ. Պ. Ազգերեան (նրա իսկ լատիներէն թարգմանութեամբ եւ ծանօթագրութիւններով), Ասե՛ր՝ «Սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ Ատենաբանութիւն վասն միութեան Եկեղեցւոյ եւ ճառք», Կապաթա, 1851:

4 Ժողովի հրատարակած թուականի մասին տե՛ս Ներսէս վրդ. Ակիմեան, «Ներսէս Լամբրոնացի՝ արքեպիսկոպոս Տարսուի», Վիեննա, 1956, էջ 31, 35:

5 Արստեղ եւ ստորեւ՝ մէջբերումներն ըստ Կապաթայի հրատարակութեան:

թեամբ Լեւոնի նուաստ ներսիսէ, որ ի Տարսոն սրբոյ Եկեղեցւոյն պաշտօնեայ», կարճ՝ «Թուղթ առ Լեւոն» երկում¹ :

Գատասխանելով Հայրենի աւանդներից հեռանալու մեղադրանքին եւ նորից արժարծելով Յոյն, Հայ, Լատին եւ Ասորի Եկեղեցիների միջեւ հաղորդութիւն առնել-չառնելու խնդիրը՝ Լամբրոնացին անվարան յայտարարում է. «Երկրորդ անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց, որ քրիստոնէից ազգք բացատրին ի միմեանց իւրք-իւրք: Իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զիս՝ զայս սնտոսի աւանդութիւնս նոցա գիտութեամբ արհամարհել եւ զսէրն նախապատուել. եւ է ինձ Հայն որպէս Լատինացին, եւ Լատինացին՝ որպէս Վելլինացին, եւ Հելլենացին՝ որպէս Վեդիպոացին, եւ Նեդիպոացին՝ որպէս Վասորին: Արդ, եթէ ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլսն ե՞րբ էր կար հազարգիւ. բայց ընդ իւրաքանչիւր, որ միմեանց թշնամիք են, խառնիմ եւ զքնաւան չահիմ՝ ըստ Քրիստոսի առաքելոյն. եւ ունիմ բան, որ ամենայն հարցողի կարող եմ պատասխանել, թէ ուզի՞ք ընթանամ. եւ սիրովն Քրիստոսի զամենայն կրճիմն քակեմ, որով բարեհաւատիմ ե՛լ ի Լատինացւոց Եկեղեցիսն, ե՛լ ի Հելլենացւոց, ե՛լ յԱսորոց, ե՛լ կամ ի Հայաստանս, եւ ընդ սոսա՝ անշարժ, եւ ի նոցին աւանդութիւնն՝ անփոփոխ»²:

Լամբրոնացին փաստօրէն մերժում է էթնիկական եւ դաւանական շրջանակներում ներփակուելու կարելիութիւնը, քրիստոնեաներին իրարից բաժանող դաւանական ու ծիսական տարբերութիւնները «սնտոսի աւանդութիւն» հուշակում եւ «գիտութեամբ արհամարհում»:

Կարելոր է ընդգծել, որ մեր մատենագիրն իրեն միայնակ չի զգում եւ թուարկում է Հայաստանի տարբեր դաւառներում ու թեմերում գործող իր գաղափարակիցներին, որից եւ կարելի է եզրակացնել, թէ լիբերալիզմը չէր շրջանակուում Կիլիկեան Հայաստանի սահմաններով: Նորից վկայակոչենք Լամբրոնացուն. «...Արդ, թէ քո աստուածպաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանուոյ, մեր իմաստութիւն՝ ոչ բնաւ՝ զի խրատիմք ոչ տալ անզգամին պատասխանի. եւ զի յետին են նոքա, որ յայս յանդգնին՝ բալոր հարց, որք մերում ճշմարտութեան ջատագովք են,

նոյն ինքն՝ մեր աշխարհս եւ սուրբ Լեւոնս եւ որ ի սմա՝ հովիւք սուրբք, եւ բալոր դաւառն Վաստուրականի եւ որ անդ՝ հուշակուար ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Սահփաննոս արքայուն՝ ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն եւ Սահփաննոս՝ մեր ուսումնակից, եւ Քրիստոսատուր եւ Տիմոթէոս ճգնաւորք, որք ականատես լեալք են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ եւ երանեն, թէ կարող էին ձայնակցել. բալոր դաւառն Տարսնայ եւ որ ի նմա՝ իմաստուն եպիսկոպոսն Նսայի, եւ վարժապետ Թէոգորոս, որ զմերս բարեհաւատի են բարեկարգութիւն եւ երանեն զհազարգեալսն. դաւառն Եկեղեցաց եւ լեառն սրբոյն Գրիգորի եւ որ ի նմա՝ հարքն եւ եպիսկոպոսքն, որք զրովն իւրեանց բարեհաւատեն զմեր ճշմարտութիւնս եւ աւագեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ. իշխանքն Խաչենոյ եւ որ անդ՝ վանորայք, որք զաշակերտն մեր զՅովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ որպէս զհրեշտակ պատուեն եւ կաթողիկոսութեանն Ազուանից ընծայեն...»¹:

Հայաստանի աշխարհագրութիւնն այստեղ բաւական հարուստ է ներկայացուած՝ Վասպուրական, Տարսոն, Եկեղիք, Խաչեն: Նշանակում է՝ Լամբրոնացու կուսակիցներ (ուսուցիչներ, սննդակիցներ եւ աշակերտներ) կային թէ՛ Կիլիկեան եւ թէ՛ Արեւելեան ու Հարաւային Հայաստանում: Ցաւօք, նրա թուարկած գործիչներից շատերի ինքնութիւնը, ինչպէս նաեւ նրանց զրական արտադրանքները հայագիտութեան մէջ քննութեան չեն առնուել, ուստի «լիբերալիզմի» եւ «պահպանողականութեան» թեւերի բաժանումն աշխարհագրական առումով արդարացուած չէ: Այս իրողութիւնը լաւագոյնս կարելի է հասատել Արեւելեան Հայաստանի ԺԲ-ԺԳ դարերի խոշորագոյն մատենագիրներից մէկի՝ Մխիթար Գոշի ժառանգութեան քննութեամբ:

Մխիթար Գոշի զրական վաստակները թուարկելիս Կիրակոս Գանձակեցին յիշում է «Գիրք մի՝ Յայտարարութիւն ուղղափառութեան հաստոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ

1 Տե՛ս «Տեսնո՞ւ ներսէսի Լամբրոնացոյ՝ Տարսոնի եպիսկոպոսի Առնճաբանութիւն եւ թուրք եւ ճառք», Վնճեսիկ, 1838, էջ 203-242:

2 Յոյն տեղում, էջ 215-216

1 Յոյն տեղում, էջ 224-225

զօրավարին Ջաքարէի եւ եղբօր իւրոյ»¹: Հաւանաբար սա նոյնն է 1900-1901թթ. «Արարատում» երեք ձեռագրի հիմամբ տպագրուած (պէտք է խոստովանել՝ ընթերցումների բաւական անյաջող ընտրութեամբ) «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչւի» ընդարձակ ջատագովականի հետ՝ հասցէագրուած յիշեալ զօրավար եղբայրներին եւ նրանց միջոցով՝ վրաց արքունիքին ու կաթողիկոսին²: Գրութեան ժամանակն աւանդուած է, բայց աներկբայօրէն յաջորդել է Լոռէի 1204/5թ. կայացած ժողովին, որին Գոշը ներկայ է եղել, եւ նախորդել 1207թ. Մենդեան տօնի նախօրէին հրաւիրուած Անիի ժողովին, որին Գոշը նոյնպէս մասնակցել է: Թղթում «յաղթող թագաւորը մեր»՝ Թամարն ու Դաւիթ Սոսլանը, կենդանի են յիշուած, որով վստահ կարող ենք ասել, թէ այն գրուած է 1206թ.: Գրութեան շարժառիթը որոշակի է. «Յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբաժբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց Եկեղեցւոյ՝ յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի, - դիմում է զօրավար եղբայրներին, - հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ»: Վրաց կաթողիկոսին եւ հոգեւորականութեանն ուղղուած նախադրութիւնում ասուած է. «Գրեցաք զթուղթդ՝ ոչ հակառակելով եւ կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան եւ զիրաւունս իբր դատաստանուցուցաք եւ զգոնարաւ գալն ի միաբանութիւն եւ զհնարաւորն ըստ ժամանակին յայտ արարաք եւ զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոյս ազգաց եւ զխոտելի իրն ոչ թաքուցաք զմեր ազգիս եւ զիրաքանչիւր ազգի զգովելին եւ զպարսաւելին գրեցաք եւ ի գլուխ բանին ընտրեցաք զբարին եւ զլաւն»: Նշանակում է՝ թղթի հետպնդած նպատակներն են.

Ա. Ներկայացնել Հայոց դաւանութիւնն ու Եկեղեցու ծիսակարգը, բացատրել նրանում եղած ինքնօրինակութիւնները:

Բ. Ինչպէս յոյներն ու վրացիները, այնպէս էլ Հայերը հերձուածողներ չեն, ուստի միմեանց հանդէպ կրկին մկրտութիւն կիրառելը «Քրիստոսի է անարգանք»:

Գ. Լաւ կլինէր, եթէ «ամենայն ազգ միակրան լինէր», բայց այլեւս միաբանութեան հասնելն անհնար է:

¹ Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 221

² Տե՛ս «Արարատ», 1900, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127: Նոյնութեան հարցում կապածներ ումի Լ. Մելիքեթ-Բեկը (տե՛ս Աշխ., էջ 227, 242):

Դ. Ներկայ կացութեան մէջ ի՞նչ պէտք է անել. «Միանգամայն եւ այն ցուցաք, թէ զինչ այժմ հնարաւոր է լինել ազգաց, զորս թէ ձեզ (իմա՛ զօրավար եղբայրներիդ - Գ. Մ.) հաճոյ կարծի, թարգմանեալ ընթեռնոյք նոցա (իմա՛ վրացիներին - Գ. Մ.)»:

Դիտենք, որ Գոշի այս երկի ուսումնասիրութիւնն առ յասօր ընթացել է գերազանցապէս աղբիւրները բացայայտելու ուղիով. Լ. Մելիքեթ-Բեկը պարզել է, որ Դուրիի ժողովի մասին պատմելիս Գոշն օգտոււմ է Յովհան Օձնեցու «Սակս ժողովոց, որ եղին ի Հայս» երկից՝ համառօտելով, հայ-վրացական եկեղեցական բաժանումը ներկայացնելիս՝ Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից գրեթէ բառացի քաղումներով:

1938թ. գրուած մի յօդուածում Ի. Աբուլաձէն հաստատապէս ապացուցեց, որ Գոշի թուղթը պատասխան է Արսէն Վաչեռ-ձէի «Դոգմատիկոնի» հակամիաբանակ դրուագներին, որպիսիք ութն են, մասնաւորապէս՝ նրանցից մէկին՝ «Երեսուն գլուխ հայոց հերձուածի» (վրացերէն): Հայագէտը ցոյց տուեց նաեւ, թէ հակամիաբանակ այս երկը հայ քաղկեդոնականների միջավայրում թարգմանուել է Հայերէն, լրացուել թարգմանչի մեկնաբանութիւններով ու ընդմիջարկութիւններով եւ «Պատասխանի առ Հայս» խորագրով եւ Յովհան Դամասկացու հեղինակութեան վերագրումով ժամանակին հրատարակուել Կ. Պոլսի «Լոյս» շաբաթաթերթի 1905-1906թթ. համարներում: Մի քանի տարի առաջ Ջ. Ալեքսիձէն հրատարակեց «Երեսուն գլուխ Հայոց հերձուածի» վրացերէն բնագիրն ու նրա համապատասխան հատուածները Յովհան Դամասկացուն վերագրուած «Պատասխանի առ Հայս» երկից³: Ի վերջոյ, 1976թ. Ժ. Գարիտը ճշգրտեց, թէ

¹ Տե՛ս Լ. Մելիքեթ-Բեկ, Աշխ., էջ 243-245: Անանիա Սանահնեցու երկն այժմ հրատարակուած է. տե՛ս «Անանիա վարդապետի հայոց՝ Բան հակաճառութեան ընդդէմ երկարձակաց, զոր գրեաց հրամանաւ տեսնոմ Պետրոսի հայոց Վերադիտողի», հրատ. Յ. Բեռտեան, «Գանձասար», Ա., էջ 204-238; Բ., էջ 168-218; Գ., էջ 174-215:

² Տե՛ս «Լոյս» (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1905, էջ 1008-1012, 1065-1066 (նախաբան), 1066-1068, 1112-1115; 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 474-479, 589-592, 810-815, 957-960, 981-984, 1075-1079, 1124--1126, 1196-1199. Ի. Աբուլաձէ, Աշխ., էջ 10-16: Հայերէն տեքստի հրատարակիչը Բաբկէն վրդ. Կիլեւէրեանն է, որը համառօտ ներածականում չի մերժում Դամասկացու հեղինակ լինելը, բայց եւ դիտում է յետագայ ընդմիջարկութեան առկայութիւնը: Ն. Ալիմեանն այն համարում է «Յովհ. Դամասկացոյ անունն ներքե կեղծող հայ-հոռոսի մը» գործ (տե՛ս Ն. Ալիմեան, «Կիւրիոս» կաթողիկոս վրաց», Վիեննա, 1910, էջ 69-70):

³ Տե՛ս Ջազա Ալեքսիձէ, «Արսէն Վաչեռ-ձէի «Դոգմատիկոնի» մտածած հակամիաբանակ յերթումըը եւ նրա արձագանքը հայոց հին մատենագրութեան մէջ» (վրացերէն), «Մատրոսի», հ. 1, Թբիլիսի, 1977, էջ 133-158:

Արսէն Վաչես-ձէի «Դոգմատիկոնի» յիշեալ հակամիաբնակ դրուադի աղբիւրը յունարէն մի աշխատութիւն է՝ հրատարակուած Մինի PG-ի 132-րդ հատորում (սիւնակ 1221-1237)՝:

Այս ամէնն, անշուշտ, ե՛լ կարելոր է, ե՛լ հետաքրքիր, բայց մուսուլման չպէտք է տալ ամենաէականը՝ ինչո՞վ է տարբերում Մ. Գոշի թուղթն այն մատենագրական երկերից, որոնցից օգտուած է կամ որոնց ի պատասխան գրուած է: Մեր խնդիրն այս հարցերին պատասխանելն է:

1. Մ. Գոշին նախորդած Հայ Հեղինակները, որոնց երկերից նա օգտուել է, իբրև կանոն, ջանացել են ապացուցել, որ Հայոց Եկեղեցու դաւանութիւնն ու ծիսակարգը անխտոր պահպանել են ուղղափառութիւնը, եւ որ Հերձուածողները Քաղկեդոնի ժողովի հետեւողներն են: Գոշը նոյնպէս պաշտպանուած է միաբնակ Եկեղեցու ուղղափառութիւնը, բայց եւ երկաբնակութիւնը Հերձուած չի համարում. «Ե ազգաց (իմա՛ յոյներ, Հռոմէացիներ, Հայեր, ասորիներ եւ վրացիներ - Գ. Մ.) չտեսանեմք այնքան պատճառք, որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ կամ զտաւն, եւ նա ճանաչէ զիւրաքանչիւրոցն զարժանաւորութիւն», ուստի՝ «այլ թէ ասացեալ հինգ ազգոց ոչ կարեն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զնաչ եւ զԵկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ», որովհետեւ «Հայք եւ Վիրք, Ասորիք եւ Հռոմք ճշմարիտ գերորդութիւնն խոստովանին եւ զՔրիստոս Աստուած՝ ճշմարիտ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ ի տնաւրէնութիւնն այլայլեն եւ զՄարիամ Աստուածածին, թէ չիցէ ի կարծեաց Նեստորի, եւ զնաչ՝ Աստուծոյ Սաչ. առ Հայս այդ առաւել ճշմարիտ է: Այլ ինչ սակաւ բաժանումն տաւնի կամ պտէոց կամ կերակրոց չէ հաւատոյ բաժանումն»: Գոշը լայնախոհաբար նկատում է. «Մի՞թէ ընդ ամենայն աշխարհ Հայ միայն է, եւ կամ՝ Վրացի, եւ կամ՝ Հռոմ: Քրիստոս չէ նախանձոտ. նա ամենայն ազգ ընկալեալ է, զի զարքայութիւնն զուկանի նմանեցոյց, յոր ամենայն ազգ ձկանց ըմբռնին: Աստուած ե՞րբ առնէ թողութիւն այն քրիստոնէին, որ զՏաճիկն եւ զՀուդէն լաւ սաէ, քան զՀայն: Այնպիսի ասացողքն չունին թողութիւն ո՛չ աստ եւ ո՛չ ի հանդերձելումն, թէ չապաշխարին. թէ Հայ Վրացոյ սաէ, կամ Վրացի՝ Հայոյ, եւ կամ այլ

1 Gérard Garitte, "La source grecque des "Trente articles" géorgiens contre les arméniens", «Հանդէս ամսօրեայ», 1976, էջ 111-116: Սոյն երկի թարգմանական լինելու շուրջ Արէլ վրո. Օլիուեզանի յայտնած տարակուսանքը (տե՛ս «Գանձասար», Գ, էջ 53-54) արդիւնք է այստեղ յիշուած մասնագիտական գրականութեան անձնագրութեան:

քրիստոնեայ ազգ՝ քրիստոնէի, զի ամենայն քրիստոնեայք եղբարք են»:

Պատկերացնելու համար, թէ ինչ շօշափելի տարբերութիւն կայ Մ. Գոշի եւ նրա դիմաց կանգնած յոյն եւ վրացի Հեղինակների համոզմունքների միջեւ, բաւական է յիշել վերջիններիս գործածած մի քանի արտայայտութիւններ՝ «ամենայն չար Հայք», «անաստուածներ եւ զազրելիներ», «այժմեան Հայք՝ մերժողք, հայհոյիչ եւ փոխեալ են այսպիսի խորհրդոց», հայոց եկեղեցիները կոչում են «սատանայական ժողովարաններ» եւ այլն: Ի դէպ, նման տեղիները յիշուելի վերաւորական են ներկայացել յուշարձանի միջնադարեան երկաբնակ Հայ թարգմանչին, ուստի նա այս որակումները բաց է թողել՝:

2. Դաւանութեան շուրջ խօսող Գոշի նախորդները, մանաւանդ՝ յունավրացական միջավայրում, սովորաբար հաւասարութեան նշան են դնում ազգային եւ դաւանական հասկացութիւնների միջեւ: Պատահական չէ, որ յունական եւ վրացական աղբիւրներում երբեմն «Հայք», «Հայոց»-ի փոխարէն գործածուած է «խաչեցարներ» փոխաբերական եզրը: Գոշը որոշակիօրէն տարբերում է այս կամ այն ժողովուրդը եւ նրա դաւանութիւնը: Նա ջանում է ապացուցել, որ միաբնակութիւն դաւանող ուրիշ ժողովուրդներ էլ կան, եւ թուարկում է Ասիայում եւ Աֆրիկայում գտնուող շատ երկրներ ու ժողովուրդներ (էջ 503), որոնք «ընդ մեզ ի նոյն կրօնի կան հաստատուն՝ չընկալեալք զժողովն Քաղկեդոնի», «եւ սոքա, ի նոյն հաստատեալ հաւատս, ոչ միաբանին ընդ Յոյնս եւ ընդ Վիրս»: Կայ եւ հակառակը՝ ապրում են հայոց միջավայրում, հայալեզու են, բայց հայ չեն ազգային պատկանելութեամբ, որպիսիք են, ըստ Գոշի, «մաքենացիք» (էջ 60): Այս էթնոհիմի տակ, թերեւս, Գոշը նկատի

1 Ի. Աբուլաձէի համոզմամբ՝ «Պատասխանի առ Հայս» երկի հայերէն թարգմանիչն այլ աղբիւրներից քաշ յայտնի Սիմեոն Պղնձաբանեցի մատնի լինի (տե՛ս Աբուլաձէ, էջ 18): Վերջինիս մասին հանգամանօրէն տե՛ս Ներսէս վրո. Ակիմեան, «Սիմեոն Պղնձաբանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ», Վիեննա, 1951: Եթէ թարգմանիչ Սիմեոնը նոյն Պղնձաբանեցին է (Ն. Ակիմեան այդ չի ասում. տե՛ս Աբուլաձէ, էջ 96-98), ապա Մ. Գոշն օգտուած պիտի լինի վրացերէն բնագրից, քանի որ 1206թ., երբ նա իր աշխատութիւնն էր գրում, Պղնձաբանեցին ընդամենը 18 տարեկան էր եւ հազիւ թէ թարգմանութեան մարզում հմտացած լինէր: Ի. Աբուլաձէն նա այս հարցում կասկածներ ունի (տե՛ս Աբուլաձէ, էջ 16): Ի դէպ, Ն. Ակիմեանը «Պատասխանի առ Հայս» լուծարէն բնագրի ձեռնարկն է համարում Եւստրատիոս Նիկեացուն (տե՛ս Աբուլաձէ, էջ 97): Վերջինիս աշխատութեան բնագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով (դրում տե՛ս Karl Krumbacher, "Geschichte der byzantinischen Litteratur", München, 1887, S. 85, նաեւ՝ Ն. Ակիմեան, անդ), չենք կարող ասել՝ Գարիտի մատնացուցած բնագրի հետ որանք նոյնանուն են, թէ՛ ոչ:

ունի պաշտիկեաններին: Վրաց Հոգեւորականութեանը դիմելով՝ Գոչ ամփոփում է. «Մի՛, սիրելի՛ք Աստուծոյ, լսող լինի՛ք թշնամեաց մերոց, զի չկայ ի Հայք Հերձուած, եւ զայն սակաւ պատճառն, զոր ունի, յամենայն ազգ այլ շատ կան, եւ տեսանեմք, եւ զայն չէ Հերձուած Հայոց»:

Անհրաժեշտաբար կրկնում ենք. իր տուած բնագրութիւնները Գոչը կառուցում է էթնիկական-ազգագրական յատկանիշներին եւ ոչ՝ դաւանական ինքնութիւնների վրայ: «Ձիք ազգ,- ասում է նա,- որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան». «Յոյնք իմաստունք են եւ ողորմածք՝ ուսեալք ի Յոհանէ Ոսկեբերանէ, Հոռոմք զգաստք են աղաւթից եւ Հնազանդ առաջնորդաց, Ասորիք խոնարհք են եւ ճգնող, Հայք պահողք են եւ ողորմածք գերելոց եւ եկեղեցականաց, սրբութեան սիրողք, Վիրք՝ սրբոց եւ վանորէից մեծարողք եւ անբամբաս առաջնորդաց», եւ ապա՝ «առաջնորդաց անհնազանդ են Հայք, բայց սրբութիւն կրանաւորաց ի Հայք առաւել գտանի եւ արժանաւոր պատարագ, քան՝ զայլ ազգ»: Նոյնիսկ ոչ կանոնական դիտուող, բայց ազգային սովորոյթ դարձած իրողութիւնները նա Հանդուրժիկ է Համարում. «Այլ զի յոյժ պատուեն Վիրք զկնքահայրսն, գովելի է, թէպէտ եւ ոչ է կանոնական, եւ զի՞ բամբասեն զՀայսն, թէ՛ զազգականս առնեն կնքահայր»: Նա դիտում է, որ տարբերութիւններ յիրաւի կան. «Յոյնք եւ Վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, եւ Հայք՝ զԽաչ». «որպէս Հայք զԽաչ անարգեցին՝ արհամարհանաւք յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս Յոյնք եւ Վիրք՝ զպատկերս, զի զոր գիտեմք, ընդունիմք եւ պատուեմք, զի յիշեցուցին է որպէս պատմութիւն վարուց սրբոցն, բայց զի արք տգէտք պաշտելի կարծեն վասն այն, եւ ոչ փութեան առնել Հայք, այլ իմաստունք զարարեալսն ոչ անպատուեն»:

3. Այն գրութեանը, որին պատասխանում է Մ. Գոչը, անծանօթ է միջէթնիկական յարաբերութիւնների հեռանկարի Հասկացութիւնը, ինչպէս նաեւ՝ ազգամիջեան Համերաշխութեան եւ դաւանական Հպնդութողականութեան գաղափարը, մինչդեռ իրատես Գոչն իրեն պարտաւոր է զգում ասել, թէ՛ «զի՞նչ այժմ Հնարաւոր է լինել ազգաց»: Նրա համոզմամբ՝ վրաց թագաւորները եւ «նախանձաւորին խաղաղութեան եւ սիրոյ առ միմեանս Հաւատացելոց», եւ թէեւ թամարն ու Դաւիթը «չեն բաւական տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց... այլ Աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց եւ զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ Բրիստոս չՀայհոյեն, զի այն Բրիստոսի է ատելութիւն, որ զԽաչ եւ զԵրատ եւ զԵկեղեցի միմեանց

չՀայհոյեն եւ նախատեն»: «Եւ դուք բաւական էք,- դիմում է նա զօրավար եղբայրներին,- զսաստկացեալ պատերազմդ Հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ եւ հաւանել բանիւ, թէպէտ եւ անհնար ցուցաք զժողովն լինել զմիաբանութիւն... զի դուք իշխանք էք Հայոց եւ Վրաց կամաւքն Աստուծոյ եւ թէ կամիք, ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ ղենն»:

Գոչը նման դիմում է կատարում եւ վրաց Հոգեւորականութեանը. «Արդ, մի՛ լիցի ձեզ պատճառ լինել եւ այլոց գայթակղութեան, այլ՝ առաւել շինութեան եւ խաղաղութեան»: Մարդիկ միմեանց պէտք ու կարօտ ունեն, ուստի նրանց չի կարելի ատելութեամբ բաժանել. «Այլ զայս նախ դիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան, վասն որոյ կարաւտս արար զպէտս ունել միմեանց, եւ յաղաքս այնորիկ շինեցան քաղաքք եւ այլ բնակութիւնք: Ընդդէմ այսմ է եւ կամք չարին բաժանելն մարդկան ատելութեամբ, զի այսու դիւրաւ զչարն գործիցէ, որպէս սիրով՝ զբարին Աստուած»: Արմատացած սովորութիւնների եւ գոյացած աւանդոյթների պատճառով «անհնար տեսանեմք զգալն ամենեցուն ի միաբանութիւն», բայց եւ միաժամանակ «լաւ Համարեցաք, որ զմիմեանս չթշնամանեմք եւ զԽաչ եւ զԵկեղեցի չանարգեմք», որովհետեւ «եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի Յոյնն զինքն կարծէ ճշմարիտ, եւ Հոռոմն՝ զինքն, նմանապէս եւ՝ ազգ ամենայն»: Խելամիտն իրար Հանդուրժեցն է. «Լաւ էր, թէ զայն ընտրէաք, որ զթշնամութիւն բառնէաք ի միմեանց եւ բարեկամ լինէաք եւ զկարգ միմեանց չՀայհոյէաք»: Գոչն այլ ելք չի տեսնում, քան խաղաղ ու ինքնակամ գոյակցելը. «Արդ, այլ ինչ Հնար բառնայոյ զայդ Հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ՛ զմիմեանց Հաւանելն եւ կալ իւրաքանչիւր կարգի ամենայն ազգ...»:

Կատարուած քննութիւնը մեզ մղում է մի քանի սկզբունքային եզրակացութիւնների.

Ա. ԺԲ-ԺԳ դարերի Հայ իրականութեան մէջ Վարդան Այգեկցին միակ հեղինակը չէ, որ յանգել է դաւանական Հանդուրժողականութեան եւ ազգամիջեան Համերաշխութեան գաղափարին. նրանից առաջ եւ նրա օրօք, բացի Ենորհալուց եւ Լամբրոնացուց, այդ նոյն գաղափարախօսութեան բանիբուն ջատագով է եղել Միխիթար Գոչը:

Բ. Հայոց էթնիկական աշխարհի երկու ծայր Հատուածներում՝ Կիլիկիայում եւ Հիւսիսային Հայաստանում, միաժամանակ, բայց մի-

մեանցից անկախ ձեւաւորուած համերաշխութեան եւ հանդուրժողականութեան այս գաղափարը բարձրակէտ էր, որին յաջեցեր է հայոց էթնիկական, քաղաքական եւ մշակութային զարգացման ողջ նախընթաց շրջանը:

Գ. Վերանայելի է ԺԲ-ԺԳ դարերի հայոց մատենագրութեան եւ նրա կերտողների երկու հակադրուող թեւերի բաժանումը՝ մէկին որակելով լիբերալ, միւսին՝ պահպանողական: Կիլիկեան եւ «հիւսիսային կողմանց» վարդապետների թղթերում եղած փոխյանդիմանութիւնները նման ընդհանրացման հիմք չեն տալիս: Մշակութային ամբողջականութեան զգացումը միջնադարեան էթնիկ ինքնագիտակցութեան կարեւոր բաղադրիչներից է:

Դ. Հայ ժողովրդի ստեղծած մշակոյթի միջնադարն այլ ժողովուրդների մշակոյթներին յարաբերելիս չպէտք է անտես առնել տեղական աւանդների գործուն ներկայութիւնը. իր գոյութիւնն ապահովելու եւ խաղաղ գոյակցելու երազանքը միշտ ուղեկցել է տեւական մաքառումներով ապրող մեր ժողովրդին: Աշտարակի կարմրաւորի կառուցողը է դարում փորագրել է. «Տուաք շինել... վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ շինութեան Աշտարակի եւ պաշտօններութեան սահմանիդ»:

Ե. Մխիթար Գոշի մատենագրական ժառանգութիւնն ուսումնասիրելիս, «Դատաստանագրքում» երեւացող եւ հումանիստական որակուող համոզմունքները գնահատելիս չպէտք է զանց առնել «Գծագրութիւն» կամ «Թուղթ» կոչուող երկի խիստ ուշագրաւ դրոյթները:

Յակոբ Քեռուեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ ԵՒ ՏԱՂԵՐՈՒՄ

(շարունակութիւն)

4. ՄԱՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Հայ Առաքելական Եկեղեցու աստուածաբանութեան մէջ կարեւոր տեղ է զբաղեցնում մարդու մասին ուսմունքը՝ մարդաբանութիւնը (անտրոպոլոգիա): Այն առաւել համակողմամօրէն մշակում եւ յղկում է արեւելաքրիստոնէական մարդաբանութեան որդեգրած սկզբունքային դրոյթները, որոնք, բխելով Սուրբ Գրքից եւ Յայտնութիւնից, բիրտպացել են Եկեղեցու հայրերի խորհրդածութիւններում: Քրիստոնէական մարդաբանութեան ճիշտ ընկալման համար ուշագրաւ է թուում ս. Բարսեղ Կեսարացու հետեւեալ խստորոշ միտքը. «Աստուած մարդուն ստեղծեց որպէս կենդանի էակ, որ կոչուած էր աստուած լինել»: Սակայն ատոմին տրամաբանութեան համար տարօրինակն այն է, որ այդ կոչումը նուաճելու համար հարկ է հրաժարուել դրանից: Այդ հրաժարումը կատարում է Աստուծոյ կողմից մարդուն տրուած ազատ կամքի արդարացի գործադրումով: Անդրադատուածով այս խնդրին՝ Վ. Լոսսկին նկատում է. «Մարդը ստեղծուեց Աստուծոյ կամքով, սակայն միայն այդ կամքով նա չի կարող աստուածանալ: Մէկ կամք՝ արարչութեան մէջ, սակայն երկու՝ աստուածացման մէջ: Մէկ կամք՝ պատկերն արարելու համար, սակայն երկու՝ այն բանի համար, որպէսզի պատկերը նմանութիւն դառնայ: Աստուծոյ սէրը մարդու նկատմամբ այնքան մեծ է, որ այն չի կարող բռնանալ նրա վրայ...»¹: Ուստի մեղքից ձերբազատուելու եւ աստուածանալու համար անհրաժեշտ է Աստուծոյ կամքի եւ մարդու կամքի լիակատար մէկտեղում: Կամքի ազատութեամբ, ազատ ընտրութիւն կատարելու շնորհով մարդը բարձր է նոյնիսկ Աստուծոյ փառքի հրեղէն լոյսին հաղորդ, Նրա շուրջը խմբուած, Նրան մշտապէս փառաբանող հրեշտակներից, որոնք, զուրկ լինելով այդ ազատութիւնից,

1 В. Лосский, "Догматическое богословие", "Богословские труды", сб. 8, Москва, 1972, с. 157

Աստուածութեան սուկական կամակատարներն ու սպասարներն են՝ Սակայն մարդուն տրուած կամքի ազատութիւնն ու ազատ ընտրութիւն կատարելու շնորհը աստուծայի որդւոնով չարաշահուեց: Այսպիսով, ինչպէս վկայում է Աստուածաշունչը, Աստուծոյ եւ մարդու կամքի մէկտեղումը, որով մարդը յարատեւում էր դրախտում, ընդհատուեց գայթակհութեան հետեւանքով գլուխ բարձրացրած յաւակնոտ անհնազանդութեամբ ու հպարտութեամբ: Աստուծոյ եւ մարդու երանելի միասնութիւնը խափանուեց. մարդը զրկուեց աստուածային փառքի ներկայութիւնից: Այսուամենայնիւ, մարդու նկատմամբ Աստուծոյ ողորմածութիւնն ու սէրն այնքան մեծ էին, որ Հայր Աստուած Իր Միածին Որդուն առաքեց մարդկանց մօտ, որպէսզի ամէն ոք, ով հաւատայ Նրան, չկորսուի, այլ յաիտենական կեանք ունենայ: Սա Աշանակում է, որ Մարդու նորոգումն իրագործում է Աստուծոյ հետ հաշտուելու, վերամիաւորուելու ճանապարհով, որ կատարում է Աստուծոյ Միածին Որդու՝ մարմնաւորուած Բանի փրկարար խաչելութեամբ եւ հրաշափառ յարութեամբ³: Ուրիշ խօսքով՝ վերամիաւորումն ու փրկութիւնն իրագործում են Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ առկայ յարատեւ յոյսով, ամհուն հաւատով եւ բոցավառ սիրով: Աստուծոյ հետ մարդու վերամիաւորումն ու փրկութիւնն աստուածաբանական գրականութեան մէջ բնորոշում են *աստուածացում* անունով: Մարդու աստուածացումն անկարելի կլինէր առանց Աստուծոյ մարդացման: Ուրեմն վերամիաւորումն այլ բան չէ, քան Աստուծոյ եւ մարդու փոխներթափանցման մի անվերջանալի գործընթաց, որի նպատակն աղանակն անէծքի բարձունով մարդու նախամեղանշական վիճակի վերականգնումը, յաիտենական կեանքի ժառանգումը եւ աստուածացումն է: Այս միտքն է դրուած Եկեղեցու հայրերի բազմաթիւ խորհրդածութիւնների հիմքում⁴: Ահա դրանցից մի քանիսը. «Աստուած միայն մարդասէր, եւ մարդ՝ միայն աստուածասէր. Աստուած՝ մարդոյ, եւ մարդ՝ Աստուծոյ. վասն մարդոյ՝ Աստուած մարդացեալ, եւ վասն Աստուծոյ՝ մարդ աստուածացեալ»⁵: Ս. Դիոնիսիոս Արեւուպագացին գրում է. «Եւ այս ոչ կարէ այլազգ լինել, եթէ ոչ աստուածացին ապրեալքն: Իսկ աստուածանալն է առ Աստուած նմանութիւն, որպէս հասանելի է եւ միաւորութիւն: ...Աստուծապետական երանութիւն՝ բնութեամբ Աստուածութիւնն, սկիզբն աստուածանալոյ, յորմէ աստուածանալն է աս-

տուածացելոցն»⁶: Հայ Առաքելական Եկեղեցու մարդաբանութեան հայեացումն են շարականների եւ տաղերի ներքոբերեալ հատուածները.

**Զի ի սկզբան մարդն ցանկացաւ աստուածանալ
Եւ անդ ոչ հասաւ,
Իսկ Արարիչն եկեալ մարդացաւ,
Վասն այնորիկ մարդն աստուածացաւ⁷:**

**Եկա՛յք, որդի՛ք մարդկան, այսօր ողբացուք զհօրն զվտանգ,
Որ մերկացաւ մեղօք զփառս Արարչին
Եւ զգեցաւ զթգեմունյն ծածկոյթ՝ փոխանակ անճառ յուսոյն,
Գովեցէ՛ք զՈրդին Աստուծոյ այսօր ցնծութեամբ, որդի՛ք Ադամայ,
Որ եկն ի խնդիր եղծեալ պատկերին
Եւ գտեալ նորոգեաց՝
Ի փառս առաջին պատմուճանին⁸:**

**Կերպարանն Հայր, առեալ զմերս,
Ծնեալն տնայրիճարար մարմնով՝
Խաչի եւ արեամբ ազատելով զբնութիւնս:
Զբնութիւն վայր անկեալ նորոգ Յարութեամբն իւրով,
Ընդ իւր վեր յարուցեալ փառաւր
Վեհից գերագոյն նստոյց յաթոռ փառաց⁹:**

**Հայր կամաւ իշեալ՝ Որդին մարմին զգեցաւ,
Արեամբ եւ մահուամբ իւր զնեաց զորդիս Ադամայ:
Յարեաւ Յարութիւն եւ կեանք, յարոյց զբնութիւնս,
Որով պարակից եղեաք վերին զուարթոցն¹⁰:**

5. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴՈՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս արդէն նկատեցինք, Աստուծոյ հետ մարդու հաշտեցումն ու վերամիաւորումն իրագործում են Աստուծոյ Միածին Որդու՝ մեր Փրկչի՝

2 Տե՛ս Ա. Տէր-Միքէլեան, «Հայաստանեայց սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Տփլիս, 1900, էջ 97:

3 Տե՛ս В. Лосский, «2-е изд.», 182-183:

4 Այս մասին հանգամանակից նշում տե՛ս И. В. Попов, "Идея обожения в Древневосточной церкви", "Вопросы философии и психологии", кн. 97, с. 165-213:

5 «Մրցոյ հօրն մարդ եղիշէի վարդապետի մատենագրութիւնը» (—ս. Եղիշէի մատենագրութիւնը), Վենետիկ, 1859, էջ 293, 320

6 «Եթէ զի՛նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աստուծութիւն, եւ զի՛նչ՝ այնորիկ դիտումն», «The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite», Lovanii, 1987, էջ 57-58

7 Սուր բառգիրք հայկազեան լեզուի, Բ. Ա., Վենետիկ, 1837, էջ 327

8 [Կանոն Մեծի Երկուշաբթիին], «Ծարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ողղափառ Եկեղեցոյս Հայաստանեայց յօրինեալ ի սրբոց Թարգմանչացն մերոց...» (—Ծարական), Ս. Էջմիածին, 1861, էջ 236

9 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», Երեւան, 1981, էջ 103

10 Ներսէս Շարճապի, «Տաղեր եւ գանձեր», Երեւան, 1987, էջ 128

Տէր Յիսուս Քրիստոսի ծնունդով, տնօրինական գործունէութեամբ, խաչելութեամբ եւ յարութեամբ: Ադամորդու գործած մեղքերի պատճառով նրա վրայ ծանրացած անէծքի պարտամտութիւնը պատուում է Աստուծոյ տիեզերքարծարած կամքով եւ անսահման ողորմածութեամբ: Այն դրսեւորում է Բանի մարմնաւորումով եւ փրկագործական սխրանքով:

Խորքով Անձեւացին ժամկարգութեան մեկնութեան մէջ գրում է. «Գթածաբար զմերս զգեցաւ մարմին կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն: ...Կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն եղև մարմնառիկ տնօրէնութիւն Որդւոյ»¹¹: Նոյն այս միտքն է ընդգծում Սարգիս Շնորհալու Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ. «Կամօք Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն զմարմինն զգեցաւ (Որդին), որով չարչարեցաւն»¹²: Բոլոր ժամանակներից առաջ, պատմութիւնից դուրս առկայող աստուածային Բանը, մուտք գործելով պատմութեան մէջ, մարմնանում, մարդանում է սուրբ Կոյսի արիւնից՝ մարդկային բնութիւնը միաւորելով Իր աստուածային Անձին՝ դառնալով կատարեալ մարդ՝ կատարեալ Աստուածութեամբ: Հաւատոյ հանգանակում կարդում ենք. «Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով, Որով էառ զմարմին, զհոգի, զմիտ եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք»¹³: **Մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս** բառերով հերքում է Մարկիոնի եւ Ապելոսի հերձուածը, ըստ որի ոչ թէ Քրիստոս է ծնունել մօրից, այլ՝ Նրա մարմինը: Հերքման այս նոյն ոգին է տիրում եւ ս. Բարսեղ Կեսարացու «Ապօղինարի հերձուածողի տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին» երկի հետեւեալ տողերում. «Աստուած, կամելով երեւել, միացոյց Ինքեան մարմին՝ զկարելին երեւել. եւ, կամելով չարչարել, միացոյց Ինքեան մարմինն անձնաւոր՝ զկարելին չարչարել. ո՛չ յառաջագոյն զգոյացեալն եւ յայնժամ ըստ առաքինութեան միաւորեալ եւ ո՛չ ի մարդոյ պարզաբար Մարիամայ, այլ, յառաջագոյն զնա սրբեալ, յայնժամ ի մա ընկալաւ Աստուծոյն Բան զմարդկութիւնն եւ միացոյց Ինքեան, ըստ տնօրինութեանն, հոգեւոր մարմինն. որպէս զի գոյ զմի եւ նոյն Աստուած եւ մարդ»¹⁴: Վերբանական այս իրողութեան պերճախօս բնորոշումն են պարունակում ս. Գրիգոր Լուսաւորչի հետեւեալ մտքերը. «Միացաւ ի մարմնի բնութեամբ եւ խառնեաց զՄարմինն Իր Աստուածութիւնն, ...խառնեաց, միացոյց, ընկղմեաց զմար-

մինն յԱստուածութեան Իրում»¹⁵: Պակաս կարելոր չեն նաեւ ս. Յովհանն Մանդակունի հայրապետի խորհրդածութիւնները. «...Բանին Աստուծոյ եկեալ յերկիր եւ եղեալ մարդ եւ մեռեալ իբրեւ զմարդ, այլ ըստ էութեանն Աստուած կոչի եւ ոչ՝ մարդ. եւ ըստ տեսչութեանն՝ Աստուած մարդացեալ եւ ոչ՝ մարդ աստուածացեալ: Մարդ յերկինս եւ յերկրի մի եւ նոյն Ինքն միացեալ միաւորեալ մարմնով եւ աստուածութեամբ...»¹⁶: Մամբրէ Վերծանողի ճառերից մէկում նոյն միտքը հետեւեալ կերպ է ձեւակերպուած. «Որ զանհնազանդութիւն մարդկան ընդ հնազանդութեամբն Բանին Աստուծոյ միաւորէ եւ հնազանդի աստուածախառն մարմնովն հասարակաց Հօրն՝ փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, եւ ըստ Աստուածութեան առնու բարեբանութիւն ընդ Հօր ի հրաբուն զօրացն»¹⁷: Քրիստոսի տնօրինական գործունէութիւնն, այսպիսով, իրականացում է աստուածային եւ մարդկային բնութիւնների միաւորումով: Տնօրինութեան սկիզբը Բանի մարմնացումն է: Խորապէս գիտակցելով այս իրողութեան ճշմարտութիւնը՝ Յովհաննէս առաքեալը զգուշացնում է. «Ամենայն հոգի, որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս՝ մարմնով եկեալ, չէ նա յԱստուծոյ, եւ այս Նեղինն է, զորմէ լուարուք, եթէ զայոց է եւ արդէն իսկ յաշխարհի է» [Ա Յովհ. Դ 3]: Փրկչի տնօրինական գործունէութեան նպատակն Աստուծոյ եւ մարդու հաշտութիւնն ու միաւորումն է, որ կատարում է Քրիստոսի երեք պաշտօնների գործադրումով՝ մարգարեական, քահանայական եւ թագաւորական: Այս երեք պաշտօնների նուիրագործումով է մարդը հաշտում Աստուծոյ հետ եւ Աստուծոյ գործուն մասնակցութեամբ ու ողորմութեամբ վերականգնում իր նախակարգնական վիճակը: Ուրեմն, Քրիստոսի պաշտօններով են կատարում այդ միաւորումը եւ ճշմարիտ կեանքի ոգեկոչումը:

Քրիստոս Իր մարգարեական պաշտօնով պսակն ու լրումն է քարոզխօսութեան: Նա, ի տարբերութիւն հին մարգարեների, որոնք խօսում կամ գործում էին Սուրբ Հոգու ներգործութեամբ, քննում օրէնքները, վերհանում անցեալի բոլոր ուսանելի դէպքերը եւ նախանշում ապագայում կատարուելիքները, գործում է Սուրբ Հոգու հետ՝ իբրեւ Հաւասարը Հաւասարի հետ. Նրանով է վերջանում հին ժամանակը, Նա Իր մէջ է ամփոփում անցեալը, ներկան եւ ապագան, Նրանով է օրէնքն ամբողջանում, էպիոփում եւ սկիզբը դառնում Աստուծոյ եւ մարդու նոր յարաբերութեան, որ իրագործում է Շնորհի օգնութեամբ: Քրիստոս ոչ միայն Աստուծոյ խօսքի մատակարարն է, այլեւ՝ բուն Աստուծոյ խօսքը, ոչ միայն մարգարեանում է, այլեւ Ինքը մարգարեութիւնն է, քանզի Նրանով է կատարուելու համընդ-

11 «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ՝ ըստ ուղղափառ դասանութեան եկեղեցոյ Հայաստանեայց, աշխատասիրութեամբ Մանրայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացոյ» (—Հրահանգ), Մոսկուա, 1850, էջ 175, 176

12 նոյն տեղում, էջ 175

13 նոյն տեղում, էջ 176

14 «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ, յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դասանութեանց» (—Կնիք հաւատոյ), Ս. Էջմիածին, 1914, էջ 85-86

15 «Ազաբանգեղեայ պատմութիւն հայոց» (—Ազաբանգեղեայ), Տիփլիս, 1909, էջ 189

16 «Ի Սուրբ Երրորդութիւնն», «Տեառն Յովհաննէս Մանդակունոյ հայոց հայրապետի մարդ», Վենետիկ, 1836, էջ 207

17 «Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի, Դաւիթ Անյալթի մատենագրութիւնը», Բ, Վենետիկ, 1939, էջ 55

հանուր Դատաստանը:

Քրիստոսի տնօրինական գործունեության միս ոլորտը քահանայական նուիրագործումն է: Քահանայական պաշտօնավարումով է իրականացում Աստուծոյ և մարդու հաշտեցումը: Սակայն սկզբունքորէն տարբեր է մինչև Քրիստոս առկայող օրինադատ քահանայագործումը՝ Քրիստոսով իրականացած քահանայագործումից: Ինչո՞ւ՝ որովհետև «ի հիմն քահանայքն հանապագ մեղանչէին»¹⁸: Ինչո՞ւ՝ որովհետև «ի հանապագ պատարագի կարօտանային: Իսկ Քրիստոս ոչ արար մեղս, այլ վասն մեր մի անգամ մատոյց պատարագ: Երկրորդ՝ զի նոքա մարմնատուր և ժամանակեայ առնէին սրբութիւն, իսկ Քրիստոս՝ հոգեւոր և յաիտեանական: Երրորդ՝ զի ճշմարտութիւնն մի է, և օրինակք՝ բազումք...»¹⁸: Այսպիսով, Քրիստոս քահանայագործում է բովանդակ տիեզերքն իր սրբարար Արեւմբ մաքրագործելու և խաչով ազատելու համար [տե՛ս Եբր. է 27, Թ 14]: Ուրեմն, Քրիստոս ե՛ր քահանայապետ է, ե՛ր զոհ, ե՛ր պատարագիչ, ե՛ր պատարագ¹⁹: Այս ի մտի ունենալով՝ ս. Գրիգոր Լուսաւորիչն ասում է, որ Աստուծոյ Որդին «էջ ի ծառայութիւն, զի Իւրով Մարմնովն լցցէ և կատարեցէ զամենայն չափս կարգացն հանդիսի արդարութեանցն, զի միանգամայն բարձցէ զկարիս տկարութեան մարմնոյ մեղացն և միանգամայն ինքն ինքեան քահանայացի Հօր Իւրոմ և միայն ինքեամբ հաճեցէ մատուցէ զինքն պատարագ հաշտութեան Հօր Իւրոմ և նովին պատարագան մատուցէ ընդ նմին զհաւատսն խոստովանութեան մերոյ»²⁰: Անելի յատակելով այս միտքը՝ Խոսրով Անձեւացին ժամակարգութեան մեկնութեան մէջ գրում է. «Յիշեցո՛ւք զՏեառն մերոյ մարդասիրութիւնն, որ, Աստուծոյ զոլով Որդի... Իւրով մարմնովն կրեաց զչարչարանս խաչին... Ինքն Քահանայապետ և ինքն Պատարագ ի նմա գոլով»²¹: Քրիստոսի փրկագործութեան այս խորհուրդն է ընկած առհասարակ Արեւելաքրիստոնէական պատարագի հիմքում²²:

Սակայն Քրիստոս ոչ միայն ուսուցանում և նուիրագործում է, այլե՛ թագաւորում: Քրիստոսի թագաւորական պաշտօնավարութիւնը սկսում է Նրա հրաշափառ Յարութեամբ: Համաձայն մարգարէութեան՝ Նրա թագաւորութիւնը յաիտեանական է [տե՛ս Դան. Բ 44]: «Թագաւորութեան Նորա

վախճան մի՛ լիցի» [Ղուկ. Ա 33].- վաւերացնում է Աւետարանը: Քրիստոս իր արքայական զօրութեամբ աւերում է դժոխքը, խորտակում խաւարի իշխանութիւնը, ազատում Իրեն յուսացող հոգիներին²³: Նրա թագաւորական իշխանութեան անվերապահ գործադրումով են բոլոր ժամանակների հանգուցեայ հոգիները ձերբազատում աղամական անէծքից: Քրիստոսի թագաւորութիւնը չի ճանաչում ո՛չ տարածք, ո՛չ ժամանակ: Աստուծոյ թագաւորութեան մէջ իսպառ վերանում է հոգեւորի և նիւթականի հակասութիւնը: Նրանց յարաբերութիւնը վերածում է լուսէ մի ներդաշնակութեան²⁴, քանզի Քրիստոս, իբրև Թագաւոր թագաւորաց, Տէր տէրաց, իր մէջ լիովին միաւորում է աստուածութիւնն ու մարդկութիւնը: Այս մատնանշելով՝ Մամբրէ Վերծանողը նկատում է. «Թագաւորն Յիսուս, որ թագաւորէ ըստ արարչական զօրութեանն երկնի և երկրի, Թագաւոր է ըստ մարմնոյ, զոր ընդ արարչական բնութեան միացոյց»²⁵: Քրիստոսի տնօրինական գործունեութեան տեսական բնութագրումից՝ փրկաբանութիւնից են սնում տաղերի ներշնչեալ հատուածները, որոնցում արծարծում է Հօր և Որդու անդրանցական, միանշտօրինական յարաբերութեան բնոյթը.

Որ յառաջ քան զյաիտեանս, անժամանակ ծնեալ ի Հօրէ, Անճառելի Բա՛նդ Աստուած, որով եղ են երկինք և երկիր, Օրհնենք զ-Քեզ, Աստուա՛ծ հարցն մերոց...²⁶

Էն՝ ի միշտ է՛ն անեղապէս ծնունդ,
Ծածկեալն յանքնին ծոցոյ,
Ծագեալ ի Հարէ լուսոյ՝ աշխարհի լոյս²⁷:

Է՛ն էին անէին
Եղանի էակ եղելի անեղիցն աներբից.
Յաիտեան անհաս իմանի անկէտ այժմուս հասու.
Մոցածագենի ծագումն ծիր մշտածաւալ անփոխ²⁸:

Փրկչի ծնունդով սկսուող տնօրինական գործունեութեան նկարագրութիւնն է պարունակուած հետեւեալ հատուածներում.

18 ս. Գրիգոր Տաթեացի, «Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցոյն քաջ հոնետորի աշխատասիրեալ է լուծումն Պարապմանց երգոյն կիրոյի», Կ. Պոլիս, 1717, էջ 651

19 Տե՛ս «Գիրք, որ կոչի Ոսկիփորիկ՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեացոյ», Կ. Պոլիս, 1746, էջ 194-195:

20 Ազարանգեղոս, էջ 302

21 Հրահանգ, էջ 205

22 Տե՛ս М. Живов, "Мистагогия Максима Исповедника и развитие византийской теории образа", "Художественный язык Средневековья" (сбор. статей), Москва, 1982, с. 108-127:

23 Տե՛ս Ա. Տէր-Միքելեան, նշ. աշխ., էջ 195:

24 Հմմտ. ս. Եղիշէի մատենագրութիւնը, էջ 288:

25 «Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի, Դաւիթ Անգաղթի մատենագրութիւնը», էջ 69

26 Կանոն Երկրորդ կիրակեի Աղոյհացից, Շարական, էջ 128

27 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր և գանձեր», էջ 103

28 նոյն տեղում, էջ 108

Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար
Եւ մարմնացար ի սուրբ Կուսէն,
Զի վերստին նորոգեցես զապականեալն Ադամ:
Դո՛ւ, Աստուած, ի յերկրի երեւցար
Եւ ընդ մարդկան շրջեցար
Եւ փրկեցեր զտիեզերս յանիծիցն Ադամայ:

Տնօրհնեցաւ յարգանդի Կուսին իսկակից Հօր եւ Սուրբ Հոգոյն
Բանն՝ առաքեալ ի Հօրէ յաղագս նախաստեղծ մարդոյն՝
Բառնալով զյանցանս:

Ծնաւ ծնեալն ի Հաւրէ,
Զմեզ ազատեաց յանիծից,
Կեանք ի կենաց յայտնեցաւ
Մեզ կեցուցիչ եւ փրկիչ²⁹:

Միակն ի Միոյն յանսկիզբն է՛ն անեղ՝
Ծնեալ նոյնաբար անժամանակ Որդին:
Որդին Անեղին եղելոց էակ ընդ Հաւր՝
Հոգով ներգործեալ զարարածոց գոյակս³⁰:

Ներպարունակեալ խորհուրդ լուսոյն ի հրեղինաց
Այսար, ի յերկրի յայտնեալ, ցուցաւ հող եղինացս:
Էական Բանին բնութիւն մարմնով պարածածկեալն
Այսար ի թաքար արտափայլեալ պայծառ ծագմամբ³¹:

Ծարականներում եւ տաղերում իրենց արժանի արտացոլումն են գտել
Քրիստոսի տնօրհնական գործունէութեան երկու կարեւորագոյն ոլորտները՝
քահանայապետութիւնն ու թագաւորութիւնը: Ահա դրանց բնորոշումը
պարունակող առաւել ներկայանալի հատուածներից մի քանիսը.

Սարսեցին սանդարամետք ի յաւանդելն առ Հայրն զհոգիդ,
Որ ի դժոխս իջեր ներքին՝
Ի բանտ մահու եւ խաւարին,
Կապեալ զիշխանն մահածին՝
Հաներ զհոգիսն, որ ի բանտին,

29 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 46-47

30 նոյն տեղում, էջ 184

31 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 155

Եւ զիս հանցես, Տէ՛ր, ընդ նոսին՝
Բանտէ մեղաց աղչամղչին³²:

Արարիչդ արարածոց Քրիստո՛ս՝ այսօր ի խաչին բեւեռեալ,
Եւ զինատրն, գեղարդեամբն յարձակեալ, զկող Քո խոցեաց,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց:
Կենդանիդ յաիտենից Քրիստոս, այսօր ի գերեզմանի եղար,
Եւ պահապանքն պահէին զգուշութեամբ զգերեզման Քո,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց,
Յարեար ի մեռելոց, Քրիստոս, այսօր՝ զդժոխս աւերեալ,
Եւ կենդանութիւն պարգեւեցեր արարածոց Քոյով Յարու-
թեամբդ...³³

Ահա՛, ելէ՛ք դուք ի յայրին,
Երկիր պագէ՛ք թագաւորին:
Ընդ հովիւսն երգեցէ՛ք
Եւ ընդ մոգուցն երկի՛ր պագէք.
Ահա՛ զոսկին թագաւորին,
Զխունկն՝ Աստուծոյ Հաւր միայնոյ³⁴:

Մշմարիտ Մելքիսեդեկ՝ անմայրն յառաջ,
Այսար անհայր ծնանի:
Ծննդեամբն, որ ի Կուսէն,
Զարե՛նս բնութեան եղոյծ զծնելոց³⁵:

6. ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Լինելով Աստուածութեան Անձերից մէկը՝ Աստուծոյ Հոգին պատշա-
ճօրէն Սուրբ ստորոգելին է կրում, որով Նա տարբերում է աղամորդիների
հոգիներից: Սուրբ Հոգու գործունէութեան նպատակն Աստուծոյ արքա-
յութեան ստեղծումն է իւրաքանչիւր անհատի մէջ եւ սրա շնորհիւ նրա
վերածումն է Աստուծոյ տաճարի: Ուրեմն, Սուրբ Հոգու անձնատրական
գործունէութեան տարածքն անհատ եկեղեցին (հաւատացեալը) եւ հաւա-
քական Եկեղեցին (հաւատացեալների խումբն) է: Իր ներկայութեամբ Նա
արդիւնատրում է նրանց գործունէութիւնը: Նա աստուածային ծրագրի

32 [Երգ տեսան Ներսիսի հայոց կաթողիկոսի՝ ասացեալ յաղագս Մեծի Որբաբուն...],
Ծարական, էջ 272

33 [Կանոն Աշխարհամատրան կիրակեղին], Ծարական, էջ 338

34 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 96

35 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 28-29

իմանենու գործադրողն ու Քրիստոսի միջոցով Աստուծոյ եւ մարդու յարաբերութիւնը կարգաւորողն է: Սուրբ Հոգու գործունէութեամ այս բնոյթը լաւագոյնս մեկնաբանում է Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս. «Եթէ սիրէք զիս, զպատուիրանս Իմ պահեւեցիք: Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ Մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեացի ի յափտեամ: ԶՀոգին ճշմարտութեան, զՈր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ո՛չ տեսանէ զՆա եւ ո՛չ ճանաչէ զՆա: Բայց դուք ճանաչէք զՆա, զի առ ձեզ բնակեացի եւ ընդ ձեզ եղիցի» [Թովհ. ԺԴ 15-17]: Թետոյ աւելացնում է. «Ջայս խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզ եմ: Իսկ Մխիթարիչն՝ Հոգին Սուրբ, զՈր առաքեացէ Հայր յանուն Իմ, Նա ուսուցանէ ձեզ զամենայն եւ յիշեցուցէ զամենայն, զոր ինչ ասացի ձեզ» [Թովհ. ԺԴ 25-26]: Քրիստոսի այս խօսքերի մէջ դրսևորում է բնոյթով նոյնական Որդու եւ Հոգու անձնատրական տարբերութիւնը, որ պայմանաւորում է Հօր նկատմամբ Նրանց փոխադարձ յարաբերակցութեամբ. ինչպէս Հոգին, այնպէս էլ Որդին մխիթարիչ է, սակայն Հոգին առաքում է յանուն Որդու, որպէսզի վկայի Նրա մասին: Հոգին տարբերում է նաեւ Հօրից, սակայն Նրա հետ միատրում է Իրեմ յատուկ բխման յարաբերութեամբ, ի տարբերութիւն Որդու ծնունդով յատկորոշուող յարաբերութեան: Աւետարանում Որդին եւ Հոգին մեզ ներկայանում են որպէս աշխարհի առաքում երկու Աստուածային Անձեր: Նրանից Առաջինն առաքում է, որպէսզի միատրուի մեր բնութեանը եւ առողջացնի այն, իսկ Երկրորդը՝ որպէսզի վերակենդանացնի մեր անձնական ազատութիւնը: Այս իրողութեամբ հանդերձ՝ Որդին եւ Հոգին (մերձ լինելով Հօրը) անդրանցական յարաբերութեան մէջ են աշխարհի նկատմամբ³⁶: Աստուածաբանական այս կանխադրոյթներն են ընկած Հայ Եկեղեցու Հաւատոյ հանգանակի հիմքում. «Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յԱնեղն եւ ի Կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն»: «Անեղ եւ կատարեալ զՆա դաւանեմք,- ասում է ս. Ներսէս Լամբրոնացին,- անեղ վասն զի ի բնութենէ Հօր բոլխումն անձառելի... եւ որ անեղ է, յայտ է, զի արարիչ եղելոց է, վասն որոյ արարչակից Հօր եւ Որդոյ յաստուածայինք...»³⁷: Հօր, Որդու եւ Հոգու այս յարաբերութիւնն է պարզաբանում Սարգիս Ծնորհային Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ. «Թէպէտ անձնատրութեամբ որոշեալ են Որդի եւ Հոգի ի Հօրէ, սակայն աստուածութեամբն ոչ բաժանին եւ ո՛չ բնութեամբ եւ ո՛չ էութեամբ»³⁸: Բնութեամբ լինելով

36 Տե՛ս Բ. Լոսկան, ԱԶ. աշխ., էջ 138:
 37 Տե՛ս Հրահանգ, էջ 10-11Ա: Սուրբ Հոգու՝ Հօրից բխելու մասին հանգամանակից տե՛ս «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեացոյն» (–Գիրք հարցմանց), Կ. Պոլիս, 1729, էջ 62-66. նաե՛ւ Բ. Բոլոտոս, «К вопросу о Filioque», Санкт-Петербург, 1914:
 38 Հրահանգ, էջ 153

նոյնական՝ Սուրբ Երրորդութեան Անձերը հաւասար են Իրենց վայելուչ պատուով. «Խոստովանիմք եւ դաւանեմք, պաշտեմք եւ երկրպագեմք զզուգափառ միութիւն Ամենասուրբ Երրորդութեան՝ Աստուածութիւն անձառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատի...»³⁹: Բխելով Հօրից՝ Նա չի դադարում Աստուած լինելուց. «Ջի Հայր ծնաւ զՈրդի եւ ի ծնանիւն ոչ փոխեցաւ ի բնութենէն եւ ոչ անկա յԱստուածութենէն: Նմանապէս եւ Հոգին Սուրբ, որ ի Հօրէ ելանէ, որոշեալ անձնատրութեամբ եւ ոչ՝ որոշեալ բնութեամբ կամ Աստուածութեամբ»⁴⁰: Աստուծոյ Միածին Որդին Սուրբ Հոգու ներգործութեամբ է աշխարհ գալիս՝ մաքրելով Տիրամօր արգանդը Սուրբ Հոգու օրհնեալ ներկայութեամբ: Սուրբ Հոգու այդ ներկայութեամբ է օծում Քրիստոս մկրտութեան պահին:

Սուրբ Հոգու մասնատր ֆունկցիան, Նրա իմանենու գործունէութիւնը շնորհաբաշխութիւնն է: Հայ եւ ոչ միայն հայ վաղ միջնադարեան աստուածաբանութեան մէջ ներկայացում են Սուրբ Հոգու 7 եւ 9 շնորհներ: Սուրբ Հոգու 7 շնորհներն են իմաստութիւնը, բանականութիւնը, խորհրդազգածութիւնը, հզօրութիւնը, գիտութիւնը, բարեպաշտութիւնը, աստուածավայելութիւնը: Թեոփիլոսը Ա. Կորնթ. ԺԲ 4-11 տեղիքի վրայ՝ հայ աստուածաբանները յայտանշում են Սուրբ Հոգու 9 շնորհները՝ հետեւեալ եռակարգմամբ⁴¹. ա) վարդապետական, որի մէջ մտնում են իմաստութիւնը, ճանաչողութիւնը եւ հոգիների ընտրութիւնը, բ) ավետարանչական՝ հաւատքը, բժշկութիւնը, հրաշագործութիւնը, գ) հոգեկրական՝ մարգարէութիւնը, լեզուախօսութիւնը, թարգմանութիւնը: Ինչպէս տեսնում ենք, Սուրբ Հոգու շնորհները բազմաբնոյթ ու բազմարժանեղակ են, սակայն նրանց նպատակը մէկ է՝ մարդ-անհատի եկեղեցագործումն ու փրկութիւնը: Սուրբ Հոգու բնոյթի, ներգործութեան վերաբերեալ աստուածաբանական այս խորհրդածութիւնների արձագանքն են շարականների եւ տաղերի հետեւեալ հաստատումները.

Որ էակիցդ ես ընդ Հօր եւ փառակից՝ Միածնիդ, Բաշխող պարգեաց եւ տուող ողորմութեան, ԶՔեզ բարեբանեմք, Սո՛ւրբ Հոգիդ ճշմարիտ⁴²:

Ի Հարե՛ բոլխո՛ւմն անպատ, Որդոյ փառակից Հոգի՛ Աստուծոյ, Ի ջուրց վերաստեղծի՛ կենդանեաց

39 Գրիգոր Նարեկացի, «Մատենան ողբերգութեան», Երեւան, 1985, էջ 386 (Բան ԼԴ, Գ):
 40 Հրահանգ, էջ 139
 41 Տե՛ս Ա. Տէր-Միքելեան, ԱԶ. աշխ., էջ 243:
 42 [Կանոն Չորրորդ Կիրակե՛ի Աղոթացից], Օտարական, էջ 175

Զգալեաց յառաջնումն եւ իմանալեաց յերկրորդումն,
Առ որ պաղատիմք հայցմամբ մաղթանաց
Ժողովելալքս առաջի Քո՝
Հեղուլ առատապէս զշնորհաց Քոց զանազանութիւն
Ի յիղս այս սրբութեան,
Ըստ էակցի Քո մարդեղութեան ի մեզ նկարեալ
ՋՀոգի իմաստութեան եւ հանճարոյ,
ՋՀոգի խորհրդոյ եւ զարութեան,
ՋՀոգի գիտութեան եւ աստուածաշտութեան,
ՋՀոգի երկիրի Աստուծոյ եւ որդեգրութեան,
Լնուլ սովաւ որոշմեցելոցն եւթնարփեան շնորհի Քո
առատութեամբ՝
Բարեխաւսութեամբ մաքրեալ հոգոց Քոց բնակութեան...⁴³

Մտազայթ անճառ լուսոյ անքննելի՝ տէրութիւն,
Յառաջագոյն հրաշացուցեր զտեսողութիւն մարգարէիցն՝
Ի շառնելով ի ստորինս աստուածային տնօրէնութեամբ:
Որք զտաճար հաւատոյ հիմնեցուցին շնորհօք Սուրբ Հոգոյն,
Յոր եմուտ Բանն Աստուած եօթնարփեան ճառագայթիք...⁴⁴

Իսկ ս. Գրիգոր Նարեկացու՝ Սուրբ Հոգու զալստեանը նուիրում տա-
ղում խօսում է ոչ միայն Սուրբ Հոգու եօթնարփի շնորհների, այլեւ՝ այդ
շնորհներով եկեղեցագործելու, ադամորդուն Աստուծոյ տաճար դարձնելու
մասին.

Յանկարծանչեաց հայրաշարժ բոլորումն
Հրահրավտակ բոցաշաւիղ եռանդն, որոյ դրանդն ի յերկնից
Հողմանչեաց բոց ի բոցատիպ խուռնամանուած լեզուացն:
Ի ձայն բիրակերպ՝ օղինատիպ լրումն,
Աւետաքարոզ տրտմականաց դասուց,
Պետրուեան երամ հրաւիրողակ բարեաց:
Հրով մաքրողին վեր առաքեմք
Իննաբար երգ ի նա մէտ՝
Եւթնաղի շնորհաց Հոգոյն Սրբոյ:
Հոգի Հօր, ելումն նոյնատիպ դիմաց,
Հոգի Աստուծոյ,

⁴³ Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ զանձեր», էջ 327
⁴⁴ [Կանոն սրբոց Մարգարէից], Օտրական, էջ 523

Հոգի զօրութեան,
Հոգի հեզութեան,
Հոգի գիտութեան, իմաստութեան,
Հոգի խորհրդոյ եւ հանճարոյ:
Մի՛ իմոյ եւ զիս մի՛ դատապարտեր,
ՋՔո ձեռին շինեալ տաճարս. յի՛ս օթեանեա,
Քո կամելդ գործ է կատարեալ:
Կամեցո՛ղ բարեաց, բարեգործեա՛ յիս՝ ի բազմամեղս,
Երգել երգենից պատիւ միշտ էականիդ՝ կամաւ Քո,
Եւ զիս վերանորոգեա՛ ի փառս⁴⁵:

7. ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Հոգու ներգործման արդիւնը ոչ միայն անհատ մարդու տաճա-
րացումն է, այլեւ՝ նման մարդկանցից կազմուած հաւատացեալների խմբի
տաճարացումը, որ ոչ այլ բան է, քան Եկեղեցի: Սուրբ Հոգու օթեան դար-
ձած Եկեղեցին Աստուծոյ արքայութեան տեղավայրն է, ուր մարդ, հաղոր-
դակցուելով Աստուծոյ հետ, վայելում է Տիրոջ արքայութիւնը: Ուրեմն, մար-
դու եկեղեցագործումից է ծնում երկրատր Եկեղեցին, որ երկնատր Եկե-
ղեցու պատկերն է: «Եւ ինչպէս որ Աստուծոյ արքայութիւնն իրականանում
է հաւատացեալ անհատի սրտում ու Եկեղեցի դարձնում նրան, - նկատում է
Ա. Տէր-Միքելեանը, - եւ ապա ճշմարիտ հաւատացեալի վրայ հիմնում է
իրաքանչիւր Եկեղեցին՝ որպէս իրաքանչիւր առաքեալի եւ անտարանչի
վրայ, այնպէս էլ Աստուծոյ արքայութիւնը հաստատում է երկրում՝ նախ
Եկեղեցու մէջ իրագործուելով, եւ ապա իրաքանչիւր Եկեղեցու վրայ հաս-
տատում է հանդերձեալ փառաց արքայութիւնը»⁴⁶: Այսպիսով, Եկեղեցին
ոչ միայն հաւատացեալների հանդիպավայրը կամ հաւաքատեղին է, այլեւ,
որ առանել կարեւոր է, հոգեւոր մէկտեղումը Քրիստոսով եւ Քրիստոսի մէջ,
երբ նրանք, Սուրբ Հոգով լցուած, Քրիստոսը կրելով իրենց մէջ, դառնում են
մէկ սիրտ եւ մէկ հոգի՝ իրականացնելով Աստուծոյ արքայութեան տիեզե-
րական ծրագիրը, մի ծրագիր, որ չի ենթարկուած ժամանակի եւ տարածքի
սահմանափակումներին: Ի մտի ունենալով այս իրողութիւնը՝ Սարգիս
Շնորհալին Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ գրում է. «Յամենայն
ազգաց եւ լեզուաց, որք աշակերտեցան Աւետարանին եւ հաւատուք ի
Վէմն մերձեցան եւ մարդասիրութեամբն ի նոյն կենդանութիւն փոխեցան,
յամենեցունց մի տաճար հոգեւոր եւ մի Եկեղեցի շինեցաւ»⁴⁷: Բոլոր քրիս-

⁴⁵ Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ զանձեր», էջ 111

⁴⁶ Ա. Տէր-Միքելեան, նշլ աշխ., էջ 247

⁴⁷ Սարգիս Շնորհալի, «Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց», Կ. Պոլիս, 1826, էջ 242

տոնեաները Քրիստոսի մէկ Եկեղեցի են կազմում: Սակայն նրանք սուկ կրատրական անդամը չեն Եկեղեցու. քրիստոնեայ հաւատացեալը, որ Աստուծոյ տաճարն է, միաժամանակ անդամն է զինուորեալ Եկեղեցու, որ մարտնչում է սատանայի դէմ: Այս կապակցութեամբ աւելի քան յատկանշական է Պօղոս առաքեալի կոչը՝ ուղղուած հաւատացեալներին. «Ջօրացարո՛ւք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա: Եւ զգեցարո՛ւք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Ջի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այտորիկ, ընդ այսս չարութեան, որ ի ներքոյ երկնից: Վասն այտորիկ առէ՛ք զսպառազինութիւնն Աստուծոյ... առէ՛ք զվահանն հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մոխս չարին շիջուցանել: Եւ առէ՛ք զսաղաւարտն փրկութեան եւ զսուեք Հոգոյն, որ է բանն Աստուծոյ» [Եփես. Զ 10-17]:

Բայց Եկեղեցի են կազմում ոչ միայն ողջերը, այլև՝ Քրիստոսով անջեցեալները: Պատարագի պահին նրանք եւս մասնակցում են կատարուող խորհրդին: Սրանք կազմում են Յաղթող Եկեղեցին: Այս մատնանշելով երբայեցիներին յղած թղթում՝ առաքեալը նկատում է. «Մատուցեալ էք ի Սիովն լեռան եւ ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յերուսաղէմ յերկինս, եւ ի բիրաւոր բանակս հրեշտակաց եւ յԵկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս եւ առ դատարն ամենեցուն Աստուած եւ յօգիս արդարոց կատարելոց» [Եբր. ԺԲ 22-24]:

Սուրբ Հոգու շնորհներով համալրուած Եկեղեցին իր Հիմնադրի՝ Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած յարաբերութեան բնոյթով չորս էական նշաններ ունի՝ միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն, առաքելականութիւն. ա) Եկեղեցին մէկ եւ միակ է, նրա գլուխը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, մէկ եւ միակն է այն առաջնորդող Սուրբ Հոգին: Ուրեմն, Եկեղեցին ունի միաւորող զօրութիւն: Անդրադառնալով այս իրողութեանը՝ ս. Թովհան Օձնեցի հայրապետը գրում է. «Այն աշտարակ զմի լեզունն ի բազումս բաժանեաց եւ զչար միաբանութիւնն յախտեանից քակեաց ի միմեանց. եւ այս աշտարակ զքակեալսն եւ զանջատեալսն ած ի մի՝ համաշունչ եւ միախորհուրդս զամենեսեան առնելով ի մի յոյս կոչմանն Քրիստոսի»⁴⁸. բ) Եկեղեցին սուրբ է, քանզի սուրբ է նրա գլուխը՝ Տէր Յիսուս Քրիստոս: Ինչպէս Տէր Յիսուս Քրիստոս, այնպէս էլ ս. Եկեղեցին, իր սրբագործութեամբ կամ սրբարար ներգործմամբ նորոգում է հաւատացեալին՝ նրան արժանի դարձնելով արքայութեան. գ) Եկեղեցին ընդհանրական կամ կաթողիկէ կազմակերպութիւն է, քանզի նրա գործունէութիւնը լայն ընդգրկում ունի, իսկ նրա ազդեցութեան ոլորտներն անասմանափակ

են: Նա կոչուած է Աստուծոյ արքայութիւնը տարածել եւ Սուրբ Հոգու ներգործմամբ իրականացնել աշխարհի անտարանագործումն ու տաճարացումը: Եւ այստեղ արդէն ոչ մի խորութիւն չի կարող լինել. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, նկատում է Պօղոս առաքեալը.՝ զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր ո՛չ հրէի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ իգի, զի ամենքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղատ. Գ 27-28]. դ) Եկեղեցին առաքելական է, քանզի հիմնադրուած է Քրիստոսի առաքելների կողմից, որոնք, Սուրբ Հոգով լցուած, Քրիստոսի յուր բերեցին ազգերին, ժողովուրդներին: Նրանք որպէս սիմեր հիմնուած են Քրիստոսի՝ որպէս ամրամուր վեմի վրայ: Առաքելները Սուրբ Հոգու ասանդութեան կրողներն ու հաղորդիչներն են: Նրանք այդ ասանդութիւնը հաղորդում են Եկեղեցուն, որը, կրելով այն, ձեռք է բերում ե՛ւ միութիւն, ե՛ւ ընդհանրականութիւն, ե՛ւ սրբութիւն: Եկեղեցաբանական այս գաղափարի հաստատագրումն են ս. Եղիշէի՝ Տիրոջ թաղմանը նուիրուած ճառի հետեւեալ տողերը. «Ժննեցաւ (Եկեղեցին) ի վերայ Պետրոսի հաւատոցն ոչ միայն ի Հոռն, այլ եւ՝ ընդ ամենայն քաղաքս եւ գեօղս մեծամեծս մինչեւ ցփոքունս՝ նոյն հաւատք եւ նոյն հիմն եւ նոյն հաստատութիւն, քանզի մի է Տէր, եւ մի՝ մկրտութիւն... Եւ որպէս Պետրոս ի Հոռն հաստատեաց զԵկեղեցին, նոյնպէս եւ այլ առաքելացն՝ ըստ իրաքանջիր վնեակեցելում աշխարհացն»⁴⁹: Հոգեւոր Եկեղեցին ունի իր միութեան ընդհանրական կերպարանքը, որ Եկեղեցուն կիրառուող սրբազան պատկերները, առարկաներն ու եկեղեցական ճարտարապետութիւնն են իրենց համաքրիստոնէական խորհրդանշաններով: «Ոչինչ անվայելուչ եւ անսրբազան է ունել (խորհրդոց Եկեղեցւոյ) զգալի պատկերս,՝ ասում է ս. Դիոնեսիոս Արեոպագոսին,՝ այլ աստուածարժան տեսութեան է՝ օրինակս կերպարացուցանել բնատրականօք եւ մարդկավայելուչ պատկերօք»⁵⁰: Ս. Գրիգոր Լուսաւորչի Տեսիլքում ասում է. «Մեծ եւ բարձր է պատիւ կաթողիկէ Եկեղեցւոյ, քան զամենայն սրբոցն. իսկ կամարքն, որ ի սեանց անտի ի միմեանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան կաթողիկէ Եկեղեցւոյ: Իսկ խորանն ի վերայ ունի զօրինակ վերնոյ Քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեան երկնից»⁵¹: Եկեղեցաբանական այս խորհրդածութիւնների վրայ են հիմնուած տաղերի ներքերեքեալ հատուածները.

**ՉԱստուած ընդ մարդկան ընտանեցուցիչ.
Համանունակ ազանց կուտելոց՝ յոյս քաւութեան պարտաւորելոց,**

48 «Թովհաննու Իմաստասիրի Ամենցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 136

49 Հրահանգ, էջ 291
50 նոյն տեղում, էջ 291-292
51 Ագաթանգեղոս, էջ 389

Նախացուցակ համարձակելոց,
Կատարելոց անձանց խմբարարն.
Ահա ընկալցիս զաղերս աղաթից՝ յարմարեալ խնկաւք
Ցայս յարկ նուիրեալ, սո՛րք Եկեղեցի, աղաչեմք⁵²:

Քառանկիւն տաճար՝ գերահրաշ ծագմամբ,
Զքափանցիկ լուսով ճառագայթեալ
Ի մէջ տիեզերաց այսաւր, սո՛րք Եկեղեցի.
Աւրինակ տապանակին, զոր Մովսէս կազմէր
Ի մէջ իսրայէլագունդ ժողովոյն՝
Դնելով ի նմա զբոլորվառն ոսկի շուրջանափայլ խոյակաւք...⁵³

Եկեղեցի-երկինք աստուածաբանական զուգահեռից են ծնուել ւ. Ներսէս Ծնորհալու՝ Եկեղեցուն նուիրուած տաղի հետեւեալ քառեակները.

Բարունիքն քեւ պարծին
Սրբոց սրբասնեալ անձինք,
Որ ես գերագոյն երկնից՝
Նորահրաշ յերկրի յայտնեալ⁵⁴:

Առաքելական հիմն,
Մարգարէից քարոզ,
Երկնաման երկինք
Ի քեզ հաստատեալ սեղան⁵⁵:

Հայ եւ ոչ միայն հայ միջնադարի եկեղեցաբանութեան մէջ եկեղեցու ճարտարապետական մանրամասների լայնօրէն յայտնի խորհրդանշական մեկնաբանութիւններից է սնուել հեղինակը հետեւեալ տողերում.

Եղեալ ի հիմունս քո քարինք պատուականք՝ յասպիս, կարկեհան՝
Զդասս առաքելոցն եւ մարգարէից.
Քաղաք Աստուծոյ ուրախացեալ գնացիւք գետոց, ո՛վ սուրբ
Եկեղեցի:
Միւնս եաւթն կանգնեալ ի քեզ ճարտարապետն՝
Զեաւթնարփեալ շնորհն պէս-պէս պարգեաւք Հոգոյն

52 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 168
53 նոյն տեղում, էջ 186
54 Ներսէս Ծնորհալու, «Տաղեր եւ գանձեր», էջ 177
55 նոյն տեղում, էջ 173

բաժանմամբ.

Տուն իմաստութեան, յորում խառնի գինին ուրախարար, ո՛վ սուրբ
Եկեղեցի:

Ի նոյն պարիսպ քո շինեալ աշտարակ ոսկեղէնս.

Պատուար արծաթի, դրունք երկոտասան մի մի մարգարտեայ.
Մայրաքաղաք Վերինդ Երուսաղէմ, ո՛վ սուրբ Եկեղեցի⁵⁶:

8. ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱՄԻՆ

Եկեղեցու խորհուրդն անխզելիօրէն կապուած է Տիրամօր անուան հետ: Տիրամայրը Եկեղեցու նախատիպն է: Ինչպէս Եկեղեցու վերածուած հաւատացեալն է իր մէջ կրում Քրիստոսին, այնպէս էլ Տիրամայրը, որպէս սրբազնասուրբ Եկեղեցի, իր մէջ կրում է Աստուածորդուն: Տիրամայր-Եկեղեցի աստուածաբանական զուգահեռն է ընկած, մասնատրաբար, ս. Գրիգոր Նարեկացու՝ Աստուածածնին նուիրուած ներքողի տեսական դրոյթներից մէկի հիմքում: «Մարդեղացած Բանն Իր պատկերին ձեւած է Մարիամն ու Եկեղեցին՝ Իր փրկարար շնորհով,- այս կապակցութեամբ մեկնաբանում է Թ. Տասնապետեանը:- Անոնք կը վերաբերին Քրիստոսի եւ կ'առնչուին իրարու: Անոնց մտանութիւնները հոսկէ կը բխին: Երբ մեծացուցէն լեցուց Զաքարիայի տունը, Մարիամ Եկեղեցիին սկզբունքն ու տիպն է (տե՛ս գլ. ԺԲ)... Այնուհետեւ Մարիամ երեւան կու գայ իբր «պսակ պիտանական Եկեղեցույ գեղեցկութեան». ան Եկեղեցույ մէկ հոյակապ իրագործումն է...»⁵⁷: Սակայն Կր.յան, ըստ Նարեկացու, նաեւ Եկեղեցու մի սուսկական անդամն է: Եւ, այնուհանդերձ, նա աւելի քան անդամ է. «Մարիամ մայր է Եկեղեցիի նկատմամբ»: Եւ իրապէս, ներքողի ի՞նչ գլուխը Տիրամօրը ներկայացնում է որպէս «մայր հիմնադրութեան Եկեղեցույ»: Ուրեմն, պատահական չէ, որ Աղօթամատեանի ՀԵ բանում Եկեղեցին Աստուածածնի պատկերն է համարում⁵⁸: Ինչպէս Բանն է մարդեղանում Տիրամօր մէջ եւ մաս կազմում Տիրամօր՝ անդամակցելով նրան, այնպէս էլ հաւատացեալն է ոգեղինանում Եկեղեցու մէջ եւ մաս կազմում Եկեղեցուն՝ անդամակցելով նրան: Երկու դէպքում էլ ի յայտ է գալիս որդիական յարաբերութիւն, որ այս պարագային յարաբերութիւն է ոչ միայն երկնատր Հօր նկատմամբ, այլեւ՝ Մարիամի՝ Տիրոջ երկրատր

56 Նոյն տեղում, էջ 170: Պետք է նկատել, որ եթէ «Եկեղեցի-Մայրաքաղաք-Վերին Երուսաղէմ» զուգահեռը գալիս է եկեղեցաբանական գրականութիւնից (տե՛ս Թ. Քեռսեան, «Յովհանն Մայրագոյնեցին եւ հայ միջնադարեան խորհրդանշանի աստուածաբանութեան մի քանի հարցեր», Ս. Էջմիածին, 1986, Ա, էջ 50-62), ապա պատկերի միս մանրամասները Յայտ. ԻԱ 17-18-ից:
57 Թ. Տասնապետեան, «Գ. Նարեկացի, «Ներքող Աստուածածնին», «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 141-142
58 Տե՛ս նոյն տեղում, էջ 142:

Վօր եւ քրիստոնէաների հոգեւոր Վօր Ակատմամբ: Ուրեմն, Աստուածածնի միջոցով է իրականացում հաւատացեալի եւ Աստուածութեան հոգեւոր փոխարարբերութիւնը: Սա ի յայտ է բերում Աստուածածին-Եկեղեցու շարունակական գործունէութեան իմանելու մակարդակը: Սակայն այս մակարդակն ինքնածին չէ. այն պայմանաւորուած է անդրանցական խորախոր իրականութեամբ, այսինքն՝ նրանով, որ Տիրամայրն Աստուածածինն է: Այս միտքը կարմիր թելի նման անցնում է Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաքանութեան միջով: Տիրամօր՝ **Աստուածածին, Աստուածընկալ լինելը**, որ ըստինքեան պարզ ու հասկանալի է, առանձին ուժգնութեամբ շեշտուեց Եփեսոսի տիեզերածողովի (431թ.) ժամանակ՝ ժխտելու համար Անտորականների այն պնդումը, թէ Տիրամայրը մարդածին է: **Աստուածածին** եւ **Աստուածընկալ** պատուանունների լոյսի տակ է միայն կարելի տեսնել Աստուծոյ մարդեղութեան յայտնութեանական խորքը: Իսկ այդ մարդեղութիւնն իրականութիւն է դառնում Տիրամօր աստուածային մարտութեամբ: Մարիամն այդ մայրութիւնը յանձն է առնում Աստուծոյ կամքին անվերապահօրէն ենթարկուելով («ընդունարան ընտրական կամացն անբախն»), ս. Գրիգոր Նարեկացու որակմամբ՝ «նա միւթ գործօնեայ է»: Սա մատնանիշ է անում ոչ միայն Տիրամօր՝ մարդեղութեան գործիք, այլեւ՝ **ուղղակի եւ դրական պաշման** լինելը⁵⁹: Հայ Եկեղեցու մարեմաքանութեան մէջ Մարիամի մայրութեան գաղափարը երկու հիմնական սկզբունքներով է դրսեւորում՝ աստուածաբանական եւ քնարերգական: Այսպէս՝ Նարեկացու ներքոյում գերակշռում է աստուածաբանական կողմը, իսկ Ներսէս Լամբրոնացու նշանաւոր «Ներքողեան ի վերափոխումն ամէնօրհնեայ Աստուածածինն»⁶⁰ երկում՝ քնարերգականն ու Ակարագրականը: Սակայն թէ՛ մէկ եւ թէ՛ միւս դէպքում այդ կողմերը չունեն անխառն դրսեւորում. աստուածաբանական ներքողն ազատ չէ քնարերգականութիւնից, իսկ քնարերգականը՝ աստուածաբանութիւնից: Այսպէս եւ նաեւ շարականներն ու տաղերը: Ելնելով դրանցում առկայ տուեալներից՝ Մարիամի մայրութիւնն ունի երկու գլխատր հանգրուաններ, որոնց մէջ նա ներկայանում է յացման պարագաներով եւ մայրութեան իրաւունքներով: Այս երկու իրողութիւնները վաւերացում են Բանի մարդեղութեան:

Բանի մարդեղութիւնից է սկսում փրկագործական ընթացքը: Ուրեմն, փրկագործական տնօրհնութեան «պայման» հանդիսացող Տիրամայր Աստուածածինը դառնում է գործուն մասնակիցը փրկագործութեան: Եւ իրապէս, ինչպէս Ակատում է Յովնան Դամասկացին, «**Աստուածածինն անունը (թողողկոս) լինեան կը բովանդակէ աստուածային տնտեսութեան լրի**

պատմութիւնն աշխարհի մէջ»⁶¹: Նա իր շնորհական ազդեցութեամբ վերացնում է նախամայր Եւայի վրայ ծանրացած անէծքը՝ դառնալով բոլոր **կենդանեաց** ճշմարիտ մայրը (Եւայի Կիպրացի): Աստուածածինն վերապահուած այս կարեւորագոյն առաքելութիւնն ու բացառիկ շնորհը նրան գերադաս եւն դարձնում նոյնիսկ հրեշտակների եւ քերովբէների Ակատմամբ, որոնք անկարող եւ ըստ պատշաճի գովերգել Մարիամի մայրութիւնը: Ինչպէս արդէն Ակատեցինք, դա սովորական մայրութիւն չէ, այլ՝ աշխարհը վերափոխող, տիեզերքը փրկագործող մայրութիւն:

Մարեմաքանութեան միւս կարեւորագոյն կէտը Մարիամի կուսութեան աստուածաբանական ընկալումն ու արժեւորումն է: Կ. Պոլսի տիեզերածողովի (381թ.) կողմից ընդունուած եւ Եփեսոսի տիեզերածողովում վաւերացուած ու սրբագործուած այս գաղափարը («ի Մարիամայ Կուսէն») դրսեւորուել է հայ բանաստեղծութեան մէջ նմանապէս: Այսպէս՝ ս. Գրիգոր Նարեկացու յիշեալ ներքողում Մարիամի կուսութեան այդ գաղափարը հետեւեալ բնորոշումներով է պատկերագծում՝ **պսակ ընտրութեան անփորձ գովութեան** (գլ. Դ.), **պատուար բոցանշոյլ անհուպ եւ անհաս մատուցման դժնեայ դժոխացն, պատուար ամենահրաշ ըստ Եզեկիելի, որ, աղիւեայ զմոտ քո, ճշգրտապատմմս գրեաց** (գլ. ԻԴ)⁶²: Մարիամի կուսութիւնը, սակայն, դիսկուրսի տրամաբանութեան համար պարադոքսալ կերպով կապում է հարսնութեան, ամուսնութեան հետ: Այս միտքը շեշտում է Նարեկացու «պսակ կուսութեան մարտի հարսնութեան» բնորոշումով, որ իր դաւանաբանական ենթիմաստով ուղղուած էր ընդդէմ թոնդրակեցիների, որոնք, մերժելով Եկեղեցուց ներս ամուսնութիւնը, թոյլ են տալիս «գպսակին ամուսնութեան անգոսնութիւն, զոր Տէրն ինքեան սքանչելեալք եւ մարդն Աստուածածնաւ յարգեաց եւ պատուեաց»⁶³:

Մարիամի կուսութեան հետ անխզելիօրէն կապուած է նրա սրբութիւնը: Աստուածաբանական գրականութեան մէջ այն յայտնի է **կատարսիսի տեսութիւն** անուամբ: Այդ տեսութիւնը գալիս է ս. Գրիգոր Աստուածաբանից, ըստ որի՝ Քրիստոս ծնուել է «Սուրբ Հոգիին կողմէ նախամարտուած (προκαθαρσιος) Կոյսէն՝ մարմնով եւ Հոգիով»⁶⁴: Սրբութեան, անարատ լիութեան մասին խօսող **նախամարտուած** եզրը, հակառակ իր երկդիմի բնոյթի, Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաքանութեան մէջ միանշանակ մեկնաբանութեան է արժանացել: Այնպէս՝ ս. Ներսէս Շնորհալին Մատթէոսի Աւետարանի Մեկնութեան մէջ ասում է, թէ՛ «Հոգին... մաքրեաց գկոյսն յամենայն մարմնական կրից»: Աւելի յստակելով այս միտքն իր թղթերից

59 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 125:
60 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1925, էջ 360-366, 442-462:

61 Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 128
62 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 129:
63 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 499:
64 Տե՛ս Թ. Տասնապետեան, նշ. աշխ., էջ 132:

մէկում՝ նա հաստատում է. «Կոյսն Մարիամ, յորմէ մարմին առ Քրիստոս, ի մեղանշական Ադամայ բնութենէն էր»: «Յառաջէ զայ Հոգին ի Կոյսն եւ սրբէ զնա յամենայն մարմնական ցանկութեանց»,- ասում՝ է Իգնատիոս Սեպեոնցին Դուկասի Աւետարանի իր Մեկնութեան մէջ: Աստուածաբանականացնելով անարատ յղութեան խնդիրը՝ ս. Գրիգոր Տաթեւացին գրում է. «Կոյսն Մարիամ Աստուածածին էր՝ ազատ ի մահացունէն եւ ի ներելոյն, բայց ոչ՝ ի սկզբնականէն, զոր Հոգուով Սրբով մաքրուեցաւ, ...զի զայ Հոգւոյն Սրբոյ պատճառ էր կրկին ներգործութեան, այսինքն՝ սրբութեան արմատոյ մեղաց եւ պտղաբերութեան, կուսածին զաւակին՝ ծնանիւ եւ կոյս մնալ յետ ծննդեանն»⁶⁵: Այսպիսով, նախամաքրուած եզրը կապուած է Սուրբ Հոգու ներգործելոց եւ Աստուածածնին աղանակական մեղքից մաքրագործելոց յետոյ Բանի անապական մարմնացումը նախապատրաստելու իրողութեան հետ: Աստուածային մարմնի գոյացումը Կոյսի արգանդում կատարում է Սուրբ Հոգու մասնակցութեամբ, այսինքն՝ Աստուածութեան ազդեցութեամբ⁶⁶: Բանի մարդացումից յետոյ Փրկչի տնօրինական գործունէութեանն իր գործուն մասնակցութիւնն է բերում Աստուածածինը: Դա նրա մայրական իրաւունքի անկապտելի մասն է: Այդ իրաւունքի հետ օրգանական կապի մէջ է Տիրամօր միջնորդական ֆունկցիան: Նա հաւատացեալի ցան ու ակնկալութիւնները Տիրոջը հասցնող, աղօթողի ձայնին ունկնդիր, նրա համար Տիրոջը բարեխօսող էակ է: Իր մայրական անսահման գութով եւ մեղմութեամբ նա Տիրոջ ողորմութիւնն է հայցում աղանորդու համար: Աստուածաբանական այս հիմնադրոյթների վրայ են ձեւուած ս. Մարիամ Աստուածածնին նուիրուած շարականներն ու տաղերը⁶⁷: Ահա Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաբանութեան հիմնադրոյթներն արտայայտող առաւել յատկորոշ հաստատմաներից մի քանիսը.

Այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն՝
ի զաւակէ նոցին օրհնիլ ամենայն ազանց,
Զի յարմատոյ նոցին բխեալս Կոյսն սուրբ,
Որ ծնաւ զԲանն՝ բարձող մեղաց նախահօրն.
Փա՛նս տացուք Տուողին մեզ զօրհնեալսն ի կանայս:
Այսօր բուսաւ յԱննայէ մորենին Մարիամ,

65 Տե՛ս Ք. Տասնապետեան, Աշ. աշխ., էջ 133. նաեւ՝ Գիրք հարցմանց, էջ 463:
66 Հմմտ. Հրահանգ, էջ 1, Գ-Է:

67 Գրիգոր Անապոզեցի կաթողիկոսի օրօք (1293-1307թթ.) գրուած շարականներից մէկում ասում է. «Երկու խորհուրդս սուկայիս ի քեզ տեսանի, Աստուածածին՝ յղութիւն աններմնական, ծնունդ անարատ, կուսութիւն՝ յետ ծննդեան մնալով անարատ»: Յեւնուելով յղութիւն աններմնական որակումի վրայ՝ Ք. Տասնապետեանը լատին մարեմաբանութեան ազդեցութեան որոշմ է նշանարում այնտեղ (տե՛ս Ք. Տասնապետեան, Աշ. աշխ., էջ 129, տողատակ): Մինչդեռ այդ որակումը նկատի ունի ոչ թէ Աննայի, այլ բացառապէս՝ Մարիամի յղութեան որակը:

Յոր վառեցաւ Հուրն աստուածային,
ԶՈր ետես Մովսէս զօրհնակ կուսին՝
Ի Սինա լցեալ լուսովն անմատոյց...⁶⁸

Որ մաքրեցեր Հոգիդ Սուրբ
Զսիրտ եւ զարգանդ մօր Քո Փառակցին,
Այսօր ամուլ ծնողաց նորին
Ետուր զմայր Բանին՝ զօրհնիչն Եւայի...⁶⁹

Դրա՛խտ աստուածային եւ արեւե՛լք իմանալի,
Այսօր Մարիամ հրաշագեղ՝ ծնեալ ի յԱննայէ,
Ի մայրութիւն Քո հրաւիրեալ,
Քրիստո՛ս, Որդի՛ Աստուծոյ...

Տապանա՛կ ապրեցուցիչ եւ տաղաւա՛ր արբաբամեան աստուած-
ընկալ,
Այսօր, Մարիա՛մ լուսապայծառ, միածին ծնունդ յայտնեալ ծնո-
ղաց,
Ի ծնողութիւն քո կոչեցեալ Միածին Որդի Աստուծոյ...

Անճանելի՛դ Աստուած՝ անզնական ի հրեղինաց,
Այսօր հաճեցար ի հողեղինաց՝ յայտնել թարգման
Աստուածութեան Քո զմիշտ կոյսն Մարիամ.
Աղօթիւք սորա ողորմեա՛ մեզ, Աստուած:
Անժամանակ ծոցոյ ծնո՛ւնդ Հօր էական,
Այսօր սրբեցեր յորովայնէ ժամանակաւ
Մայր ի մօրէ անճառ մարդեղութեամբ...⁷⁰

Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին՝
Ի գիրկս բառնալով զԱստուածն ամենեցուն,
Որ նստին ի քերովբէս.
Առ նա միշտ բարեխօսեա՛ կեցուցանել զմեզ⁷¹:

Նեստորի դէմ դաւանաբանական արդէն յայտնի դիրքորոշման բաց-
որոշ արձագանքն է ս. Ներսէս Ծնորհալու Ծննդեան տաղի Փոխի հետեւեալ

68 [Կանոն Ծննդեան Աստուածածնին ի ծնողաց իրոց՝ ի Յովակիմայ եւ յԱննայէ],
Ծարական, էջ 2
69 Այն տեղում, էջ 4-5
70 [Կանոն Ծննդեան սուրբ Աստուածածնին], Ծարական, էջ 9-10
71 Այն տեղում

քառեակը.

Աստուածածին դաւաճեմք,
ԶԾնեալդ Աստուած քարոզեմք.
Ընդ հրեշտակին քեզ գոչեմք,
Զուրախութիւնն աւետեմք⁷²:

Աստուածածինը տարբեր կերպարանքներով եւ խորհուրդներով է ձեր-
կայանում հիմնկտակարանային մարգարէներին եւ իմաստուններին: Դրան-
ցից իրաքանչիւրը դրսևտրում է Աստուածածնի այս կամ այն արժանիքը.

Զքեզ տեսանողքն տեսեալ,
Մովսէս՝ մորեմի ոչ կիզեալ,
Եսայիաս՝ կոյս յղացեալ,
Եզեկիէլ՝ դուռն աղիւեալ:
Լեւոն վիմածին՝ Գանիէլ,
Բլուր կնդրկի՝ Սողոմոն,
Աղբիւր կնքեալ պահողին,
Պարտէզ փակեալ տնկողին:
Նման գեղման՝ Գեղէոն,
Դաւիթ՝ իջման անձրեւոյն,
Եւ Միքիաս՝ զտեղւոյն
Ի Բեթղահէմ ծնանելոյն:
Նոյեան տապան կենարար,
Աբրահամեան տաղաւար,
Կտակագրին տապանակ,
Անճառ լուսոյն աշտանակ⁷³:

Ինչպէս բիզանդական գրականութեան մէջ, հայկականում մնանապէս
լայնօրէն կիրարկում է Տիրամօր անհարսնացեալ որակումը⁷⁴, որ աս-
տուածաբանական պարսդոքսալիզմի ամենաբնորոշ դրսևտրումներից է.

Անարա՛տ տաճար եւ առագա՛ստ լուսոյ,
Մա՛յր անհարսնացեալ,

⁷² Ներսէս Օնորհայի, «Տաղեր եւ գանձեր», էջ 22


⁷³ նոյն տեղում, էջ 23-24

⁷⁴ Հայկական եւ բիզանդական մատենագրութեան մէջ Տիրամօրը տրուած
որակումների մասին տես Ա. Գ. Դրոստ-Արզարեանի յօդուածը. "Кавказ и Визан-
тия", N 6, Ерван, 1989, с. 173-183:

Աստուածածին՝ միշտ կոյս...

Նոր քերովբէ՛ հողանիթ, աթո՛ն էից բարձողին Աստուածածին՝
սուրբ տաճար Բանին, ը՛, Հաւր, Երկինք երկնից ի յերկրի ցուցար,
ո՛վ սրբունի կոյս, Մարիամ՝ Մայր Աստուծոյ անհարսնացեալ⁷⁵:

⁷⁵ Ներսէս Օնորհայի, «Տաղեր եւ գանձեր», էջ 161, 165



ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՅՐԵՐ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ «ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄԸ»

Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատումը»¹ հայ աստուածաբանական մտքի ամենանշանակալից դրսևորումներից մեկն է, որն իր եզակի ազդեցությունն է թողել մեր հոգևոր ժառանգության սկզբնավորման եւ ձեւաորման վրայ: Ցաւօք, այն պատշաճ ուսումնասիրութեան ենթարկուած չէ: Հայագիտական շրջանակների ուշադրութիւնն աւելի սեւեռուած է եղել Ազգաթանգեղոսի անունով յայտնի պատմութեան մէջ զետեղուած «Սուրբ Գրիգորի վարդապետութեանը», որի հեղինակային պատկանելութեան հարցի շուրջ տարակարծիք վարկածներ են առաջ քաշուել:² Սակայն «Յաճախապատումն» աւելի հարուստ եւ խոր աստուածաբանական աւանդներ ունի, քան «Վարդապետութիւնը»³, ուստի նրա ուսումնասիրութիւնը ոչ միայն լոյս կսփոռի Դ-Ե դդ. մեր պատմութեան ինչ-ինչ կարեւոր խնդիրների վրայ, այլեւ էապէս կնպաստի մեր դաւանական գիտակցութեան ամրացմանը եւ հոգևոր կեանքի հաստատմանը:

Երկը բաղկացած է քսաներեք ճառերից, որոնց կցուած է Լուսավորչի յայտնի զօրատր աղօթքը: Լեզուն իւրօրինակ է, երբեմն առանձնայատուկ խթանութիւններ ունի, որոնք անխուսափելի են աստուածգիտութեան խորհրդական ճշմարտութիւնները բառային հագուստով ներկայացնելիս: Ժառերն արգասիքն են բազմերախտ հոր ճգնատրական փորձառութեան եւ վերերկրային իմաստութեան, նրանցում հայեցողական խորութիւնները, հոգևոր կեանքի ազդու

յորդրները, կանոնական խիստ գիտակցութիւնն իրենց ներդաշնակ միանաացումն են գտել:

Թարգմանաբար⁴ ներկայացնում ենք չորս ճառ՝

Ա. «Ամենասուրբ Երրորդութեան մասին»,

Բ. «Սուրբ Երրորդութեան Անձերի մասին»,

ԺԶ. «Մարտիրոսների մասին»,

ԺԹ. «Յորդորակ խոստովանական ապաշխարութեան»⁵:

Ժառերի ընտրութիւնը պայմանաւորուած է ս. Գրիգորի ժառանգութիւնն առաւել համակողմանի ներկայացնելու ցանկութեամբ. Ա եւ Բ դաւանական ճառերը զուգադրուել են ծիսական եւ ներանձնական աղերսներ ունեցող ԺԶ եւ ԺԸ ճառերի հետ: Կից ներկայացուած է նաեւ վերոյիշեալ աղօթքի թարգմանութիւնը: Մօտ ապագայում համապատասխան ուսումնասիրութեամբ լոյս կտեսնի «Յաճախապատումի» ամբողջական թարգմանութիւնը: Յուսով ենք, որ սոյն հոգեշունչ ճառերի հրապարակումով մենք առաւել կմերձատրուենք մեր քրիստոնէական ակունքների սրբազան աւանդներին:

Մեսրոպ քահանայ Արամեան

1 Երկի հեղինակային պատկանելութեան եւ թուագրման հարցերին չենք անդրադառնում թողնելով այն ապագայի քննութեանը:

2 Տե՛ս Հ. Հ. Տաշեան, «Ազգաթանգեղոս առ Գերգայ ասորի եպիսկոպոսին», Վիեննա, 1891, էջ 86. Գ. Տէր-Մկրտչեան, «Ազգաթանգեղոսի աղբիւրներից», «Արարատ», 1896, էջ 428-429. Ն. Բիզանդացի, «Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնը», Տփլիս, 1900, էջ 14. Հ. Ն. Ակիմեան, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Հանդէս ամսօրեայ», 1949, հ. 4-12, էջ 3-58. Հ. Ն. Ակիմեան, «Պատմութիւն վարդուց ս. Մաշտոց վարդապետի», «Հանդէս ամսօրեայ», 1949, հ. 4-12. Հ. Պ. Անանեան, «Վարդ Մեսրոպ Մաշտոցի», Վենետիկ, 1964, էջ 380-403. Հ. Պ. Անանեան, «Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ», «Բազմավէպ» 1989, հ. 1-4, էջ 43-44. G. Garitte, "Le traite ge'orgien "Sur la foi" sttribute' a' Hippolyte", Le Muse'on, t. 78, 1-2 (1965), p. 119-172. "The Teaching of Saint Gregory: an Early Armenian Catechism", by Robert W. Thomson, Cambridge, Massachusetts, 1970, էջ 1-38:

3 Այս է իրաւացիօրէն հաստատում Ա. Տէր-Միքէլեանը «Յաճախապատումի» իր հրատարակած քննական քննարկ առաջաբանում (Ս. Էջմիածին, 1894):

4 Թարգմանութիւնը կատարուել է ըստ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի յաճախապատում ճառք եւ աղօթք» (Վենետիկ, 1954) հրատարակութեան: Նկատի ենք ունենել նաեւ Ա. Տէր-Միքէլեանի հրատարակած քննարկը (Ս. Էջմիածին, 1894):

5 Սոյն ճառի թարգմանութիւնն իրականացրել է Մեղա Ստամբոլցեանը:

ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՍՈՒՐԱ ԳՐԻԳՈՐԻ
ԱՍԱԾ ՅԱԾԱԽԱՊԱՏՈՒՄ ԺԱՌԵՐԸ ԵՒ
ԼՈՒՍԱԽՈՐ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐԸ
ԼՍՈՂՆԵՐԻ ՕԳՏԻ ՀԱՄԱՐ

Ա

ԱՄԵՆԱՍՈՒՐԱ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի է Ամենասուրբ Երրորդութեան բնութիւնը եւ գոյութիւնը, եւ իրենն է [Իր] ինքնութիւնը եւ ոչ՝ այլ գոյութիւնից: Հայրը Որդու եւ Սուրբ Հոգու անսկիզբ պատճառն է. անծին իսկութիւն է եւ անսկիզբ էութիւն, անսահման մշտնջենաւորութիւն եւ անփոփոխելի ճշմարտութիւն, կեանք եւ կեցուցիչ բոլոր կենդանի [եակների]։ Հայր է Որդու եւ թխում՝ Հոգու, Աստուած է եւ Արարիչ երեւելի եւ աներեւոյթ արարածների: Ասում է Որդու պատճառ՝ ծննդեամբ, եւ Սուրբ Հոգու թխում: Իսկ Ինքը՝ անծին էն, ծնեց Անսկիզբը, անսահման մշտնջենաւորը ծնեց անփոփոխ մշտարտութիւնը, կեանքի կենսարարը ծնեց կենսատու կեանքը, կենդանի Լոյսը ծնեց կենդանի Լոյսը, Բարին ծնեց Բարերարը, Արարիչը ծնեց բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածների Արարչին: [Նա] է ստեղծել երկինքը եւ երկնային գորութիւնները, երկիրը եւ նրա վրայ [բնակուող] արարածներին: Լի է եւ կատարեալ եւ ամէն ինչ կատարելապէս լցնում է, Ինքը չի թերանում, ո՛չ նորոգում է եւ ո՛չ հնանում, ո՛չ լցում է եւ ո՛չ պակասում, որ նոյնն է միշտ Իր լիութեան եւ անբաւութեան մէջ: Եւ այլ տեղից չկայ օտարամուտ կամ յաւելում թան անհաս, անբաւ, անսահման եւ ամենակատար բնութեան մէջ: Նրան չի կարող հասնել միտքը, նաեւ անհիմնալի է հրեշտակների համար, թե՛ պէտեւ մարդկանց մտքի պէս արագընթաց են, այլ ուր ակնարկում է Արարչի կամքը, այն բաների սպասաւորութիւնն են կատարում երկնաւորների եւ երկրաւորների մէջ: Քանզի ինչպէս Աստուծոյ Բանով են հաստատուած երկինքը եւ նրա բոլոր գարդերը, եւ Հոգով՝ բոլոր գորութիւնները, նոյնպէս էլ երկիրը՝ լեռներով, դաշտերով, ծովերով, գետերով, աղբիւրներով եւ անտառախիտ ծառերով:

Եւ չկայ այլ Արարիչ, բայց միայն՝ Սուրբ Երրորդութիւնը, ամենագոր Տէրութիւնը, յստակ եւ պարզ ամենակալ Զորութիւնը, որ

ասաց, եւ եղան, հրամայեց, եւ հաստատուեցին: Որ Աստուծ է երկինքների երկնքում եւ խնամում բոլոր արարածներին, որ կանխահաս գիտութեամբ եւ անբաւ իմաստութեամբ մատակարարում է երկնաւորներին եւ երկրաւորներին, կեանք է ու կեցուցիչ բոլորի համար եւ ամէն ինչում՝ անբաւ, անհաս եւ անճառ: Սէր է՝ կենդանի երանութեամբ լի, ամատոյց լոյս՝ ահեղ եւ զարմանալի: Գիտութիւնը եւ իմաստութիւնը՝ Նրանից են ճշմարտապէս իմացում, [որ] կենդանի է եւ կենդանարար, ողորմած եւ բարերար՝ շնորհներով, ներողամիտ եւ դարմանիչ: Ինքը Սրբութիւն Սրբոց է Իրեն սրբութեամբ եւ արդարութեամբ մերձեցողների համար, միշտ լուսաւորիչ՝ մեր բանական բնութեան. կատարելապէս ճշմարտութիւն է՝ մեզ յանդիմանելով եւ խրատելով մեղանչածներին, որպէսզի փրկուեն բարկութիւնից, որ գալու է ամբարիշտների վրայ: Այլեւ յորդորում է բարիքների խոստմամբ, որպէսզի արժանաւոր լինենք յաւիտենական ամենաշահութիւնների փառքին ու պսակներին: Քանզի Իր սուրբ սիրոյ խնամքով հանգստարար նաւահանգիստ է ճգնաւորների համար, որ հոգով առաքինացածներին վայելել է տալիս անճառ երանութիւնների մէջ: Քանզի անբնի մեծութիւններ են, անսկիզբ էութիւն, վեր, քան իմանալի [աշխարհները]՝ անսահմանութեան եւ անբաւութեան մէջ. եւ Իր տեսչութեան խնամքով [Աստուած] լցնում է բոլոր արարածներին: Որ գիտի սրտի խորհուրդները եւ քննում է երկկամները եւ կենդանարար Հոգու օրէնքով առաջնորդում է անմահներին դէպի անմոռաց ուրախութիւնները, անդադար խնդութիւնները, անճառ ու անպատում բարիքները՝ ժառանգութիւն տալով Աստուծոյ արքայութիւնը:

Արդ, անսահմանելի մշտնջենաւորի այս բոլոր ինքնաբոյս հոգածութիւնները դարմանիչ միջոցներ են արարածների համար՝ ըստ Իր արարչութեան բարերարութեան, քանզի կեցուցիչ է Իր խնամքով, որ անբաւ է ու անբնի: Հոգեւոր [եակների] իմաստութիւնը չի կարող հասնել Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այլ Մի Աստուածութիւնը եւ ամենագոր Տէրութիւնն անմարմինների եւ մարմնաւորների համար Իր գործերից եւ երախտիքներից է իմացում ու ճանաչում: Քանզի ինչպէս մի արեգակի մասին է ասում արեւ, լոյս եւ ջերմութիւն, եւ ոչ՝ տարբեր, եւ ինչպէս մի բնութիւնից են ասում աղբիւրը, ջուրը եւ գետը, նմանապէս էլ միտք, խօսք եւ հոգի է իմացում [մի] մարդու մէջ, նոյնպէս էլ այստեղ պէտք է իմանալ Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու Մի Բնութեան եւ Աստուածութեան մասին: Քանզի արեգակն առանց լոյսի եւ ջերմութեան չէ, ոչ էլ աղբիւրը՝

առանց ջրի և բիսման, ոչ էլ միտքը՝ առանց խօսքի և հոգու. նոյնպես էլ Հայրը [երբեւէ] առանց Ռոդու և Սուրբ Հոգու չէր:

Բ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՆՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Կատարեալ է Հայրն անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ. և ամենակալ է Իր անձին իսկութեամբ: Կատարեալ է Ռոդին անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, Որը և ամենակալ է անսկիզբ էութեամբ: Կատարեալ է և Սուրբ Հոգին անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ. և ամենակալ է անսկիզբ էութեամբ: Մի է Աստուածութեան և անփոփոխ իսկութեան բնութիւնը. մի արարչութիւն, մի բարերարութիւն, մի տէրութիւն, մի զօրութիւն. և այլ տեղից չկայ փառքի ներմուծում և յաւելում անսկիզբ Երրորդութեան մէջ: Քանզի Նա է բոլոր բարիքների աղբիւրը, և Նրանից են բոլոր արարածներին բաշխում արարչութեան բոլոր պարգեւները: Որ Իր բարերարութեամբ, Հոգով և ճշմարիտ վարդապետութեամբ յօրինում, խնամում և սնուցում է երեւելի և աներեւոյթ [արարածներին] և առաջնորդում դէպի Իր արքայութիւնը և փառքը [նրանց], ովքեր հաւատում են Նրան և սրբութիւն են գործում Աստուծոյ ահով, սուրբ սրտից և անկեղծաոր հաւատքից, ինչպէս և գրուած է:

Այսպէս ընդունեցինք հաւատքի խօսքը, և դուք այսպէս հաւատացէք Ամենասուրբ Երրորդութեանը՝ արարիչ Աստուծուն և ստեղծող Տիրոջը, և [Նրա] կենսատու շնորհների: Որ կենարար լոյսով և սուրբ սիրով Իր անճառ արքայութեան ժառանգորդներ է դարձնում և յորդորիչ լինում՝ խոստացած անպատում պարգեւները յիշելիս, որ միշտ պահում է հաւատով և յոյսով Նրան յուսացածների համար: Քանզի արարչութեան սէրը ստիպեց Արարչին ստեղծել բոլոր երեւելի և աներեւոյթ արարածներին. ոչ թէ ի պէտս Իր Աստուածութեան արարեց, այլ՝ որ երեւայ Նրա փառքը, որ, արարածներով ճանաչուելով, տեսանելի լինէր անմարմիններին և մարմնատրներին [տե՛ս Հոռմ. Ա 20]: Ինչպէս ոչինչ չի վերցնում կենդանի էակներից, այլ կենդանութիւն է տալիս նրանց, ինչպէս

այքը լոյս չունի, այլ լոյսից է լուսատրում և տեսնում իրեն, այնպէս էլ Տէրն է պահպանում և լուսատրում Իր մտաւոր և բանաւոր արարածներին և շնորհները բաժանում նրանց այնպէս, ինչպէս որ կամենում է: Թէպէտեւ շնորհների զանազանութիւն կայ, սակայն Աստուած նոյնն է, որ ուղղում է ամէն ինչ ամէն ինչում [տե՛ս Ա կորնթ. ԺԲ 4]: Եւ հրեշտակներին և մարդկանց պատուեց իշխանական կամքով, որպէսզի փառատրեն բարեգործ Աստուծուն, որ ոչնչից լինելութեան մէջ դրեց և Սուրբ Գրքով ուսուցանեց բարեպաշտութեան հանգամանքները, որպէսզի կարողանան խոյս տալ չարից և կատարել բարին և դարձեալ փառատրուել փառքով:

Այս բաների մէջ է երեսում Աստուծոյ սէրը մեր հանդէպ, քանզի մեզ համար արարեց երկինքը և երկիրը և նրանց արարածներին և այսպիսի խնամքով ցոյց տուեց Իր սիրոյ բարերարութիւնը: Նոյնպէս էլ արարածները ճշմարիտ սիրով, հաւատով, յոյսով և պատուիրանապահութեամբ պէտք է մօտենան Աստուծուն, և [Նա] պարգեւատու կլինի: Որպէսզի, ամէն ինչում գոհանալով [Արարչի] բարերար խնամքի համար, լինենք ճշմարտութեան ե՛ր խոստովանողներ, ե՛ր դաւանողներ, նաեւ հնազանդ լինենք Տիրոջը հաճելի գործերում, նեղութեան և անդորրի մէջ միշտ անքակ մնանք առ Աստուած սիրոյ՝ յատկապէս հոգու և մարմնի ամենայն սրբութեամբ: Արարչի անունով չկոչենք արարածներին և ճշմարտութիւնը չմոլորեցնենք ստի մէջ, այլ սիրոյ ամբողջական, անքիծ և անարատ երախտիքով միշտ մտերմութեան մէջ մնանք [Տիրոջ] հետ: Եւ Արարչի արարածների նկատմամբ իրաւունքների և արդարութեան այս բոլոր յօրինուածքները միշտ հաստատուն են մնում:

Ուստի լռենք դատարկ և անկողոյ քննութիւնից և հետեւենք Հին և Նոր Կտակարանների խրատներին: Եւ չկայ այլ մէկը, որ պատմի իրաւունքների մասին, քանզի Նրանով ենք ապրում, շարժում և կանք [տե՛ս Գործք ԺԷ 28]: Նրա՛ն լսենք և Նրա՛ն յուսանք, որ փրկեց մեզ ամենայն վտանգից և տանում է երկնքի արքայութիւն: «Արդ, եկէ՛ք, որդեակներս, և լսէ՛ք ինձ. և ձեզ կուսուցանեմ Տիրոջ երկիրը» [Սաղմ. ԼԳ 12].- ասում է սաղմուտագութեան մէջ, որ բոլորին հնազանդութեան է կոչում հոգեւոր օրէնքներին: Եւ որովհետեւ՝ «Ով պահում է իմ պատուիրանները,- ասում է Տէրը,- նա է ինձ սիրում, և ով սիրում է ինձ, կսիրուի իմ Հօր կողմից. և կզանք ու կօթեանենք նրա մօտ» [տե՛ս Յովհ. ԺԳ 23]: Ինչպիսի՛ անճառ սիրով պատուեցինք:

Արդ, խոտան չհամարուե՛նք Աստուծոյ կողմից, որպէսզի

չընկենք երանելի կեանքից, որ խոստացաւ սուրբերին: «Քանզի արդարները պիտի ժառանգեն բարիքները, իսկ մեղաւորները պիտի կրեն պատիժները: «Ովքեր Աստուծոյ Հոգով են ընթանում,- ասում է,- նրանք են Աստուծոյ որդիները, իսկ ովքեր ըստ մարմնի են ապրում, չեն կարող Աստուծոյ հաճոյ լինել» [տե՛ս Հոռմ. Ը 13-15], որպէսզի այս կեանքում հոգեւոր վարքով վայելենք բոլոր երկնասոր բարիքների մէջ: Որքա՛ն է այն անվախճան կեանքի անմահ, անհամեստ եւ անկշիռ մեծութիւնը, քանզի անպատում է՝ Սուրբ Հոգով, Արարչի սիրով պատրաստուած, որ ո՛չ լաւում է, ո՛չ էլ իմացում, որը տալիս է իրեն սիրողներին, որպէսզի Նրա կենարար սիրով վայելեն բարիքների մէջ, որ վեր են, քան բոլոր մտքերը, խորհուրդները եւ երկնային զօրքերը, որպէսզի անփոփի անմահների կարգերում: Որին եւ ըստ արժանաւորութեան ընտրելու են օթեաններում, [ուր] անքնին վայելչութիւն է:

Քանզի ինչպէս մտաւոր¹ հոգիները կենդանի են եւ չունեն տարիքի պայման եւ ընթացքի սահման, քանզի թէպէտեւ երկնքից էլ վեր բարձրանան եւ ծովից էլ այն կողմ անցնեն իմաստութեան գիտութեան յիշատակներով, որ Սուրբ Գրքի առաջնորդութիւնից է, սակայն ակնթարթօրէն այնտեղից ամփոփում են մարմնական կեանքի կայաններում, այնպէս էլ մարմինները յարութեան ժամանակ փոխում են դէպի անճառ եւ անպատում կեանքը, բիրակերպեան ճառագայթները, կենդանի լոյսը եւ փառքը. եւ Հոգու հրով վառում են անշիջանելի լոյսով: Եւ ինչպէս անարգ եւ տխուր է այս մարմնի պատկերն անմահ կենդանի [եակների] հոգիների համեմատութեամբ, այնպէս [էլ] բոլոր երեւելի արարածներին բոլոր նշոյլներն ու ճառագայթները լուսաւորներից են, որ հանգելու են, քանզի հաստատուն չեն եւ չեն մնում [միշտ], այլ՝ փառքի արդարութեան Արեգակի կենդանի եւ անանց ճառագայթները, որ հագնելու են սուրբերն անմահական կեանքում՝ հաւասարապէս հոգիներով եւ մարմիններով. ինչպէս մէկը, հագնելով արեգակի լոյսը, ի զօրու լինի տեսնել արեւելքից արեւմուտք, որը [դեռես] շիջանելի լոյս է՝ ըստ Տիրոջ խօսքի. «Արեգակը եւ լուսինը կիսարեւն,- ասում է,- եւ աստղերը կծածկուեն, եւ արդարները արեգակի պէս կփայլեն Աստուծոյ արքայութեան մէջ» [տե՛ս Մատթ. ԻԴ 29]: «Քանզի երբ յայտնօրհրիստոս՝ ձեր կեանքը,- ասում է առաքելը,- այնժամ որք էլ Նրա հետ կյայտնուէք փառքով» [Կող. Գ 4]՝ աստուածային հրից

¹ մտաւոր- իմանալի, հոգեւոր, հրեշտակային

լուսավառուելով անշիջանելի եւ սուրբ լոյսով: Եւ երբ [Աստուած] իր անշիջանելի լոյսով հագցնի արդարութեան Արեգակի լոյսը, եւ [նա] վայելի սուրբերի պայծառութեան մէջ, [այդպէս] հաստատուն կմնայ միշտ՝ կենդանի եւ լուսաւորուած: [Այդպիսին], սուրբ սիրուց երանաւետուած եւ փառքով փառաւորուած, Բրիստոսի կատարման տարիքով կամ ոչ (քանզի ոչ ոք չի կարող ասել այս), որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչում [տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 28]), լի է անմահ բարիքներով՝ ըստ Տիրոջ խօսքի, որ խնդրում է Հօրից. «Քանզի ինչպէս Դու եւ Ես մի ենք, այնպէս էլ հաւատացեալները եւ սուրբերը Մեզ հետ թող լինեն» [տե՛ս Յովհ. ԺԷ 21]: Քանզի Աստուած այնպէս սիրեց մարդկանց, որ եւ Աստուածութեան պատիւը եւ փառքը շնորհեց մեզ: Աստուած այս աշխարհն արարեց մարդկանց համար՝ ծննդաբերութեան, սննդաւորութեան, իրաւացի եւ արդար կեանքի համար. եւ առաքինութեան գործերով, պատուիրանապահութեամբ այն անմահ եւ անուշակ աստուածեղէն փառքն է շնորհում փոխելով անանց բարիքների եւ անսպառ ուրախութիւնների մէջ:

Եւ այս, որի մասին ասացինք, չնչին մասն է բիրաւոր բարիքների: Ինչպէս մանուկներն իրենց մօր որովայնում չգիտեն, թէ ինչպիսի տարիքի են փոխուելու, թէ տեսնելու են Աստուծոյ արարածներին եւ վայելելու, այնպէս էլ մենք չգիտենք: Այլ [իրաւացի է խորհել] ըստ առաքելալի խօսքի, որ ասում է. «Շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում, սակայն երբ գայ վախճանը, շատից քիչը կիսափանօի» [Ա Կորնթ. ԺԳ 9]: Քանզի ամէն ինչի մէջ գերազանց է եւ անճառ, եւ անմարմինները չեն կարող ճանաչել [Նրան], ուր մնաց մարմնաւորներս՝ խորհել եւ ասել, թէ մէկը կարող է [ճանաչել]: Քանզի ինչպէս խաւարը փախչում է լոյսից, այնպէս էլ երկրաւորներս [հեռու ենք] երկնաւորներից եւ անմահ կեանքից: Այս բարիքների համար, մեր մէջ ունենալով բոլոր բարիքների ջանքերը, [պէտք է] հաստատուն մնալ Աստուծոյ հաճելի մշակութեան մէջ, որ լի է բարիքների խոստումներով: Եւ փախչենք. աղտեղի ու գարշ ցանկութիւններից եւ չարիքից, որի պատուհասը վշտագին սպառնալիքների տակ է, այլ մաքուր վարքով հետեւենք վերինների ընթացքին: Սիրով երախտաւոր լինենք եղբայրների նկատմամբ կեանքի բոլոր պէտքերի մէջ, մշակենք բարի աւանդը հոգիների եւ մարմինների փրկութեան համար, որպէսզի հրաւիրուած եւ կոչուած լինենք որդեգրութեան շնորհների: Քանզի Աստուած է մեր մէջ տնկել բարին, նաեւ՝ իշխանական կամքը, որպէսզի կամենանք միշտ բարին գործել: Որպէսզի

մեր սրտերում հաստատուի հոգեւոր օրէնքը. յոյս, սէր, հաւատք այլ [առաքինութիւններով հանդերձ] հրեշտակների և մարդկանց անձնիշխանական կամքի մէջ: Որպէսզի ժառանգենք փառաւորեալ կեանքը և անճանելի երանութեամբ պատուենք Արարչից:

Եւ անձնիշխան արարածներիս ինչպէս որդու երկու դաստիարակ տունեց՝ սպառնալիքը և անտիսը՝ երկնչելու սպառնալիքներից ու փախչելու վնասակարներից և ցանկալու անետար բարիքներն ու հետեւելու արդարութեանը: [Նաեւ] ճշմարիտ Սուրբ Գրքերի խրատների միջոցով բարեձեւութեան համար [պէտք է] հնազանդ լինել օրէնքին և իշխանութեանը: Քանզի սրա համար տունեց մարգարէներից, առաքելներից, հայրապետներից, վարդապետների և ուսուցիչների, որպէսզի մեզ տեղեակ, հմուտ և հասողարձեն Աստուծոյ բարի կամքին, որ կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն և ճշմարտութեան գիտութեան գան և արդարութեան գործերով երախտաւոր լինեն Երկնաւոր Հօրը, Միածին Որդուն և Սուրբ Հոգուն, որ իր արարածներին կենդանութիւն է տալիս՝ գործակից լինելու Աստուծոյ բարերար կամքին: Այս իրաւունքով և արդարութեամբ ներածեց, մտցրեց իր Աստուածութեան ժառանգութեան մէջ, [որոնց], ըստ առաքելի խօսքի, ասում է «Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ» [Հոով. Ը 17]: Եթէ մանակից լինենք Քրիստոսին, կցորդ [կլինենք] նաեւ [Նրա] փառքին: Ուրեմն չծուլանա՞նք մեր այս կեանքում, այլ, յառելով միտքը կոչման կէտին, անվեհեր փութով [պէտք է] ուսուցանել և կատարել Նրա կամքը, որպէսզի [այդպիսին] մեծ կոչուի Աստուծոյ արքայութեան մէջ:

Եւ այսպէս վարդապետեց՝ իր տնօրէնութեան ժամանակ կատարելով և ուսուցանելով իր ընտրեալներին, որպէսզի, նայելով մեր Փրկչի կեանքի իրարարձութիւններին, նմանողներ լինենք [Նրան]: Եւ մարգարէութեամբ, առաքելական քարոզութեամբ և հայրապետութիւններով ճանաչենք ամենակալ Հօրը և համագոր Որդուն և համագործ Հոգուն: Եւ [բոլորն] ուղղափառ հաւատով [պէտք է] ծանօթանան, գիտենան և մերձաւորուն Աստուծոյ կամքին՝ անքակ մնալու Արարչի սիրուց [եւ] ներութեան, եւ անորորի մէջ և արդարացած երախտաւորներ [լինելու] Բարերարի կամքով: Ծգնութիւնների վաստակը [պէտք է] վկայ կանգնեցնել Աստուծոյ առաջ և մտերմութեամբ օրհնել Տիրոջը՝ բոլոր բարիքները տուողին, և գոհանալով փառաւորել Նրան: Այլեւ Տէրն Ինքնին իր սիրոյ և բարերարութիւնների համար [որպէս] իր երախտիք վկայ ունի ընտրեալներին և կատարեալներին, որոնց վրայ է

գեղում Աստուծոյ շնորհը: Այլեւ հոգով երախտացածների նկատմամբ, ովքեր խոստովանութեամբ դարձել են դէպի ապաշխարութիւն, ներում, խնամում և բժշկում է ողորմութեամբ և, ըստ իր բազում գթութեան, ներում մեղքերը: Իսկ չարութեամբ ամբարտաւանացած ամբարիշտներին և անիրաւներին, որոնց միտքը խաւարել է, և օտարացել են սուրբերի և արդարների կեանքից, համբերում է, որպէսզի դառնան դէպի զղջում: Հակառակ դէպքում նրանց բոլորի վրայ Արարչից բարկութիւն և զայրոյթ է հաստատուած մնում ըստ առաքելի խօսքի [տե՛ս Հոով. Բ 8]:

Այսպիսին են կեանքի կենարարի և Ստացողի արուեստները, և իր սիրոյ երեւելի և աներեւոյթ հոգածութեամբ հանապազ խնամում է արարածներին: Եւ իր բարերարութեամբ յօրհնում է [միջոցներ]՝ սնուցելու և հոգալու իր պէս-պէս շնորհներով, գիտութեամբ և իմաստութեամբ, որպէսզի խելամուտ և փութացան դարձնի իր պատուիրանի պահպանութեան համար: Եւ իր գօրութեամբ կարող և հաստատուն է պահում, որպէսզի զօրացած ընդդիմակայեն սատանայի հնարներին և սիրով անշարժ ու հաստատուն մնան ճշմարտութեան նկատմամբ՝ յորդորելու բարի առաքինութիւնների և պիտանի գործերի, որ փառքով է պսակում: Եւ այսպէս վայելում ենք բարիքների մէջ: Քանզի երանութեան կենդանի անտիսների համար ճշմարիտ հաւատով ու յոյսով առհաւատչեալ են ստանում հանդերձեալը՝ կենդանի Սիրոյ ճաշակմամբ, որ անբաւ է և անքնին, որպէսզի Նրանով Նրա մէջ վայելեն երանութիւնները և Նրա խնդրութեամբ լցունեն Նրա անճառ ուրախութիւնների մէջ: Քանզի իր գթութեամբ հոգ է տանում հոգու և մարմնի պէտքերի համար՝ ըստ իր մեծ ողորմութեան, որպէսզի զօրացած շնորհներով և աստուածատուր պարգեւներով վայելեն առողջութեան և խաղաղութեան մէջ:

Եւ բարի Աստուծոյ՝ նորոգման համար տածած այս ներողամտութիւնը տեսնելով՝ ձգտում է դէպի երեւելի և աներեւոյթ բարիքները և, Սուրբ Աստուծոյ կողմից սրբուելով աղտից, տիրական ազատութեամբ ազատում է և լուսաւորում փառքով, անհպելի լինում թշնամուն և, զերծ մնալով մեղքի մահուանից, յարութեան յոյսով լուսաւորուած, միշտ մնում է անքիծ ու սուրբ: Եւ խոնարհութեան համար բարձրանում է փառքով, [եւ] Տիրոջ յարգանքով կործանում է ամբարտաւանութիւնը: Քանզի խոնարհները, հնազանդները և հեզերը բարձրանում են, իսկ ամբարտաւանները, խտաւիրուները և անհաւատները կկործանուն Տիրոջ ահի առաջ:

Քանզի [արքայութեան] անտիսների բոլոր բարբառները հաւատա-
ցեալներին, լատերին եւ առաքինիներին հրաւիրում են դէպի ճշմար-
տութեան դռները, [որոնք] վայելում են Նրա մեծարանքների եւ
փառքի պսակների մէջ: Քանզի [Տիրոջ] խնամքը ողորմութեան եւ
գթութեան շնորհիւ է [տրում մարդկանց], որոնք էլ կատարեալ
ապաշխարութեամբ թողութիւն են ստանում միազօր Տէրութիւնից:

Եւ սպառնալիքների ահաւոր բարբառներն ամբարիշտներին,
անառակներին, ցանկատերներին, անհնազանդներին եւ մեղքի մէջ
անարգելներին հրաւիրում են դէպի յաւիտեանական տանջանքները,
դէպի անմահ սատակումը, դէպի դժոխք: Քանզի արհամարհեցին
Արարչի գութն ու խնամքը եւ հեռանալով օտարացան ստոյգ ապաշ-
խարութիւնից, որ պիտի սրբէր նրանց, արդարացնէր եւ մերձատր
դարձնէր անմահ կեանքին: Որի համար ընդունելու են ամօթը եւ
անշէջ հուրը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա դեւերի հա-
մար:

Եւ այս ամէնը բարերար Աստուծոյ կամքով կարգուած է
[արարչութեան] կարիքների եւ խնամքի համար: Սուրբ եւ բարի
կողմին [պիտի տրուեն] Տիրոջից անտուած խոստումները, իսկ չար
եւ անհնազանդ կողմին՝ բարկութեան եւ զայրոյթի սպառնալիքները,
եւ չար հրեշտակի միջոցով պիտի ընդունեն վրէժը: Քանզի եթէ
կամենային, կարող էին թորթոքուած բարկութիւնը մարել եւ
ճշմարիտ ապաշխարութեամբ ջնջել [մեղքերը]՝ ըստ Արարչի մեծ
ողորմութեան: Եւ այսպէս՝ բարու խոստումով եւ սպառնալիքով,
հոգում է [մեր] ուղիղ ընթացքի համար, քանզի կամենում է, որ
բոլորն ապրեն եւ հասնեն արքայութեանը: Այլեւ որպէսզի մեր միջի
ընտիրները երեսն գան՝ արդարութեան օրէնքով կենցաղավարե-
լով: Քանզի Նա, որ յաւիտեաններից առաջ բնութեամբ եւ իսկու-
թեամբ Բարին է, Նրանում՝ կատարեալ Բարերարութեան մօտ, չկայ
օտարամոտ բան, այլ հաստատապէս մնում է միշտ բարի:

Իսկ որ ասում է Աստուծոյ ցասման կամ բարկութեան կամ
սպառնալիքի մասին, օրէնքի իրաւունքի մասին է ասում, որպէսզի
անհրաւերներին եւ անզգամներին բարկութեամբ լի սպառնալիքներով
ուղղութեան բերի: Քանզի կատարեալ Բարերարութեան եւ
քաղցրութեան մօտ չկայ արատ կամ բիծ. Նրանից չարութիւն չի
բուսում, ոչ էլ որեւէ տեղից ներմուծում է Նրա մէջ, քանզի Նրա
ամէն ինչն իսկութեամբ բարի է, եւ Նրանում չարութեան նշոյլ չկայ:
Քանզի մեր մեղքերը բարկացնում են Աստուծուն, եւ Նա խրատում է
մեզ պատիժներով եւ բարկութեան մէջ ողորմութիւնը յիշելով,

որպէսզի խրատուելով այցելութեան արժանանանք Արարչից: Քան-
զի վայել է մեզ ասել մեղքերը եւ սիրել արդարութիւնը, սրբութիւնը
եւ ճշմարտութիւնը, որ ուրախացնում են Արարչին երկնային զօրքով
հանդերձ:

Եւ այս իսկ է Նրա սիրոյ ապացոյցը, որ ուրախանում է մարդ-
կանց ուղիղ եւ արդար ընթացքով, որոնք դառնում են չար վարքից:
Քանզի Ինքը կեանք է, կեցուցիչ է սէր՝ Իր ամենալից պարգե-
ներով, քանզի ոչ ոք չի կարող արժանին ասել Նրա ամենազօր
մեծութեան մասին՝ ոչ մէկը երկնատր բանակների քիւրատր զօրքե-
րից, ոչ էլ՝ մարդկանցից, որոնցից հաճեց օրհնութիւն եւ երկրպագու-
թիւն ստանալ: Քանզի դեւերի, հեթանոսների, ամբարիշտների եւ
մեղատրների ոչ մի հայհոյութիւն չի հպում Աստուածութեան ան-
հպելի լոյսին: Եւ հրեշտակների բոլոր քիւրատր բանակները, որ ան-
դադար փառաբանում են, եւ Տիրոջ կողմից ընտրուած մարդկանց
որդիները չեն կարող արժանատրապէս օրհնել Աստուծուն: Քանզի
Աստուածութիւնը ո՛չ մեծարում է որեւէ մէկի կողմից, ո՛չ էլ՝ ան-
պատում, քանզի Իր բուն փառքից չի փոխում. քանզի կեանք է եւ
անփոփոխելի լոյս, որ չի անցնում:

Բայց զարմանալի է այս, քանզի Իր առաւել սիրոյ համար
Անանունն անուն է ստանում, քանզի ոչ ոք չկար Անսկիզբի հետ, որ
կոչէր անունը, այլ Ինքն Իր բարերարութեան եւ բարերար կամքի
համար անուանում է արարածների Արարիչ: Քանզի արարիչ,
բնրերար, լոյս, կեանք անունները ստանում է արարածների նկատ-
մամբ խնամքով, սակայն Իր անունն Ինքը միայն գիտի: Քանզի լոյսի
մէջ անշիջանելի լոյս է եւ կենդանիների մէջ կեանք, աննիւթ հուր եւ
նիւթական հրի արարիչ: Իսկ ինչպէս էր եւ է եւ կայ յաւիտեան, Ինքը
միայն գիտի, սակայն Իր սիրով յայտնուեց արարածներին եւ Իր
խնամքով ճանաչուեց:

Այլեւ Իր բարերարութեամբ աշակերտութեան կանչեց [Իր]
արարած մարդկանց. «Նախ՝ առաքեալներին, - ասում է Պօղոսը, -
ապա՝ մարգարէներին, ապա՝ վարդապետներին» եւ սրանց յաջոր-
դողներին [տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28]: Որոնց Սուրբ Հոգին բաժանում է
շնորհները կոչման գործի համար, որով արքայութիւն հրաւիրեց:
Թայտնեց Իր սիրոյ տեսչութեան խնամքը, որպէսզի արդարանանք
հաւատով, որով պիտի մտնենք Բրիստոս Աստուծոյ փառատրեալ
Ժառանգութիւնը: Քանզի Իր հաւատացեալներին այգի անուանեց,
Երկնատր Հօրը՝ մշակ, նաեւ մշակներ [անուանեց] առաքեալներին,
որով սրբում եւ հաւաքում են յաւիտեանական հոգեւաններում: Որ

առաջին ժամից մինչև վերջին ժամը գործեցին եւ, ըստ յօժար կամքի, առաջին [քրիստոնէականերով] հանդերձ վարձատրուեցին դիտողից: Որովհետեւ նրանք, ովքեր չմտնուեցին Աստուծոյ սիրուն, որ ծագեցնում է արեգակը շարերի եւ բարիների վրայ, այլ նախանձեցին, Աստուծոյ որդիների պէս չվարձատրուեցին: Իսկ բոլոր սուրբերն արդարութեան եւ հոգեւոր մշակութեան գործեցին եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան [կատարուած] ճշմարիտ քարոզութեամբ հասան խոստացուած ժառանգութեանը, որ ի Քրիստոս Յիսուս է: Եւ կենաց խօսքով լցրին տիեզերքը եւ ջրով ու Հոգով վերստին նորոգեցին հաւատացեալներին: Այլեւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ փրկութիւն քարոզեցին՝ Աստուծոյ Որդու շնորհների միջոցով:

Քանզի բնութեամբ Հայր է Իր Միածին Որդու եւ [Որդին] կեանք է կեանքից, լոյս լոյսից, բարութիւն բարութիւնից: Այլեւ ըստ շնորհի Հայր է անուանում մեզ եւ լոյս, որ լուսաւորում է մեզ հաւատով, եւ՝ կեանք, որ կենսագործում է մեզ: Ինչպէս մարդկանց մօտ է այսպիսի ճշմարտութիւն դիտում. ոմանց՝ բնութեամբ, մի մասին էլ որբերի խնամածութեամբ է հայր [կոչում]: Այսպէս մեզ մերձաւորներ է դարձնում, նաեւ արարչական խնամածութեան նմանողներ՝ բարերար Հօր շնորհով մոլորեալներին դէպի աստուածգիտութիւն դարձնելով եւ բարերարութիւնների հետ [մէկտեղ] Նրա պէս գթասիրտ լինելով: Մեղաւորներին [պէտք է] ուսուցանել, որպէսզի իսպառ չկորչեն, այլ խորագիտութեամբ, աստուածային օրէնքով ուղղութեան բերել՝ ուսանելու, գիտեցալու, ճանաչելու իմաստութիւնն ու խրատը, եւ նշաններով ու հրաշքներով ուղղել թիրեալներին: Աշակերտողներին [պէտք է] հաստատել հաւատքի մէջ եւ՝ ճշմարտութեան մէջ անշարժ մնալու՝ մեծ համբերութեամբ ամէն տեսակ փորձութիւններում: Եւ Տիրոջ սիրոյ օրհնակով [պէտք է] յորդորել Նրա կոչման սիրով, գթութեամբ խնամել ու դարմանել, վերցնել բազում [հոգսերի] բեռներն ու կարիքները եւ կանչել դէպի Ասագանի եւ ապաշխարութեան շնորհները: Եւ համբերութեամբ եւ ճարտարութեամբ հոգեւոր ունկանով [պէտք է] որսալ բոլորին առ բարեպաշտութիւն: Եւ [պէտք է] լուսաւորել մեղքով եւ անիրաւութեամբ խաւարածներին, սրբել, մաքրել եւ ազատել աստանայի ծառայութիւնից եւ նորոգել նորով, որ ըստ Աստուծոյ է՝ [ի] լուսաւորութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն եւ մերկանալու հին մարդուց իր շար գործերով, որպէսզի արժանի լինեն պսակների եւ փառքի:

Այս արուեստը Հօրից, Որդուց եւ Սուրբ Հոգուց են սովորել, որ միշտ գործակից է դարձնում Իր բարերար կամքին՝ ըստ ճշմարտութեան ասանդների, որ ժողովուրդներին անվրէպ հաւատով մերձաւորում է սուրբերի օթեաններին: Եւ այսպէս [մարդիկ] աշակերտեցին օրէնքի ընտրութեամբ հաւատքի, լոյսի եւ արդար սիրոյ մէջ՝ ըստ վկայութեան առաքիւնների, ճշմարիտ առաքեալների, մարգարէների, ուղղափառ վարդապետների. նաեւ՝ [նրանց], ովքեր ուսանեցին նրանցից՝ վկաները՝ տանջաքններում համբերութիւնը, խոստովանողները՝ ժուժկալութիւնը, ճգնաւոր կոյսերը՝ սրբութիւնը եւ առաքիւնութիւնը, ապաշխարողները՝ թողութիւնը: Եւ այս ամենով Աստուած մարդկանցից ժողովուրդ ընտրեց Իրեն՝ նախանձաւոր լինելու բարութեան գործերում եւ Իր բարերարութիւնից ստանալու անեղծութեան պսակը: Քանզի սիրեցին Արարչին եւ սիրուեցին Նրա կողմից. եւ [Աստուած] Իր շնորհներով փառաւոր եւ անուանի դարձրեց երկրի վրայ եւ երկնքում, որ հաստատապէս մնում է միշտ:

Քանզի եթէ ընտրութիւններ չլինէին Տիրոջից՝ ըստ արդարութեան օրէնքի, ի յայտ չէին գալ առաքիւնութիւնների մտերմութիւններն ու քաջութիւնները, կիսափանուէին նախատակների վկայութիւնները, որ տանում են դէպի երանելի կեանք, սուրբերը կզրկուէին կենդանի երանութեան ժառանգութիւնից, ինչպէս նաեւ՝ հոգեղէնների զօրքերը, որոնք Աստուծոյ սիրոյ մէջ են: Քանզի ովքեր հեռացան Արարչի խնամքից, Ահեղ Դատաւորից ընդունեցին պատիժները, որ հատուցում է ըստ արժանիքների, որպէսզի արդարները գնան դէպի յաւիտեանական կեանք, իսկ մեղաւորները՝ դէպի յաւիտեանական տանջաքններ: Իւրաքանչիւրին աստուածային խօսքը յայտարարում է. «Եկէ՛ք, - ասում է, - Իմ Հօ՛ր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք Աստուծոյ արքայութիւնը» [Մատթ. ԻԵ 34] եւ «Գնացէ՛ք Ինձանից, անծեալներ, դէպի յաւիտեանական հուրը, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար» [Մատթ. ԻԵ 41]: Քանզի նախ յարդարում է եւ կոչում բարի գործերի. «Եկէ՛ք, - ասում է, - Ինձ մօտ, բոլոր վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ Ես կհանգստացնեմ ձեզ. վերցրէ՛ք Իմ լուծը ձեզ վրայ եւ սովորէ՛ք Ինձանից հեզութիւնն ու խոնարհութիւնը եւ հանգիստ կզուցէ՛ք ձեր անձերի համար» [տե՛ս Մատթ. ԺԱ 29]: Եւ առաքեալն ասում է. «Նմանուեցէ՛ք Աստուծուն ինչպէս սիրելի որդիներ եւ գնացէ՛ք սիրով, ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ եւ Իր Անձը մատնեց ձեզ համար [որպէս] պատարագ Աստուծոյ» [տե՛ս Եփես. Ե 2]:

Քանզի Աստուծոյ Որդին մարդկանց որդիներին Իր ժառանգ-

գորդներ դարձրեց եւ մեզ վրայ առատարար սփռեց Սուրբ Հոգու շնորհները: Քանզի բարեբար բարբառով մեղաւորներին խոստովանութեամբ կանչեց ապաշխարութեան եւ հնազանդութեան անտարանական կեանքին, որպէսզի լուսաւոր Աւազանով հաւատացեալներին նորոգի որդեգրութեան իր Հօրը: Որ բնութեամբ է Որդի, շնորհով մեզ իրեն եղբայրներ դարձրեց: Եւ Հոգուց Աւազանով նորածնութեան լուծարում է մեղքի արատն ու բիծը եւ ազատում չարի ծառայութիւնից: Քանզի ովքեր ի Բրիստոս Յիսուս մկրտուցին, Բրիստոսով զգեստաւորուցին՝ արու եւ էգ. թէ՛ հրեայ լինի եւ թէ՛ հեթանոս, թէ՛ ծառայ լինի եւ թէ՛ ազատ, բոլորը մի են շնորհով՝ Աստուծոյ որդիներ եւ Բրիստոսի ժառանգակիցներ [տե՛ս Գաղ. Գ 27], ովքեր Ամենասուրբ Երրորդութեան պարգեւներով իջան հոգեւոր Աւազանի արգանդը՝ օրհնութեամբ եւ քահանայական խորհրդածութեամբ, օծմամբ եւ Հոգով ի Բրիստոս լուսաւորուած՝ ըստ Տիրոջ խօսքի. «Ստացէ՛ք Սուրբ Հոգին՝ յորդեգրութիւն Բրիստոսի Հօրը» [տե՛ս Յովհ. Ի 22]: Քանզի քահանաները Նրանով ունեն կապելու եւ արձակելու իշխանութիւն, քանզի մկրտուողին հրաժարեցնում են սատանայից եւ [ուղեկցում] մեռնելու մեղքերի մահուան համար, որպէսզի մեղքով չապրեն երկրի վրայ: Քանզի ինչպէս մեռածն է լուսւոյ բոլոր [երկրաւոր] ունակութիւններից, նոյնպէս էլ մկրտուածը պիտի մեռած լինի մեղքերի համար եւ կենդանի՝ արդարութեան, քանզի Սուրբ Երրորդութեան շնորհներով Բրիստոսի կերպարանքն է առնում. այնուհետեւ [հարկ է] խորհել վերինը՝ ըստ Աւետարանի քարոզութեան ճշմարտութեան եւ անմահ Թազատորի հաճութեան, արդար, ճշմարիտ եւ սուրբ վարքով հասնել անմահ կեանքի օթեւաններին, որ ի Բրիստոս Յիսուս է: Քանզի այսպէս է հոգեւոր Աւազանի վերստին ծնունդը, որ Ամենասուրբ Երրորդութեան շնորհով եւ մարդասիրութեամբ պիտաւոր ծնունդը վերստին դարձնում է առանց պիտի: Որոնք ո՛չ՝ արիւնից, ո՛չ էլ՝ մաղու կամքից, այլ Աստուծոց ծնունդին [Յովհ. Ա 13]՝ [որպէս] առհաստիչեայ՝ Բրիստոսի ժառանգութեան մէջ: Քանզի այսպէս ծնում են Աստուծոյ որդիներն Աստուծոյ Որդու կերպարանքով եւ դառնում ճշմարտութեան վկայողներ [ե՛ւ] մեղքեան, ե՛ւ անդորրի մէջ. եւ ուղիղ սրտով եւ ուղղափառ խոստովանութեամբ անասանելի են մնում Աստուծոյ սիրոյ մէջ. եւ կենարար Հօր որդիներն անճառ շնորհներով ընծայում են երկնաւոր [կեանքին]: Եւ այնուհետ Աստուծոյ գործն են կատարում եւ Նրա կամքն իրագործում՝ ըստ Բարեբարի երայտիքի, եւ Արարչի շնորհով կցորդակից

են լինում երկնաւոր զօրքերին մարդկանց սպասաւորութեան մէջ, նրանց, ովքեր ժառանգելու են յաիտենական փրկութիւնը, որ ի Բրիստոս է:

Եւ ինչպէս Աստուծոյ Որդին մարդու որդի դարձաւ եւ հազաւ մեր բնութիւնը եւ հոգով ու մարմնով կատարեց ամենայն արդարութիւնը, այնպէս էլ մենք հազանք ուղղութիւնը եւ կատարենք ամենայն արդարութիւնն ի Բրիստոս, որպէսզի սիրով Աստուծոյ որդիներ լինենք եւ աստուածներ: Քանզի Աստուծոյ Որդին կամովի մարմնացաւ եւ յանձն առաւ մեր մարդկային բնութեան բոլոր կարիքները, բացի մեղքից: Նոյնպէս թող լինի եւ մեզ՝ աստուածեղէն զօրութեամբ անցնելու բոլոր կրքերի միջով առանց յանցման, որպէսզի կարող լինենք հասնել Բրիստոսի կատարման հասակին. եւ այնպէս, Աստուծոյ կերպարանքով ճշմարտացած, ժառանգենք Բրիստոսի արքայութիւնը: Եւ [մեզ] մշտապէս պէտք է Աւետարանի դաստիարակութիւնը, որ հրահանգում է մեզ դէպի առաքինութեան կարգը, որպէսզի, յանձանձուելով Սուրբ Հոգու շնորհներից, սուրբ սրտով, ուղղափառ հաւատով առ Աստուած եւ ճշմարտութեամբ աճեցնենք արդարութեան վաստակները: Եւ Աստուծոյ նախախնամական սիրոյ տեսչութեամբ միշտ արթուն եւ զուարթուն լինենք բանասրկուի պատրանքներից. եւ հաստատուն լոյսով եւ առաքինութեամբ, սուրբ վարքով, մաքուր հոգով եւ մարմնով հասնենք խաղաղութեան նաւահանգիստը, յաիտենական կեանքը, անպատում կայանները, որ Աստուծոյ անճառ սիրով պատրաստուեց սուրբերի համար: Եւ ինչպէս այս արեգակը, որ լուսաւորում է երկիրը եւ նրա վրայի արարածներին, որ ապրում են ծովում եւ ցամաքի վրայ, այնպէս էլ ճշմարիտ հաւատքի խօսքը եւ սրբութիւնը լուսաւորում են Աստուծուն ցանկացողների միտքը: Եւ անձնիշխան կամքով երկնաւորները եւ երկրաւորները՝ մարդիկ եւ հրեշտակները, Սուրբ Հոգու շնորհներով ճշմարտութեան ուսուցիչներ եղան՝ ստոյգ գիտութեամբ եւ անմոլար իմաստութեամբ՝ ըստ օրէնքի արդարութեան: Եւ այնպէս, առաջնորդուելով Երրորդութեան լոյսով, ստոյգ պատմութիւններով, արարչական էութիւններով, արեգակի լոյսի պէս լցրին երկիրը եւ երկինքը ճառագայթներով՝ երկնաւորների եւ երկրաւորների կեանքի եւ փառքի համար: Իսկ սատանան, որ իր կարծիքով կամեցաւ աստուածանալ, իրեն տեսնել պայծառութեան մէջ եւ ամբարհաւանեց, վրիպեց փառքից եւ վայր ընկաւ պատուից, որսաց մարդկանց ի կորուստ եւ, սնոսի լոյսով թիրելով, մոլորութեան

հոգով Աստուծոյ սիրոց գցեց ամբարշտութեան պէս-պէս ցանկութիւնների մէջ:

Իսկ եթէ մէկն ասի՝ ինչպէ՞ս Աստուած թոյլ տուեց սատանային տարածելու մոլորութեան անօրէնութիւնները, իմացի՞ր, որ մարդիկ եւ հրեշտակներն իշխանական կամք ունեն, որ շնորհուած է Աստուծոց, որպէսզի ընտիրները երեսն գան նրանց մէջ եւ ըստ արժանիքների բոլոր արարածների Արարչից ժամանակին ստանան հատուցումը՝ փառքը եւ տանջանքները:

Քանզի ինչպէս մահը թագաւորեց Ադամի յանցանքի միջոցով, այնպէս էլ սատանան մեղաւորների վրայ տիրեց: «Քանզի մարդիկ, ասում է, - սիրեցին մոլորութիւնը, որի համար Աստուած մոլորութեան ազդեցութիւն ուղարկեց, որպէսզի դատապարտուեն, քանզի համաձայնեցին չարի հետ» [տե՛ս Յովհ. Գ. 19]:

Սակայն իսպառ չթողեց արարածներին Իր նախախնամական սիրոց, այլ ուղարկեց Իր Որդուն, որ եկաւ աշխարհ՝ փրկելու մեղաւորներին սատանայի ծառայութիւնից՝ հաւատքով [վերադարձնելով] Աստուծոյ Որդու փառքի ազատութեան մէջ, քանզի Փրկչի գալստեամբ լուծարուեց սատանայի բռնութիւնը մարդկանց որդիներից, որ տիրում էր մեղքով: Եւ Սուրբ Երրորդութեան հաւատքի շնորհներով պիտի թագաւորեն՝ թողութիւն գտնելով լուսաւոր Աւազանով, Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ, Սուրբ Հոգու ընդունելութեամբ, որ աղբիւրաբար բաշխեց շնորհներն արարածներին: Որպէսզի, արդարացած հաւատքով, Յիսուս Քրիստոսի միջոցով պահեմք խաղաղութիւնն առ Աստուած՝ [որպէս] ժառանգութեան առհաստէայ, որպէսզի Իր կամաւոր խաչելութեամբ նորոգի անեղծ փառքով: Եւ Մահով լուծարեց մահը եւ Իր Յարութեամբ մեզ յարութիւն տուեց մեղքի մեռելութիւնից, որպէսզի եւ մենք յարութեան յոյսով միշտ նորոգման մէջ մնանք ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից. ամէն:

ԺԶ

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսուհետ սկսենք նաեւ խօսքով ճանել մարտիրոսների մասին, որպէսզի պատուենք նրանց յիշատակը եւ երանի տանք նրանց

ճշմարիտ վկայութեան եւ սիրոյ համար եւ նրանց բարեխօսութեամբ բազում վարձք ստանանք մեզ համար: Այլեւ սաղմունքով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով մատուցենք Աստուծոյ պաշտօնը՝ սուրբ սրտով գովելով անսկիզբ Էութիւնը եւ ամենազօր Տէրութիւնը, որպէսզի արժանի դարձնի մեզ սուրբ ժառանգութեան բաժնին, [արքայութեան] խոստումների՝ Տէրութեան յոյսի եւ փառքի մէջ: Եւ բոլոր մարդիկ, որ հաւաքոււմ են սուրբերի յիշատակութեան ժամանակ, թող հաւատքով եւ սուրբ սիրով ճանաչեն նրանց նախատակութեան հանդէսը: Եւ նրանց բարեխօսութեամբ [պէտք է] աղաչել Աստուծո՛ւ՝ ջերմեռանդ արտասուքներով, սուրբ սրտի պաղատանքներով օր ու գիշեր հսկելով, որպէսզի առաքինասէր վարքով զերծ պահի մեզ այս աշխարհի չարից: Այն սուրբերի պէս, որոնց յիշատակը կատարոււմ է ի փառս Աստուծոյ, նաեւ [նրանց պէտք է] իրենց մտերմութեան հանդէսը ցոյց տալ բոլորի Տէր եւ արարիչ Աստուծո՛ւ, որ նրանց այնպիսի յաղթութիւն տուեց բռնաւորների եւ ճշմարտութեան հակառակորդների հանդէպ: Որպէսզի մեզ էլ տայ շնորհներ՝ յաղթելու մեզ վրայ բարձրացող երեւելի եւ աներեւոյթ բոլոր ճակատամարտերի դժուարութիւնները. եւ երկրպագութեամբ փառաբանութեան պաշտօն ընծայելու Աստուծո՛ւ:

Քանզի այս իսկ է սուրբերի կամքը, որ ժողովուրդը նոյնպէս նրանց բարեխօսութեամբ Աստուծոց յորդորոյի պաշտօն [մատուցելու]. եւ այսպէս աշխատութեան փոխարէն [վարձք] են Ամենասուրբ Երրորդութիւնից: Քանզի Պօղոսը եւ Բառնաբասը Տէր Յիսուս Քրիստոսի անուամբ նշաններ գործեցին՝ ի ծնէ կաղին բժշկելով, եւ զարմացրին բոլորին, մինչեւ որ քուրմերը նրանց երկնքից իջած եւ մարդու կերպարանք ստացած աստուած համարեցին: Ուստի զոհելով կամեանում էին պատուել նրանց՝ որպէս աստուածների: Եւ այս պատճառով [նրանք] պատանեցին հանդերձները եւ աղաղակելով ասում էին. «Մենք ձեզ նման մարդիկ ենք՝ ծառաներ բարձրեալ Աստուծոյ, որ արարեց երկինքը եւ երկիրը եւ նրանց արարածներին. եւ սա Նրա անունով բժշկուեց»: Այսպէս ասելով՝ հազիւ լուեցրին ամբոյսին, որովհետեւ անելի լաւ համարեցին մեռնել, քան Աստուծոյ պատիւն իրենց վերագրել եւ փառաւորուել մարդկանցից [տե՛ս Գործք ԺԴ 7-17]:

² Աղօթքների, ընթերցումների, հոգեւոր երգերի որոշակի կանոն է: Այժմ կատարոււմ է Պատարագին նախորդող Գիշերային ժամերգութեան ժամանակ անջեցեալների յիշատակի համար:

Նման բան արեց սատանան, որովհետև Աստուծոյ պատիւն իրեն վերագրեց եւ բաժանուեց իր Արարչի խնամքից, ընկա հրեշտակային դասերի փառաւորեալ կարգերից, լոյսի փոխարէն դարձաւ խաւար եւ զեհեհի պատժի ժառանգորդ: Քանզի Աստուծոյ ծառաներ սուրբ առաքեալներին, մարգարէներին եւ ճշմարիտ վարդապետներին անարգում էր, քանզի գիտէին սատանայի վայր ընկնելու մասին՝ հպարտութեամբ ամբարտաւանելու եւ ամբարտաւանելու պատճառով, եւ՝ խոնարհների ու հեզերի՝ ընկածների տեղերը բարձրանալու մասին: Մանաւանդ Քրիստոս, քանզի ըստ տնօրէնութեան առաւել յայտնի կերպով ցոյց տուեց իր անճառ խոնարհութիւնը, որի մասին էլ ասում է. «Սովորէ՛ք ի՞նձանից, քանզի հեզ եմ եւ խոնարհ սրտով, եւ հանգիստ կգտնէք ձեր անձերի համար» (Մատթ. ԺԱ 29):

Եւ բոլոր սուրբերն իրենց առաջնորդութեամբ, ճշմարիտ խոնարհութեամբ բոլոր Աստուծոյ հաւատացողներին ուղեկցում են դէպի բարձունքները՝ Տիրոջ մօտ, որպէսզի սուրբերի բարեխօսութեամբ փրկութեան եւ սխալանքների քաւութեան արժանանան բոլորի Փրկչից եւ այլեւ չվերադառնան դէպի սատանայի դժնդակ վարքը: Այլեւ [պէտք է] լսել իւրաքանչիւրի անհատակութեան եւ առ Աստուած կատարեալ սիրոյ մասին, [իմանալ], որ նրանց համբերութեան յոյսն Աստուծոյ նկատմամբ է, եւ նախանձախնդրութիւն ձեռք բերել Քրիստոսով: Որ հրով ու ցրտով, ջրով ու սառնամանիքով, քերանքներով³ ու հարուածներով, բանտերով ու կապանքներով, սովով ու ծարաւով, սրով ու մահով, սպառնալիքներով ու ողորջանքներով⁴ [փորձուեցին], որպէսզի երկչոտը զարհուրի, եւ արին փափկի: Այլ այսպիսի կարիքների, չարաչար տանջանքների վշտերը, նեղութիւնները եւ մարմնի տանջանքները ոչնչով [չկարողացան] քակտել ու խզել սուրբ սէրն Ամենասուրբ Երրորդութեան նկատմամբ: Եւ Աստուծոյ սիրոյ առաւելութեան պատճառով համարձակութիւն ստացան բարեխօսելու Տիրոջը: Քանզի բազում համբերութեամբ հակառակորդներից ընդունեցին այս ամէն տեսակ դժնդակ տանջանքները՝ Նրա երախտաւոր սուրբ սիրոյ համար, որ սիրեց մարդկանց, որ հրաւիրեց ու կանչեց:

Արդ, սուրբ սիրով սուրբերի հետ հետեւեանք կանչողին, այստեղի աշխատութեամբ, շերմեռանդ շնորհալից արտասուք-

³ քերանք- մաշկը քերելու տանջանքի գործիք

⁴ ողորջանք- անուշ խօսքեր, յորդորանք, աղաչանք

ներով փնտրենք այնտեղի հանգիստը, Սուրբ Հոգու հրով հանգցնենք ցանկութեան հուրը, չար խղճմտանքից սրբենք մեր անձերի երեւելի զգայարանները եւ աներեւոյթ հոգու շարժումները: Որպէսզի, առ Աստուած սիրով ճշմարտապէս հաստատուած, կարողանանք սուրբերի ժառանգութեանը, [արքայութեան] խոստումներին արժանանալ այս աշխարհի կեանքի վախճանից յետոյ: Որպէսզի այսպէս հաղորդակցուենք սուրբերի ժողովին եւ տօնենք [նրանց յիշատակն] ի փառս ամենակալ Աստուծոյ, որ յաղթութիւն տուեց նրանց չար բռնաւորների նկատմամբ. եւ յափտեցնապէս փառաւորութեան երկնքում եւ երկրի վրայ:

Այսպէս [պէտք է] յուսալ եւ հաւատալ սուրբերի ժողովին եւ բարեխօսութիւններին՝ որպէս քահանաների, որ կանգնած են Նրա առջեւ, որ նստած է Հօր աջ կողմում, եւ թող իւրաքանչիւրին աղօթքով պատարագ ընծայեն՝ կենդանի եւ վախճանուած հաւատացեալ ժողովրդի կամաւոր եւ ակամայ սխալանքների հաշտութեան համար: Եւ իրենց ճշմարիտ հաւատով, հանդիսաւոր ճգնութեամբ, առաքինաւեր վարքով, արդար, սուրբ եւ ճշմարիտ բաղձանքով, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանքով թող հաւատան, որ բոլորի Փրկչից կատանան խնդրելին՝ ըստ հաւատացեալ ժողովրդի յոյսի, մանաւանդ՝ փրկական Խորհրդի սրբապէս կատարումով ի Քրիստոս Յիսուս:

Այսպէս պէտք է իմանալ սուրբերի բարեխօսութիւնը հաւատացեալ ժողովրդի համար: Քանզի իրենց մտերիմ վաստակներով, իսկ որոնք իրենց մարմինները երկրի վրայ որպէս անուշահոտութիւն պատարագեցին Աստուծոյ անուան համար, նաեւ նրանց սուրբ հոգիները հոգեւոր բարեխօսութեամբ Աստուծոյ մղում են ողորմելու աշխարհին: Եւ նրանց ոսկորների նշխարները փրկութեան շնորհ են ընծայում հաւատացեալների ժողովին, ինչպէս քաջ յայտնի է բոլորին, որպէսզի նրանց նշխարներում բնակուող Աստուծոյ սէրը երեւայ եւ նշաններով իմացուի երկրի վրայ:

Իսկ արդ, [սուրբերն] իմանալիներով ունեն յուսացած բաների հաստատութիւնը եւ Աստուծոյ մերձաւորութեան ներկայութիւնը, բարեխօսութեան համարձակութիւնը, որ անտեսանելի է մարմնաւորներին. իսկ [մեք] նրանց նշխարների եւ սուրբ ժողովների մէջ [գործող] Աստուծոյ շնորհատուր զօրութեան երեւելի [նշաններով] պէտք է իմանանք աներեւոյթները՝ [որպէս] առաւելագոյն այցելութիւն Տիրոջից: Քանզի հոգիները, ասում է, առաւել են, քան մարմինները եւ Արարչի, եւ արարածների համար: Քանզի այստեղ՝

երկրի վրայ, և երկնքում Արարչից այսպիսի շնորհներ տրուեցին առաքելներին, մարգարէներին, մարտիրոսներին և բոլոր ընտրեալ սուրբերին: Որպէսզի նրանց առաջնորդական վկայութիւններով և առաքինաւոր վարքով հաճոյ լինենք Աստծուն, և նրանք իրենց մշտատեւ բարեխօսութեամբ պատճառ լինեն մեր փրկութեան և կեանքի: Եւ մենք երանի տանք Աստծուց փառատրուածներին, որ Աստուծոյ սիրոյ համար իրենց անձերը չարչարանքների ու մահուան մատնեցին և անմահ Թագաւորից ստացան անապական պարգեւներ և պատիւ: Այլև Աստուծոյ բոլոր սուրբերի վկայութեան յիշատակներին Ամենասուրբ Երրորդութեանը պաշտօն և փառաբանութիւն մատուցենք: Քանզի այսպէս է բոլորի Տիրոջ և Նրա բոլոր սուրբերի կամքը, քանզի Նա՛ է արծանի փառքի և պատուի բոլոր սուրբերից և արարածներից այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից. ամէն:

ԺԹ

ՅՈՐԴՈՐԱԿ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Մեծ են Տիրոջ պատուիրանների մեծապատուութիւնները, և անբա՛ւ բարերար Աստուծոյ շնորհները, քանզի որոնց նախապէս ճանաչում էր, նրանց էլ կանչեց դէպի անվախճան կեանքի յոյսը և արդարացրեց ու փառատրեց: Ովքեր հաւատքով ու երկիւղով պահեցին Նրա պատուիրանները և հնազանդուեցին Նրա ամենախնամ սուրբ սիրուն, ընդունեցին կեանքի խօսքն իրենց անձերի մէջ և պտղաբերեցին ու անեցին առաքինութեան վաստակներով, որոնց վարձքն անփոփոխ պահում է հանդերձեալ կեանքում: Իսկ ծոյլերն ու անհնազանդները, որոնք արհամարհեցին ճշմարտութեան խօսքը և խափանեցին արդարութեան պտուղը, չարաչար սերմերն ընդունեցին թշնամուց և, մոլորուած ուղիղ ճանապարհներից, մեղանչեցին ճշմարտութեան աւանդի և խնամակալ սիրոյ առջեւ, նրանց վախճանը կորստեան վիճի մէջ է:

Սակայն բարերար Աստուծոյ խնամքը չի անտեսում նրանց, ովքեր դառնում են դէպի Նա: Բացում է ողորմութեան շնորհի դռները, ընդունում է գթութեամբ, երախտաւոր սուրբ սիրով և յանձանձում Նրա գթութեանն ապաւինածներին: Եւ երբ սգաւորը

զղջում է ճշմարիտ խոստովանութեան խոնարհուած ու փշրուած սրտով, Փրկիչը գթում է նրան, ողորմում և այցելում: Քանզի ծածկուած դառը մաղձը դուրս փսխեց և ցոյց տուեց, թէ՛ «Ատեցի մեղքերը և անարգեցի, սիրեցի Քո օրէնքները» [տե՛ս Սաղմ. ԸԺԹ 113]՝ առողջանալու, սրբուելու և արդարանալու:

Եւ, ըստ ունակութեան, ցաւերի համար մարդասէր Բժշկից թող ընդունի առողջութեան դեղերը, [այսինքն]՝ արդարութեան վարքը՝ ընդդէմ իր ունեցած մեղքերի և դժնդակ ցաւերի, որպէսզի այլեւս չընկնի նոյնի մէջ. և [գուցէ] այլեւս չգտնի մարդասէր Բժշկին:

Քանզի Տիրոջ խօսքը ծանրաբեռնուածներին խոստովանութեամբ դէպի ապաշխարութիւն է կանչում, մեղքերով խաւարածներին՝ դէպի արդարութեան յոյսը, մոլորուածներին՝ դէպի ճշմարտութեան գիտութիւնը, արդարութեան ճանապարհներից շեղուածներին ուղղութեան բերում՝ խոստովանութեամբ մահաբեր վարքը վերստին նորոգելու կեանքի մէջ և սատանայի բոլոր խարդախութիւնները լուծարելու: Քանզի «կամեանում է, որ ամէն մարդ ապրի, - ասում է առաքելալը, - և ճշմարտութեան գիտութեանը հասնի ամենագիտ սիրոյ տեսչութիւններով» [տե՛ս Բ Պետր. Գ 9, Ա Տիմ. Բ 4]:

Քանզի խոստովանութիւնը, ասում է մարգարէն, մեծ վայելչութիւն է Աստուծոյ և Նրա քահանաների առաջ [Սաղմ. ՂԵ 6]. ահա թէ ինչու՛ «Ասացի, թէ ինքս կպատմեմ իմ մեղքերը, և Դու կներես իմ մեղքերի բոլոր ամբարշտութիւնները» [Սաղմ. ԼԱ 5]: Որովհետեւ վերքերն է բանում և ցաւերը յայտնում, զղջմամբ վրան է դնում բժշկութեան դեղը՝ ապաշխարութիւնը՝ հոգեւոր եռանդով, հանապազորդ արտասուալից աղօթքների մէջ՝ օր ու գիշեր անդադար: Եւ [ապաշխարողը], մարմինը պահքով ճնշելով, [պէտք է] խղճալի կերպարանք ստանալ, որպէսզի Աստծուն բազմախնամ շնորհներով գթալու խոնարհեցնի՝ մեղքերի թողութեան համար: Որովհետեւ ապաշխարութիւնը ոչ թէ մի բանով է կարգում, այլ բազում իրերով է շինում և արդարութեան որոշակի չափի կանգնեցնում ընկածին ու յաիշտակուածին:

Ապաշխարութեան ժամանակ նախ, առաջինը, [պէտք է] զղջալ, յանցանքները խոստովանել, անձն արտասուքի ընդունարան դարձնել անդադար աղօթքներով, տքնութեամբ ու միշտ պահքով և մեծ ապաշաւանքով հանապազ սգալ գործած յանցանքները: Երկրորդ՝ ըստ բոլոր վնասների ատել մեղքերն ու մեղքերի գործակիցներին և կշտամբել միտքն ու զգայութիւնները, որոնք դէպի չարը

հակամիտեցին և չպահեցին հոգևոր օրէնքները, որոնք նրանց աւանդուեցին Արարչից: Երրորդ՝ սիրել արդարներին ու առաքինիներին և նրանց գործակիցներ դարձնել առ Աստուած աղօթքներով ու բոլոր բարի գործերում, որ յորդորում են դէպի ճշմարտութեան կարգերի աւանդները: Չորրորդ՝ յանցաւորներից խորշել մտքով, խօսքով, ամօթով ու պարկեշտ տեսութեամբ, անելի լաւ համարել նեղութիւն կրել արդարների հետ, քան հանգիստ՝ անիրաւների հետ: Հինգերորդ՝ Տիրոջ ահի ու երկիւղի մէջ կրթուել, մտքից բաց չթողնել վախճանի օրը, այլեւ՝ մեղաւորների պատիժները, և մեռցնել անդամները կրքերով ու ցանկութիւններով [հանդերձ] [տե՛ս Գաղ. Ե 24]: Վեցերորդ՝ օր ու գիշեր հսկել անձի փրկութեան համար, թէ ինչպէս կարելի է մեղքերը խափանել և փրկուել բարկութիւնից, որ գալու է չապաշխարողների վրայ: Եօթերորդ՝ չմոռանալ սեփական անձի անկումը, չպղերգանալ բարեպաշտութեան ճգնութիւններում, չվերադառնալ նոյն վնասին՝ չկարենալով վերստին բժշկուել: Ութերորդ՝ առողջացած, զգաստացած, սրբուած՝ ճանաչել ներքին ու արտաքին մարդուն և ճշմարիտ ապաշխարողներին խոստացած անետիսների յիշատակները: Իններորդ՝ ըստ հոգևոր օրէնքի և Քրիստոսի Աւետարանի կատարելով բոլոր հրամայումները՝ վերստին նորոգման սպասել քաւութեան Պատարագի միջոցով: Տասներորդ՝ երեւելի և աներեւոյթ [առաքինութիւններով] աճելով բոլոր բարեգործութիւնների մէջ, հոգու և մարմնի մեղքերի սպիտեղ ջնջելով և ապաշխարութեան հանդէտում յաղթող դառնալով՝ կարենալ համարձակութիւն ունենալ մեղսաքաւիչ, կենդանարար խորհրդի հանդէպ և հաղորդակից, մարմնակից ու կցորդ լինել անճառելիներից: Եւ այնուհետ վերինը խորհել, ուր Քրիստոս է մտնում, Նրա հետ նաեւ՝ սուրբերը՝ [որպէս] երանութեան առհաստչեալ:

Ճշմարիտ խոստովանողներն ու ապաշխարողներն ազատում են Քրիստոսի փրկաւետ Մարմնով ու Արեամբ: Քանզի դա է մեր յոյսն ու քաւութեան առիթը, և դրանով են լինում ազատութիւն և մուտք դէպի արդարների ուրախութիւն ու ծառանգութիւն՝ Քրիստոսի սուրբ սիրոյ երախտիքներով, որն արդարացնում է ապաշխարող մեղաւորներին: Որովհետեւ ինչպէս [ե՛րբ] սուրը հատում է մարմինն ու վտանգ հասցնում անձին, [վերջինս] բժշկի կարիք է ունենում, որպէսզի որոշ դեղերով վերացնի վտանգները՝ առողջացնելու համար, այդպէս նաեւ ցանկութեան հարուածներն ու աղտեղի յիշողութիւններն ապաշխարութեան դեղերով [են բուժում], վեր-

քերը ջերմեռանդ արտասուքով լուացում և անարատ սրբութեամբ բժշկում: Քանզի արտասուքի դոճեր են նեղութիւնների վշտերն ու ախտերի ցաւերը, վնասների կսկիծները, հոգիների տազանապները, շահից վրիպումները, թշուառ պատահարները, բռնաւորների կողմից վտանգները, յանկարծահաս տնանկութիւնը, սիրելիների կորուստը, դժնդակների անտանելի պէս-պէս ցաւերը և սրանց մամալ [չարիքներ]: Իսկ հոգու շարժումները, չար դէպից յափշտակուելով ամէն տեսակ ցանկութիւնների մէջ, վշտացնում են միտքը դժնդակ, ապերախտ խորհուրդներով, որոնք չուեն արդարութեան կայաններ:

Ուստի պէտք է արտասուալից պաղատանք [մատուցել] Փրկչին, որ գերծ պահի այդքան վնասներից: Եւ վրէժնադրութեան հետ հոգևոր [կեցուածքով] նայել նրանց, առաքինութեան զէնքերով վայր կործանել նրանց և զօրավիզ ունենալ մեր կեանքի ապաւէն Յիսուս Քրիստոսին: Եւ այստեղից, բարիքների ցանկութիւններով, Աստուծոյ այցելութիւնը ստանալ, հաւատքով ընտանիների հանդէպ՝ գութը, Աստուծոյ սիրող հեռաւորների կարօտը, հոգևոր գիտեղի մտերմութեան ծարաւը, սուրբերի հանդէպ փափագումը, խաղաղութեան քարոզը, խնամրհութեան խոկումը, խրատների քաղցրալից խօսքերը, որոնք կարծրացած միտքը յորդորում են առաքինութեան: Բոլորին օգտուելու [յանձնել] փրկութեան սիրոյ խնամքին և [յորդորել] դէպի հոգևոր [բարիքների] լրման և բարի վայելքների օգուտները և նեղութեան մէջ համբերելու՝ վայելելու համար շնորհների պարգեւները, որ տրում են կեանքի յստակ Աղբիւրից: Ուստի ամբողջ սրտից մտերմութեամբ [կատարուող] աղօթքներն ու խնդրուածքները շնորհներով տանում են դէպի Նաւահանգիստ:

Եւ, միտքն արտասուքով զղջմամբ ճնշելով խոստումների յիշատակներով, խնամալից պաղատանքով, եռանդասէր խանդաղատանքով [պէտք է] շնորհալից արտասուք հեղել՝ մաքրելու միտքն ու մարմինը, դրոնք իբրեւ անմաքրութիւն ստացել էին չար ու աղտեղի ցանկութիւնները: Քանզի արտասուքը մեղքերի հարուածների դառնութիւնը սրբում ու ողջացնում է, խոսանը դէն նետում մտքից ու զգայութիւններից, և [զղջացողը] Փրկչի նախախնամական սիրոյ հովանու ներքոյ է լինում և յոյսով ստանում [Տիրոջ] մխիթարութիւնը: Արտասուքը միտքը շարժում է դէպի Աստուած, մեղքերի թմրածութիւնից, ասես քնից, արթնացնում և հոգեշահ օգուտների սիրով վառում զգաստութեան զգուշութեան համար: Արտասուքը խմեցնում է հոգևոր ըմպելիքը՝ սուրբ սիրոյ խնամքով,

Բարերարի տեսչության քաղցր կամքի յիշատակների գույթով՝ բխած շնորհալից աղբիւրից՝ ազատութեան եւ յափտեմակամ կենդանարար յոյսի ժառանգութեան համար:

Այսչափ եմ օգուտներն արտասուքով զղջումից, որոնք [մարդկային] հոսանուտ բարքը շարժում են դէպի փրկութեան գիտերն ու Աստուծոյ կամքի պահպանութիւնը եւ միտքն ամփոփում Աստուծոյ հաճութեան մէջ: Եւ որքան բարիքների շահ [կայ] սրանցից, այնքան առաւել վնաս [կայ] ծուլութիւնից եւ սրտի խորքից առաջ եկող արտասուքի [հանդէպ] արհամարհանքից: Եւ պղերգութիւնից արգելափակուած, չարի ազդման պատճառով դժնդակների մուտք է լինում, որոնք միտքն ու անդամները շարժում են դէպի ամէն տեսակ չարիքները, եւ զղջումն ու արտասուքը հեռանում են ծուլութիւնից ու խստացած, ամբարտաւան սրտից, որը քամահրում է շնորհների զեղջն ու չի հոգում նրա համար, ինչից զրկուեց: Եւ բարիքների փոխարէն ընդունում է չարիք, արհամարհութիւն, ամբարտաւանութիւն, ապիրատութիւն, յամառութիւն, ամբարշտութիւն, սնափառութիւն, ազահութիւն, որկորստութիւն, ցանկութիւն եւ չարի այլ ներմուծութիւններ: Եւ սրանցից բռնուածը դժուարութեամբ է բժշկում:

Սակայն մարդասէր Բանն անյոյս չի թողնում [նրանց], ովքեր զղջում են, հնազանդում Աստուծոյ ահով եւ ընդդէմ մեղքերի ցոյց տալիս ուղղութիւն, [ընդդէմ] անհրաւութեան՝ իրաւունք, [ընդդէմ] անարթութեան՝ սրբութիւն, [ընդդէմ] ամբարտաւանութեան՝ խնայարհութիւն, [ընդդէմ] բարկութեան՝ հեզութիւն, [ընդդէմ] որովայնամոլութեան՝ պարկեշտութիւն, [ընդդէմ] հեղգութեան՝ պնդութիւն, [ընդդէմ] ստութեան՝ միշտ ճշմարտութիւն, [ընդդէմ] անհնազանդութեան՝ հնազանդութիւն, [ընդդէմ] ազահութեան՝ չափաւորութիւն, [ընդդէմ] կեղծարտութեան՝ պարզամտութիւն, [ընդդէմ] երդմնահարութեան՝ չերդուելը, [ընդդէմ] մախանքի՝ բարերարութիւն, [ընդդէմ] ռիսկալիութեան՝ անոխակալիութիւն, [ընդդէմ] խստութեան՝ քաղցրութիւն, [ընդդէմ] ատելութեան՝ միշտ սուրբ սէր, [ընդդէմ] անզղջութեան՝ արտասուքով զղջում, [ընդդէմ] առանց խղճմտանքի անխոստովանութեան՝ մեղքերի ինքնայանդիմանական խոստովանութիւնը, [ընդդէմ] անյուսութեան՝ ճշմարիտ յոյսը, [ընդդէմ] թերահաստութեան՝ ճշմարիտ հաստառը հաստատել [սեփական] անձում եւ քարոզել ճշմարտութիւնն ուրիշներին:

Այս է ապաշխարութեան ստոյգ աւանդների դէմքը. գործել [այն] ամէնը, ինչ հակառակ է մեղքերին՝ բոլոր տեսանելի եւ

անտեսանելի արդարութիւնները՝ ստոյգ ապաշխարողների մտերիմ խորհուրդներով ու խոստումների յիշատակներով եւ դարձեալ՝ ամենքի Տիրոջ կողմից չապաշխարողներին [սպասուող] սպառնալիքներով: Սրանցում [պէտք է] զգուշանալ եւ Տիրոջ ահով պատրաստ լինել [այն ամենին, ինչ] հաճելի է Աստուծոյ՝ Աստուծոյ անվրէպ գիտութեան [եւ] Դատաստանի Օրը (երբ խորհուրդներից, խօսքերից ու գործերից ոչինչ չի ծածկուելու) արդար Դատաւորի հաշի պահանջելու յիշատակներով:

Քանի որ առաքինիների ու պղերգների, հաւատացեալների ու անհաւատների ընտրութիւն եւ ըստ արժանիքների հատուցում [պիտի լինեն]: Պատիւները, մեծարանքներն ու երանութիւնները յաղթողներին են, ովքեր մարտնչեցին ընդդէմ մեղքերի ու հակառակորդի եւ յաղթեցին ու պսակուելով փառաւորուեցին: Այլեւ [նրանց են], ովքեր ճշմարտապէս ապաշխարեցին իրենց յանցանքները: Իսկ տանջանքների ահաւոր սպառնալիքը պաշարում է անհրաւների ու ամբարիշտների [եւ տանում] դէպի պատիժների տոչորումը, որովհետեւ չապաշխարեցին: Եւ ապաշխարութեան կարգի տակ խնայարհութեանն ու հնազանդութեանն, ըստ Իր բազում ողորմութեան, ընդունում է կեանքի օթեանները՝ ըստ մաքրման արժանատութեան: Այսպէս, անդուածներն ու վտանգուածներն ինչ-ինչ սխալանքների համար արտասուքով ու բարի շարժումներով ողորմելու են դարձնում մարդասէր Տիրոջը:

Եւ ինչպէս մանուկներն են, որ չգիտեն պէտք եղած բաները խօսքով ստանալ. մայրերի խնամքից, այլ դրանք խնդրում են արտասուքով ու ստանում սիրոյ խնամքից, որովհետեւ չեն դադարում լալուց, մինչեւ մայրական ողջ խնամքը չի կատարում, ապա դադարում են [լալուց], զուարճանում ու հանգստանում, այսպէս էլ մե՛զ պէտք է լինել բարեգութ Տիրոջ հանդէպ, որ մեզ աներեւութապէս խնամում է արարչական սիրով, նստում անարուեստ Աթոռներին եւ Իր բարերարութեամբ խնամում արարածներին: Որ անխաֆայրերի միջոցով յայտնի դարձրեց աստուածգիտութիւնը եւ մարգարէների միջոցով ցոյց տուեց ապաշխարութեան հանգամանքները [նրանց], ովքեր դարձի են գալիս: Իսկ Իր գալստեանը բացեց ողորմութեան դուռը եւ ասաց. «Չեկայ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին ապաշխարութեան» [Ղուկ. Ե 32]՝ խոստովանութեամբ, արարչական խնամակալ սիրով: Որպէսզի, անտիսների կոչմանը փութալով, պարգեւներ ստանանք ապաշխարութեամբ քաւութիւն Օտորհողից, որ բժշկում է աներեւոյթ հոգիներն

ու երեւելի զգայարանները:

Հաստատացեալների թողութիւնը նախ Աւագանից է՝ Ամենասուրբ Երրորդութեան ճշմարիտ խոստովանութեամբ: Որովհետեւ ասում է աշակերտներին. «Գնացէ՛ք, մկրտեցէ՛ք հաստացեալներին յանուն Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյ եւ սովորեցրէ՛ք պահել Քրիստոսի բոլոր պատուիրանները» [տե՛ս Մատթ. ԻԸ 20]: Որովհետեւ «ովքեր ի Քրիստոս մկրտուեցին, Քրիստոսով զգեստարուեցին» [Գաղ. Գ 27] եւ վերստին ծննդեամբ դարձան լուսոյ որդիներ ու արքայութեան ժառանգներ: Քանզի շնորհներով դառնում են ցերեկուայ որդիներ գիշերային ծննդից՝ ազատուելով խաւարի իշխանութիւնից, եւ Բարերարի օգնականութեամբ ապրում են երկրի վրայ լուսատու վարքով: Եւ, ըստ Նրա շնորհների արուեստների, հեռատրները դառնում են մերձատրներ, եւ օտարացածներն ընտանեանում են ճշմարիտ հասարակութեամբ ու անքիժ սիրով: Եւ աստուանի կողմից մեղքերի ու, մեղքերի պատճառով, մահուան մէջ բռնուածներին [Տէրն] արդարացնում, կենսագործում եւ հրաւիրում է դէպի Իր արքայութիւնն ու փառքը, որ պատրաստեց [Իրեն] սիրողների համար:

Դարձեալ՝ մեղատրների համար ցոյց տուեց նաեւ ապաշխարութեան պարգեւները եւ յայտնի դարձրեց առաջին [արդարների օրինակներով]: Ինչպէս լսում ենք Դաւթի մասին, որ մեղանչեց, դարձաւ խոստովանեց ու ապաշխարեց. նա լալիս էր ողջ գիշերն ու խմելիքն արտասուքով խառնում Տիրոջ բարկութեան պատճառով, արտասուքի վտակներ էին հոսում, որովհետեւ Տիրոջ պատուիրանը չպահեց, եւ ցանկասէր աչքերն էր մաշում արտասուքով եւ սրբուեց մեղքերից: Նոր [Կտակարանի] մէջ էլ Պետրոսն է, որ ուրացաւ եւ չիշեց Տիրոջ նախապէս ասածը, մինչեւ որ, քաղաղի ձայնից սթափուելով, յիշեց եւ «ելնելով,» ասում է [աւետարանիչը], «դառնապէս արտասուեց» [Մատթ. ԻԶ 75]: Եւ շերմ արտասուքի համար թողութիւն ստացաւ, եւ առաքելական շնորհները վերստին մնացին, ինչպէս Դաւթի մարգարէական [շնորհները]: Էլ չեմ ասում Հին եւ Նոր [Կտակարանների] այլ մեղանչածների ու ապաշխարածների մասին (ինչպէս պատմում է աստուածային Գիրքը), որոնք ցոյց են տալիս ստոյգ ապաշխարութեան օրինակներ:

Եւ այսպէս, ապաշխարութեան կեանքի դուռը չի փակուելու մինչեւ աշխարհի վախճանը: Որպէսզի [ապաշխարութեան] առազանի հանապազորդ արտասուքով լուսանք ու սրբենք հանապազորդ

սխալները, որովհետեւ ամէն օր մեղանչում ենք՝ թե՛ խորհրդով, թե՛ խօսքով, թե՛ լսելով, թե՛ տեսնելով [եւ] թե՛ որեւէ շարժմամբ: [Ուստի] թող հանապազորդ աղօթքներն ու արտասուքի լուսումները չպակասեն:

Քանզի, որ մեղքերը կտակով են, այսինքն՝ օրէնքի ներքոյ, նրանց համար ժամանակ է սահմանում, հեռացնում են Եկեղեցուց, ժողովրդից ու Սեղանից, որովհետեւ մեծ վնասների դիմաց նաեւ մեծ ջանք ու աշխատութիւն են հարկատու: Եւ ովքեր քիչ սխալներ ունեն, բժշկութիւնն է արտասուքով սրբելը: Իսկ եթէ սրտի խորքում աղտ կայ, ապականուած է անդամներով, այնտեղ արտասուքի վտակներ, հոգու հոյս ու եռացում են հարկատու, որ [աղտը] սրբում, հալեցնում ու հեռացնում են: Եւ ով ակամայ վրիպած քիչ սխալներ ունի, [պէտք] է զղջայ, հառաչի եւ արտասուքով իսկոյն կտրուի:

Ում մեղքերի վերքերը սաստիկ են, եւ ինքնակամ է բռնուել [նրանցից], որ օրէնքով ունի Տիրոջից տրուած [քրիստոնէութեան] անունն ու կարգը, [այդպիսի] ունի սպառնալիքների հանգամանքներ: [Ուստի], ըստ յանցանքների [չափի], թող մեծ ջանք, ջերմեռանդ արտասուք, սրտի փշրուածութիւն ձեռքերի՝ որոշակի ժամանակով հեռացուելով [Եկեղեցուց]՝ խափանելու համար խիստ մեղքերի դժնդակ ձմեռը: Որպէսզի Հոգու հարաւային տաք քամու փչմամբ ժամանի հոգեւոր գարունը, սաստիկ անձրեւի պէս վերից [թափուեն] արտասուքի հոսանքները, որ թարմ հողը ծլեցնի բոյսեր ու ծաղիկներ, տունկերը սաղարթաւորուեն ու պտուղներ [տան], որոնք վայելելով՝ թագաւորներն ու ռամիկները զուարճանում են: Սոյնպէս էլ ով Հոգու ջերմութեամբ հեղում է արտասուքի հոսանքներ եւ խզում ձմեռային մեղքերի կապանքները, առաքինութեան բոյսեր են արձակուում, եւ արդարութեան տնկիները պտուղներ [են տալիս], որով երկնատրներն ու երկրատրներն ուրախանում են Աստուծոյ փառքի համար:

Ապաշխարողներն այսպիսի միտք եւ բարք պէտք է ստանան, որպէսզի ազատուեն գեհեհի անշէջ հրի եւ անմահ որդերի հարուածների պարտքից: Եւ, հաստատուելով արտասուքի առազանով՝ ստոյգ ապաշխարութեամբ, արքայութեան ժառանգաւորներ լինեն՝ հազնելով սրբութեան լոյսով ճառագայթող, առաքինութեան վկայութիւններով [զարդարուած] պատմուճանը՝ սուրբերի հետ պակուելու եւ վայելելու անվախճան երանութիւնների մէջ:

Ապաշխարութիւն է սեփական անձն ամբաստանելը եւ վնասակար ու չար ցանկութիւններից հրաժարուելը: Եւ ամէն չարիքի

փոխարէն ընդդէմ դնել արդարութիւնը, որպէսզի խափանի մեղքերը եւ սուրբ սիրով ու արտասուալից աղօթքներով անեցնի արդարութեան [գործերը], պահքով ցամաքեցնի գիշտութեան պղտոր, անծոյժ բխումը, որն ապականութիւն է անդամներում: Որովհետեւ [ինչպէս որ] աղբիւրների ջրերն ու անձրեւների սրկումները հանգցնում են երեւելի հուրը, [նմանապէս] եւ Աստուծոյ հանդէպ սէրն ու ջերմտանդ արտասուքը հանգցնում են ցանկութեան հուրը եւ խափանում մարմնի կամքն [ու] ինքնագործութեան շօշափելիքներով աղտեղի շարժումների հոսումները: Եւ այլեւս չմերձենալ ախտերի նոյն գարշտութիւններին, այլ մաքուր մտքով ստանալ մաքրութիւն: Որպէսզի անարքութեան սպառնացող պատուհաղ վրայ չհասնի այն օրը, երբ չգիտի, եւ այն ժամին, երբ չի կարծում, եւ ըստ վնասների, վրէժխնդիր լինի:

Այլ [պէտք է] սիրել սրբութիւնը, որ բնակում է Տիրոջ եւ սուրբերի մէջ: Իսկ անսուրբերի մասին ասում է. «Նրանց որդը չի մեռնում, եւ հուրը չի հանգչում. եւ խայտառակութիւն կլինի բոլոր մարմնաւորների համար» [Եւ. ԿՁ 24]: Եւ մեղքի բոլոր մթերումները [պէտք է] թօթափել մտքից եւ մարմնից, մինչեւ որ կարողանայ ասել. «Գալիս է այս մեղասաւեր աշխարհի իշխանը եւ իմ մէջ մեղքի նշոյլ չի գտնի, այլ [միայն]՝ Քրիստոս՝ ըստ Աւետարանի կեանքի, որ վերստին նորոգեց մեզ ստոյգ խոստովանութեամբ եւ արտասուքով, ապաշխարութեամբ եւ տնանկների հանդէպ գթով՝ ամենայն աստուածահաւ եւ առաքինասէր վարքով»: Եւ [պէտք է] ճշմարտութեան այգու մշակներ լինել հաւատքի եւ ուղիղ վարքի գիտարութեամբ, որով ապրում է երկրի վրայ եւ առաքինանում: Եւ, ելնելով այս աշխարհից, իր հետ է տանում բոլոր արդարութիւնները՝ երեխայութեան անմեղութիւնը, մանկութեան անարատութիւնը, երիտասարդութեան անբծութիւնը, ծերութեան մաքրութիւնը՝ ըստ իւրաքանչիւր տարիքի դասելով բոլոր առաքինութիւնները. եւ ժամանակների փոփոխման համաձայն, ըստ իւրաքանչիւր վաստակի, հաւատքի այգու մշակները վարձք են ստանալու ամենքի Տիրոջից: [Պէտք է] յորդորել դէպի վերին կոչումը, ուր Քրիստոս նստում է Աստուծոյ աջ կողմում՝ վերին Երուսաղէմում, որ բոլորի մայրն է. ուր նաեւ նախապէս ամբարուեցին քարի առաքինութիւնների գանձերը, ուր հաստատուած է մեր յոյսը՝ անմահ երանութիւնները, անսպառ վայելչութիւնները, անվախճան ուրախութիւնը, ան-

զեզջ քարիքները՝ Քրիստոսի հետ վայելելու: Միահաւա՛ն խնդութիւն երկնաւորների եւ երկրաւորների, երանութի՛ւն Քրիստոսի փառքի մէջ՝ սուրբ սիրոյ բարեբար երախտիքների գործակցութեամբ: Որ [մեզ] որդեգրութեան ընծայեց Հօրը, յանձնեց Սուրբ Հոգու խնամքին եւ իր արքայութեան ժառանգորդներ դարձրեց: Որ այստեղ արդարացեց եւ այնտեղ, թագով պսակելով գլուխը, փառաւորում է աստուածային խրախճանքներում, մշտապէս [հաստատում արքայութեան] հրճուանքներում, Ամենասուրբ Երրորդութեան քարիքներում: Հանգի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ յաիտեանս յաիտեանից. ամէն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ԱՍԱՄ ԱՂՕԹՔԸ, ԵՐԲ ՄԷԿԸ ՈՐՈԳԱՅԹԻ ՄԷՋ Է ԸՆԿՆՈՒՄՑ

Օրհնեա՛լ է Քո անբաւ մարդասիրութիւնը, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս. ինչ՞ո՛ւ եւ ինձ լքում: Եթէ՛ մեղքերի ուսմար, Դո՛ւ եւ միայն առանց մեղքերի, եւ Քո անունը անոխտելութիւն եւ մարդասիրութիւն է յայտնում: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ եւ միայն մարդասէր: Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մէջ ընկածիս, քանզի Դո՛ւ եւ միայն առանց մեղքերի: Հանի՛ր ինձ իմ անօրէնութեան տիղմից, որպէսզի յաիտեան չընկղմուեմ: Փրկի՛ր ինձ իմ թշնամուց, քանզի ահա առիծի պէս մոնչում է՝ կամեցալով կլանել ինձ: Արդ, Տէ՛ր իմ, շողացրո՛ւ Քո փայլատակումները եւ կործանի՛ր նրա զօրութիւնը. թող երկնչի եւ խաւարի Քո երեսից, քանզի տկար է եւ անզօր՝ կանգնելու Քո եւ Քեզ սիրողների առջեւ: Տեսնում է Քո Խաչի նշանի զօրութիւնը եւ զարհուրում եւ ամաչելով դուրս հալածոււմ նրանցից, որ կանչում են Քեզ: Այժմ, Տէ՛ր, պահպանի՛ր ինձ եւ փրկի՛ր, քանզի Քեզ նապաիներցի. հանի՛ր նեղութիւնից իմ անձը, որպէսզի ծածուկ հնարներով ինձ հետ մարտնչող նեղաւորն իսպառ չկործանի ինձ: Որ խորհուրդների Տէր եւ եւ քննում եւ

6 «Գանձասար» մատենաշարով լոյս տեսած «Աղօթագրքում» (Երեւան, 1992, էջ 236-239) զետեղուած այս աղօթքի բնագիրը զգալիօրէն տարբերում է «Ծանախապատումի» հնագոյն ձեռագրի բնագրից, որը լոյս է տեսել վեներիկում 1954 թ.: Ուստի պատշաճ նկատուեց նոր թարգմանութիւն կատարել՝ ըստ վերոյիշեալ հրատարակութեան:

արտերն ու երիկամները, սրբի՛ր իմ սիրտը եւ խորհուրդները զագի ու պիղծ խորհուրդներից, որպէսզի իսպառ չկորչեմ յաւիտեանական կորուստով: Որ Կարողդ եւ ամէն ինչի մէջ, ողորմի՛ր ինձ, Աստուած իմ. մեղաւոր հոգուս արտասուքի շնորհ տուր, որպէսզի լուսնամ մեղքերի բազմութիւնը՝ փրկուելու անողորմ հրեշտակների ձեռքից, որոնք զեհեհի հուրն են գցում ամբարշտիե Երանի՛ թէ լայի հանապազ՝ աղաչելով -Քեզ, Աստուած, որպէսզի անարժան չգտնուեմ այն ժամին, որ գալու եւ: Չլսե՛մ ահաւոր ձայնը, թէ՛ հեռո՛ւ գնա, մշա՛կդ անօրէնութեան, չգիտեմ՝ որտեղից եւ: Բարձրեա՛լ Աստուած՝ միայն՝ առանց մեղքերի, այն օրը շնորհի՛ր ինձ՝ մեղաւորիս, -Քո բազում գթութիւնը, որպէսզի իմ ծածուկ անօրէնութիւնները չյայտնուեն տեսնող հրեշտակներին եւ հրեշտակապետերին, մարգարէներին, առաքելայններին եւ արդար սուրբերին: Փրկի՛ր ինձ՝ ամբարշտիս, -Քո ողորմութեան շնորհով, ընդունի՛ր ինձ փափուկ դրախտի մէջ կատարեալ արդարների հետ, ընդունի՛ր -Քո մեղաւոր ծառայի աղօթքները -Քեզ հաճելի դարձած սուրբերի բարեխօսութեամբ, Յիսու՛ս -Քրիստոս, Տէ՛ր մեր, որ օրհնեալ եւ Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ՆՈՒՒՐՈՒԱՑ ԾԱՌԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցու Հայրերի աշխատութիւնների հրապարակումը կարելու է քրիստոնէական մտքի, Տիեզերական Եկեղեցու պատմութեան առաւել Համակողմանի ուսումնասիրման համար: Դրանց մէջ առանձին չահեկանութեամբ աչքի են ընկնում, մասնաւորաբար, այն աղբիւրները, որոնք լոյս են սփռում դասական շրջանի, յատկապէս՝ Գ. Դ. դարերի Եկեղեցու աստուածաբանութեան, հերձուածողական դադափարաբանութեան հետազոտութեան կարօտ կողմերի վրայ: Այս առումով խիստ ուշադրաւ է ս. Բարսեղ Կեսարացու (+379թ.) Սուրբ Հոգուն նուիրուած ճառը¹, որն ուղղուած է այդ ժամանակ բաւական տարածուած սուբորդինացիոն տեսութեան դէմ: Այն շարադրուած է Ամփիլոքիոս Իկոնացու (+394թ. յետոյ) խնդրանքով: Երկի յունարէն ձեռագրերի թիւն անցնում է երեսունից: Դրանք թուադրուած են Թ-ժՁ դդ.: Բնագիրն առաջին անգամ հրատարակել է D. Erasmus Basileae-ն 1532թ.: Բնական բնագիրը հրատարակել է C. F. H. Johnston-ը ("The Book of Saint Basil the Great, Bishop of Caesarea in Cappadocia on the Holy Spirit", Oxonii, 1892) եւ B. Pruche-ը ("Basil de Césaree, Traité du Saint-Esprit", Text grec. introduction et traduction [Sorces Chrétiennes, 17, Parisiis, 1968]): Երկասիրութեան ասորերէն թարգմանութիւնը յայտնի է երկու ձեռագրով՝ Brit. Mus. Add. N 14542 (509թ.) եւ N 17143 (Ե դ.): Այն տակաւին անտիպ է: Լատիներէն թարգմանութեամբ պահպանուել է մի փոքր հատուած (Migne, PG, t. 32, col. 149BC), որ գետեղուած է Հայրախօսական մի ժողովածուի մէջ՝ «Կեղծ» Դիոնիսիոսի անունով:

Երկասիրութեան Հայերէն թարգմանութիւնը յայտնի է երկու



¹ St'us Migne, PG, t. 32, col. 67-218:

² Մատենագիտական տունայնթրմ՝ ըստ J. Gribomont-ի, տե՛ս Migne, PG, t. 32, p. 1-2, Գառի՝ M. Geerard, "Clavis Patrum Graecorum", v. II, "Ab Atanasio ad Chrysostomum", Brépole-Tumout, 1974, p. 143 (N 2839):

ընդօրինակութիւններով, որոնք պահպանուած են Մաշտոցի տեսակ Մատենադարանի N 1315, 1798 ձեռագրերում: Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Հայերէն Թարգմանութիւնը զգալիօրէն տարբերուած է յունարէն ընթացից: Տարբերութիւնների ծաւալն ու որակը յատորոշ դարձնելու նպատակով զուգարարաբար վիճարկելովք առակի նման Հատուածներից մի քանիսը.

1. εἴπερ καθ' ὃν τρόπον τὰ ἐν γενέσει καὶ φθορᾷ πρότερα εἶναι ἀλλήλων λεγεται, κατὰ τὸν αὐτὸν τρόπον ὁ Θεὸς καὶ Πατὴρ τῷ Υἱῷ καὶ Θεῶ τῷ ὑπάρχοντι πρὸ τῶν αἰώνων παραμετρούμενος ὑπερέχοι. Ἀλλὰ γὰρ ἢ πρὸς τὸ ἄνω ὑπεροχή τοῦ Πατρὸς ἀθεώρητος, τῷ ἀπαξιαπλῶς μῆτε ενθύμησιν, μῆτε τινα ἐννοίαν τῆν τοῦ Κυρίου γέννησιν ὑπεραίρειν, καλῶς τοῦ Ἰωάννου διὰ δύο φωνῶν εἶσω περιγράπτων ὄρων τῆν διάνοιαν ἀποκλείσαντος, ἐν τῷ εἶπειν. Ἐν ὀρχῇ ἦν ὁ λόγος.

(...Բայց կեանքի կեցութիւնը, որ գերազանցում է ամէն տեսակ ժամանակ եւ յաւիտենութիւն, ոչ միայն անպատել կլինի չափել ներկայ ժամանակից սկսած, այլեւ՝ չափից աւելի անմիտ, եթէ միայն պատկերացուի, թէ ինչպէս կարելի է խօսել սկիզբ եւ ապականութիւն ունեցող իրերի մասին, երբ մէկը միւտից առաջ է, ճիշտ այդպէս էլ՝ ասել՝ Աստուածը եւ Հայրը, որ Համեմատելի է յաւիտենութիւնից

1 Այս և յետագայ ընդգծումները մերս են - Յ. Բ.:

առաջ զոյրդ Որդու եւ Աստուծոյ Հետ, գերազանցում է Նրան: Ընդհակառակը՝ աւագութեան յարաբերութեամբ Հօր այսօրինակ գերազանցութիւնը յարմար չէ, որովհետեւ ո՛չ բանականութիւնը, ո՛չ Հակացողութիւնը ոչ մի կերպ չեն ծաւալում Տիրոջ Մենդից անդին, երբ Յովհաննէսը երկու խօսքով ամփոփեց այդ Հակացողութիւնը բերուած սահմանում՝ սակեով. «Ի սկզբանէ էր Բանն» (Migne, PG, t. 32, col. 89A):

2. ... μυρίαίς αὐτὸν ἑτέροις προσηγορίαις ἀποσημαίνει ποτὲ μὲν ποιμένα λέγουσα

(...բերաւոր անուններով է կոչուած Նրան. մէկ՝ Հովիւ...) (Col. 96D-97A):

3. ...ἦν ἐκ τῆς περὶ τὸ ἴδιον πλάσμα εὐσπλαγχνίας κατὰ τὸ τῆς χρείας ἰδίομα, τοῖς δεομένοις παρέχεται.

(...որոնք, ըստ Իր արարչազորութեան նկատմամբ եղած ողորմութեան, տալիս է պահանջողներին՝ Համաձայն իրենց պէտքի) (Col. 97A):

Արդ, եթէ անկանիցի Հայր ի միտս արարելոցս քննութեամբք, լքցի առ այս եւ մնացէ ի հարցումոց, եւ լինի վասն նորա պապանձեալ միտք եւ ամենեւին ի դողումն, եւ եթէ անկանիցի ծուխս այս ի միտս նոցա, եթէ ծնունդ Որդի Հօր է, ամաչեցեն, կուրացիս խորհուրդք ամենայն՝ ի քննել զյեղանակ այսր կարծեաց, վասն զի ոչ ինչ կարիցենք ասել, քանզի բարձրութիւն Նորա վեր է, քան զամենայն բնութիւնս, եւ չիք չափ անբարութեան Նորա, զի ծածուկ եւ աներելոյք է յամենայն արարածոցս քննութիւն Նորա: Արդ, զարմանք սքանչելեաց է բարբառն Յովհաննան, քանզի երկու բանիք արգել պաշարեաց զամենայն միտս եւ ցանկեաց, փակեաց զամենայն խորհուրդս եւ սահմանեաց, կացոյց զամենայն շարժումս...

վասն այսորիկ բազում անլամբք, որ առ մեզ, յորջորջեցաւ, որք լի են նշանօք փրկութեան: Անուանցաւ Հովիւ...

...զի իբրեւ յԱրարչէ առ արարածս իւր ցոյցցէ զյորդառատ ողորմութիւն իւր բիրօք պարգևօք, զի լիութիւն Նորա ի կարօտեալս ընծայեցուցէ զփառս իւր:

4. Ὅποτε τοίνον καὶ ἐφ' ὧν δίορίσθη το <<δὶ οὐ>> κυρίως λέγεσθαι, ἐπὶ τῶν αὐτῶν τούτων το <<ἐξ οὐ>> μετελήφθη, τίνα λόγον ἀφορίζειν τὰς λέξεις.

(*Իսկ եթէ որեւէ բանի մասին որոշակի խօսենք իրական իմաստով, դա «նրանով»-ն է, որի նոյն իմաստն ունի «նրանից»-ը, ապա ինչպիսին է բարեպաշտութիւն զրպարտող Հիմքը, որ վճռապէս բաժանում է այդ բառերը*) (COL. 85C):

5. Τί δὲ ἢ δύοσις ἅπαντα μικροῦ δεῖν, ἀπὸ τοῦ Ἰλλυρικοῦ μέχρι τῶν ὄρων τῆς καθ' ἡμᾶς οἰκουμένης, οὐχὶ τὴν φωνὴν τούτην πρεσβεύει.

(*Եւ գրեթէ բովանդակ Արեւմուտքը՝ Իլլիրիայից մինչեւ մեր կողմից բնակեցուած երկրների սահմանները, արդեօ՞ք չի նախընտրում այս բարբառը*) (COL. 208C):

6. Ἄλλ' ἢ μὲν παρασκευῆ τοῦ καθ' ἡμῶν πολέμου ἐξήρτυται, καὶ πᾶσα διάνοια πρὸς ἡμᾶς τέταται, καὶ γλῶτται βλασφημῶν ὧδε τοξεύουσι σφοδρότερον βάλ-λουσαι ἢ τὸν Στέφανον τότε τοῖς λίθαις οἱ χριστόφονοι μὴ λανθανέ τωσαν δέ, ὅτι πρόσχημα μεν ἡμᾶς ὁ πόλεμος ἔχει, ἡ δὲ ἀλήθεια τῶν γινομένων πρὸς τὸ ὕψος βλέπει.

(*Մեր դէմ է ուղղուած պատե-րազմի նախապատրաստութիւնը, մեր դէմ է ուղղուած ամէն տեսակ խորհուրդ, եւ հայհոյող լեզուներն*

Արդ, յամենայն ժամ, յոր եւ ասի «նովա», մարթի պատշաճել ի վերայ նորին խորհրդոյ եւ «ի անանգ»։ Արդ, զհ՞Աչ ինչ է այն բանք զրպարտութեան ի վերայ Աստուածութեան այսու սիղդորա-լիք, որ ոչ անըրպետին եւ ընտրին ի միմեանց։

Եւ ամենայն Արեւմուտք մինչեւ ի Յիսիս եւ քրիստոնէութիւն ընդ ամենայն տիեզերս այսու ճշմարիտ օրհնութեամբ աննեւ զհանրուածս իրեանց առ Աստուած։

Արդ, ի նոցան բանից անտի մարտ պատերազմի կազմեցաւ ընդդէմ մեր պէս պէս հակառակութեամբք, եւ խորհուրդք վատախորհուրդք եւ շարք ներածեմ եւ ընդ կրակն դարձուցանեմ զճշմարտութիւն, եւ լեզուք շանայեզուք ասի-րատութեամբ հանդերձ առ մեզ ձգտեցան եւ բարկութեամբ եւ հայհոյութեամբ ձիգ առեալ տարածեալ թանձրատարալի Անտս Անարու-թեան եւ առ մեզ առաքեմ սլաքիք, որ ոչ իբր զամենայն երկաթ, այլ ի ինտր անդր ներկեալ եւ արեալ։ Բայց

այստեղ տէգեր են նետում աւելի մեծ լարումով, քան քրիստոսասպաններն էին քարեր նետում Ստեփանոսի վրայ։ Թող չբողոքարկուի՝ այն, որ նրանց յարձակումները մեր նկատմամբ ունեն սոսկ երեւութական պատրուակ, մինչդեռ իրականում մղուած են դէպ վեր) (COL. 112C):

Հայ Թարգմանիչը ձգտում է դաւանաբանական յստակութիւն մտցնել բնագրի մէջ։ Այդ նպատակով նա յաւելում է Սուրբ Երրորդութեան վերաբերեալ բառեր, որոնք մի տեսակ մեկնաբանելով լրացնում, պարզաբանում են բնագիրը.

7. Καὶ Καπαδοκῆαι δε οὐτῶ λέγομεν ἐγγωρίως, ἔτι τότε ἐν τῇ τῶν γλωσσῶν διαίρέσει τὸ ἐκ τῆς λέξεως χρήσιμον προβλεψόμενον τοῦ πνεύματος.

(*Եւ մենք՝ կապպադովկացիներս, այդպէս ենք արտայայտում մեր բնիկ լեզուով, որովհետեւ Հոգին լեզուների բաժանման ժամանակ արդէն կանխատեսեց յօգուտ այսօրինակ արտայայտութեան*) (COL. 208C):

Յունարէնում բացակայում են (COL. 95B) «...որ անկն է մերոյ բնութեանս զԵրէս Անձնաւորութիւնսն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, զի չիք բնաւ միջնորդութիւն ի նա...» նախադասութեան ընդգծուած բառերը (տե՛ս նաեւ 1. վկայութեան ընդգծուած բառերը):

Յաւելում-պարզաբանումներից զատ, հայերէն Թարգմանութեան մէջ նկատում են բազմաթիւ, բազմաբնոյթ բացթողումներ։ Այդպիսիք են, օրինակ, սուրբագրային հետեւեալ տեղիների բացթողումները՝ Սաղմ. ՂԱ 16, ՃԳ 27, ՃԹ 1, ՃԼԸ 8, Յովբ ԼԳ 4, Մատթ. ԺԸ 10, Յովհ. Ա 16, Հռովմ. Բ 17, Զ 4, Եփես. Բ 22։ Հայ Թարգմանիչն ակնյայտ վրիպումով բաց է թողել Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Դիոնիսիոս Հռովմայեցուն յղած թղթի վերնագիրը.

մեք յերկեղէ անցին ոչ ինչ երկնչիմք, այլ Տէր գնոյն զԱստուած զՍուրբ Հոգին անունք ի սիրտս մեր ուղիղ խոստովանութեամբ...

Նաեւ մեր՝ կապպադովկացիքս, ըստ լեզուիս մերում ուղիղ աննեմք գօրհնութիւնն մեր, եւ գաւառք ամենայն ըստ իւրաքանչիւր լեզուաց լի բաւանդակ զկատարեալ օրհնութիւն հաննեմ Երրորդութեան։

Περί ἐλέγχου καὶ ὀπολογίας (Յաղագս յանդիմանութեան եւ ջատագովութեան. օժ. 201B): Բաղդաստոււր ցոյց է տալիս, որ Հայերէն թարգմանութեան մէջ զգալիօրէն Համառօտուած են բնագրի Զ-է, Ժ-ԺԶ գլուխները¹:

Այսպիսով, առկայ փաստերը ցոյց են տալիս, որ այսօրինակ տարբերութիւնները պայմանաւորուած են բնագրի նկատմամբ թարգմանչի որդեգրած ազատ, միանգամայն անկախ վերաբերմունքով: Դա արտայայտուած է բնագրի վերապատումով, իմաստի մեկնաբանութեամբ, աստուածաբանական նրբերանգների յաւելումով: Ակնյայտ է, որ խնդրոյ առարկայ երկի Հայերէնը ոչ այլ բան է, քան յունարէն բնագրի վերապատում-փոխադրութիւնը:

Ինչ միջավայրի ծնունդ է բնագրի Հայերէն «թարգմանութիւնը»: Մի շարք փաստեր վկայում են, որ այն իրագործուել է ասորերէնից Հայերէն կատարուած թարգմանութիւններին քաջատեղեակ (զուցէ եւ՝ մասնակից) թարգմանչի կողմից.

ա) Յունարէն բնագրի Փորմւլիօնճ (օժ. 208B) անունը Հայերէն թարգմանութեան մէջ դարձել է «Եփրեմ»: Թւում է՝ այսօրինակ «թիրտիմացութիւն» կարող էր կատարուել Հայ-ասորական թարգմանական միջավայրում: Հայ թարգմանչին օտարահունչ Փորմւլիօնճ անունը փոխարինել է իրեն քաջ յայտնի եւ Հարազատ «Եփրեմ» անուամբ:

բ) Հայերէնում առկայ մի շարք բառեր անմիջաբար աղբրւում են, մասնաւորապէս, Հայ-ասորական թարգմանական աւանդոյթի Հետ: Այսպէս, ըստ Նոր Հայկագեան բառարանի տուեալների, թարգմանութեան մէջ առկայ բացաձիգ, բանաքաղ, բանակրկիտ, կորանք, նշոյլազարգ(ուլիւն), վառապանք, վարապան բառերը գլխաւորաբար օգտագործուած են Ափրաստի նշանաւոր Զօնգրքի², ինչպէս նաեւ՝ ս. Եփրեմ Ասորու եւ Եւսեբիոս Կեսարացու երկերի՝ ասորերէնից կատարուած Հայերէն թարգմանութեան մէջ³: Ի դէպ, ս. Բարսեղի երկասիրութեան յունարէն բնա-

գրում առհասարակ բացակայում են բանաքաղ եւ բանակրկիտ բառերի Համարժէքները: Նկատառելին այն է, որ ինչպէս ս. Բարսեղի՝ խնդրոյ առարկայ երկում, այնպէս էլ Զօնգրքի Հայերէն թարգմանութեան մէջ այս բառերը Հանդէս են գալիս մէկ նախադասութեան մէջ. «Բանաքաղք, բանակրկիտք, ագահք եւ պիղծք...» (տե՛ս Զօնգրք, գլ. ԺԹ), «բանակրկիտս, բանաքաղս եւ բանչգիտս անուանեն զմեզ» (ս. Բարսեղ): Բացաձիգ եւ նշոյլազարգ(ուլիւն) բառերն օգտագործուած են նաեւ ս. Բարսեղ Կեսարացու Վեցօրեայ ճառերում¹, որոնք, ըստ նորագոյն Հետազօտութեան, թարգմանուած են ասորերէնից²:

Յենուելով այս դիտումների վրայ՝ կարելի է ենթադրել, որ յիշեալ «ասորաբանութիւնները» կարող էին կենցաղավարել միայն Հայ-ասորական թարգմանական աւանդոյթի շրջանակներում: Հայերէն թարգմանութիւնն այնքան Հեռու եւ անկախ է այժմ առկայ յունարէն բնագրից, որ այն պէտք է Համարել ս. Բարսեղ Կեսարացու երկասիրութեան տեղայնացուած տարբերակը³:

Ս. Բարսեղի այս երկի Հայերէն թարգմանութիւնն իր որոշակի նպաստն է բերում Հայ թարգմանական մատենագրութեան Հետազօտմանը: Վաղ շրջանի Եկեղեցու Հայերի տարբեր երկերից այստեղ վկայաբերուած շատ Հատուածների Հայերէնն առհասարակ բացակայում է Հայ թարգմանական մատենագրութեան մէջ. այդպիսիք են Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Դիոնիսիոս Հռովմայեցուն (Գ դ.) յղած թղթի մէկ Հատուածը, Կղեմէս Հռովմայեցու (Գ դ.) մի երկից քաղուած փոքրիկ պարբերութիւնը, Որոգինէս Ալեքսանդրացու (չուրջ 185-253/4) Յովհաննու Աւետարանի եւ Պօղոսի՝ Հռովմայեցոց թղթի մեկնութեան Հատուածները, Ափրիկանոս Ժամանակագրի այժմ անյայտ պատմագրական երկի մի պարբերութիւնը⁴: Պակաս շահեկան չեն նաեւ վարքագրական, վկայաբանական բնոյթի նւթերը.

1 Համառօտումների մէջ յաճախ դիտարուում է բառաշինարար թարգմանիչը. այսպէս՝ բնագրի καινοτομος ... και νεωτέρων, βηματων δημιουργος. (օժ. 208C, «Աորամոծիչ եւ Աոր խօսքեր յօրհմող») բառակապակցութեան փոխարէն Տայերէնում ունի մէկ համարժէք՝ «Աորոգախօս»

2 Տե՛ս «Գիրք, որ կոչի Զօն՝ արարեալ սրբոյն Յակոբայ երիցս երանելւ Տայրապետին Ամբին քաղաքի...», Կ. Պոլիս, 1824, գլ. Է, ԺԱ, ԺԵ, ԺԸ, ԺԹ:

3 Տե՛ս «Նոր բառգիրք Տայկազեան լեզուի», Ռ. Ա. Վեներիկ, 1836, էջ 1118:

1 Բարսեղ Կեսարացի, «Յաղագս Վեցարեայ արարչութեան», աշխատասիրութեամբ՝ Կիմ Մորադեանի, Երևան, 1984, գլ. Բ, Դ:

2 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսեան, «Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» Տայերէն թարգմանութեան մասնօրինակը», «Պատմաբանասիրական հանդես», 1983, N 2-3, էջ 264-278:

3 Ի դէպ, տեղայնացուած է թուում նաեւ ս. Բարսեղի՝ Տեանճոյնայտաշին Ատիրուած ճառի Տայերէն թարգմանութիւնը (տե՛ս «Գամճատար», Երևան, 1992, Բ, էջ 30-66):

4 Ի դէպ, Ափրիկանոսի Ժամանակագրութիւնն օգտագործել է Մովսէս Լորեանցիին իր Հայոց պատմութեան մէջ (տպ. 1913, գիրք Բ, գլ. Ժ, էջ 120):

դրանցից են Աթանազիւնի (Դ դ.) վկայարանութիւնն ու ս. Գրիգոր Աջանչիւազործի (+264/270) վարքի առանձին հատուածները¹ :

Ճանի հայերէն թարգմանութիւնը շահեկան է նաեւ հայոց լեզուի ուսումնասիրման, նրա բառազանձի մէջ առկայ միաւորների առանկ լիակատար հաշուուման եւ զնահատման առումով: Ուշադրութեան արժանի են Նոր հայկազեան բառարանում բացակայող այնպիսի միաւորներ, որպիսիք են առաքելնարար, բանչգիւտ, եպիքոսոպոզ, իմացուցիչ, յանգերձիչ, յանկաղից, խաղաշրջել, կամադէտ, մեծազազ, յոտանշան, նորոգաթոս, նուաճիչ, շանաւիզու, շրջկոտել, շքաթափել, չարահաւանութիւն բառերը:

Ճանի հայերէն թարգմանութիւնը, ցաւօք, վերջից թերի է. երկու ձեռագրերում էլ ճառն աւարտում է «...ոչ բոլիս արտասուք արտմութեան յանձանց ոմանց ի տեսիան անդ տկարահաւատիցն, այլ ցամաքեցաւ» "...οὐκ ἔστιν ὁ τὸν ἀσθενοῦντα τῆ πίστει προσλαμβανόμενος, ἀλλὰ τοσοῦτον" (col. 216C) բառերով: Պակասում են բնագրի վերջին երեք պարբերութիւնները: Ինչպէս երեւում է, երկու ձեռագրերն էլ ընդօրինակուել են նոյն թերոյթն ունեցող մի նախագաղափար օրինակից:

Պարբերութիւնների համարակալումը կատարել ենք ըստ յունարէն բնագրի:

Ստորեւ ներկայացնում ենք ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը.

N 1315=A

Ժամանակ ԺԴ դ.: Գրիչ Յովհաննէս արքայեղբայր, Յակոբ: Ստացող՝ Յովհաննէս արքայեղբայր: Թերթ՝ 451: Պրակ՝ Ա-Լ՝ X12 (անկանոն): Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 34,5X25: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բուրգիր: Տաղ՝ 35: Բովանգակութիւն՝

Ա. 2ա-5բ Պատմութիւն յաղագս մատին սրբոյ առաքելոյն Պետրոսի...

Բ. 5բ-9ա [Յաղագս Վարագայ սուրբ Խաչին]

Գ. 9բ-20ա Ներբողեան՝ պատմագրաբար ասացեալ սրբազան եպիսկոպոսի եւ վարդապետի տէր Կարապետի Սասնացոյ...

Դ. 21ա-59բ Խաւք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցոյ՝ ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդոյ Աստուծոյ...

Ե. 60ա-452ա [Մեկնութիւն Գործոց առաքելոց]

N 1798=B

Ժամանակ՝ ՌՃԱ (1652): Գրիչ՝ Պողոս: Թերթ՝ 456: Պրակ՝ Ա-ԼԼ 12: Նիւթ՝ թուղթ, արեւելեան: Մեծութիւն՝ 19,6X13: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ բուրգիր: Տաղ՝ 24: Բովանգակութիւն՝

Ա. 2բ-46ա Գիրք Պարագմանց սրբոյն Կիրղի՝ վասն մարմնանալոյ Միածնին

Բ. 46ա-321 [Թուղթ եւ ճառք Կիրղի Աղեքսանդրացոյ]

Գ. 321ա-453ա [Բանք զանազանք]

Յակոբ Քեռեկեան

¹ Տե՛ս «Յայրմատորք», Կ. Պոլիս, 1834, մասն Բ, էջ 28, 241-243:





**ԽՕՍԲ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ
ԿԱՊՊԱԴՈՎԿԱՑԻՈՑ* ԸՆԴԴԷՄ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐԲ
ԹԵՐԱՑՈՒՑԱԼԵՆ ԶՓԱՌՍ ՈՐԴՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՑ ՔԱԼ
ԶՀՕՐՆ, ԵՒ ԻԶՈՒՑԱԼԵՆ ԶՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ Ի
ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՍԱՐԵՆ ԸՆԴ
ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ**

Ա. Գովեցի եւ զփոյթ յօժարութեան ուսումնասիրութեան քո եւ զմեծ աշխատութիւն վաստակոյդ, զոր ունիս դու՝ յաւելուած ի վերայ վարուցդ քոց, եւ ուրախութիւն մեծ եղեւ ինձ վասն քո, այսինքն՝ վասն գիտութեան եւ յորդոր արթնութեան մտաց եւ խորհրդոցդ քոց այն, զի եւ ոչ զմի բան ի բանից անտի, որ վասն այն ցուցանեն, թողու առանց քննութեան եւ ի խնդիրն, որոյ յոյժ մեծապէս պիտոյ է ճշմարտութիւնն¹ պէս-պէս չափօք կերպարանաց դու յառաջ գաս գլխաւոր սիրելի եւ պատուական ամենայնի Ամփիւլաքէս բարուք² լուեալ աւագիկ զխրատն Հաւանութեան ի բանէն այն, որ ասէ.

«Ամենայնի, որ խնդրէ, առնու, եւ որ Հայցէ, գտանէ³», քանզի խնդիրն յորժամ լինի ստէպ փութով, եւ զհեղգացեալսն յարուցանէ տալ զայն, ինչ որ խնդրենն ի նմանէ: Արդ, ես⁴ այսու կարի սխրանամ ի քեզ, զի ոչ որպէս թէ փորձեսցես արարեր զՀայցուածը⁵ քո առ մեզ, որպէս եւ բազումք այսօր, որք փորձիւ Հմայելով առնեն զհարցուածս իւրեանց, այլ զճշմարտութիւն ճշգրտութեամբ իսկ խնդրեցեր գտանել առ մեզ բանիւդ քո: Իսկ այլք ոմանք, որ այսօր պատրաստեալ են զսելիս իւրեանց ի լուր եւ լինին առ մեզ հարցողք, մեծ աշխատութիւն մաքառմամբ հարցուածոց իւրեանց արկանեն մեզ: Իսկ մարդ ուսումնասէր, որ փութացեալսն է լինել խնդրող ճշմարտութեան առ ի բժշկութիւն անգէտ տխմարութեան, գժուարաւ գտանի, քանզի որպէս ծուղակն⁶, որ պատրաստեալ է յորս, եւ ինքն յինքն մարտ պատերազմի ունի ծածկութեամբն իւրով՝ դարան ունելով գաղտ նենգութեամբն իւրով, որ է ի նմա. սոյնպէս են այսօր հարցուածք բազմաց ի ճառս իւրեանց, զի ոչ եթէ որ ինչ պատշաճ եւ պիտոյ է, նոցա ունին փոյթ յանձինս գտանել եւ կամ առնուլ ի նոցանէն, այլ միայն զի⁷ թէ դէպ լինիցի ըստ ցանկութեան կամաց իւրեանց առնուլ զհարցուածսն յայնցանէ, առ որս հարցողքն լինին: Եւ այս է պատճառ պատերազմիս, որ ի միջի մերում է, զի հարցուածքն ոչ եթէ առողջ ինչ իցեն, վասն օգտի թէպէտ եւ ի տգիտութենէ ածի առ իմաստուն անդր⁸, սակայն եւ ոչ այնպէս իմաստութեան Հաւանի առ հարցուածոցն լուծումն եւ զգարմանի Հաւանութիւն խնդրոյն տանի յարէ յանձն իւր⁹: Իսկ այն, որ առնէ զհարցուածս իւր ստուգապէս, որքան պարտ է մեզ խորհիլ, զի ըստ մեծութեան փութոյ յօժարութեանն առեալ բերցուք Հոգաբարձութեամբ զհարցուածոց լուծումն⁸ եւ մեծաւ ջանիւ ուշ եղեալ նկրտեսցուք ի վերայ նոցա, զի զճշմարիտ եւ զկատարեալ գիտսն գտանիցեն ի պատասխանոյն առ ի Հաստատութիւն կենաց իւրեանց: Արդ, ոչ է արժան անցանել ումեք ի վերայ բարբառոցն, որ յԱստուծոյ խօսեցան, հեղգութեամբ, այլ՝ ի վերայ միոյ միոյ բանից անտի, եթէ մեծամեծք են կամ մանուկք. արասցէ զխնդիրն իւր ստոյգ քննութեամբ, քանզի գտանիցէ յակօսածեւ կարգան զմեծ խորհուրդն, որ թաղեալ կայ ի նոսա: Բայց եւ ոչ է օտար խնդիր ճշմարտութեան երկիւղին

* Մատթ. Է 8, Ղուկ. ԺԱ 10
 ** Հմմտ. Առաւ. ԺԷ 28:
 *** Հմմտ. Ծապի Գ 3:

Աստուծոյ, այլ զգաստից եւ գիտնոց եւ աստուածախառ ոգոց քննել, գիտել եւ ճանաչել, եթէ զինչ է:

Արդ, Հրամայեալ է մեզ ի բանէն ճշմարտէ՝ նմանել Աստուծոյ, որչափ եւ մարթ է մարդկային բնութեան եւ Համարձակեալ է, զի նմանացուք եւ բերել մեզ զնմանութիւն Աստուծոյ առանց ընտրողութեան գիտութեամբ չէ Հնար, եւ գիտութիւն եւ Հանճարն ուսմամբ բոլի ի մէնջ: Իսկ բանն գլուխ է ուսմանն, որ ի վարժելոյն պայծառանայ առ մեզ գիտութեամբ մեծամեծ եւ փոքր բանիցն մասամբք:

Արդ, Հարցուածս այս, որ եղեւ առ մեզ, ոչ եթէ արտաքս ինչ է, քան զնպատակն բանիցս այսոցիկ, զոր եղաք մեք, որովք յայտնեմք, զի բանք, որով որ կարգեալ են սակաւ եւ դոյզն նշանադրօք իւրեանց եւ յօղապատ յարարուածով բարբառոյ, եթէ ըստ կարծեաց ոմանց վասն այսորիկ անգոսնելոյ արժանի ինչ են: Եւ վասն զի դժուարին է առ գիւտ մեծութիւն ճշմարտութեան, պարտիմք մեք քննել պէսպէս չափօք կերպարանաց զնա ի պէտս այնոցիկ, որոց անՀաս է, զի որպէս արուեստից գիտութիւնն ի նուաստ աշտիճանացն, որ ի նոսա փոքրփոքր բազմանայ յաւելուած ուսմանն եւ անճալ գայ վարժմամբն ի կատարելութիւն, եթէ ոչ լինի Հեղգութիւն ծուլութեան աշակերտելոցն: Սոյնպէս պարտ եւ պատշաճ է այնոցիկ, որք մերձենան առ գիտութիւն Աստուծոյ, ոչ լինել Հեղգութեամբ ի նմա եւ արհամարհել զփոքր նշանագիրսն, որք գլխաւորն զգեցն իմաստութեան առ կատարելութիւն, քանզի աճա երկու եւ երեք սիղոյրբայք են «այո»-ն եւ «ոչ»-ն, եւ մի-մի ի նոցանէն Հաստատեալ կայ գեղեցկութիւն ճշմարտութեանն եւ ստութեան տգեղութիւն: Այսուհետեւ յայս փոքր բանքս է խտրոց ճշմարտութեան եւ ստութեան: Եւ արդ, տե՛ս՝ զի՞նչ ինչ իցէ լրումն բանիս իմոյ վասն այսր խնդրոյ սակաւ եւ դոյզն բանի ճշմարտութեան մեծութեան եւ ստութեան կործանմանն: Զի թէ դէպ լիցի, եւ կալցին զոք վասն Քրիստոսի ի վկայութիւն եւ փոխանակ բանի զգլուխ իւր միայն շարժեսցէ եւ ակնարկելով պատրաստելով ի մաճ անդր կատարեալ լի Հաւատովք երեւեցաւ աստուածապաշտութիւն փոքր ակնարկելով, որ եղեւ ի նմանէն: Եւ արդ, եթէ այսօրիկ այսպէս իցեն, որ բան իցէ ի բանիցն Աստուծոյ, որ փոքր կարծեսցի, զի արժանի է եւ օրէն՝ երեւել գեղոյ կերպարանաց նորա, եւ այն, որ դժուարին իցէ ի նմա, քանզի տան իսկ ձեռն ակնարկմունքն, զոր ունին մի-մի ի բանիցն Աստուծոյ վասն իւրաքանչիւրոյ գեղոյ կերպարանաց: Եւ եթէ «ի յօտանչան մի յօրինացն ոչ անցցէ», քանզի

եւս պիտոյ է մեզ եւս քան զեւս զգուշանալ, զի մի՛ անցանիցեմք արհամարհելութեամբ զմիով միով յայնցանէ, որ գրեալ են: Արդ, այսուհետեւ զոր դու ի մէնջ խնդրեցեր, գամք ասել, թէ զհարդ իմացեալ լիցի մանունք նշանադրօքն եւ փոքր բարբառով պարզ եւ ուղիղ ի լեզուէ ասացեալ, որ ի տգիտաց եւ յախմարաց կարծեալ լինին, իբրու թէ չունին մեծ բարութիւնս ինքեանս, բայց գիտնոցն բիւրապատիկ մեծութեամբ խոստովանեալ լինին մեկնութեամբն իւրեանց եւ, ըստ նմանութեան փոքր Հասոյ մանանխոյ, ունին զգորութիւն իւրեանց, զի յորժամ եղիցի փոյթ Հոգաբարձութեան փոքրկութեան նորա, աճէ բարձրութիւն Հասակի նորա լի բովանդակ եւ անցանէ զանցանէ ըստ ամենայն սերմանիս եւ ըստ ամենայն կողմանս արձակէ զոստս իւր եւ մորմոքեցուցանէ իւրով կժու զօրութեամբն զամենայն ճաշակողս: Արդ, եթէ կամիցի այպանող ոք զերգս Հոգեւոր սաղմոսացս, որ ի մէնջ երգի ի փառս Աստուծոյ, դուզնաքեայ չափով բանի ճշմարտութեան ի խեղկատակութիւն ձգել, ինքն այսու զպտուղ անօգուտ կիթ է ի վնասէ այպանելոյ իւրոյ, եւ նա յիւր ճշմարտութիւն անկեղտ մնայ: Այլ մեք մի՛ մոլորեացուք յայսպիսի նախատիւս եւ յեպերանս, որ յանխրատիցն լինի, եւ պարտաւորութիւն ամբարշտութեան նոցա առ մեզ մի՛ Հասցէ եւ մի՛ յետեալ գտցուք ի Հաստատուն քննութենէ անտի, որ արժանի է բանին Աստուծոյ: Այլ ես յայնցանէ Հեռի եմ յամօթոյ եւ ի պատկառանաց, որք նուազութիւն տան առաւելութեան՝ վասն սիղոյրբայիցն փոքրկութեան: Զի թէպէտ եւ մեկնութեանց նոցա չեմ Հասու, սակայն գիտեմ եւ զգամ, զի որ դոյզն ինչ բան է ի նոցանէ, յոյժ բարձր եւ վերագոյնն Հայելով՝ արժան է ի նոսին նկրտել: Իսկ այն, որ փոյթ ունի վասն նոցին քննութեան բարիօք օգտից եւ շահից պարգեւաց դիպի անդատին ի նոցանէ, եւ զայս գիտեմ ես յանձին իմում, զի պտուղ մեծ շահիցէ յիս բանին¹⁰ Աստուծոյ քննութիւն, եւ այնոցիկ դարձեալ, որ լսենն օգուտ մեծ կենաց նոցա:

Արդ, ես այժմ վասն զօրութեան Հոգւոյն Աստուծոյ ցուցանեմ բանիւս իմով եւ նովաւ ի պատմութիւնս յայս նկրտիմ ես: Սակայն, թէ կամեսցիս, դարձցուք անդէն ի սկիզբն¹¹ ճանապարհի բանիս մերոյ՝ առ ի ցուցանել, թէ ուստի եղեւ այս Հարկ գալ ի պատմութիւն այսր բանից:

* Տե՛ս Մատթ. ԺԳ 31-32:
** Տե՛ս Սաղմ. ԾԺԸ 85:

Մինչդեռ անցեալ կայի ես ի գլուխ ժողովրդեանն իմում եւ ի մի աւուրց մատուցանէի աղօթս եւ փառս եւ օրհնութիւնս Հանդերձ ամենայն ժողովրդեամբն Աստուծոյ մատուցանէաք «ընդ Հօր եւ զՈրդին» փառաւորէաք, «ընդ Որդւոյ եւ զՀօգին» անուանէաք, եւ դարձեալ ի ձեռն Որդոյն Հոգւովն Սրբով օրհնութիւն փառաւորութեան մերոյ կարգեալ եւ յօրինեալ լինէր, յաճախեցին, բազմացուցին ոմանք ի վերայ մեր զեպերանս, որք մերձ առ մեզ գալստեամբն իւրեանց պատահեցին եւ ասացին, թէ այլազգ բարբառով, որ օտար են միմեանց, մեզ վարիք դուք եւ բանիւք, որ ընդդէմ են միմեանց, մատուցանէք զօրհնութիւնդ ձեր: Արդ, այնքիկ, եթէ կամին լսել եւ Հաւանել վասն օգտի իւրեանց, օգուտ մեծ գտանել յասացեալս մեր, ապա թէ ոչ՝ կամին բժշկել յայնմ իմեքէ, յոր մեծ վնաս կայ ի նոսա, մեք զբանս մեր, որ առ քեզ ի զգուշութիւն արարաք այնոցիկ, որ պատահենն նոցա, որպէս խնդրեցեր ի մէնջ, զի քննեսցուք եւ ցուցցուք զուղիղն եւ զարժանն, եւ թէ զինչ ինչ իցէ զօրութիւն բանիցն Որդոյ ի մէջ պատգամացն երկուք եւ կամ երիւք սիղզոյբայիւք: Եւ զի ուսցիս, եթէ կան ի Հաւասարութիւն փոփոխմամբն իւրեանց, արդ, ասեմք մեք սակաւ բանիւք, որչափ ինչ եւ կայ ի կարի մերում, եւ զսկիզբն խոստովանութեան բանիս մերով ցուցանեմք, թէ զինչ է:

Բ. Եւ մեծամեծ բանիւք զփոքրաբանութիւն մարդոցս յայտցիկ երեւելի առնեմք, զի ոչ եթէ դուզնաքեայ ինչ թերութիւն Հաստատի ի ձեռն¹² բանից նոցա, եւ ոչ եթէ փոքր ինչ կշիռ չարութեան վճարի նոքօք, այլ լի է խորին խորհրդօք մեղաց, որ ծածկեալ է շքով ստուերին ամբարշտութեան եւ Հակառակ է ամենայն ճշմարտութեան, եւ նոյն ինքն Հակառակութիւն նոցա բազմադիմի է, զի ոչ ասեն՝ նման է Հայր Որդւոյ, որպէս ցուցանեն բանքն՝ ըստ կարգի, որ վասն Նոցա, քանզի այլատարազ են խօսքն, որ վասն Նոցա ասեն, որով յայտ է, եթէ բնութիւնք Նոցա ի Միմեանց այլափոխք են: Այս իմաստութիւն Նոցա, որպէս երեւի, Հին է, եւ յԱյետիոսէ առնու¹³ սկիզբն, զի զայս պաշտօն ի մի ի թղթոցն իւրոց գրեաց յայսպէս՝ յասելն իւրում, եթէ՝ «Զինչ, - ասէ, - որ ոչ նման են բնութեամբ, ոչ կարեն գալ ի նմանութիւն, վասն զի եւ ոչ նման են միմեանց բնութեամբն իւրեանց», եւ ի վկայութիւն բանին իւրոյ բերէ զբանն եւ վարէ բունութեամբ զասացեալն. «Մեզ մի է Աստուած Հայր, յՈրմէ ամենայն, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն»: Արդ, որպէս

առնմանն բարբառքս միմեանց, սոյնպէս յայտ առնեն, թէ եւ ոչ բնութիւնք նոցա նմանն միմեանց, եւ ոչ նման է, ասէ՝ «այն, յորմէ ամենայն», այնորիկ, «որով ամենայն», ուրեմն ոչ նման է Որդի Հօր:

Այսուհետեւ ի ցաւ բանից եւ ի Հայհոյութիւնս պատրաստեալ են արքս այտքիկ ճառիւք իւրեանց, որք ի սոցանէ յայսց բանից տան Աստուծոյ Հօր իբրեւ ինչ մի աւելի զայն, որ «ի նմանէն է»: Եւ Որդւոյն զատուցին ետուն միւս եւս այլ պարզեւ զայն, թէ՝ «ի ձեռն Նորա է»: Եւ Հոգւոյն Սրբոյ բաշխեցին, ետուն զայն, որ «Նովաւ» յասելն իւրեանց, եթէ ոչ է մարթ չլինել որոշումն եւ այլայլութիւն, քանզի որպէս այլեւայլ են բնութիւնքն, սոյնպէս եւ այլեւայլ են բանք նորա վասն Նոցին ասացեալ են: Արդ, նուրբ ամբարշտութեամբ բանից իւրեանց ստացան զօրութիւն վատթար. եւ ծածկեցաւ ճշմարտութիւն ի կամակորիցն, քանզի զայն, որ «ի նմանէ», արարիչ եղին, եւ զայն, որ «ի ձեռն Նորա», Հնազանդեալ կոչեցին, եւ զայն, որ «Նովան է», տեղի-տեղի եւ ժամանակ ասացին եւ արտաքոյ քան զայս մեծութիւն ոչ ետուն Արարչին, զի կարծեալ լիցի եւ ոչ Որդոյն աւելի, քան զայս պատիւ, եւ ոչ Հոգոյն Սրբոյ աւելի, քան զայս փառս:

Գ. Նաեւ արտաքնոցն բանք Հեյլենացոցն իմաստնոց ձեռնատու եղեւ նոցա մոլորութեան, զի միաբանեցան բանից նոցա, քանզի զայն, որ «ի նմանէն» եւ «ի ձեռն Նորա» վասն իրաց, որ ի բնութեան աստ ասեն Հեյլենացիքն, զի զայն, որ «ի նմանէն» տան վասն ամենայնի, որ ինչ ի գործողէն կազմի արտաքին իմաստասէրքն, եւ զայն, որ «ի ձեռն Նորա», պատճառ ասեն կազմութեան, որ եղեւ, ըստ որում եւ իցէ գործ արուեստագիտութեան, զի ի ձեռն Նորա կազմի այն, ինչ որ գայ ի գործ անդր: Բայց զի՞նչ արգելէ ոչ բերել ի մէջ զամենայն բանս Հեյլենացոցն եւ զօրինակ ճշմարտութեան մերոյ, քանզի այսոցիկ մարդկան ոչ գոյ Հաւատ առ ճշմարտութիւն անդր եւ ոչ միաբանութիւն: Վասն որոյ այնոցիկ, որք բանիւք նոցին վարին, լինել յանդիմանիչ յայսմ յամբարշտութեան յոյժ փոյթ եւ Հարկ է:

Արդ, այնքիկ, որք Հանապազ Որդին ի մորոսութիւն փրկիստփայութեան յայսպէս մեկնեալ ընտրեն, թէ պատճառ առաջին¹⁴ այն է, որ ի կազմելն գայ եւ առ մեր, իրս առեալ բերեն զմեկնութիւն իւրեանց: Արդ, զՆա, որում «ի նմանէն» է, սկիզբն եւ պատճառ դնեն լինելոյ, եւ որ ինչ պատճառին գործոյն գործի է, յորջորջն զՆա «գործակից», եւ ասեն, թէ առանց Այնր, «յՈրմէ լինի», եւ առանց Այնր, «Որով լինի», չիք ուրեք բան գործոյ, եւ զմի մի յայսցանէ

ընտրեն եւ որոշեն եւ յայտենն բանին իւրեանց, քանզի զարուեստագէտն յայսմ վայրի դնեն, թէ «ի Նմանէ» լինի ճշմարտապէս իրքն, որպէս եւ ոք, զի ասէ, եթէ՛ ի հիւսանէ անտի կազմեցաւ աթոռ, եւ կազմուածն անօթոյն ի ձեռն ուրաքին ի փայտէ եղեւ արուեստագիտութեամբն եւ գործովն:

Արդ, գործն յայնմ իմիք է, որ գործեն, նախ մտածեալ լինի ի ձեռն ներքին խորհրդոց եւ կամ ի ձեռն նայելոյն խորհրդով յարտաքին օրինակս, քանզի երկոքինս են արուեստագիտին, այսինքն՝ կա՛մ խորհեցաւ առնել ի նկարուց, որ ի միտս նորա գեռայ, եւ կա՛մ պատահեցաւ նմա օրինակ արտաքուստ, որում նմանեցուցանէ, եւ տացէ գործոյն իւրոյ կատարումն ի ձեռն այնոցիկ, զոր տեսանէ: Արդ, պէտք են արուեստագիտին յետ ճարտարութեան եւ անօթոյն, որով կազմէ զնիւթն տեղոյ եւ ժամանակի, զի ժամանակաւն եւ տեղովն առցէ գործովն զկատարումն, քանզի յորժամ հարցանեմք, եթէ՛ ո՛ւր եղեւ իրս այս, ասի՛ ի նմանէն, թէ՛ յայս անուն տեղուր¹⁵, եւ ե՛րբ, ասէ, զժամանակն, յոր եւ իցէ: Արդ, եթէ՛ այսոքիկ ոչ են, գործն առանց կատարման եւ առանց ազգման է, քանզի առանց սոցա գործոյ կազմել չէ մարթ, վասն զի արարողքն կարօտին ժամանակին եւ տեղոյն, որովք հաստատի իրն, որ լինի:

Արդ, ըստ բանի սոցա, Աստուծոյ¹⁶ Հօրէ է, որ եղենն, քանզի զայն, որ «ի Նմանէն», նմա ետուն իբրեւ արուեստաւորի, եւ արարին զՈրդին անօթ կազմիչ, վասն զի ի ձեռն նորա կազմեցաւ այն, ինչ որ եղեւն: Եւ եղեւ Հոգին Սուրբ տեղի եւ կամ ժամանակ, զի ի ձեռն այսոցիկ գայ գործն ի կազմուածն:

Չայս այսուհետեւ ունայն եւ նոր մոլորութիւն յիմաստութենէ հելլենացոցն ուսան այնոքիկ եւ զպարզ ճշմարտութիւն եւ զանքնին՝ ըստ բնութեան իւրում, զոր Հոգւովն Սրբով առ մեզ խօսեցան, առեալ լծեցին ի մոլորութիւն անդր հելլենացւոց եւ եղեն զրկողք Որդոյն, որ Նա ինքն է Բանն Աստուծոյ՝ այսպիսի անուանելով զՆա, եւ զրպարտեցին զՀոգին Սուրբ այնու, որ ոչն էառ Նա հուպ: Եւ բերին ի վերայ փառաց Աստուածութեան զխօսս, որ ի վերայ անշնչոցն ասացաւ, որք կան ի հնազանդութիւն եւ ի փոփոխման: Եւ զբանսն, որ ասացեալ է վասն Աստուածութեան ի լուր ունկնդիր մարդկան, ըստ արտաքնոցն բարբառէ խառնեցին զնա, եւ ոչ ձանձրութիւն կամ դողումն եմուտ ի նոսա, զի զտէրութիւն, որ ոչ անկանի ճշմարտութիւն փառաց նորա, ըստ մարդկեղէն գիտութեանն խառնեն ընդ բանսն, որ վասն նիւթոց, եւ ոչ ամաչեն եւ ոչ կորանան, զի անուանեալ կոչին քրիստոնեայք եւ

մոլորեալ են զարտուղի ընդ հետս կորստական՝ ստերիւրեալ հելլենացոցն իմաստնոցն:

Դ. Արդ, ասեմք մեք, եթէ՛ վարի ճշմարտութիւն այսոքիւք բարբառովք իբրեւ թէ՛ լծեալ է ի կցորդութիւն մարդկային հաւասարութեան, քանզի ունիմք մեք զճշմարիտ խոստովանութիւն ճշմարտութեանս մերոյ, եւ ոչ թէ՛ թերութեամբ ինչ եղեալ են այսոքիկ բանք: Եւ այսու ասացուածովքս ոչ կարեմք մեք զմեծութիւն Հոգոյն Աստուծոյ դնել ի ծառայութիւն՝ ըստ բանից արտաքին իմաստասիրութեան, քանզի բանք նոցին, զորս յիշատակեցաք, ասացեալ լինին ըստ պատշաճի կարօտութեան մարդկութեանս եւ վասն այլայլութեան մերոյ: Իսկ «զմի Աստուած, յՈրմէ ամենայն» ոչ դնեմք մեք, թէ՛ գործոյ իրիք, որ կազմի, ի Նմանէ¹⁷ ցուցանէ, այլ սովորութիւն է Գրոց՝ անուանել զսկիզբն պատճառ իրաց այսպիսի բանիւք, զի որպէս այն, որ ասէ, թէ՛ «Մի է Աստուած, յՈրմէ ամենայն», դարձեալ գրէ. «Այլ ամենայն ինչ Աստուծոյ է»¹⁸: Այլեւ ի Գրոց իսկ ճշմարտին այսոքիկ բանք, զի խօսին նոքա ըստ այսմ նմանութեան կերպարանաց¹⁹, ըստ այնմ, որ ասացեալն է. «Արասջի՛ր զտապանակն յանփուտ փայտէ եւ արասցես զաշտանակն ընտիր¹⁸ ոսկոյ»²⁰, եւ ըստ այնմ. «Մարդն առաջին յերկրէ Հողեղէն»²¹, եւ, ըստ այնմ, դարձեալ, եթէ՛ «Ես եւ դու ի Հողոյ ստեղծաք»²²: Արդ, այսպիսի բարբառ բարձանիչ ի վերայ Աստուածութեան որպէ՛ս ասի, զոր նոքա իբրեւ գիւտ ինչ մեծ գտին եւ ընտրեն տան Հօր միայն զԲանն պատուականն, իբր թէ՛ ի վերայ նորա միայն պատշաճի ասացեալսս եւ զսոյն զայս յարտաքին իմաստութենէ եւ ի գնացից վարուց նոցին առին կալան: Թէ՛ այսպիսի ասի ի նոցանէ, ուրեմն յայտ է, թէ՛ այսոցիկ ասողքն հելլենացոցն կարգի հնազանդին ի պէսպէս աշխատութիւն մոլորութեան իւրեանց, որք եւ ըստ նոցին հելլենացւոցն եղեն պարզեւարաշխ Որդոյ եւ յորջորջեցին նմա անուն զգործոյ արուեստականաց, «ի ձեռն Որոյ» ասեն եւ զՀոգին Սուրբ՝ յանուն տեղոյ եւ ժամանակի, եւ առին ետուն Աստուծոյ Հօր գայն, որ ամենայն «ի Նմանէ է»:

* Ա Կորնթ. Ը 6

** Ա Կորնթ. ԺԱ 12

*** Տե՛ս Ծնունդ. Զ 14:

Եւր ԻԾ 10

** Ա Կորնթ. ԺԾ 47

*** Հմմտ. Յովք 19 6:

Արդ, եթէ զճառսն Հելլենացոցն առնուն ի մէջ, ընդէ՛ր ոչ միաբանին նոցին եւ ընդէ՛ր խառնակին զճշմարտութիւն առաքելոյ Հելլենական խօսիւքն, որք նոքօք վարին, զի նա ահա դարձեալ գրէ զայս եւս. «Զի ի Նմանէ էք դուք ի Քրիստոս Յիսուս», եւ զմիւսն, որ ասէ. «Ամենայն ինչ յԱստուծոյ»^{*}: Արդ, զի՞նչ միաբանութիւն ունի այս առ ճարտարութիւն բանից նոցա, որք ասեն, թէ այլ է ընտրութիւն, այլ՝ նորա, որ պատճառն է, եւ այլ՝ բնութիւն գործոյն արուեստագիտութեան, եւ այլ՝ տեղւոյն եւ ժամանակին, եւ ի ձեռն այսպիսի ասացելոցս այլափոխեն, թէ օտար է Որդի Հօր, որպէս օտար է անօթ արուեստագիտին, եւ օտար է դարձեալ Հոգի Սուրբ՝ Որդոյ, որպէս անջրպետեալ է տեղին եւ ժամանակն յանօթոյն եւ յարուեստագիտէն:

Ե. Արդ, այս ամենայն ասացեալքս մարդկան են, որք ընդդէմ քրիստոնէութեանս կան եւ անուանն Քրիստոսի յազգէ անտի Հելլենացոց: Սակայն մեք ոչ եթէ միայն Հօր առնումք զայն, որ ամենայն «ի Նմանէ», եւ տայցեմք միայն Որդոյ զայն, որ ամենայն «ի ձեռն Նորա», եւ Հոգոյն Սրբոյ միայն զայն, որ ասէ բայ «Նովաւ»՝ ըստ բանին նոցին, զի ոչ թէ օտար է այս բարբառ ամենայն նովաւ Որդոյն Աստուծոյ եւ Հոգւոյն Սրբոյ, քանզի անհնար է, թէ ոչ պատշաճի այս բանք Երից Անձնաւորութեանցն, եւ ոչ թէ ըստ նոցա չափէ եւ սահմանէ զբնութեանցն որոշմունք, վասն զի «Մի է Աստուած Հայր, յՈրմէ ամենայն, եւ Մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն»^{**}: Ոչ թէ խտրոց եւ կամ օրէնք ինչ իցէ, յորժամ առեալ լինի քննութեամբ մտաց յօրինեալ կարգ բանին, քանզի ցուցանէ եւ յայտ առնէ զճշմարիտ Անձնաւորութիւնսն միում Աստուածութեան եւ ոչ թէ զայլ ինչ մուծանէ, զի արասցէ բաժինս ի փառաւոր բնութեան, զի չիք մեծութեան Նորա այլակերպութիւն փոփոխման: Եւ զի անչիոթ կարգաւ տացէ մեզ առաքեալ նոցա զմիտս ճշմարիտս վասն Հօր եւ Որդոյ այսպէս կարգեաց զՆոսա: Եւ այսպէս բարբառք ոչ են ընդդէմ միմեանց, եւ ոչ եթէ ի նշանակէ բանիցն գտանին սոքա բնութեանց ցոյցք, զի առնիցեն մարտ պատերազմի այսպիսի կարգաւ եւ յօրինուածով իւրեանց, քանզի առաքեալն Աստուծոյ, ի մի Աստուածութիւն անդր կարգեալ, ժողովեաց զայս ամենայն՝ յասելն

իւրում. «ի Նմանէ եւ Նովաւ եւ ի Նոյնն ամենայն»^{*}: Եւ այսու բանիւ գուշակեաց մեզ միտք Գրոյն եւ խորհուրդ զՈրդոյն Աստուծոյ: Վասն զի, թէ քննեմք ստուգութեամբ զմիտս բանին, անյապաղ գտանեմք, եթէ զՏեառնէ մերմէ առեալ ցուցանէ: Նաեւ առաքեալ զԵսայեալ[յ] մարգարէի երկրորդեաց զբանն, զի եւ անտի առեալ ունէր զընթացս¹⁹ ճառին, որով յառաջ մատուցեալ Պօղոս ասէ այսպէս, թէ՛ «Ո՞վ գիտաց զմիտս Տեառն կամ ո՞վ եղեւ Նմա խորհրդակից»^{**}: Եւ յաջորդ ածէ զկնի. «Վասն զի ամենայն ի Նմանէ է եւ ամենայն Նովաւ է եւ ամենայն ի Նա է»^{***}: Եւ ի դէմս երեսաց միոյ Աստուածութեան աւարտեաց զբանս զայս, որով ծանուցանէ վասն Բանին Աստուծոյ, եթէ Նա ինքն է Որդի Հօր եւ Արարիչ ամենայնի՝ ըստ վկայութեան մարգարէին բանիւքն, որ կանոխ, քան զնոսա, յորում ասէ. «Ո՞ չափեաց ափով զՂուրս եւ զԵրկինս թզաւ իւրով եւ զԵրկիր ամենայն քլաւ, կշռեաց զԵրինս կշռորդօք եւ զբլուրս ամենայն ի լուծ կշռոց եբարձ եւ ո՞ գիտաց զմիտս Տեառն կամ ո՞ եղեւ Նմա խորհրդակից»[†]: Իսկ այն, որ ասաց բայով, զամենայն արարեալքս մերժեալ Հեռացոյց ի Նմանէն, եւ այն, զի ասաց դարձեալ, թէ՛ «Ո՞վ յարիցէ ընդ Իս ի վերայ չարեաց»^{††}, զի «չիք ոք, - ասէ, - ի մարդկանէ, որ մարդոյ փրկիչ կարէ լինել ի չարեաց, բաց ի Քէն»^{†††}: Եւ զի ասաց աստ, թէ՛ «Ո՞վ գիտաց»²⁰ զմիտս Տեառն, կամ ո՞ եղեւ Նմա խորհրդակից յարարելոց աստի»[‡]: Արդ, եթէ «Հայր սիրէ զՈրդի եւ զամենայն ինչ ցուցանէ Նմա»[§], եւ ամենայն ինչ, որ Հօր Որդւոյ իւրում է, օտար է այն, որ ասէ բայով «առ յՈրդւոյ իւրմէ»: Արդ, այս այն է, որ զԵրկինս Հաստատեաց եւ ձգեաց զՆա եւ Հաստատեաց զԵրկիր եւ զամենայն ինչ, որ ի նմա է, եւ այն, որ պատրաստեաց եւ արար զայս ամենայն եւ կոչեաց²¹ զազգս ի սկզբանէ եւ կարգեաց կացոյց զամենայն ինչ ի գեղ կարգին իւրոյ եւ արար կատարումն ամենայնի յակնարկել իմաստութեան իւրոյ. այն, որ կարգեաց կացոյց զմեծութիւն երկնից եւ էառ կալաւ զչափ մեծութեան նորա ի ձեռն նշանի թզաչափոյն փոքր ակնարկելոյ զօրութեան իւրոյ: Եւ բանն

* Հոովմ. ԺԱ 36

** Հոովմ. ԺԱ 36

*** Եսայի Խ 13, Հոովմ. ԺԱ 34

† Եսայի Խ 12-13

†† Սաղմ. ԴԳ 16

††† Հմմտ. Սաղմ. ԼԳ 13:

§ Եսայի Խ 13

§§ Յովկ. Ե 20

* Ա Կորնթ. Ա 30

** Ա Կորնթ. ԺԱ 12

*** Ա Կորնթ. Ը 6

մարդարեւութեան էառ ետ զնշան Ամենակալին անդամոց չափ կերպարանաց. եւ չափեցան ջուրք ափով Նորա եւ կալան զչափ ի ձեռն թղոյ Նորա, եւ եղեւ չափ հողոյ երկրիս բուսմբ Նորա, եւ եղան լերինք ի կշիռս Նորա, կշռեցան բարձունք կշորոքք Նորա^{*}: Արդ, զայն Ինքն, որ էնն ճշմարիտ, առեալ բերէ առաքեալ եւ ասէ ստուգութեամբ, թէ՛ «Ամենայն ի Նմանէ է եւ ամենայն Նովաւ²² է»^{**}: եւ ամենայն ի Նոյնն է եւ Նովաւ կրի, քանզի Նա է պատճառ լինելոյ այնոցիկ, որ եղենն, եւ Նովաւ կարգեալ կայ ամենայն, զի կեանք ամենայնի եւ տեսուչ ամենայնի Նա Ինքն է: Եւ վասն Նորա, որք եղենն եւ որք հանդերձեալ են լինել, կատարին եւ Նովաւ առնուն զհաստատութիւն եւ զվարձան կատարածի: Արդ, ամենայն ինչ ի Նմանէն եղեւ եւ ամենայն՝ Նովաւ եւ ամենայն առ Նա դառնայ: Եւ կամք Աստուծոյ չոր Նա Ինքն է, զի ամենայն ինչ Նովաւ եղեւ, քանզի զօրութիւն բանի Նորա ածէ զամենայն ինչ ի չգոյ է զոյ սիրով: Այսուհետեւ, որ ոչն ըմբռնի եւ ոչ նուազի յանպատում խնամոց զթոյ իւրոյ, ի Նա ձգտի ամենայն հայեցուածք կենաց նոցա, որպէս եւ գրեալ է, թէ՛ «Աչք ամենեցուն ի Բեզ նային»^{***}: զի «Ինքն է, որ բանայ զձեռն իւր եւ լցուցանէ զկամս ամենայն կենդանեաց»^{*}: Արդ, եթէ հակառակեցին այսուհետեւ ընդդէմ այսր զրկողքն Որդոյ, եթէ ոչ է այսպէս, զոր ասացաքս, զի՞նչ այն բանից է, որ բաւական լինի հաւանութեան նոցա, որք յայտնապէս անձամբ զանձինս դրդեալ կործանեն ըստ կամաց իւրեանց, զի թէ ոչ տացին զայս երիս բանս ի վերայ Տեառն մերոյ²³, զոր «ի Նմանէն» եւ «զՆովաւն» եւ «զոր Նոյնն», եւ Աստուծոյ չոր անկ վարկցին զսոսա բռնութեամբ: Եւ յայսմիկ յայտ երեւի, զի անկանին նոքա ի կարծեաց, զոր ունին վասն չոր, զի ոչ եթէ միայն զայն, որ ամենայն ի Նմանէ է, գտանեն մերձ նմա, այլեւ՝ զայն, թէ՛ «ամենայն Նովաւ է»: Արդ, եթէ ոչ է այսմ բանի լուրն խոնարհագոյն, ընդէ՞ր առեալ բերեն զսա իբր փոքր ինչ բան զկնի Որդոյ, ապա թէ՛ զլուր պաշտողի եւ զհնազանդեցիւոյ ունի սա, տացին մեզ պատասխանի վասն այսր բանի, որով երեւի, թէ՛ Աստուած փառաց Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որքան զբան առաւել է սպասաւոր, եւ արբանեակ կոչի ի նոցանէ, ուրեմն անձամբ անձին լինի կորանք ամօթոյ արանցս յայնոցիկ ի ճառս իւրեանց: Իսկ ի մէնջ, ըստ երկուց կողմանց, զօրաւոր է բան

մարդարեւութեան ի վերայ նոցա եւ կարող է ճշմարտութեամբն իւրով լինել վարապան անձին: Արդ, եթէ յաղթին ի բանէս խոստովանեալք ի դէմս Որդոյն Աստուծոյ զասացեալսս «ի Նմանէ» եւ «Նովաւ» եւ «ի Նոյնն ամենայն»: Ահա՛ գտաւ այսուհետեւ բանիւս, թէ՛ «ամենայնիւ ամենայն» Որդոյ է: Ապա եթէ կամեցին դարձեալ հակառակել, թէ՛ բանն մարդարեւութեան վասն Աստուծոյ չոր ասաց զնա, երեւի իսկ աւասիկ, թէ՛ ամենայն վասն նորա օրէն է, զի առեալ լիցի, եթէ՛ պատուականք եւ եթէ՛ խոնարհագոյնք եւ զկնի նորա պատշաճապէս եկեցեցէ՛ ըստ բանին նոցա: Արդ, որ առ դէմս երեսաց եւ կատարեցի բանս այս մեզ տայ ձեռն եւս օգնէ ամենայնիւ յամենայնի: Բայց մեք ի բանն, վասն որոյ արկեալ է մեր զճառս զայս, դարձցուք անդրէն պատմութեամբս մերով:

Առաքեալ աւասիկ այսպէս գրէ առ եփեսացիսն. «Զի եղիցուք ճշմարտեալք սիրովն Քրիստոսի եւ զամենայն աճուամն սննդեան մերոյ ի Նմա արացուք, զի Ինքն է զլուսն ամենայնի, եւ ի Նմա կատարի ամենայն մարմին եւ յօղեալ պատշաճի ամենայն խաղալիք տարբերութեան»^{*}: Դարձեալ եւ առ կողոսացիսն սոյնպէս գրէ. «Վասն այնոցիկ, որք օտարացեալք էին ի գիտութենէն Քրիստոսի, թէ՛ ոչ ունին զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօղեալ եւ պատշաճեալ խաղալիք տարբերութեան աճէ զաճուամն Աստուծոյ»^{**}: Այսուհետեւ գլուխ եկեղեցւոյ ամենայն ճշմարտութեամբ Քրիստոս է, որպէս ուսաք յառաքելոյ, զի «Նա է գլուխ ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ»^{***}: ըստ այնմ, զոր ասէ. «Յիմմէ անտի առնու, եւ Նա պատմեցէ ձեզ զամենայն ճշմարտութեամբ»^{*}: Արդ, մարդ, որ փոյթ ունիցի խնդրել զբարբառս զայսոսիկ, զի «Նմանէն» եւ «զՆովաւն» գտանէ «զՆոյնն» հաւասար չափով բարձանի ի վերայ չոր եւ Որդոյն եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ Տէրն մեր դարձեալ ասաց, եթէ՛ «Զօրութիւն ել յինէն»^{**}: Եւ վասն Հոգոյն ասացեալ է, թէ՛ «Որ Հոգովն սերմանէ, ի Հոգոյ անտի հնձեցէ զկեանսն յաւիտենից»^{***}: Եւ Յովհաննէս

* Տե՛ս Եսայի Խ 12:
 ** Հոովմ. ԺԱ 34
 *** Սաղմ. ԾԽԴ 15
 * Սաղմ. ԾԽԴ 16

* Եփես. Դ 15-16
 ** Կող. Բ 19
 *** Կող. Ա 18
 * Յովհ. ԺԶ 14
 ** Ղուկ. Ը 46
 *** Գաղ. Զ 8

ասաց, թէ՛ «Այսու գիտեմք, զի ի Հոգոյ անտի Աստուծոյ գոյ ի մեզ»^{*}: Եւ դարձեալ՝ ի բանէ Հրեշտակին, որ պաշտեցաւ առ Մարիամ, թէ՛ «Այն, ինչ որ ի Նմա է, ի Հոգւոյն Սրբոյ յղացեալ է»^{**}: Եւ որպէս ասաց Տէր մեր, թէ՛ «Որ ինչ ի Հոգոյն, - ասէ, - ծնանի, Հոգի է»^{***}: Եւ դարձեալ՝ վասն այնր, որ ասացեալ է՝ «Ի ձեռն Նորա»՝ վասն Հօր եւ վասն Որդւոյ եւ վասն Հոգւոյն Սրբոյ, գտանի ի Գիրս, զորս առանց յապաղելոյ եւ անխափան յօժարութեամբ յայտ արասցուք: Արդ, ի ճառս Որդւոյ ի Հարկէ փոյթ եղել մեզ, զի բերցուք զվկայութիւն զայն, որ ասացեալ է վասն Հօր, զի զոր թշնամիքն ասեն վասն Նորա, մեք ունիմք ցուցանել, զի եւ վասն Հօր գրեալ է «զայն», որ ասէ. «Հաւատարիմ է Աստուած, Որով կոչեցայք դուք ի Հազորդութիւն Որդւոյ Նորա»^{*}: Եւ «Գօղոս՝ առաքեալ, - ասէ, - Յիսուսի Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ Հօր մերոյ»^{**}: Եւ այսուհետեւ ասէ. «Ոչ էք դուք ծառայք, այլ՝ որդիք, եթէ որդիք եւ ժառանգ Աստուծով»^{***}: այսինքն՝ ի ձեռն Աստուծոյ: Եւ ըստ այնմ դարձեալ, զոր ասաց Նսայի. «Վա՛յ, ոյք խորհին խորհուրդք չարք եւ ոչ՝ ի ձեռն Տեառն»[§]: Եւ վասն Հոգոյն մեք դարձեալ ունիմք բազում վկայութիւնս ցուցանել, զի եւ վասն Նորա ասացեալ է բայով. «Զեզ, - ասէ, - յայտնեաց Աստուած ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»^{§§}. եւ՝ «Զաւանդս զայս պահեա՛ր զգուշութեամբ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»^{§§§}. եւ՝ «Ումեմն տուեալ է բան իմաստութեան ի ձեռն Հոգւոյն Սրբոյ»⁺:

Եւ զնոյն դարձեալ ունիմք ցուցանել, զի ի վերայ Հօր առեալ լինի բանս այսպիսի. «Աստուած, - ասէ, - փրկութիւն իմ եւ փառք իմ»⁺⁺, եւ՝ «Յանուն Քր ջնծասցուք զօր Հանապազ»⁺⁺⁺: Եւ Գօղոս

* Ա Յովն. Գ 24
 ** Մատթ. Ա 20
 *** Յովն. Գ 6
 § Ա Կորնթ. Ա 9
 §§ Ա Կորնթ. Ա 1
 §§§ Գաղատ. Դ 7
 § Տե՛ս Եսայի ԻԹ 16:
 §§ Ա Կորնթ. Բ 10
 §§§ Բ Տիմոթ. Ա 14
 + Ա Կորնթ. ԺԲ 8
 ++ Սաղմ. ԸԸ 14, Լ 6
 +++ Սաղմ. ԶԲ 17

դարձեալ ասէ. «Աստուած այն, որ Հաստատեաց զամենայն»^{*}: Եւ դարձեալ՝ «Գօղոս եւ Սիդուանոս եւ Տիմոթէոս Եկեղեցոյդ թեսաղոնիկեցոց, որ յԱստուած Հայր մեր է»^{**}. եւ՝ «Զի բացցի ինձ, - ասէ, - դուռն, եւ ի կամս Աստուծոյ եկից առ ձեզ»^{***}: Ոչ ունիմք մեք այսուհետեւ բազում վկայութեամբք ցուցանել զսոյն, ոչ թէ՛ զի ածիցեմք նոքօք զձախողակիսն ի Հաւանութիւն, այլ զի յանդիմանութիւն անձանց նոցա տացուք, զի ոչ եթէ ճշմարիտ եւ Հաստատուն է կամ ստոյգ եւ արժանի քննութեան խորհուրդք նոցա եւ բանք վասն Որդւոյ եւ կամ վասն Հոգւոյն Սրբոյ, վասն որոյ եւ մեք ածաք զվկայութիւնսս, որովք յայտ արարաք երեւելապէս. զի առնուն Գիրք զբանսս զայսոսիկ՝ ըստ պիտոյից փոփոխապէս ի վերայ Աստուածութեան Անձնաւորութեանց, եւ իմաստ լսողի եւ ստոյգ միջնորդի բաւական են այսոքիկ, որ ասացանս՝ լինել զգուշութիւն յայնցանէ, որք ընդդէմ Աստուածութեանն առնուն զփոփոխումն բանից բնութեանց որոշիչ, զի թէ՛ ամենայն, որ մի անգամ մեծ եւ փոքր բարբառք են, փոփոխմունք առնեն բնութեան՝ ըստ բանից նոցա: Բաւական է այս ի կորանս ամօթոյ նոցին, զոր ասացաք, զի ոչ փոփոխի բնութիւն ըստ բարբառոյ այսր, որ լինի վասն Նորա: Նաեւ ոչ իսկ դարձեալ, թէ՛ որպէս բնութիւնքն են, այնպէս են եւ բարբառք²⁴ ըստ նոցա:

Արդ, ոչ եթէ ի վերայ Աստուածութեան միայն բարբառքս այսոքիկ փոփոխեն զիրեարս, այլ փոփոխին բազում անգամ եւ ծանուցանեն զմարդկութեանս մերոյ զիրս եւ զօրութեամբ իւրեանց նոյն են նոքա, քանզի անկանին ի միմեանց վերայ առնուլ զտեղի իրերաց: Աւասիկ ասացաւ ի գիրս Օրինացն, եթէ՛ «Ստացայ մարդ Աստուծով»^{*}, եւ ոչ՝ «յԱստուծոյ իբրեւ», զի ի բանէն Ադամայ, եւ այն, որ ի ձեռն Տեառն յԱստուծոյ է: Եւ «բազում ինչ է ի Մովսիսէ ասացեալ առ Իսրայէլ Հրամանաւ Տեառն»^{**}, զի «Ի ձեռն Տեառն» ասէ եւ ոչ՝ «Ի Տեառնէ»: Եւ դարձեալ իբրեւ մեկնեաց Յովսէփ զերազն ի տան բանտին, ոչ ասաց, եթէ՛ «յԱստուծոյ են» մեկնութիւնք, այլ թէ՛ «Ի ձեռն Տեառն են», քանզի բանս այս, որ ասի «Ի Նմանէ»,

* Եփես. Գ 9
 ** Բ Թեսաղ. Ա 1
 *** Հոովմ. Ա 10
 § Եմուդ. Դ 1
 ## Թիւք ԼԶ 5

գորակից է այնք, որ ասէ «Նովաւ»։ Արդ, յորժամ ասաց առաքեալ վասն Տեառն մերոյ, թէ «եղեւ ի կնոջէ»^{*}, յայտ է, թէ՛ «ի ձեռն կնոջ»։ Եւ զայս դարձեալ Գիրն մեկնեաց մեզ ուղիղ, Հաստատուն եւ ասաց, թէ «եղեւ կին յառնէ, եւ այր ի ձեռն կնոջ տեսանեմք»^{**}։ Արդ, աւասիկ²⁵, զի այսոքիկ երկու²⁶ բարբառս զմի պէտս լնուն միով օրինակաւ, եւ սովին դարձեալ այսու պատմութեամբս, զոր արարեալ է մեր, ճեպ ի ճեպոյ ուղղեսցուք զայնոսիկ, որք թերացանն եւ կամակորք գտան այսու կարծեօք՝ զմարմին Տեառն մերոյ ոչ Հողեղէն Համարելով։ Արդ, զի յայտ արասցէ եւ ցուցցէ առաքեալ, եթէ ի ստեղծուածոյ աստի որդոց մարդկան է Աստուածութիւն զմարմինն եւ առ ինքն ընծայեցոյց, ծանոյց մեզ յայտնապէս բանիւ զգիտութիւն ճշմարտութեան, զի թէ ասացեալ էր, թէ «ի ձեռն կնոջ», ցուցանէր, թէ անցաւ էանց նա ընդ Տէր մեր ծննդեամբն Իւրով։ Իսկ այն, զի ասաց, թէ՛ «ի կնոջէ է», գիտութիւն տայ ճշմարտութեամբ եւ յայտ առնէ վասն այնք, որ ծնան, թէ Հաղորդէ բնութեան այնմ, որ ծնան զնա։

Արդ, այսոքիւք, զոր ասաց Գիրս, ոչ եթէ ընդդէմ անձին իւրոյ մարտնչէր, այլ ցուցանելով եցոյց, եթէ մերձ են եւ մօտ են այսոքիկ բարբառք առ միմեանս զօրութեամբք իւրեանց։ Արդ, յամենայն ժամ, յոր եւ ասի «Նովաւ», մարթի պատշաճել ի վերայ Նորին խորհրդոյ եւ «ի նմանէն»։

Արդ, զի՞նչ²⁷ է այն բանք զրպարտութեան ի վերայ Աստուածութեան այսու սիղղոյբայիւք, որ ոչ անջրպետին եւ ընտրին ի միմեանց։

Զ-է. Եւ նոյնիսկ նոքին ոչ իբրեւ արք տգէտք եւ տխմարք ի գիտութեանէ արժանի են առ այս թողութեան։ Այլ դարձադարձ առնեն շրջանակաւ արուեստագիտութեան իմն ճարտարապէս եւ պարտաւոր են զխորհուրդս ճշմարիտս այսոքիւք սիղղոյբայիւք, որով յայտնապէս ցուցանեն²⁸ զդարձան²⁹ դառնութիւնս իւրեանց մեզ, եւ զի ընդ Հօր առնեմք մեք զխոստովանութիւն Որդւոյն Միածնի Հանդերձ Հոգովն Սրբով՝ ոչ մուծանելով օտարութիւն ինչ ի բնութիւն Երրորդութեան, տխմարս, չմարթուս, ճառագիրս կոչեն զմեզ եւ նորամուծիչս, նորաբարոյս³⁰ յորջորջենն զմեզ եւ բանակրկիտս,

բանաբաղս եւ բանչգիւտս անուանեն զմեզ, եւ ո՞ր նախատինք են, զորս ոչ ածեն ի վերայ մեր թշնամանիչ, դարովիչ բանիւքն իւրեանց։ Սակայն ես ոչ ինչ ընդ միտ ածեմ կամ տրտմիմ վասն անարգութեան բանից նոցա, զի թէ ոչ բազմանային, կուտէին ի վերայ իմ տրտմութիւնք, եւ Հաշեալ մաշէի վասն տրտմութեան անձանց նոցա եւ թերութեան պակասութեան ի ձեռն Հայհոյութեան իւրեանց այնպէս Համարէի ինձ զնոսա, իբրեւ զմարդս Հոգաբարձուս, որք փոյթ ունէին վասն երանութեան անձին իմոյ ամբարշտութեամբն իւրեանց, քանզի երանութիւն տուաւ մարդոյ, որ նախատինքն իւր վասն Աստուծոյ իցեն՝։ Արդ, ամենայն աշխատութիւն եւ տառապանք նոցա [յ]այսմէ, զի Համարիմք մեք զՈրդի ընդ Հօր ի մի պատիւ, իսկ նոքա զայս ասեն, եթէ ի ձեռն Որդւոյ մեք զօրհնութիւն տամք Հօր, այլ ոչ եթէ ի մի փառս Հաւասարեմք մեք զՆոսա, քանզի, թէ տամք Հաւասարութիւն Որդւոյ, պատուակից եւ բարձակից ընդ Հօր Համարիմք զՆոսա։ Եւ ահա այս, որ գրեալս է ի ձեռն Նորա, զնշան կրտսերութեան ցուցանէ նմին։ Արդ, ոչ զՈրդի ընդ Հօր Համարիմք մեք եւ ոչ զՀոգի ընդ Որդւոյ դնեմք մեք, վասն զի զկնի Հօր Որդին է ի Հնազանդութեան, եւ զկնի Որդւոյ Հոգին է ի կրտսերութեան, եւ ընդ Հօր ոչ Որդին պատուի երկրորդական թուովն, քանզի ոչ Համեմատի ընդ Նա Հաւասարութեամբ, այլ՝ իբրեւ զկրտսեր քան զՆա կարգի եւ յետին թուովն։ Եւ այս բանք եւ շրջշրջումն դարձուածոյ նուրբ ամբարշտութեան օտար է ճշմարտութեան եւ պարզ եւ յստակ Աստուծոյ Հաւատոցն, զոր սոքին այսոքիկ դարձուցանեն շրջնն զճշմարտութիւն ի ստութիւն անօրէնութեամբ եւ զրպարտող բանիւք իւրեանց աշխատեն զմարդ, որ սոցին պատահէ։ Եւ թէ ոչ իցէ փորձ երկիւղի եւ Հանճարով ընկզմի ի նոսին, ապա թէ ոք ոչ իցէ վարժ եւ կիրթ յայս մոլորութիւն, զոր արկեալ է նոցա, ձեռն ձգեն եւ կործանեն զնա։

Բայց մեք նախ զայս Հարցանեմք զնա, թէ իբրեւ պատուով³¹ այլակերպ ինչ առ ի նմանէն, կամ թէ իբր զի՞նչ անջրպետութիւն ինչ իցէ ընդ Հայր եւ ընդ Որդի վայրիւ եւ տեղեաւ, քանզի ասել զՈրդի երկրորդ առանց ժամանակի չէ հնար, եւ Նա ինքն եւ Արարիչ ժամանակաց եւ աշխարհաց։ Եւ արդ, ո՞վ իցէ այսպէս առանց իմաստութեան եւ մերկացեալ ի մտաց, որ ասէ³² զԱմենարարէն սահմանեալ տեղեաւ եւ ժամանակաւ, Որոյ չիք ինչ ընդ մէջ, որ անջրպետէ, եւ որ ոչ է, որ անկն է մերոյ բնութեանս զԵրիս Անձնաւորութիւնսն՝ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, զի չիք բնաւ միջնորդութիւն ի Նա, եւ ոչ ի

* Տե՛ս Ծմումն. Խ 8

** Գաղատ. Դ 4

*** Ա Կորնթ. ԺԱ 12

միտս որդւոց մարդկան մարթ է, զի եղիցի կամ ասասցի, եթէ կրտսեր է Որդի քան զՀայր, եւ ոչ թէ ի միմեանս են անձնաւորութեամբ, ալ այս, զի չիք ժամանակ, որ անջրպետիչ լիցի ի մէջ Նոցա Երկոցունց, քանզի չիք տեղի կամ ժամանակ մօտաւոր կամ հեռաւոր յայտոսիկ անուանսս, քանզի մեր է այս ժամանակաւ եւ տեղեալ բացաճգիլ մերձաւորութեամբ եւ հեռաւորութեամբ աշխարհականս կենաց, որպէս թէ ասիցէ ոք, թէ ժամանակ դարուն Նոյի կանուխ եւ վերագոյն է, քան զժամանակս սողոմայեցւոցն, եւ ժամանակ սողոմացւոցն յոյժ բացարձակ եւ հեռագոյն է, քան զմերս, եւ ժամանակք այսր աւուրցս յետինք եւ վերջինք են, քան զհնոցն, եւ առաջին ժամանակացն լինել մերձաւոր յայտոցիկ, որ այժմս են, չէ հնար եւ մարթ, զի անցին զանցին նոքա: Արդ, բնութիւն այս կենդանեաց է, որ սահմանի ի ներքոյ ժամանակաց եւ աշխարհաց, եւ կեանք Աստուծոյ սահմանի ժամանակօք եւ տեղօք: Իսկ զԱստուած գիա՞րդ առեալ դնիցեմք ի չափ սահմանի եւ կշռեմք ընդ բովանդակութեամբ բանի, որ ցուցանէ վասն վայրի եւ տեղոյ, զի չիք յայնմ ամբարշտութեանս համեմատ եւ կոխ եւ կտրութիւն տխմարութեան ի գիտութիւնէ, որ ընդ խաւար համարի, զի որ ինչ ժամանակաւ գտեալ է, ապականացու ազգիս ասի եւ սմա մերձաւոր եւ հեռաւոր տեղի ասի եւ աշխարհ ձգմամբ երկարութեան եւ կարճութեան, բարձրութեամբ եւ խորութեամբ, երկայնութեամբ³³ եւ լայնութեամբ: Եւ այսոքիւք, որ ինչ արարեալս է ի պէտս արարելոցս եւ եղելոցս: Եւ մեկնեալ է Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ ի մերմէ նմանութենէս, զի պատճառ լինելոյ է արարելոցս եւ աշխարհ եւ նոքա, որք աշխարհի յարարչութենէ Երրորդութեան են: Արդ, եթէ անկանիցի³⁴ Հայր ի միտս արարելոցս, քննութեամբք լքցի առ այս եւ մնասցէ ի Հարցուածոց եւ լինի վասն նորա պապանձեալ միտք եւ ամենեւին ի դողումն, եւ եթէ անկանիցի ծուփս այս ի միտս նոցա, եթէ ծնունդ Որդի Հօր է, ամաչեսցեն, կուրասցի խորհուրդք ամենայն ի քննել զյիզանակ այսր կարծեաց, վասն զի ոչ ինչ կարիցեմք ասել, քանզի բարձրութիւն Նորա վեր է քան զամենայն բնութիւնս, եւ չիք չափ անբաւութեան Նորա, զի ծածուկ եւ աներեւոյթ է յամենայն արարածոցս քննութիւն Նորա: Արդ, զարմանք սքանչելեաց է բարբառն Յովաննու, քանզի երկու³⁵ բանիւք՝ արգել պաշարեաց զամենայն միտս եւ ցանկեաց, փակեաց զամենայն խորհուրդս եւ սահմանեաց, կացոյց զամենայն շարժումնս եւ սանձ արկեալ նահանջեաց³⁶ յառաջագոյն զամենայն մտածումնս, որք առեալ ունին զմարտ հակառակութեան եւ զշրջուածս եւ դարձուածս բանից եւ

մեղաց, քանզի խորհուրդք որոշեալ մարդկան եւ միտք բանից նոցա առեալ ունին զստուեր ապականութեան, յոր թեւակոխեալն կրթին, քանզի խուսափեն յառաջնմէ օրհնութենէ հարցն մերոց, ըստ որս եւ մերս խառնեալ հաւասարի, վասն զի զովեստ օրհնութեան հաւասար տուաւ ի նոցանէ Հօր եւ Որդոյ: Եւ մեք, որ զայտոսիկ ունիմք, ոչ եթէ միայն բաւականանամք ի վկայութենէ բանից հարցն մերոց բանիս մերում, այլեւ յաստուածեղէն Գրոց ունիմք ցուցանել վկայութիւնք յանկակիցք եւ յարակիցք բանիցս մերոց: Արդ, լո՛ւր գայն, որ ասացն Յովհաննէս. «Նա էր ի սկզբանէ առ Աստուած»^{*}: Նոյնպէս եւ առաքեալս. «Նա ինքն է ճաճանչ լուսոյ փառացն Նորա եւ կերպարան մեծութեան Նորա»^{**}: Արդ, ո՞ւր է բաժինքն ընդ լոյսն փառաց Նորա եւ ընդ նկարագիր էութեան Նորա, զի ոչ թէ նմանութիւն կերպարանաց այնմ իմիք է, որ յառաջն էր, եւ Նա եղեւ յետոյ, այլ հաւասար միով բնութեամբ է առ կերպարանին յամենայն ինչ եւ ամենայնիւ, քանզի ի նմանէ է եւ իբրեւ զՆա եւ ընդ նմա՝ զօրութեամբ եւ փառօք, այսինքն՝ ի Հայր ճշմարիտ, զմի մի է զօրութիւն նոցա միով մեծութեամբ Իւրեանց: Այսոցիկ ոչ հետեւիլ հաւանին նորամուտ կորստականքն ժառանգակցութեան անուանց Հօր եւ Որդոյ եւ ոչ՝ զի մի են բնութիւնք, եւ զօրութեամբ եւ մեծութեամբ խոստովանին:

Ը. Սակայն ոչ է բնաւ օտարութիւն կամ թերութիւն Անձնաւորութեանց նոցա՝ յասելն առաքելոյ. «Գոհանամք զԱստուծոյ Հօրէ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»^{***}: Եւ դարձեալ, թէ՛ «Ի ձեռն Նորա ընկալաք մեք շնորհս եւ առաքելութիւնս ի լուր հաւատոյ հեթանոսաց, եւ ի ձեռն Նորա եղեւ մեզ մուտ ի շնորհս յայս, յորում կամք եւ պարծիմք յընծայութիւն օգնութեանց Նորա»^{*}: Արդ, այսու ամենայնիւ, որ ասաց բայ «Ի ձեռն Նորա», ցուցանէ, զի Նա ինքն է ծանուցիչ Հօր, առ որ մատեաքն, եւ ի ձեռն Նորա եղեւ մեզ ընտանութիւն առ Հայր երկրպագութեամբն, որ ի մէնջ, եւ ի նմանէ եղեւ պարզեւք առ մեզ գիտութիւն Հօր Նորա: Արդ, ունիմք մեք զխոստովանութիւնս գայս, զի Նա ինքն է պատճառ ամենայն բարութեանց, եւ նուազեցուցանել ջանամք զփառս Նորա, որ առաւել եւս փառաց արժանի էր ի մէնջ այնու, զի ի ձեռն Նորա եղեն գիւտք

* Յովհ. Ա 2
** Երր. Ա 3
*** Հոովմ. Ա 8
Հոովմ. Ե 2

Տե՛ս Յովհ. Ա 1

ամենայն բարութեանց մեզ: Այսուհետեւ ցուցանեն եւ յայտ առնեն Գիրք յորժորջմամբքն իւրեանց ի բազում տեղիս ոչ թէ վասն անուանցն միայն, որ է մեծութիւն փառաց բնութեան Աստուածութեան Նորա՝ իբր «Բան Աստուծոյ» եւ «Ճառագայթ» եւ «Գափկեր», այլեւ՝ զոր ընդ տնօրինութեան է, ընդ որում ասէ. «Տուաւ Նմա անուռ, որ առաւել եւ վերագոյն, քան զամենայն անուն է»^{*}. «Եւ Որդի եւ ճշմարիտ Որդի Աստուծոյ»^{**} եւ Միածին Աստուծոյ եւ «Միածին ի ծոցոյ Հոր Իւրոյ»^{***}: Արդ, զի յամենայն ձեւ կերպարանաց յայտ արասցէ զօգնութիւն Իւր առ մեզ, որ ի մեծութենէ բարձրութեան Նորա տուաւ եւ ի փառաց իմաստութենէ Նորին տկարութեանս մերում, վասն այսորիկ բազում անուամբք, որ առ մեզ, յորժորջեցաւ, որք լի են նշանօք փրկութեան: Անուանեցաւ Հովիւ եւ Թագաւոր, Բժիշկ եւ Փեսայ, Ճանապարհ եւ Դուռն, Աղբիւր եւ Հաց, Տապար եւ Վէճ^{*}: Եւ այսոքիւք այլափոխ անուամբք երեւելի եւ յայտնիչք Նորա մեկնեցան եւ յայտնեցան առ մեզ, եւ ոչ եթէ բնութիւն ինչ Նորա նոքօք պատմեցաւ, զի իբրեւ յԱրարչէ առ արարածս Իւր ցուցցէ զյորդառատ ողորմութիւն Իւր բիւրօք պարգեւօք, զի լիութիւն Նորա ի կարօտեալս ընծայեցուցէ զփառս Իւր:

Արդ, զայնոցիկ, որ ի Նայն ապաւինին եւ ի Նմա միաբանին եւ զկատարելութիւն սիրոյն իւրեանց առ ճշմարտութիւն անդ Նորա ցուցանեն, զգուշանայ պահել. վասն որոյ եւ ոչխարս Իւր անուանեաց զնոսա, զի զբարբառս ճշմարտութեան Նորա զիտեն լսել եւ զկնի օտար բարբառոյ այլուսման ոչ վարին եւ երթան, որպէս եւ ասաց իսկ, թէ՛ «Ոչխարք իմ զբարբառ իմ լսեն, վասն զի Ես եմ Հովիւ քաջ»^{**}: Իսկ Թագաւոր, զի անուանեցաւ ի ձեռն օրինացն, զոր եղ ծառայից Իւրոց, զի մեծամեծ պարգեւս առցեն, եթէ պատահեցեն զնոսա: Իսկ Դուռն կոչեցաւ, զի առանց ճշմարտութեան Հաւատոցն Նորա չիք ոք, որ կարէ մտանել ի գանձանակն կենաց, քանզի ամենայն, որ միանգամ ելանէ եւ մտանէ ի ձեռն պատուիրանաց Նորա եւ յանուն Նորա Հովիւ գտանէ զՆա, որոց յուսովն Նորա³⁷ զօրեալ եւ պարհանդակապահք են: Իսկ Վէճ անուանեցաւ, քանզի Նա Ինքն է³⁸

* Փիլիպ. Բ 9

** Ա Յովն. Ե 20

*** Յովն. Ա 18

* Տե՛ս Յովն. Դ 14, Զ 52, Ժ 7, 11, ԺԹ 19, Մատթ. Թ 12, Գ 10, ԻԱ 42, ԻԵ 37, Մարկ. Բ 17, 19, ԺԵ 26, Ղուկ. Ե 35, ԻԳ 2:

** Յովն. Ժ 27

ապառաժ³⁹, վասն զի չիք բնաւ ամենեւին շարժումն զօրութեան Նորա եւ ոչ խրամատ՝ ի ճշմարտութիւն Նորա: Եւ ամենայն, որ միանգամ ի վերայ Նորա չինեալ է, եւ ի վերայ Հաւատոցն Նորա եղեալ Հաստատութիւն յուսոյ նոցա, չիք ինչ, որ կարիցէ յաղթահարել զնոսա: Իսկ Ճանապարհ կոչեցաւ, զի ի ձեռն Նորա եւ վասն Նորա են գնացք ճանապարհի մերոյ⁴⁰ առ Հայր Իւր, որպէսզի ի ձեռն Նորա Որդւոյ երեւեցի, զի մի են փառք Երկոցունց ի բնութեան միով երկրպագութեամբն, զի «յանունն Յիսուսի Քրիստոսի, - ասէ, - կրկնեցի ամենայն ծուրն երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց, եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հոր Իւրոյ»^{*}: Արդ, ի կիր արկանեն Գիրք զերկուս⁴¹ կերպարանս անուանց զայսոսիկ⁴² եւ վարին սոքօք՝ իբրեւ առաջնորդօք, զի մինն ցուցանէ վասն շնորհացն, որ ի ձեռն Նորա եղեն, եւ միւսն եւս քարոզէ վասն փառաց Աստուածութեան Նորա, որ ի Հօրէ անտի է, վասն զի չիք օգնութիւն, որ եղեւ առ ազգս մարդկան կամ կերպարանք տեսչութեան խնամոց գործագուլթ ողորմութեանց, որոց ոչ Նա Ինքն իցէ պատճառք նոցին: Այսուհետեւ մարդկան, որք յանուն Նորա խօսեալ իցեն, եւ չկացցէ ինչ ի նոսա նշան եւ կամ սպիք անօրէնութեան, եւ իցէ ինքն ինքն անբիծ անարատ, իբրեւ զկոյս սուրբ Փեսայի նմանութեամբ, այսպիսեացս անուանեցաւ: Եւ դարձեալ՝ յորժամ լինիցիմք չարչարեալ ի խիստ ցաւ չարեաց ի Հարուածոց անտի թշնամոյն, Բժիշկ եւ Քաւիչ մեղաց անուանեցաւ, որ բժշկէ ի չարեաց անտի եւ ի Հարուածոց թշնամոյն: Զայս փոյթ մեծ տեսչութեան Աստուածութեան, որ է առ ընկալաւ յինքն զայսոսիկ զանուանս վասն մեր, մեք աւասիկ, չարախորհուրդս առեալ, իջուցանեմք մտօք մերովք ի խոնարհութիւն կրտսերութեան եւ ընդդէմ կամք զարմանալի եւ սքանչելի մեծի շնորհի երախտեաց⁴³ Նորա, որ առ մեզ պաշտեցաւ եւ երեւի ինձ, զի ընդ գտակ կենաց մերոց ի կոխ իջեալ մարտնչիմք այսուամենայնիւ եւ ընդ այնմ, որ յանձն է առ լինել խոցեալ վիրաւոր եւ է առ ընկալաւ յինքն զսպիսն վասն մեր յորդառատ ողորմութեամբ Իւրով, գոռալով ոգորիմք եւ Նմա, որ խոնարհեցոյց զբարձրութիւն մեծութեան Իւրոյ եւ են առ մեզ, վասն վատթարութեան մերոյ զայս ամենայն Հատուցանեմք մեք փոխարէնն: Սակայն ես ասեմ, թէ չիք Համեմատ այսր սքանչելեաց, որ եղեւ ի Նմանէ առ մեզ՝ ո՛չ երկինք եւ ո՛չ երկիր՝ իւրեանց կազմուածքովն, ո՛չ արեգակն եւ ո՛չ լուսինն եւ ո՛չ աստեղք եւ ո՛չ ծով՝ Հանդերձ ամենայն զեռնօք իւրօք, եւ ո՛չ օդ՝ Հանդերձ ամենայն

Փիլիպ. Բ 10-11

թուչնօք, եւ ո՛չ գազանք երկրի՝ Հանդերձ ամենայն տնկովք, եւ ո՛չ ջուրք աղբեր ականց՝ Հանդերձ յօրինուածովք կարգաւոր բոլորմանց, եւ ո՛չ ամենայն արուեստք սքանչելեաց, որ են ընդ ամենայն տիեզերս, ոչ գոն ի կշիռ Համեմատել Հաւասարել այսորիկ, զոր ինչ գործեաց Աստուած եւ զոր ինչ արար, զի բնակեցոյց ի մարմինս վշտալից, զի առցէ Համբերի(ս)յցէ զկարիս նորա, որպէս զի, խառնելով զանմահութիւն իւր ի մահկանացութիւն մեր, արասցէ զմեզ անմահս իւրօք կենօքն՝ ըստ այնմ, զոր ասաց առաքեալն. «Յայսմ ամենայնի առակի յաղթեմք Նովաւ, որ սիրեացն զմեզ»⁴⁴: Ոչ եղեւ բաւական այս մեզ զարմանալի սքանչելիքս, զի յաղթեսցուք խոնարհութեան Նորա, այլ յանդգնիմք զզարմանալի փառս Աստուածութեան Նորա երեւելի⁴⁵ խոնարհութեամբքս յորջորջել: Բայց զինչ մօտ են բարբառքս այսոքիկ, որ ըստ ողորմութեան Նորա առ փառս Աստուածութեան Նորա, զի վասն փրկութեան մերոյ եղ զսէր իւր առ մեզ մինչեւ ի մահ եւ յաղագս այս մարդկեղէն կոչմամբք անուանեցաւ: Արդ, զոր ինչ մեծութիւն Նորա ոչ ունի ի բնութեան իւրում, մեք ի տկարութենէ անտի առեալ զգեցուցանեմք Նմա եւ ոչ ի միտ եղեալ նայիմք ընդ զարմանալի զօրութիւն Աստուածութեան Նորա, թէ զիա՞րդ կապեաց զՀզօրն եւ Հառ աւարի զինչս նորա, զի մեք էաք անօթք չարութեան նորա չարաչար գնացիւքն, որ առ մեզ վարէր զմեզ⁴⁶ ատելութեամբ յանհնարին թշնամութիւնս առ Աստուած, իսկ Նա անօթոցն բարկութեան, որ պատրաստեալ էին ի կորուստ, արար մեզ անօթս պատուականս պէսպէս բարեօքն իւրօք ի պէտս պիտոյից Տեառն իւրեանց եւ պատրաստեաց յամենայն գործս բարիս կամօք իւրեանց: Արդ, բանս այս, զոր ասաց առաքեալ, եթէ ի ձեռն Նորա եղեւ մեզ մուտ առ Հայր, եւ թէ ի ձեռն Նորա փոխեցաք յիշխանութենէ խաւարի ի մասն Նորա, Հասեալ է սրբոցն ի լոյս յաւիտենից, կատարեցաւ առ մեզ⁴⁷: Մի՛ այսուհետեւ գուպարեսցուք, վիճեսցուք առ Նորա բնութիւն եւ տացուք Նմա զխոնարհութիւն կրտսերութեան, որ ոչ է մերձ եւ մօտ ի փառս մեծութեան Նորա, քանզի ոչ է վերակացութիւն տեսչութեան Նորա մեզ տեսչութիւն բռնութեամբ⁴⁸ ըստ նմանութեան կարգի, որ պաշտի առ մահկանացուս: Այլ է փոյթ տեսչութեան շնորհաց եւ ողորմութիւն յորդարուղիս, յորգառատ քաղցրութեամբ սիրոյ իւրոյ, որ առ ազգս որդւոց⁴⁹ մարդկան, զի ի կատարումն կամաց Հօր իւրոյ եցոյց զգուլ շնորհաց իւրոց առ ստեղծուածս իւր օգնել նոցա:

* Հոովմ. Ը 37

** Տե՛ս Կողոս. Ա 12-13:

Արդ, բանիցն ստուգութեամբ, զոր լուաք, տացուք անուան Նորա գայն, ինչ որ անկ եւ արժանաւոր իցէ մեծութեանց Նորա, եւ Հաւանեսցուք մեք ճշմարիտ վկայութեանցն, որք քարոզեն զառաւելութիւն զօրութեան Նորա. եւ բնաւ մի՛ արասցուք բարձինս օտարութեան Հերձուածոց ի մէջ փառաց մեծութեան Նորա:

Արդ, զի՞ կոչեցաւ Տէր մեր ճանապարհ՝. եթէ ըստ աստուածեղէն փառացն այսմ միտ դիցուք, գտանեմք, զի առանց ճանապարհին, որ ի Նմանէ լինի, եւ առանց նշանի գնացից Նորա ոչ ունիմք մերձեմալ առ լոյս գիտութեան ուսման վարդապետութեան Նորա, զի եթէ ոչ Նա լինի մեզ օթեւանն, տանի Հասուցանէ զմեզ ի ձեռն Հետամուտ կետադիւտ⁴⁹ սկիզբն ճանապարհի ճշմարտութեան իւրոյ, երթալ Հասանել մեզ ի կատարումն ճշմարտութեան ոչ է կարելի, քանզի մեկնութեան յորջորջման ճանապարհին այս է յորդորումն աշտիճանաց, որ տանի յառաջ, զի իբրեւ առ սակաւ սակաւ գնայցեմք նովաւ ի ճշմարիտ օթեւանն, տանի Հասուցանէ զմեզ ի ձեռն Հետամուտ կետադիւտ⁵⁰ առաջնորդին ճշմարիտ նշանաւ մեծութեան անուն եւ վարձուք արդարութեան եւ կատարեալ նշան Նորա յերանելի Հանճար եւ յիմաստութիւն մտաց ածէ զմեզ, քանզի ճանապարհ բարի է Տէր մեր, յորումն չիք խոտորումն, եւ ոչ զարտուղի ինչ ստերիւրէ եւ աստանդէ, քանզի ի բանակետոյ Հօրն ածէ՝ Հասուցանէ ճանապարհն, որ ի Նմանէ է. «Ոչ,- ասէ,- գայ ոք առ Հայր իմ, եթէ ոչ՝ ինեւ»⁵¹, քանզի չիք այլ ճանապարհ, որ տանի առ Աստուած Հայր՝ առանց Նորա, զոր օրինակ՝ Որդի սկիզբն է ի մարդ անդ առ գիտութիւն Աստուծոյ, սոյնպէս եւ Հայր ի ձեռն Որդոյ իւրոյ տայ զամենայն ըստ իւրաքանչիւր մարդոյ, քանզի Որդովն իւրով առնէ զամենայն եւ այցելու է ամենայնի եւ դարձուցանէ ամենայնի զամենայն ինչ, որ պիտոյ է Նմա ոչ միայն այսու երեւելի արարածաւ, այլեւ՝ այնու, որ կայ յուշ անդր մեր յիշատակ Նորա:

Արդ, փոյթ վերատեսչութեան Որդոյ դարմանէ՝ զարարածս վերինս եւ ներքինս, եւ ամենայն, որ Հաստատեցաւ, Նովաւ է Հաստատեալ, եւ կարգեալ կան զօրութեամբն Նորա, քանզի Միածին Բանն Աստուծոյ է Արարիչ ամենայնի, եւ ի Նմանէ առաքին ամենայն օգնութիւնք, եւ չափք Հասուցման ամենայն գործոց ի ձեռն Նորա բաշխին ամենայն մարդոյ, որպէս ակն ունին պէսպէս յուսով, եւ Նա ինքն է, որ առնէ եւ կատարէ զամենայն ամենայն Հաստատութեամբ

* Տե՛ս Յովն. ԺԴ 6:

** Յովն. ԺԴ 6

եւ կատարելութեամբ եւ միաբանութեամբ առ Իւրում, եւ ամենայն ինչ, որ Նորա է, Հօր Իւրոյ է, եւ Հօր Իւրոյ՝ Նորա է. եւ ամենայն մարդոյ, ըստ իւրաքանչիւր արժանեաց, սոյնպէս եւ դարձուցանէ եւ տայ նոցա փոխարէնս Հատուցմանց անաշառ ստուգութեամբն Իւրով: «Հայր,- ասէ,- զոք ոչ դատէ, այլ զամենայն դատաստանն Որդւոյ Իւրում ետ»^{*}, քանզի Նա Ինքն է կանգնիչ, որոց անկանն, կործանեցան ի մեղս անդր ի մեծասքանչ բարձրութենէ կենաց իւրեանց: Եւ զի Նա եղեւ կանգնիչ, վասն այսորիկ անուանեցաւ «Յարութիւն մեր»^{**}, քանզի յակն արկել զօրութեան Իւրոյ առնէ զամենայն ինչ եւ յերազրնից կամս Աստուածութեան Իւրոյ օգնէ ամենայնի, որ խնդրեն զՆա, քանզի Հովիւ մեր է եւ Հանդերձիչ եւ լուսաւորիչ եւ առաջնորդ եւ բժիշկ եւ զօրացուցիչ եւ կանգնիչ մեր եւ ամենայնի, որ ոչ գոյր: Նա Ինքն է պարգեւող եւ կազմիչ եւ ներգործող յեղեալսս եւ ամենեցուն այնոցիկ, որ Հաստատեցանն: Նա Ինքն է, որ առեալ ունի զկանգնուամբն Հաստատութեան նոցա ակնարկութեամբ զօրութեան Իւրոյ, եւ ամենայն, որ եղենն եւ կամ որ Հանդերձեալ են լինել բարեբարութեամբն, որ ի Նմանէ, նիւթին եւ պատրաստին եւ, իբրեւ զծագ ամենայն ճառագայթից, թեթեւ եւ երազ են, որ ի Նմանէ ներգործին, զի անագանութիւն ի յամելոյն Համարեալ լինի, այլ ակնարկումն Նորա երազընթաց ճեպի քան զլոյս՝ փայլատակեալ յարեգակնէ, որ ընդ օդս խառնի: Եւ խազաշրջի երազընթաց քան զթիթ ակնարկելոյ աչաց եւ նուրբ է եւ երազահաս քան զսաստկութիւն մտաց մերոց վաղահաս խլրտմամբն իւրով, քանզի ամենայն թեթեւութիւնք երազութեանց, որ առ մեզս են, ծանրութիւնք Համարեալ են առ այն երազութիւն, որ Աստուծոյ, զի չիք բան, որ կարող է ասել, թէ որչափ ինչ է երազութիւն Նորա⁵¹ առ արարչութիւն անդր, քանզի որպէս ծանրագոյն են գազանք եւ անասունք ի շարժումնս անդամոց իւրոց, քան զընթացս սաստկութեան մտաց ի խլրտմունս իւր, որ թռչի սլանայ ընդ լեռինս բացածիզս Հեռաւորս ի տարաշխարհս, յորս ոչ կարէ երթեալ գազանն եւ անասունն մարմնոյ շաւորք, այսպէս երազ է Աստուած ամենայնիւ առ ամենայն ինչ, քան զերազութիւնս, որ պաշտին առ մեզ, զի չիք ինչ նշան եւ ոչ ժամանակ ակնարկելոյ նորա: Արդ, որ կրէ «զամենայնի զօրութիւն բանի Իւրոյ»^{***} ոչ թէ ժամանակաւոր բան է, որ անկանի ընդ գրով ըստ մերս պատշաճի, այլ այնու ճշմարիտ բանին զօրութեամբ բառնայ, զորոյ ճշմարտութիւն ոչ

Յովն. Ե 22

* Տե՛ս Յովն. ԺԱ 25:

** Տե՛ս Եբր. Ա 3:

ոք գիտէ, զինչ իցէ. քանզի բարձր եւ վերագոյն է գործն Աստուծոյ ի նշանաց անտի, որ ի վերայ տարրեղինացս պաշտի: Ջիք այսուհետեւ կամացն Նորա նշան յապողիչ կամ կասեցուցիչ կամ ագանեցուցիչ, եթէ կայցէ մնացէ ի լքումն խորհրդոց, այլ յարամնացեալ եւ յարեալ են ի զօրութիւն ակնարկելոյ Նորա, որ ինչ լինելոց են եւ լինին, որով եւ լինին իբր յանկարծակի արդեամբք, զի անդէն եւ անդ ընդ ակնարկել ակնարկելոցն կարգ կացին գոյք ի չգոյից, եւ չիք յայտնութիւն երազութեան ակնարկելոյ Նորա, որպէս եւ ասաց Յուլիոյայ վասն Աստուծոյ, թէ անդէն իսկ եւ իսկ ընդ խորհիլն խորհրդով, զի արացէ կարգէ ցանկացին արդեամբք⁵² եւ գործով, զոր ինչ խորհեցանն :

Արդ, զի մի՛ ձգձգեսցէ զմեզ եւ քարչեսցէ առ մեծապատում մեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, եւ ելանիցեմք մեք ի ճառէ աստի մեր սքանչելագործ փառաւորութեամբ նոցա, ասացուք նախ զայն ինչ, զոր եղեալ կարգեցաք նպատակ բանիս մերում: Արդ, զի մի՛ կարծեսցի Որդի, եթէ չիք Նորա Հայր, եւ Նա Ինքն միայն իցէ առանց Աստուծոյ Հօր Իւրոյ: Վասն այսորիկ, որ Ինքն անձամբ կեանք է եւ բարեբարութիւն, ասէ. «Ես կենդանի եմ վասն Հօր»^{*}. աղէ, տեսէ՛ք այսուհետեւ զայն ինչ, զոր ասաց Նա Ինքն, որ է զօրութիւն Աստուծոյ, ոչ կարէ գործել ինչ ի կամաց Անձին Իւրոյ. եւ Նա Ինքն, որ է կատարեալ իմաստութիւն Հօր Իւրոյ: Դարձեալ ասէ, եթէ՛ «Հըրման առի ի Հօրէ Իմմէ»^{**}: Զի՞նչ ասացից կամ զի՞նչ խօսեցայց եւ այստեմենայնիւ, զոր ասաց, յայտ է, զի ճանապարհ ուղղեաց եւ պատրաստեաց եւ եցոյց մեզ, որ տանի առ Հայր Իւր, զի յայտ լիցի ամենայն մարդոյ, թէ այս Որդի այնր Հօրէ, զի Ինքն վասն Նորա յամենայնի կամեցաւ ցուցանել մեզ նաեւ զսքանչելիսն, զոր առնէր Միածինն զօրութեամբն Իւրով, առ Նա գումարեալ առաքէր զնոսս, զի յայտնութիւն Հօր եղիցի ի մեզ ի մեծասքանչ զարմանալի նշանացն Որդւոյ: Արդ, ոչ եթէ՛ զարմանալի եւ զսքանչելի զգործսն, զոր առնէր Որդի, քննէր եւ բաւանդակէր Հայր յաներեւոյթ ծածկութեան Իւրում, այլ վասն զի յանկակից է Բան Նորա, յամենայն ժամ առ Նմա, ասէ զամենայն ինչ, զոր տեսանէ Որդի զՀայրն, զի գործէ, եւ Ինքն նման Նմին ցուցանէ եւ զսքանչելիսն, զոր առնէր առ Հայր Իւր, առաքէր օրհնութեամբ, որպէս զի երթիցեն ամենայն գործքն զկնի Հօր Իւրոյ.

* Տե՛ս Յովն. Թ 13-19:
** Յովն. Զ 58
*** Յովն. Ժ 18

և մեծութիւն մեծաքանչութեան այնմիկ, յոյր անուն անուանէին, նմա մթերեալ լինէր, զի այնոքիկ, ոյք Որդւոյն ունկն դնէին, իբր ի սքանչելեաց անտի Նորա եկեցցեն ի հաւանութիւն Նորա վասն Հօր Իւրոյ, յՈրոյ անուն ուսուցանէր զնոսա, զի ինքն Հայր գործէր ի ձեռն Նորա զՏեառն, զի ամէն ասի ի նմանէն եւ ամէն ի ձեռն Նորա եւ Տեառն վասն Նորա: Վասն այսորիկ եւ Որդի այսպէս ասաց, եթէ՝ «Ամենայն, որ ինչ իմ է, Բո է»^{*}, քանզի առ Հայր առաքէր նա զարարչութիւն սքանչելեաց Իւրոց: Եւ Հայր դարձեալ Որդւոյ Իւրում առնէր զսքանչելիսն՝ յասելն. «Ամենայն, որ ինչ ի Հօր իմոյ է, իմ է»^{**}: Եւ պատճառ սքանչելեաց զՀայր դնէր, ոչ թէ իբր օգնէր Հայր Որդւոյ այնու իւրք, զոր ոչն ունէր նա ի բնութենէ Հօր Իւրոյ, եւ ոչ եթէ փոյթ եւ ստիպումն ի գործսն տայր նա նմա՝ իբր զհրամայել կամ պատուիրել⁵³ եւ ակնարկել, զի արասցէ զնոսին, եւ ոչ թէ դարձեալ հաւատարիմ ինչ լինէր՝ որպէս զարարածս ի վերայ այնոցիկ, որ Աստուածութենէն, այլ լի բովանդակ կատարեալ են առ նմա եւ ի նմա գտեալ կան, որ ինչ Հօր Նորա են, եւ նոյնպէս են ընդ իշխանութեամբ եւ ընդ հրամանաւ Նորա, զի ոչ թէ իբր պարզեւօք ինչ են Նորա, այլ իբրեւ ի բնութենէ Հօր առ Որդի անդր, քանզի ամենայնիւ նման Հօր Իւրում էր նա եւ ի նմանութիւն Հօր Իւրոյ գործէր զամենայն: Արդ, եթէ չիք փոփոխումն ի բնութիւն Նոցա եւ ոչ ի զօրութիւն Նոցա, այսուհետեւ ուր մի է բնութիւն Նոցա եւ զօրութիւն, յայտ է, թէ⁵⁴ միաբան եւ հաւասար են սքանչելեօք ամենայն գործոց միով կատարեալ մեծութեան Իւրեանց. «Քրիստոս» սա է, զօրութիւն է Աստուծոյ եւ իմաստութիւն Աստուծոյ^{*}, եւ ամենայն ինչ Նովաւ եղեւ եւ Նովաւ հաստատեցաւ, ոչ եթէ իբր արարեալ եւ հնազանդեալ անօթով եղեն ի ձեռն Նորա, որք եղենն, այլ իբրեւ Արարիչ ամենայնի միով կատարեալ կամօք, զոր ունի Հայր առ Որդի անդ Իւր, ամենայնի կարգեալ զայր արարչութիւն Նորա: Վասն այսորիկ, զոր ասաց Տէր մեր, եթէ՝ Ես ի կամաց Անձին իմոյ ոչ խօսեցայ, այլ, զոր ինչ ասաց Հայր իմ, զայն Ես ինքն խօսիմ. եւ բանն, ասէ, զոր խօսեցայ Ես, ոչ եթէ իմ է, այլ՝ Առաքչին իմոյ^{**}, դարձեալ ասաց, թէ՝ «Որպէս հրամայեաց ինձ Հայր, այնպէս գործեմ Ես»^{***}: Եւ այնուամենայնիւ, զոր ասաց, ոչ

* Տե՛ս Յովն. ԺԳ 3:
 ** Տե՛ս Յովն. ԺԷ 10:
 *** Յովն. ԺԶ 15
 # Տե՛ս Ա Կորնթ. Ա 24:
 ## Տե՛ս Յովն. Զ 38:
 ### Տե՛ս Յովն. Ժ 37, 38:

թէ իբրեւ չգիտէր նա, մինչեւ ընդունէր, զոր ինչ ասացեալ լինէր առ ինքն, եւ ապա պատմէր զկամս Հօրն, այլ զի սոքումբք այսոքիւք, որ այսպէս ասացեալ լինէին ի նմանէ, ցուցցէ զկատարելութիւն միաբանութեան առ Հօր Իւրում. զի միով զօրութեամբ, միով կամօք է Հայր առ Որդի Իւր, ի մի հաւասարութիւն, եւ յանուն Հօր պատմէ զամենայն, որ ինչ Իւր է, զի ի բնութենէ Հօր Իւրոյ է: Արդ, լուաք աւասիկ, զի ասաց, թէ՝ «Զոր ինչ պատուիրեաց ինձ Հայր, զայն խօսիմ Ես»^{*}: Զի՞նչ ասիցեմք այսուհետեւ, թերեւ, ըստ լրոյ բանիցս, որ գան կատարին, եւ լսին բարբառք օյոդապատ լսելեօք մերովք, սոյնպէս ընդունիցիմք եւ զարդիւնս նոցա իբացն եւ առ Աստուած զայսոսիկ յարեմք եւ յարմարեմք բան, որ յանդամոց բաշխելն լինի. եւ երբեմն մնայ, աղտեղի առնու եւ լքեալ գտանի ի բարբառոյ անտի եւ երբեմն բարբառով երեւի եւ, որ ինչ ծածկեալ է գիտութիւն, նովաւ մեկնի: Սոյնպէս ասիցեմք եւ վասն Որդւոյ, եթէ նա ըստ նմին նմանութեան ընկալաւ ի Հօրէ Իւրմէ: Լուր պատմութեան եւ ընդունելութեան խրատու եւ այն, ինչ զորս ոչ գիտէր, այսոքիւք ցուցաւ նմա:

Արդ, զայս ամենայն, զոր խօսեցաւ, եթէ՝ «Որպէս հրամայեաց ինձ Հայր, այնպէս խօսիմ»^{*}, ոչ իբր թէ չգիտէր նա, մինչեւ ընդունէր, զոր ինչ ասացեալ լինէր առ նմա, այլ զի սոքումբք այսոքիւք, որ ասացեալ լինէին ի նմանէ, ցուցցէ զկատարելութիւն միաբանութեան առ Հօրն Իւրում, զի միով զօրութեամբ եւ միով կամօք Հայր առ Որդի Իւր ի մի հաւասարութիւն պատմի, եւ որ ինչ Նորա է, բնութեան Հօր Իւրոյ է: Արդ, որք լուաք, զի ասաց, թէ՝ «Զոր ինչ ասաց Հայր իմ, զայս ասեմ Ես», աստուածապէս պարտ եւ պատշաճ է, զոր ինչ աստուածեղէն բնութեան է իմանալ, եւ որպէս պարտ եւ արժան է յԱստուծոյ, սոյնպէս եւ անկցին ի սիրտս մեր, որք անբաւ եւ անքնին են: Եւ ոչ գոն առակք օրինակաց ի մերայոց աստի, եթէ կարգեցցէ եւ պատմեցցէ զՆորայն, որպէս արժան իցէ մեծաշուք մեծապատումն, մեծապատիւ փառաւորութիւնքն Աստուծոյ: Եւ որպիսի նմանութիւն առցուք ի՞ գձուճ եւ յաղքատ բնութենէ մերմէ առ ի գիտել զկամս Հօր առ Որդին Իւր առանց թերութեան, որպէս ոք. թէ ի փոքր ժամու ունիցի զհայեկին ընդդէմ իւր, եւ իսկ եւ իսկ յակնարկ անդէն ի նմին ժամու երեւի գեղ ամենայն⁵⁵ կերպարանաց այնորիկ, որ եղն զնա առաջի աչաց իւրոց, սոյնպէս յայտնի կամք Հօր առաջի Որդւոյ Իւրոյ: Արդ, որովհետեւ մի են կամքն, զի՞նչ յայտնութիւն

* Տե՛ս Յովն. ԺԲ 50:
 ** Տե՛ս Յովն. ԺԲ 50:

պիտոյ է լինել միում կամացն, զի Հայր սիրէ զՈրդի Իւր եւ զամենայն ինչ ցուցանէ Նմա, եւ ամենայն ինչ, որ Հօր է, Նորա: Արդ, զի՞նչ ինչ իցէ Հօր, որ օտար է յՈրդւոյ Իւրմէ, եւ ոչ բովանդակեաց Նա զամենայն: Վասն զի ամենայն ինչ, որ Նորա է, Որդւոյ Իւրոյ է, քանզի ամենայն Հայր որդւոյ է, եւ ամենայն որդի Հօր է ճարտարութիւնքն, որք ուսեալ լինին ի մարդկանէ. ժամ պիտոյ է նոցա եւ դեգերումն⁵⁶ անձանձրոյթ հանապազորդութեամբ եւ թեւակոխութիւն բազում կրթութեամբ, զի առ սակաւ-սակաւ արմատասցի ի յուշ յիշատակի, զոր ինչ վարժի, եւ, զտեսեալն առեալ, քերեն ի գործս գնիւթեալսն ի միտսն աշխատութեամբն, զոր ուսանն: Իսկ լի կատարեալ իմաստութիւն Աստուծոյ, որ Արարիչն է ամենայնի, Որդի է, վասն զի կատարեալ ամենայնիւ իբրեւ զՀայր Իւր է, եւ ոչ եթէ ուսմամբ է իմաստութիւն Նորա, այլ զօրութիւն Աստուծոյ է, որպէս եւ առաքեալ իսկ ասաց, եթէ՝ «Նովաւ յայտնեցան ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան», մի՛ այսուհետեւ առեալ դիցուք վատթար գիտութեամբս մերով եւ դատարկութեամբ մտաց զգեղ կերպարանաց եւ զչափ եւ զնկար տարրեղինացս յօղապատից առ այնմ Աստուածութեան եւ մի՛ առեալ բերցուք զկնի այնր անբաւ եւ անքնին իմաստութեան զնշանակալ եւ զառակս օրինակաց խրատու մարդկութեանս եւ զկարգ ուսմանն, ըստ որում նստի վարդապետն, որ ուսուցանէ, եւ առեալ ընդունին ի նմանէ աշակերտեալքն զուսումն եւ տայցէ չըմարթու տխմարութեան նորա զհիւթանիւթս գիտութեան, եւ յաւելուածով առ սակաւ-սակաւ ուսմանն ելանէ աշակերտն յաշտիճան իմաստութեան եւ աւարտի ի Հաստատութիւն կատարեալ ուսմանն: Արդ, մի՛ առեալ բերցուք զայստսիկ ի միտս մեր եւ այսու նմանութեամբ վարկցուք զՈրդին, իբր թէ ուսանող իցէ եւ ոչ՝ ուսուցիչ կատարեալ, քանզի չիք սկիզբն եւ ոչ կատարած ուսման Նորա, վասն զի անբաւ եւ անկշիռ եւ անթերի է յիմաստութենէ Հօր Իւրոյ, եւ տանել բովանդակել զՆա ինչ ոչ կարէ, այլ զամենայն ինչ Իւր կատարելութիւն բովանդակէ, զի լի, կատարեալ է Նա՝ իբրեւ զՀայր Իւր, եւ որպէս Հայրն անսահման է եւ Որդին, որ առանց սահմանի է, իբրեւ զՀայր Իւր ընդ սահմանաւ լինել չէ մարթ:

Ամաչեմ ես աւասիկ ի ճառս այնոցիկ, որք զտկար եւ զխոնարհ բնութեանս մերոյ կիրս առեալ բերիցեն ի վերայ Աստուծոյ եւ մերովքս այսոքիւք զգեցուցանեն զՆա: Արդ, ընդ այստսիկ, որ ասացան վասն Նորա, ի նորին ճշմարիտ բանիցն արժան է մերձեալ առ

Նա, որովք ասէ. «Որ ետես զԻս, ետես զՀայրն Իմ»^{*}: Սակայն Տեսուն մերոյ բանս ոչ եթէ վասն նուազագեղ նմանութեան է եւ ոչ թէ վասն գեղոյ երեսաց նշանակ Հաւանութեան Իւրոյ, քանզի ի նկարագեղ կերպարանաց երեսաց եւ յօչապատ ձեւոց ազատ եւ Հեռի է մեծութիւն բնութենէ այնր փառօքն Իւրօք, այլ վասն զի բարի եւ բարերար է, եւ զայն, ինչ որ բարի է, ի բնութեան Իւրում ունի, ասաց յորդառատ ողորմութեամբն, զոր ունի առ արարածս Իւր, թէ՛ զոր ինչ տեսանէք զուր, որ լինի յինչն, փութացեալ Հասուցանէ զձեզ առ գիտութիւն Հօր Իմոյ, զի եւ Նա, ասէ, Ինձ նման է ամենայնիւ, որ ի բնութեան Իւրում է, եւ տեսեամբս Իմով տեսիլն Հօր երեւի միով Հաւասարութեամբ եւ միով նմանութեամբ, որ Հաստատեալ կայ ի մի բնութիւն անդր:

Եւ զի՞նչ⁵⁶ ասիցեմք դարձեալ վասն այնորիկ, որ գրեցաւն, եթէ ունկնդիր եղեւ Հօր մինչեւ ի մահ: Եւ դարձեալ ասէ առաքեալ. «Փոխանակ մեր ամենեցուն մատնեաց զՆա»^{**}, եւ այսոքիւք ցուցանէ Հայր զփոյթ տեսչութեան Իւրոյ առ արարածս՝ յորդառատ շնորհօք ողորմութեան Իւրոյ, սքանչելի գործովք, որ բարձր եւ վերագոյն է յազգէ աստի որդւոց մարդկան. «զի այնպէս, - ասէ, - Աստուած սիրեաց զայսարհս, մինչեւ զՈրդին Իւր Միածին ետ»^{***}: Լո՛ւր, արդ, աւաղիկ, զի զոր ինչ ունկնդրութիւն է Որդւոյ Հօր Իւրոյ, յազգս սիրոյն է, որ առ որդիս մարդկան: Եկ լո՛ւր եւ այժմ, արդ, զոր ինչ իշխանութեան Աստուածութեան է Որդւոյ, զի Քրիստոս գնեաց զմեզ յանիծիցն օրինացն: Եւ դարձեալ ասէ. «Մինչդեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ»^{*}: Փոյթ լիցի քեզ այսուհետեւ նայել ճշմարտութեամբ ի բանս Տեսուն մերոյ, զի յորժամ յարէ զԻւրն ընդ Հօր Իւրում վասն Հաւասարութեան սիրոյն Իւրեանց, որ է առ մարդիկ ցուցանէ, եւ յորժամ զիշխանութիւն Անձին Իւրոյ կամի ցուցանել, ասէ. «Կամիմ, սրբեաց»^{**}, եւ՝ «Դադարեալ, կարկեաց»^{***}, եւ՝ «Քեզ հրամայեմ, Հա՛մր խոյ այս»[§]: Արդ, երբեմն Տէր մեր զՀաւասարութիւն, որ է ընդ Հօր Իւրում, իւրք իւրք ծանուցանէ մեզ եւ

* Յովն. ԺԴ 9
 ** Հմմտ. Հոովմ. Դ 25:
 *** Յովն. Գ 16
 # Տե՛ս Հոովմ. Ե 8:
 ## Մատթ. Ը 3
 *** Մարկ. Դ 39
 § Տե՛ս Մարկ. Թ 24:

երբեմն զմիածնութիւն Առանձնաւորութեան Իւրոյ ածէ բանիւն
Իւրովք, զի յայտ արասցէ եւ ցուցցէ, թէ զօրաւոր է առ արարածս Իւ
արարչութեամբն Իւրով ամենայնիւ, որով կամի, եւ ամենայն
աստուածային բանիւք ճշմարտութիւն երեւեցաւ որդւոց մարդկան ա
ի Հաստատութիւն կենաց Իւրեանց, եւ զի Հայր Որդւով երեւեցի, եւ
Որդի ի ձեռն Հօր ցուցցի: Եւ զի Որդւոյ է արարչութիւն արարածոց,
ոչ թէ վասն զի չէ լի կատարեալ Հայր արար ի ձեռն Որդւոյ Իւրոյ
գեղեալս եւ ոչ թէ, վասն զի ոչ կարէր, Հայր Որդւովն ուղղեաց կար
մեաց զարարածս, այլ վասն զի այսպէս վայել էր բնութեան Նոցա, զի
Միմեամբք երեւեցին ի ստեղծումն արարածոց Իւրեանց: Արդ, վասն
այսր բանի, զոր ասաց բայ ի ձեռն Նորա խոստովանութիւն է առանց
եպերանաց. զի Նա Ինքն է պատճառ եւ սկիզբն ամենայնի արարչու
թեամբն Իւրով, եւ ոչ է արարածքս Արարչին պատճառ ամբաստ
նութեան:

Թ. Եկեացուք այժմ եւ վասն Սրբոյ Հոգւոյն արասցուք⁵⁷
զհարցուածս մեր եւ տացուք Նմա զվկայութիւնս, զորս ի Գրոց ժողո
վեալ է մեր, եւ զոր ինչ ի տւչութենէ անտի սուրբ Հարցն մերոց
ուճիմք մեք առանց գրոց վասն Նորա: Եւ նախ զայս իսկ ասեմք, եթէ
ով ոք երբէք լուիցէ զանուանս զայսոսիկ եւ ոչ Հիացեալ զահի
Հարկանիցի յանձն իւր, յոչ տալն այսր անուանց զժառանգակցութիւն
բնութեան Աստուածութեան: Արդ, Հոգի Աստուծոյ՝ ափ, «Հոգին,
ասէ, - Ճշմարտութեան, որ ի Հօրէ Իմմէ ելանէ»⁵⁸, եւ Հոգի
Պետութեան եւ Հոգի Առաջնորդութեան եւ Հոգի Սուրբ⁵⁹: Արդ,
անուն Հոգւոյն Սրբոյ՝ անուն միանձն կոչմամբ Իւրով եւ անուն է
ճշմարիտ մեծութեան, ուր ոչ մերձենայ զննումն տարրեղէն առ
մեծաքանչ փառաւորութիւն Նորա, եւ չէ Նա մասն ինչ յարարելոցս
եւ բարձր եւ վերագոյն ամենայն եղանակացս ունի զանունն: Եւ Տէր
մեր եցոյց բանիւ Իւրով, զի Աստուած երկրպագիցի ոչ իւր ի տեղւոյ
երկրպագեալ, քանզի ոչ տեղի այնմիկ, որ ընդ ամենայն տեղիս ունի
զՏէրութիւն Իւր, քանզի ասաց, եթէ «Հոգի է Աստուած»⁶⁰: Արդ,
որովհետեւ լուար դու զՀոգին Սուրբ անուանեալ զբնութիւն Նորա,
գիտել եւ տալ Նմա զչափ կերպարանաց կարծեօք մտաց ի խորհուրդս
քո դու ոչ կարես, քանզի ոչ է Նա Հնազանդեալ ընդ այլակերպու-

թեամբ փոփոխմանց, վասն զի չիք ի վերայ Նորա շտեմարանք նմա
նութեանց ի նշանաց աստի արարածոցս, քանզի բարձր եւ վերագոյն է
խորհուրդ Նորա, քան զամենայն շարժմունս մտաց, եւ ի միտս միայն
անկանի ուշ յիշատակի Նորա փոքր ի շատէ՝ ըստ մերում բաւելոյս, եւ
ոչ բովանդակի⁵⁸ ճշմարտութիւն Նորա ընդ օրինակաւ բովանդակ
Անձամբ եւ փառօք Իւրովք, վասն զի յայնմ վերին բնութեան
Աստուածութենէ, Որոյ⁵⁹ ո՛չ գայ մեծութիւն ի քննութիւն, եւ ո՛չ
զօրութիւն Նորա՝ ի բովանդակութիւն, եւ ո՛չ ժամանակօք եւ աշխար
հօք երեւի չափ Նորա եւ ամենայնի, որ կարօտ է սրբութեան: Նա
Ինքն է սրբիչ նոցա, եւ ամենայն գեղք ի Նմանէ պարգեւին արարա
ծոցս առանց նախանձու եւ չարակնութեան: Եւ ամենայն, որ միան
գամ ի կեանս անդ բարեաց է եւ յանուն ճշմարտին Աստուծոյ լի կա
տարեալ Հանգչի, սիրովն Նորա է, որ առ Նմա, քանզի զօրութեամբն,
որ առ ի Նմանէ առնէ զմերձաւորութիւնս Իւր Աստուած առ աստուա
ծասէր միտս, զի եղիցի նոցին վերակացու, տեսուչ, ուժատու եւ օգ
նական աներեւոյթ եւ անքնին ծածկութեամբ: Ինքն իսկ է Արարիչ
թերացելոց կատարելութեամբն Իւրով, եւ ամենայն տեղի ոչինչ է
պակաս ի զօրութենէ Նորա, քանզի ոչ թէ արարեալ կենօքս Հաստա
տուն եւ կանգուն է, որ տուողն եւ արարող է կենաց, զի ոչ թէ յա
ւելուածով Հաստատի գեղ իմաստութեան Նորա եւ ջանիւ աշտիճանաց
ընդունի զաճումն Նորա, այլ լի կատարեալ ի փառաւոր բնութենէ
Աստուածութեան է, եւ է իսկ եւ Նորա են ազգ, քան⁶⁰ ամենայն պէս
պէս սրբութեանց ընդ ամենայն տեղիս, քանզի լոյս է անբաւ եւ
անքնին, որ լուսաւորէ զամենայն միտս եւ զխորհուրդս զօրութեամբն
Իւրով, եւ ամենայն ինչ, որ Հաստատեալ եւ կարգեալ է նշան բանա
ւորացս՝ ճանաչել եւ գիտել եւ ուսանել զճշմարտութիւն Աստուա
ծութեան, Նա Ինքն է իմացուցիչ եւ իմաստարար նոցա:

Արդ, բնութիւն Հոգւոյն Սրբոյ աներեւոյթ է, բայց ի ձեռն ողոր
մութեան բարերար տեսչութենէն Իւրոյ յամենայն տեղիս ցուցանէ
զխնամս դարմանոյ մատակարարութեանն Իւրոյ, քանզի ի զօրութենէ
Նորա բարձանին ընդ ամենայն տեղիս օգնութիւնք Նորա: Բայց Հա
ղորդութիւն Նորա յարժանաւորս Իւր ցուցանի այլակերպ զօրու
թեամբն, որ յաներեւոյթ ծածկութենէ Նորա շնորհի նոցա, եւ ոչ է
միով չափով Հաղորդութիւն Նորա ի բազումս, այլ՝ ըստ չափոյ Հաւա
տոց իւրաքանչիւր մարդկան: Սոյնպէս բարձանէ զպարգեւս Իւր յա
մենեսին, եւ բնութիւն Հոգւոյն Սրբոյ պարզ է, սակայն առ ամենե
սեան մերձ է պէսպէս օգնութեամբք եւ յամենայնէ Հեռի է եւ բարձր
եւ վերագոյն փառօք բնութեան Իւրոյ, եւ որ ինչ ի Նմանէ պարգեւի,

* Տե՛ս Մատթ. Գ 16:
** Տե՛ս Յովթ. ԺԵ 26:
*** Տե՛ս Մատթ. Ծ 12-14:
Յովթ. Դ 24

առանց պակասութեան առաքի ի Հաղորդելն իւր ընդ ամենայնսն մեծասքանչ զօրութեամբն իւրով, սակայն ոչ մթերի ի տեղոջ ուրի՛ իբր բովանդակեալ ի բաւանդակեալսս, եւ է զօրութիւն փութոյ տեսչութեան իւրոյ եւ յորդառատ պարգեւաց իւրոց՝ իբրեւ զնշան կերպարանաց արեգականն, որ յորժամ զնշոյլազարդ, պայծառաբոյ ծայրս իւր առաքէ, ի լուսոյ անտի իւրմէ հանգիստ եւ ուրախութիւն այնոցիկ, յորոց վերայ ծագէ, տարածանի, ամենեքին նմա Հաղորդի, իբր թէ առ մի մի ի նոցանէն ամենեկին նա ամփոփեցաւ, որք ունին ի լուսաւորութենէ նորա զանպակաս եւ զանթերի հանգիստն ի նմանէ եւ նովաւ՝ առ իւրեանսս, սա, որ զամենայն երկիր լուսաւորէ առհասարակ եւ տարածանի ի վերայ ծովու մեծավազ ճառագայթիւքն իւրովք եւ խառնի ընդ օդս անչափ մեծութեամբ ծայրակարմիր նշոյլազարդութեամբն իւրով, եւ է նշանաւ անձն իւրոյ նոր մեծութիւն բացածիդ հեռաւոր երկարութեամբ, զի առ ճշգրիտ բոլորակ լուսոյ արեգականն չիք ակն, թէ ժպրհիցի պշնով եւ հայել ընդ նա, որպէս զիարդ եւ իցին: Սոյնպէս եւ՝ Հոգին Սուրբ. փառք Անձինն Նորա բարձր եւ հեռի է ամենայն արարելոցս, բայց շնորհօք եւ օգնութեամբ իւրովք իբրու թէ առ մի մի ի նոցանէն ծագէ, որչափ կարեն առնուլ ի նմանէ Հաղորդութիւն, սակայն անյայտ ի զգայարանաց զնեղոյ նշանակի, քանզի անզնին է եւ անտարր, եւ չէ տեղի, որ բաւիցէ նմա ի տեղոջ, եւ ոչ ազգամբ զգայութեան նուրբ զօրութիւն, բայց առնէ օթեան իմացականապէս ի բնակութիւն անդր, որք միաբանին եւ արժանաւորին՝⁶² նմա: Իսկ յորժամ ըստ վշտի կարեաց մարմնոց զեղու մարդ մոլորմամբ ի մեղս սիրով եւ ցանկութեամբ եւ նշանակի ի պատուիրազանցութիւն, օտարացուցանէ զընտանութիւն⁶³ իւր ի Հոգւոյ անտի Սրբոյ: Իսկ յորժամ լուսացի եւ սրբեսցի ի ժահահոտութենէ անօրէն չարեաց եւ ի ձեգ պայծառութեան արդարութեան կերպարանի սիրովն Աստուծոյ եւ նկարէ յինքն զնկարագրութիւն պատկերի կամացն Աստուծոյ արժանաւոր վարուք, ա՛յս է նշան բանակետողութեան Հոգւոյ Սրբոյ, յորս ընդունին զնա: Եւ զոր օրինակ ակն, որ առողջ, քաջատես, սրահայեաց իցէ եւ յանկարծակի տեսանիցէ յարեգակն անդր, ինչ որ երագրեալ անցանէ եւ ոչ երեւեսցի նմա հանապազ Հայեցուածով տեսութեան իւրոյ, սոյնպէս ի փոքր նշանակէ ծագման պարգեւացն Սրբոյ Հոգւոյն ի ձեռն ճշմարիտ եւ առաքիին վարուց մարթեսս դու նշմարել զայն, որ ինքն բնութեամբ իւրով ոչ քննի եւ ոչ բովանդակի:

Այսուհետեւ Հոգւովն Սրբովն եւ ի ձեռն Նորա զեռան եւ յորդին միտք առ Աստուած, եւ ի Նորա յանկարծաթուիչ փայլմանէն խօսեցան

եւ լեզուք ճարտարախօսք, ճարտարաբանք, եւ պայծառագիրք եղին եւ սքանչելիք մարդք տգէտք, ի ձեռն Նորա բժշկութիւն տուաւ հիւանդաց, եւ թերացեալքն լցան, կատարեցան եւ յառաջ եկին յուսովն իւրեանց, եւ երին վերացան յաստիճանս Նորա պարգեւօքն մարդք դուզնաքեայք, տկարամիտք, եղին տուողք օգնութեանց եւ պարգեւաբաշխ բժշկութեանց զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ, եւ շուք ստուերի Նոցա ուղղէր կարգէր զհնարս բժշկութեան ի մարդս ցաւոտս երկարախտեայս, եւ այս ամենայն՝ վասն նշանի հաւատոց մարդկան, որով Աստուծոյ պատրաստեցան՝ Սիրողին ամենայն բարեաց: Արդ, զմարդիկ մարմնաւորս արար Հոգեւորս Հոգին Աստուծոյ, եւ զոր օրինակ նիւթ քարանց թափանցիկ պայծառագեղք, ըստ որակութեան իւրեանց զանազանք, զորովք նշոյլ ծագմանն արեգական յորժամ տարածանի, փայլեցուցանեն զանազան գունով զճաճանչ լուսոյն նորա, սոյնպէս եւ մարդք, յորս մթերեալ բնակեցաւ ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ, յարգեցին մեծացան իւրիք շնորհօք, զոր արժանի եղին ընդունել ի նմանէ եւ յայնմանէ՝⁶⁴ զոր ընկալան, առատացուցին, բաշխեցին եւ հասուցին կարօտելոց, քանզի ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ պատմեցաւ առ յապայն եւ Հանդերձեալն յոմանց կանուխ գիտութեամբ, եւ խորհուրդք հանճարովն Նորա մեկնեցան, եւ օգնականութիւնքն պարգեւօքն Նորա բնախօսեցան, եւ վայելչութիւն երկնաւոր պայծառութեան իշխանական հրամանաւն Նորա ի Հոգեւորսն յայտնեցաւ: Սա ինքն է ուրախութեան վայելս դասուց հրեշտակացն, քանզի ցնծութիւն անյագ առ բանաւորս, վերինս ակնարկելով իւրով ազգէ, եւ բանակետող Աստուծոյ եւ նմանակից Նորին զնոսա ամենայն ուստեք յօրինէ: Նաեւ զայս ամենայն վկայութիւնքս, զոր ունիմք մեք վասն մեծութեան Հոգւոյն Սրբոյն եւ վասն պարգեւացն Նորա, նոյն ինքն է, որ ուսուցանէ մեզ եւ ի բազում օրինակաց, զորս ունիմք վասն Նորա, սակաւս ինչ ցուցցուք մեք եւ ցուցանեմք, որք եւ բաւականեն ի յանդիմանութիւն այնոցիկ, որք կան ընդդէմ Նորա: Եւ զխորհուրդն, որ զօղեալ է յանձինս նոցա ճշմարտութիւն նահանջեալ⁶⁵, կարճէ խօսիւքս⁶⁶ մերովք, եւ զոր ինչ ի նոցանէ չարաչար⁶⁷ ասացեալ լինի անդրէն, ձեռակոծ զնոքիմք⁶⁸ դարձուցանեմք եւ արկանեմք:

Ժ-ԺԶ. Արդ, ասեն աւասիկ այսոքիկ գտողք հայհոյութեանց, զի ոչ օրէն եւ արժան է, եթէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ համարեսցի եւ ասասցի Հոգին Սուրբ, վասն զի⁶⁹ օտար է բնութիւն եւ փառք Նորա ի փառաց Նոցա: Պարտ եւ արժան է, արդ, զբանն առաքելոցն ածել ընդ բանիս մերոյ, որք ասացին, եթէ՝ «Աստուծոյ արժան է անսալ առաւել,

քան մարդկան՝: Ընտրեցէք արդ, ո՞ւմ է արժան լսել եւ հաւանել՝ Աստուծո՞յ, թէ՞ որդոց մարդկան, զի ինքն Տէր մեր ի մեծապարզեւ տւչութիւն Աւետարանին Իւրոյ իբրեւ առեալ տայր զնշան փրկութեան մերոյ Աւագանաւն Իւրոց աշակերտացն: Այսպէս տայր պատուէր նոցա եւ ասէր, զի աշակերտեսցեն եւ ուսուցեն եւ մկրտեսցեն յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՞: Եւ ոչ ինչ արար զօտարութիւն Նորա ի հաղորդութենէ անտի Իւրմէ եւ Հօր Իւրում ի կեանս անդր, զոր շնորհնաց որդւոց մարդկան յորդառատ ողորմութեամբ Իւրով, եւ սոքա զիա՞րդ ասեն, եթէ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ չէ արժան համարել զՀոգին Սուրբ: Եւ այսու ոչ ահա յայտ է ամենայն բանք իւրեանց, եթէ ընդդէմ Աստուծոյ կուլ եղեալ մարտնչին: Իսկ եթէ իցեն, ոչ ինչ մերձ է ի կարգս յայս եւ ի հնագանդութիւն Հօր եւ Որդւոյ Հոգին Սուրբ: Ասիցեն դարձեալ, եթէ՞ եւ զի՞նչ իցէ պատճառ յատելոյ նմա յանուանս յայտոսիկ եւ զի՞նչ իցէ մեծ քան զայս ժառանգակից առնել⁷⁰ զորդիս մարդկան, զոր շնորհէ անուն Հոգւոյն Սրբոյ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ:

Արդ, եթէ ոչ էր հաւասարեալ եւ յարմարեալ Տեսն մերոյ ի ժառանգակցութիւն ընդ Հօր Իւրում զՀոգին Սուրբ ի պարզեւ անդ մկրտութեան, ոյր նոցա ասել ինչ արդեօք ճշմարիտ, իսկ գլուխ ընդ նոսա, զբամբասանս⁷¹ զայս զկնի մի՛ ածցեն, քանզի Հոգին Աստուծոյ յար եւ ժառանգակից է ընդ յորջորջեալ անուամբ եւ բնութեամբ Իւրով, եւ վասն զի մեք զկնի բանից Սուրբ Գրոց երթամք, եւ զոր ինչ մերձ եւ մօտ է առ նոսա, փոփոխումն եւ այլակերպութիւն ոչ խորհիմք եւ մտածեմք ի կենաց բանսն, որ գրեցան եւ տուան մեզ: Արդ, ո՞ իցէ յայպէս պակշտոտեալ եւ խելագար եւ կորուսեալ ի մտաց իւրոց, զի զոր ինչ Աստուած հաւասարեաց եւ հաղորդեաց, ինքն կամիցի բարձրնս արկանել եւ որոշումն որոշել:

Արդ, ի նոցուն բանից անտի մարտ պատերազմի կազմեցաւ ընդդէմ մեր պէսպէս հակառակութեամբք, եւ խորհուրդք վատախորհուրդք եւ չարք ներածեն եւ ընդ կրակն դարձուցանեն զճշմարտութիւն, եւ լեզուք շանախեղուք ապիրատութեամբ հանդերձ առ մեզ ձգտեցան եւ բարկութեամբ եւ հայհոյութեամբ ձիգ առեալ տարածեալ թանրատարափ⁷² նետս նանրութեան եւ առ մեզ առաքեն սլաքիւք, որ ոչ իբր ամենայն երկաթ, այլ ի հուր անդր ներկեալ եւ սրեալ: Բայց մեք յերկեղէ նոցին ոչ ինչ երկնչիմք, այլ զՏէր զնոյն զԱստուած

զՍուրբ Հոգին առնումք ի սիրտս մեր ուղիղ խոստովանութեամբ, որպէս զի եղիցի մեզ յերկիւղ, որոյ եւ զօրք վերինք Հոգեղէնք եւ հրեղէնք կան ի պաշտօն դողութեամբ, զորս եւ Հոգիս արարածս անուանէ մարգարէն՝ յասելն. «Արար Աստուած զհրեշտակս Իւր Հոգիս եւ զպաշտօնեայս Իւր ի հուր կիզելոյ», որք եւ կան ի տեղոջ կայանի բնութեան իւրեանց՝ ի փառաւորութիւն Աստուծոյ, եւ արժանաւորաց ի մարդկանէ երեւին, որպէս պատշաճ լինի, սակայն սրբութիւն նոցին արտաքս է քան զբնութիւն սոցա, եւ ի Հոգւոյն Սրբոյ պարզեւ նոցա՝ անբաւ եւ անքնին գիտութիւն, եւ նորին պահպանութեամբ մնան ի հոգեւոր գեղեցկութիւն, յորում կան, սիրոյն Աստուծոյ զգուշացեալք մնան ի նոյն լոյծ եւ արձակ կամօք, զոր ստացեալ ունին բանաւորութեամբն իւրեանց եւ յայնմ երանութենէ, յորում կանն, անկանել ոչ է նոցա՝ զօրացեալք ի Հոգւոյն վարչութենէ: Իսկ եթէ մնացէ Հոգին Սուրբ ի վերայտեսչութենէ նոցա, վերին պաշտօնս հոգեղինացն քակտի եւ խափանի, եւ բիւրաւոր գունդք հրեշտակաց, անդստին եւ՝ կարգք հրեշտակապետացն, մնան ի շփոթութիւն ամենայն յօրինումօք իւրեանց եւ կան մնան առանց օրինաց եւ կորնչին ի սահմանէ կենաց իւրեանց: Եւ լինի աղմուկ խռովութեան ամենայն զարմանալի սքանչելութիւն նոցա, եւ խառնակի ամենայն կարգ յօրինումոյ նոցա, քանզի երգել վերնոցն օրհնութիւն ի բարձունս Աստուծոյ ի յայտնութենէ անտի Հոգւոյն է հանճար օրհնութեանս այսորիկ: Ոչ ոք, ասէ, կարէ ոք ասել, եթէ Տէր է Յիսուս, եթէ ոչ՝ Հոգւովն Սրբով, եւ չիք ոք, որ ասէ, թէ նոցովեալ Յիսուս, եւ իցէ ի նմա Հոգի Սուրբ, քանզի իրք նորա, որ ինչ⁷³ յայտնեցաւ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, երեւեցաւ վերնոց եւ ներքնոց, վասն զի Գաբրիէլ⁷⁴ ասել վասն հանդերձեւոցն առանց Հոգւոյն Սրբոյ ոչ կարէր, քանզի մի ի պարզեաց անտի Հոգւոյն Սրբոյ նշան մարգարէութիւն է, քանզի ոչ ունէր Գաբրիէլ պատմել ցանկալի առն զաներեւոյթնս եւ զառայապայսն եւ զմեկնութիւնս տեսլեանցն, բայց թէ՛ յակնարկելոյ անտի ուսմամբ Հոգւոյն Սրբոյ, քանզի Նորա են ամենայն ծածուկք Աստուածութեան Նորա: Եւ առաքեալ ասաց, եթէ՛ «Մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն Սրբով Իւրով», եւ Աթոռք եւ Գետութիւնք եւ Տէրութիւնք եւ իշխանութիւնք՝՝՝ անդադար են յօրհնեղութիւնս Հոգւոյն Սրբոյ: Եւ զորօրինակ ի հեռանալ լուսոյ ի տանէ մնայ ամենեցուն հայեցուածք, որ ի տանն իցեն ի խաւար մթին, եւ ոյժ զօրութեանց լքեալ գտանիցի

* Տե՛ս Գործ. Ե 29:
** Տե՛ս Մատթ. ԻԸ 19:

* Նոր. Ա 7
** Տե՛ս Ա Կորնթ. Բ 10:
*** Տե՛ս Կողոս. Ա 16:

յամենայն գործոց, վասն զի չէ լոյս, որ ցուցանէ զճանապարհ եւ զտեսիլ գործոյն, եւ իրք ցանկալիք պայծառ տեսեամբ խափանին յերեւելոյ, եւ արծաթ ընդ երկաթոյ խառնակ անկեալ կոխիչ գիտութեամբ, սոյնպէս ամենայն զօրք վերինք զօրութեամբն, զոք որ ունին ի Հոգւոյն Սրբոյ, առանց Նորա խափանին, եւ ծածկի գեղ մեծապայծառ վայելչութեան, որով զարդարին, քանզի ըստ որում բարուք պահի յօրինուած կարգի առ զորս ի հրամանէ անտի զօրագլխին: Սոյնպէս եւ կարգք վերնոյն առեալ ունին զգեղս իւրեանց իւրաքանչիւր կայանս փառաւոր տեսչութեամբ եւ առաջնորդութեամբ Հոգւոյն Աստուծոյ, քանզի սերովքէիցն ուսուցանէ եւ վարդապետէ՝ ակնարկելովն իւրով, զի անսկզբնական էութեան երգեսցեն զայս օրհնութեամբն իւրեանց՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ»*, քանզի Նա է, որ ուսոյց նոցին զերիցս երրորդել բարբառոյն այսորիկ, եւ զի այն էր, որ ասէր. «Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն հրեշտակք Նորա, եւ օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն զօրութիւնք Նորա»**: Ինքն է ուսուցիչ եւ իմացուցիչ օրհնութեանցս այսոցիկ, քանզի ամենայն բանաւոր արարածքս յուսմանէ անտի իմաստութեան Աստուածութեան ուսանին զայն, որ ինչ նոցայն է, ոչ է, յայտ է եւ այն Հազարք Հազարացն, որք կան առաջի Նորա, եւ բիւրք բիւրոցն, որք պաշտեն զՆա, ի զօրութենէ անտի Հոգւոյն կարգի փառաւոր յօրինուած դասուց պաշտամանն իւրեանց**:

Արդ, ամենայն արարած վերինք Հոգեղինացն, որ ոչ պատմի գեղեցկութիւն յօրինուածոյ կարգի նոցա, լի բովանդակ կատարելութեամբն իւրով է զարդարեալ Հաստատութիւն իւրեանց, կան անշարժ տեսչութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ զնոսին լուսաւորէ: Յետ այսր եւ ընդ ամենայն արարածս է Հոգին Աստուծոյ, նաեւ՝ ընդ այնոսիկ, որք ոչ աշխատութեամբ ունին զառաւելութիւն իւրեանց, այլ գտանի ի բոյս բարուց կատարելութիւն նոցին, որք յանզգայութիւն անձանց իւրեանց ընդունին զօգնութիւնս ի նմանէ եւ կատարին յԱստուածութենէ անտի, յոր ինչ է եւ կարգ սահմանի իւրեանց: Եկեսցուք ի իջուք, արդ, բանիւս մերով առ ազգս մարդկան եւ քննեալ տեսցուք՝ քանիսն իցեն օգնութիւնք ի փոյթ տեսչութենէն Աստուծոյ ի վերայ նոցա ի ձեռն առաջնորդութենէն Հոգւոյն, որ պատճառ կենաց նոցա է, եւ մատիցուք յառաջ առ Հին կտակարանաց պատմութիւն, զոր

* Տե՛ս Եսայի Զ 3:
 ** Սաղմ. ԺԲ 20-21
 *** Հմմտ. Յայտ. Ե 11:

յարարածս գործեցաւ, քանզի ի նոսա է գիտութիւն Հարցն առաջնոցն, եւ դիցուք կարգեսցուք զօրէնս յօգնականութիւն որդւոց մարդկան ի նմանէ տուեալ, եւ զի տպոց եւ առակոց Նա Ինքն է զօրիչ եւ յօրինիչ, եւ մարգարէութիւնք մարգարէիցն Նովաւ գայր զանազան կերպարանօք, եւ նահատակութիւնք, որ եղեն արդարոցն առաջնոցն ի մարտ պատերազմի, Ինքն եղեւ առաքինարար նոցա, եւ նշանքն եւ արուեստքն, որ ի նոցանէ երեւէին, ի նմանէ պարգեւէին եւ շնորհէին նոցա, եւ զմտանելն Տեսնն մերոյ յաշխարհ մարմնով կանուխ կարապետէր Նա աւետօք Իւրովք եւ վասն առաջնորդութենէն Նորա, որ ի մէջ արարածոցս երեւելոց էր, աւետարան քարոզիչ էր Նա: Նաեւ Մարիամ իսկ այսպէս աւետարանեցաւ ի հրեշտակէ անտի. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն Հովանի եղիցի ի վերայ քո»*: Արդ, Հոգին Սուրբ է Իւղ օծման Որդւոյ, որպէս եւ գրեալ է. «Ձոր տեսանես դու, զի իջանէ Հոգին եւ Հանգչի ի վերայ Նորա»**, «Սա է Որդի Իմ սիրելի»***: Եւ Յիսուս ի Նազարեթէ այն, զոր էօծն Աստուած Հոգւովն Սրբով եւ յամենայն սքանչելիսն, զոր առնէր Տէր մեր, զօրութիւն Սորա գնայր ընդ գործս Նորա: Եւ յորժամ փորձուէր Նա ի սատանայէ, Ինքն եւ Հան զՆա յանապատ, զի փորձուեսցի ի նմանէ: Եւ առանց Հոգւոյն Սրբոյ ոչ էր Տէր մեր յամենայն սքանչելիսն, զոր առնէր, որպէս եւ ասաց, զի թէ՛ «Եւ Հոգւովն Աստուծոյ Հաննմ զգեալ»*, «Հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ»***: Եւ յորժամ յարեաւ ի մեռելոց, Հոգին Սուրբ առ Նմա եւ ընդ Նմա էր, որպէս եւ ասաց Պետրոս ի պրակս Առաքելոցն. «ՁՅիսուս ի Նազարեթէ, զոր Աստուած յարոյց ի մեռելոց Հոգւովն Սրբովն»***: Եւ իբրեւ կատարեաց զմարդկութիւն, զոր զգեցեալ էր նորոգութեամբ զշնորհն, զոր կորոյս Ադամ ի դրախտի անդ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ: Ձնոյնն դարձեալ ետ Տէր մեր աշակերտացն Իւրոց ի փչելն յերեսս նոցա եւ յասելն. «Ընկալարուք Հոգի Սուրբ», զկնի որոյ ասաց. «Որում թողուք⁷⁵ դուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եւ զորս կապէք՝ կապեալ լիցի»\$: Նաեւ ամենայն զարդարանք յօրինեալ կարգաց Եկեղեցւոյ, ի պարգեւաց անտի Հոգւոյն Սրբոյ տուաւ

* Տե՛ս Ղուկ. Ա 35:
 ** Տե՛ս Յովն. Ա 33:
 *** Տե՛ս Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22:
 # Տե՛ս Մատթ. ԺԲ 28:
 ## անդ
 *** Տե՛ս Գործ. Ժ 38:
 \$ Տե՛ս Յովն. Ի 22-23:

մեզ, որպէս ասաց առաքեալ, եթէ՝ «Եղ Աստուած յեկեղեցւոջ նախ զառաքեալս, երկրորդ՝ մարգարէն»՝ Հանդերձ ամենայն պարգեւօք Իւրովք, զորս բերէ ըստ յօրինեալ կարգին իւրեանց եւ աւարտէ՝ ասելով, եթէ՝ «Զայս ամենայն յաջողէ միեւնոյն Հոգի եւ բաժանէ, որպէս եւ կամի»՝: Եւ զոր օրինակ ի գործակցութիւն Տեառն մերոյ, մինչդեռ ի մարմնի էր, յարեալ էր Հոգին Սուրբ, սոյնպէս եւ Հոգին Սուրբ յօրն յետին Յարութեան Նորա Ինքն է պսակատու ամենայն մարդոյ, վասն զի առհասարակեայն կենաց ի Նմանէ պարգեւեցաւ: Նոյնպէս եւ զօրութիւնսն Ինքն պատրաստեաց ի տան Հօր Իւրոյ՝՝՝ եւ զհասուցումն իւրաքանչիւր մարդոյ՝ ըստ չափոյ իւրեանց. ըստ որում՝ ասող քան զաստղ առաւել է լուսովն իւրով, զի որպէս յօր փրկութեան մերոյ Նովա կնքեցաք, ըստ որում առաքեալ ասաց, նոյնպէս եւ յօր հասուցման մերոյ ի ձեռն Նորա առնումք զյաղթանակն*։ Արդ, այն, որ պահէ գտուեալն իւր առանց պղծութեանց եւ առանց արատոյ եւ առնէ ի նմանէ զհաս օգտի կենաց իւրոց, «ծառայ պիտանի եւ իմաստուն» անուանի, որ պատրաստեալ մտանել յուրախութիւն Տեառն իւրոյ, զի ի փոքուն հաւատարիմ գտաւ, ի վերայ բազմաց կացուցանէ զնա**։ Իսկ որք արհամարհեցին զՀոգին Սուրբ չար գործովքն իւրեանց, եւ յայնմ իմիք է, որ տուաւ նոցա, ոչ արարին զչա՛հ եւ զօգուտ ի կեանս անձանց իւրեանց, զայն, որ տուեալն է, առնուն ի նոցանէ, որպէս ասացեալ է յԱւետարանին, եւ բարժանեն զնա*** եւ գնեն զմասն նորա ընդ թերահաւատս։ Բայց զի ասաց, թէ բաժանեցեն, ոչ թէ զմարմինն առանց Հոգւոյն առնուն եւ մատնեն ի տանջանս, որպէս ոմանք ասեն, քանզի ոչ է այս արդար Դատաւորին, եթէ զմարդն, որ յամենայնիւ մեղանչէ, զկէս նորա միայն մատնէ ի տանջանս, քանզի Հոգի եւ մարմին միով խորհրդով⁷⁶ զմի գործ գործեցին միաբանութեամբ, այլ այն, որ ասացաւ, բարժանեցեն, զի զպարգեւ Հոգւոյն Սրբոյ առնուն ի Նմանէ, եւ եղիցի ամենեւին օտար ի կենաց իւրեանց, թէպէտ եւ ոչ է Հոգին ընդ այնոսիկ, որք ոչն են արժանի Նմա, այլ վասն զի դրոշմէ ի վերայ նոցա եւ դէտ ակն ունի աշխատութեան նոցա, զի դարձցին յայն ինչ, զոր ընկալան ի Նմանէ։ Իսկ այն, որ

* Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28:
 ** Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 11:
 *** Տե՛ս Թովթ. ԺԳ 2:
 # Տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 41-42:
 ## Տե՛ս Մատթ. ԻԵ 21:
 ### Տե՛ս Ղուկ. ԺԲ 46:

ամենեւին զլանայ զչնորհս Նորա եւ պղծէ զմարմինն իւր ի չարիս եւ յանօրէնութիւնս առնու զյիշատակ իւր ի նմանէ օգնութեամբքն իւրովք, քանզի Դատաստանն, որ Հանդերձեալ է լինել, առանց Նորա չէ հնար, զի թէ Ինքն սկսաւ ընդ որդիս մարդկան առհասարակէիւ մկրտութեան Ասազանին, եւ Ինքն կատարի։ Ընդ նոսա իւրաքանչիւր յաղթութեամբքն եւ իւրաքանչիւր պարտաւորութեամբ եւ պէսպէս հատումն բաշխէ, որ պահեալն է նոցա. եւ վատթարութիւն պարտաւորութեան մեղաւորաց նախ այս է, զի զայն, ինչ զոր կարծենն, թէ գոյ նոցա, առնու ի նոցանէ։ Բայց օրինակ առ ի ժառանգակցութիւն Հոգւոյն Հօր եւ Որդւոյն ոչ ունիմք մեք, միայն ասեմք, թէ որպէս տոհմակից է միոյ միոյ Հոգի մեզ յանձինս մեր, սոյնպէս ժառանգակից է Սուրբ Հոգին Հօր եւ Որդւոյ։ «Ո՛վ,- ասէ,- գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ՝ Հոգին, որ ի նմա, սոյնպէս եւ զԱստուծոյն ոչ ոք գիտէ, եթէ ոչ՝ Հոգին Աստուծոյ»՝:

ԺԷ. Արդ, այսօրիկ թիւրաբարք եւ կամակորք ասեն իմաստութեամբ աշխարհիս ի վերայ ճշմարտութեան Աստուծոյ, եթէ բազում անգամ մի անունն ի վերայ բազում իրաց ասի, եւ յորժամ զայ յընտրութիւն⁷⁷ գիտութեան, ինչ ինչ ցուցանէ, որք զօրութեամբ իւրեանց անջրպետին ի միմեանց, քանզի մի անուն ասացեալ լինի ի վերայ շնչաւորաց եւ ի վերայ այնոցիկ, որք անշունչք են, ըստ որում բնութիւն անուան կոչումն է, բայց ընդ անուամբս ստոր անկանին մարդիկ եւ անասունք եւ անշունչք, որք այլատարազք են ի միմեանց, եւ ի բացաճայնութեամբ անուանելն ոչ երեւի ընդ սովաւ, որ պատուականն է եւ անարգն, եւ անուանս լուր ի վերայ բանաւորացս եւ անբանից մի է, եւ որպէս Պետրոս եւ Պօղոս եւ Յովնանէս մի բնութեամբ են, նոյնպէս եւ շնչաւորն եւ անշունչն բնութեան կոչմամբ քանակին մինչեւ բացատրես յաւելուածով յանուանն թէ՛ մարդոյ բնութիւն⁷⁸, թէ՛ անասնոյ բնութիւն։ Արդ, թէպէտ եւ ոչ է բնութեամբ հաւասար Հոգի Հօր եւ Որդւոյ, թուել ընդ նոսա բացակայ անուամբ չէ անպատշաճ, սակայն ես ոչ ակն ունէի մարդկանս այսոցիկ, թէ այսպէս կոծեցցին եւ բանդագուշեալ բերցեն ի վերայ Աստուծոյ զայսպիսի խորհուրդս եւ մարդկեղէն քննութիւն արացցեն ի վերայ Աստուծոյ ամենակալի։ Արդ, այսուհետեւ խորհրդովք, զոր ունին վասն Աստուծոյ, ոչ ահա յայտ է, զի մոլորեցան նոքա եւ զկազմուածս հակառակութեան ի խորհուրդս իւրեանց առեալ խօսին վասն Աստուծոյ, եւ ոչ է մեզ օրէն առ ամբարիշտ⁷⁹ բանս նոցա լուեալ եւ

* Տե՛ս Կորնթ. Բ 11:

դադարել Հեղափոխամբ, զի մի՛ կարծեալ գտանիցիմք, եթէ պարտա-
ւոր ենք մեք ի բանից նոցա եւ յաղթահարիմք:

Արդ, փոյթ սիրոյ ժողովրդեանս Աստուծոյ ոչ թողու զմեզ լուկ,
որպէս զի բանն մեր նոցա օգնեացէ, եւ զծանրութիւն չարեաց նոցա
թիթեւացուցուցուք ի սոցանէ յաղթութեամբ ճշմարտութեան մերոյ,
լուարուք զբանս ամբարհաւաճութեան նոցա, թէ զի՞նչ ասեն. մեք,
ասեն, զպատուակիցան միմեանց ընդ միմեանս. Համարիմք, իսկ
զթերացեալն ի պատուոյ փոփոխեմք եւ զհնազանդելոյ առնեմք զթիւ
Համարոյ նորին⁸⁰: Արդ, ես ոչ խառնեմ զանձն իմ յեղծեալ իմաստն
նոցա, որք զայսպիսի բանս յառաջ բերեալ⁸¹ խօսին, քանզի ասեն, զի
ոսկի⁸², յորժամ Համարեալ թուի եւ կապարն ի հաւասարելն ընդ նմա
ի թիւ, Համարեն⁸³ թերի է, քանզի նա անարգութեամբն իւրով եւ
խոնարհագոյն է քան զնա, թէ եւ ընդ նմա Համարի, եւ ամենայն ինչ,
որ այլափոխ է եւ թերի, քան զընկեր իւր էութեամբ բնութեան ոչ
վասն թուելոյն Համարոյ հաւասարի ընդ նմա փառաւորութեամբ, ըստ
որում եւ ահանք պատուականք պայծառ գուճովն իւրեանց լքանեն
զոսկելոյ ազնուութիւն գեղով վայելչութեան, զի երեւի նուազ, քան
զնոսա, եւ ոչ Համարի ընդ նոսա:


Արդ, մարդիկս այսոքիկ այլում իմիք չեն պարապ, եւ այլ խօսք
չիք առ նոսա, բայց միայն՝ զի ասացեն ինչ եւ կամ լուիցեն նոր
բանս. այս՝ Հետեւ ըստոյիկեանս⁸⁴ եւ եպիկուրեանս⁸⁵ փիլիսոփայսն
յունաց օրէն է, զի Համարեացին սոքա եւ ընդ խորհուրդքն ամ-
բարչտութեան, որք ի քոյդ էութենէ զօրին, բայց զինչ մերձ են
երկրաւոր իրաց մեծութիւն կամ փոքրկութիւն եւ կամ թիւ Համարոյ
նոցա անճառն Աստուածութեան: Արդ, լուճայ մի պղինձոյ ընդ սա-
տերն ոսկելոյ նուազագոյն Համարի առ նմանութիւն, սակայն ասես
դու, թէ մի բնութիւն եւ զկնի նորա երկրորդն յայլ եւ յայլ բնութեան
եւ ի թիւ մի երկրքեանն ոչ Համարին, այլ ասին այսպէս մի եւ մի,
բայց Համարով ոչ թուին ընդ իրեարս, այլ՝ ընդ այն, որոյ հաւասար
է, եւ զուգակից թուի անորիչ ի կարգի, եթէ յիրս մեծամեծս եւ թէ յա-
նարգս իւրաքանչիւր ոք առ ընկեր իւր յարի եւ գայ ի թիւ Համարոյ
բնութիւնակցին իւրոյ, եւ ոչ այնմ, որ այլափոխ է, քան զնա: Արդ,
եթէ ի պղնձոց անտի թուեացի, ոսկի ոչ կարգեալ թուի ընդ պատուա-
կանին: Այսուհետեւ անփոյթ արասցուք զախմարութիւն արանցս
այսոցիկ, զի նոյն ինքն է յանդիմանութիւն անիմաստութեանց, զի թէ
ամենայն բնութիւն, որ եւ է ընդ ընկերին իւրում Համարի, ուստի եկն
այս, զի Համարեացի պատուականն ընդ կրտսերին: Արդ, ո՞վ երբէք
ուրեք սկսաւ ի դահեկանէ եւ ասաց ի նոյն կարգ թուոյ անորիչ

զլուճայ, այլ մի դահեկան ասի եւ մի լուճայ եւ ոչ թէ՛ երկրքեանն
դահեկանք, սակայն գայս բանս առնեն, զի եւ ի վերայ Որդւոյ դիցեն
զնուագութիւն եւ Հնարին ասել ոչ նման զՈրդի Հօր եւ ոչ զՀօգի
Որդւոյ եւ երիս բնութիւնս կամին տալ ի վերայ երից անուանց, զի
Որդի թուովն կրտսեր Համարեալ լիցի ի Հօրէ, եւ Հօգի՛ յՈրդւոյ, բայց
ճշմարտութիւնս մեր ոչ թէ թուով Համարոյ է, այլ ստոյգ Աստուա-
ծութեամբն վկայեալ է: Արդ, այն, որ թուականքն են, թուեն զմինն,
զի իցէ երկու, եւ զբան, զի լիցի երեք⁸⁶, քանզի այսպէս են
աշտիճանք, որք ծնանին զթիւս Համարոյ, թերեւ եւ մեր ճշմար-
տութիւն թիւք են, որք պահանջեն զընկերս⁸⁷ ածել զկնի, զի մեք
զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հօգին ասեմք, սակայն ոչ ըստ նոցա՝ մի
եւ երկուս եւ երիս եւ չորս՝ Հանդերձ այլովքն, այլ ունիմք
զճշմարտութիւն, որպէս եւ տուաւ մեզ. Հայր՝ Հանդերձ Որդւով, եւ
Որդի՛ Հանդերձ Նքօք, այլ ոչ եթէ ի քննութենէ աստի ոչ են նման
Միմեանց, որպէս նոքայն ասեն, զի առաւելութիւն եւ կրտսերութիւն
Համարեացի, զի ոչ եթէ նմանէին միմեանց Հայր եւ Որդի եւ Հօգի
Սուրբ միով բնութեամբ, կարգ նոցա ոչ կայր յերրորդութեան: Արդ,
Հայր եւ Որդի եւ Հօգի Սուրբ մեզ այսպէս տուան, զի մի Հայր միոյ
Որդւոյ եւ միոյ Հօգւոյն ի մի Աստուածութիւն անդր, եւ չիք ի
մեծութեան աստ յայսմ թիւ միոյ եւ երկուց եւ երից, քանզի ոչ եթէ
յաւելն մի բնութիւն Հնազանդեացի առաջնումն երկրորդն եւ երրորդն՝
երկրորդումն, այլ մեք զժառանգակցութիւն անուանցս այսոցիկ ի մի
Աստուածութիւն անդր կարգեմք եւ ոչ առնումք մեք զթիւ նոցա ի
Հնազանդս ի այլ, որպէս տուաւ մեզ ի Տեառնէ մերմէ պատուիրանն,
զոր ընկալաք վասն մկրտութեան ի Հայր եւ Որդի եւ ի Սուրբ Հօգին՝
: Եւ այսպէս Հաստատեալ կամք ի նմա, եթէ ընդ Հօր Համարեալ է
Որդի, եւ ընդ Որդւոյ հաւասարեալ է Հօգին: Յայտ է, զի ի մի
բնութիւն ոչ դատարկ անուամքք, այլ՝ ճշմարիտ անձամքք, եւ ոչ թէ
թուով միայն է այս ճշմարտութիւնս, այլ ի յօրինեալ փառս
ժառանգակցութեան իւրեանց Հաստատեալ կան:

ՑԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1. A կապապաղովկեցոյ

1 B ճշմարտութիւն: 2 B բարեօք: 3 B գտնէ: 4 B ես: 5
գիւցուածոյ: 6 B ծողակն: 7 B զի՛ լուսանցքում: 8 B «լուծումն»-
ից յետոյ՝ «եւ զգարմանալի», որն իբրեւ սխալագրութիւն՝ կ'ետա-
գծերի մէջ: 9 B բ տ Գ: 10 B բանին բանին: 11 B սկզբն: 12 B ձեռ:
13 B առնա: 14 B աջին է: 15 B տեղեոջ: 16 B Աստուծոյ՝
լուսանցքում: 17 B Նըմանէ: 18 B լընտիր: 19 B զնթացս: 20 B
գիաց: 21 B «Եւ արար... կոչեաց»՝ լուսանցքում: 22 B Նովա
նովա: 23 B Տեառն մերոյ, Տեառն մերոյ 24 Ջ բարբառքն: 25 B
աւահաւսիկ: 26 B Բ: 27 B զինչ փխ զինչ ինչ: 28 B յայտնա-
ցուցանն: 29 B դարձան: 30 B նորաբոյսս: 31 B պատով: 32 B
զայս է: 33 B երկայնայնութեամբ: 34 A անկցի: 35 B Բ: 36 A
նհանջեաց: 37 B Նորա՝ լուսանցքում: 38 B «Նա ինքն է»՝ ջնջուած:
39 Ջ ապառայծ: 40 B մերո մերոյ: 41 B զԲս: 42 B զայտիկ: 43 B
երեխտեաց: 44 B էր եւ փխ երեւելի: 45 B զմեզ՝ լուսանցքում: 46 B
ի բռնութեամբ: 47 B որոջ: 49 B մեզ մեզ: 50 B յետագիտ: 51 B
նոր: 52 B գորդեամբք: 53 B պատուիրելել: 54 B թէ թէ: 55 B
ամենայն՝ լուսանցքում: 56 B որդեգրումն՝ լուսանցքում: 56 B զի՞նչ
զի՞նչ: 57 B արարացոյք: 58 B բովաանդակի: 59 B որ,
լուսանցքում լրաց. ոյ: 60 B քան՝ լուսանցքում: 61 B ամենայն: 62 B
արժատրին: 63 B զնտանութիւն: 64 B յայնմանէ մանէ: 65 B
նհանջեալ: 66 B խօսիմքս: 67 B չարչար: 68 B զնոքիմքք: 69 B չիք
զի: 70 B առնել առնել: 71 B զբան բան: 72 B թանձարատարափ:
73 B ինչ՝ լուսանցքում: 74 B Գարբէլ: 75 B թողուք թողուք: 76 B
խորհրով: 77 B յնտրութիւն: 78 B բնութիւն՝ լուսանցքում: 79 B
ամբարշ: 80 B նորա: 81 B յառաջ բերեալ՝ լուսանցքում: 82 B զի
ոսկի զի ոսկի: 83 B համարելն: 84 B ըստոյիկանս: 86 B Գ: 87 B
զնկերս:



ՍՈՒՐԻ ԳԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ «ՄԱՏԹԷԻ ՄԵԿՆՈՒԹԻԻՆԸ»¹

Հայ միջնադարեան գրականութեան Սանահնի դպրոցի նշանաւոր ներկայացուցիչն է ժԱ դարի մատենագիր Անանիա վարդապետ Սանահնեցի (Հաղբատացի): Նա Հեղինակ է դաւանաբանական («Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»), մեկնաբանական («Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պողոսի առաքելոյն»), «Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու», Հատուած), ճառագրական («Յաղագս Յովհաննու Մկրտչի», «Ի խաչելութիւն Պետրոսի») եւ ներբողական («Ներբողեան՝ սասցեալ ի սուրբ Կաթողիկէ Եկեղեցի...») երկերի: Ժամանակի պահանջով շարադրուած այդ երկերում կարեւոր դեր էր վերապահուած, մասնաւորաբար, մեկնաբանական աշխատութիւններին, որոնք լայնօրէն օգտագործուել են Հաղբատ-Սանահնի, աւելի ուշ՝ Կիլիկիայի եւ էջմիածնի ուսումնագիտական օջախներում: Հասարակական, գիտական, իմացական նշանակութիւնից զատ, մեկնաբանական այդ աշխատութիւններն աչքի են ընկել նաեւ գաղափարաքաղաքական ուղղուածութեամբ: Դրանք իրենց գործուն մասնակցութիւնն են բերել դարի Հոգեւոր կեանքին: Մեկնութիւններում լաւագոյնս մէկտեղուած են ուսուցողական, մանկավարժական եւ տեսական-դաւանաբանական գաղափարներ, որոնց նպատակը եղել է սաների Հայրենասիրական դաստիարակումն ու գիտական պատրաստութիւնների ամրապնդումը: Սանահնեցու մեկնաբանական աշխատութիւնները շարադրուած են կենսականօրէն անհրաժեշտ այդ գաղափարների ու նպատակների յստակ գիտակցմամբ: Այս գիտակցմամբ է շարադրուած Հեղինակի կարեւորագոյն երկերից մէկը՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը: Անանիա վարդապետը սոյն աշխատութիւնը գրել է իր ուսուցչի՝ Դիոսկորոս Սանահնեցու խնդրանքով: Այդ մասին երկի ընդարձակ խորագրում Հետեւեալն է ծանուցում Մաշտոցի անուան Մատենադարանի (ՄՄ) N2686 ձեռագրի գրիչը. «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի Անանիայի Հայոց վարդապետի՝ ի խնդրոյ Հաւր Դիոսկորոսի, զոր յետոյ իմ աղաչեալ զլուսաւորիչ վարդապետ Սարկաւազ ըստ մականութեան (այսպէս) եւ երկրորդ լուսաւորիչ Հայ ազգին եւ

¹ Հեղինակի եւ նրա մատենագրական ժառանգութեան մասին տե՛ս Յ. Յ. Ջեմսէեան, «Անանիա Սանահնեցու մատենագրութիւնը», Երեւան, 1988 (անտիպ):

յաղագս սիրոյն, զոր էր առ իմ անպիտանութիւն, բազում ջանիւ եւ աշխատութիւն կրեաց յաղագս այսր տառիս», որից տեղեկանում ենք, թէ խնդրոյ առարկայ մեկնութիւնը յետագայում խմբագրուել եւ որոշակի բարեփոխման է ենթարկել Յովհաննէս Սարկաւազը՝ Հաւանաբար իր իսկ աշակերտներից մէկի խնդրանքով: Մեկնութեանը նախորդում է Դիոսկորոսին յղած Անանիայի թուղթը, որն այստեղ ոչ այլ բան է, քան մի ընծայական՝ նուիրուած բազմբարխտ ուսուցչապետին. «Ընկալայ զհրաման տեսուն իմոյ Հաւր Դիոսկորոսի եւ Հոգելիր վարդապետի՝ Սանահնի սուրբ առաջնորդի, զորոյ յոյժ ըղձաւ եւ սիրական աղաչանաւք Հայցեալ պահանջեցեր ի մէնջ վասն բացայայտութեան տերունեան բանից կենսաբեր Աւետարանին...» (Ա 2ա-3բ, Բ 1ա-4բ): Անանիա Սանահնեցու տակաւին անտիպ² ընծայական-թուղթը մեկնութեան Համար նաեւ ինքնօրինակ նախադրութիւն է:

Ելնելով Անանիա Սանահնեցու այս թղթի մի արտայայտութիւնից՝ «Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նոյն եմ աստ Հոգւով, այլ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութիւն կատարի...» (Ա 2բ, Բ 1բ) (որ ոչ միայն նորկտակարանային յայտնի դարձուածքի [Մատթ. ԻԶ 41, Մարկ. ԺԴ 38 Հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 19] իմաստով է այստեղ գործածուել, այլեւ պարզորոշ մի ակնարկ է իր առաջացած տարիքի մասին)՝ կարելի է ենթադրել, թէ սոյն տողերի Հեղինակը տարիքն առած մի մարդ է եղել: Այս մասին են վկայում նաեւ Դիոսկորոսին յղած թուղթ-ընծայականի Հետեւեալ տողերը. «...Հարկիցի ձեռնարկել ի գործ վեհագոյն քան զկար մեր...», «...Չբրովք աղաթիւք տացէ եւ ինձ կարողութիւն՝ սկսանել եւ կատարել զՀայցուածս Ձեր՝ առ ի յաւգուտ բազմաց...»: Չբացառելով, որ այսօրինակ «վեհերոտութիւնը» սովորական մի տուրք կարող էր լինել միջնադարի գրական աւանդութիւն՝ պէտք է այսուամենայնիւ կարծել, թէ միայն տարեց մարդը կարող էր այսպիսի երկութեամբ սկսել իրեն յանձնարարուած գործը՝ այն աւարտի Հասցնել չկարենալու մտավախութեամբ: Պարզ է նաեւ, որ նման աշխատանք կարելի էր վստահել գիտամանկավարժական տարիների վաստակ ունեցող մի անձնաւորութեան: Այն նախատեսուած էր ծառայելու «յաւգուտ բազմաց», այ-

¹ Ծարադրանքում բերում այս եւ յետագայ թերթախմբարկերը ՄՄ N2686 (Ա), 2859 (Բ) ձեռագրերինն են:

² Ընծայականից երկու փոքր ճատուած հրատարակել են Ե. Տեր-Միգանեանը («Հարբատ եւ Սանահն», «Արարատ», 1901, էջ 275) եւ Գ. Յովսէփեանը («Թիշատակարանք ձեռագրաց», Աթիլիս, 1951, էջ 291):

սինքն՝ օգտագործուելու իբրև դասագիրք ուսումնագիտական մի այնպիսի հաստատութիւնում, որպիսին էր Սանահնի բարձրագոյն տիպի դպրոցը: Եւ, վերջապէս, թւում է՝ միայն տարիների փորձ ու հեղինակութիւն ունեցող մի գիտնական վարդապետի պէտք է դիմէին «յոյժ ըղձիւ եւ սիրական աղաչանաւք», «անձնայորդոր փութով... ոչ՝ մի անգամ եւ երկիցս, այլ՝ բազում թախանձանաւք»: Իսկ երբ մտաբերում ենք, որ «աղաչական» խնդրուածքների հեղինակն Անանիա Սանահնեցուց անհամեմատ համբաւաւոր մի հոգեւորական եւ գիտնական վարդապետ էր, պատկերն էլ աւելի է պարզուած: Այստեղից՝ եզրակացութիւն. քանի որ Սանահնի վիճական արձանագրութիւններից մէկում 'Դիոսկորոսի' իբրև այդ աթոռի հոգեւոր առաջնորդի անունը վերջին անգամ յիշատակուած է 1063թ.¹, ապա հաւանական է, որ Անանիա Սանահնեցին Մատթէոսի մեկնութիւնը շարադրել է մօտաւորապէս 1060-1063թթ.:

Ընծայականից յայտնի է դառնում, որ ինչպէս նախորդ, այնպէս էլ այս Մեկնութիւնը շարադրելիս հեղինակն օգտուել է ս. Յովհան Ոսկեբերանի եւ ս. Եփրեմ Ասորու համաբնոյթ աշխատութիւններից: Բայց քանի որ Սուրբ Գրքի մեծահամբաւ մեկնիչների երկերի «յորդաուտ (յորդահոս) բանիցն յաճախութենէ եւ ի բազմադուռն տեսութեանց բազմաց միտք թարթափին՝ ոչ բերելով զբոլորից իմաստութեան տեսութիւն», ընթերցողներին մատչելի դարձնելու համար հեղինակը պատշաճ է գտել պարզեցնել եւ համառօտել աստուածաբանական այդ տեսութիւններն ըստ Հայեցողութեան:

Ելնելով մեծապէս խաթարուած այս ընծայականի փոքրիչատէ ընթեռնելի հատուածներից՝ կարելի է մէկ անգամ եւս հաւաստել, որ մեր հեղինակը քաջատեղեակ է ոչ միայն անտիկ մշակոյթին, այլեւ՝ առասպելաբանութեանը: Խօսելով մարմնի բուժումից գերադասելի հոգու ապաքինման կամ հոգեկրթանքի կարեւորութեան եւ անհրաժեշտութեան մասին՝ Սանահնեցին գրում է. «Վարժարանս այս (կամքի կոփումը համբերութեամբ - Յ. Բ.) նոյն է մարտարան հրաշակերտս հոգեաց՝ կարգեալ ի պէտ բժշկաց՝ ոչ ըստ Ասկղեպիասայ եւ Գաղիանոսի... իմն եւ համրուումն յարմատոց տկարագունիցն աւժանդակեալ, ըստ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն ցուցաւ ցամաքում արհեստիցն, այլ զի սա ոչ տարաշխարհական մասն գոյով նուաստ եւ ոչ ի դեգերումն դեմետրական հնարիլ հնացելոց վիրաց

¹ Տե՛ս Կ. Ղաֆադարեան, «Ասանոսի վաճըր եւ նրա արձանագրութիւնները», Երևան, 1957, էջ 187:

խորհել խոխոտումն եւ սրտովք զբուժականն մերձեցուցանել յուխտագանցութիւն...»:

Թուղթն ուշադրաւ է նաեւ իր բառամթերքով: Այստեղ առկայ եռազատակ, խորիւսուզութիւն, հոգազանք, յազնահասեալ, տառադրոշմ, պարտաշնորհ բառերը բացակայում են նոր Հայկազեան բառարանում:

Թուղթ-ընծայականին անմիջաբար հետեւում է մեկնութեան Նախադրութիւնը. «[...] իմաստասիրաց Փիղովն վասն անհաս իմաստից Աստուծոյ տեսութեան ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ այլոց հնագունից հոգեւոր վարդապետաց առեալ... եւ արդ, այսչափ բաւական լիցի իմաստասիրաց՝ առ ի ծանուցումն խորհրդոց չորից Աւետարանչացն. եկեցուք այսուհետեւ ի բանս Աւետարանին, զոր Մատթէոս գրեաց եբրայեցոցն յասելն իւրում այդպէս» (Ա 4ա-10ա, Բ 5ա-10ա): Նախադրութեան մէջ աղբիւրագիտական հետաքրքրութիւն են ներկայացնում Եփրեմ Ասորու եւ Եղիշէի երկերից բերուած հատուածները: Առանձնակի շահեկանութեամբ աչքի է ընկնում յատկապէս Եղիշէի անուամբ բերուած հետեւեալ հատուածը. «Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են. ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ ինչ եւ առնել, այլ միշտ Աստուած եւ միշտ արարող է, յորժամ կամեցաւ... եւ դարձեալ աւէ՛՛ զիմաստութիւն խաւիմք, զոր յառաջ քան զյաւիտեանս պատրաստեաց Աստուած ի փառս մեր» [Ա Կորնթ. Բ 7] (Ա 5բ-6ա, Բ 6ա-բ): Քննութիւնը պարզում է, որ հատուածը բացակայում է Եղիշէին պատկանող կամ վերագրուող երկերում: Դատելով հատուածի բովանդակութիւնից՝ այն բերուած է, հաւանաբար, հեղինակի Արարածոց մեկնութիւնից: Վերջինս հատուածաբար պահպանուել եւ մեզ է հասել Վարդան Արեւելցու Արարածոց խմբագիր մեկնութեան միջոցով: Սակայն Եղիշէի անուամբ բանաբաղուած հատուածների մէջ եւս խնդրոյ առարկայ հատուածը բացակայում է²: Սա նշանակում է, որ Սանահնեցու վկայակոչուած հատուածը, ունենալով աղբիւրագիտական նշանակութիւն, իր համեստ նպաստը կարող է բերել Եղիշէի մատենագրական վաստակի քննութեանը:

Նախադրութեանը հետեւում է բուն մեկնութիւնը՝ «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, Որդւոյ Դաւթի... Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ... այնպիսի իմն մեղադիր լինէր եւ

¹ «Եղիշէի վարդապետի մատենագրութիւն», Վեներիկ, 1853

² Տե՛ս ՄՄ, ձեռ. N1267, ք. 3ա-98բ:

յայնպիսի կարծեաց, զոր ունէր, մերժէ եւ ուսուցանէ, թէ ոչ կարաւ է յուսեցէ առնուլ, այլ ինքն է աղբիւր բարեաց» (Ա 10ա-109բ, Բ 10բ-120բ): Մեկնութեան անակնկալ աւարտը խօսում է այն մասին, որ խմբագիրը այս երկն ունեցել է իր շարունակութիւնը: Սակայն, դժբախտաբար, մեզ է հասել Աւետարանի առաջին ութ գլուխները մեկնութիւնը միայն:

Դիոսկորոսին յղուած ընծայականում ծանուցում է, որ այս մեկնութիւնը շարադրուել է «վասն դիւրահասութեան ընթերցողաց»: Արտայայտութիւնը վկայում է այն մասին, որ Անանիա Սանահնեցու սոյն մեկնութիւնն ուսուցողական բնոյթի աշխատութիւն է: Եթէ Ստեփանոս Սիւնեցու համաբնոյթ երկասիրութիւնը Քառակեսարանի ընդհանուր մեկնութիւն է, ապա Անանիա Սանահնեցու այս գործը միայն մէկ Աւետարանի առաջին հանգամանայից խմբագիր մեկնութիւնն է Հայ մատենագրութեան մէջ: Ստեփանոս Սիւնեցու նշուած մեկնութեան նման Անանիա Սանահնեցու այս երկն օգտագործուել է նաեւ իբրեւ դասագիրք: Ուրիշ խօսքով՝ երկը նախապէս ծրագրաւորուել, իսկ յետոյ խմբագրուել եւ շարադրուել է ոչ միայն ընդհանուրի համար, այլեւ՝ «վասն դիւրահասութեան ընթերցողաց», այսինքն՝ ուսումնագիտական հաստատութեան պահանջներին համապատասխան մակարդակով՝ հանգամանք, որ պայմանաւորում է Ոսկեբերանի, Եփրեմի մեկնութիւններից քաղուած հատուածների բնոյթը եւ ընտրութեան այն եղանակը, որով առաջնորդուել է Անանիա Սանահնեցին: Այս է պատճառը, որ, ի հակակշիռ աստուածաբանական դժուարընկալի տեսութիւնների, մեկնութեան մէջ զետեղուած հատուածների զգալի մասը յատկանշուած է մի կողմից վարդապետական եւ մանկավարժական, միւս կողմից էլ՝ ճանաչողական ուղղուածութեամբ: Ոսկեբերանի եւ Եփրեմի համաբնոյթ երկերի հատուածների փոխադրուած-խմբագրումը¹, ինչպէս նաեւ խմբագրական ծաւալը եւ սկզբունքը բացորոշ դարձնելու նպատակով բերենք խմբագրուող հատուածների սկիզբն ու վերջը՝ համապատասխան տեղիների նշումով:

¹ Հայ եւ ոչ միայն հայ մեկնաբանական գրականութեան մէջ լայնօրէն կենցաղավարած այս սկզբունքը յայտնի է «շոթայաննե» (cateno) անուամբ (տե՛ս ԱԳթապեան, «Հայ մեկնաբանական գրականութեան տեսական նախադիմացքի շուրջ», «Բաճրեթ Մատենադարան», 1986, N15, էջ 86): Այդ սկզբունքի առաջին կիրառողներից մէկն Անանիա Սանահնեցին է:

² Ձեռագրի լուսանկարներում բացակայում են խմբագրուած հատուածների հեղինակամիջ անունները:

Ա. Անանուհ, Ա 10ա-25բ, Բ 10բ-30ա. «Գիրք լինելոյ Յիսուսը Քրիստոսի՝ Որդւոյ Դաւթի» (Ա 1)¹: Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհել ի գալստեան Իւրում... եւ ետես, եթէ սա եւս նմանեալ է այնմիկ, եւ նա՛ այսմիկ,- աւէ,- Նազովրեցի կոչեսցի:

Բ. Ոսկեբերան, Մեկնութիւն Մատթէի², էջ 139-146, Ա 25բ-28ա, Բ 30ա-33ա. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ...» (Գ 1): «Յաւուրսն յայնոսիկ», ոչ մինչդեռ մանուկն էր եւ ի Նազարէթ սնանէր, այլ յետ երեսուն ամի... Եւ այսպէս եւ արքայութեան եւ ապաշխարութեան էին աւրինակ այնպիսի կերպարանք:

Գ. Անանուհ, Ա 28ա, Բ 33ա. Եւ յայնժամ մինչդեռ ոչ մեղք լուծեալ էին, եւ ոչ անէծք բարձեալ, եւ ոչ Հոգին իջեալ, զոր եւ Քրիստոս հրաշանալով աւէր. «Զինչ ելէք տեսանել յանապատի». նա զի եւ ունէր մեծն ի ծնունդս կանանց զբնաւ խոնարհութիւն եւս եւ զգեստուն տեսակաւ յաւրինակ խոնարհութեան մեծին Կուսորդոյն եւ վասն մեր թափելոյ Հովիւն առ ոչխարս համարեալ: Սակս որոյ մնայր կարապետն կտրելոյ ոչխարին, որով սգատես սգեստին սպասէր սգեցուցանողին զաշխարհս զերծուլ ի նմանէ զբուրձն աւրինական, որ զաւետիսն անդր ի դժոխս ընկալաւ զլոյս ի յարուցելոյն զգեցեալ եւ իբր զաւթոց արկեր (այսքան) (Հմմտ. Ոսկեբերան, էջ 147):

Դ. Եփրեմ³, էջ 34-38, Ա 28ա-30ա, Բ 33ա-35բ. Մարգարէութիւն առ Յովհաննէս եւ խորհուրդ մարգարէութեան առ Տէրն Յովհաննու, որ քահանայութիւն առ որդին Զաքարիայ... Յովհաննէս եցոյց յականէ Յորդանան գետոյ զՓրկիչն մեր: «Ահաւասիկ Սա է Գառն Աստուծոյ, Սա է, որ գայ բառնայ զմեզս աշխարհի» [Յովհ. Ա 29]:

Ե. Ոսկեբերան, էջ 154-163, Ա 30ա-35ա, Բ 35բ-42ա. «Իբրեւ ետես զբազումս ի փարիսեցւոցն...» (Գ 7): Զիա՞րդ ասիցէ Քրիստոս, եթէ Յովհաննէս ոչ հաւատացին... Վասն որոյ ամէ զնովիմբ զահազինսն, եթէ «որոյ հեծանոցն ի ձեռին է» (Գ 12):

Զ. Անանուհ, Ա՝ 35ա-բ, Բ 42ա-բ. Եւ զի ցորեանն եւ ցաւղուն միապէս սփռին ի միում կալի, եւ կամնասայն հասարակաբար կոխեալ կասու զնոսա, այլ հատն ոչ ինչ վնասի ի կամնասայլիցն, այլ

¹ Առանց Աւետարանագրի անուն քերտած գլխաճամարներն ու տնաճամարները Մատթէոսի Աւետարանին են:

² Տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին», Վեներիկ, 1826:

³ Տե՛ս «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», Բ. Բ, Վեներիկ, 1836:

առաւել աւագտի... Եւ խոնարհք, որ ոչ ունին զկերպարանք աշխարհի, Հանդերձ ողորմութեամբ եւ նուաստութեամբ ընդունին զԱստուծոյ բնակեալ յինքեանս:

Է. Եփրեմ, էջ 38-39, Ա 36ա-բ, Բ 42բ-43բ. «Եւ Ինքն Յիսուս էր,- ասէ,- ամաց իբրեւ երեսուն ի ժամանակին, իբրեւ եկն Նա կնիք առնուլ ի Յովհաննէ» (Ղուկ. Գ 23): Եւ այս վասն ամաւթոյ մարկիւնացոցն... Եւ քանզի ի մկրտելն նորա է Հոգին, վասն այսորիկ մկրտութեամբ նորա տուեալ լինէր Հոգին:

Ը. Ոսկեբերան, էջ 171-177, Ա 36բ-38բ, Բ 43բ-45բ. Վասն այսորիկ եւ Յովհաննէս յառաջագոյն ասէր, զոր պարտն էր ասել, եթէ «Չեմ արժանի լուծանել զխրաց մի կաւչկաց Նորա» (Մարկ. Ա 7)... Քանզի ոչ եթէ հրեշտակս կամ հրեշտակապետս առնէ, այլ որդիս սիրելիս Աստուծոյ պատրաստէ եւ այնպէս ձգէ զմեզ յայն Հանգիստ:

Թ. Եփրեմ, էջ 40-46, Ա 38բ-42ա, Բ 45բ-49բ. «Նոյն ժամայն,- ասէ,- Հոգին Սուրբ վարեաց Հան զՆա յանապատ, զի փորձեցի Նա ի սատանայէ» (Դ 1): Եւ վասն էր մինչ յերեսուն ամ անդր ոչ փորձեաց... զի տացէ մեզ արիւնակ, թէ զկնի մկրտութեան մտանեմք ի փորձանս եւ յետ փորձանացն՝ ապա եւ յարքայութիւն երկնից:

Ժ. Ոսկեբերան, էջ 182-186, Ա 42ա-44բ, Բ 49ա-51բ. «Յայնժամ վարեցաւ Յիսուս ի Հոգւոյն փորձել ի սատանայէ» (Դ 1): Ե՛րբ: Յետ Հոգւոյն իջանելոյ... Բերեալ Հին վկայութիւն ի Գրոց՝ խրատէ, զի թէպէտ եւ սովամահ լինիցիմք կամ այլ եւս պէս-պէս չարչարանաւք տանջիցիմք, սակայն ի Տեառնէ մի՛ Հեռասցուք:

ԺԱ. Անանուս, Ա 44բ, Բ 51բ. Եւ զի առաջին մարդն մոռացաւ զպատուիրանն՝ զտուեալն յԱստուծոյ, եւ վասն այնորիկ ըմբռնեցաւ ի չարէն... որպէս Դաւիթ այն՝ զԳողիադ:

ԺԱ 1. Ոսկեբերան, էջ 186-190, Ա 44բ-46բ, Բ 51բ-52բ. Եւ զի էջր տեղեակ նա, թէ Որդի իցէ Աստուծոյ... ի գոգն Աբրահամու:

ԺԱ 2. Անանուս, Ա 46բ, Բ 52բ. Եւ զի նախ կերակրոցն արար սկիզբն պատերազմի... իբր զնահատակ քաջ մտցէ յառաջաստն լուսոյ, որպէս Տէր ի Հարսանիսն Կանայ գալիլեացոց՝ իբր յաղթող պսակեալ:

ԺԲ. Ոսկեբերան, էջ 198-201, Ա 47ա-48բ, Բ 53բ-55ա. «Իբրեւ լուաւ Յիսուս, եթէ մատնեցաւ Յովհաննէս, խոյս ետ ի կողմանս գալիլեացոց» (Դ 12): Եւ ընդէ՞ր, ասեն, ետ խոյս: Զի եւ այնու եւս ուսուցանիցէ զմեզ... թող նախ երթիցուք ի տուն եւ ընդ ընտանիս խաւսե-

ցուք, այլ զամենայն ինչ թողեալ՝ երթային մտադիւր զկնի, որպէս Եղիշայն զհետ Եղիայի:

ԺԳ. Եփրեմ, էջ 46-48, Ա 48բ-49ա, Բ 55ա-բ. Եւ զի լուան աշակերտքն Յովհաննու, մինչդեռ խաւսէր նա ընդ Տեառն մերոյ, եւ թողին զվարդապետն իւրեանց եւ գնացին զկնի Տեառն մերոյ... Տեղի ետ իմաստութիւն աշխարհիս այնմ իմաստութեան, զի Նա Ինքն է իմաստութիւն իմաստութեանց:

ԺԴ. Անանուս, Ա 49ա-51ա, Բ 55բ-57ա. «Եւ, տեսեալ Յիսուսի, ժողովուրդ բազում ել ի լեառն» (Ե 1): Նախ սկիզբն արար մարմնոյ բժշկութիւն, զի ի ձեռն երեսելի բժշկութիւն զսորա աչաւք տեսանէին, բացին աչք ոգւոց կուրացելոցն, Հաւատայցեն եւ ոգւոցն բժշկութիւն... Եթէ ոչ մեծամեծս ինչ Հաստատութիւն էին գնմանէ, վասն որոյ տանի զնոսա յանապատ տեղիս եւ յորդորականացն սկսանի այսպէս:

ԺԵ. Ոսկեբերան, էջ 210-217, Ա 51ա-53բ, Բ 57ա-59ա. «Երանի իցէ աղքատաց Հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից» (Ե 3): Եւ զինչ իցէ ասել աղքատս Հոգւով, այլ՝ զխոնարհս եւ զբեկեալս սրտիւք... Քանզի արդարութիւն միշտ զամենայն իսկ զառաքելնութիւնս ոգւոցն սովոր են կոչել Գիրք: Եւ աստ եւս Հոգեւոր Հատուցումն դնէ. «Զի նոցա է,- ասէ,- արքայութիւն երկնից»:

ԺԶ. Անանուս, Ա 53բ, Բ 59ա-բ. Ի ժամանակի, իբրեւ տայր Տէր մեր երանութիւնս, ընդ աշակերտսն Հայէր. «Բարձ,- ասէ,- Յիսուս զաչս առ նոսա եւ սկսաւ ասել... Վասն որոյ ոչ պարզաբար երանեաց աղքատս, այլ յաւել՝ «զՀոգւոյն», որոց ոգիքն աղքատ ի չարեաց են եւ փարթամք արդարութեամբ: Եւ զի միմիայն միով առաքելնութեամբ բարձրացին, յաւել եւ զմիւսն եւս:

ԺԷ. Եփրեմ, էջ 57-58, Ա 53բ-54ա, Բ 59ա-բ. «Երանի Հեզոց» (Ե 5): Հեզ էր Մովսէս, քան զամենայն որդիս ազգին իւրոյ... Ուսարու՛ք յինէն, զի Հեզ եմ եւ խոնարհ, եւ գտլիք Հանգիստ անձանց ձերոց» (ԺԱ 29):

ԺԸ. Անանուս, Ա 54ա-55բ, Բ 59ա-61ա. Զի բարկութիւն արտ է բնական եւ ընդոյծին, որ իբր վառի, Հրդեհեալ ապականէ զամենայն բնութիւն ամբոխեալ զաւրէն մրկի, որ խոովէ զծով... վարձ՝ աշխատութեամբ Հանդերձ, եւ Հատուցումն՝ գործաւք Հանդերձ, եւ ցատումն՝ պակասութեամբ Հանդերձ, եւ պատիժն՝ յանցանաւք Հանդերձ:

ԺԹ. Ոսկեբերան, էջ 217-227, Ա 5բ-60ա, Բ 61ա-65բ. «Երանի իցէ ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն բան չար զձէնջ սուտ»

(Ե 11): Կամ կախարդս կամ մոլորեցուցիչս կամ ժպնտագործս կամ թալլ ինչ կոչիցեն... շատ է ձեզ մխիթարութիւն այն իսկ, զի վասն իմ բամբասիցիք, եւ աստ զՀայր դնէ, զի ամենայն ուրեք զզուգական Հաւասարութիւն զԻւր ընդ Հաւր յայտ առնիցէ:

Ի. Եփրեմ, էջ 59, Ա 60ա, Բ 65բ. Առ դպիրսն եւ փարիսեցիսն ասաց, որ կայինն եւ խնդրէին պատճառս, ասէ. «Ես ոչ եկի լուծանիլ զԱւրէնս կամ զՄարգարէս, այլ՝ կատարել» (Ե 17) (այսքան):

ԻԱ. Անանուհ, Ա 60ա-61ա, 65բ-66բ. Եւ գտտուերսն Հանել ի ճշմարտութիւն, ամենայն, որ ինչ միանգամ արհիսակքն էին, կատարեցան ժամանակք ազգէ յազգ եւ բովանդակեցան առաջին յԱղամայ... տանի յարէ յառաջինսն, թէ լրումն է այս ամենայն առաջնոցն, եւ նա՛ ի սմա ծածկեալ, եւ սա՛ ի նմա նկարագրեալ, զի ի նոյն եւ ի մի կատարումն ամեն զմարդն:

ԻԲ. Ոսկեքերտան, էջ 237-249, Ա 61ա-65ա, Բ 66բ-71ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն, եթէ մի՛ սպանանիցես, բայց Ես ասեմ ձեզ, թէ եւ մի՛ բարկանայք իսկ» (Ե 21). եւ այսու աստուածեղէն իմն եւ երկնաւոր առաքինութեան Հորդէ ճանապարհ ... եւ արդ, որ զարմատն Հատանէ, յայտ է, թէ առաւել զոստսն կոճուպիցէ, մանաւանդ, զի եւ բուսոյն իսկ սկիզբն չտայցէ լինել:

ԻԳ. Ոսկեքերտան, էջ 253-262, Ա 65ա-68բ, Բ 71ա-75ա. Ոչ ամենեւին ի միջոյ բառնայ զիրսն, զի չէ Հնար մարդոյ բնաւին ի կարեաց ազատանալ, բայց կարճել մարթի, այլ ամենեւին առանց կարեաց լինել անհնար է... յորժամ յատենից եւ ի բանտից եւ յամենայն տառապանաց զանձն ազատիցէ:

ԻԴ. Ոսկեքերտան, էջ 266-273, Ա 68բ-70բ, Բ 75ա-77ա. «Լուարուք, զի ասացաւ առաջնոցն...» (Ե 21): Յորժամ կատարեաց զառաջին պատուիրանն եւ ի գլուխ առաքինութեան եւ զգաստութեան տարաւ Հասոյց... անտի երեւի առաւել մարդասիրութիւն, զի ամենայն կողմանց զբոյ ազուտ խնդրէ:

ԻԵ. Եփրեմ, էջ 59-65, Ա 70բ-773ա, Բ 77ա-80բ. «Ես ոչ եկի լուծանիլ զԱւրէնս կամ զՄարգարէս, այլ՝ կատարել» (Ե 17). եւ կատարումն թերութեան լինի պիտոյ... Ոչ անիրակեցաւ, վասն այնորիկ ոչ պարտի եւ ոչ խնդրեաց զվրէժ Իւր, վասն այնորիկ առնու զՀատուցումն եւ յաւել ետ, վասն այնորիկ պսակի:

ԻԶ. Ոսկեքերտան, էջ 273-277, Ա 73ա-75ա, Բ 80բ-83ա. «Ասացաւ,- ասէ,- թէ որ արձակէ զկին իւր...» (Ե 3): Ոչ նախ եւս յառաջագոյն մատչի, մինչ չեւ զառաջինսն բարութե սրբիցէ... զի այն

յայտնի իսկ է, եւ չէ ոք կարաւտ ուսանել, թէ ոչ ի չարէն իցէ, եւ ոչ եթէ անելի ինչ է, այլ Հակառակ անելոյն, այլ անելի երդումնն է:

ԻԷ. Ոսկեքերտան, էջ 279, Ա 75ա, Բ 83ա. Մի եւ երդմանն արէնք ի Հնումն վասն այնորիկ դնէին... զի Հաստատուն կերակուր դալ նոցա, եւ այն իսկ փութոյ արհիսացն լինէր գործ:

ԻԸ. Անանուհ, Ա 75ա, Բ 83ա. Զի որ զառաջին երանութիւնս լուցէ եւ այնպիսի ինչ յարդարիցէ զանձն, որպէս եւ Քրիստոս պատուիրեաց, եւ ոչ մի ինչ Հարկ յումեքէ ստիպիցէ երդնուլ, յորժամ Համեստ եւ պարկեշտագոյն յամենայն իրս գտանիցի (այսքան):

ԻԹ. Ոսկեքերտան, էջ 284-297, Ա 75ա-79ա, Բ 83ա-87բ. «Լուարուք, զի ասացաւ՝ ակն ընդ ակն...» (Ե 40): Տեսանես, զի ոչ վասն ական ասացաւ զառաջինսն... զի եւ տեղեան իսկ պարթուցանիցէ զմիտս նոցա, քանզի դեռ եւս տկարագոյնք եւ ծանրամիտք էին:

Լ. Ոսկեքերտան, էջ 300-316, Ա 79ա-85բ, Բ 87բ-95ա. «Զգո՛յ՛ լերուք ողորմութեան ձերում...» (Զ 1): Զբռնաւորագոյնն իսկ քան զամենայն արիտսն մերժէ Հանէ այսուհետեւ... յերախտեացն, զոր Հանապազ առնէ եւ ի պատուիրանացն, զոր տայ, յայտ է:

ԼԱ. Ոսկեքերտան, էջ 321-329, Ա 85բ-88բ, Բ 95ա-99ա. «Յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն...» (Զ 16): Բարութ է աստ Հեծել եւ յոգւոց Հանել՝ դառնապէս... Եւ յայտնագոյն զսոցին վնասն ի փշոցն առակէ եցոյց: Բայց սակայն եւ աստ ընդ աղաւտ ակնարկեաց:

ԼԲ. Եփրեմ, էջ 65, Ա 88բ, Բ 99ա. «Եթէ լոյսն, որ ի քեզ է, այն խաւար է» (Զ 23): Այսինքն՝ եթէ որովք մեղանչես դու, զի լուսատու է նա... այս է, զոր ասէ. «Ուր դանձք ձեր, անդ իցեն եւ սիրտք ձեր» (Զ 21):

ԼԳ. Ոսկեքերտան, էջ 334-340, Ա 88բ-91բ, Բ 99ա-101բ. «Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել...» (Զ 24): Տեսանե՛ս՝ զիարդ առ սակաւ-սակաւ ամենայն յիմեքէ մերժէ... եւ ոչ այլ ինչ նոյնպիսիք երեւեցին երբէք, այլ ամենայն ի դերեւ ելեալ դնայցէ:

ԼԴ. Ոսկեքերտան, էջ 343-351, Ա 91բ-95ա, Բ 102բ-106ա. «Նայեցարո՛ւք ընդ շուշանն վայրենի...» (Զ 28): Յորժամ ասաց վասն կարեւոր կերակրոցն եւ եցոյց, եթէ ոչ վասն այնր ինչ պարտ էր Հոգալ... որչափ ի մարմնաւորացս ցուցանեմք փոյթ, նոյնչափ ի Հոգեւորսն՝ ծուլութիւն:

ԼԵ. Ոսկեբերան, էջ 357-372, Ա 95ա-102ա, Բ 106ա-113ա. «Մի՛ դատիք, զի մի դատիցիք» (Զ 1): Եւ արդ, չիցէ պարտք սասակ յանցաւորաց... առաւել դառն տանջանք այն են, յորժամ յարքայութենէն ոք վրիպիցի:

ԼԶ. Ոսկեբերան, էջ 379-387, Ա 102ա-105ա, Բ 113ա-116ա. «Ոչ ամենայն, որ ասէ ցիս՝ Տէր, Տէր, մտցէ յարքայութիւն...» (է 21): Եւ ընդէ՛ր արդեւք ոչ ասաց, թէ՛ որ առնիցէ զկամս Իմ... որ խթակ ընդդէմ արքայիցէ, ինքն խոցի, նոյնպէս եւ՝ որ զառաքիներն նենդիցէ, ինքն պատժի:

ԼԷ. Ոսկեբերան, էջ 390-395, Ա 105ա-107բ, Բ 116ա-118բ. «Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զբանս զայստսիկ...» (է 28): Թէպէտ եւ տալովեալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն... քանզի ընդ ամենայն ծագս տիեզերաց տարածեցաւ բանն աստուածապաշտութեան:

ԼԸ. Եփրեմ, էջ 66-67, Ա 107բ-018բ, Բ 118բ-119բ. «Որ ունիցի,- ասէ,- տացի նմա...» (ԻԵ 29): Իբրև զայն, զի ասէ. «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ» (ԺԱ 15, ԺԳ 9, 43, Մարկ. Դ 9, Ղուկ. Ը 8, ԺԴ 35)... մինն ոչ անցոյց, եւ միւսն ոչ պահեաց:

ԼԹ. Ոսկեբերան, էջ 405-408, Ա 108բ-109բ, Բ 119բ-120բ. «Իբրև եմուտ նա ի Կափառնանում...» (Ը 5, Ղուկ. է 1): Բորոտն, յորժամ էջ ի լեռնէ անտի Յիսուս... մերժէ եւ ուսուցանէ, եթէ ոչ այլ ումեքէ կարաւտ առնուլ, այլ ինքն է աղբւր բարութեանց:

Համեմատութիւնից պարզում է, որ Անանուն անուամբ բերուած Ա, Գ, Զ, ԺԱ, ԺԱ 2, ԺԴ, ԺԶ, ԺԸ, ԻԸ Հատուածներն, ամենայն Հաւանականութեամբ, Անանիա Սանահնեցու գրչին են պատկանում: Բանն այն է, որ խնդրական Հատուածները բացակայում են ոչ միայն Ոսկեբերանի ու Եփրեմի խմբագրուող երկերում, այլև՝ Հայ եւ օտար մեզ յայտնի Համաբնոյթ մեկնութիւններում: Այդ Հատուածների գատորոշումն ու արձանագրումն իր նպաստն է բերում Անանիա Սանահնեցու ոչ միայն Հեղինակային խօսքի, այլև՝ նրա մատենագրական ժառանգութեան մէջ այս երկասիրութեան ըստ ամենայնի գնահատմանը:

Խմբագրուող Հատուածների ճշող մեծամասնութիւնը քաղուած է Յովհան Ոսկեբերանի Մատթէոսի մեկնութիւնից: Սա նշանակում է, որ Անանիա Սանահնեցին Մեկնութիւնը շարադրելիս առաջնորդուել է գլխաւորապէս Ոսկեբերանի այդ երկասիրութեամբ՝ Հանգամանք, որ գրսեւորում է ոչ միայն բառացի քաղումներով (Ե, Ը, Ժ, ԺԲ, ԺԵ,

ԺԹ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԶ, ԻԷ, ԻԹ-ԼԱ, ԼԳ-ԼԷ, ԼԹ), այլև՝ մասամբ բառային, մասամբ իմաստային յառաջաբերութիւններով: Աւելի յստակ ցոյց տալու Համար Սանահնեցու՝ աղբւրներից օգտուելու կամ դրանք խմբագրելու սկզբունքը՝ ներկայացնենք Ոսկեբերանի եւ Սանահնեցու նոյնանուն մեկնութիւնների Համապատասխան Հատուածները:

ՈՍԿԵՐԵՐԱՆ, էջ 145-146

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ, Ա 28ա-բ, Բ 32բ-33ա

«Եւ Յովհաննէս,- ասէ,- ունէր Հանդերձ ի ստեւոյ ուղտու...» (Գ 4): Տեսանե՛ս, զի է ինչ, զոր մարգարէին յառաջագոյն ասացին, եւ է, ինչ զոր աւետարանչացն թողին: Վասն որոյ եւ Մատթէոս եւ մարգարէութիւնս դնէ եւ զիւրան յաւելու: Քանզի եւ զպատմութիւն Հանդերձից արդարոյն չհամարէր գործ զատարկութեան ասել: Ձի զարմանալի իսկ եւ սքանչելի էր ի մարդկեղէն մարմնի այնպիսի ժուժկալութիւն տեսանել, որ մանաւանդ եւ զհրեայսն իսկ ձգեալ ածէր՝ յինքեան ցուցանել զմեծն Եղիա, եւ յերանելոյն յիշատակ առաքէր զմիտս նոցա՝ իրաւքն, որ յայնժամ ի նմա երեւէին, մանաւանդ՝ զի եւս մեծամեծ զարմանալիս: Ձի նա ի քաղաքէ եւ ի տունս մտանէր եւ ուտէր, եւ սա ամենեւին անդրստին ի խանձարոցն յանապատ տեղիս բնակէր: Քանզի պարտ եւ պատշաճ իսկ էր կարապետին այնորիկ, որ զհինն ամենայն լուծանելոց էր զաշխատութիւնս, զանէ՛ծան, զտրտմութիւնսն, զքրտունսն, աւրինակ ինչ զայս-

Ձի մարգարէքն է, ինչ զոր ասացին, եւ էր, ինչ զոր աւետարանչացն թողին. զգեստին աւրինակն, զոր Մատթէոս գրեաց առ յիշատակ ածել զհրեայսն մեծին Եղիայի եւ եւս մեծագոյն քան զնա, զի նա ի քաղաքս բնակէր եւ կերակուր ճաշակէր, եւ սա ի խանձարոցն յանապատի բնակէր՝ ոչ ինչ ճաշակելով, զի պարտ էր կարապետին, յոր զհինն ամենայն լուծանելոց էր զաշխատութիւն, զանէ՛ծան, զքրտունսն աւրինակ ինչ զայսպիսի յանձին ցուցանել, զի ո՛չ զերկիր գործէր եւ ո՛չ քրտամբք երեսաց ուտէր, այլ դուզնաքեայ սեղանով եւ Հանդերձի վարէր: Ձի ո՛չ տան եւ ո՛չ սեղանոյ կարաւտէր, այլ Հրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր, որպէս Ադամ մինչ չեւ էր յանցեալ, զի ապաշխարութեան եւ արքայութեան էին աւրինակ այնպիսի կեանքս...

պիսի պարզեւեաց յանձին ցուցանել եւ վերագոյն գտանել, քան զայնր ամենայնի դատապարտութիւն: Քանզի ո՛չ երկիր գործէր եւ ո՛չ ակաւս կտորէր եւ ո՛չ քրտամբք երեսաց ուտէր Հաց: Այնպէս վարկպարագի եւ դիւրին իմն կազմէր իւր սեղան եւ առաւել քան զսեղանն՝ դիւրագոյն Հանդերձն եւ եւս առաւելագոյն՝ առանց պաճուճանաց զբնակութիւնն: Քանզի ո՛չ յարկի եւ ո՛չ մահճաց եւ ո՛չ սեղանոյ եւ ո՛չ այլ իմիք այնպիսեաց կարաւտանայր, այլ զհրեշտակական կեանս ի մարմնի ցուցանէր: Վասն այնորիկ եւ ստեւտոյ ուղտու ունէր զՀանդերձն, զի եւ այնպիսի կերպարանաւք խրատեսցէ զմեզ՝ թողուլ զիրս մարդկաւրէնս եւ մի ինչ ամենեւին Հաղորդութիւն ունել ընդ երկրի, այլ անդրէն յառաջին ազնուականութիւնն ընթանալ, յորում էր Ադամ, մինչ չեւ էր լեալ կարաւտ Հանդերձից եւ վերարկուաց:

**ՈՍԿԵՐԵՐԱՆ, Էջ
199-200**

«Յայնմ Հետէ,- ասէ,- սրկաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»»: Յայնմ Հետէ՝ յորմէ՞. յորմէ զՅովհանն արկին ի բանտ: Եւ ընդէ՞ր ի սկզբանէ ոչ իսկ քարոզէր կամ զի՞ բնաւ կարաւտանայր Յովհաննու, ուր գործոցն վկայու

**ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ,
Ա 47բ-48ա, Բ 52ա-բ**

«Յայնմ Հետէ սկսաւ Յիսուս քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»»: Յայնմ Հետէ, յորմէ արկին զՅովհաննէս ի բանդ: Եւ ընդէ՞ր ոչ ի սկզբանն ինքն քարոզէր, այլ կարաւտէր Յովհաննու վկայութեանն, զի վկայութիւն նշանշանացն բացայայտ քարոզէր

Թիւն քարոզէր զՆմանէ: Այլ զի այսու եւս զպատիւն Նորա ուսանիցիս, զի զոր արհնակ՝ Հայր, նոյնպէս եւ նա ունէր մարգարէս, զոր եւ Զաքարիա եւ Հրեշտակն գուշակէին: «Եւ դու,- ասէ,- մանո՛ւկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր»: Եւ զի մի՛ պատճառս ինչ տայցէ անամաթ ազգին Հրէից, զոր եւ ինքն իսկ ասէր, եթէ՛ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասեն՝ ահա՛ այր կերող եւ արեցող եւ բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց, եւ արդարեցաւ իմաստութիւն յորդւոց իւրոց»: Եւ այլազգ եւս՝ զի Հարկ էր այլում ճառել նախ զՆմանէ, եւ ապա իւր՝ վասն իւր: Եթէ յետ այնչափ վկայութեանց եւ ցուցանելոյ զՆա ի մատնէ Յովհաննու ասէին, եթէ՛ «Դու վասն անձին Քո վկայես, եւ վկայութիւն Քո չէ՛ ճշմարիտ», զի եթէ չէր ի մէջ անցեալ Յովհաննու եւ զայն ամենայն վկայեալ վասն Նորա, որչափ եւս ամպարչտագոյնս խաւսէին: Վասն այնորիկ իսկ ոչ քարոզեաց յառաջ քան զնա եւ ոչ նշանաբար, մինչեւ մատնեցաւ նա ի բանդ, զի մի՛ այնու եւս բաժանիցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչինչ արար նշանս, զի առ Յիսուս պահիցին ամենայն արուեստք նշանացն: Թէ՛ այն-

զՆմանէ: Այլ զի այսու եւս պատիւ Նորա յայտ լիցի. զի որպէս Հայր, սոյնպէս եւ սա ուսուցանէր զմարգարէսն, զոր եւ Զաքարիա եւ Հրեշտակն գուշակէին, թէ՛ «Դու, մանո՛ւկ, վարգարէ Բարձրելոյն կոչեսջիր», զի մի՛ պատճառս ինչ տացէ անամաթ ազգին Հրէից, զոր եւ ինքն իսկ ասէր, եթէ՛ «Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր եւ ո՛չ ըմպէր, եւ ասէին՝ դեւ գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ, ուտէ եւ ըմպէ, եւ ասէին՝ ահա՛ կերող եւ արեցող»: Եւ այն եւս զի Հարկ էր այլում նախ ճառել զՆմանէն, եւ ապա իւր՝ վասն իւր, զի եթէ յետ այնչափ վկայութիւն Յովհաննու եւ մատամբն ցուցանելոյ ասէին, թէ՛ «Դու վկայես անձին Քո, զվկայութիւն Քո ոչ է՛ ճշմարիտ», եթէ չէր այնչափ վկայեալ Յովհաննու, որչափ եւս ամբարչտագոյն խաւսէին: Վասն այնորիկ ոչ քարոզեաց զյառաջ քան զնա եւ ոչ՝ նշանաբար, մինչեւ մատնեցաւ նա ի բանդ, զի մի՛ այնու բաժանեցի ժողովուրդն: Սմին իրի եւ Յովհաննէս ոչ արար նշանս, զի առ Յիսուս պահեսցին արուեստք նշանացն, քանզի զՅովհաննէս կարձէին, թէ՛ Քրիստոս իցէ:

պիսի յայտնի իրք մատակարարեցան եւ յառաջ քան զմատնելն Յովհաննու ի բանտն եւ յետ մատնելոյն, սակայն այնպէս նախանձ ընդդէմ իմն թուէին նմա աշակերտքն Յովհաննու ի միտս բազմաց, քանզի զՅովհաննու կարծէին, թէ Բրիտոսս իցէ:

Բնագրի եւ խմբագրուող Համապատասխան Հաստատման բաղաձայնագրի պարզում է, որ Անանիա Սանահնեցին (առանձին պարբերութիւնների բացթողումով) Համառօտելով եւ Համառօտուած Հաստատմանը մէկմէկու կցելով է խմբագրում մեկնութիւնը: Ոսկերւանի երկը խմբագրելիս Սանահնեցին ձգտում է որոշ բառեր եւ արտայայտութիւններ փոխարինել ուրիշներով՝ խոսափելով մեկնութեան նոյնական Հաստատման բառացի քաղովից: Այսպէս օրինակ՝

ՈՍԿԵՐՈՒՆ

Վասն որոյ ածէ զնովիմբ զահագինսն... (էջ 163):

...զգուգական Հաւասարութիւն զիւր ընդ Հաւր յայտ առնիցէ (էջ 227):

...բուռոյն իսկ սկիզբն չտայցէ լինել (էջ 249):

Մի եւ երդմանն արէնք ի Հնումն վասն այնորիկ դնէին... (էջ 279):

...տարածեցաւ բանն աստուածպաշտութեան (էջ 395):

Բացառելով մասնակի տարբերութիւններն ու ընդհանրութիւնները՝ կարելի է արձանագրել, որ Սանահնեցին կատարում է մեկնութեան այսպէս կոչուած խմաստային խմբագրումը՝ զանց առնելով ոչ էական դատողութիւններ պարունակող երկրորդական նախադասութիւններ եւ առանձին պարբերութիւններ:

ինչպէս տեսանք, Սանահնեցու՝ Մատթէոսի սոյն մեկնութիւնը կազմուել է ոչ միայն Համաբնոյթ աշխատութիւններ խմբագրաբար բանաքաղուած առանձին, այլեւ՝ լիովին ինքնուրոյն Հաստատմաներից: Վերջիններս ցոյց են տալիս, որ Անանիա վարդապետը սոսկ խմբագրող չէ, այլ նաեւ՝ ուրոյն մտածող: Պարզ է՝ Հէնց այդ ինքնուրոյն մասերում են դրսևորուած հեղինակի տեսական կարողութիւնն ու գիտական պատրաստութիւնը:

Շեշտելով Աստուծոյ մշտնջենականութեան եւ ամենագորութեան գաղափարը (Հետեւելով Որոգինէսի, Իրինէոսի, Գրիգոր Աստուածաբանի, Յովհան Ոսկերբրանի եւ այլոց երկերում բազմիցս արծարծուած՝ մարդու աստուածամանութեան գաղափարին, որն իր ակունքներով կապուած է Աստուածայնչին եւ նորապատման ուսմունքին¹)՝ Սանահնեցին ընդգծում է աստուածամանութեան գաղափարի կարեւորութիւնն անհատի Հոգեւոր բարեփոխման եւ կատարելագործման ճանապարհին: Մարդու այսօրինակ աստուածացումը, որն իր դրսևորումը գտաւ առաւելապէս Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեամբ յատկորոշուող ժամանակի գրականութեան մէջ, արդիւնք էր մի կողմից Ժ-ԺԱ դդ. քաղաքական եւ տնտեսական նպաստաւոր պայմանների ծնունդ Հոգեւոր զարթօնքի, միւս կողմից՝ աւանդական այդ գաղափարի նորովի ընկալման: Այդ գաղափարն է ընկած Սանահնեցու Հետեւեալ սողերի Հիմքում. «Արդ, զիտրհուրդն, որ Ադամայ յառաջին Ադամ նկարագրէր Աստուածագրում է հեղինակը, - յասել մարգարէին, թէ՛ «Աբար Աստուած զմարդն ի պատկեր Իւր» [Մնունդ. Ա 27], եւ պատկեր Աստուծոյ աստուած է՝ զբոլոր ինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատիպին ճշգրտաբարտակ նմանութիւն, զի թէպէտ եւ չարնախանձ հակառակութիւն սկզբնաչար աւձին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեամբ տեսակ եւ զանապականութեամբ պատկերն զինէր մարթ եղծանել գրոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարագրեցաւ: Զի թէպէտ եւ ներեաց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ աւձէն, եւ ապա ընկալցի ըստ արժանին զհատուցումն դատապարտութեան, եւ թէպէտ ի Հոդ դարձաւ մարդ Ադամ առաջին, սակայն խմոր

¹ Տե՛ս Հոովմ. Ը 29, Ա Կորնթ. ԺԱ 7, ԺԵ 49, Բ Կորնթ. Գ 18, Բ Պետր. Ա 4, նաեւ: Ս. Ս. Աւերինցեւ, "Поэтика ранневизантийской литературы", Москва, 1977, с. 78, 79; В. Живов, "Мистагогия" Максима Исповедника и развитие византийской теории образа", "Художественный язык средневековья" (сбор. статей), Москва, 1982, с. 115. М. Старокадомский, "Неоплатонизм и христианство", "Богословские труды", сб. 12, Москва, 1974, с. 214:

անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, յապաղանապ ընդ երկար ժամանակս փոխադրեցէ զանգուածն յիւր նմանութիւն զի նորոգումն կենաց շրջեցի» (Ա 6բ, Բ 6բ-7ա):

Մարդու մէջ անթեղուած աստուածային նախակզրի մասի Անանիա Սանահնեցու պաշտպանած միտքը յայտնանշում է աստուածանմանութեան գաղափարի նկատմամբ Հեղինակի անթաքոյն Համակրանքը, որն այստեղ աչքի է ընկնում ջատագովակո ընդգծուած տրամադրութեամբ: Այն իր դրական (կատաֆատի) միտումով ենթադրում է աստուածճանաչման մասնակի Հնարաւորութիւն: Վերջինս, որ Հայ եւ ոչ միայն Հայ եկեղեցու մարդաբանակոն Համակարգի առանցքն է կազմում, այս պարագային Անանիա Սանահնեցու մարդասիրական աշխարհայեացքի իմաստասիրակոն բարոյական յենակէտն է: Հեղինակը խորապէս Հաւատում է մարդու բարձր կոչմանը: Թէպէտ բազում են մարդկային մեղքերը, այսուամենայնիւ, իր մէջ կրելով «անապականութեան խմորը», նախակզրեական մի մղումով նա նմանուած է Աստծուն¹:

Անանիա Սանահնեցու՝ Մատթէոսի Աւետարանի մեկնութիւնը Հրատարակուած է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի N 2886 ձեռագրի²: Ինչպէս ժամանակին իրաւացիորէն նկատել է Յ. Ս. Անասեանը, «այս օրինակը, որ ԺԲ-ԺԳ դարերի գրչութեամբ է, շատ է եղծուած եւ շատ մասերում անընթեռնելի դարձած: Նոյն Մատենադարանի N 2859 ձեռագիրը, որ երկրորդ ծանօթ օրինակն է՝ ԺԹ դարի գրչութեամբ, յիշեալ N 2686 եղծուած օրինակից է արտազրուած եւ եղծուած մասերում նոյնիսկ տեղ-տեղ փոքր այլալուծմաների ենթարկուած»³: Այս պատճառով N 2859 ձեռագիրը զանց է առնուած:

Հրատարակուող բնագրի եղծուած շատ Հատուածները վերականգնել ենք ըստ ս. Յովհան Ոսկեբերանի եւ ս. Եփրեմ Ասորու երկերի Համապատասխան Հատուածներում առկայ ընթերցումների:

Յակոբ Քեռսեան

1 Արեւելաքրիստոնէական աստուածաշտոութեան այս կարեւորագոյն պահի մասին հանգամանալից տե՛ս Ի. Յ. Ս. Ս. «Идея обожания в Древне-восточной церкви», Москва, 1909:

2 Ձեռագրի համառոտ մկարագրութիւնը տե՛ս «Յուդայի ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», Բ. Ա, Երեւան, 1965, էջ 855:

3 Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենագրութիւն», Բ. Ա, Երեւան, 1959, էջ 777



[Ա]ՆԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ Ի ԽՆԴՐՈՑ ՀԱԻՐ ԴԻՈՍԿՈՐՈՍԻ, ՋՈՐ ՅԵՏՈՑ ԻՄ ԱՂԱՁԵԱԼ ԶԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՎԱՐ[ԴԱՊԵ]ՏԻ ՍԱՐԿԱԻԱԳ ԸՍՏ ՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱԽՂՈՐԻՉ] ՀԱՅ ԱԶԳԻՆ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ՍԻՐՈՅՆ, ՋՈՐ ԷՐ ԱՌ ԻՄ ԱՆՊԻՏԱՆՈՒԹԻԻՆ, [Բ]ԱԶՈՒՄ ԲԱՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻԻՆ ԿՐԵԱՑ ՅԱՂԱԳՍ ԱՅՍՐ ՏԱՌԻՍ

[Ը]նկալա[յ] զհրաման տեառն իմոյ Հաւր Դիոսկորոսի եւ Հոգելիւր վարդապետի Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի, զոր յոյժ ըզձիւ եւ սիրական բաղձանաւք Հայցեալ պահանջեցի ի մէնջ՝ վասն բացայայտութեան տերուհեան բանից կենսաբեր Աւետարանին՝ Համառատաբար շարագրել զարդոց վարդապետացն վերայճառութիւն, որք տեսութեամբ Հոգւոյն բացափայլեցին ի մէջ զստալոյս գիտութեան եւ զծածկեալ խորհուրդ Հոգւոյն, որ ի բազմաց զանխլաբար Թաքչիւր:

Չի թէպէտ եւ պատմող բանին Աստուծոյ Յովհանն եւ [...] տրին, վարդապետն ասորւոց [Ե]փրեմ լուսաւորագոյնս բացայայտեցին մեզ զիմաստս Աւետարանին, այլ ի յորդառատ բանիցն յաճախութենէ եւ ի բազմադուռն տեսութեանց[ն] բազմաց միտք թարթափին՝ ոչ բերելով զըտլորից իմաստութեանն տեսութիւն, որ է աւր կասեցեալ ըստ մաքուր տեսութեան ձեր, Հակիրճ² ուսումնասիրաց, վերահասու լինել տերուն[ական բան]իցն: Եւ յայտոսիկ ոչ մարդկեղէն մտաց զտ[...] շարաշարժեալ ձեր: Այլ յազգմանէ Հոգւոյն Ա[րքոյ], զոր ունիք անշեղաբար առ Աստուած, ըստ Տեառն բանին. «Որ սիրէ զիս, զբանս իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ [զնա]» [Յովհ. ԺԴ 23]: Եւ յայտոսիկ յաւժարեալ ձեր եռանդնայորդոր փութով ստիպեցիք զիս ոչ մի անգամ եւ երկիցս, այդ բազում թախանձանաւք Հարկեցի ձեռնարկեալ ի գործ վեհագոյն, քան զկա[ր] մեր՝ նաւարկել յանդուռնս խորոց աստուածային իմաստից: Այդ իմ ապաստան եղեալ ի զաւրութիւն Աստուծոյ, որ ոչ միայն ակետարանչաց, այդեւ արտաքնոցի բացայայտէ զծա[ծ]կեալ խորհուրդ կամաց Իւրոց, յապագայսն՝ վասն աւգոստի բազմաց. հաւատամ, թէ եւ Ձերովք աղաւթիւք տացէ ինձ կարողութիւն՝ սկսանել եւ կատարել զհայցուածս Ձեր առ ի յաւգոստ բազմաց: Թէպէտ եւ յոյժ տկար եմ մարմնով եւ նուաստ՝ Հոգւով, «այդ զաւրութիւն Աստուծոյ միշտ ի տկարութեան կատարի» [Թ Կորնթ. ԺԲ 9]: Եւ արդ, պարտ եմ [այլ]՝ արժանապէս խորհել եւ ընդ միտ ածել զտուչութիւն կենսաբեր Աւետարանին, որ սկիզբն առ խաւեւելոյ ի Տեառնէ եւ ի ձեռն ականատես մաքրեցելոցն ի մեզ հաստատեցաւ զաւրութեամբ Հոգւոյն: Եթէ ոչ [...] [բաջա]ղանաւք ի վախճանի Աստա[ր]տայ[...]. յամանակիս պարգեւեցաւ մեզ ակետիս կենաց, այդ անսկզբնաբաւ ընդ [մեզ]՝ բանին ծածկեալ խորհուրդս են այն յաւիտենական[...]. ըստ խորհրդ[...]. աւարտս մեծատես տառիդ դորին զբաւոյն [...] մին յանապատաւորս եւ քան զամե-

1 Բազմակէտով նշումներն անընթեռնելի են: Այսուհետեւ զանց ենք անոմով «անընթեռնելի» բառը. փոխարէնը՝ 2-3 տառ:
 2 օգտագործումից մէկ տող մաշուած, պատողած
 3 4-5 տառ
 4 1-2 բառ
 5 մի քանի տառ
 6 3-4 բառ
 7 4-5 բառ
 8 1-2 բառ

նեսեան բազմամեղս [...]՝ սղութիւն գծկոյս այսոցիկ զմակերեւու-
 թիւնս, զոր նիւթ [...] զուգածագգեստիցն: Վերբերական զխորհրդոց
 որտից [...] զհոգւութիւնս զտերունեան փրկագործութիւնս բնաւից եւ
 բա[որից]՝ ետազատակ որոնաջան, խոհեմաբար եւ խորխուզողու-
 թեամբ, որ [...] Հա[յր]ապետաց բանն ի բարձանց: Ի բլուրս մեր
 մասին բանականաց ոտ[...] անեղուելեաք^(*) դեգերիւր սուտասա-
 շիցս, ստերիւրեղոցս ի կեն[...] ետ գաւառէն: Եւ սովազին
 պարտասելոցս ի ճարակէ կենացն դեղմանն: [Եւ] աստ ասեմ զամե-
 նաչացն լուսալրութիւնն, որ ի սուրբ սրբարանէ, եւ ի սրբէաբնակ
 ա[ւ]թեւանէ, քառասերից, աննայեաց աթոռոցն, եւ ի յար խորհրդակ-
 ցութենէ առ մերս կարկառակն յազնահոծեալ եւ անհու, ապերասան
 եւ բազմադիմի, դիւախար բախմամբ ի բարձրաբերձ բլուրս, ի սորս եւ
 անտառախիտս, անձանձրանալի ձա[յ]նարկութեամբ: Եւ այն, թերեւս
 ի մեզ եւ զմեզ զգեցնելով, Հովիւն զոչխարս մողորեալ, յանվայրն լերինս,
 ուր ոչ առնէր այցելութիւն Տէր: Այլ մեք՝ մարդք Հոգագուռք եւ ի
 գուրս գլոր կացեալ, զորս յանեղրական բարեաց Բարերարին, տառա-
 դրոշմ գծիւք եւ ի քարտի զանքանակ մեծութիւնն վերբերեսցուք: Առ
 որ տեսութիւն մեծ տեսանալին տատանիւր,- ասէ,- մարդ է, բայց ո
 ծանիցէ զնա, որում թէ նոյն իսկ վերնակերպեալ յաւէտ յարժանն կոյս
 կեցեալ միաւրութեամբ: Եւ այնքան յինքեան, իբր ի տախտակսն
 նկարելով եւ զիւգերեալ բբաց մտացն եւ սուրբ սենեակ եւ առագաս-
 տատուն յաւրինեալ, զանխուզ զինքն ի բնա[ւ]ին բարեպաշտութենէն
 կարծելով եւ ի վերա[յ] ինքեան գահոյից ընկողմանեալ անմահին
 մահիճս պատշաճելով: Եւ անդէն, անշուշտ, զչաղապատութիւնն
 զրկախառնեալ գտանելով զնոյն եւ անքակ քատակեալ առ
 աստուածաբուռն այր գիշերամարտ գաւտեկուութեամբ: Ոչ ասեմ, թէ
 բերցէ յանրմբերելոցն բան ինչ պատմողական, որոյ անունն ի խնդրոյ
 քաղցրապատում կամաց կենարարին պարտաշնոր[հ] իւր, ասէ, նա է
 սքանչացման արժանի: Չայս անաս եւ անպատումն, որ պատմազրե-
 ցին մեզ գետքս յառաջագա[յ]եալք, քառադէմ յեղեմական բղխեալ
 դրախտէ, յաչամէտ դրախտէ կամ ի ծովահայեաց զիտութենէ գեր-
 իմաստն Հոգւոյն, որ ակետաբեր այսր բանի ոռոգմամբ զուարթա-

1 1 բառ
 2 1 բառ
 3 1 բառ
 4 մի քանի բառ
 5 մի քանի տառ
 6 1-2 բառ

ցուցին զսանամուտս մեր խողովակ լուսաւորեալ: Լսելով, թէ անմարմինն Աստուած մարմնակից մեզ ելով՝ գրեն, թէ Գիրք լինելոյ է այս Որդւոյ Աստուծոյ եւ նոյն Որդւոյ մարդոյ Աբրահամու: Զայսքան եւ զայսպիսի լուր լսելով մեր ի վեր քան զպառաքանքսցեցայս ի ծարաւ՝ յանհաւատութենէն, ոռոգանիմք ի քառաթիւ վիճանաց ցրուելոցս[...Ք անցս սրսկելով յիմանալի գիտութիւն՝ գրովս զմեզ զովացուցանելով: Յորս եւ ամենայն իսկ ցուցեալ ի սմանէ մերն կենաց: Պի[...Ք առկայումնն զաս [...Ք նաբերն բարի. զի սորին խրատական առ այժմ մեք մեք, որ կերպարան Աստուծոյ [...Ք:

Գերակիր նուէր եղեալ Աստուծոյ ազն եւ ժողովուրդ. սեպուհ ըստ աստուածաբան [...Ք ովք ի ստորնոցս, այլ ի վերուստն Եկելոյ զամենայն ինչ ուսեալք [...Ք] [յարու]թիւնն Աստուծոյ իմացեալք ծանեայք, որք ի նորոգութեան կեանս չըջեալք [...Ք եւ անդ [ամենայն՝] դաստիարական դաւանիմք. դարան եւ դաստակի [...Ք] խորան խաղաղական զանձինս պատրաստելով: Մեզ եւ այժմ հրա[...Ք] ուցեալ է ի բազմադիմի ըղձմանց, դիւականաց [դ]իրաւորածոց, ք[արա]կերտից եւ ի փայտից փտելոյ, անփառունակից նկուն կորագործաց [կամ]՝ յամենից արեամբ շնչաւորացն պղծեալս: Եւ զենմամբ չորքոտանեաց պաճարեաց եւ գազանաց սպանմամբք, եւ ի նոյն իսկ զատիմք, յորոչող խորհրդոց գունակ, որ քան յերկին ի վեր եւ որ յերկիր խոնարհ եւ որ քան զընդու ստորեւ երկրի: Այլ այսմ որպէս զհարդ եւ է, պահեմք զառ ի Յիսուան նախանձեւի պատկեր պետականին, զի առաւել երեւելագոյն գեղեցկագոյն լեալ կազմեսցի: Յամենայնի անցեալ կամք համբերութեամբ, զի վարժարանս այս, նոյն եւ մարզարան բժշկակերտ հոգեաց՝ կարգեալ ի պետէն բժշկաց. ոչ ըստ Ասկղեպիադա[յ] եւ

- 1 ձեռագրում՝ ծարար
- 2 1-2 տառ
- 3 1-2 տառ
- 4 1-2 տառ
- 5 1 տող
- 6 1-2 բառ
- 7 1-2 բառ
- 8 1-2 բառ
- 9 1 բառ
- 10 3-4 տառ
- 11 Վերջիմ երեք անկիւնագծերի՝ ըստ ձեռագրի Ռամար պահպանակ ծառայող Լր Թերթի բնագրի, որից Ընդունութեամբ ընդօրինակուել է Յք-Ա:

Գաղիանոսի անարու որականաւք իմն եւ յամրուսումն յարմատոց տկարագունից, աւժանդակեալ ընդ որոց խոտոց, պտղոց եւ արմատոցն, ցուցաւ ցամաքումն արհեստիցն: Այլ զի սա ոչ արարաշխարական մասն գոլով նուաստ եւ ոչ ի դեգերումն դեժեռութեան հնարիլ հնացելոցն վիրաց խորհել խոխոտումն խոտովք զբուժականն մերձեցուցանել զդեղն աղետակցութեամբ: Այլ սա, զի ունի ոչ տեղի, այլ պատուանդանի զբարձունս արփի անբաւս, եւ որ գերկիրս զայս շուրջ փակեալ ունի խոնաւ գրկաւք, եւ զայնով՝ երկրի կառք եւ բարձիչք, եւ յերկրի ունելով զնիստ: Այլ զի այս իսկ ի սոյն ոչ առգրեցի յիմաստս տեսականից: Զի ի հաստեալ եւ ոչ փաւտակոց ուժգնութիւն ինչ ծախեցաւ, եւ ոչ առկայելն կացուրդս կոչնականաց կամ համարառուաց պահանջումն կարգելոյն թիւ սահմանելոցն շնորհել, այլ բան աւետական, եւ այս տիեզերական, ոչ եզակի ինչ, որ յատկատես ճկութեաց եւ մատին. միոյ եւ անկեան տան տալոյ զբժշկութիւն, այլ բանս բոլորից բերէ զդեղ փրկութեան, եւ այն զի զուշ մտառուադիր հաւանական հաւատով յայս բժշկարան կարկանդակեցուք, որոց եւ նախքան առ որս յանդամս մերձաւորել, կանխէ, բերէ զբժշկութիւն, զի բան է ի բանին Աստուծոյ, եւ ի բանի բերէ զբնաւ բարիս ի բարձանց ուղերձեալ գեղեցիկ Տէր: Սովաւ գործի շնչաւոր զմարդն գործեաց ըստ իւրում կերպարանին: Քանզի եւ Ինքն գործիւ Հաւր ամենայարմարական նո[...Ք] գաւորն սուրբ իմաստութիւն գերաշխարհիկ երկնաւոր բան: Արդ, որ մեզ զի [...Ք] անէ ներգործական գտնաւորիութիւնս իմաստուք, կամի զաչս արձակել զիւրաց եւ զականջս բանալ խլից եւ զգթոտս ոտամբ, զմոլորեալս յարդարութիւն առաջնորդել, զԱստուած մարդկան անզգամից ցուցանել, դադարեցուցանել [զանգ]գամութիւն, յաղթել մահու, զորդիս անհաւանս հաշտեցուցանել ընդ Հաւր [...Ք] գործիս այսմ գրէր եւ բժիշկ, ողորմի, խրատէ, յորդորէ, մի [...Ք] նէ եղ[...Ք] ցան, պահէ [...Ք] մեզ ուսմանն առաւելութենէ, զարքայութիւն երկնից շնորհէ [...Ք],

- 1 1-2 տառ
- 2 1-2 տառ
- 3 1 բառ
- 4 2-3 տառ
- 5 1-2 տառ
- 6 1 բառ
- 7 2-3 բառ

զոր ապրիմքս: Քանզի զստութիւն ի վերա[յ] մարդկան [...]
ճշմարտութիւն զաւրէն մեղուի, զնա ին [...]:

Մովահայեացն [...] թ ումքս ի միասին Հաւաք[...]: ասացուք սուր
ինչ պատճառական բազմաց դրուատելեաց եւ ատենական[այց] եւ որք
յաթենացուցն վարժարանէ փաստական [...]: իւրտաւք՝ լինէին [...]:
[լ]եալք արժան անբանից գովասանոց [...]:

ՆԱԽԱ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՒ ԱԻՆՏԱՐԱՆԻ ՄԵԿԵՆՈՒԹԵԱՆ

[...]: Յցն յիմաստասիրաց Փիլոսֆն վասն անհաս իմաստից
Աստուծոյ տեսութեան ոչ միայն յիւրոց մտաց, այլ եւ յայլոց
Հնագունից Հոգելիւր վարդապետաց առեալ: Ոչ սկսանել, ասեն, Աս-
տուծոյ զաշխարհ յառաջ առ աշխարհիս արարչութեան, այլ միշտ
առնել զամենագեղեցիկ զաշխարհս զայն: Քանզի ոչ արժանիո
ասացին [լին]ել երբեք անգործ զաստուածութիւնն, քանզի դատար-
կութեան եւ անգործութեան է այնպիսին: Այլ անսկիզբն ասացին
զԱստուած զամենայն ինչ առնել Արարիչն միշտ զսա իմանալով
զարդարեր: Քանզի Աստուած ոչ յառաջ իմանալ սկսաւ ինչ, այլ
առնել, եւ ոչ երբեք յորժամ Աստուած ոչ առնէր տեսակաց սկզբնու-
թեամբ նմին եղ[ել]ոց: Ձի կամք Աստուծոյ ոչ յետոյ դէպ լինին
խորհել, զի միշտ ընդ նմա են կամքն, զի բնական շարժմունքն ոչ եր-
բեք պակասեն. եղիցի ապա իմանալովն միշտ առնել: Իսկ զգալեացս
սկիզբն լինելոյ տուեալ, զի զգալի աշխարհիս լինելութիւն առ իմանա-
լի աշխարհն ցոյց լինել ասացին, զի Հարկ է աշխարհիս այսմիկ կեր-
պարան ուրուք գոլ, զի Արարչին զայս ցոյց ասացեալ զզգալիս
իմանալեացն, որով յայտ է, եթէ ամենայն ինչ անսկզբնաբար
նկատեալ են ի կանուխ գիտութեանն Աստուծոյ: Որպէս Դաւիթ ասէ,

- 1 1-2 բառ
- 2 5 տող
- 3 1 բառ
- 4 1-2 տառ
- 5 վերջիս պարբերութիւնը («Մովահայեաց... անբանից գովասանոց») լուսանցքում,
«Մովահայեացն... սուր ինչ» ճատուածը՝ բերուած 1բ-ի լուսանցքից
- 6 1 բառ
- 7 3-4 տառ
- 8 3-4 տառ

թէ՝ «Ձանկերպարանս իմ տեսին աչք Քո»: Եւ գիրս կենաց
զպրութեան գրեալ են. «Եւ ի տուէ Ստեղծչիդ յայտնի են, մինչ ոչ ոք
էր ի նոսա» [Սաղմ. ՃԼԸ 16-17]: Ապա ուրեմն, ամենայն ինչ
անսկզբնաբար յայտնի են տպաւք եւ կարգուածովք իւրեանց ի կա-
նուխ գիտութեանն Աստուծոյ: Եւ առաւելապէս՝ խորհուրդ տնա-
րէնութեան Բանին: Որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Ընտրեաց զմեզ
Նովա յառաջ, քան զլինել աշխարհի» [Եփես. Ա 4]: Վասն որոյ
անդրանիկ ասէ գոլ զՆա ամենայն աշխարհի եւ զմեզ ընդ նմա
անդրանիկս անուանէ՝ դասեալ յեկեղեցիս անդրանկաց գրելոց
յերկինս: Ձի թէպէտ եւ ներգործութեամբ ի վախճան ժամանակիս
եհաս մեզ վիճակ ընտրութեան, այլ զաւրութեամբ եւ իմաստութեամբն
Աստուծոյ՝ յառաջ քան զամենայն Հաստեալք ի կամս Աստուծոյ: Եւ
զայս մեզ գեղեցկապես բացայայտէ տէր Եփրեմ ի Հաւատոց գիրսն
զայն բանն, թէ՝ «Պատրաստեալ է ձեզ արքայութիւնն ի սկզբանէ
աշխարհի»: Չսմին Եկեղեցւոյ ասաց, [զի] Հանդերձեալ էր յառաջ
քան զաշխարհս, զսոյն ասէ արքայութիւնն եւ Երուսաղէմ Վերին
ազատ մայր մեր Եկեղեցի սուրբ, եւ ի նմա կատարի կանխութիւն, զոր
գուշակեաց Սողոմոնֆն, եւ յայտնեաց առաքեալ, եւ կնքեաց Տէր մեր՝
իբր զգիտակ: Վասն որոյ ամենայն ինչ, որ եղեւ եւ որ լինելոց է, այն
ինչ է, որ էր առ նմա ի կանուխ գիտութեան Իւրում յաւիտենից:
Վասն որոյ չիք ժամանակ, եթէ ոչ ամենայն ինչ էր նմա ի
գիտութիւն, բայց ոչ եթէ անձամբ եւ տպաւք եւ կարծովք, այլ՝ գի-
տութեամբ: Եւ ոչ եթէ երբեմն բխեաց խոհումն վասն լինելոյ աշխար-
հի, զի խոհուն նոցա յաւիտենից առանց սկզբան էր: Իսկ կարգուած
նոցա երբեմն յերեւել անձանց իւրեանց էր: Ապա ուրեմն, արարածք ի
բնէ եւ յաւիտենից էին ի գիտութեան Նորա, մինչ չեւ էին: Եւ
այսաւր, զի են իբրու չեն նմա, մինչ է նա առ այն գիտութեան, որ
Հաստէ զամենայն յոչնչէ եւ լուծանէ յոչինչ: Ապա ուրեմն, մինչ չեն
արարածք եւ գիտութեան Արարչին ի բնէ եւ յաւիտենից, եւ երեւէին
նմա անձինք եւ կարգուածք, եւ թիւք նոցա մինչ չէին: Եւ թէ ասի-
ցեն, թէ ոչ ի բնէ եւ յաւիտենից էին արարածք ի գիտութեան Նորա,
մինչ ոչն էր, ցոյց են, թէ ոչ է նա Աստուած կատարեալ, այլ յայլմէ
էառ զգիտութիւնն եւ կատարեցաւ: Եւ թէ կատարեալ Աստուած է,
ա[պ]ա ի բնէ եւ յաւիտենից ամենայն արարածք էին ի գիտութեան
Նորա, մինչ չէին, եւ գիտէր զնոսա, որպէս մինչ ենն, եւ մինչ չէին,
ինքեանք ինքեանց էին նմա: Եւ իբրեւ եղեն ինքեանք ինքեանց եւ ոչ
եթէ՝ նմա, զի միշտ էին ի գիտութեանն Նորա: Եւ չիք ժամանակ, թէ
գիտութիւն Նորա շարժեցի Հաստել ինչ, որ չէր ի գիտութեան Նորա,
այլ առ նա զամենայն ինչ, որ ստացեալ ունէր ի գիտութեան Իւրում

յաւփտեմից, գտանի, զի այլուստ ծագեաց ի Նա գիտութիւն, իր պարգեւ ուրուք: Եւ սուրբն Եղիշա ասէ. Բնական կամքն Աստուծոյ արարող շարժութիւնք են, ոչ յետոյ դէպ լինի Աստուծոյ իմանալ իկ եւ առնել, այլ՝ միշտ Աստուած եւ միշտ Արարող, յորժամ կամեցաւ, զոր միշտ ունէր յիմանալու շն եւ ած ի գիտութիւն զիմանալեացն, իցէ Հայր եւ եղելոցս Արարիչ, բնական իմացութիւն՝ նիւթ, իսկ արարչական գաւրութիւնն՝ զարդ. նիւթ՝ անմարմին, որ է գիտութիւն Նորո, իսկ արարչութիւն զանմարմին գիտութիւնն մարմնացոյց եւ ած ի տեսութիւն զգալի, ի յայտ լիցի իմաստութիւնն, որ ծածկեալ էր ի գիտութեանն Աստուծոյ, որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Անբերելոյթք ի գիտութեանն Աստուծոյ եղելովք ճանաչի մեզ»: Եւ դարձեալ ասէ. «Զիմաստութիւն խաւիմք, զոր յառաջ քան զյաւփտեանս պատրաստեց Աստուած ի փառս մեր»: Այլ զայս, զի գրեցի զիմաստս Հոգեկիր վարդապետացն, զի ծանիցես, ո՛վ սիրելի եղբայր, եթէ պատիւ փառաց, զոր ընկալաք ի վախճան կատարածի աստ, անսկզբնաբար նախախնամող ողորմութիւնն Աստուծոյ սահմանեալ էր ի փառս մեր եւ կնքեալ պահէր ի գանձու իմաստութեան իւրոյ, զոր Առաքեալ «խորհուրդ ամրածածուկ»¹ անուանէ զսա առ Հաւր, որ այլոց ազգաց ոչ ցուցաւ, որպէս այժմ իսկ յայտնեցաւ սրբոյ իւրոց, որոց կամեցաւ Աստուած յայտնել: Արդ, զխորհուրդն, որ Աղամա յառաջին Աղամ նկարագրէր Աստուած՝ յասել Մարգարէին, թէ՛ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» [Մնունդ. Ա 27], եւ պատկեր Աստուծոյ Աստուած է՝ զբոլորն յինքեան բերելով զգծագրութիւն սկզբնատպին ճշգրտաբատակ նմանութիւնն, զի թէպէտ եւ չարնախանձ Հակառակութիւն սկզբնաչար աւձին ի ներքս մտին, այլ ոչ կարացին լուծանել զսերմանն ի նմա զանմահութեան տեսակ եւ զանապականութեան պատկերն, զի չէր մարթ եղծանել զրոյն, որ ըստ պատկերի Աստուծոյ նկարեցաւ, զի թէպէտ եւ ներեաց Աստուած զարգանալ չարին, զի լցցի չափ մեղացն, որ սերմանեցաւ յաւձէն, եւ ապա ընկալցի ըստ արժանին զհաստուցումն դատապարտութեան: Եւ թէպէտ եւ ի Հող դարձաւ մարդն առաջին, սակայն խմոր անապականութեան ի նմին զանգուածի ծածկեալ կայր, զի յապաղանաւք ընդ երկար ժամանակս փոխադրեսցէ զգանգուածն յիւր նմանութիւն, զի նորոգումն կենաց շրջեսցի, զոր առաքեալ մեզ բացայայտէ՝ ասելով. «Եղև առաջին մարդն ի շուկն ի կենդանի, իսկ երկրորդ Աղամ՝ ի Հոգի կենդանարար: Առաջին մարդն՝ Հող յերկրէ, երկրորդ մարդն՝ տէր երկնից: Եւ որպէս

զգեցաք զպատկեր Հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին» [Ա Կորնթ. ԺԵ 45-49]:

Արդ, ճաշակումն, ըստ խրատու աւձին, եղև նմա դեղ յիմարութեան, եւ փոխեալ շրջեցաւ ի կարգ անասնոյ՝ ըստ այնմ, եթէ՛ մարդ ի պատուի էր, Հաւլայարեաց անասնոց անբանութեամբն: Եւ այս դեղ տայն այն Հնազանդեալ ծառայեցոյց զմարդ՝ իբրեւ զանբան անասուն՝ ըստ ներելոյն Աստուծոյ: Սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց Բարերարն, այլ ի դարս դարս Հրաշագործէր զփրկութիւն մարդոյն՝ խրատելով զչարսն եւ բարեգործելով զարդարսն, զի կրթեսցէ այսուիկ ատել զչարն եւ ստանալ զբարին: Եւ ծածկապէս զաւետիս կենաց ծանուցանէր սիրելեաց իւրոց եւ զխորհուրդ տնաւրէնութեան Տեառն մերոյ նկարէր ի նոսա. որպէս ծանոյց Աբրահամու սիրելոյ իւրոյ միածնաւն իւրով, զոր յառակս ընկալաւ, եւ ծանեալ զփրկութիւն աշխարհի գալստեամբ Միածնիւն Աստուծոյ: Եւ դարձեալ ի ձեռն Մովսիսի նկարագրէր զբոլոր խորհուրդ տնաւրէնութեան Բանին, զի «ստուեր Հանդերձելոց բարեացն ունէին արէնքն եւ ոչ՝ ճշմարտութիւն իրաց» [Եբր. Ժ 1], զոր եւ Տէր յԱւետարանին առակէ, թէ՛ «Նա ոչ գիտէ, որ սերմանէ, եթէ նախ խոտ բուսանի, եւ ապա՝ Հասկ, եւ ապա՝ ցորեան ատոք ի նմա» [Մարկ. Դ 28]: Եւ այսու ուսուցանէ, զի նախ խոտոյ նմանեցան մարդիկ մինչեւ ի տուչութիւն արիւնացն: Եւ ի ձեռն արիւնաց ձեւացաւ ստուերակերացութիւն զոհիցն եւ լուսլեացն զարէն Հասկի, զոր եւ առաքեալ «կղկզանս»² անուանէ զարդարութիւն արիւնացն: Եւ ընկալաք ի ձեռն մարգարէիցն քարոզութեան, յոր ձեւ ընտրի զՀաստն կենաց, որով կերակրեցան ամենայն արարածք անսպառ Հացիւն կենաց եւ փոխադրեցան յանմահութիւն կենաց: Զի իբրեւ էՀաստ լրումն արիւնաց եւ մարգարէից, եւ կատարեցան առակք արիւնակաց, եկն էՀաստ Կատարիչն արիւնաց եւ մարգարէից, զի լցցէ զամենայն, որ նկարագրեցան վասն գալստեան Նորա, եւ յինքն զխաւորեսցէ զբոլոր ստուերս Հանդերձելոց բարեացն: Զի իբրեւ էՀաստ լրումն ժամանակաց, առաքեցաւ Բանն ի Հաւրէ, որ եղև ի կնոջէ, եւ եմուտ ընդ արիւնաւք, զի ազատեսցէ ի ծառայութեան արիւնացն՝ յազատութիւն յորդեգրութեան Հաւրն երկնաւորի: Եւ եկեալ Աստուածորդոյն, ըստ գուշակելոյ մարգարէիցն, ժողովեաց զառաքեալս՝ զորոսորդս մարդկան, որոց անուանք գրեալ էին ի դպրութիւն կենաց ի կանուկս

1 Հմմտ. Ա Կորնթ. Բ 7:

1 Հմմտ. Սաղմ. ԽԼ 19, 21:

2 Հմմտ. Փիլիպ. Գ 8:

գիտութեանն Աստուծոյ: Եւ կրթեալ զնոսա բանիւ վարդապետութեան
Իւրոյ՝ տալով իշխանութիւն հալածել զդեւս եւ ազատել զմարդիկ ի
բռնութենէ չարին, որ տիրեաց մարդկութեանս: Եւ այսպէս, լուսա-
ւորեալ զնոսա մինչեւ յաւրն վերանալոյ առ Հայր, պատուէր տուեալ
նոցա ոչ մեկնիլ յերուսաղեմէ, մինչեւ զգեցցին զաւրութիւն ի բար-
ձանց: Եւ, ամբարձեալ առ Հայր, առաքեաց զաւետիս Հաւր՝ զարդա-
բիլ ի հասանել Հոգւոյն ի վերա[յ] նոցա, որով, ընկալեալ զչնորհս
Հոգոյն, եղեն աւետաքարողք կենաց աշխարհի եւ ոչ միայն աւետա-
րանիչք բանիւ եղեն, այլ եւ հազարապետք բաշխողք Հոգոյն Արքայ՝
լցուցանելով զբոլոր սեռս հաստացելոց:

Վասն որոյ ոչ կամէին գրով տալ նոցա զչնորհս Հոգոյն, որպէս
Մովսէսն այն ի հնումն՝ ի տախտակս քարեղէնս զծագրեալ զգիր դա-
տապարտութեան, այլ ի գրեալ տախտակս սրտի մարմնեղէնս զգի-
տակցութիւն Հոգւոյն: Իսկ հաւատացելոցն իմացեալ, թէ ոչ զաւրէն
անմոռաց գիտութեամբ կուրուցեն զլուսաւոր գիտութիւն շնորհաց
Հոգոյն: Վասն այնորիկ ինքանայաւժար կամաւք հայցեն յառաքե-
լոցն գրով թողուլ նոցա զոր բանիւ աւետարանեցին: Եւ նախ Մատ-
թէոս գրէ հեքրաեցուցն յերուսաղեմէ, ասի, իսկ Մարկոս Աղեքսան-
դրացւոյն գրէ յետ հինգետասան ամի: Իսկ Ղուկաս յետ ԻԲ ամի
գրեաց զԱւետարանն, եւ Յովհաննէս յետ Հ ամի գրեաց զԱւետարանն՝
զանճառ Մնուղն բացայայտեալ մեզ: Եւ ի բազում աշակերտացն
եթիւղքն միայն գրեցին զԱւետարանն՝ Մատթէոս եւ Յովհաննէս, եւ
այլք յաշակերտաց նոցունց՝ [խորհրդաբար, չորս առաջս բղիսեալ
յաղբիւրէն կենաց ի չորեքծագեալ յորոտս աշխարհի, զի զհրդեհեալ
բոց մեղացն, որ վառեցաւ ի կողէն Ադամա[յ] ի ծագս տիեզերաց,
չիջուցեն: Եւ զադին դրախտն, զոր կորուսաք ի ձեռն ադամածին
կողին, կուսածին Ադամաւ վերստին առցուք, որ է Եկեղեցի Նորա,
յորում տնկեցաւ ծառն կենաց եւ անմահութեան: Եւ ինքն Տէր մեր
աղբել կենաց բղիսեալ ի սմա առ ի յարբումն պասքաքանց ծարա-
ւեաց, զորս կոչեաց առ ինքն եւ չորս առաջ՝ ծաւալեալ ի Նմանէ:
Առաջին՝ Փիստփն, որ կոչի բերան հրոյ, զոր Մատթէոս աւետարանեաց
հրեղէն լեզուան, զոր ընկալաւ ի վերուստ եւ լուսաւորեաց զբոլոր
ծագս արեւելեանն, որպէս բանականն ի մեզ լուսաւորէ զբոլոր դէմս
զգա[յ]ութեանց մերոց, եւ զիմաստս Հոգւոց, որ կոչին արեւեա[յ]լք:
Եւ երկրորդն՝ Գեհոն, որ կոչին լանջք, որ բխեաց յԱղեքսանդր Ե-
գիպտոսի եւ, մաքրեալ, լուսաւորեաց զբոլոր կողմն հարաւոյ՝ մինչեւ
զԳաղիբոն եւ յարձանս Հերակղեանց. որպէս սրտմտականն ի մեզ
արիաբար մաքրէ զախտս նուաստութեան եւ կնատ խորհրդոց՝ զաւրէն

խորխտ կենդանւոյն արի[ա]բար վարելով: Եւ երրորդն՝ Տիգրիս, որ
բխեաց ի Հոգովմ եւ յիտալիս եւ մաքրեալ լուսաւորեաց զբոլոր կողմ
արեւմտեց, որպէս ցանկականն ի մեզ վերամաքրեալ Հոգւով զտխրալի
ախտիցն նսեմութիւն: Իսկ չորրորդ գետն Եւփրատէս, որ բխեաց
յԱփա եւ յամենայն Միջերկրեայս եւ լուսաւորեաց հրով Հոգւոյն
զբոլոր ծագս ասիացուց եւ ամենայն հիւսիսոյ: Որպէս արդարութիւն
ի մեզ կալով ի միջոցի եռամասնեայ ոգւոցս առաքինութեան զբոլորսն
ուղղելով յիւրոսն հաստատապէս առկայիլ ներգործաբար: Եւ այսպէս
զչորեքծագեան տիեզերս լցին երկնատեղեաց ցաւոյն իջմամբ: Սմին
համաքատակ եւ եղեկիեղեան կառք գուշակեն մեզ զխորհուրդ
Եկեղեցւոյ եւ զնմանութիւն աւետարանչացն, զի չորից կենդանեացն
իւրաքանչիւրոցն չորս դէմք առանձնացեալք ունէին: Առաջնոյ
կողմանցն՝ դէմք մարդոյ, եւ ընդ նմին լծակցեալ՝ դէմք առիւծուն, եւ
միւս կողմ՝ դէմք զուարակի եւ ընդ նմին լծակցեալ զարծուին, որ մեզ
նկարագրէ Մատթէոս զդէմս մարդոյն, որ է բանականն ի մեզ, զի
մարդանալ Տեառն մերոյ քարոզ[եաց] մեզ պատմութեամբ Որդոյն
Դաւթի եւ Աբրահամու: Վասն որոյ առաջին իբրեւ զդեմս մարդոյ
այլոց Աւետարանչացն զնա կարգեցին, զի ակնատես եղեալ բոլոր
գործոց եւ վարդապետութեանն, գեղեցկապէս շարագրեաց զկարգ
բանից եւ նշանաց Տեառն մերոյ: Եւ ընդ սմին շարալծեալ՝ զՄարկոս
զաւրէն առիւծուն, որ է սրտմտականն ի մեզ, որպէս եւ ինքն
գրեաց, թէ՛ «Ել նա ի Յորդանանէ իբրեւ զառեւձ», զի ընդ բանին
պարտ է շարալծել զսրտմտականն զաւրութեամբ, եւ աներկիւղ աւե-
տարանեացէ զբանն կենաց եւ խորխտ ճոխութեամբ պակասէ զընդդի-
մակայսն: Իսկ երրորդ կենդանին՝ զուարակ, որ է Ղուկաս, որ աւե-
տարանեաց մեզ զուարակ ամեալ ի սպանդ՝ ի խրախուսնս Հաւր
յաղաքս տարամերժեալ որդւոյն: Եւ սմին շարալծեալ՝ զարծուին, որ է
գիտութիւն ընդ ծանուն եւ ընդ վայրաքարչին զթիթեան եւ զվերա-
բերողն, զի ցանկականն մեր մի՛ թողացուցեալ ցնդեացի, այլ՝ սրբեալ
մաքրութեամբ հրով Հոգոյն, զի ճմարտապէս փափագեացուք Վեր-
նագուելին: Զի եւ Յովհաննէս, փարելով զսարսափելի պարանոցաւն,
վերամաքրեալ ի բարձանց, որոտալով քարոզեաց մեզ զանսկիզբն
Մնուղն յանսկզբնական Հաւրէ: Յայս խորհուրդ ետես եւ Յակոբ՝
զսանդուկստս յերկրի հաստատեալ եւ զվէմն աւժեալ, յայտնեաց մեզ
զմարմին Բանին, որ աւժաւ յերկրի՝ ըստ Մատթէոսի, որ ծանոյց մեզ
զՔրիստոսի մարդեղութիւնն եւ զնոյն Տէր ի ծայրս սանգելոցն՝ ըստ
Յովհաննու, զաստուածութիւնն Նորա գեր ի վերոյ ամբարձեալ, եւ

1 Հմտ. Երեմ. ԽԹ 19:

գելուէջն հրեշտակացն Տէրն մեկնեաց մեզ, թէ՛ «Տեսանիցէք զհրեշտակս, զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերա[յ] Որդոյ մարդոյ [Յովհ. Ա 51]:

Եւ արդ, այսչափ բաւական լիցի իմաստասիրաց առ ի ծանուցումն խորհրդոց չորից աւետարանչացն:

ԳԻՐՔ ԼԻՆԵԼՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐԴԻՈՅ ԴԱԽԹԻ՝

Այսու փոքր բանիւ փակեաց զբոլոր խնամս, որ ի մեզ եհեղ ի գալստեան Իւրում, որպէս Մովսէս Հակիրճ բանիւ փակեաց զբոլոր արարածոց լինելութիւն՝ յասել, թէ՛ «Այս է գիր արարածոց երկնի եւ երկրի, զամենայն եղեալս երկնաւորաց եւ երկրաւորաց» [Մնունդ. Բ 4], ի սմա ծածկեալ յայտ արար: Սոյնպէս, յասելն լինելոյ բանին, յայտ արար զբոլոր շնորհան, որ Հեղաւ ի մեզ, զի եթէ անլու[...Քիջն եղեն Աստուծոյ մարդ լինել, զիա՞րդ ծնաւ, ասեն, [...Յ այն, ինչ շնորհեսցի մեզ, եւ անդէն յանուանէն յայտ արար զմեծ փրկութիւն մեր ի չարէն: Ձի երեք կար[ծ]եմն անուանադրութեան՝ յիրէն, ի ներգործութենէ, ի ձայնէ, զորս ընկալաւ Տէր մեր. նախ ի ներգործելոյն ի մեզ փրկութիւն կոչեցաւ Յիսուս, երկրորդ՝ յիրէն, զի աւծաւ միաւորութեամբ Աստուածութեանն եւ մար[դ]կութեամբն, երրորդ՝ ի ձայնէն, զի կոչեցաւ Բան, զի զմեզ փրկեսցէ եւ աւծցէ Հոգւոյն Հեղմամբ եւ Բանիւ վարդապետութեամբն կերակրեսցէ ի ճաշակս անմահութեան: Իսկ ասելն «Որդոյ Դաւթի եւ Աբրահամու» զի յերկոսեան ի սոսա եղեն աւետիք յաղ[գ]էն Աբրահամու, թէ՛ Ջաւակի քում «աւ[ր]հնեսցին ամենայն ազգ երկրի» [Մնունդ. ԺԲ 4], եւ թէ՛ քեզ եւ Ջաւակի քում, որ է Քրիստոս: Իսկ Դաւթի երդմամբ ուխտեաց ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա¹, զոր եւ հրեշտակն աւետարանեաց, թէ՛ տացէ նմա Աստուած զաթոռն Դաւթի՝ Հաւր Իւրոյ⁵, եւ մարգարէն, թէ՛ «Յաթոռն Դաւթի նստիցի» [Ծայալի Թ 7]: Եւ նախ զԴաւթ յիշէ, զի զարթուացէ զլսողն ի լուր բանից իւրոց, զի աւետիքն Աբրահամու ծածուկ էր ի բազմաց, իսկ Դաւթ այն նորոգ

- 1 Մատթ. Ա 1
- 2 1-2 տառ
- 3 1-2 բառ
- 4 Տե՛ս Մաղմ. ԾԼԱ 11:
- 5 Հմմտ. Գ Թագ. Բ 4:

եւ յայտնի էր ի մէջ նոցա: Վասն որոյ ամենեքեան զՆա Յիսուս՝ Որդի Դաւթի կոչէին: Եւ եհարց [առ Տեսառն] մերոյ զփարիսեցիսն, թէ ո՞ր Որդի է Քրիստոսն, եւ նոքա ասեն՝ Դաւթի՛: Վասն այնորիկ նախ զԴաւթ յիշէ, որ ախորժելի էր հրէիցն լսել, թէ խոստումնն Դաւթի ի գլուխ ելին, զի Համարձակ լիցի հաւատալ ի նա: Եւ ապա անցանէ յաղբերն աւրհնութեանց յԱբրահամ, զի նա է մայր աւետեաց եւ բղխումն պարգեւաց աշխարհի, զի նախ ի ծնունդս նորա նկարեցաւ ծնունդ Բանին. զի ամուկ էր Սառայ, որպէս Եկեղեցի Հեթանոսաց: Եւ աւետեալք ի ծերութեան ծնաւ զմիածինն, որպէս Եկեղեցի Հեթանոսաց յամլութեան ընկալաւ զաւետիս ծննդեան Միածինն: Եւ ի ծերութեան ծնաւ զանդրանիկն արարածոց: Եւ որպէս ծերութիւն նոցա ի մանկութիւն դարձաւ, եւ ամլութիւն՝ յանթիւ բազմութիւն յառակեալ յաստեղս: Եւ Եկեղեցւոյս կնդրակի² բազում են որդիք, քան զարամբոյն: Եւ յայսպէս, միածին Իսահակ զկամս Հաւր իւրոյ կատարէր՝ ինքնայաւժար կամալք զփայտ պատարագին բարձեալ դիմեալ երթայր ի մահ՝ ըստ նմանութեան Տեսառն մերոյ: Ուստի եւ յառակս ընկալաւ զնա Աբրահամ:

Արդ, «Աբրահամ,- ասէ,- ծնաւ գիսահակ»՝ յաւրինակ Քրիստոսի, եւ «Իսահակ ծնաւ զ[Յ]ակոբ» [Մատթ. Ա 2]:

Բարձրագոյն եւս խորհուրդ նկարեալ ի սմա, զի Ռեքեկայի Հեթանոսաց թողոյր զո[րդ]իս եւ զծնողս իւր՝ ըստ այնմ՝ «Լո՛ւր, դո՛ւստր, եւ [տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛] զժողովուրդ եւ զտուն Հաւր քո» [Սաղմ. ԽԴ 11]: Եւ եկեալ յարեցաւ յի[շատա]կ, որպէս Եկեղեցի Հեթանոսաց: Եւ նա եւս յետ ամլութեան յղանայր երկաւորիմ, որ գուչակէր յերկուս ժողովուրդ մ(՞), զի ասի, թէ նախ Յակովբ նկարեցաւ յարգանդի, թէ Եսաւ բնութեամբ առ զանդրականութիւնն. առ սոց[ա] ժամանակ եւ Յակոբ բուռն յարեալ զգա[ր]-չապարէն Եսաւայ, թէպէտ եւ առ ժամայն ոչ յաղթեաց, յետոյ .առ զանդրականութիւնն: Եւ զի որս Եսաւայ էր կերակուր Հաւր իւրոյ, որպէս աւրէնքն պահանջէին ի հրէից, որպէս զՀեթանոսս ի սուր սուսերի եւ ոչ խնամենալ նոցա: Եւ ի վախճանել Հաւրն, առ Յակովբ զանդրանկութիւնն եւ զաւրհնութիւնն եւ Հեռացաւ ի չարութենէ եղբար իւրոյ: Այսպէս եւ Հեթանոսք ի վախճանել աւրինացն ընկալան զանդրանկութիւնն եւ զաւրհնութիւնն հրէիցն եւ, Հալածեալ ի չա-

1 Տե՛ս Մատթ. ԻԲ 42:
2 գոցէ՛ կեանքամի

րութենէ նոցա, որոշեցան ի նոցանէ, զի Եսաւ առեցաւ, եւ նորն Յակովբ սիրեցաւ ի Տեառնէ:

«Իսկ Յակովբ,- ասէ,- ծնաւ [զՅուդա]ն եւ զեղբարս նորա» [Մատթ. Ա 2]:

Եւ յայտարարեց յոլորտն մեզ այլ եւս խորհուրդ, զի ոչ յիշեաց Նոյ զանդրանիկսն զՌուբէն եւ Շմաւովն եւ զՂեւին, [զի պատժեցան յ[ակա]ռակութենէն վասն չարութեան իւր[եանց]. [Ռուբէն] վասն պղծութեան հարճին, եւ Շմաւովն եւ Ղեւի՝ վասն անարէնութեանցն, որպէս եւ ազգ հրէիցն՝ վասն պոռնկութեան կուսպաշտութեանն: Եւ զպիւրքն եւ փարիսեցիքն վասն նախանձու եւ սպանութեան Տեառն մերոյ քահանայ[իցն] հոլորտնալ(°) գնեցին զարին նորա արձակելով: Իսկ երջանիկն Յուդա առնոր զանդրանկութիւնն եւ զարհնութիւն՝ ըստ նմանութեան Տեառն մերոյ՝ վասն ուղիւղ դատաստանին ի վերա[յ] թամարայ, զի զինքն պարտաւորեաց եւ զնա արդարացոյց: Որպէս եւ Տէր մեր զինքն դնէր պարտապան յանցանաց Եկեղեցւոյ Իւրոյ եւ զնա արդարացոյց, այլ եւ խրատու իւր զերծոյց զՅովսէփ ի ձեռաց եղբարց իւրոյ: Վասն որոյ ասէր Յակովբ՝ յարհնութեանն յարենէ ելեր, որդեան՝ զի ոչ պարտաւորեցար ի մահու թամարայ եւ Յովսէփայ: Վասն որոյ ընկալաւ զաթոռ թագաւորութեանն աննուագելի՝ մինչ ի ծաղումն յուսոյ Հեթանոսաց: Դարձեալ՝ վերադոյն, քան զընտրութիւն յեղանակի ծննդեան կանանց,

«Ծնանի Յուդա զՓարէս եւ Ջարա ի թամարայ» [Մատթ. Ա 3],

զի Հայեցեալ Աստուած ի ցանկութիւն թամարայ, այն, որ ծարաւի էր արհնութեան զաւակի ի սուլց(°) յազգէն. եւ զրկեցին զնա չարաչար որդիքն Յուդայ[ի], ինքեանք չարամահ սատակեցան եւ ոչ [ցանկա]ցան արհնութեան սերմ որդեծնութեան, եւ ի պատիր [...] էութեան կերպարանաց զողացաւ զգանձն, որ ծախելալ կայր ի Յուդայ: Եւ, փոխանակ միոյ, կրկին ընկալաւ պարգեւս Աստուծոյ՝ ըստ իւրում ցանկութեանն, եւ նկարագրեցաւ ի նմա խորհուրդ Եկեղեցւոյ. զի ձեռն Ջարայի, որ յայտնեցաւ, ցուցանէր զգործս Հաւատոց, որ յայտնեցաւ ի Նոյ եւ Աբրահամ, յիսահակ եւ Յակովբ: Եւ դարձեալ ծածկեցաւ, եւ եմուտ բռնութիւն արինացն առ ժամանակ մի, եւ խրամարտեցաւ ցանկ Հաւատոյն, որով արդարացան առաջինքս, եւ եմուտ Հարկ բռնութեան արինացն: Եւ դարձեալ խափանեցաւ իշխանութիւն նորա, զի մեք զորդեգրութիւն ի Հաւատոցն առցուր: Եւ արդ, տե՛ս դու, թէ որչափ նկատէր Աստուած, քանզի այս

մեր ցանկացեալ, զոր կատարեաց դաւտեամբ Իւրով: Եւ այսպէս, ի կարգ անկեալ՝

«Փարէս ծնաւ զԵզրովմ, Եզրովմ ծնաւ [զԱրամ, Արամ ծնաւ] զԱմինադար, Ամինադար ծնաւ զՆասսովն» [Մատթ. Ա 3-4]:

Ջարա քոյրն էառ Ահարովն կին: Եւ խառնեցաւ քահանայութիւնն եւ թագաւորութիւնն ի մի ազգ, զի ի ծնանելն [զՆասսով]մին առցէ զքահանայական եւ զթագաւորականն [իշխանութիւնն]:

«Նասսովն ծնաւ զՍաղմովն, Սաղմովն ծնաւ Բոյոս ի Հռաքեբա[յ]» [Մատթ. Ա 5]:

Աստ դարձեալ յիշէ [զՌ]ահար պոռն[ի]կ, որ եղեւ արքինակ Եկեղեցոյ, զի իբրեւ լուաւ նա զանուն Յեսովայ] կուսանի, ուրացաւ զազգ իւր եւ սրբեցաւ ի պոռնկութենէ եւ անարգեաց զկուսս իւր եւ ընկալաւ զըրտեսսն Յեսովայ եւ խոստովան եղեւ յԱստուած նորա եւ ասէ. «Նայէ Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր խոնարհ, զի խաւրեցոյց զլուաւորս երկնից եւ իջոյց մանանայ[ի] ի բարձանց եւ պատառեաց զանդուռս եւ անցոյց զփողովուրդն եւ արքոյց ի վիմէն, պոռնիկ Հեթանոսն խոստովանիւր զարէն Եկեղեցւոյ: Եւ ժողովուրդսն, որ տեսին զսքանչելիսն, որթուն երկրպագեալ, ասէին. «Այս են աստուածք քու, Իսրայէլ» [Ելք ԼԲ 4]: Նա, ընկալեալ զըր[տ]եան, իջոյց վանդակաւ ընդ պատուհանսն, որպէս Եկեղեցին ի Դամասկոս զՊաւղոս իջուցանէր. նշանաւ կամի ով որ ի փայտին, ապրեցաւ ամենայն տարի իւրով: Եւ Եկեղեցի նշանաւ Խաչին եւ Արեամբ Միածնին ապրեցի ի լուծման աշխարհի: Վասն որոյ ի Գիրն կենաց Աւետարանին գրեցաւ եւ Դաւթայ[ի] յիշատակեցաւ: Եւ հրէայքն ջնջեցան ի դպրութենէ կենաց, որպէս զԱբար ագահ՝

«Բոյոս ծնաւ զՈվբերք ի Հուրթայ» [Մատթ. Ա 5]:

Աստանաւր [էին բար]ձրագոյն խորհուրդ Եկեղեցւոյ, զի Հուրթ՝ յազգէն Ղովթայ, թողոյր զազգս եւ Հայրենիս իւր եւ պանդխտութեամբ մուրացիկ շրջէր³ զկնի սկեսորջ⁴ իւրոյ, զի մի՛ զրկեցի նա յարհնեալ ազգէն Յուդա: Եւ Հայեցեալ Աստուած ի ցանկութիւն նորա, արկանէր զուրթ ի կամս Բոյոսի՝ առնուլ իւր կնութիւն եւ

1 Հմմտ. Յես. Զ 18, է 1-28, Ա Մնաց. Բ 7:

2 մնագրում Հեռապար

3 մնագրում շրակը

4 մնագրում սկեքիմ

ծնանէր ի նմանէ զՅեսսէ՝ զհայրն՝ Դաւթի: Եւ Յեսսէ ծնանէր զԴաւթ արքայ: Դաւթ ծնանէր զՍողոմոնն ի Բերսաբէէ, զի Ուրիաս՝ այր նորա, ի հեթանոսաց եկամուտ էր ի հրէութիւն: Եւ Բերսաբէ զիտէր զաւրհնութեան ծնունդս, որ ի Յուդա(յ)է ի Դաւթ հաստատեցան աւրհնութիւնք Յակովբայ: Եւ ցանկայր գողանալ ի նմանէ, որպէս Թամար՝ ի Յուդայէ, վասն որոյ եւ եհաս իսկ, որում ցանկայրն: Իսկ Դաւթ ոչ այսպիսի մտաւք մերձեցաւ ի նա, այլ յաղթահարեցաւ ի գեղոյ նորա: Վասն որոյ իբր զչնացող պատժեցաւ, իսկ Բերսաբէէ ոչ պատժեցաւ, այլ ընկալաւ յԱստուծոյ իւրում, ցանկացաւ զՍողոմոնն լի իմաստութեամբ եւ շնորհաւք Աստուծոյ եւ ի մարդկանէ:

Ջաւրաբարեղ ծնաւ ի գերութեանն բարեղացւոց՝ յաւրինակ Քրիստոսի, որ եղև Փրկիչ ժողովրդեանն, որպէս Մովսէսն՝ յԵգիպտոս, զի Մովսէս փրկեաց զնոսա ի բռնութենէ փարաւովնի եւ (յառաջնորդ) նաց ժողովուրդն յամպն եւ ի ծովն, փրկելաց ի չալրեացն Եգիպտոսի: Սոյնպէս եւ Ջաւրաբարեղ առաջնորդեաց ժողովրդեանն ի գերութենէն բարեղացւոց եւ շինեաց զտաճարն կրկին եւ առաւել փառաւք, քան զհինն՝ յաւրինակ Քրիստոսի, որ ծնաւ ի գերութեան մերում եւ արար դարձ մեզ առ Վերինն Երուսաղէմ եւ շինեաց զտաճար մարմնոյ Յարութեամբն իւրով: Եւ տաճար առաջին, որ վեց ամ շինեցաւ յաւրինակ Ադամայ, որ ստեղծաւ ի վեցերորդ աւուրն: Եւ որպէս այրեցաւ տաճարն ի Նաբոզարդանայ, որպէս եւ բնութիւն մարդոյ ի ցանկութենէ պոռնկութենէ մեղացն ապականեցաւ: Իսկ զի եւ զՋ ամ վերջին շինուածն՝ յաւրինակ մարդոյս, որ յարգանդի ի իմ եւ ի Ջ աւուրս շինի բոլոր մարմնովն եւ առնու զկենդանութիւն: Իսկ Քրիստոսի եկեալ քակեաց զձեռագործ տաճարն եւ շինեաց Յարութեամբն իւրով, որ երեքաւրեայ, եւ արար նաւակատիս խնդութեան անվախճան յաւիտենից:

«Ջաւրաբարեղ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱզովր, Ազովր ծնաւ զՍաղովկ, Սաղովկ ծնաւ զԱքին, Աքին ծնաւ զԵղիուդ, Եղիուդ ծնաւ զ(Յ)ակովբ, Յակովբ ծնաւ զՅովսէփ՝ զայրն Մարիամու, որ խաւսեցեալ էր Մարիամ Կոյս» [Մատթ. Ա 13-16]:

Եւ թէ ընդէ՞ր Մատթէոս ի վերուստ սկսանի զազգահամարն, եւ Ղուկաս ի ստորուստ ի վեր հանէ յԱդամ, այլ զի Մատթէոսէ խնդրեցին, որ ի հրէիցն աշակերտեալն էին: Եւ դէպ եղև նմա երթալ յայլ գաւառ, հարկ եղև տալ նոցա զբոզ զԱւետարանն: Եւ գրեաց ըստ

1 ձեռագրում՝ զԵգիպտոս

[...] Բացն ախորցից, թէ Դաւթայ եւ յԱբրահամէ [...] ըստ աւետեացն: Իսկ Ղուկաս ամենայն աշխարհազարաց, որոց փոյթ այն էր, եթէ Աստուած եւ յԱստուծոյ է Բան՝ առաքեալ ի փրկութիւն մարդկան: Վասն այնորիկ նախ բազում բանս խաւսի վասն ծննդեան նորա եւ այլ գործոց, որ եղեն ի ծննդեան նորա, ապա՝ ազգահամարն: Եւ թէ ընդէ՞ր ոչ Մատթէոսի, այլ ընդ այլ ազգս կարգէ, եւ զայս եւս բացայայտեցուք: Գիտա՛, զի հրէական ազգն յոյս յարութեան ոչ ունէին աւետարանել յաւրինացն: Վասն այնորիկ աստէն էր նոցա ամենայն յոյս աւետեացն եւ աւրհնութեան յորդեծնութիւն էր, եւ ի հայրենիս ժառանգութիւն նոցա աստէն յերկրի: Վասն այնորիկ հրաման ետ Մովսէս եղբաւրն՝ առնող զանժառանգ կին եղբաւր իւրոյ եւ յարուցանել ժառանգ եղբաւր իւրոյ, եւ յերկուս բաժանեալ էին ծնունդք նոցա՝ էր, որ ըստ բնութեանն, եւ էր, որ ըստ աւրինացն շնորհաւք յեղբաւրէն ստացեալ: Արդ, Մատթէոս գրեաց, որ ըստ բնութեան էր ծնունդն, իսկ Ղուկաս՝ որ ըստ աւրինացն: Արդ, առաջ ի կին Մատթան, որ ի Սողոմոնն էր ազգաթիւ, որոյ անուն էր Ասթա. եւ ծնաւ զ(Յ)ակովբ ըստ բնութեան, եւ իբրեւ մեռաւ Մատթան, առ զկին նորա Մեղքի՛ այն, որ ի Նաթանա(յ) ազգէ կարգեալ գայր: Եւ ծնաւ զՀեղի ի նմին մաւրէ: Արդ, Յակովբ՝ որդի Մատթանայ, որ ի Սողոմոննէ, իսկ Հեղի ի Մեղքա(յ) ծնեալ ի նմին մաւրէ՛ այն, որին արժան այն էր յազգէն, եւ առ Հեղի առ այն, որ ի Նաթանա(յ) էր: Եւ մեռաւ անորդի, եւ, ըստ հրամանի աւրինացն, առ զկին նորա Յակովբ՝ այն, որ ի Սողոմոննէ էր յարուցանել զաւակ եղբաւր իւրոյ, եւ ծնաւ զՅովսէփ՝ զայր Մարիամու: Եւ Յովսէփ՝ բնութեամբ որդի Յակովբայ՝ այն, որ ի Սողոմոննէ էր եւ, ըստ աւրինացն, որդի Հեղեայ՝ եղբաւր նորա՝ այն, որ յազգէն Նաթանայ էր: Իսկ Ղուկաս իբրեւ սկսէր մկրտութենէն ունել զազգահամարն՝ տեսեալ հոգւով, եթէ ծնունդ Աւագանին ոչ բնութեամբ, այլ շնորհաւքն են, որ [...] այս այսք, որ ի Քրիստոսէ ծնան, որպէս Ինքն ոչ յարէնէ եւ ոչ ի կամաց [...] թին, այլ ի Կուսէն ծնաւ Հոգւով եւ յերկրորդ ծննդեանս: Այսպէս, որդիք Ադամայ յերկրորդ ծննդեանս ոչ յարենէ եւ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնանի զոյս Աւագանէ ի Հոգւոյ եւ ի շրոյ, զի եղև Ինքն ճշմարիտ Որդի Դաւթի եւ Աբրահամու, արար մեզ ճշմարիտ որդիս Աստուծոյ: Վասն որոյ,

- 1 3-4 տում
- 2 1 քառ
- 3 1 քառ
- 4 1 քառ

ընկալեալ ի Յորդանան վկայութիւն ի Հաւրէ եւ ի Հոգւոյն, ի դէմս
ասէր. թէ՛ «Դա է Որդի Իմ սիրելի» [Մատթ. Գ 17, Ժէ 5, Մարկ. Թ 6]:
Եւ զայս ձայն որդեգրութեան ի մեզ տպաւորեալ ինքն լինի ոչ
բնութեամբ, այլ՝ շնորհաւք որդի Յովսէփու: Եւ զայս նկարագրեալ
յարէնս, եթէ գոյ Հնար, որք ոչ բնութեամբ են ծնեալ, լինել շնոր-
հաւք որդիք: Եւ Ղուկաս, հայեցեալ Հոգւով, եթէ եղեն մարդիկ ոչ
բնութեամբ, այլ շնորհաւք՝ որդիք Աստուծոյ, գրեաց զՔրիստոս՝ Որ-
դի Յովսէփու շնորհաւք եւ ոչ՝ բնութեամբ, եւ Յովսէփ՝ որդի Հեղեայ
ոչ բնութեամբ, այլ շնորհաւք՝ ըստ աւրինացն: Եւ ի կարգ անկեալ
Հանէ եւ Նաթան եւ ի Դաւիթ եւ կատարէ յԱդամ եւ յԱստուած: Եւ
զայս խորհուրդ յառաջագոյն նկարեաց Աստուած ի Հնուն ի ձեռն
տապանակին, որ աւրինակ էր Մարմնոյն Քրիստոսի՝ դարձուցանել
յետոյ] զՈրդանան, զի աւրինակ էր նա մարդկութեանս՝ հոսեալ ի
բարձանց Լիբանանու, իջանէր ի Մեռեալ ծով Սողոմոնայ, զի Սողոմ
կուրութիւն թարգմանի, եւ ծովն, զի եւ Մեռեալ է, յայտ ցուցանէ մեզ
զկիրս դժոխոյս: Այսպէս եւ մարդկութիւնս զարէն Յորդանանու
հոսեալ ի բարձանց բացամերժեալ յԱստուծոյ սաստիկ ոլորմամբ եւ
յանդուզն ալեալք մեղացն իջանէր ի դժոխս: Արդ, որպէս չէր հնար
ուճեք դարձուցանել զյորձանս Յորդանանու, մինչեւ եկն տապանակն,
որ ունէր յինքեան զԲանն Աստուծոյ՝ զծագրութեամբ տախտակացն,
եւ եկա[ց] ի մէջ նորին եւ դիւբաւ դարձոյց ի տեղին, յորում կայր: Եւ
չէր հնար ուճեք դարձուցանել մարդկութիւնս անդրէն առ Աստուած,
յորմէ յարամերժեալ որոշեցաւ, մինչեւ եկն էհաս տապանակ
Մարմինն՝ այն, որ ունէր յինքեան ծածկեալ զԲանն Աստուծոյ, եւ
անդրէն դարձոյց զմարդն առ Աստուած: Վասն այնորիկ զազգահա-
մարն, որ Մատթէոս ի վերուստ իջուցանէ, զգալուստ Նորա
յաշխարհի գուշակեալ, դարձուցանէ անդրէն Ղուկաս զմարդկութիւնս
ի վեր հանելով, ասէ՝ «որ Ադամայն, որ Աստուծոյն» [Ղուկ. Գ 38]:
Արդ, գրէ Մատթէոս, որպէս ասացաք ի խնդրոյ Հեբրայեցոյն նոցին
գրով: Իսկ Մարկոս ի Հոգով գրեաց ի հոռոմ լեզու ի Պետրոսէ: Իսկ
Ղուկաս զպատճառս իւրոյ գրութեան յայտ առնէ, թէ՛ «Բազումք
կամեցան թեթևութեամբ գրել»¹, եւ երկուցեալ, զի մի՛ թերի
պատմութեամբ կրճատեսցեն զբարձրագոյն ճառս Աւետարանին, կամ
եղեւ ինչ, որ ստէպ զհետ եղեալ էի Պաւղոսի ի նմանէ կատարելապէս
գրել: Իսկ Յովհաննէս տեւեալ մինչեւ ի ժամանակս Տրայիանոսի
կայսեր եւ յետ երանելոյն Պատմոս կղզոյ գրեաց զաւետարանն՝ Հայե-
ցեալ յառաջին Աւետարանիչսն, զի մարմնաւորութենէ Նորա պատմե-

ցին եւ զմի ամ, որ ի գործսն միայն, որ յետ Յովհաննու ի բանդ
մտանելոյն գործեաց, զի Մատթէոս ասէ. «Իբրեւ լուաւ Յիսուս, թէ
մատնեցաւ Յովհաննէս ի բանդ, գնացեալ եկն ի Գաղիլիա» [Մատթ.
Դ 12]: Եւ Մարկոս նոյնպէս ասէ, թէ՛ «Յետ մատնելոյն Յովհաննու եկ
նա ի Գաղիլիա» [Մարկ. Ա 14]: Եւ Ղուկաս ասէ. «Յետ ամենայն
չարեացն, որ գործեաց Հերովդէս, կալաւ զՅովհաննէս եւ եղ ի
բանդի» [Ղուկ. Գ 20]: Իսկ Յովհաննէս գրեաց, որ յառաջ քան զայս
էին, զի ասելն, թէ՛ «Արար զՂուկոս ի գինի» [Յովհ. Դ 46], զայս՝
առաջին նշանս արարեալ: Եւ այս յառաջ քան զմատնելն Յովհաննու
էր: Եւ դարձեալ ասէ. «Եկն Յովհաննէս Սաղիմ՝ առնել մկրտու-
թիւն»²: Եւ այլ բազում բանս ասէ, որ յառաջ քան զմատնելն
Յովհաննու էին:

Արդ, սկսաւ նա գրել զԱւետարանն, որպէս Մովսէսն ի սկզբանն
արարածոց լինելութեան: Այլ, ընթացեալ թեւաւք Հոգւոյն, ըստ
Յովբայ, որ ասէ, թէ՛ «Մի՞թէ երթեալ իցես յակն ծովու եւ մտեալ ի
խորս աստուածային իմաստից», սկսաւ գրել նա, թէ՛

«Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած եւ նոյն իսկ
Աստուած էր Բանն» [Յովհ. Ա 1]:

Մովսէս զյետոյն Աստուծոյ ետես եւ ոչ հանդուրժէր տեսլեանն,
իսկ սա համարձակութեամբ զլանջաւքն անկեալ համբուրէր զՆա:
Անդ, յետ իջանելոյն Աստուծոյ ի լեռնն, ընդունէր զտախտակսն, իսկ
աստ, յետ ամբառնալոյ մերոյ բնութեան յերկինս, իջանէր Հոգին ի
լեզուս Հրեղէնս: Ոչ գրէր ի տախտակս քարեղէնս, այլ՝ ի տախտակս
սրտի, ոչ՝ գիր դատապարտութեան, այլ՝ գիր որդեգրութեան: Վասն
որոյ Աւետարան անուանէ զսա, զի ունի աւետիս՝ զպատճոց ազատու-
թիւն, զմեղաց թողութիւն, զարդարութիւն, զարբութիւն, զորդեգրու-
թիւն, զժառանգութիւն, ընդ Որդւոյն՝ Աստուծոյ ազգակցութիւն:
Եկեալ տայ աւետիս, եթէ Աստուած յերկրի եւ մարդիկ յերկինս՝
խառնորդ հրեշտակաց եւ մարդկան: Երկայն պատերազմ քակեալ
թշնամին եղծեալ եւ զհանդերձեցոց բարութեանցն առեալ յուսով
զաւետիս: Վասն այսր ամենայնի կոչէ Աւետարան:

Արդ, բաժանէ զազգահամարն յերիս կարգս յԱբրահամէ ի
Դաւիթ, զի առ սոսա եղեւ աւետիք աւրհնութեանցն, եւ ի Դաւիթայ ի
գերութիւնն, որ վասն մեղաց գրեցան: Եւ անտի իսկ, զի յամենայն

1 Հմտ. Ղուկ. Ա 1:

1 Տե՛ս Յովհ. Բ 11:
2 Հմտ. Յովհ. Գ 23:

կողմանց յայտնի արասցէ զգալուստ Նորա: [...] ուստի սկսու
 յայտնութիւն գալստեան Նորա եւ յորմէ ազգէ եւ ուր կատարեցաւ, եւ
 որչափ Աստուած խնամակալեաց նոցա ակտեալք եւ արհիւսալք եւ
 մարգարէալք, խրատիւք բարեգործութեամբք, սպառնալեալք գե-
 րութեամբ քա[...բաւք եւ ոչ կարաց դարձուցանել զնոսա ի չարեաց
 յեգիպտոսի], այնչափ՝ զսքանչելիս եցոյց, մինչ խառնիճաղանճ
 ժողովուրդն եգիպտացոց Հաւատացին եւ ելին ընդ նոսա: Եւ
 խառնեցաւ ազգ նոցա եւ յանապատին յետ այն չափ սքանչելեաց
 որթուն եւ Բահաղիմա ծառայեցին եւ առ դատաւորաւքն միշտ ի
 կռակաշտութեան չէին: Մինչեւ յարոյց Աստուած զԴաւիթ արդա-
 րութեան թագաւոր եւ զտաճարն շինեաց եւ երգս նուագարանաց
 կարգեաց: Եւ ամենայն պայծառ զարդուք զտաճարն յարդարեաց, զի
 ի ձեռն այսպիսի պատարագաւք եւ Հրաշալի երգաւք պարտեաց
 զմիտս նոցա՝ թողուլ զկուսս մեռելոտիս եւ պաշտել զԱստուած
 կենդանի: Եւ ոչ կարաց մերժել զնոսա յորթոյն պաշտամանէ: Այլ
 փոխանակ միոյն, որ յանապատին, երկուս որթս կանգնեցին ի Դան եւ
 ի Բեթեղ եւ ի չորեքդիմի պատկերին Մանասէի տաճարին, մինչեւ
 բարկացեալ Աստուծոյ ի սպառ կոտորեաց զնոսա եւ այրեաց զտա-
 ճարն, սակայն ոչ ի սպառ եթող ի ձեռաց, այլ առաւել Հրաշաղոր-
 ծեաց ի Բաբելոն, քան որ յեգիպտոս, մինչեւ զարիւնարու գագանն
 զՆաբոլոզոնոսոր Հաւանեցուցանէր Հնոցին Հրաշիւք: Եւ դարձեալ ի
 կերպս գագանի փոխադրէր զթագաւորն, մինչ ի Հարկէ խոստովան
 լինէր՝ Հաւանեալ մեծի սքանչելեացն: Եւ բազում Հրաշք ի ձեռն
 Դանիէլի գործեաց եւ այնպէս մեծագաւրութեամբ եւ բարձր բազկաւ
 Հանէր զնոսա ի Բաբելոնի ի ձեռն Կիւրոսի, մինչ բազումք ի
 բարբարոսացն ելանէին ընդ նոցա՝ լինել նոցա ի ծառայս եւ
 յաղախնայս: Որպէս ասէ Նաայի, թէ՛ «Եկեացեն ի Բեզ այլազգիք
 մշակք եւ այգեգործք»³, եւ թէ այր «բուռն Հարցեն զգրաւչակէ միոյ
 Հրէի եւ ասացեն՝ տիրեա՛ մեզ, եւ ծառայեցուք քեզ»⁴: Եւ այսպէս,
 մեծաւ յաղթութեամբ Հանեալ սոսա(*), դարձեալ ի կռակաշտութիւն
 դառնային առ անա[...բիոքու եւ ոչինչ աւգտեցան այնչափ՝ զփորձ
 առեալ զաւրութեանն Աստուծոյ. զի եթէ ի կատարեալսն այնչափ
 յանցանս գտանէր ի Յուդայ, որ նահապետն ազգին էր, եւ ի Դաւիթ

- 1 1 քառ
- 2 2-3 տառ
- 3 Հմտ. Եսայի ԿԱ 5:
- 4 Հմտ. Չաք. Ը 23:
- 5 2-3 տառ

եւ ի դատաւորն եւ ի թագաւորն, ի մի՛տ առ, թէ ի խառնիճաղանճն
 զինչ ինչ մնայր, որ ոչ գործէին: Ապա ուրեմն միոյ կարաւտէին
 ամենայն արարածք Միածնին գալստեամբն: Բանդի տկարացան
 արէնք եւ մարգարէք ի բազում վաստակ աշխատեալք վասն մարդոյն
 փրկութեան եւ ոչ զաւրեցին փրկել զնա, այլ առաւել վիրաւորեցին
 անծիւք եւ դատապարտութեամբ, որպէս ասէ առաքեալ, թէ՛
 «Ամենեքեան ընդ անծիւք էին» [Գաղատ. Գ 10]: Ապա ուրեմն
 մեծագուռնին կարաւտէին դեղից, որպէս ասէ առաքեալ, թէ՛ «Որ
 անհնարինն էր արհիւսացն, որով տկարանայր մարմնով, Աստուած
 զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ դատապար-
 տեաց զմեզս ի մարմնի իւրում» [Հռովմ. Ը 3], զի մարմինն այն, որ
 տկարացաւ ի մեղաց ապականութեամբ, ի ձեռն առ Աստուած միանա-
 լոյն զաւրացի եւ յաղթեաց թշնամւոյն զաւրութեամբ Աստուածու-
 թեանն. զի զգեցաւ Տէր մեր զմարմինն, զի ինքն մարմինն ճաշակեաց
 զյաղթութիւնն եւ իմացեալ գիտասցէ զպարգեան. զի թէ Աստուած
 առանց մարմնոյ յաղթէր, զի՞նչ գովեստ լինէր Նմա: Եւ երկուդի
 յայտ արասցէ, թէ ոչ նախանձելով ինչ նախանձեցաւ ընդ Նմա
 զառաջինն լինել Նմա Աստուած: Զի, ահաւասիկ, այս մեծ է, որ
 խոնարհեցաւս Նովաւ, քան զայն, որ մինչդեռ մեծ եւ փառաւոր էր,
 բնակեալ էր ի Նմա, եւ վասն այսորիկ՝ «Ես ասացի, - ասէր,-
 անաստուածք իցէք» [Եփես. Բ 12]: Արդ, եկն Բանն եւ զգեցաւ
 մարմին, զի այնու, որով ըմբռնին, ըմբռնէ, եւ այնու, որ ոչն
 ըմբռնին, ապստամբեաց մարմինն յըմբռնելեաց անտի իւրոց, զի
 Տեառն մերոյ արժանի էր լինել նոսա Հանգիստ ամենայն [...] աց, զի
 առ Նա ժողովեացն եւ տեղի ժամանակ ելից [...] խորհրդոց, զի
 ամենայն տեղեաց առ Նա ընթացին եւ ժողովեալ ամենայն առակաց,
 զի յամենայն մարդոյ թուոցեալ վերասցին եւ ի վերայ Նորա եւ, այն
 Հանգուցեալ, դադարեացեն, զի այս է իմաստութիւն: Զի յանկանել
 այնորիկ, որ անկաւն, անկաւ ընդ նմա այն, որ յարուցանելոցն է զնա:
 Եւ քանզի երէց էր մարմինն Ադամա, քան զչարչարանսն, վասն
 այնորիկ մերկացաւ նա զչարչարանսն, զոր զգեցաւ, քան զյաւելուած
 իմն տկարութեան եղեն ի վերա[յ] առողջ բնութեանն: Արդ, զառողջ
 բնութիւնն, որ զառողջութիւնն իւր կորոյս, զգեցաւ Տէր մեր, զի
 նովաւ գտցէ զառողջութիւնն առ[եալըն՞] բնութիւնն նորա: Զի թէպէտ
 սուրքն աւագակաց յԱնանայ խոցոտեցին, սակայն դեղք Բարբարսին
 փութացան կեցուցանել զմեզ: Պատեցան Նովաւ պատանք ձրի, քանզի

- 1 2-3 տառ
- 2 4-5 տառ

եւ Հարուածք Նորա ճրի են, զի ոչինչ մեղաւ Նա սատանայի, որ էհարն գՆա: Նա ետ ինչ ոչ Բարերարի՞՞, որ բշկեացն գնա: Եմշո՞՞ք իշոյն ծնաւորին կոտորեաց զբազումս, այլ աւճն Եւայիւ կոտորեաց զամենայն ազգս Ադամայ: Արդ, առ Տէր մեր զայս գէն, որով յադ թեաց ախոյեանի, եւ պարտաւորեացաւ աշխարհ, եւ էջ ի մարտ պատերազմի եւ մարմնովն, որ ի կնոջէն, յաղթեաց աշխարհի, յաղթեալ պարտեցաւ ախոյեանն: Մինչդեռ Եկեղեցի ի ծածուկ էր, խորհուրդք քարոզէին գՆա, իբրու Ինքն առ կայր, այլ իբրեւ ինքն Եկեղեցի [յ]այտնեցաւ, դարձաւ սկսաւ թարգմանել զխորհուրդսն [...]: Թարգմանիչսն իւր, որ վասն յայտն[ն]ութեան անդ Նորա լուցին:

[Ասաց]ուք² այսուհետեւ ի բանս Աւետարանին, որ ասէ, թէ' [...]:³ այսպէսն, քանզի սասց, թէ' Յակովբ ծնաւ Յովսէփ՝ զայրն Մարիամու, որում խաւեցեալ էր զԿոյսն, որ ծնաւ գՐրիստոս: Զի մի՞ ախիցեն լսողքն, եթէ ի Յովսէփայ իցէ մանուկն, բառնայ զայսպիսի կարծիս՝ յայտ առնելով զյեղանակ ծննդեանն՝ ստեղծով, եթէ՝

«Մինչ է եւ եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգոյն Սրբոյ» [Մատթ. Ա 18]:

Նաեւ Հեթանոսաց իմաստունք առասպելաբանն, թէ՛ չաստուածք նոցա խոնարհեցան ի խտտղմունս ցանկութեան կանանց եւ ծնան աստուածորդիս: Կամեցաւ յերկոցունց կողմանց բառնալ զկարծիս, վասն այնորիկ ասէ՝ «ի Հոգւոյն Սրբոյ»: Բայց թէ՛ ընդէր պիտոյ եղև խաւան՝ այր ունել զՅովսէփ, պարտ է Հանդիսանալ եւ յայտնի առնել փորք ի շատէ՝ ըստ մերում կարի: Նախ՝ այն իսկ է, զի ի մէջ հրէիցն կին առանց գլխոյ անարգ էր, եւ թէ՛ ինչ պատճառս վնասու գտանէին, դառն դահիճ եղեալ, առանց խուզիւ քարկոծ առնէին, իսկ որոյ Տէր գոյր, էէր ուրուք իշխանութիւն քննել զգործս նորա, բայց միայն՝ այր իւր, յորժամ տեսանէին գնա, զի առանց խուզիւ քարկոծ առնէին: Եւ պարտ էր նմա ի Բեդղահան երթալ եւ անդ ծնանիլ յանտառին եւ անտի ի տաճարն գալ եւ դարձեալ ի յԵգիպտոս փախչել եւ դառնալ յանդրէն, որպէս գուշակեցին մարգարէքն: Զիա՞րդ մարթ էր Կուսի՞ն՝ անտերունջ շրջել ընդ այս ամենայն: Եւ միւս պատճառն Բարսեղ յայտ առնէ, թէ՛ առ ի բազումն չարին կոչեցաւ նա այր Կուսին, զի յորմէ հետէ լուաւ նա յԵսայեայ, թէ՛ «Ահաւասիկ Կոյսն յղացցի» [Եսայի է 14]:

- 1 1 քառ
- 2 3-4 տառ
- 3 1-2 քառ

Յայնմ աւրէ հետէ որսայր զԿոյսն եւ արկանէր ընդ մեղաւք կամ ընդ պատժովք: Յայսմիկ կուրացաւ նա եւ ոչ ծանեաւ, թէ՛ կուսու-թեամբ ունի զյղութիւնն, որպէս սասց ցՅովբ, թէ՛ «Մի՞ տեսցէ զնա [զարուսեակն] անգեղ» [Յովբ Գ 9], եւ Սողոմոն, թէ՛ «Հետս աւճի մի՞ գծեսցէ ի վերայ [վիմի]» [Առակ. Լ 19]: Դարձեալ եւ այլ խորհուրդ բարձրագոյն եւս [նկարես]ցուք, զի Եկեղեցի փոխանակ դրախտին շինեցաւ վասն երկրորդ Ադամայ, զի աւրհնութիւնն, որ ի դրախտին՝ աճել եւ բազմանալ անախտաբար, աստ կատարեսցի ի ձեռն երկրորդիս Ադամայ, զի էէր մարթ լրոյն եղծանել, զի այն աւրհնութիւնն անիծիւք ապականեցաւ ի մեղացն: Արդ, որպէս էին ի դրախտի՞ն Ադամ եւ կինն՝ մերկ ի ցանկութեանց եւ ոչ ամաչէին, զի անեղք էին, զի ամաւթ եւ երկիւղ մեղաց մտին, զի լուեալ զճայն գնալոյ Տեսուն ի դրախտին եւ երկեաւ, զոր ոչ էր կրեալ յառաջ, եւ թաքեաւ յամաւթոյն, զի մերկ էր ի գործոց առաքինութեան եւ անմեղութեան: Սոյնպէս եւ Յովսէփ եւ Մարիամ ի դրախտի Եկեղեցւոյ մերկք ի մեղաց եւ առանց խղճի եւ ամաւթոյ, զի ոչ զիտէին զցանկութիւն, որպէս սասց աւետարանիչն, թէ՛ «Ոչ գիտէր գնա»: Արդ, որպէս անդ ամաւթ չարին եղև աւճն զխորհուրդ, սկզբնաչար աւճին անկելոյ ի բարձանց արկ յականջ Եւայի զղեղ մահուն եւ կապեաց գնա ցանկութեամբ մահուն եւ արտաքսեաց անիծիւք ի դրախտէն եւ ի կենաց փայտէն եւ որոշեաց յԱստուծոյ: Սոյնպէս եւ աստ Գաբրիէլ, փոխանակ աւճին, գայ առ կոյսն՝ բերելով զաւետիս կենաց ի բարձանց: Եւ, գտեալ գնա ի բոցեայ յառնէն, արկանէ ընդ ականջն նորա զկեանսն, որ բղխեաց ի Հաւրէ: Եւ եկ լուծաւ յարգանդ Կուսին՝ անդ, ուր անէծք մահին, եւ արմատացան՝ բերելով զպտաւղ մահուն, զի ջրեսցէ զարմատ անիծիցն եւ ապականեսցէ զպտաւղ մահու նորա: Եւ զի եկն Գաբրիէլ առ Կոյսն աւրհնեալ, որ կարճեալ էր զլսելիսն իւր ի Հրապուրանաց պատրանաց նենգաւորին, զի մի՞ անկցի ի բախսանս ալեաց նորա. զի գիտէր, թէ՛ զինչ անց ընդ առաջին Կուսի, որ ունկնդիրս խրատու նորա: Զի Մարիամ Կոյս սուրբ Հիմն է նորոյ աշխարհիս, զորոյ ոչ քա[յ]քայեաց, արարեն զգիրն գճմարտութիւն նորա: Վասն այսորիկ առաքեցաւ առ նա Հրեշտակն բարձանց եւ աւետարանեաց նմա վասն նոր ծննդեանն, զի բնութիւն նորա սուրբ էր ի չարին [...]: Որպէս մորենին այն առ Մովսէսիւ, որում ոչ ոք երբէք պաշտաւն պղծութեան մատոյց եւ ոչ դրաւեալ պատկեր ի նմանէ նկարեցաւ: Եւ ոչ դիւթին կախար-դութեան Հմայից ի նա սերմանեցաւ վասն տկարութեան ընկութեան

- 1 1 քառ

նորա, որ էր աւրինակ խոնարհութեան Կուսին, յորում ոչինչ ախա
չարութեան բանասրկուին ի նմա գծեցաւ: Վասն որոյ եղեւ այս¹ տե-
ղի բնակութեան Բանին, զի Մնունդ է Նա զարմանալի, որ ոչ թարգ-
մանի, եւ Նովաւ աւարտին ամենայն մարգարէութիւն մարգարէից, եւ
ստուգին քարոզութիւնք առաքելոցն: Եւ ասէ Հրեշտակն՝ «Ողջո՛յն
քեզ, աւրհնեալ դու միայն յամենայն կանայս» [Ղուկ. Ա 42], որ անի-
ծեցան Եւայէ եւ այսր, զի ի ձեռն նորա մտանէ խաղաղութիւն յարա-
րածս, եւ բառնայ թշնամութիւն, որ մտին յԵւայէ, եւ մտանն
կեանքն, որ կլանեն զմահ Եւայի, եւ խաղաղութիւն, որ բառնայ
զթշնամութիւն, եւ աւրհնութիւն, որ ջնջէ զանէծս եւ լուծանէ
զամենայն դատանութիւն: Բայց Կոյսն, իբրեւ լուաւ, ի Հիացման մեծի
եղեւ, զի իբրեւ հուր յամենայն անդամս նորա վառեցաւ, եւ թնդեալ
սկսան ամենայն խլրտմունք խորհրդոց նորա. զի հարցն, թէ կին
չիցէ ողջոյնն այն, որ մի ի դարուց անտի ոչ անկաւ յունկն կնոջ, զի
ճաշակ կենաց փայլէր ի նմա, զի գուշակէր յԱստուծոյ, որ ծագէր
արգանդ նորա, զի իբրեւ զփայլակն զգեցաւ ի նա: Յայնժամ դարձոյց
[...] ք առ Հրեշտակն, զի ստուգեցէ զճշմարտութիւն նորա, զի լուաւ,
թէ արքայ է եւ վախճան ոչ ունի, այլ ոչ եցոյց, թէ ի խորութենէ, թէ
ի բարձրութենէ: Վասն որոյ պահանջեաց ի նմանէ, թէ՛ «Ուտի՛»
գիտացից զայդ, զի զայր ոչ գիտեմ»: Յայնժամ Հրեշտակն մեկնեաց
յայտնապէս, թէ ի նմա կախեալ կան կեանք ամենայն արարածոց
[...] ք ետ զաս նորա, նմանէ սերման, որ անկան ի յերկիր, զի մէկն
[...] ք Բանին նման անձրեւոյ, առանց որոյ ոչ բուսանի հատ, անկաւ ի
նմա պատգամս՝ իբր սերմ: Եւ էջ մեկնութիւն նորա իբրեւ զան(ձր)եւ,
եւ յայտնեցաւ ճշմարտութիւն նորա իբրեւ հատ, եւ կերակրեցան
հնձողք ի կենաց շացէ անտի:

Ասէ՛ «Հոգի Սուրբ եկեացէ ի քեզ, եւ զարութիւն Բարձրելոյն
հովանացի քեզ» [Ղուկ. Ա 35]: Եցոյց, եթէ Որդի է Նա Բարձրելոյն,
եւ նա ասէ՛ «Ահաւասիկ աղախին քո եղիցի ինձ ըստ բանի՛ Բում»
[Ղուկ. Ա 38]: Եւ այս հնազանդութեան խզեալ ելոյծ զկապան
անհնազանդութեան Եւայի: Եւ «մինչ չեւ եկեալ առ միմեանս,
գտաւ,- ասէ,- յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»: Ոչ եթէ Հոգին Սուրբ
ստեղծ զմարմինն, եւ ապա Բանն բնակեաց ի նմա՝ ըստ կարծեաց

երկաբնակացն, այլ միայն մաքրեաց զԿոյսն յամենայն խլրտմանց
մարմնոյ: Եւ ապա Բանն, մտեալ ի մաքուր արգանդին, յարեմէ
Կուսին մաքրեցելոյ շրջաստեղծեաց Իւր մարմին՝ միացեալ յերկուց
անշփոթ խառնուած, եւ անդէն փոխաշրջէր յանապականութիւն:
Որպէս շրջեաց զԶուրն ի գինի ի մէջ թակուկացն, զի զվեց թակուկան
յայտնիս միոյ Կուսին, որ անյայտն էր, վկայս կացոյց. զի ոչ ըստ
բնութեան ի մէջ որթուն շրջեցաւ Զուրն ի գինի, այլ արտաքոյ
բնութեան՝ ի մէջ թակուկացն: Այսպէս եւ ոչ ըստ նմանութեան այլոց
տնկեցաւ որթն ճշմարիտ յարգանդի անդ ամուսնութեան, այլ՝
արտաքոյ բնութեան ի վեր, քան զա[յ]ս եւ զիմաստս, զի որպէս
զառաջին Ադամն ստեղծ ի կաւոյ եւ յաւրհնեալ եւ յանապական
երկրէ, եւ ոչ պիտոյ եղեւ գործակցութիւն ամուսնութեան, այլ
անապականաբար ի պատկեր Աստուծոյ ստեղծաւ յԱրարչէն: Այսպէս
եւ երկրորդ Ադամն առանց գործակցութեան ամուսնութեան ստեղծաւ
աւրհնեալ Կուսէն: Վասն այնորիկ Հրեշտակն նախ եբարձ զանէծան,
որ յ[Եւ]այէ, զի [...] լիցի աւրհնեալ երկիր բանաւոր առ ի յառնումն
երկրորդս Ադամայ: Եւ զի զառաջին Ադամն եկն նա բժշկել, վասն
այնորիկ ոչ ստեղծ զմարմին զայն յերկրէ կամ յայլ իմեք, եւ [ի]
նմին] այլ ոմն Ադամ իցէ, եւ այլ ոմն՝ Փրկիչ նորա, այլ ի նմին
զանդուածոյ ստեղծանէ զմարմինն զայն, զի նոյն իցէ յարմատն եւ
պտաւղ նորա անմահացուցիչ:

Եւ զի ասաց աւետարանիչն, թէ՛ «Ի Հոգւոյն էր ծնունդն»
[Մատթ. Ա 20], զի մի՛ անհաւատ թուեսցի լսողաց, ածէ զՅովսէփ վկայ
բանից իւրոյ. զի թէ ոչ էր ի Հոգւոյն, ոչ հաւանէր այրն այն, որ
վերագոյն էր արդարութեամբ, քան զաւրէնս², վերակացու լինել նմա:
Եւ Հրեշտակն փարատէր զերկիւղն, զի ի մեծի տարակուսի կայր եւ ոչ
գիտէր զինչ գործիցէ, զի յայտնել մահ գործէր Կուսին, եւ պահեին
մեծաւ խղճիւ տագնապէր զնա: Հաճէր հաւանեցուցանէր Մարիամ
զՅովսէփ վասն յղութեան իւրոյ, թէ «Ի Հոգւոյն է»: Պատմէր
զաւետիս Հրեշտակին եւ զյղութեան Եղիսաբեթի եւ զխաղաղն
Յովհաննու եւ զպապանձումն Ջաքարիայի: Եւ այս ամենայն
վկայութիւնք յայտնի էին, եւ զի տեսանէր զերեսս կուսին զուարթ եւ
առանց ամաւթոյ, եւ երբէք ոչ ետես ի նմա խորհուրդ լիտութեան,
խորհեցաւ ի միտս իւր, թէ վերագոյն է Մնունդն այն, եւ ոչ արժան է
ինձ հայր անուանել նմա, կամ գուցէ կորուսանիցեմ զանուն

1 մտազոտմ աք
2 1 քառ
3 1 քառ
4 3-4 տաս

1 1 քառ
2 մտազոտմ զարեւմ

կուտորդույն, եւ ծածկի ի բազմաց հրաշափառ Մնունդ նորա: Արդարութիւն գայն համարեցաւ ի բաց կալ ի նմանէ ի մեծի ափ եղեալ: Վասն այնորիկ ասաց հրեշտակն, թէ՝

«Մի՛ երկնչիւր, զի ծնունդ նորա Փրկիչ աշխարհի է, զի նա փրկեացէ,- ասէ,- զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց» [Մատթ. Ա 21]:

Վասն այսր ամենայնի խորհեցաւ արդարութեամբ արձակել զնա, զի թէ գիտէր, թէ չէ ի Հոգւոյն, ոչ էր նմա արդարութիւն լուեւալյն արձակել ըստ հրամանի աւրինացն. «Զեռք քո,- ասէ,- նախ [...] բն արասցեն քարկոծել զնա»², զի էր արդար աւրէնքն զ[...] թ ուղիւ ըստ գործոցն հատուցանել: Եւ ընդէ՞ր ոչ յառաջ յայտնեցաւ հրեշտակն կամ Մարիամ, այլ երկիւղէր միգուցէ, ո՞ր հաւատայց, եւ պատժել[ոցի] իբր Զաքարիան: Այլ յորժամ ի խոյզ եղեւ իրացն՝ յահէն ըմբռնեալ, ապա հրեշտակն փարատէր զերկիւղն. «Մի՛ երկնչիւր,- ասէ,- զի որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն է»: Եւ չասաց, թէ յղացեալն, այլ՝ ծնեալն, յայտ արար զկատարելապէս առնուլ զմարմինն, եւ ոչ որպէս մերս ի Խ աւուր կատարի ամենայն զգայութեամբ, այլ՝ ամենայն պիտոյիւք առ զմարմինն կատարեալ զգայութեամբ ե՛ւ շնչով, ե՛ւ Հոգւով անդ ի ստեղծմանն, որպէս ասէ սուրբն Բարսեղ:

«Մնցի,- ասէ,- Որդի, եւ կոչե[ա]ցես զանուն նորա Յիսուս» [Մատթ. Ա 21]:

Այսու հաղորդ արար զՅովսէփ ծննդեանն այն, որ ոչ ինչ ունէր հաղորդութիւն անուանադրութեանն, արար զնա Տէր, զի հաւրէ աշտիճան կոչել անուան որդւոց: Արդ, որպէս Աստուած հաղորդ արար զԱլքամ արարչութեանն յանուանակոչութեան եղելոց, որ ոչ ինչ էր կցորդ արարչութեանն, սոյնպէս եւ աստ ասէ՝ «Կոչեցաւ զանուն նորա Յիսուս», զՈրոյ անուանակոչութիւն Մովսէս նկարագրեաց յառաջագոյն. մինչ հանդերձեալ էին ժողովուրդն մտանել յերկիրն աւետեաց, փոխեաց զՈվսէէ Յեսու, զի նա փրկեաց զժողովուրդն յամենայն պատերազմաց, իսկ սա՝ ոչ ի պատերազմաց, այլ՝ ի մեղաց եւ ի դ[ժո]խոց: Եւ այսու յայտ արար, թէ Աստուած է ծնեալ Մանուկն, զի Աստուծոյ միայն է ի մեղաց ազատել զմարդիկ: Նա յետ վախճանին Մովսէսի մկրտեաց ի Յորդանան եւ ժառանգեցաւ զերկիրն աւետեաց: Եւ այս յետ վախճանի աւրինացն մկրտեաց ի Յորդանան եւ ժառանգեցոյց զարքայութիւնն: «Նա փրկեացէ,- ասէ,-

1 3-4 տառ
2 Հմմտ. Բ Օրէմ. ԻԲ 21:
3 3-4 տառ

զժողովուրդ իւր ի մեղաց»: Եւ անդէն կնքեաց բան իւր վկայութեամբ մարգարէին. ասէ՝

«Այս ամենայն եղեւ, զի լցցի, որ ասացաւն ի Տեառնէ [...]՝ արէն, այլ յԱստուծոյ՝ ի ձեռն Եսայեայ. «Ահաւասիկ Կոյսն յղացի եւ ծնցի Որդի»» [Մատթ. Ա 22-23] ամենայն ասելովն: Միով բանիւ յայտ առնէ զանբաւ շնորհսն Աստուծոյ ի մարդիկ հեղեալ, զի թէ Որդին Աստուծոյ մարդ եղեւ, ապա ամենայն ինչ տուաւ մեզ, ազատութիւն ի մեղաց, որդեգրութիւն, արդարութիւն, երկնից արքայութիւն, յԱստուած միաւորութիւն: Եւ այս ամենայն անթիւք պարգեւք տուան մեզ, զի լցցի ասացեալն ի Տեառնէ: Եւ մի՛ կարծիցես, թէ այժմ ինչ եղեւ. անդուստ ի վերուստ երկնէր գայր խորհուրդ մերոյ փրկութեանն: Որպէս առաքեալ ի բազում տեղիս շանայ յայտնի կացուցանել, թէ անսկզբնաբար էր նկարագրեալ առ Աստուծոյ մեր փրկութիւնս եւ ծածկեալ յամենայն ազգաց առ Աստուծոյ, որ զամենայն առնէ: Արդ, զբանէ, նայեաց, յուշ առնէ նմա, զոր միշտ ընթեռնոյր, զի թէ մոռացի կամ թերասցի ի բանէն, որ հաստատեացի, զի թէպէտ բերանն յԵսայեայ² էր, որ խաւսէր, այլ բանն Աստուծոյ էր, որ ազդէր ի նա:

«Կոչեցես զանուն նորա Էմանուէլ» [Մատթ. Ա 23]:


Զի թէպէտ եւ ոչ եղաւ այս անուն, այլ յորժամ իրքն արդեամբք ի գլուխ ելին, չէր պիտոյ անուանակոչութիւնն: Վասն որոյ, հաւանեալ Բանին Յովսէփայ,

«Առ,- ասէ,- յինքն, եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զՈրդի» [Մատթ. Ա 24]: Արդ, «մինչ»՝ ոչ եթէ սահման ինչ է, այլ Գրոց սովորութիւն է. ասէ՝ «Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշխարհի» [Մատթ. ԻԸ 20]: Դարձեալ՝ «Մինչեւ դիցին թշնամիք ի ներքոյ ոտից նորա» [Սաղմ. ՃԹ 1]: Բայց եւ այլ իմն խորհուրդ մեզ յայտնէ, զի յաւրէ, յորմէ բնակեաց Բանն ի նմա, բարձաւ ամենայն խորհուրդ մար[դ]կութեան յերկրոցունց, զի մտածութիւն անգամ խորհրդոց ոչ ծնանէր ի նոսա, զի որպէս գազանաց չարութիւն բարձաւ ի տապանին ի կենդանեացն՝ ի պատճառս նոյն այն, որ անձեաց զամենայն խլրտմունս բնութեան մարմնոյ ազատութեամբ իւրով: Սապէս բռնութիւն այնորիկ, որ բնակեալ էր յարգանդ նորա, սանձեաց զցանկութիւն սոցա, մինչեւ ծնունդն իւր իբրեւ կատարեցաւ սահման

1 1-2 բառ
2 մտազրում յԵսայեայ

բունութեանն ի ծնանելն, զմինչն եղ ի միջի, եւ յայնմհետէ ազատութեանն իւրեանց էր սրբութիւնն:

(Զարուճակելի)



ՎԱՐԻ ՍՐԲՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՍԱՄՈՒԷԼ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ,
ԷԴՈՒԱՐԴ ՍԱՖԱՐԵԱՆԻ ԵՒ
ՄԱՐԹԱ ԱՐԱԲԵԱՆԻ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄՕԲԼԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ, ՆՐԱ
ՀԵՏ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԱՐՈՒԳԷ ԾԳՆԱԴՈՐԻ ՎԱՐՁԸ
(որտեղ յիշատակում է Նաեւ նրանց տօնակից
բարեկամ պարսից եպիսկոպոս սուրբ Մելիտոսը)¹

Եկեղեցու լուսաւորների մէջ մեծը, մեր սուրբ Լուսաւորչի նման-
կիցն ու ազգակիցը՝ Յակոբը՝ մականուանուած Ջգօն, ըստ այլոց՝ Իմա-
տուն եւ Մեծ, պարթեւական ազգից էր, մեծն Գրիգորի Հօրաքոյր Խոսրո-
վուհու՝ Անակի քրոջ որդին:

Արդ, երբ Անակ Պարթեւն իր ողջ ընտանիքով բնաջնջուեց Հայոց
Խոսրով արքային՝ Տրդատի Հօրը դաւելու պատճառով, մանուկ Գրիգորի
պէս նրա ցեղակից Յակոբը եւս դայեակների ձեռքով փախցուեց Կապա-
դովկիայի Կեսարիա քաղաքը եւ այնտեղ դայեակի մօտ սնուեց Հաւաթ-
քով եւ բարեպաշտ վարքով: Իսկ միւս մանուկը՝ Լուսաւորչի եղբայրը՝
Սուրէն անունով, մանկաբարձների կողմից Պարսկաստան տարուեց եւ
դաստիարակուեց Խոսրովուհու՝ Յակոբի մօր ձեռքի տակ, որի պատճա-
ռով նախնիների մէջ կարծէք է եղել, թէ Սուրէնը Յակոբի եղբայրն է
կամ թէ Յակոբն է Լուսաւորչի եղբայրը: Յակոբը Սակղէն անունով մի
մեծահասակ քոյր ունէր, որը նրա Հետ էր ապրում Կեսարիայում: Երբ
փոքր-ինչ մեծացաւ, քոյրը բռնադատելով նրան իր Հետ տարաւ Պար-
կաստան, որտեղ, ամուսնանալով, ծնեց Հրաչեային: Եւ ինչպէս ասում է
թէ Սուրէնը թագաւորել է Ծնեաց երկրում² եւ Դարբանդում³, այնպէս էլ
Հրաչեան թագաւորել է սկիւթացիների⁴ կամ գոթերի⁵ վրայ: Իսկ Յակո-
բը, մեծանալով, չկամեցաւ մնալ պարսկական արքունիքում, այլ, ման-
կութիւնից ստացած ախորժեղի սնունդի՝ աստուածային պատուիրանների
Համար Հոգ տանելով, թողեց իր ազգականներին ու աշխարհի բոլոր
առարկայապաշտութիւնները եւ, իբրեւ անհայր, անմայր եւ օտար, ընտ-
րեց միայնակեցութիւնը: Այս նպատակով գնաց Ասորեստանի եւ Ասորա-
կան Միջագետքի կողմերը, առանձնացաւ մարդկանց անձանօթ լեռնե-
րում ու անտառներում՝ ոչ Հեռու Մծրին քաղաքից:

Այնուհետեւ Յակոբն առանձնացաւ անապատում: Նա բնակուում էր

1 Այս եւ յաջորդ վարքերը որոշ կրճատումներով աշխարհաբարի են վերածուած
«Լիակատար վարք եւ վկայաբանութիւնը սրբոց» ժողովածուից (Վենետիկ,
1810):

2 Ծնեաց երկիր — Չինաստան (սակայն համանուն երկրամաս է եղել Բարձր
Հայքի հիւսիսում)

3 Դարբանդ — գիւղ Սիւնիք նահանգում

4 սկիւթացիներ — մերձսեւծովեան ժողովուրդ

5 գոթեր — արեւելագերմանական ցեղեր

բարձրաբերձ լեռների կատարներում: Գարնանը, ամռանը եւ աշնանը
անօթեան էր մնում Հովանի ունենալով միայն անտառներն ու երկնքի
ծածկոյթը, իսկ ձմռանը բնակուում էր փոքրիկ խուղի նման մի այրի
մէջ: Նրա կերակուրը ոչ թէ աշխատանքով սերմանուածներից ու
տնկուածներից էր, այլ՝ ինքնաբոյս տնկիներից, քանզի Հաւաթքում էր
վայրի ծառերի պտուղներ, բանջարեղէն եւ դրանցով բաւարարուում Հրա-
ժարուելով կրակի ծառայութիւնից: Հանդերձն այժի կոշտ մազեղէնն էր,
թիկեցը՝ նոյնպէս, քանզի ընդունայն էր Համարում բուրդը:

Եւ, այսպիսի խստամբերութեամբ ճնշելով մարմինը, Հոգով պա-
րարտանում էր, մտքի տեսողութիւնը պայծառացնելով Աստուծոյ Հո-
գուն անբիծ Հայելի էր լինում եւ, ըստ առաքեալի, ինչպէս հայելու մէջ
տեսնելով Տիրոջ փառքը, նոյն պատկերով նորոգում էր փառքից
փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգով) [Բ Կորնթ. Գ 18]: Այսպէս, Հանապա-
գորեայ աղօթքով աստուածամերձ ընտանութիւն ձեռք բերելով, ինչ որ
խնդրում էր Աստուծոց, անմիջապէս տրուում էր նրան: Ուստի եւ մարգա-
րէաբար կանխապէս իմանում էր լինելիքի մասին եւ Սուրբ Հոգուց ըն-
դունում էր սքանչելագործ զօրութիւնը: Եւ ո՞վ կարող է պատմել Աս-
տուծոյ սուրբի ողջ տաժանակեցութիւնը, քանզի երբ ծերացած Հասա-
կում վախճանուեց, մարմնաւոր լինելով անմարմին Համարուեց: Նրա
տեսքը Հրեշտակի նման էր՝ պայծառ, շնորհալի, ցամաքած: Նա երբէք
զրաստի վրայ չէր նստում, այլ ողջ կեանքը բոկոտն ապրեց: Նրա միտ-
քը, մշտապէս դեգերելով, գտնուում էր սերովբէների բանակներում մտքի
աչքը չհեռացնելով Բրիստոսի դէմքից: Եւ այնքան անհատում էին
նրա մտածումներն Աստուծոյ մասին, որ դեւերի ոհմակը, պաշարելով,
անզբաղ չէր գտնում նրան, որպէսզի մօտենար: Ապա նրան մարգարէու-
թեան Հոգի տրուեց: Իսկ նրա կենցաղավարութիւնը՝ լեռների կատարնե-
րում ու ժայռերի նեղ ծերպերում, նահատակութեան վկայական Հանդէս
էր դառնում: Եւ Աստուած մեծ ներքին մխիթարութեամբ սփոփեց նրա
սիրտը՝ տեսնելով նրա սոսկալի ճգնութիւնները, սուրբ մարմնի անխնա-
մութիւնը եւ անձածկոյթ վայրում ցրտի ու շոգի պատճառած այն
դժուարութիւնները, որոնց պատճառով Հանապազ մեռնում էր: Իսկ նա
իր աղօթքներում այսպէս էր ասում.

«Մի է Աստուած՝ ամենալուսաւոր ամենակալ, Մի է [Նրա]
իշխանութիւնը՝ ամենայն կարիքից գերծ, եւ զարմնալիների
գարմանքն է, քանզի ոչնչից ստեղծեց բոլոր գոյաւորներին: Մի՞թէ
Զեզանից բացի ուրիշ աստուած գոյութիւն ունի, ո՞վ Հզօր, Փրկիչ,
Ազատարար, Զաւիչ, Բժշկապետ, Անոխակալ, Բարի եւ Ռսամակալ
ոչ միայն արդարների, այլեւ՝ մեղաւորների եւ բոլոր գոյաւորների:
Ո՞վ Մեծը ու Ծաւակիցը, որ մեռար մեղաւորների համար, եւ ո՞վ
Անկարիքաւորը, որ խաչի վրայ մի բաժակ քրի կարօտ եղար, ու ոչ

ոք չտուեց: Եւ ոչ միայն այսքանը, այլեւ ջրի փոխարէն Ջեզ, որ ովկիանոսների ստեղծողն էս, լեղի եւ քացախ մատուցեցին: Ո՛վ Դու, որ անհաս մեծութիւն էս, եւ անարգ յետին ծառան ապտակեց Ջեզ: Դու անմար արեւ էս, եւ ձորձ գցեցին սուրբ գլխիդ: Դու նախքան արարածների լինելութիւնն ամէն ինչի մասին մէկ առ մէկ գիտեցողն էս, եւ խաչ հանողներն ասում էին, թէ՛ «Մարգարեացի՛ր, ո՛վ Յիսուս, թէ ո՛վ էր, որ հարուածեց Ջեզ»: Դու, որ անծքով կապուածների արձակողն էս, եւ Ջո անկապելի ոտքը, որը ծովը չկարողացաւ թրջել կամ սուզել, ահա՛, հրեաների կողմից բեւեռուէ է խաչին: Դու, Ադամի կողոսկրը վերցնելով, կնոջը ստեղծեցիր, եւ ահա՛, Ջո կողքից խոցուեցիր, սակայն խոցողին դարձեալ թողութիւն շնորհեցիր, որովհետեւ նա պատուածքից տեսաւ Մարմնիդ վարագոյրով շղարշուած աստուածային լոյսը: Այլեւ պատանի մէջ ես փաթաթուում եւ, որպէս Դիդատոսի կողմից մահուան դատապարտուած, յանձնուում ես Ջո ստեղծած հողին: Դո՛ւ, Աստուած, մշտնջենաւոր լինելով՝ այնքան ես համբերում մեզ փրկագործելու համար, որ մինչեւ իսկ մահուան անպարտականդ մահուան խաչի վրայ զոհում ես Ջո Անձը: Իսկ ինձ, որ դատապարտուած եմ մեղքերով, թոյլ չես տալիս լեռների կատարներում սառնամանիքից ոչնչանալ, այլ իմ հոգու սպանողիս ողորմում ես եւ բարեխառն ամպով հովանի անում: Մի՛ խնայիր ինձ, Տէ՛ր, որովհետեւ մարմինս հոգուս ներհակ է եւ Ջեզանից հեռացնող ու Ջո բարերարութիւններին հակընդդէմ»:

Մինչ սուրբ Յակոբը լեռան կատարին այս աղօթքն էր անում, նրան յայտնուեց Տէրն Իր Հրեշտակներով, որոնք փարուեցին երանելու սուրբ պարանոցին եւ ասացին.

—Ո՛վ երջանիկ, խնայիր մարմինդ, քանզի տկար է եւ ոչնչով չի մեղանչել: Իսկ մենք աղաչում ենք Տիրոջը քեզ Աստուծոյ սուրբիդ Համար:

Եւ Տէրն այսպէս ասաց Հրեշտակներին.

—Ահաւասիկ, տեսնո՞ւմ էք, անմարմին Հրեշտակներ, այս մարմնաւոր Հրեշտակին, որ Իմ գութը շարժեց իւրաքանչիւր մարդու Հանդէպ:

Իսկ Յակոբին ասաց.

—Իմ սիրելի՛ որդեակ, ահաւասիկ Ինձ ուղղուած քո խնդրանքները թող կատարուեն:

Եւ սուրբ Յակոբը պատասխանեց.

—Ձեմ խնայի իմ Հոգեւայան մարմինը, մինչեւ որ կեանքս աւարտուի: Իմ կեանքի օրերում չպիտի յագեճամ Հաց ու ջրով: Չարմանալի՛ն

այն չէ, որ Դու մեծամեծ Հրաշքներ ես գործում, քանզի Աստուած ես, այլ՝ այն, որ ինձ՝ մեղաւորիս, ողորմում ես:

Ապա Տէրն Իր Հրեշտակների գնդի Հետ վերացաւ երկինք, իսկ երկու Հրեշտակների (որոնց յետագայում տեսաւ Կոստանդիանոս բարեպաշտ թագաւորը) Հրամայեց պահպան կանգնել սուրբ Յակոբին:

Իսկ սուրբ Յակոբը Տիրոջ մեկնելուց յետոյ, լեռան կատարին արտասուելով, բարձրաձայն գոչում էր ողբալով: Եւ մինչեւ իսկ զազաններն ու թռչուններն այդ բարձր աղաղակից Հաւաքուեցին եւ ակնապիշ նայում էին սուրբին: Իսկ նա ձեռքով իւրաքանչիւրին Հրամայեց գնալ իր տեղը, ապա ինքն իրեն ասաց. «Վա՛յ քեզ, տես, որ անասունները պահում են ընութեան սահմանուածը, իսկ դու ամբարտաւանութեամբ փոփոխում ու այլանդակում ես: Արդ, ո՞ր խաւարն ես գնալու...»: Այսպիսի շատ այլ թերութիւններ էր վերագրում իր սրբամաքուր անձին եւ Տիրոջն այսպէս աղաչում.

«Տէ՛ր Յիսուս, օգնի՛ր որբացածիս, Դու, որ համբարձուեցիր Հօր մօտ: Ո՛վ պիտի օգնի ինձ, քանզի այժմ Եւայի օձը Ջո՛ ինձ ուղղուած մխիթարական խօսքը լսեց եւ ինչպէս նախաստեղծին, այնպէս էլ ինձ է սպասում: Ջանի որ մարմին ունեմ, ուստի բազմաթիւ կորստաբեր գէնքեր կգտնուեն սրանում, ինչպէս որ սուրբերից շատերին աշխատանքի պտուղներից անմասն թողեց եւ դեռես պատերազմում է: Եւ արդ, Տէ՛ր իմ, զարհուրում եւ դողում եմ նրա նետերից, քանզի որտեղ էլ սկսում եմ պահ տալ ինձ՝ Աստծուդ տաճարիդ, նա կամենում է յափշտակել, ինչպէս Ադամին: Օգնի՛ր ինձ, Տէ՛ր, եւ առաջի՛ր Ջո Սուրբ Հոգին, Որը, հրեղէն Աստուածութեամբ իջնելով առաքեալների վրայ, ախտասպան հուր խմցրեց, եւ, ըստ Ջո խօսքերի, նրանք այլեւս այս աշխարհից չէին, քանզի նրանց միջի ախտը ոչնչացաւ: Բարերար՛ր Տէր, թող Ջո Սուրբ Հոգին չհեռանայ՝ ինձանից, մինչեւ որ գամ Ջեզ մօտ, որպէսզի նոր առագաստի պատմուճանը մաքուր մնայ, եւ թեւաւոր օձի այքը չնկատի ինձ: Ինձ Ջո պատուիրանները մինչեւ վերջ կատարել՝ արժանացրու եւ Ջո անուան համար, ո՛վ իմ Տէր Յիսուս Ջրիստոս, ինձ գորութիւն՝ տուր: Իսկ ես ի՛նչ պիտի տամ փոխարէնը, բացի այն, որ ձկնութեան բաժակը պիտի խմեմ եւ փառք տամ Ջո անուանը այժմ եւ յաւիտեանս յաւիտենից»:

Ապա երանելին, մարմինը խոնարհեցնելով, ծնրադրում էր եւ գոհանում Տիրոջից, Ում տեսաւ բաց աչքերով: Եւ այն Հրեշտակը, որ նրան իրրեւ պահպան տրուեց, մօտեցաւ ու քաղցրաձայն ասաց. «Ո՛վ երանելի Յակոբ, Տէրն այսպէս է ասում. «Ջո աղօթքի խնդրանքները կկատարուեն, եւ այսուհետեւ Հրաշագործ կլինես, քեզ առաքելական շնորհ կտրուի, եւ քո կեանքը Հրեշտակների Հետ կլինի, իսկ դեւերի խաբէու-

Թիւնները քեզանից բոլորովին կհեռանան»¹: Այս լսելով՝ սուրբ Յակոբ զոհոթիւն յայտնեց Ամենասուրբ Երրորդութեանը: Եւ ողջ ձմեռն անկացրեց երկարածիգ աղօթքների եւ ծովի մէջ՝ նմանելով մեծն Մովսէս մարգարէին, որ Տիրոջ պատուիրանները ճգնելով ընդունեց: Քանզի Տէր Յակոբին էլ յետագայում պէտք է ազգերի պատգամատու դարձնէր՝ պարծանս Իր փառաւորեալ անուան:

Այնուհետեւ Տիրոջ Հրեշտակի նման նա իջաւ այն լեռից՝ դիմելով Մծբին քաղաքի սահմանները՝ Հանդիպելու սուրբ այր Մարուգէ կոչուած վանահօրը, որը Հոգեւոսն էր ու մարգարէութեան շնորհ ունէր եւ միայնացել էր մի քարայրում: Ծանապարհին ասորիները, ձայն տալով մի մեանց, Հաւաքուեցին նրա մօտ՝ իրրեւ լեռնակեաց ճգնաւորի: Իսկ նա անխօս անցաւ-զնաց դէպի Սաթիթմա կոչուած գետի ակունքը: Ապա քաղցրալուր բարբառով ձայնեց գետի այն կողմում՝ աչքիներում աշխատող գիւղացիներին.

-Ո՛վ այգեգործներ, որտե՞ղ է գտնուում այս գետի անցուղին:

Այգեգործները, տեսնելով նրա անշուք տեսքը, ծաղրելով պատասխանեցին.

-Ճգնաւոր մէկն ես, ջրերի վրայով զնալ չե՞ս կարող:

Այն ժամանակ սուրբը Հանեց աղաբողոնը¹, նաւակ սարքեց եւ անցաւ գետի վրայով: Ապա աղաբողոնը զցեց ցամաքին, եւ ջրերի ցայտումից տաններկու արմաւենի առաջացաւ: Իսկ յիմարացած ականատեսները բոլորովին չզարմացան ու չճանաչեցին Աստուծոյ սուրբին: Դրանից յետոյ զնաց նրանց աշխատելու վայրը, ողջունեց եւ ասաց.

-Այդ ի՞նչ եք մշակում:

Նրանք ծաղրելով պատասխանեցին.

-Փուշ ինչպէս Իսրայէլի այգում:

Եւ Յակոբն ասաց.

-Թող փշո՛տ մնայ, մինչեւ այգու Տէրը գայ:

Եւ որքն անմիջապէս փշաքեր դարձաւ, իսկ այն այգին, ըստ սուրբի խօսքի, մնաց փշոտած՝ առանց պտուղ տալու: Բայց նոյն որթի տերեւները, որպէս նշան, սաղարթաւորում էին... Իսկ երանելին, ճանապարհ ընկնելով, Հանդիպեց մի միայնակեացի, որի անունը նոյնպէս Յակոբ էր: Եւ որովհետեւ այդ այրը կորովի ճգնող էր, նրա մօտ քառասուն օր դադար առաւ: Այնուհետեւ եկաւ սուրբ Մարուգէին ողջունելու եւ նրա մօտ անցկացրեց ուրիշ օրեր եւս: Զրուցելիս սուրբ Մարուգէն ասաց, որ այդ կողմերի բնակիչներից շատերը թէպէտեւ Հաւատքի են եկել, ս-

կայն նրանց մէջ կան նաեւ անհաւատութեան նշաններ, մինչեւ իսկ ծաղրում են Սուրբ Գիրքը, առաւել եւս՝ ջրհեղձը եւ սուրբ Խաչը խորհրդանշող Նոյեան տապանի պատմութիւնը, քանզի ասում են, թէ նոյնիսկ տապանի կառուցման տեղն անյայտ է. սակայն տապանը զոյութիւն ունի, եւ ոմանք ասում են՝ Կորդուաց լեռներում է, միւսները՝ Մասիս լեռում է, որն Արարատեան գաւառում է գտնուում:

Այնժամ սուրբ Յակոբը, Հրաժեշտ տալով սուրբ Մարուգէին, դժուարութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Խաչը խորհրդանշող Նոյեան տապանը՝ նրանից մի կտոր գտնելու եւ բերելու Համար իր ամուլակցի մօտ: Եւ ինչպէս որեւէ աստուածային գործ չէր կատարում առանց այն Հրեշտակների մասնակցութեան, որոնք սպասաւորում էին իրեն, այնպէս էլ այժմ նրանց առաջնորդութեամբ Հասաւ մինչեւ Արարատեան գաւառ: Բայց նրա ելքը Մասիս սար չկայացաւ, որովհետեւ երբ յոգնեց ու քնեց լեռան ստորոտում, Տէրը, խնայելով իր սիրելի սուրբ Յակոբին, կանխեց նրա վերելքը դէպի լեռան կատար, ուր գտնուում էր սառցապատ տապանը. այլ Հրեշտակը, տապանից մի կտոր վերցնելով, դրեց սուրբի գլխատակին: Երբ Յակոբն արթնացաւ, Հասկացաւ կատարուած խորհուրդը եւ զոհացաւ Աստծուց: Ապա, վեր կենալով, ուրախութեամբ վերադարձաւ իր Հետ բերելով օրհնուած փայտը, որը խաչի կերպարանք ունէր:

Երբ նա մօտեցաւ Արտամետ գիւղին, որ Մասիսի ստորոտում էր (Տոսպ գաւառում), ճանապարհին մի աղբիւր տեսաւ, իսկ աղբիւրի մօտ՝ լուացուող աղջիկների եւ կանանց, որոնք նրանից չակնածեցին ու չձածկեցին իրենց սրունքները, այլ, արհամարհելով նրան, անամօթաբար անխռով էին, իսկ ոմանք նոյնիսկ ծաղրեցին Աստուծոյ սուրբին: Եւ սուրբն անիծեց աղբիւրը, որն անմիջապէս ցամաքեց, իսկ աղջիկների մասերը պատուածների մազերի նման սպիտակ դարձրեց: Այդժամ Հաւաքուածների բազմութիւնը, տեսնելով նրա գործած Հրաշքները, ընկաւ նրա ոտքերը: Իսկ նա, Հանելով խաչը, կրկին բխեցրեց աղբիւրը, սակայն աղջիկների մազերը չբժշկեց՝ ի յիշատակ իրենց մեղքերի:

Այնուհետեւ սուրբ Յակոբը եկաւ ասորիների երկիր՝ Մծբին քաղաք, եւ Մարուգէին տուեց խաչանշանակ տապանի մասը: Մարուգէն, տեսնելով, շատ ուրախացաւ, վերցրեց-դրեց աչքերին եւ Համբուրեց: Նա նաեւ տապանախաչից խնդրեց փրկել իրեն այն կրակի Հեղեղից, որ Տիրոջ գալստեանն է լինելու՝ ասելով.

-Դու այն գալստեան կարապետն ես եւ ծովացած Հրեղէն գետերի վրայով արդարներիս Աստուծոյ մօտ Հասցնող նաւակը:

Ապա Մարուգէն օրհնեց արժանաշատ սուրբ Յակոբին՝ ասելով.

-Թող Տէրն ընդունի՛ ջո աշխատանքը, եւ օրհնեալ լինես մեր Տէր Աստծուց:

¹ աղաբողոն - թիկնոց

Այնուհետև նրանք շուքով Հաստատեցին սուրբ վայրը եւ միաբան սաղմոսերգութեամբ ու երկարածիզ աղօթքով փառաբանեցին Աստծուն:

Այս տապանի կտորի միջոցով եւ սուրբ Յակոբի շնորհի քաղաքում մի ուրիշ, առաւել Հրաշալի ու փառաւոր Հրաշք եւս կատարուեց.

Մի մարդ, նախանձելով Մծրին քաղաքին, գնաց պարսից արքայի մօտ եւ ասաց.

—Ասորիների երկիրը Լցուել է քրիստոնեաներով, եւ ո՛չ աւազանի, ո՛չ զօրք եւ ո՛չ էլ զօրավար գոյութիւն չունեն: Զո անյաղթ թագաւորութիւնն արհամարհում են եւ հռոմէացիներին օգնում:

Երբ Շապուհ արքան այս լսեց, ժողովեց պարսկական զօրքերը եւ մեծաթիւ բազմութեամբ եկաւ ասորիների երկիր ու պաշարեց Մծրին քաղաքը, որտեղ գտնուում էր նաեւ սուրբ Յակոբը՝ տապանի կտորն իր մօտ: Պարսիկները, քաղաքի շուրջ գետի հունը փոխելով, թուլացրին պարսպի մի կողմը. ուստի եւ քաղաքը վտանգուել էր, եւ մօտ էր նրա կործանումը: Այդժամ քաղաքի զօրքը եկաւ—ընկաւ սուրբ Յակոբի ոտքերն ու ասաց.

—Մ՛կ տէր եւ Աստուծոյ սուրբը, օգնիր մեզ, քանզի անօրէն պարսիկների զօրքից մեզ բոլորիս ոչնչացում է սպասուում:

Յակոբը, տեսնելով նրանց մեծամեծ աղերսները, ջերմագին արտասուքները, աղօթքներն ու Հաւատքը, վեր կացաւ, վերցրեց տապանի սուրբ կտորը եւ ելաւ—կանգնեց պարսպի վրայ՝ զօրքերին դէմ—յանդիման: Ողջ քաղաքն ակնապիշ նրան էր Հետեւում... Ապա, յաղթութեան նշանը պահելով իր լուսանշոյլ դէմքի առջեւ, լուռ ու անշարժ շուրթերով եւ արտասուխառն աչքերով սկսեց Աստծուց Հայցել, որ քաղաքը փրկի անօրէններից, քանզի բազմամբոխ ժողովրդի՝ տղաների ու երիտասարդների աղաղակն ալեկոծում էր իր սիրտը:

Եւ ահա, պարսից արքային մեծ նշան երեւաց. նա տեսաւ սուրբ Յակոբին՝ իրրեւ մի զօրաւոր թագաւորի, եւ շուրջը՝ այրուծիի բազմութիւն, քանզի երկնաւոր զօրքը Յակոբին օգնութեան էր եկել: Եւ արքան կանչել տուեց այն մարդուն, որը յորդորել էր արշաւել այդ քաղաքի վրայ, եւ ասաց.

—Մ՛կ մարդ, ինչո՞ւ ինձ խաբեցիր՝ ասելով, թէ այստեղ ո՛չ աւազ կայ, ո՛չ էլ՝ զօրք: Ահաւասիկ, այստեղ տասներկու հեծելազօրով շրջապատուած թագաւոր եմ տեսնում: Դու կամենում էիր ինձ վերացնել երկրից, ուրեմն ես քեզ կվերացնեմ,— եւ Հրամայեց զօրքի առջեւ սպանել նրան:

Այդ ժամանակ պարսիկները, իրենց խորհուրդներում խուճապահարուելով, ոչ մի ելք չէին գտնում, եւ նրանց բանակում խռովութիւն ընկաւ: Իսկ սուրբը, Հասկանալով Տիրոջ Հրաշքը եւ խնայելով մարդկանց,

որպէսզի թշնամուն վանելիս երկու կողմից էլ զոհեր չլինեն, խնդրեց Աստծուց, որպէսզի պարսկական ձիերի երամակի վրայ պիծակներ ուղարկի: Եւ անմիջապէս, ինչպէս ուժգին Հողմը, բանակի վրայ Հասան պիծակների, բոռերի, գոռեխների եւ մեղունների պարսերը, որոնք ձիերին կապալոյծ արեցին, իսկ հեծեալներին Հետիոտն սուրահանդակի վերածեցին: Եւ այսպէս մագապուրծ թագաւորն ու իր զօրքը դէպի իրենց երկիրը ճողպրեցին: Զաղաքացիները, տեսնելով այս անպատում սքանչելիքները, փառաւորեցին Աստծուն եւ այդուհետեւ մեծարում էին սուրբ Յակոբին՝ իրրեւ իրենց փրկչի, եւ Համարում իրենց մէջ Հաստատութեան սիւն:

Այն ժամանակ Մծրինի եպիսկոպոսը մահացաւ, եւ քահանաների առջեւ ընտրելու Հարց ծագեց, թէ ով արժանի կլինի Հայրապետական աթոռը ժառանգելու: Այստեղ կային Հինգ այրեր, որոնք արժանի էին նկատուել եպիսկոպոսութեան, եւ քաղաքում մեծ խռովութիւն էր առաջացել այն պատճառով, թէ նրանցից որ մէկը պէտք է շարունակէր աթոռակալել, որովհետեւ մէկը մի անուն էր տալիս, միւսը՝ ուրիշ. այս պատճառով տրտմութեան մէջ էին եւ չէին կարողանում Համաձայնութեան գալ: Այդժամ քաղաքի մեծերը որոշեցին գնալ անապատ՝ սուրբ Մարուգէի մօտ՝ տեսնելու, թէ նա ինչ խորհուրդ կտայ այս առթիւ: Երբ Հասան խցի դռանը, սուրբ Մարուգէն, ըստ իր սովորութեան, աղօթում էր: Այն ժամանակ աշակերտը դուրս եկաւ ու ասաց.

—Գնացէ՛ք եկեղեցու գաւիթ, մինչեւ որ աղօթքը վերջացնի եւ գայ ձեզ մօտ:

Իսկ սրանից երեք օր առաջ սուրբ Յակոբը եկել էր սուրբ Մարուգէի մօտ, եւ վերջինս մարգարէացել էր նրան ու ասել. «Այսօր քեզ իբրեւ ճշնաւորի եւ եղբօր եմ Համբուրում, իսկ քիչ օրեր անց պիտի Համբուրեմ իբրեւ Հովուի եւ Զրիստոսի Հօտի առաջնորդի»: Իսկ սուրբ Յակոբն ասել էր. «Ներիր, եղբայր, սակայն ասածդ բանին անարժան եմ»:

Արդ, մինչդեռ Հաւաքուածները, խումբ—խումբ նստած, խոժոռադէմ սպասում էին գաւթում, սուրբ Մարուգէն մօտեցաւ նրանց: Երբ տեսան երանելուն, զուարթութեամբ վեր կացան եւ ընդառաջ գնացին, որովհետեւ նրա դէմքը Հրեշտականման էր: Իսկ նա նրանց խնդրեց նստել, մինչեւ որ ինքը եկեղեցում շարունակի աղօթքը: Ապա, աղօթքից յետոյ, բազմութիւնը Հաւաքուեց երանելու մօտ, եւ Համբուրում էին նրա ձեռքերն ու ոտքերը: Իսկ նա նրանց Հրամայեց նստել ու իրեն լսել: Նախ Հանգստացրեց նրանց՝ ասելով.

—Գիտեմ, որ տրտում էք ձեր առաջնորդի ընտրութեան պատճառով ծայր առած տարածայնութիւններից: Բայց ասում եմ, որ առաջադրուած այրերից ոչ ոք եպիսկոպոսութեան արժանի չէ: Վեր կացէք,

զնացէք Ամիգ¹, որովհետեւ այնտեղ են եպիսկոպոսաց ժողովն ու կաթողիկոսը, նոյն ինքը՝ Անտիոքի պատրիարքը, եւ այնտեղ Սուրբ Հոգին նրանց միջոցով կձանուցի այն մարդու մասին, ով արժանի է նստի Մծրին քաղաքի Հայրապետական գահին:

Նրանք, այս ընդունելով իբրեւ Տիրոջ Հրեշտակի խօսքեր, ճանապարհուեցին դէպի այն քաղաքը: Մի քանի օր անց Հասան կրօնական խորհրդի մօտ եւ ողջունեցին պատրիարքին ու եպիսկոպոսներին: Ապա պատրիարքն ասաց նրանց.

—Ո՛ւմ ընտրեցիք ձեզ առաջնորդ:

Նրանք պատրիարքին պատմեցին սուրբ Մարուգէի ասած խօսքերը թէ՛ Սուրբ Հոգին ժողովի միջնորդութեամբ ձեզ առաջնորդ կտայ: Այդ ժամ բոլոր ժողովականները, ապաւինելով աղօթքին, գիշերն անցկացրին սաղմոսներով, օրհնութեամբ եւ արտասուքով: Երբ վրայ Հասան կէպէշերը, կաթողիկոսն առանձնացաւ եւ այդ խնդրի Համար սկսեց արատաւից աղաչել Աստուծուն: Եւ Նա, Ով կատարում է Իրենից ակնածողների կամքը եւ աղօթքը լսում, մտայափշտակութեան մէջ զցեց կաթողիկոսին, եւ վերջինս ինչպէս երազում տեսաւ մի լուսաւոր երիտասարդի, որն իրեն ասաց.

—Այն մարդը, որի մասին պատասխան էք փնտրում Տիրոջից, սուրբ Յակոբն է:

Ապա Հրեշտակը յայտնեց նրան այն տեղն ու քարայրը, որի մէջ բնակուում էր Աստուծոյ սուրբն ու սքանչելագործ միայնակեացը: Կաթողիկոսն, արթնանալով, գոհացաւ Աստուծուց եւ անմիջապէս վեր կացաւ, զնաց եկեղեցի, կանչեց Մծրինից եկածներին ու եպիսկոպոսներին եւ պատմեց Հրեշտակի երեւման մասին, որը յայտնել էր սուրբի անունը եւ տեղը: Եւ բոլորը միաբան դիմեցին Մծրին, որտեղից եպիսկոպոսաց ժողովը վստահելի անձանց առաքեց սուրբ Յակոբի մօտ, որպէսզի նրան, ծանուցելով խնդրի մասին, կանչեն ժողովի: Սակայն սուրբ Յակոբն արդէն տեղեակ էր Հայրապետների Մծրին գալուն, քանզի Սուրբ Հոգին նրան յայտնել էր այդ, եւ նա վախճնում էր ընդդիմանալ Աստուծոյ Հրամանին, ինչի մասին սուրբ Մարուգէն կանխազուշակել էր իրեն: Եւ այսպէս, Սուրբ Հոգու ազդմամբ իջաւ Մծրին, որտեղ ժողովականներն ու քաղաքի ողջ բնակչութիւնը սպասում էին սուրբի գալուստին: Եւ երբ նա գալով մօտեցեաւ Հայրապետներին, սկսեցին ողջունել միմեանց, իսկ նրան պատուիրեցին նստել եպիսկոպոսական աթոռին: Սուրբ Յակոբն ասաց նրանց.

—Ինչի՞ Համար էք կանչել ինձ:

—Մեզ Տիրոջից քո մասին յայտնուեց, որ արժանի ես այս քաղաքի եպիսկոպոսական աթոռը ժառանգելու,— պատասխանեցին նրան:

Իսկ նա ասաց.

—Այդ բանին արժանի չեմ:

Բայց ժողովուրդը շտապեցնում էր Հայրապետին եւ չէր թողնում, որ խօսքը շարունակի: Եւ ապա եպիսկոպոսներն ու Հայրապետը, վերցնելով Յակոբին, իսկոյն մտան եկեղեցի եւ նրա վրայ եպիսկոպոսութեան կարգ կատարեցին: Սուրբ Յակոբի ձեռնադրման առթիւ քաղաքում մեծ ուրախութիւն եղաւ, քանզի բոլորը նրան գիտէին իբրեւ Աստուծոյ սուրբի:

Մի քանի օր անց, կիրակի օրը, սուրբ Մարուգէն իր մեծաթիւ բարեկամներով զնաց ողջունելու նորընծայ եպիսկոպոսին եւ օրհնուելու նրանից: Եկեղեցում միմեանց ողջունելուց յետոյ սուրբ Մարուգէն սկսեց օրհնաբանել Աստուծուն, որ Իր Եկեղեցու վրայ այդպիսի արթուն ու զգաստամիտ Հովուի կարգեց: Այնուհետեւ, երբ սուրբ լծակիցները՝ Մարուգէն եւ տէր Յակոբը, վերադառնում էին ժողովից, եկեղեցու գաւթում տասնհինգ տարուայ մի անդամալոյծի տեսան, որի մարմնի բոլոր անդամները թուլացել էին այդքան տարիների ընթացքում: Այդ պահին սուրբ Մարուգէն ասաց սուրբ Յակոբին.

—Եկ աղօթենք այս անդամալոյծի Համար:

Ապա, սարկաւազներին պատուիրելով, որ նրա երեսն արեւելք դարձնեն, որպէսզի նա էլ աղօթի, խոնարհուեցին եւ միասին ծնրադրեցին՝ ասելով.

«Ո՛վ զօրութիւնների Տէր Աստուած, որ հրեաների եւ կռապաշտների մէջ այս քաղաքը Ջո անուան քարոզութեան արժանացրիր: Արդ, ինչպէս Ջո առաքելների միջոցով, այնպէս էլ այժմ նուաստ ծառաներիս միջոցով ցո՛յց տուր Ջո զօրութիւնը, որպէսզի իմանան, որ միայն Դու ես զօրութիւնների ճշմարիտ Աստուածը, հաւատան Ջո սիրելի Որդու՝ Յիսուս Ջրիստոսի անուանը, եւ Ջո անուան առաւել եւս քարոզուի, եւ սուրբ Խաչդ փառաւորուի: Եւ արդ, բարերա՛ր Տէր, բժշկի՛ր այս անդամալոյծին եւ պապանձեցրո՛ւ նրանց լեզուները, ովքեր անարգում են Խաչդ, որը սուրբ Եկեղեցուդ պարծանքն է»:

Ապա աղօթքը վերջացնելուց յետոյ սուրբ Յակոբը սուրբ Մարուգէին ասաց.

—Մօտեցի՛ր եւ դրա անդամների վրայ խա՛ջ Հանիր:

—Դու ես արժանի, եւ քեզ է վայել նրա վրայ խա՛ջ Հանել ու աղօթել, քանզի դու եպիսկոպոսական շնորհ ունես,— պատասխանեց սուրբ

1 Ամիգ — քաղաք Միջագետքում

Մարուզէն:

Այդժամ սուրբ Յակոբն ասաց.

-Ես աջից, իսկ դու՝ ձախից:

Եւ բռնելով կանգնեցրին նրան՝ ասելով.

-Ո՛վ մարդ, յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի վեր կաց, կանգնիր:

Նոյն պահին նրա անդամներն ամրապնդուեցին, եւ նա, ձեռքերը երկինք պարզելով, փառաւորում էր Քրիստոսին: Այս տեսնելով ժողովուրդը զարմացաւ: Երեսնիվայր ընկան եւ երկրպագում ու, բարձրաձայն Աստծուն օրհնելով, ասում էին.

«Օրհնեալ ես, ո՛վ Քրիստոս, որ միշտ լսում ես Զեզ հաճելի եղողների ձայնը եւ Քո ծառաների միջոցով հրաշքներ ես գործում: Արդ, թող մեծարուի՛ եւ փառաւորուի՛ Քո սուրբ անունը, քանզի Դու ես միայն Աստուած, եւ ուրիշ ոչ ոք չկայ»:

Այստեղ սուրբ Մարուզէն ասաց անդամալոյծին.

-Արի Հազիր պատմուճանդ, զօտեպնդուիր եւ քարոզիր Քրիստոսի զօրութիւնը, որ Զեզ վրայ ցոյց տրուեց:

Իսկ Հրեաներից ոմանք, այս մասին լսելով, չհաւատացին եւ ասում էին, թէ նա անդամալոյծ չէր: Ոմանք էլ, քանի որ չէին կարող ուրանալ, զարմացան Հրաշքի վրայ, որ Աստուծոյ զօրութեամբ կատարուեց Յակոբի միջոցով, եւ սկսեցին ակնածել սուրբ եպիսկոպոսից:

Այս օրերում մի Հրաշք եւս կատարուեց.

Երբ սուրբ Յակոբն անցնում էր մի գիւղի կամ քաղաքի միջով, այստեղի մուրացկաններից ոմանք, կամենալով նրանից խաբէութեամբ ողորմութիւն ստանալ, իրենցից մէկին մեռած ձեւացրին եւ ապա գալով աղաչեցին սուրբ եպիսկոպոսին իրենց այնքան ողորմութիւն տալ, որքան որ Հարկաւոր է մեռածին թաղելու Համար: Սուրբ Յակոբը, առաւել նրա Հոգուն ողորմութիւն անելու մտահոգութեամբ, ձեռքը դրեց նրա վրայ եւ մեղքերին թողութիւն խնդրեց: Երբ փոքր-ինչ Հեռացաւ այնտեղից, մուրացողներն իրենց ընկերոջը ձայն տուեցին, որ ելնի՝ ասելով, թէ՛ եպիսկոպոսն անցել-գնացել է: Սակայն այն մարդուն իսկապէս մեռած տեսան: Եւ ահաբեկուած վազեցին սուրբի ետեւից՝ աղաչելով, որ վերադարձնի նրա Հոգին:

-Թողութիւն տուր մեզ, ասում էին նրանք.- որովհետեւ չքաւորութեան պատճառով կատարեցինք այդ:

Սուրբը, անսալով նրանց աղաչանքներին, կրկին յարութիւն տուեց մեռածին:

Այն ժամանակ Մծբին քաղաքում ապրում էին երկու պոնտացի

եղբայրներ, որոնք երկրում մեծանուն այրեր էին, սակայն՝ Հեթանոսներ: Սրանք ցնորամտաբար Հետեւում էին Մարկիոնի աղանդին եւ մի մարկիոնական կախարդի: Եղբայրներից մէկը վաղուց մեծն Կոստանդիանոսի արքունի դռանն էր եւ Հաճելի՛ ինքնակալի աչքին, ում կողմից իսկ յորդորուելով՝ ընդունեց սուրբ Հաւատքն ու Քրիստոսի պատուական կնիքը: Այնուհետեւ, թագաւորից ստանալով եպարքոսի՛ կոչում, ուղարկուեց Մծբին քաղաք: Իսկ միւս եղբայրը, որ Մարկիոն վարդապետի անունով կոչում էր Կերդոն կամ Կեղրոն, բազմիցս Կոստանդիանոսից յորդորուելով, յանձն չառաւ մկրտուել եւ նոյնպէս մեծ պատուի արժանանալ, այլ, մնալով Մծբինում, իր տանը ոսկուց, արծաթից եւ թանկագին քարերից սարքած կուռքեր էր պահում եւ նրանց պաշտամունքից չէր հեռանում: Նա քաղաքում երեւելի ու մեծահարուստ էր եւ ունէր մի խեղ ու ի ծնէ անդամալոյծ որդի, որի ոտքերը փոկի² նման միմեանց էին փաթաթուել, իսկ մարմնի միւս անդամները զօսացել³ էին, որի Հետեւանքով անկողին էր ընկել: Սակայն տղան խիստ գեղեցիկ էր, գանգրահեր եւ միշտ զուարթերես:

Երբ Կերդոնը լսեց, թէ սուրբ Յակոբը սուրբ Մարուզէի Հետ եկեղեցու գաւթում մի բազմամեայ անդամալոյծի է բժշկել, չհաւատալով տարածուած լուրին՝ ուղարկեց եւ կանչել տուեց բժշկուած մարդուն, որպէսզի նրանից իմանայ իսկութիւնը: Ապա նրան Հարցրեց.

-Ո՛վ եւ ինչպէ՛ս բժշկեց քեզ:

-Դուք եւ ողջ քաղաքը գիտէք, որ տասնհինգ տարի անդամալոյծ էի, սակայն Աստուծոյ ծառաները՝ սուրբ Յակոբն ու Մարուզէն, Յիսուս Նազովրեցու անունով բուժեցին ինձ.- պատասխանեց նա:

Կերդոնի մօտ եղող մարկիոնական կախարդը, նրա վրայ բարկանալով, ասաց.

-Դու անդամալոյծ չէիր, ստախօս, այդ քեզ քրիստոնեաները սովորեցրին:

Իսկ այս մարդը՝ ցասումով լի, պատասխանեց.

-Ո՛վ խաբեբայ եւ անօրէն, ստախօսը դու ես, քո աղանդը եւ կախարդութիւնը, որ շուտով մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը պիտի բնաջնջի իսպառ, իսկ քո Հայր սատանան՝ ամօթաՀար լինի: Այժմ ասում եմ քեզ, քե՛զ Համար չէ, որ քարոզում եմ Աստուծոյ փառքը, որ ցոյց տրուեց ինձ, այլ՝ բոլոր նրանց, ովքեր լսում ու Հասկանում են: Եւ վստահ եմ, որ եպարքոսի բարի եւ իմաստուն եղբայրը, որ ինձ փնտրել

1 եպարքոս կամ հիպարքոս — կուսակալ, կառավարիչ

2 փոկ — կաշուից պարան

3 զօսանալ — չորանալ, փայրանալ

տունց ու կանչեց՝ այստեղ, իր որդու Համար է կամենում Համոզուել իմ բժշկութեան մէջ, որպէսզի, ճշմարտութեանը տեղեկանալով, Հաւատքով դէպի լոյս գայ եւ պատրաստուի ձեր մոլորութիւնն այս քաղաքից դուրս վճռելուն:— Այս ասելով՝ իր երեսը շրջեց կախարդից եւ Կերդոնին ասաց.— լսիր ինձ, տէր Կերդոն. քանի որ ես քո կամքով այստեղ եկայ, Հարկ է, որ քո տանը քարոզեմ Քրիստոսին, որ իմ միջոցով յայտնուեց: Ես իսկապէս, ինչպէս որ տեսնում էիք գաւթում, անդամալոյծ էի եւ սուրբ Յակոբի ու Մարուգէի կողմից բժշկուեցի: Եւ եթէ դու էլ Հաւատաս սուրբ Կոյս Մարիամից ծնուած մեր Տէր Յիսուս Քրիստոսին եւ զնաս Նրա ծառաների մօտ ու լսես Աւետարանի քարոզութիւնը, այն ժամանակ քո որդին կբժշկուի:

Այդժամ Կերդոնը սթափուեց եւ, բարի գործ խորհելով, արՀամար Հեց կախարդի խօսքերն ու ասաց.

—Այսուհետեւ ես կամենում եմ տեղեկանալ ճշմարտութեանը եւ Հեռանալ խարէութիւնից:

Եւ, իսկոյն վեր կենալով, վերցրեց իր որդուն ու զնաց եկեղեցի, միւսներն էլ՝ Նրա ետեւից: Իսկ ոմանք զնացին եւ սուրբ Յակոբին ու Մարուգէին պատմեցին՝ առելով.

—Եպարթոսի եղբայր Կերդոնը դրսում կանգնած է եւ կամենում է ձեզ տեսնել:

Այնժամ սուրբերը Նրան պատուիրեցին խաղաղութեամբ տաճար մտնել: Նրա եպարթոս եղբայրը նոյնպէս այնտեղ էր: Կերդոնը, մտնելով սուրբերի մօտ, ողջունեց, ապա կանգնեց Նրանց առջեւ ու բարձրաձայն ասաց.

—Տե՛սրք, ես կարծում էի, թէ ճշմարտութիւնն եմ սեփականել եւ ոչ թէ՛ մոլորութիւնը: Եւ մինչեւ իսկ թագաւորի շնորհից եմ Հրաժարուել, որպէսզի, իմ եղբոր նման, ինձ էլ մկրտել չտար: Իսկ այժմ, տարակուսած, ճշմարիտ ճանապարհը չեմ գտնում: Այս անդամալոյծի բժշկութեան վրայ է միայն վստահութիւնս, քանզի եթէ, ինչպէս որ նա ձեր աղօթքներով բժշկուեց, այնպէս էլ իմ որդին բժշկուի, իմ միտքը կհաստատուի ճշմարիտ Հաւատքի մէջ, եւ Մարկիոնը, որ ասում է, թէ Քրիստոս չի մարմնաւորուել Կոյսից, կամ թէ՛ մեռելների յարութիւն չկայ, ամօթաՀար կլինի: Քանզի այնժամ ինձ պարզ կդառնայ, որ ճշմարիտ է այն, ինչ որ ասում էք Յիսուս Նազովրեցու մասին՝ թէ ծնուել է Մարիամ Կոյսից, խաչուել, թաղուել եւ յարութիւն առել եւ մեռելների յարութեան յոյս պարգեւել: Արդ, այսուհետեւ Հաւատքի Հաստատման ոչ մի միջոց չունեմ, բացի իմ որդու բժշկութիւնից, որովհետեւ Ով որ Նրա գօսացած մարմինը բժշկի, նա էլ ճշմարիտ Աստուած է: Դրանից յետոյ իմ Հոգին ու մարմինն էլ կառողջանան:

Մարկիոնական կախարդը, լսելով Կերդոնի ասածները, ասաց Նրան.

—Մի՛ լսիր գալիլեացիներին¹, քանզի ո՛չ կաղերին կարող են բուժել եւ ո՛չ էլ՝ անդամալոյծներին առողջացնել:

Այդ ժամանակ սուրբ Յակոբն ամբողջ ժողովրդի առջեւ դիմեց կախարդին՝ ասելով.

—Թէպէտեւ մենք ոչնչութիւն ենք, սակայն անօգուտ բաներ չենք խօսում, այլ ինչ որ խօսում ենք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով ենք խօսում, որ ծնուեց սուրբ Կոյսից, խաչուեց, թաղուեց եւ մեռելներից յարութիւն առաւ՝ Իր Հետ յարութիւն ապով մեր բնութիւնը: Ապա Իր աշակերտներին տունեց Իր Սուրբ Հոգին եւ առաքեց՝ բոլոր Հեթանոսներին մկրտելու Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ: Այնուհետեւ ասաց, թէ «ով Հաւատայ եւ մկրտուի, կփրկուի, իսկ ով չՀաւատայ Իրեն, կդատապարտուի», եւ դարձեալ՝ «Ով որ Հաւատայ Ինձ, Ինձ պէս Հրաշքեր կգործի եւ Իմ անուամբ դեւեր կՀանի»: Արդ, մենք Հաւատացել եւ Հաւատում ենք, որ այն ամէնը, ինչ որ խնդրենք, ըստ Իր խոստման, կտայ մեզ: Ուստի եւ Նրա անուամբ առանց երկիւղի վիշապի գլուխը պիտի ջախջախենք, իսկ ձեր մոլորութիւնը՝ սուրբ Խաչով խորտակենք: Այժմ դու եւ ձեր քուրմը դիմեցէ՛ք ձեր աստծուն, որպէսզի բուժի այդ մանկանը: Եւ եթէ ձեր ասածները ճիշտ չլինեն, այդժամ թող ձեզ վիճակուի այն, ինչ որ վիճակուեց Սիմոն կախարդին Հոսմում: Իսկ մենք մեր Աստուծոյ առջեւ ենք ընկնում եւ այս մանկան Համար բժշկութիւն Հայցում, սակայն՝ ոչ թէ մեզ Համար, այլ՝ այդ ժողովրդի, որպէսզի Հաւատայ Նրա անուանը:

Իսկ մարկիոնականը ցածրաձայն ու վախուորած պատասխանեց.

—Ո՛չ մենք եւ ո՛չ էլ դուք դրան չենք կարող բժշկել:

Այնժամ սուրբ Մարուգէն ժպտալով պատասխանեց Նրան.

—Ապաւինում եմ Հայր Աստծուն, Նրա Միածին Որդուն եւ Սուրբ Հոգուն, քանզի ինչ որ Հաւատքով խնդրենք, պիտի ստանանք:— Այնուհետեւ Համարձակօրէն դիմեց մանկան Հօրը.— Հաւատում եմ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը, որ եթէ սուրբ Յակոբը դրան մկրտի, նա այդ Աւազանից բժշկուած պիտի դուրս գայ:

Այդ ժամանակ Կերդոնն ասաց.

—Այս պահին կամենում էի իմ ամբողջ ընտանիքով մկրտուել, սակայն, Համաձայն քո խօսքի, նմիս թող որդիս մկրտուի, եւ ապա՝ ես ու իմ ընտանիքը:

Ապա սուրբ Մարուգէն ասաց սուրբ Յակոբին.

1 Ակաթի եւ անուած քրիստոնեաները:

-Տէր, քահանաներից մէկին պատուիրի՛ր պատրաստել Աւագանը: Իսկ Կերդոնը յայտարարեց.

-Քող ոչ ոք չմկրտի՛ իմ մանկանը, այլ միայն՝ Ձերդ սրբութիւնը:

Ապա մօտեցրին Աւագանը, եւ սուրբերը, վեր կենալով ու մէկը՝ ձախ, իսկ միւսն աջում ծնրադրելով, սկսեցին աղօթել.

«Ո՛վ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ բոլոր Ջեզ դիմող անձանց փրկութիւնն ես կամենում: Լսի՛ր Քո ծառաների աղօթքները եւ փառաւորի՛ր Քո անունն այս քաղաքի հրեաների եւ հեթանոսների մէջ, որպէսզի իմանան, որ միայն Դու ես զօրութիւնների Աստուածը»:

Ապա, վեր կենալով աղօթքից, պատուիրեցին, որ մանկանն Աւագան իջեցնեն: Եւ նրան, որ մօտ ութ տարեկան էր, մկրտեցին Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ՝ վերակոչելով Յովհաննէս: Այնուհետեւ սուրբ Յակոբը բացեց նրա գօսացած ձեռքերը, միմեանցից զատեց փաթաթուած ոտքերը եւ, մանկան ձեռքից բռնելով, կանգնեցրեց ու պատուիրեց քայլել: Եւ նա համարձակօրէն սկսեց քայլել: Եւ ովքեր տեսան, սկսեցին փառաւորել Աստծուն: Իսկ մարկիոնականն ու իր դաւանակիցները, մտափոխուելով, փախան այդ քաղաքից:

Յաջորդ օրը սուրբ Հայրապետը մկրտեց նաեւ Կերդոնին, որ վերակոչուեց Պօղոս, նրա կնոջը, որը վերանունուեց Մարիամ, եւ նրա ամբողջ ընտանիքին ու ժողովրդին: Բոլոր մկրտուողները երեք Հազար Հարիւր Հոգի էին: Դրանից յետոյ սուրբ Մարուգէն ուրախութեամբ վերադարձաւ իր վանքը՝ օրհնաբանելով Աստծուն: Իսկ Պօղոսը բոլոր նորակունքների բազմութեամբ իր տանը մեծ խրախճանք սկսեց անել եւ, ափսոսելով Մարուգէի վերադառնալու համար, մարդ ուղարկեց եւ կանչեց նրան: Սուրբը լսեց նրան ու եկաւ նրա տուն: Ապա, միառժամանակ անց, Մարուգէն ասաց.

-Այստեղ բերէք մարկիոնականների կախարդութեան զրքերը,- եւ երբ բերեցին, հրամայեց այրել:

Սրանից յետոյ շատերն էին գալիս սուրբ Յակոբի մօտ՝ աշակերտելու Քրիստոսին: Այս պատճառով սուրբ Հայրապետը խորհեց մեծ եկեղեցի կառուցել, որովհետեւ առաջ ժողովուրդը փոքրաթիւ էր, եւ եկեղեցին՝ փոքրիկ: Եւ, գնալով սուրբ Մարուգէի մօտ, սուրբ Յակոբն ասաց.

-Եթէ Տէրը կամենայ, եկեղեցի կառուցելու մտադրութիւն ունեմ: Վեր կաց իջնեք եւ սուրբ տեղը որոշե՛ք:

Իսկ սուրբ Մարուգէն պատասխանեց.

-Իջնելն անհրաժեշտ է, քանզի եօթերորդ օրը մօտենում է: Բայց արի ինքդ իջի՛ր, եւ Տէրն Իր Հրեշտակին կառաքի ու ցոյց կտայ այն տե-

ղը, որտեղ պէտք է կառուցել, որպէսզի այն, որ կուսպաշտութեան եւ պիղծ երգերի վայր է եղել, մաքրուի, եւ նրանում մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը պատարագուի:

-Քող քո աղօթքն ինձ վրայ լինի, որպէսզի կատարուի այնպէս, ինչպէս ասացիր,- ասաց սուրբ Յակոբը:

Եւ անմիջապէս, ոտքի կանգնելով, գնաց քաղաք, ժողովեց քաղաքի մեծամեծներին ու նրանց ասաց.

-Դուք ի՞նչ էք կարծում եւ որտե՞ղ էք յարմար գտնում եկեղեցի կառուցելու համար:

Նրանք սուրբին ցոյց տուեցին երեք-չորս տեղ: Իսկ նա մինչեւ գիշեր լուռ էր, ապա գիշերուայ երկրորդ ժամին վեր կացաւ եւ, վերցնելով իւրի շիշը, դուրս եկաւ իր սենեակից: Եւ ահա Տիրոջ Հրեշտակը յայտնուեց եւ մօտենալով ողջոյն տուեց նրան:

-Դու ո՞վ ես,- հարցրեց Յակոբը:

Հրեշտակը պատասխանեց.

-Ես Տիրոջից առաքուեցի, որպէսզի քեզ ցոյց տամ եկեղեցու տեղը եւ նրա չափերը:

-Ուրեմն դու իմ առջեւից կգնաս,- ասաց Յակոբը Հրեշտակին՝ չգարհուրելով նրա տեսքից, քանզի քազմաթիւ անգամ վարժուել էր Հրեշտակային կերպարանքը տեսնելուն:

Հրեշտակը նրա հետ գնաց մինչեւ այն տեղը, որը եղել էր Անտիոքի իշխանի կուստունը, եւ ասաց.

-Ահա սա է եկեղեցու տեղը,- ասաւ նրան ցոյց տուեց չափը:

Դրանից յետոյ երանելին ձեռնամուխ եղաւ եկեղեցու շինութեան գործին:

Այն օրերում Աստուծոյ սուրբ, Պարսկաստանի կողմերի եպիսկոպոս Մելիտոսը, որ կոչուում է նաեւ Երկրորդ Մելիտոս, Երուսաղէմի ուխտատեղերից վերադառնալիս անցնում էր Մծրին քաղաքով: Տեսնելով Յակոբին, որը սկսել էր եկեղեցին կառուցել՝ նա շատ ուրախացաւ եւ, իր երկրացի վաճառականներից հարիւր դահեկան՝ վերցնելով, որպէս օգնութիւն յանձնեց եկեղեցուն, որովհետեւ զաւագանից ու Աւետարանից բացի իր մօտ ոչինչ չուներ: Ապա սուրբ Յակոբն ու սուրբ Մարուգէն սուրբ Մելիտոսին մարգարէացան, թէ՛ «արեւելք դառնալուց յետոյ դու պէտք է մարտիրոսութեամբ վախճանուես», ինչը եւ կատարուեց, եւ այդ մասին գրուած է նրա վարքում:

Ահա միմեանց հետ սուրբերի այսպիսի մերձաւորութեան շնորհիւ

է. որ նրանց տօնը միասին է կարգուած, քանզի սուրբ Յակոբի վարքում պատմուած է թէ՛ Մարուգէի եւ թէ՛ Մելիտոսի մասին:

Այժմ անդրադառնանք սուրբ Յակոբի վարքի յաջորդ պատմութեանը.

Այնպէս եղաւ, որ մեծն Կոստանդիանոսի եւ մեծն Տրդատի մահուանից յետոյ պարսից Շապուհ արքան պատերազմով դիմեց դէպի Միջագետք՝ Հոռմէացիների սահմանները: Սափայն սուրբ Յակոբի ազօթքների շնորհիւ Տէրը պահպանեց նրա Մծքին քաղաքը: Սրանից յետոյ տեղի ունեցան Հայոց Խոսրով արքայի զօրավար Մանանդի հրահրանքի հետ կապուած այն դէպքերը, որոնց մասին Խորենացին գրում է, որ Մանանդի հրահրանքի հարաւային գնդով եւ կիլիկիացիների զօրքով Ատրեստանի կողմերը գնալով եւ պատերազմելով Բակուր քղեշիի դէմ, սպանեց նրան, իսկ նրա զօրքին ու օգնութեան եկած յարսիկներին հալածեց: Բակուրի որդի Հեշային ձերբակալելով երկաթեայ կապանքներով ուղարկեց Խոսրովին, իսկ նրանց իշխանութեան գաւառները սրի մատնեց եւ ոչ միայն՝ կուուղներին, այլեւ՝ գիւղացիներին: Ապա Մծքի կողմերից բազմաթիւ գերիներ վերցրեց, որոնց թւում եւ՝ Յակոբ մեծ եպիսկոպոսի ու թ սարկաւազներին: Նրանց ետեւից գալով Յակոբը Մանանդի փորձեց Համոզել՝ արձակել ռամիկ գերիներին, քանզի նրանք ոչնչով մեղաւոր չէին: Բայց Մանանդի հրահրանքով արձակել, պատճառ բերեց արքային: Ապա, երբ Յակոբը դիմեց արքային, Մանանդին աւելի չարացաւ եւ գաւառացիների սաղաքներով հրամայեց ծովը նետել նրա ու թ սարկաւազներին, որոնք կալանաւորուած էին: Այս մասին լսելով մեծն Յակոբը, սաստիկ բարկացած, վերադարձաւ իր տեղը եւ, ինչպէս Մովսէսը, բարձրանալով լեռան վրայ, որտեղից լաւ էր երեւում Ռշտունեաց ողջ գաւառը, անիծեց Մանանդիին ու նրա գաւառը: Եւ անմիջապէս վրայ հասաւ Աստուծոյ դատաստանը, քանզի, Հերովդէսի նման, Մանանդի հրահրանքով՝ տեսակ-տեսակ արտերից բռնուելով, իսկ գաւառի պողաքեր, ջրաբերի Հողը փոխուեց աղի ու չոր Հողի, երկիւնք պղինձ դարձաւ, ծովն էլ, հակառակուելով, ծածկեց արտերի սահմանները: Երբ այս մասին լսեցին մեծ վրթանեսն ու Խոսրով արքան, խիստ բարկացած՝ հրամայեցին գերիներին արձակել եւ սուրբին դիմել զղջումով ու աղաչանքով, որ թերեւս Աստուծոյ բարկութիւնը դադարի: Ապա Յակոբի՝ այս աշխարհից փոխուելուց յետոյ Մանանդիի ժառանգորդն ու որդին ազնիւ զղջումով ու յորդահոս արտասուքներով, նրա բարեխօսութեամբ արժանացաւ իր եւ գաւառի բժշկութեանը:

Սուրբ Յակոբը բազում ճգնութիւններ կրելուց, մեծաթիւ հրաշքներ գործելուց եւ մարմնի մէջ որպէս անմարմին ապրելուց եւ դրանով հրեշտակներին զարմացնելուց յետոյ վերոյիշեալ դէպքերից մէկ տարի անց ննջեց: Եւ նրա՝ այս աշխարհից փոխուելն այսպէս եղաւ. կիրակի օրը նա

եղբայրներին ասաց.

—Այսօր տեսայ Հրեշտակին, որն ինձ մարմնիցս ելնել եւ Աստուծոյ մօտ մտնել էր հրաւիրում:

Ապա նրանց պատուիրեց հսկել ողջ գիշեր՝ մինչեւ արեգակի ծագելը: Այնուհետեւ Պատարագի ժամին, փրկական Խորհուրդը կատարելիս տեսնելով Սուրբ Հոգուն, աղաչեց, որպէսզի խաղաղութեամբ անցնի իշխանութիւնների եւ պետութիւնների միջով: Եւ, աւարտելով անարատ Պատարագը, դուրս եկաւ զուարթ ու լուսապայծառ երեսով: Իսկ բազմութիւնը, այդ տեսնելով եւ իմանալով սուրբի վերափոխման մասին, սկսեց բարձրաձայն լաց լինել: Սակայն նա հրամայեց լռել եւ, մի փոքր կերակուելով, սկսեց աւետարանել նրանց.

«Եղբայրներ, լսեցէ՛ք ինձ: Յիշեցէ՛ք արգելուած պտուղը, որը նախաօր արտաքսուելու եւ դրախտի փոխարէն անիծաբեր երկիրը ժառանգելու պատճառը եղաւ եւ որն Աստուծու եւ Նրա սուրբերին չարչարուելու դրոշմը:

Յիշեցէ՛ք հալածուած մարգարէներին, որոնք սպանուեցին իրենց մերձակորների կողմից:

Յիշեցէ՛ք Տիրոջ անուան համար հալածուած միւս տղամարդկանց ու կանանց, որոնք քրիստոնէսին այս աշխարհի փառքը, դատարկութիւն համարեցին նրա սերը մանկական խաղի նման եւ մեծամեծ տառապանքներով փոխուեցին աշխարհից:

Յիշեցէ՛ք նաեւ առաքելների, մարտիրոսների բոլոր դասերին եւ բոլոր սուրբերին, որոնք, սաստիկ ու զանազան տանջանքներով իրենց անձերը Քրիստոսի համար մահուան մատնելով, փոխուեցին Քրիստոսի մօտ:

Յիշեցէ՛ք հեւց Իրեն՝ մեր Տիրոջը՝ Ողորմածին, Բարերարին, Ամահին, նաեւ՝ մեղաւորների համար Նրա համբերութիւնը, որ, անօրէնների հակառակութեան պատճառով նախատուելով, անարգուելով ու ծանակուելով, մահուան մատնուեց, իսկ ապերախտների կողմից երախտաւորն Իր արժանիքների համեմատ փոխարէնը ոչինչ չստացաւ: Բայց աղաչում եմ, մի՛ անտեսէք Քրիստոսի բարի երախտիքը, այլ մնացէ՛ք ուղիղ վարքի մէջ, քանզի Նրա բեմի առջեւ ենք կանգնելու՝ իւրաքանչիւրս ըստ մեր գործերի հատուցում ստանալու համար: Չեր անձերից թօթափեցէ՛ք չարիքը եւ մարմիններից մի՛ խնայէք, որովհետեւ դրանք հեռացնում են Աստուծոյ:

Եւ արդ, ես ձեր բոլորի անուսից անարատ եմ, որովհետեւ գիշեր—ցերեկ շղաղարեցի խօսել, ուսուցանել եւ հաստատել ձեզ Տիրոջ երկիրի եւ սիրոյ մէջ, քանզի ձեր օրերում յափշտակող

գայլեր ու ստապատում վարդապետներ են գալու, որոնք չեն խնայելու Քրիստոսի հոտը: Չեր բոլոր նեղութիւնների մէջ գոհացող եղէք, ամբողջատա՛տ մնացէք եւ, ամուր բռնելով իմ ուխտի խրատները, մշտապէս խորհեցէ՛ք Տիրոջ երկիւղն ու սէրը, որպէսզի համբերատարների վարձքը ստանաք մեր Աստուած Քրիստոսից, Որին փա՛ռք յաւիտեանս. ամէն»:

Այս ասելով՝ օրհնեց նրանց, երեք անգամ ծնրադրեց՝ խոստովանելով Ամենասուրբ Երրորդութեանը, եւ ընկնելով Հոգին աւանդեց Քրիստոսին: Եւ ահա նրանից անուշահոտութիւն բուրեց, եւ վերեւից նրա սուրբ նշխարների վրայ լոյս էր ճախրում: Իսկ ժողովուրդը սաստիկ ողբում էր, քանզի զրկուել էր սուրբ Հովուից: Այնուհետեւ, աղօթքի կարգ կատարելուց յետոյ, նրան զրեցին գերեզմանի ամենախոր՝ յափշտակողներին անհասանելի վայրում:

Իսկ Ռշտունեաց երկիրը երեք տարի անէծքի տակ մնաց. մարդ ու անասուն ամլացան, պտղաբեր ծառերը չորացան, եւ անպատում գեղեցկութիւնները խամրեցին: Ինչպէս պատմագիրներից մէկն է ասել, «նախքան Յակոբի անէծքը Ռշտունեաց երկիրը նման էր Ադենի՛ զրախտին»:

Ապա Մանաճիհի սերնդից մէկը (ոմանք ասում են՝ քոյրը, ոմանք՝ Հօրեղբորորդին), քանի որ Մանաճիհը մեռել էր, ճանապարհ ընկա՛վ փնտրելու սուրբի նշխարները եւ ազգի ու գաւառի Համար բժշկութիւն խնդրելու: Նա խիստ ճշնութեամբ, երեսն ու ծունկը քերթելու աստիճան գետնաքարը լինելով, Հասաւ տապանին եւ քառասուն օր անդադրում աղօթքներով ողբաց նրա առջև: Սուրբ Յակոբը, լսելով նրա պաղատանքները, ողորմեց նրան եւ, իբրեւ կենսատու, մօտեցնելով իր աջը, կտրեց մատի կոճն ու տուեց նրան: Եւ մինչդեռ սպասաւորները սքանչանում էին սրայ վրայ, սուրբը տեսիլքի մէջ օրհնեց նրա ճշնութիւններն ու արձակեց: Եւ նա, ուրախութեամբ Հասնելով Աղձնեաց գաւառ՝ Երկաթահանք բլրին, աւետիս տուեց գաւառին: Երբ աւետիսը տարածուեց, ողջ ժողովուրդը խառնընթաց Հասաւ այն տեղը, որ աւետարեւորների մեկնափայլը լինելու պատճառով կոչւում է Առաքելոց բլուր: Ապա, խումբ-խումբ միմեանց փարուելով, ընկան նշխարներ բերողի ոտքերը, եւ, ի յիշատակ կատարուածի, իւրաքանչիւրը մի քար դրեց բլրի վրայ: Այդ մանր քարերի կարկառակոյտը կայ մինչեւ օրս եւ Համապատասխանում է եկած ժողովրդի թուին: Ապա նշխարներն իջեցրին լեռից, որպէսզի տանեն Ռշտունեաց երկիր, սակայն իսկոյն եւեթ արգելուեց. քանզի ոչ ոքի չյաջողուեց ո՛չ գրաստի, ո՛չ էլ մարդու միջոցով տեղաշարժել այն: Երեք օր բազմութիւնը տարակուսանքի մէջ էր... Ապա տեսիլքի մէջ յայտնուեց Աստուծոյ Հրեշտակը եւ Հրամայեց իջեցնել այնտեղից: Ձորակի վրայ մի բարձրավանդակ նկատելով այնտեղ էլ դրեցին սուրբ եկեղեցու

1 Ադեն - Եդեն

Հիմքերը, որտեղ եւ գետեղեցին սուրբի նշխարները: Սուրբ աջի Համբար տարածուեց ամէնուր, եւ թէ՛ մերձակայքից ու թէ՛ Հեռուններից այնտեղ էին Հասնում ընծայ բերելով, եւ ողորմութիւն ստանում բժշկուելով տարտեսակ ցաւերից:

Իսկ թէ՛ ինչ եղաւ սուրբի ամբողջ մարմինը Մծրինում, տարբեր կարծիքներ կան, որովհետեւ սուրբի վարձագիրը գրում է. «Նրա մահուանից յետոյ այն քաղաքում Հոռմէական զօրքը նուազեց, եւ պարսից արքան, զալով, ոչ թէ պատերազմով, այլ սիրով նուաճեց այդ քաղաքը»:

Իսկ Բիւզանդը, որը սրանից ժամանակով Հեռու չէր, այսպէս է գրում. «Բայց նրա ոսկորները շնորհուեցին Ամիդի քաղաքացիներին, երբ յունաց եւ պարսից թագաւորների միջեւ պատերազմների պատճառով մծրնացիների Հետ այստեղից այնտեղ տեղափոխուեցին»:

Նոյն բանն ամենայն մանրամասնութեամբ Հաստատում է նաեւ Թէոդորետոսը՝ Փիլոթէոսին ասածի մէջ. «Միառժամանակ անց Մծրին քաղաքի բոլոր բնակիչները գաղթեցին. տարան նաեւ առաջամարտիկի մարմինը, որովհետեւ այն քաղաքը կայսեր կողմից տրուեց պարսից թագաւորութեանը: Թէպէտեւ դժուարանում ու վշտանում էին տարագրութեան Համար, բայց զովբերում էին յաղթազգեաց առաքինու զօրութիւնը, որովհետեւ նրա՛ իրենց Հետ շլինելու դէպքում բարբարոսների իշխանութեան ներքոյ կլինէին»:

Արդ, եթէ այսպէս էլ եղած լինի, Հաւաստի է թւում այն պատմութիւնը, թէ՛ երբ պարսիկները տիրեցին Մծրինին ու նրա շրջաններին, մծրնացիները սուրբի մարմինն իրենց Հետ տարան Ամիդ, իսկ այնտեղից՝ չգիտենք, թէ ուր: Յայտնի է Հետեւեալը, որ մինչեւ օրս Մծրինում, եկեղեցու մէջ, սուրբի գերեզմանը կայ եւ թափուր է մնում:

Իսկ նրա սուրբ աջի եւ նշխարների մասին, որ Ռշտունիք բերուեցին, «Ծառնտիրը» գրում է, թէ՛ այն տեղը, ուր սուրբ Յակոբը բնակուեց, այժմ կոչւում է Մոգս, այսինքն՝ Մուկաց երկիր: Եւ որովհետեւ այդ տեղը ժամանակներ անց այլազգիների ձեռքն էր ընկել, Հայոց թագաւորը՝ Արծրունեաց տոհմից, գանձեր տալով, գնեց այն եւ փառազարդ եկեղեցի կառուցեց ու Ամենասուրբ Երրորդութեանը փառաբանելու Համար քահանաներ ու կրօնաւորներ կարգեց: Սրան յարմար է գալիս սուրբ Գրիգոր Նարեկացու այն պանծալի ներբողեանը, որն Արծրունի թագաւորների օրօք ձօնեց սուրբ Յակոբ Մծրնացի Հայրապետին, ուր ասում է՝ դիմելով Քրիստոսին.

«Այս գովեստի քարը հաստատի՛ր Ձո հանգստեան յարկի շինուածքում՝ այս բարի հովուի վկայարանում, իսկ մեզ փոխադրի՛ր այդ արքայական տաճարի գաւթի լուսապաճոյճ բնակարանը»:

Իսկ սուրբի նշխարների մասին ասում է.
«Հոգով սլացաւ դէպի ակնկալութեան վերամբարձ առհաւանչեան,
իսկ մարմնի ոսկորների մասունքներում անսպառ պարզելներ
տնկեց, որով յուսադրեց եւ կենդանի յարութիւնը ցոյց տուեց [մեզ]...
Աշխարհը նրանով հանդերձեալի յուսադրութիւնն ունի, իսկ ինքը
հաստատուն, աննկուն, նորոգ ու աներեր կանգնել է՝ միջնորդելով
երկնքին ու երկրին»:

Իսկ սուրբ Յակոբին նուիրուած շարականում, որը շքեղօրէն գրուել
է թերեւս Գրիգոր Նարեկացու կողմից, ոչ միայն սուրբի ամբողջ վարքն
է գեղեցկօրէն նկարագրուում, այլեւ որոշակիօրէն յիշատակուում են նրա
նշխարները եւ տաճարը.

«Երկրպագում ենք Զրիստոսի ձգնաւոր եւ պատուական վկայի, որ
աշխարհի պարծանքն է եւ մեր բարեխօսը, տուկացած նշխարների
առջեւ...»

Քո սուրբ տաճարում երկրպագում ենք նշխարներիդ եւ
փառաւորում քո հանգստեան յիշատակի օրը. բարեխօսի՛ր
Զրիստոսին մեզ՝ քո տօնը կատարողներիս համար»:



ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅՈՒ ՎԱՐՔԸ

Քաղաւորական պանծալի անուն մեծն Բասիլիոսը կամ Վասիլիոսը,
որ Բարսեղ Կեսարացին է՝ ըստ նախնիներից մէկի ճշմարիտ խօսքի՝ Կաթողիկէ Եկեղեցու պայծառ քահր եւ արեւտարանական ճշմարտութեան լուսափայլ արեգակը, որ իր աստուածաբանութեան ճառագայթները սփռեց ամբողջ աշխարհում, վարքով՝ կատարեալ եւ խօսքով՝ գերիմաստ, գրով՝ զօրաւոր եւ աստուածային ու արտաքին գիտութիւնների մէջ՝ գերհմուտ, բոլոր առաքինութիւններով լի, եղաւ Եկեղեցու սին, քահանայապետութեան զարդ եւ աստուածաշարութեան դպրոց, Աստուծոյ այր, Հօր Միածնի պատգամախօս, Հաւատարիմ տնտես եւ Սուրբ Հոգու գրիչ, Ում կողմից սահմանուեց լինել Եկեղեցու ազատարարը բոլոր հերձուածներից, որպէս երկնաուար շանթ՝ Հրեղէն լեզուով ջախջախիչը Արիոսի, Եւնոմիոսի, Սաբելի, Հոգեմարտ Մակեդոնի, Ապողինարի եւ բոլոր աղանդաւորների գլուխների: Նա եղաւ ոչ միայն կեսարացիների, այլեւ՝ ամբողջ աշխարհի, ոչ միայն իր ժամանակի, այլեւ՝ բոլոր ժամանակների վարդապետը:

Սուրբ Բարսեղը ծնուել է Նիկիայի սուրբ Ժողովի օրերին (ըստ ոմանց՝ 328, իսկ ըստ այլոց՝ 317 թուականին) Կեսարիայում՝ Առաջին Հայքի մայրաքաղաքում, որ Գամիլոքի կամ Կապադովկիայի Մաժակն է, Արգէոս լեռան մօտերքում, ազնուական եւ աստուածասէր ընտանիքում: Նախնիները Փոքր Հայքից էին՝ Սեբաստիայից. Հայրը՝ Համանուն Բասիլիոսը, նէոկեսարացի էր՝ Պոնտոսից, իսկ մայրը՝ Եմեղիան՝ կապադովկացիների Կեսարիայից:

Նրա մօրական պապը Զրիստոսի Հաւատքի Համար նահատակուել էր Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի Հալածանքների ժամանակ, ինչպէս եւ՝ Գրիգոր անունով քեռին, որն այն կողմերի եպիսկոպոսն էր (Նրանից է Բարսեղի եղբայր Գրիգոր Նիւսացին ստացել իր անունը): Իսկ մօր մայրը՝ սրբուհի Մակրինան, որից էլ Բարսեղի քոյրը ստացել էր իր Մակրինա անունը, Գրիգոր Աքանչելազործի աշակերտուհին էր:

Բարսեղն ունէր երեք եղբայր՝ Նակրատիոս, որ վաղամեռիկ եղաւ 22 տարեկանում, Գրիգոր, որ դարձաւ Նիւսիայի եպիսկոպոս, եւ Պետրոս՝ ծնողների կրտսեր զաւակը, որ Սեբաստիայի եպիսկոպոսը եղաւ. նաեւ վեց քոյր, որոնցից երեքը կոյսեր էին, իսկ երեքը՝ ամուսնացած: Մանկութեան ու պատանութեան տարիներին Բարսեղն իր տատից՝ սրբուհի Մակրինայից, լսեց սուրբ Գրիգոր Աքանչելազործի վարդապետութիւնը, իսկ նրա Մակրինա քոյրը, որ երեւելի եղաւ սրբութեամբ եւ իմաստութեամբ, նոյնպէս մեծապէս սատարեց իր եղբայրների եւ քոյրերի Հոգեւոր դաս-

տիարակութեանը:

Արդ, նրանց բոլորի պարծանքը անդրանիկ եղբայրն էր՝ մեծն Բարսեղը, որ ծնունց, ինչպէս Սամուէլը, իբրև իր սուրբ ծնողների աղօթքների պտուղ, սնունց աստուածապաշտութեան բոլոր կարգերով, դաստիարակունց Հօրից՝ իբրև առաջին ուսուցչից՝ Սուրբ Գիրքն ու արտաքին զարութիւններն ուսանելով: Դպրոցում նրա Հետ էին նաև Հայ մանուկներից ոմանք, որոնց յետագայում Բարսեղն ուսումնակից եղաւ Աթէնքում:

Պատահեց, որ մանկութեան տարիներին Բարսեղը մերձիմահ Հիւանդացաւ: Հայրը խոր տրտմութեան պահին քնի մէջ տեսաւ Տիրոջը, որ Աւետարանում թագաւորազնին ասուածը երկրորդեց իրեն. «Գնա՛, քո որդին կենդանի է» [տե՛ս Յովհ. Դ 50]: Նոյն Հաւատքով լսելով նա թագաւորազնի պէս ստացաւ իր Հաւատքի պտուղը. Բարսեղն առողջացաւ և վերադարձաւ իր նախկին կայտառութեանը:

Հօր և տատի վախճանուելուց յետոյ, 16 տարեկանում, Բարսեղն իր անձը տունց առաւել ուսողութեան ոչ միայն կապազովկացիների, այլև՝ պաղեստինցիների Կեսարիայում, որ առաւել բարգաւաճ քաղաք էր: Բազում տարիներ այս կողմերում ապրելուց և կրթուելուց յետոյ զնաց Կոստանդնուպոլիս՝ թագաւորանիստ քաղաքի ուսումնարաններում առաւելը գտնելու նպատակով: Ըստ ոմանց՝ այստեղ, իսկ ըստ այլոց՝ ասորացիների Անտիոքում (ոմանք էլ ասում են՝ Աթէնքում, որտեղից Բիւզանդիա էր եկել), սուրբ Բարսեղն աշակերտեց Հեթանոս փիլիսոփայ և անուանի վարժապետ Լիրանիոսին:

Երբ, մօտաւորապէս Տիրոջ 343 թուականին, սուրբ Բարսեղը զնաց Աթէնք, այնտեղ Հանդիպեց իր գաւառակցին ու ծանօթին՝ Գրիգոր Նազիանզացուն, և մտերմացաւ նրա Հետ: Միմեանց գործակից լինելով նրանք առաջադիմում էին ամէն բանում: Լինելով կարեւոր գիտութիւնների մէջ Հմուտ և կենցաղավարութեամբ՝ առաքինի՝ նրանք Հրեշտակների պէս էին երեւում աթէնացիների մէջ:

Թէպէտ այն ժամանակ Հելլենացիների Աթէնքում շատ էին իմաստուն վարժապետները, բայց աշակերտների բազմութեամբ ու պերճախօսութեամբ առաւել յայտնի էր Պոռէր կամ Պարոյր (ինչպէս կարծւում է) Միւնեցի կամ Արծրունին, որին յոյներն անուանում էին Բոսէրէսոս Հայկազուն քրիստոնեայ սոփիստէս: Նրա մասին իր աշակերտը՝ յոյն Հեթանոս փիլիսոփայ Եւնապիոսը, «Փիլիսոփաների վարքում» գրում է. «Նա Հայոց աշխարհից էր, այսինքն՝ Հայաստանից, որ սահմանակից է Պարսկաստանին» և դարձեալ՝ «Բախտը մանկուց նրան, Հայաստանից Հանելով, ձգեց Անտիոք, որովհետեւ ուղիղ Աթէնք չեկաւ: Անտիոքում, ճարտասանութիւն ուսանելով, Պարոյրն Աթէնք՝ Յուլիանոս վարժապետի

մօտ եկաւ Հեփեստիոնի Հետ, որի Հետ մի Հոգի և մի մարմին էր: Բայց Յուլիանոսի աչքն առաւել Պարոյրի վրայ էր, որին աշակերտները վարժապետից յետոյ նրա յաջորդ ընտրեցին: Պարոյրին աշակերտեցին պոնտացիները և սահմանակից բոլոր ազգերը՝ թիւթանացիները, ասիացիները, եգիպտացիները և լիբէացիները, մինչև որ ուրիշ ուսուցիչներ նախանձեցին և կաշառեցին Անթիպատոսին՝ նրան Աթէնքից Հանելու Համար»:

Այնպէս եղաւ, որ նրա սքանչելի Համբաւի պատճառով Կոստաս կայսրը Պարոյրին Հրաւիրեց Գաղղիա և իր պալատի մեծամեծներին կենակից ու սեղանակից դարձրեց, մանաւանդ որ առաքինի և խստակրօն էր, առոյգ ու գեղապանծ, Հասակով բոլորից մի ոտնաչափ բարձր, իսկ Հանճարով ու Հեռտորութեամբ՝ մէն-միակը: Կայսրը մինչև անգամ նրան Հոռմ ուղարկեց, որպէսզի Հոռմէացիները ևս տեսնեն այսպիսի անզուգական մարդուն: Հոռմում նրանով այնքան սքանչացան և պատուեցին, որ մինչև իսկ Հասակի չափով արձան կանգնեցրին այսպիսի վերտառութեամբ՝ «Հոռմի թագաւորից՝ Խօսքի թագաւորին»: Ապա կայսրը նրան արձակեց, որպէսզի գնայ Աթէնք՝ իր վարժապետութեան աթոռը՝ շնորհելով նաև պատուի արտաքին շուք՝ արքունական բանակների ոստիկանի կամ իշխանի կոչում, որպէսզի կարողանայ կղզիներից պահանջել ցորենի Հարկը՝ աթէնացիների կարիքների Համար: Իսկ նրա վախճանի մասին այսպէս է գրում Եւնապիոսը. «Պարոյրը վեր բարձրացաւ մարդկանցից՝ այսչափ և այսպիսին լինելով և իր խօսքով ու ճառերով լցնելով աշխարհը: Նրան աշակերտեցի Հինգ տարի: Նա ութսունհինգ տարեկան էր, բայց՝ ժիր ու յորդառատ խօսքով, ծերութեան օրով անչափ գեղեցիկ ու աստուածային այր, իսկ գործերը՝ մեծամեծ և երկնային: Եւ այս՝ նրա՝ իմ վարդապետը լինելու պատճառով չեմ ասում»: Ահա այսպիսի և այսչափ այրը՝ Պարոյր Հայկազունը, Բարսեղի և Գրիգորի առաջին ու գլխաւոր ուսուցիչը եղաւ Աթէնքում, նրանից յետոյ՝ սոփիստէս Լիրանիոսը, ում ուրացող Յուլիանոսը Հեթանոսութեան Համար նախապատուութիւն էր տալիս, քան քրիստոնեայ Պարոյրին, ում Հանդէպ էլ դժկամ էին և նոյն յոյն իմաստունները:

«Պարոյրի յիշատակը նրանով անմահացաւ, ասում է Բոլլանդեան Բայերտիոսը, և նրա աշակերտները եղան սուրբ Բարսեղը և Գրիգորը. նաև՝ որ փոքր ի շատէ Հալածանքներ անգամ կրեց Յուլիանոսից, մանաւանդ որ չընդունեց նրա ոչ մի պարգեւը՝ գարջելով նրա ամբարշտութիւնից, որովհետեւ, ինչպէս «Ջրոնիկոնում» գրում է Հերոնիմոսը, «Յուլիանոսն օրէնք էր սահմանել, որով արգելել էր քրիստոնեաներին ազատ արուեստների վարժապետներ լինել և միայն Պարոյրին էր շնորհել ուսուցանել քրիստոնեաներին, սակայն նա ինքնակամ թողեց զարատունը»:

Այս եղաւ Ուրացողի թագաւորութեան օրերին, իսկ այն, որ դրանից առաջ նա Բարսեղի և Գրիգորի Հետ վայելել էր Պարոյրի աստուած-

իմաստ վարժապետութիւնը, իսկ յետոյ չարացել նրա դէմ՝ քրիստոնեայ լինելու համար, վկայում է սուրբ Բարսեղի գիրը՝ ուղղուած Յուլիանոս Ուրացոյին. «Յիշեցնում եմ քեզ մեր ուսման փոյթը, որով սուրբ ու գերագոյն ուսմունքը միասին ուսանեցինք Աթէնքում եւ միասին մերձեցանք աստուածեղէն գրքերի վերծանութեանը»:

Աստուածարան Գրիգորը պատմում է. «Աթէնքում Բարսեղին ուսումնակից հայ ուսանողներ կային Հայաստանից, եւ երբ ուսման նրբին խնդիրների մէջ նրանք նեղը գցեցին Բարսեղին, ես, վրայ Հասնելով, նախ իրաւացի Համարեցի նրանց, ապա, ճարտարութեամբ Բարսեղի կողմն անցնելով, նրան յաղթող դարձրեցի, որով առաւել ջերմացաւ մեր բարեկամութիւնը»:

Բայց Բարսեղն Աթէնքը չգտաւ այնպիսին, ինչպիսին, որ յոյս ունէր տեսնել, քանզի նրա սիրտը վերինն էր խորհում, մինչդեռ՝ աթէնացիները Հետամուտ էին երկրաւոր գիտութիւնների եւ աշխարհիկ փառքի ու վայելքների: Նրա Հոգին տրտմում էր, եւ Աթէնքը կոչում էր ունայնութիւն եւ սնտոսի երջանկութիւն: Իսկ Գրիգորը նրան յորդորում էր չվհատուել մինչեւ ուսման ընթացքն աւարտելը, որից յետոյ Համամիտ ու Համակամ իրենց անձերը կնուիրեն Հոգեւոր վարդապետութեան: Սրանով սփոփուելով՝ Բարսեղը միառժամանակ Հանդարտուեց: Նրանց երկուսի՝ Բարսեղի եւ Գրիգորի կենցաղավարութիւնը սքանչելի էր բոլորի աչքում Հեռու երիտասարդական ցանկութիւններից ու զբաղումներից եւ զարդարուած առաքինակրօն գործերով: Նրանք ծաղրում եւ այպանում էին Հելլէնների պաշտամունքները, պանծալով բերկրում էին Ջրիստոսի անուամբ եւ քրիստոնէական առաքինութեամբ լցնում աթէնացիների աչքերը:

Սրանից յետոյ, 355 թուականին, Յուլիանոսի՝ Աթէնք գալուց մօտ մէկ տարի անց, Բարսեղը, աւարտելով ուսումը, Հեռացաւ Աթէնքից՝ Հրաժեշտ տալով Գրիգորին: Ասես մի մարմինը երկու մասի բաժանուեց, այս պատճառով Գրիգորը նրանից յետոյ երկար չմնաց այնտեղ: Եւ նրանց Հեռանալուց յետոյ Աթէնքը մնաց որպէս մարմին՝ առանց Հոգու:

Արդ, երբ Բարսեղը Հայրենիք վերադարձաւ, կեսարացիները, տեսնելով նրան բոլոր գիտութիւններով ու առաքինութիւններով զարդարուած եւ կատարելութեան չափին Հասած, ընդունեցին նրան իբրեւ իրենց քաղաքի նորոգիչ ու պահպանիչ: Իսկ նրա քոյրը՝ սքանչելի Մակրինան (ինչպէս գրում է նրանց եղբայր Գրիգոր Նիսացին), մտահոգուելով, որ չլինի թէ Բարսեղը, երկրաւոր իմաստութեամբ լցուած, զանց առնի Հոգեւորը, նորոգում էր նրա սիրտը Ջրիստոսի սիրոյ եւ քրիստոնէական կատարելութեան մէջ՝ ինչպէս թէ ինքնակամ ընթացող երիվարին եւս մտրակելով: Եւ այսպէս, Բարսեղը, արհամարհելով աշխարհի փառքն ու աշխարհիկ գիտութիւնները, իր անձն ամբողջովին տուեց աստուածային

իմաստութեան եւ ծայրագոյն խոնարհութեան, ինչպէս Մովսէսը, որ երբայեցիների մօտ ոչինչ Համարեց եգիպտացիների մեծամեծ գանձերը:

Յայտնի չէ, թէ երբ է մկրտուել Բարսեղը: Ստոյգ է թուում այն [կարծիքը], թէ Գրիգոր Աստուածարանի նման նա մկրտուեց Աթէնքից վերադառնալուց յետոյ, Կեսարիայի Տիանէոս պատուական եպիսկոպոսապետի կողմից, ով նրան Եկեղեցու զբաղաւորաց ու պաշտօնեայ կարգեց:

Բարսեղը Կեսարիայում երկար չմնաց, այլ, Հետեւելով Աւետարանի խօսքին՝ թողնել ամէն ինչ եւ գնալ Ջրիստոսի ետեւից, գնաց Աղեքսանդրիա եւ եգիպտացի Հայրերի անապատ, շրջեց Պաղեստինում, Ստորին Ասորիքում եւ Միջագետքում միայնակեացների մօտ, եւ, նախանձախնդիր լինելով նեղ եւ անձուկ ճանապարհին, նրանցից քաղեց կրօնաւորական կեանքի բոլոր ծաղիկները: Ինչպէս ինքն է ասում՝ «Ես զարմանում էի նրանց վրայ եւ երանելի Համարում այն այրերի կեանքը, որով Հետեւ գործով էին յայտնի դարձնում Յիսուսի մահն իրենց անձերում կրելը: Եւ ես կամենում էի իմ կարողութեան չափով Հետեւող լինել նրանց»:

Երբ Կեսարիա վերադարձաւ, կամեցան որպէս Եկեղեցու պաշտօնեայ ունենալ նրան, բայց նա փութաց Հանդարտուել առանձնութեան մէջ: Նոյն գրութեամբ յորդորում էր Գրիգոր Նագիանզացուն՝ ըստ իրենց նախկին խորհուրդների: Սակայն Գրիգորի ծնողները միառժամանակ չթողեցին նրան, իսկ Բարսեղը, քանի որ այդպիսի արգելք չուներ, առանձնացաւ Պոնտոսի մի կողմում, մանաւանդ որ նրա երանելի մայրը՝ Եմեղիան, դստեր՝ Մակրինայի Հետ արդէն մտել էր կուսանաց վանք, որ գտնուում էր Նէոկեսարիայից ոչ Հեռու: Նէոկեսարացիները Բարսեղին խնդրեցին իր Հօր նման դպրոցի վերակացու լինել՝ շատ քաներ խոստանալով, բայց նա ընտրեց անապատի առանձնութիւնը մի լեռան վրայ՝ մայրիների խիտ անտառում պարապելով աղօթքով, պահքով, տքնութեամբ եւ Սուրբ Գրքի ընթերցանութեամբ, կատարելով միայնակեացների ամբողջ ճգնութեան կարգը, սպանելով մարմնի երկրաւոր անդամները, իրեն կրթելով բոլոր ներքին առաքինութիւնների մէջ, Հեռանալով աշխարհից եւ մերձենալով Աստծուն:

Այնտեղ 358 թուականին նրան միանում է եւ Գրիգորը: Եւ Հաւատքի այս լծակիցները, խօսքով ու գործով յորդորելով միմեանց, ընթանում էին զօրութիւնից զօրութիւն: Ծգնում էին առանձին խողերում եւ միմեանց Հանդիպում Հոգեւոր Մխիթարութեան Համար: Այն ժամանակ եղբայրները ժողովուեցին մեծն Բարսեղի մօտ, նրան ճանաչեցին Հոգեւոր Հայր ու Հոգեւոր կարգերի վարժիչ եւ կրօնաւորեցին նրա ձեռքի տակ: Բարսեղն ամենայն բարեկարգութեամբ Հրահանգներ տուեց նրանց գիտնաւոր վարդապետութեամբ Հանդերձ՝ տեսականը գործնականի Հետ Համակցելու Համար, աւանդեց նաեւ կանոններ եւ մէկ առ մէկ մեկնեց

դրանք: Դրանից յետոյ սուրբ Բարսեղի կարգն ու կանոնադրութիւնը Հաստատուեց այնտեղ եւ քաղում այլ տեղերում, մասնաւոր, երբ իր եպիսկոպոսութիւնից յետոյ քաղմացրեց վանքերն ու վանականներին եւ ամբողջացրեց իր կանոնադրութիւնը: Իսկ Գրիգորը որոշ ժամանակ (մօտ երեք տարի) Բարսեղի մօտ մնալուց յետոյ Հարկադրուեց վերադառնալ տուն՝ իր ծերունի հօր մօտ, եւ ձեռնադրուել քահանայ, ապա վերադարձաւ Բարսեղի մօտ եւ բռնադատելով նրան իր Հետ տարաւ:

Այն օրերին Կեսարիայի Տիանէոս արքեպիսկոպոսը, մահուան գուռը Հասնելով, իր մօտ կանչեց Բարսեղին եւ երդուելով նրան ասաց, որ ակամայ է եղել իր սխալուելը եւ Կոստանդինոս կայսեր Հրամանով որոշ եպիսկոպոսների միաձայն դաւանութիւնը ստորագրելը, որպէսզի Եկեղեցին չպառակտուի: «Մինչդեռ ես, - ասում է,- չեմ Հեռացել Նիկիայի 318 սուրբ Հայրապետների դաւանանքից եւ քեզ էլ պատուիրում եմ Հաստատուն մնալ նրա մէջ»: Այսպէս էր խօսում, որովհետեւ այդպիսի դէպքերի պատճառով գայթակղութեան առիթ էր տուել Բարսեղին եւ այլ ուղղափառների:

Տիանէոսի վախճանուելուց յետոյ կապազովկացիների Կեսարիայի արքեպիսկոպոսութեան աթոռին նստեց Եւսեբիոսը: Վերջինս Բարսեղին քահանայ ձեռնադրեց, իսկ երանելին տրտմեց, որովհետեւ իրեն անարժան էր Համարում եւ իր առանձնութիւնը՝ խափանուած: Աստուածարան Գրիգորը նրան գրեց եւ Աստուծոյ կամքով միութեանք իրեն օրինակ բերելով, թէ՛ «Ես եւս Հնազանդութեան Համար նոյն ծառայութիւնն ընդունեցի»:

Այնուհետեւ եպիսկոպոսապետի Հրամանով սուրբ Բարսեղը սկսեց Եկեղեցում քարոզել Աստուծոյ խօսքը եւ ժողովրդին մեկնել Առակաց գիրքը: Բայց չթողեց իր առանձնութիւնը, որքանով այն իրենից էր կախուած, որովհետեւ ազատ պահեցին առանձնանում էր տանը՝ աղօթելու եւ ճգնելու: Կեսարացիներից աշակերտներ Հաւաքելով նրանց վարժեցնում էր կրօնաւորական կարգերի եւ իր կանոնների մէջ:

Այն օրերին, Կոստանդինոսից յետոյ, Յուլիանոս Ուրացողի թագաւորելու ժամանակ, երբ գաղտնի եւ յայտնի պատերազմներ սկսուեցին Աստուծոյ Եկեղեցու դէմ, Եւսեբիոս Հայրապետի եւ Բարսեղ քահանայի միջեւ գծտուութիւն ընկաւ: Աստուածարանն ասում է, որ եպիսկոպոսը մարդկային թուլութիւն կրեց. թերեւս նախանձեց ժողովրդի աչքում նրա ունեցած պատուին: Եւ որովհետեւ շատ էին նրանք, ովքեր Բարսեղի կողմից էին, Բարսեղը երկիւղեց՝ չլինի թէ մեծ աղմուկ բարձրանայ եպիսկոպոսապետի դէմ (մասնաւոր, ուրիշ եպիսկոպոսներ նոյնպէս դժգոհ էին նրանից), եւ որպէս խաղաղութեան Հնար գտաւ իր ցանկալի անապատը եւ կրկին անգամ առանձնացաւ այնտեղ: Նրա Հետ առանձնացաւ եւ Գրիգոր Աստուածարանը, ով եպիսկոպոսապետին Հաշտեցրեց Բարսեղի

Հետ: Բայց տակաւին նրկուսով անապատում մնացին եւս երեք տարի: Այդ ընթացքում Բարսեղը մերթ ընդ մերթ գալիս էր սատարելու Եկեղեցուն, մինչեւ իսկ եպիսկոպոսապետի Հրամանով Հեռաւոր տեղեր՝ Քաղկեդոն, Կոստանդնուպոլիս էր գնում: Զգուշանալով արիտականների Հետ վիճելուց (որոնց զիտէր անգեղ՝ չարիքից) զօրաւոր խօսքերով գրեց նրանց դէմ:

Ասում են՝ սուրբ Բարսեղի քահանայութեան եւ միայնակեցութեան օրերին են տեղի ունեցել դէպքերը նրա եւ Յուլիանոսի միջեւ, թէպէտ ոմանք վերագրում են նրա եպիսկոպոսութեան օրերին: Որովհետեւ ուրացող կայսրը, որ շատ Հալածեց Եկեղեցին, առաւելապէս՝ առաջնորդներին ու վարդապետներին, ակնածելով մեծն Բարսեղից՝ Հնար մտածեց նրան սէր կեղծաւորել իբրեւ Աթէնքի իր դասակցի եւ շողոքորթ խօսքերով մի թուղթ գրեց նրան: Սուրբը, Հասկանալով նրա խորամանկութիւնը, յայտնեց նրա սրտի չարութիւնը, կշտամբեց անգգամութիւնը եւ երբեմնի դաւանած Հաւատքի դէմ ընդվզումը: Իսկ ուրացողը լրբաբար կրկին գրեց նրան, թէ՛ «Քրիստոնէական կրօնին անծանօթ չեմ, ընթերցել եմ ձեր գրքերը: Եւ ինչ որ կարդացել եմ, Հասկացել, քայց յետոյ արՀամարՀել եմ: Իսկ դու, - ասում է,- ճանաչիր այժմ իմ բարձր ինքնակալութիւնը եւ կայսերական աթոռի օրինաւոր ժառանգութիւնը եւ ուղարկիր ինձ Հազար լիտր ոսկի՝ պարսկական պատերազմի պէտքերի Համար»:

Սուրբ Բարսեղը նրան պատասխանեց. «Ինչ որ ընթերցել ես, չես Հասկացել, որովհետեւ եթէ Հասկանայիր, չէիր դատապարտի: Քո կողմից շատ քիչ առաքինութիւն եւ անչափ շատ չարիք է գործուել, քայց ոչ այնքան՝ մեր դէմ, որքան, ինչպէս ասում է, քո գլխին: Սոսկում եմ դողալով, երբ մտածում եմ, որ ծիրանի է գցած վրադ եւ գլուխդ՝ թագով պսակուած, որովհետեւ դրանք առանց բարեպաշտութեան տրուեցին քեզ եւ ոչ թէ պատուելի, այլ անպատիւ են ցոյց տալիս գլուխդ: Առաւել ծաղրելի, քան դու, ոչ ոք չի տեսել մինչեւ այժմ, քանի որ, վեր բարձրանալով ու մեծանալով, ելար այնտեղ, ուր ձգեցին քեզ անողորմ դեւերն ու չարքերը, որովհետեւ նրանք են, որ, ինչպէս դու սովոր ես պարծենալ, մեղուի պէս թռչելով գլխիդ շուրջ, քեզ Համար պսակ բոլորեցին: Արդ, թագաւորելով, սկսեցիր ոչ միայն մեծամեծերի վրայ փքուել, այլեւ՝ Աստուծոյ վրայ բարձրամտել եւ բոլորի մօր ու դայակի՝ Եկեղեցու Հանդէպ թշնամանալ: Իսկ ինձանից՝ չնչին մարդուցս, պահանջում ես Հազար լիտր ոսկի: Ի՞նչ Հաճոյ թուայ քեզ, ո՞վ քաջ, ներել մեզ, որ Հազար այնքան ինչք ունենք, որ եթէ պէտք լինի սպառել, այս մի օրուան բաւական չի լինի, որովհետեւ խոհարարութեան արուեստը դադարել է մեր տանը, եւ դանակ չի մօտենում արեանը, մեր լաւագոյն կերակուրը բանջարի տերեւն է մի կտոր Հացով»:

Պատմում են, որ Յուլիանոսի մահը Պարսկաստանում սուրբ Բար-

սեղի եւ բոլոր Հաւատացեալների աղօթքներով եղաւ:

Ուրացողից յետոյ Եկեղեցու Հալածանքները շարունակուեցին արիսեան Վաղէս կայսեր կողմից: Այնժամ Բարսեղը եւ Գրիգորը, ինչպէս ասում է ինքը՝ Աստուածաբանը, Պոնտոսի անապատից շուտափոյթ իջան Կեսարիա՝ սաստար լինելու իրենց մայր սուրբ Եկեղեցուն: Այն ժամանակ մեծն Բարսեղը Հաւատացեալների Համար եղաւ յորպէս պարիսպ եւ Հօր աշտարակ թշնամու դիմաց, որպէս ազարակի փշերն այրող Հուր, քանզի ոչ միայն ուղղափառներին ամրացրեց, այլեւ չարափառներին սաստեց եւ ամօթապարտ ետ դարձրեց՝ խօսքով, գործով ու գրով Հաւատքի քաջամարտիկ լինելով:

Երբ շատերը տանջանքների, կապանքների, աքսորի ահից կամ Վաղէսի մօտ շնորհ գտնելու յոյսով ստորագրում էին ուղղափառութեան դէմ նրա Հրովարտակը, Բարսեղը մեծ զօրութեամբ վառուեց, Հոգով զօրացաւ ինքնակալի դէմ, երբ նա, Կոստանդնուպոլսից ելնելով, շարժում էր դէպի արեւելք՝ Համոզուած, որ ոչ ոք չի ընդդիմանայ իր Հրամաններին, քանզի խորտակել էր բարբարոսներին: Նրանից առաջ, իբրեւ թէ թագաւորի ճանապարհը պատրաստելու Համար, եպարքոսը քաղաքից քաղաք էր մտնում, Հեռացնում ուղղափառ եպիսկոպոսներին եւ Հաստատում չարափառներին, մինչեւ եկաւ կապաղովկացիների Կեսարիա, ուր կանչեց Բարսեղին եւ ստաց. «Արդեօք լսե՞լ ես, թէ ինչ եմ արել այն տեղերում, որտեղով անցել եմ: Արդ, ասում եմ քեզ, եթէ լսես ինձ, թագաւորից քեզ փառք ու պատիւներ առնել կտամ, նաեւ՝ Եկեղեցու ղեկավարութիւնը: Ապա թէ ոչ, քեզ են սպասում դառնութիւններն ու վիշտը»: Երանելին պատասխանեց. «Ձեզ պէտք է ոչ միայն ետ կանգնել այն չարքից, որ գործեցիք, այլեւ՝ ապաշխարել: Իսկ մեզ ոչինչ անել չէք կարող որովհետեւ ոչ մի անցաւոր բարիք չի կարող պատրել աստուածաւէրներին, եւ ոչ մի չարիք՝ վախեցնել նրանց, ովքեր վերնային յոյսի ակնկալիքն ունեն: Զրիստոնեան կարող է ցաւել այն բանի Համար միայն, որ ի բնէ միայն մէկ մահ է սահմանուած, եւ ինքը չի կարող բազում անգամ մեռնել ճշմարտութեան Համար»:

Եպարքոսը զարմացաւ Աստուծոյ մարդու Համարձակութեան վրայ եւ սկսեց մեղմաբար խօսել. «Մեծ ինքնակալի կամօք թեթեւ բան մի Համարիր, որ կամենում է լինել քո ժողովրդից, այլ Համաձայնիր նաեւ նրան վարդապետ լինել: Իսկ այդ կլինի, եթէ Հաւատոյ Հանգանակից Հանես «Համագոյակից»-ը կամ «Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից»-ը: Բարսեղը պատասխանեց. «Ծանր է Աստուծոյ Եկեղեցու մէջ ընդունել այդ ինքնակալին: Իհարկէ, մեծ բան է Հոգին ապրեցնելը, ոչ՝ որովհետեւ կայսեր է, այլ՝ որովհետեւ մարդու է: Բայց ես այնքան Հեռու եմ Հաւատոյ Հանգանակից մի բան պակասեցնելուց կամ աւելացնելուց, որ յանձն չեմ առնի բառերի դասաւորութիւնն իսկ փոփոխել»: Այսպէս Հաստա-

տուն կերպով Բարսեղը դիմակայեց Վաղէսին, որ յոխորտանքով Կեսարիա եկաւ եւ ոչինչ չկարողացաւ անել այնտեղ, այլ, Հակառակ իր կամքի, սէր ցոյց տալով Բարսեղին ու կեսարացիներին, գլխիկոր Հեռացաւ այնտեղից արիսեան եպիսկոպոսների Հետ, որոնք շրջում էին իր Հետ:

Երբ Կեսարիայի եպիսկոպոսապետ Եւսեբիոսն այս կեանքից փոխուեց, ամէնքը կամեցան նրա տեղում Բարսեղին դնել: Բարսեղը փութաց գրել Գրիգոր Աստուածաբանին՝ շտապ գալ իր մօտ, իբրեւ թէ Հիւանդ է, բայց կամենում էր Կեսարիայի առաջնորդ ընտրել տալ Գրիգորին: Իսկ Գրիգորը, ճանապարհ ընկնելով, երբ լսեց Եւսեբիոսի մահուան մասին, նաեւ՝ մտաբերելով Բարսեղի Հնարները, չուզեց գնալ նրա մօտ, այլ շատերին յորդորեց Բարսեղին նստեցնել Հայրապետութեան աթոռին: Այդպէս էլ եղաւ: Բարսեղին ձեռնադրող եպիսկոպոսների մէջ գլխաւորը Գրիգորիոս ծերունի եպիսկոպոսն էր՝ Գրիգոր Աստուածաբանի Հայրը: Այս եղաւ Տիրոջ 370 թուականին: Իսկ թէ որքա՞ն վայելուչ էր նրա՝ Հայրապետութեան աթոռին նստելը յօգուտ Կաթողիկէ Եկեղեցու, եւ թէ ինչպիսի՞ շնորհով ու իմաստութեամբ կառավարեց իր Հօտը, ո՞վ կարող է պատմել... Թո՞ղ որ քաջում նեղութիւններ կրեց մերձաւորների ու Հեռաւորների երկպառակութիւնների պատճառով, բայց ամէն ինչում մնաց իբրեւ Հաստատուն վճճ շատ Հարցերում գործակից ու խորհրդատու ունենալով Աստուածաբանին, որին ճարտարութեամբ, Հակառակ նրա կամքի, եպիսկոպոս ձեռնադրեց, որպէսզի նրա լոյսն, առաւել լուսաւորի Աստուծոյ Եկեղեցին:

Մեծ եղան Բարսեղի աշխատութիւնն ու ջանքերը ժամանակի արհեստական եւ այլ աղանդներ արմատախիլ անելու գործում: Քանզի նրա նպատակն էր ոչ միայն անաղարտ պահել իր Հօտը, այլեւ՝ սուրբ, անբիծ ու խաղաղութեան մէջ տեսնել ողջ Ընդհանրական Եկեղեցին: Դրա Համար թղթեր էր գրում տարբեր վայրեր, առաւելապէս՝ մեծն Աթանաս Աղեքսանդրացուն եւ Հռոմի Հայրապետ Դամասոսին, եւ Հանապազօրեայ աղօթքներով ու մտածութեամբ մաշում էր իր անձը, լուսաւոր ու ազդու բառերով ճառեր գրում՝ Հերեսիովտեաններին վանելու եւ ուղղափառ վարդապետութիւնը Հաստատելու Համար: Նաեւ ուղղափառ եպիսկոպոսների երկպառակութիւնը քաղմահնար խորհուրդներով դէպի Աստուծոյ միաբանութիւնն ու խաղաղութիւնն էր դարձնում՝ յանձն առնելով կրել թշնամիների քաղմապատիկ բամբասանքները: Ծգնում էր Հանապազ Եւ անձամիներթի աշխատում, գրում մեկնութիւններ եւ քարոզում Աստուծոյ խօսքը: Քաջ Հովուի եւ տիեզերալոյս վարդապետի բոլոր այլ առաքինի գործերն անհնար է մէկ առ մէկ յիշատակել: Նա շատ Հալածանքներ կրեց Վաղէս կայսեր եւ նրա գործակիցների կողմից, սակայն ամէն ինչում յաղթող եղաւ: Մինչեւ իսկ, երբ կայսրը կամեցաւ նրան աքսորելու վճիռ տալ, Աստուած խափանեց, որովհետեւ նոյն գիշեր, երբ

վճիռն էր գրում, արքունի տան վրայ պատուհաս իջաւ. արքայի որդին մերձիմահ Հիւանդացաւ, իսկ կինը, յանկարծակի ցաւերով բռնուելով, տանջուամ էր որպէս թէ դահիճների ձեռքում: Սուրբ Եփրեմն աւելացնում է, որ վճիռը ստորագրելու պահին Վաղէսի ձեռքում գրիչը երկ անգամ կտրուեց, մինչև ստիպուած եղաւ դադարեցնել գրելը: Ապա երբ մանկանը բուժելու համար բժիշկներից յոյսը կտրեց, ստիպուած եղաւ ապաւինել սուրբի աղօթքներին եւ միջնորդներին միջնորդ սուրբ հայրապետին ետ կանչեց: Նրա գալուց անմիջապէս յետոյ մանկան Հիւանդութիւնը մեղմացաւ, բայց երբ Վաղէսը խստասիրտ գտնուեց եւ չդարձաւ իր մոլորութիւնից, դարձեալ մանուկը վտանգուեց: Այնժամ մեծն Բարսեղն ասաց թագաւորին. «Ո՛վ կայսր, եթէ հաւատաս իմ հաւատքին եւ ընդունես Եկեղեցու միութիւնը, մանուկդ կապրի»: Եւ երբ նա չհամաձայնեց, Բարսեղն ասաց. «Ուրեմն թող Աստուծոյ կամքը լինի մանկան վրայ»: Այս ասելով հեռացաւ, իսկ մանուկը հոգին աւանդեց:

Իսկ Մոզեստիոս եպարքոսը, ծանր Հիւանդանալով, աղաչեց նրան օգնել իրեն: Բարսեղը ձեռքը դրեց նրա վրայ: Եպարքոսն առողջացաւ, ուղղափառութեան դարձաւ եւ եղաւ Բարսեղի լաւագոյն բարեկամներից մէկը: Իսկ Վաղէսը, ակնածելով սուրբից, դադարեցրեց Հալածանքները: Մինչդեռ սուրբը տխրեց, որ չարժանացաւ մարտիրոսութեան կամ քսորի շարժարանքներին: Նա մխիթարական թղթերով քաշալներում էր տարագրուած եպիսկոպոսներին, առաւելապէս՝ Անտիոքի հայրապետ սուրբ Մելիտոսին, որի հետ բարեկամ էր, եւ, նրանից գիր ստանալով, ցնծում էր հոգով: Այն ժամանակ սուրբ Բարսեղը հովուում էր բոլոր այն ուղղափառ Եկեղեցիները, որոնց հովիւներն քսորուած էին: Գրիգոր Նիսացիին սուրբ Եփրեմի վարժում գրում է, որ ծերունին, Աստուծոյ առաջնորդութեամբ Կեսարիա գալով, ծանօթացաւ Եկեղեցու բերան, ոսկեղէն վարդապետութեան խօսնակ Բասիլիոսին եւ ցնծութեան օրհնառար ձայնով ողջունեց նրան, որովհետեւ հոգու կորովաբիւր աչքերով տեսաւ փայլակեացալ Աղաւնուն, որ, նրա աջ ուսին նստած, նրան թելադրում էր իմաստութեան խօսքեր, որոնք էլ նա ասում էր ժողովուրդին: Բարսեղն այն պատուական Աղաւնուց, այսինքն՝ Սուրբ Հոգուց, իմացել էր, որ հեռաւոր երկրից է եկել սուրբ արքան եւ որ նա Եփրեմ Ասորին է: Եւ երկու սուրբերի համար մեծ մխիթարութիւն եւ ուրախութիւն եղաւ:

Այնուհետեւ սուրբ Բարսեղն ապրեց մինչև Եկեղեցու խաղաղութեան սկիզբը եւ ուղղափառ եպիսկոպոսների քսորից դառնալը, որի մասին ինքը մարգարէացել էր Սամարիայի եպիսկոպոս Եւսեբիոսին ուղղուած թղթում: Տիրոջ 378 թուականին ուղղափառների հալածիչ Վաղէս կայսրը, բարբարոսներից պարտութիւն կրելով եւ կեանքն ու թագաւորութիւնը մեծապէս վտանգուած տեսնելով, հրաման տուեց քսորուած եպիսկոպոսներին ետ դարձնել, իսկ ինքը Թրակիայում, գոթերի կողմից

նետահարուելով եւ մի գիւղացու հիւղակ մտնելով, պաշարման մէջ ընկաւ եւ այրուեց՝ անգամ թաղումի չարժանանալով: Յաջորդ տարի թագաւորեց աստուածասէր Թէոդոս Մեծը, որ քսորից վերադարձրեց մնացած եպիսկոպոսներին եւ խաղաղութիւն հաստատեց Կաթողիկէ Եկեղեցում:

Ահա այսպիսի օրերին վրայ հասաւ սուրբ հայրապետ Բարսեղի վախճանը 379 կամ 380 թուականի տարեգլխին՝ յունուարի մէկին: Աստուծոյ այր Մովսէսի նման, որ տեսաւ պարզեական երկիրը, բայց չմտաւ այնտեղ, նոյնպէս էլ մեծն Բարսեղը կրեց Եկեղեցու բոլոր տառապանքներն ու վշտերը, իսկ խաղաղութիւնը չվայելեց, ինչպէս գրում է նրա եղբայրը՝ Գրիգոր Նիսացիին:

Բարսեղի կեանքի ժամանակը եղաւ գրեթէ այն ժամանակահատուածը, որ ընկած է Նիկիայի եւ Կոստանդնուպոլսի սուրբ ժողովների միջև՝ մօտ 56 տարի:

Սուրբ հայրապետի վախճանի հետ կապուած՝ յիշատակում է հետեւեալ պատմութիւնը.

Յովսէփ անունով մի հրեայ բժիշկ, որին սուրբ Բարսեղը սիրում եւ միշտ յորդորում էր ի Քրիստոս դառնալ, ոչ մի կերպ չէր համաձայնում, մինչև մօտեցան սուրբի փոխման օրերը: Եւ երբ Յովսէփը եկաւ եւ սրտի ցաւով յայտնեց, որ այդ օրը նա պիտի վախճանուի, մեծն Բարսեղն ասաց. «Չգիտես՝ ինչ ես ասում»: Հրեան այլաբանօրէն ասաց. «Հաւատա՛, տէ՛ր, քանզի արեգակն արեւմուտքում է այսօր»: Սուրբը նրան ասաց. «Իսկ եթէ ապրեմ մինչև առաւօտեան վեցերորդ ժամը, ի՞նչ կանես»: Պատասխանեց՝ կմեռնեմ: «Այո՛, կմեռնես մեղքերի եւ կկենդանանաս իմ Քրիստոսի համար»: Այնժամ հրեան երգուեց, որ ինքը կմկրտուի, եթէ սուրբի ասածները կատարուեն:

Յաջորդ օրը Բարսեղին կենդանի տեսնելով Յովսէփը սարսափեց, ընկաւ նրա ոտքերը եւ խոստովանելով Քրիստոսին, ասաց. «Այսուհետեւ հրամայի՛ր սուրբ Մկրտութեան կնիքը տալ ինձ ու ընտանիքիս»: Սուրբը, որ մահճի մէջ էր, ասաց նրան. «Ես իմ ձեռքով կմկրտեմ ձեզ»: Իսկ բժիշկը, նրա երակը զննելով, ասաց. «Հայր սուրբ, ընկել ես զօրութիւնիցդ, եւ քնութիւնդ իսպառ նուաղել է»: «Ունեմ քնութիւնս Կենագործողին, որ զօրացնում է»: պատասխանեց Բարսեղը: Եւ, այս ասելով, յանկարծ վեր կացաւ, եկաւ եկեղեցի եւ բոլորի առաջ մկրտեց նրան ու նրա ընտանիքին՝ Յովսէփին վերանունանելով Յովհաննէս: Այնուհետեւ երկրորդ պաշտամունքի ու Աստուծոյ խօսքի քարոզութեան մէջ, իսկ երեկոյնան, մահճի վրայ բազմելով, ուրախութեամբ հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը: Նրան թաղեցին տասներկու եպիսկոպոսներ, մեծ բազմութեամբ, մի տապանի մէջ, որտեղ էին սուրբ Ղեւոնդ հայրապետի նշխար

ները՝ Միֆիանոսի վկայարանում:

Սուրբի թաղման յիշատակութիւնից յետոյ, նրա պատուական նշխարների մասին չկայ ոչ մի տեղեկութիւն ո՛չ նախնիների, ո՛չ էլ յետինների մօտ, բայց միայն ասում է, որ սուրբի գլուխը, աջը եւ կողք գտնուում են Հռոմում, իսկ ոսկորների մի մասը՝ Փլանդրացիների Բրուք քաղաքում ժԱ դարում նրա անուամբ կառուցուած եկեղեցում: Նոյն դարում, յունաց Ալեքսիս Կոմնենոս կայսեր օրերում, նրանց մօտ սկսուեց սուրբ Բարսեղի տօնի կատարումը յունուարի 30-ին՝ Գրիգոր Ասուածաբանի եւ Յովհան Ոսկեբերանի Հետ միասին:

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՎԱՐՔԸ

Այս տիեզերալոյս վարդապետի յաջորդներս պատմում ենք նրա գերաշխարհիկ վարքը՝ յիշատակելով մեծամեծ գործերն ու ոսկեբուխ վարդապետութիւնը:

Երիցս երանելի սուրբ Հայրապետ եւ Եկեղեցու վարդապետ Յովհաննէս Ոսկեբերանը ծնունդ է Դ դարի կէսերին ազնուականի ընտանիքում: Նա բարեպաշտ ծնողների զաւակ էր, ազգութեամբ՝ ասորի, Անտիոք քաղաքից: Հօր անունը Սէկունդոս էր, որն ասորիների կայսերական զօրավարն էր, մօր անունը՝ Անթուսա: Ունէր մէկ աւագ քոյր: Նրանք ողջ ընտանիքով բարեպաշտ էին, սակայն յայտնի չէ՝ արդեօք սկզբից էին քրիստոնեայ, թէ՞ յետոյ դարձան: Յովհաննէսի մանկութեան Հասակում Հայրը մահացաւ, եւ նրա մանկամարդ մայրն այրի մնաց: Նա իր զաւակներին դաստիարակում էր պարկեշտ եւ առաքինի բարքով: Երբ Յովհաննէսը տասը տարեկան դարձաւ, մայրը նրան ուղարկեց ուսանելու: Եւ Յովհաննէսը, ըստ իր զարմանալի բնատուր ձիրքերի եւ ի վերուստ Աստուծոյ տեսչութեան, սքանչելի առաջադիմութեամբ ուսանեց ամէն գիտութիւն եւ իմաստութիւն, նոյնիսկ գերազանցեց ժամանակի բոլոր հելլէն եւ քրիստոնեայ իմաստուններին: Սովորելով նաեւ Աթէնքում իւրացրեց բոլոր օտար ուսմունքները: Տասնութ տարեկանում Անտիոքի Եկեղեցու առաջնորդ Մելիտոս Հայրապետի շնորհիւ նա շուտով Հեռացաւ սոփեստական բանորսակներից եւ փութաց ուսումնասիրել Սուրբ Գրքի վարդապետութիւնը: Երանելի Հայրապետը, որն ազգութեամբ Հայ էր, նկատելով պատանի Յովհաննէսի ուշիմութիւնը եւ սէր տածելով նրա Հոգու զեղեցկութեան Հանդէպ, յորդորեց Հեռանալ օտար դպրութիւնից եւ յաճախակի այցելել Հայրապետանոց: Մարգարէական լոյսով կանխատեսելով նրա առաջադիմութիւնը՝ երեք տարում դաստիարակեց բոլոր Հոգեւոր կանոններով ու վարդապետութեամբ եւ այդ ընթացքում մկրտեց նրան: Սուրբ Գրքի ուսումնասիրութեան ընթացքում Յովհաննէսը բարեկամացաւ Բասիլիոսի* Հետ: Նրանք յաճախ էին Հանդիպում: Բասիլիոսը խօսում էր Հոգեւոր ճանապարհից եւ միաժամանակ յորդորում, որ, միեւնոյն վանքում բնակուելով եւ միասին ճգնելով, ձգտեն Հասու լինել աստուածային իմաստութեանը: Յովհաննէսը նոյնն էր ցանկանում, սակայն մայրը թախանձանքներով եւ ազգու խօսքերով շարժում էր նրա գութը, որ չթողնի իր այրի մօրն անորդի եւ անտերունչ: Այսպէս Յովհաննէսի մտադրութեան իրականացումը Հետաձգուում էր: Բայց նա տանն էր ճգնում ինչպէս միակեաց. Հանդարտ ու լուռ էր մնում, օրերն

* Ոմանց կարծիքով սա Բարսեղ Կեսարացին է. սակայն, ըստ առանել ստոյգ եւնթադրութեան, խօսքը Անտիոքում սելեւկիացիների եպիսկոպոս Բասիլիոսի մասին է:

անցկացնում էր աղօթքով և Սուրբ Գրքի ընթերցանութեամբ՝ պահքով և տքնութեամբ Հանդերձ, գետնին քնելով և մարմնի փափկութիւնը Հիւծելով: Մայրը սիրով թողնում էր նրան այդպէս ապրել, միայն թէ իրենից չբաժանուէր: Եւ երանելի Յովհաննէսը, բացի եկեղեցուց ու Հայրապետանոցից, ոչ մի տեղ չէր ցանկանում գնալ: Մկրտուելուց յետոյ նա երբէք չերդուեց, ոչ էլ որեւէ մէկին ստիպեց երդուել, ո՛չ ստեց, ո՛չ էլ անիծեց որեւէ մէկին, ո՛չ խեղկատակութիւն արեց, ո՛չ էլ ծաղրաբանեց:

Յովհաննէսի և Բասիլիոսի Համբաւն այնպէս տարածուեց, որ ուզում էին նրանց եպիսկոպոս ձեռնադրել: Իմանալով այդ՝ Յովհաննէսը երկիւղեց, թէ կարող է յափշտակուել այդ մտքով: Առաքինի Բասիլիոսն էլ աղաչում էր չբաժանուել միմեանցից և խոստանում էր գործակցել թէ՛ ձեռնադրութիւնից խուսափելու և թէ՛ եպիսկոպոսութիւն յանձն առնելու դէպքում: Դրանից յետոյ Յովհաննէսը, տեսնելով Բարսեղի Հոգու բարեգութիւնը, նաեւ՝ իրերն անարժան Համարելով, Հեռացաւ ու թաքնուեց: Իսկ մօր մահից յետոյ երանելին առանձնացաւ Անտիոքի անպատում, ուր վեց տարի անձնատուր եղաւ անօրինակ ճգնութիւններով: Այդ ընթացքում նա իր Հրաշալի գրչով ուղերձներ գրեց՝ գովելով և ջատագովելով միակեցութիւնը:

Գեւորգ Աղեքսանդրացին պատմում է, թէ այդ շրջանում Յովհաննէսին երեւացին սուրբ Պետրոս ու Յովհաննէս առաքեալները: Պետրոսը նրան փականներ տուեց՝ ի նշան Հանդերձեալ քահանայութեան և եպիսկոպոսութեան, իսկ Յովհաննէսը՝ մատնան՝ ի նշան Յովհաննէսի՝ Սուրբ Գիրքը կատարեալ մեկնող լինելու: Պատմում է նաեւ, թէ Յովհաննէսի աղօթքով անտիոքացիներից մէկը բժշկուեց գլխի և աչքերի անբուժելի Հիւանդութիւններից, մէկ ուրիշն էլ՝ բորոտութիւնից, և նման այլ դէպքեր: Եւ զարմանալի ոչինչ չկայ, քանի որ սքանչելի է Աստուած իր սուրբերում:

Բայց Աստուծոյ նախախնամութեամբ Յովհաննէսն աշխարհի լոյս և Ընդհանրական Եկեղեցու լուսափայլ վարդապետը պիտի լինէր: Աստուած նրան Հարկադրեց թողնել անապատը և Անտիոք վերադառնալ, քանի որ, խիստ ճգնութիւնից ծանր Հիւանդանալով, ակամայ քաղաք իջաւ և գտաւ սուրբ Մելիտոսին: Երբ նրա առողջութիւնը վերականգնուեց, սուրբ Մելիտոսը նրան բռնադատեց և 380 թուականին սարկաւագ ձեռնադրեց:

Յովհաննէսը յաջողութեամբ առաջադիմում էր վարդապետութեան մէջ թէ՛ խօսքով և թէ՛ գրով, և ժողովուրդը կենցաղի դառնութիւնից քաղցրանում էր նրա սուրբ կենցաղավարութեամբ:

386 թուականին Մելիտոսին յաջորդած Փլաբիանոս Հայրապետը Յովհաննէսին քահանայ ձեռնադրեց, և այդ առանց Հրաշքի չեղաւ, քան-

զի զիջերային աղօթքի ժամանակ Աստուծոյ Հրեշտակը երեւաց Հայրապետին և պատուիրեց Յովհաննէսին քահանայ ձեռնադրել: Իսկ Յովհաննէսին երեւալով Հրեշտակը պատուիրեց շնորհիմանալ, քանզի այդ է Աստուծոյ կամքը: Ձեռնադրութեան պահին Սուրբ Հոգին աղաւնակերպ տեսիլքով իջաւ Յովհաննէսի գլխի վրայ:

Եւ ո՛վ կարող է պատմել ժողովրդի ուրախութիւնն ու Եկեղեցու բարեկարգութիւնը, երբ Յովհաննէս քահանան քարոզում էր ատեանում, քանզի նրա Հոգեշունչ ու Հոգեբուխ վարդապետութիւնը՝ ոսկեբերան արտասանութեամբ, Հոգու եռանդը՝ սքանչելի Համեստութեամբ, պերճ ատենախօսութիւնը՝ դիւրիմաց պարզութեամբ, Հեզութիւնը՝ զօրաւորութեամբ, բարձրութիւնը՝ խոնարհութեամբ, և Հոգու շնորհների բոլոր ձիրքերը, արտափայլելով երանելու խօսքերում և գործերում, դէպի նա էին ձգում բոլոր տեսնողներին և լսողներին: Ասես նոր «ձայն բարբառոյ» Յովհաննէսը կամ Հէնց ինքը՝ Պողոսը՝ Տարսոնեան փողը լինէր՝ յարութիւն առած, և կամ մի երկնառաք Հրեշտակ՝ մարմնով յայտնուած:

Յովհաննէսը նախքան ուսուցանելն իր մէջ էր կրում բոլոր առաքինութիւնները, առաւելապէս՝ խորը խոնարհութիւնն ու Աստուծոյ սիրոյ Հուրը և, առաքեալների նմանութեամբ, Փրկչին չարչարակից լինելու փափագը, նմանապէս և՛ սէրը մերձաւորի Հանդէպ՝ պատրաստ լինելով կեանքը զոհել եղբոր Համար. և այդ՝ առանց շահասիրութեան, առանց աշխարհեան ու մարդահաճութեան, Հեռու փառասիրութիւնից և բոլոր աշխարհիկ մտածութիւններից:

Ըաջ Հովուի պէս արի Հոգով և անպարտելի առաքինութեամբ նա դեղ ու դարման էր անտիոքացիների Համար. մէկին խրատում էր, միւսին՝ աղաչում, մերթ յանդիմանում էր, մերթ մխիթարում՝ տանը և Հրապարակաւ, առաւել ևս քարոզութեան ատեանում՝ բոլորի ներկայութեամբ:

397 թուականին, երբ վախճանուեց Կոստանդնուպոլսի Նեկտարիոս պատրիարքը, շատերն էին յաւակնում այն աթոռին՝ անձամբ կամ այլոց առաջարկութեամբ, բայց ողջ ժողովուրդը, Եկեղեցու միաբանութեամբ Հանդերձ, փափագում էր Անտիոքի աշխարհաքարոզ քահանայ Յովհաննէսին ունենալ որպէս Հովի ու առաջնորդ: Արկաղէոս կայսրն ականատես վկաներից լսել էր սքանչելի Յովհաննէսի գովաբանութիւնը և առաւելապէս՝ Եւրոպիոս ներքինապետից, որն արքունական գործերով շրջել էր արեւելեան կողմերում: Նա Հրովարտակ առաքեց արեւելեան կոմս Աստերիոսին, որպէսզի լուռ ու մուռ, առանց անտիոքացիների աղմուկն առաջացնելու, Յովհաննէսին ուղարկի Կոստանդնուպոլիս: Յովհաննէսը դեռ Կոստանդնուպոլիս չէր Հասել, երբ արգէն այնտեղ թագաւորի Հրամանով երեւելի քաղաքներից եպիսկոպոսներ էին Հաւաքուել՝ իրեն ձեռնադրելու:

գարէացան միմեանց մասին. թագուհու հրամանով ներքինիներէց ոմանք Յովհաննէսին ասացին, թէ Եպիփանը կամովին ստորագրեց արքունիան մուրհակում: Լսելով այդ՝ Յովհաննէսը յոյժ տրտմեց եւ այսպէս գրեց նրան. «Ո՛վ սքանչելի Եպիփան, դու յօժար եղար իմ անկմանը... Չե՛ս հասնի քո աթոռին»: Եպիփանն էլ գրեց նրան. «Ո՛վ դու, երիցս երանելի Քրիստոսի ճգնաւոր, կյաղթե՛ս ու կյաղթուես: Եւ ինչպէս, ըստ քո խօսքի, ես չեմ հասնի իմ աթոռին, նոյնպէս եւ դու չես հասնի քո արքունիակայրը»:

Եպիփանը Կիպրոս նաւարկելու ճանապարհին վախճանուեց: Նոյնպէս եւ երանելի Յովհաննէսը երկրորդ արտաքսման միջոցին չժամանեց սահմանուած արքունիակայրը: Արքունի գործը եկաւ Հայրապետին կալանելու: Յովհաննէսի ականջին հասել էր թագուհու սպանալիքը, թէ մեհանները կրացի, եւ յօժարութեամբ կամենում էր արքայ դառնալ: Նրան ձերբակալեցին եւ արտաքսեցին Հայոց Կոկիսոն քաղաք, որպէսզի ժողովուրդը նրա վերադարձի յոյսը չունենայ:

Այն օրը Կոստանդնուպոլսում տեղատարափ կարկուտ տեղաց, եւ երկնքից հուր իջաւ ու այրեց պատրիարքարանը: Հուրը երերում էր աթոռի վրայ, եւ այդ պահին հրի միջից ձայն լսուեց. «Ո՛ր է Աստուծոյ խօսքը պատմողը»: Մի քանի օր անց նրանք, ովքեր չարախօսում էին Յովհաննէսի մասին, սատակուեցին չարաչար մահուամբ, քանի որ ոմանց լեզուները պապանձուեցին, ոմանց աչքերը կուրացան, ոմանք էլ իսպառ խելագարուեցին:

Իսկ սուրբ Յովհաննէս Հայրապետը արքունիան ճանապարհով ուրախութեամբ էր ընթանում: Եւ ուր որ իջեւանում էր, անդադար քարոզում էր Աստուծոյ խօսքը եւ ջատերին զօրաւոր նամակներ էր գրում: Դրանցից յայտնի են դառնում նրա համբերութիւնն ու կատարեալ ներողամտութիւնը ընդ որ տառապանքներում. նա մինչեւ իսկ գովութեամբ էր խօսում այն մարդկանց մասին, որոնք իրեն արքայ էին տանում:

405 Թուականի ձմռանը Կոկիսոնում Ոսկեբերանը ծանր հիւանդութիւն կրեց, բայց, գարնան սկզբին առողջանալով, դարձեալ սկսեց գրել եւ քարոզել Աստուծոյ խօսքը: Ինչպէս յայտնի է, երանելի Յովհաննէսը, մէկ տարի Կոկիսոնում մնալով, շատ հայ աղքատների կերակրեց ոչ այնքան հացով, որքան՝ խօսքով:

Երբ սուրբի թշնամիներն իմացան, որ նա առողջացել է եւ իր հանգիստն է գտել Կոկիսոնում, ջանացին այնտեղից Արաբիսոն ամրոց տեղափոխել: Նրան ուղիղ ճանապարհով չտարան, այլ ձմռան օրերին շրջեցին լեռներում ու անտառներում: Այդ պատճառով նորոգուեց սուրբի հիւանդութիւնը, ինչպէս յայտնի է նրա նամակներից, որոնցում յիշատակուում են մինչեւ Արաբիսոն հասնելն իր կրած սոսկալի վշտերը՝ հիւան-

դութիւնից, աղքատութիւնից եւ աւազակներից:

Արաբիսոնում ոսկեգրիչը գրեց «Ո՛վ իր անձին չի վնասում, նրան ոչ ոք չի կարող վնասել» վերտառութեամբ սքանչելի խրատը: Բայց քանի որ ինչպէս Կոկիսոնում, նոյնպէս եւ Արաբիսոնում, Աստուած Ոսկեբերանին խօսքի եւ վարդապետութեան շնորհներ տուեց եւ պէս-պէս նշաններով բոլորի առջեւ փառաւորեց, երանելու ոտխները չկարողացան այդ հանդուրժել եւ թագաւորին հրամայել տուեցին, որ նրան Հայաստանի կողմերից Պոնտոսի սահմանները տանեն:

Երբ արդէն մօտ էին սահմանուած տեղին, սուրբը տկարութիւնից չկարողացաւ առաջ գնալ: Այդ պատճառով, երբ մերձեցան Կոմանա քաղաքին, կամեցան մի տեղ հանգրուանել եւ, քաղաքի դռնից հինգ-վեց մղոն անցնելով, պարիսպներից դուրս օթեւանեցին սուրբ Բասիլիոս եպիսկոպոսի վկայարանում:

Նոյն գիշեր Քրիստոսի նահատակն ու վկան Բասիլիոս եպիսկոպոսը, երեւաց սուրբ Յովհաննէս Ոսկեբերանին եւ ասաց. «Չօրացիր եւ քաջ եղիր, եղբայր, Քրիստոսի ճգնաւոր եւ տիեզերքի վարդապետ, քանզի վախճանեցիր կլիկները»: Վկան երեւաց նաեւ իր վկայարանի սպասաւորին դը միասին կլիկները»: Վկան երեւաց նաեւ իր վկայարանի սպասաւորին դը միասին կլիկները»: «Սուրբ Հայրապետ Ոսկեբերանի համար իմ շիրմի մօտ տեղ պատրաստիր»: Այդ տեսիլքից սուրբ Ոսկեբերանը զօրացաւ եւ շատ մխիթարուեց: Յաջորդ օրը Հայրապետը զինուորներին աղաչեց, որ իրեն մինչեւ օրուայ հինգերորդ ժամն այնտեղ թողնեն, սակայն նրանք չանսացին: Իսկ երբ երեսուն ասպարէզ անցնելուց յետոյ տեսան, որ սուրբը մեռնում է, նրա աղաչանքով վերադարձան վկայարան: Այնտեղ Հաւատացեալների բազմութիւն էր հաւաքուել: Այնժամ սուրբը ճանապարհի հանդերձները հանեց եւ տուեց այնտեղ գտնուող աղքատներին, իսկ ինքը, ինչպէս ուրախութեան օրերին, նորը Հագաւ: Այնուհետեւ, հաղորդուելով սուրբ Խորհրդին, իր վերջին աղօթքն ասաց վկայարանում, ապա, երկրորդելով իր սովորական խօսքը՝ «Փա՛նօք քեզ, Աստուած, ամէն ինչի համար», դիւրութեամբ եւ խաղաղութեամբ Աստուծոյ ձեռքն աւանդեց իր հոգին: Եւ չհասաւ արքայավայր՝ Եպիփանի խօսքի համաձայն, քանի որ Յովհաննէսն ու Եպիփանը երկուսն էլ մարգարէացան, բայց՝ առանց նախանձութեան եւ քննի, որովհետեւ այդպիսի արտաք հեռու է Աստուծոյ սուրբերից:

Ոսկեբերանը վախճանուեց 407 թուականին: Նրան թաղեցին տեղի քահանաներն ու եպիսկոպոսները Քրիստոսի վկայ Բասիլիոս եպիսկոպոսի գերեզմանի մօտ:

Աստուած ոչ միայն Ոսկեբերանի կենդանութեան օրօք, այլեւ նրա մահուանից յետոյ քաղում Հրաշքներ գործեց.


Աղեքսանդրիայի պատրիարք Թէոփիլոսը մահանալուց առաջ քա-

ուսու՛ն օր Հոգեվարք ապրեց: Նա աղաղակում էր. «Տեսնում եմ Յով-
Հաննէսին, որ կանգնած է Քրիստոսի առաջ եւ արգելում է իմ Հոգու ել-
քը», եւ, խոստովանելով ՅովՀաննէսի նկատմամբ ունեցած անիրաւ նա-
խանձը, աւանդեց Հոգին:

Եւղոքսիա Թագուհու տապանաքարը երեսուններեք տարի երերաց,
մինչեւ որ ՅովՀաննէսի մարմինը Կոստանդնուպոլիս բերուեց:

Սուրբի Թաղումից յետոյ Կոմանայի եպիսկոպոսը տեսիլքով մի
շատ գեղեցիկ ու զարմանալի տաճար տեսաւ, ուր բոլոր Հայրապետները
նստած էին պատուական աթոռներին: Հայեացք ձգելով նա այնտեղ Յով-
Հաննէս Ոսկեբերանին շտեսաւ եւ Հարցրեց, թէ՞ ո՞ր է ՅովՀաննէսը:
Նրանք ասացին. «Ո՞ր ՅովՀաննէսին ես փնտրում Մկրտչի՞ն, թէ՞ Աւե-
տարանչի՞ն»: Եպիսկոպոսը պատասխանեց. «Կամենում եմ տեսնել Ոսկե-
բերանին՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին»: Սուրբ Հայրապետներն
ասացին. «Ռու փնտրում ես մի լուսաւոր մարդու՝ ՅովՀաննէսին՝ ապաշ-
խարութեան վարդապետին: Նրան չես կարող տեսնել, քանզի Հանապազ
սերովբէների Հետ աստուածային աթոռի փառքի առջեւ է»:

Ոսկեբերանի մի շարք աշակերտներ նրա մասին պանծալի ներբող-
ներ են յօրինել: Բայց այս տիեզերալոյս վարդապետի անզուգական գո-
վութիւնը նրա ոսկեղէն գրքերում է, որոնք նա ամբարեց Եկեղեցու գան-
ձարանում Հաւատացեալների բարեկարգութեան եւ Աստուծոյ փառքի
Համար:



ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՔՆԱՐԻԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՒ
ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Բանն Աստուած երկրի վրայ գցեց Իր սիրոյ Հուրը՝ կամենալով նրա բորբոքուելը [տե՛ս Ղուկ. ԺԲ 49]: Եւ եթէ՛ նա է կամենում, ո՞վ կարող է Հակառակուել: Բայց իւրաքանչիւր ոք, անձնիշխան կամք ունենալով, ազատ է ընտրել թէ՛ չարը, թէ՛ բարին: Այս մասին է ասում Յակոբոսը, թէ՛ «Աստուած անփորձելի է չարի Համար եւ չի փորձում ոչ ոքի, այլ իւրաքանչիւր ոք փորձում է՝ Հրապուրուելով եւ խարուելով իր ցանկութիւններից» [Յակոբ. Ա 13-14]. Նոյնպէս եւ՝ դէպի բարին ձգտողները, որոնք իրենց անձերում վառելով բորբոքեցին աստուածային սիրոյ Հուրը՝ մնալով նրա բարի Հեշտութեան մէջ:

Եւ այսպէս իւրաքանչիւր ոք իր ժամանակին արիաբար առաքինացաւ: Քանզի ոմանք մաքրութեամբ կուտութեան մէջ մնացին, իսկ ուրիշները [ճգնելով] ողջախոհութեան Հասան. շատերը ողորմութիւնն ընտրեցին եւ աղքատներին տալը սիրեցին, իսկ այլք՝ պահէն ու առանձնական աղօթքը. ոմանք՝ խոնարհութիւնը եւ եղբայրասիրութիւնը, միւսները լուր [նախընտրեցին], իսկ շատերը՝ ընկերոջ օգտի եւ շահի Համար խօսելը: Եատերը յանուն Կենարարի Արեան իրենց արիւնը Հեղեցին, շատերը Հրի մատնուեցին կամ խեղդամահ եղան ջրում, շատ-շատերն էլ ծեծի ու բանտի, սովի ու ծարաւի, մերկութեան ու աղքատութեան եւ ուրիշ տեսակ-տեսակ տանջանքների եւ տառապանքների մատնուեցին. եւ այս ամէնը՝ Քրիստոսի սիրոյ եւ արքայութեան յոյսի Համար, ինչպէս եւ վկայում է սաղմոսագրուն՝ ասելով. «Ամէն օր մեռնում ենք Քեզ Համար» [Սաղմ. ԽԳ 22]:

Իսկ մեր նսեմացած ու մթնած օրերում, մեր չարացած ու դառնացած ժամանակներում, որ սպառուել ենք ամենայն բարութիւնից եւ դատարկուել բոլոր առաքինութեան գործերից, [իր բարի վարքով եւ պայծառ խոստովանութեամբ փայլեց] մոկացի մի կին՝ Հաւատով՝ քրիստոնեայ, ազգութեամբ՝ Հայ, վայելչատես եւ պայծառաղէմ, Թամար անունով, որ [մահուանից յետոյ] վերակոչուեց Գոհար, կինը Թումա անունով մի քրիստոնեայի:

Արդ, նոյն Մոկաց գաւառից մի քուրդ չարի ազգմամբ չարաչար սուփանքով ցանկացաւ վայելչագեղ կնոջը եւ կամենում էր նրան խլել ամուսնու ձեռքից, իսկ ամուսնուն՝ սպանել: Այս իմացաւ մեծահաւատ Թամարը եւ յայտնեց իր ամուսնուն: Եւ նրանք, վերցնելով իրենց երեխա-

* Վկայաբանութիւնը վերցուած է «Հայոց նոր վկաները» (ՀԼՎ) (Վաղարշապատ, 1903, էջ 423-429) գրքից:

յին, փախան Աղթամար կղզի:

Չորս-Հինգ տարի անց, մի օր իրենց անհրաժեշտ որոշ իրերի Համար ամուսինները կղզուց գնացին Ոստան քաղաք: Երբ անօրէն քրդերը նրանց տեսան, ճանաչեցին եւ բռնեցին կնոջը՝ բարձր ձայնով աղաղակելով. «Սա մի ժամանակ մահմեդական էր»: Եւ, սուտ ու անիրաւ վկաներ բերելով, բռնեցին ու տարան Ամիրազգնի եւ նրա կնոջ՝ Փաշախաթունի մօտ: Ամիրազգնին անտարբեր գտնուեց Թամարի Հանդէպ, սակայն նրա կինը, որ թուրք էր եւ քնութեամբ՝ չար, լիբր եւ յանդուգն, նրան խոստացաւ բարիք գործել, եթէ Հրաժարուի Քրիստոսի Հաւատքից, իսկ թէ ոչ՝ սպառնաց սաստիկ տանջելով կտտամահ անել:

Իսկ բարեսէր Թամարը, լցուած Քրիստոսի սիրոյ աստուածային Հրով, ո՛չ խոստումներով Համոզուեց եւ ո՛չ էլ սպառնալիքներից վախեցաւ, այլ արիաբար, անահ եւ աներկիւղ, ամենայն Համարձակութեամբ պատասխանեց.

—Քա՛ն լիցի, եթէ ես ուրանամ իմ Քրիստոս Աստծուն, Ում Հաւատացել եւ Հաւատում եմ: Քանզի նա է Աստուծոյ Բանը եւ Որդին՝ ծնուած սուրբ Կոյս Մարիամից, Ստեղծողը բոլոր երեւելի եւ աներեւոյթ գոյաւորների, Տէրը եւ Դատաւորը ողջերի ու մեռածների:

Իսկ երբ թագուհին շարունակեց պարզելներ խոստանալ եւ սպառնալ, Թամարն ասաց.

—Ինչո՞ւ ես ուշացնում եւ չես կատարում քո սպառնալիքները. ես պատրաստ եմ մեռնել իմ Քրիստոս Աստուծոյ Համար, իսկ այն մեծարանքներին, որ խոստանում ես ինձ, իմացի՛ր, որ Հաւան չեմ քնաւ: Եթէ անգամ քո տեղը նստեցնես եւ ողջ իշխանութիւնդ ու տիկնութիւնդ ինձ տաս եւ դարձնես աշխարհի դժխուհին, չեմ փոխի Քրիստոսի Հանդէպ ունեցած սիրուս Հետ: Իսկ սպառնալիքները, որոնցով խոստանում ես ինձ վերացնել չարաչար տանջանքներով, շուտ ի կատար ածիր եւ մի՛ յապաղիր, որովհետեւ Քրիստոսին ես չեմ ուրանայ:

Նրա ասածներից սրտմտած՝ փաշան Հրամայեց նրան բանտ գցել եւ անօթի թողնել, մինչեւ Համոզուի ուրանալ Քրիստոսին: Եւ նրան թագուհու մօտից տարան դատաւորի մօտ: Դատաւորի Հարցերին էլ Թամարը Համարձակ պատասխաններ տուեց՝ նրա սպառնալիքներին պատասխանելով.

—Գիտցի՛ր, որ եթէ ամբողջ մարմինս էլ մաս-մաս կտրատուե տաս, ես Քրիստոսին չեմ ուրանայ:

Իսկ դատաւորը փաշայի Հրամանով ասաց, որ նրան տանեն բանտ եւ անօթի թողնեն: Թամարն ուրախութեամբ տասն օր անօթի մնաց: Եւ երբ ոմանք ուզում էին նրան Հաց ու ջուր տալ, Հրաժարում էր:

Տասն օր յետոյ Ոստան քաղաքի քրիստոնեայ տանուտէրերը հաւաքուեցին եւ եկան թագուհու մօտ՝ Թամարին ազատելու համար: Նրանք (փոխարէնը) 1000 դահեկան առաջարկեցին, սակայն թագուհին չհամոզուեց, այլ մեծ ցասումով հրամայեց Թամարին քաղաքից դուրս հանել եւ քարկոծել:

Եւ նրան տարան իր վախճանի վայրը՝ քաղմիցս փորձելով համոզել, որ թերեւս ուրանայ Քրիստոսին: Սակայն նա առանց սասանուելու մերժում էր եւ դաւանում Քրիստոսին որպէս Աստուած եւ Աստուծոյ Որդի: Եւ մինչ դաւանութիւնն իր շուրթերին էր, մեծ քարով հարուածեցին նրա դէմքին: Իսկ նա, գլխաշորը գցելով երեսին, շրջուեց արեւելք: Այնժամ կուտակուած ամբոխը նրան այնքան խփեց քարերով, որ դրանցով ծածկուեց այն պատուական գոհար Թամարը, որ իրօք Աստուծոյ Գոհարակներ եղաւ: Այսպիսի բարի հաւատքով ու պայծառ խոստովանութեամբ նահատակուեց Թամարը, որ Գոհար վերանուանուեց: Այդ եղաւ սուրբ Գեւորգ գորավարի տօնի նախօրէին՝ 1398 թուականին, ապրիլի 22-ին:

Իսկ անօրէնները, խիստ փոշմանած, տրտմեցին եւ ամօթով մնացին: Եւ ապա քրիստոնեաներին հրաման տուեցին նրան թաղել պատուով, ինչպէս որ կամենան: Նրան թաղելիս բոլորը տեսան կնոջ զգաստութիւնը, քանի որ իր շապիկն այնպէս էր կարել, որ իրեն քարկոծելիս եւ քարը տալիս բնաւ չերեւան իր մարմնի մասերը: Այսպիսի հնարներով էր ծածկել իրեն այս ամէնիմաստ ու հանճարեղ կինը: Եւ տեսնողները հիացան եւ փառք տուեցին Աստծուն, մանաւանդ, երբ տեսան նրա պայծառ, սուրբ Ստեփանոս Նախավկայի նման հրեշտակակերպ երեսը:

Այնպէս եղաւ, որ պարսից մեծ եւ առջին Եահարաս թագաւորը, լսելով զրպարտող մարդկանց, որոնք չարախօսում էին Նախիջևան քաղաքի բնակիչներին, սաստիկ զայրացաւ նրանց վրայ եւ հրամայեց քաղաքի բոլոր բնակիչներին արտաքսել Ճահրապատ քաղաք, իսկ Նախիջևանը՝ աւերել, տներն ու բոլոր միւս շինութիւնները քանդել եւ այգիները կոտորատել: Եւ թագաւորի հրամանն անխափան կատարուեց, քանզի, բոլոր բնակիչներին հանելով, քշեցին Ճահրապատ: Աննշան թուով մարդիկ, փախչելով շրջակայ գիւղերը, թաքնուեցին այստեղ ու այնտեղ: Նրանց մէջ էին եւ տէր Անդրէասի ծնողները, որոնք գնացին Ազուլիս գիւղ եւ այնտեղ բնակութիւն հաստատեցին:

Մինչ տէր Անդրէասի մանկութեան տարիներն էին, նրան տուեցին զրբերի ուսման, եւ նա սովորեց եկեղեցական բոլոր ուսմունքները: Երբ զարգացաւ եւ չափահաս դարձաւ, նրան մտցրին աշխարհի կարգի մէջ եւ ամուսնացրին: Եւ, ինչպէս գրուած է, ըստ իր անձի եւ ողջ ժողովրդի վկայութեան՝ նրան քահանայ օծեցին: Եւ նա կատարում էր քահանայութեան սպասաւորութիւնը, ինչպէս վայել է քահանայութեան կարգին:

Այդ ժամանակներում Մովսէս վարդապետը (որը յետոյ էջմիածնի կաթողիկոս դարձաւ) եւ Պօղոս վարդապետը, որոնք Հայոց արեւելեան կողմերում յայտնի էին իբրեւ անբիծ եւ պարկեշտ վարք ունեցողներ, շրջելով երկրից երկիր, անխափան քարոզում էին, եկեղեցիներ շինում, ըստ առաքելների կարգի քահանաներ կարգում: Մեր հաւատքի ու կրօնի հաստատութեան համար դպրատներ հիմնեցին պատշաճ տեղերում Աստապատ գիւղում եւ Եօթօթում, որպէսզի շրջակայ գիւղերից այնտեղ սովորելու համար մանուկներ հաւաքուեն: Նամնապէս եւ Ազուլիս գիւղում դպրատուն հաստատեցին, իսկ մանուկների վրայ դպրապետ կարգեցին տէր Անդրէասին: Այնտեղ հաւաքուեցին մօտ յիսուն-վաթսուն մանուկներ: Եւ տէր Անդրէասը, որպէս վերակացու, հովում էր նրանց եւ ուսուցանում մեր Եկեղեցու ընդհանուր ուսմունքը:

Եւ այնպէս եղաւ, որ Եահարաս թագաւորը եկաւ Ազուլիս գիւղ՝ չեւտեւեալ պատճառով. օսմանցի մի սարգար՝ Օբուզ Ահմադ փաշայ անունով, բազում զօրքով եկաւ Երեւանի բերդի վրայ, որպէսզի, պարսիկներին

* Այս վկայարանութեան հեղինակն է Առաքել վարդապետ Ղարիժեցին (տե՛ս «Պատմութիւն», Վաղարշապատ, 1884, էջ 272-279, նաեւ աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Պատմութիւն», Երեւան, 1988, էջ 278-283): Բնագիրը վերադասուած է նաեւ «ՆՎ» գրքում (էջ 423-429), ուր ծանօթագրութեան մէջ տրուած են նաեւ ձեռագիր Յայամատրքներում ակայ յանդիմաները (տե՛ս էջ 432), որոնք տեղ գտան մեր թարգմանութեան մէջ, իսկ Անդրէաս քահանայի պատմութեանը յաջորդող հատուածը, որ բուն նիւթին չի պատկանում, Յայամատրքների նմանութեամբ յապաւուեց:

գրաւելով, օսմանցիներէ կողմը դարձնի: Այս պատճառով պարսից Շահաբաս թագաւորը, ժողովելով պարսից բոլոր գործերը, եկաւ Երեւան՝ օգնելու բերդին: Սարդարը, բերդը պաշարելով, երկուսուկէս ամիս պատերազմեց, սակայն չկարողացաւ այն գրաւել: Եկաւ ցուրտ աշուն, եւ նա, ցրտից ու սովից վշտացած, իր ողջ բանակով շուրջ-գնաց Կարին քաղաք՝ օսմանցիների աշխարհ: Սարդարին հետապնդելու համար շահը եւս եկաւ Երեւանից ու գնաց Նախիջեւան, այնտեղից էլ՝ Ազուլիս. ահա այս պատճառով շահն Ազուլիս եկաւ: Արդ, սովորութիւն կար, որ շահն ուր էլ մտնէր՝ քաղաք թէ երկիր, տեղի բոլոր բնակիչները խմբովին ելնում էին նրան ընդառաջ՝ իշխաններն ու ժողովուրդը, տղամարդիկ, կանայք եւ աղջիկները, երիտասարդներն ու մանուկները՝ բոլորը զարդարուած ազնիւ ու մեծագին զարդերով, քաղցրահամ մրգերով, համազամ կերակուրներով, անուշահոտութեամբ եւ ծաղկահամ գինիներով: Եւ վայելչահասակ, գեղեցկատես մանուկները, աղջիկներն ու կանայք ոսկէ բաժակով գինի էին մատուցում շահին: Իսկ աշխարհիկ գուսաններն ու երգիչները, առջեւից ընթանալով, քաղցրանուագ երգում էին իրենց յօրինած երգերը: Եկեղեցականներն էլ՝ քահանաներն ու պաշտօնեաները, շուրջառ եւ շապիկ հագած, խաչն ու Աւետարանը ձեռքներին, խաչվառը վեր պահած, խունկերով ու մոմերով, զանգերով ու ծնծղաներով ելնում էին շահին ընդառաջ եւ երգելով գնում, մինչեւ հասցնում էին իր իջեւանատեղը:

Արդ, երբ Ազուլիս գիւղի քահանաները, իրենց հանդերձները հագած, եկան շահի առաջ, նրանց հետ էին նաեւ դպրատան մանուկներից, որոնք շապիկ էին հագել եւ, մոմակալ ու մոմ բռնած, գնում էին խաչվառին առընթեր: Եւ մինչ քահանաները երգելով գնում էին շահի առջեւից, շահը նայում էր այս ու այն կողմ եւ, ըստ իր չարայուշ մտքերի ու բարբերի, գննում ամենքին: Եւ գննելիս, մանուկներին նայելով, տեսաւ, որ նրանց գագաթներն ածիլուած են: Դա իրեն խիստ ծանր եւ դժուարին թուաց, քանզի կարծեց, որ այդ ի՞ր համար են արել, որպէսզի մանուկներն իր աչքին վայելչագեղ չերեւան եւ նրանցից, հաւանելով, չվերցնի: Եւ դրանից շահի ցասումն ուղղուեց այն մարդու դէմ, ով ածիլել է մանուկների գլուխը: Իսկ մահմեդական հաւատքի մարդիկ՝ ազուլիսցի երեւելի իշխաններ, որոնք շրջում էին շահի հետ եւ մօտիկից սպասաւորում նրան, քրիստոնեաների դէմ ունեցած բնական նախանձից դրդուած, առաւել եւս զրգուցին թագաւորի գայրոյթը քրիստոնեաների հանդէպ: Այդ պատճառով շահը, խիստ յուզուած, իսկոյն հրամայեց փնտրել-գտնել այդ անողին եւ սպանել. եթէ ծնողներն են արել, նրանց սպանել եւ ունեցուածքը յափշտակել, իսկ մանուկներին վերցնել թագաւորի մօտ ծառայութեան: Թագաւորի մերձաւորները սկսեցին սրան-նրան հարցնել, թէ ո՞վ է այդ արել, սակայն բոլորը պատասխանում էին, թէ չգիտեն: Ապա մէջտեղ բերեցին տէր Անդրէասին եւ ստիպելով պահանջեցին.

—Ասա՛ մեզ, որովհետեւ դու ես մանուկների վերակացուն եւ դու գիտես:

Իսկ տէր Անդրէասը մտքում խորհում էր. «Եթէ ծնողներին պատճառ բռնեմ, նրանց կսպանեն եւ մանուկներին կյափշտակեն, իսկ եթէ՛ մէկ ուրիշին, նրան կսպանեն, եւ դա կմնայ իմ խղճին որպէս անփարատելի յանդիմանութիւն»: Եւ, ըստ սուրբ Աւետարանի վկայութեան, թէ՛ «Լաւ է, որ մի մարդ մեռնի, եւ ամբողջ ժողովուրդը չկորչի» [տես Յովհ. ԺԸ 14], գերադասեց իր անձը մատնել եւ փրկել շատերին: Այս պատճառով, երբ զինուորները շատ ստիպեցին, տէր Անդրէասն ուրիշներին փրկելու համար ասաց.

—Ես եմ այդ արել:

Զինուորները նրա ասածը տեղեկացրին շահին, որը հրամայեց բռնել եւ կալանքի տակ պահել նրան: Օրեր յետոյ շահը հրամայեց նրան բերել իր առջեւ եւ հարցրեց.

—Ծիջտ ասա, ո՞վ է այդ գործն արել:

Տէր Անդրէասն ասաց.

—Ո՛չ ոք, այլ միայն ես:

Երբ շահը տեսաւ, որ ոչ ոքի չմատնեց, խիստ բարկացաւ նրա վրայ եւ հրամայեց տարածել գետնին եւ անխնայ բրածեծ անել: Բազում հարուածներից յետոյ շահն ասաց.

—Այդպիսի վնաս ու յանցանք ես գործել: Եթէ ուզում ես ողջ մնալ, ուրացի՛ր ձեր քրիստոնէական հաւատքը եւ ընդունի՛ր մեր կրօնը՝ ըստ մեր առաջնորդի դաւանութեան, եւ ես քեզ պատիւներ ու հարստութիւն կտամ: Իսկ եթէ չհամաձայնես, քեզ կնետեմ շների եւ գազանների առաջ:

Նա յանձն չառաւ ուրանալ, այլ պատասխանեց.

—Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ:

Այդ լսելով թագաւորը զայրագին բարկութեամբ հրամայեց դարձեալ բանտ նետել նրան: Իսկ յաջորդ օրը, նորից բերելով իր առաջ, հարցրեց.

—Ուրանո՞ւմ ես քո հաւատքը:

Տէր Անդրէասն ասաց.

—Չեմ ուրանում:

Կրկին անգամ արքան ասաց.

—Քեզ պատիւներ ու հարստութիւն կտամ, եթէ ուրանաս ձեր հաւատքը:

Տէր Անդրէասը պատասխանեց.

—Ես մարմնաւոր փառքի Համար իմ լոյս Հաւատքը չեմ ուրանայ:

Եւ թագաւորը, տեսնելով սուրբի Հաստատուն միտքը, դարձեալ Հրամայեց բանտ նետել նրան:

Իսկ քրիստոնեաները, թագաւորի նախարարների մօտ գնալով, բազում գանձեր խոստացան՝ տէր Անդրէասին ազատելու Համար, եւ թէպէտ նախարարները երկու-երեք անգամ խնդրեցին, արքան չլսեց: Մեծ աղաչանքներով շահի առաջ ընկնելով նրան արձակել խնդրեց նաեւ ցղկեցի խոջայ Անձրեւի կինը, որին շահը մայր էր ասում, եւ նրա առջեւ պատիւ ունէր: Սակայն նրան եւս չլսեց:

Եւ դարձեալ բերեցին տէր Անդրէասին արքայի առաջ: Ետտ անգամներ Հարց ու փորձ անելուց, պարգեւներ խոստանալուց եւ տանջանքներով սպառնալուց յետոյ, երբ թագաւորը տեսաւ, որ չի Համաձայնում, Հրամայեց սպանել: Իսկ քաջ նահատակն ու ճշմարիտ քահանայ տէր Անդրէասը Հաստատուն Հաւատով կանգնած էր քրիստոնէութեան Հաւատքի անշարժ Հիմքի վրայ:

Չինուորները տէր Անդրէասին կապանքներով տարան մահապատժի վայրը: Եւ նա ուրախութեամբ ու յօժարակամ էր գնում: Երբ տեղ հասան, ինքն արձակեց իր գօտին, Հանեց Հանդերձները եւ ասաց դահիճներին, որ ի կատար ածեն թագաւորի Հրամանը: Սակայն դահիճներն ուշացնում էին՝ յոյս ունենալով, որ կհամաձայնի արքայի առաջարկներին: Այդ ընթացքում թագաւորը սուրբի մօտ երկու անգամ ուղտիկեց իր նախարարներից՝ ասելու, թէ՛ «Մի՛ կորցրու քո գեղեցկութիւնն ու երիտասարդ կեանքը. եկ Համաձայնի՛ր իմ խօսքերին եւ ինձանից վերցրու՛ պարգեւներ ու Հարստութիւն»: Իսկ քաջ նահատակը նրանց բոլոր խօսքերին պատասխանեց.

—Ձեր ունայն խոստումները չեմ ընդունում եւ իմ ճշմարիտ Հաւատքը չեմ ուրանում:

Եւ դահիճները, մերկացնելով սրերը, խաղացնում էին նրա վրայ եւ մօտեցնում որովայնին՝ նրան վախեցնելու Համար, սակայն նա չէր երկնչում:

Նահատակութեան վայրը եկան սուրբի ծնողները: Աղիողորմ ու յորդաբուխ արցունքներով լալիս էին եւ աղաչելով ասում նրան.

—Մեր քաղցրիկ որդեակ, որ քահանայութեան կարգ առար եւ Քրիստոսի զինուոր եղար: Երբէք չուրանան Քրիստոսին եւ չլինեն տիրատեացների զինուոր, չթողնեն Քրիստոսի լուսապայծառ Հաւատքը եւ ժամանակաւոր կեանքի Համար չզրկուեն յաւիտենական կեանքից: Այլ յիշի՛ր Քրիստոսի ճշմարիտ վկաներին, որոնց պատմութիւնները միշտ ընթերցելով պատմում էիր մեզ: Նրանց պէս դու՛ էլ Համբերի՛ր, որպէսզի եւ նրանց պսակին արժանանաս:

Փղձկացող սրտով եւ յորդաբուխ արտասուքներով այսպիսի խօսքեր էին ասում սուրբի ծնողները: Իսկ տէր Անդրէասը պատասխանեց նրանց՝ ասելով.

—Հոգ մի՛ արէք, սիրելիներս, քանզի ես մտքով ուրախ եմ եւ ցնծում եմ Հոգով ու պատրաստ եմ մարմնով մեռնել Քրիստոսի սիրոյ Համար:

Իսկ դահիճներին բազում ժամեր յապաղեցնում էին, որ թերեւս երկվտելով թուլանայ, սակայն սուրբն անդդուելի էր ճշմարիտ Հաւատքի մէջ եւ չէր դադարում շարունակ խաչակնքել: Երբ դահիճները տեսան նրա մտքի Հաստատունութիւնը, որ չի դառնայ իր Հաւատքից), այն-ժամ սրով պատռեցին նրա որովայնը, եւ աղիքները փորից դուրս թափուեցին: Սուրբը մի ձեռքով փորի մէջ էր Հաւաքում աղիքները, իսկ միւսով խաչակնքում էր երեսը եւ յիշում Քրիստոսի անունը: Ապա, ծակելով սրունքների ջլերը, պարանով վեր բարձրացրին եւ կախեցին գլխի վայր, սակայն սուրբը մինչեւ մայրամուտ կենդանի մնաց, իսկ երեկոյեան իր մաքուր Հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը՝ որպէս անուշահոտ խունկ եւ ընդունելի ճշմարիտ զոհ:

Սուրբի մահից յետոյ շահը Հրամայեց մարմինը նետել շինութիւնից դուրս, որ զազաններին ու թռչուններին կեր լինի:

Եւ այն գիշեր Քրիստոս փառաւորեց Իր նահատակին, քանզի մեծ լոյս իջաւ նրա սուրբ մարմնի վրայ՝ որպէս վկայութիւն անմեղութեան եւ Քրիստոսի Հանդէպ ունեցած սերտ Հաւատքի: Այս տեսնելով շատերը փառաւորեցին Աստծուն Իր անպատում սքանչելիքների Համար:

Քրիստոնեաները, վերցնելով [մարմինը], բերեցին Ագուլիսի ներքին եկեղեցին, որ այժմ կոչւում է Խցաձորի եկեղեցի, եւ այնտեղ թաղեցին: Այժմ էլ այնտեղ են թաղուած նրա պատուական նշխարները՝ որպէս բարեխօսութիւն բոլոր քրիստոնեաների Համար: Աստուծոյ սուրբ քահանայ տէր Անդրէասի վախճանը եւ մարտիրոսական մահը եղաւ Հայոց ՌԿՁ (1617) թուականի նոյեմբերի 18-ին, որի յիշատակը օրհնութեամբ լինի, եւ նրա աղօթքներով Տէրը մեզ ողորմի. ամէն:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՆԻԷԼԵԱՆ* (+1915)

Ներսէս եպիսկոպոսը ծնուել է 1868 թուականին Ձէյթունում: Աշխարհիկ անունը Գեւորգ էր: Իր ուսումը ստացաւ նախ Սիսի Մայրավանքում, ապա՝ Պոլսի Սահակեան վարժարանում: Այնուհետեւ հրաւիրուեց Ադանա՝ ուսուցչութեան, իսկ 1890-ին ձեռնադրուեց վարդապետ եւ ստանձնեց Իսթէնդէրունի առաջնորդական փոխանորդութիւնը: Այս պաշտօնը նա վարեց մինչև 1895 թուականը, երբ Ձէյթունի պատամբութեան կազմակերպիչներից մէկը լինելու ամբաստանութեամբ համիդեան կառավարութիւնը նրան փոխադրեց Հալէպ եւ շուրջ եօթ ամիս պահեց քանտում: Թէեւ վարդապետը դիմումների շնորհիւ ներման արժանացաւ, սակայն Իսթէնդէրունից վտարուեց եւ հաստատուեց Դամասկոսում: Որոշ ժամանակ անց թուրքահայ պատրիարք Օրմանեան սրբազանի բարեխօսութեամբ նա բերուեց մայրաքաղաք: Սակայն այստեղ էլ շարունակ լրտեսուում եւ հետապնդում էր: Այստեղ նա անցկացրեց իր կեանքի տասը տարիները՝ լինելով քարոզիչ Սկիւզարի սուրբ Կարապետ եկեղեցում:

Մի անգամ պատրիարքարան զնալու ճանապարհին նրան դարձեալ ձերբակալեցին եւ ուղարկեցին Երլզըղ, ուր ենթարկեցին խիստ հարցաքննութեան: Եւ միայն պատրիարքարանի բարեխօսութիւնները փորը-ինչ մեղմեցին նրա դէմ յերիւրուած մեղադրանքները:

Աշտահալած հոգեւորականը Կիլիկիոյ կաթողիկոսի ազգու դիմումների շնորհիւ 1907 թուականին թոյլտուութիւն ստացաւ մեկնել Սիս եւ վարել տեսչի պաշտօնը: Սակայն 1909-ի գարնանը, երբ ծայր առաւ կիլիկեան եղեռնը, նա դարձեալ ձերբակալուեց՝ հաճնցիների ինքնապաշտպանութիւնը ղեկավարելու մեղադրանքով: Եւրջ ըրտըր կրակ էր ու աւեր, իսկ վարդապետը մօտ 100 օր գտնուում էր Մարաշի եւ Էրզրնի բանտերում ու ատեաններում:

Իր «Կախաղանի ստուերը» սրտայոյզ յօդուածում նա նկարագրել է իր կեանքի այդ սեւ օրերը: «Ջարդից յետոյ, գրում է նա, պատերազմական ատեաններ կազմուեցին Ադանայում, Անտիօքում, Էրզրնում, Մարաշում՝ «արիւնարբու ոճրագործներին» ձերբակալելու եւ պատժելու նպատակով: Ոճրագործ համարուեցին նաեւ այն հայերը, ովքեր, ինքնապաշտպանութեան դիմելով, ջարդուելու յանցանքն էին գործել: Ինձ էլ

ձերբակալեցին՝ ժամանակին Մարաշում ունեցած մէկ քարոզիս համար: 1909-ի յունիսին հեծեալ ոստիկանները Հաճնից չորս օրուայ ճամփայ տարան ինձ: Բնութիւնը ժպտում էր շուրջս, մինչ ես կախաղանի սեւ փայտի ծանրութիւնն էի զգում ուսերիս: Հաճնի զինուորական հրամանատարը խստօրէն պատուիրել էր, որպէսզի ինձ մեծ զուշութեամբ անցկացնեն Ձէյթունի եւ Ֆոնուչի կիրճերից, որ յանկարծ լեռնական հայերն ինձ առեւանգելու փորձ չանեն: Նախորդ օրուայ անդնդախոր ձորի միջից սկսեցինք մեր վերելքը: Ծակոցներն օձի պէս գալարում էին աղիներս: ՄՀ, այդ ցից ու ժայռոտ զառիվերը կեանքիս Գողգոթայի ամենից դժնդակ խայկարութեան ճամփան է եղել, որը ես անցայ անտրտունջ, քանզի այդ ճամփան բազմաշարժար ազգիս ճամփան է եղել երէկ ու այսօր եւ գուցէ պիտի լինի յաւիտեան...»:

Տառապանքի հետ եղբայրացած այս պատուական հովիւր չէր դադարում Եղեռնի նախօրէին նպաստ հասցնել զնոյններում հեծող հայորդիներին: Նոյնիսկ 1000 ֆրանկ գումարով ապահովագրեց մահուան վտանգին այնքան ենթակայ իր կեանքը՝ յօգուտ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Վերջապէս, երբ անվերջ դիմումներից յետոյ անմեղ ճանաչուեց, 1910 թուականին դարձաւ Ադանայի թեմի առաջնորդը, իսկ յաջորդ տարի եպիսկոպոսական օծում ստացաւ:

Արբազանի գաւառային հովուութեան վերջին հանգրուանը եղաւ Եօզղազը, ուր մեկնեց 1914-ի աշնանը՝ կարծես յատուկ ընտրելով այն որպէս եղեռնավայրերից ամենազարհուրելին: Եւ սակայն, հակառակ հոգեւտազնայ անձկութիւններով լի կենցաղին, Ներսէս եպիսկոպոսը երբէք չզազարեց գրել՝ Սկիւզարի իր մենաստանում գիշերներն անցկացնելով գրասեղանի առջեւ: Աշխատակցում էր Պոլսի եւ Իզմիրի թերթերին իր բանաստեղծութիւններով եւ կրօնաբարոյական յօդուածներով: 1903 թուականին Վիեննայում լոյս ընծայուեց նրա «Կեանքն առանց հաւատքի» պարզ քարոզների հաւաքածուն, իսկ Ադանայի ջարդերից յետոյ Պոլսում տպագրուեց «Կաթիլ մը ջուր այրած սիրտերու» գիրքը՝ լի սրտամորմոք յուշերով:

Միշտ հաւատարիմ իր ազգի հանդէպ ունեցած պարտքի զգացմանը՝ սրբազանը սկսեց պաշտօնավարել Անատոլիի խորքերում, որպէսզի առաւել մօտ լինի իր ժողովրդին: Անցեալի փորձը նրան ստիպեց այնտեղ մեկնելիս ապահովութեան համար իր հետ ունենալ պաշտօնական որեւէ փաստաթուղթ: Այդ նպատակով դիմեց իր թուրք ծանօթներից մէկին՝ յանձնարարական ձեռք բերելու յոյսով: Սակայն, ինչպէս եւ պէտք էր սպասել, թուրքական շարաշուք բռնատիրութեան այդ ներկայացուցչից մերժում ստացաւ: Եւ Ներսէս սրբազանը Պոլսից ճանապարհուեց դէպի Եօզղազ՝ ապաւինած Աստծուն:

* Ներսէս եպիսկոպոսի վարքը վերցուած է թողիկի «Գողգոթայ» օրացեայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետայի 1915 տարին» (Կիւ-Ետրք, 1985, էջ 303-305):


Չանցած մէկ տարի, 1915-ի յուլիսի 23-ին, առաջնորդարան ներխու-
ժեցին ոստիկանները եւ ամենաքիրտ կերպով ձերբակալեցին սրբազանին
ու նրա խորհրդականներին եւ տարան բանտ: Հայերով լցուած այդ տան-
ջարանում չորս օր մնալուց յետոյ 482 հոգուց բաղկացած մի խմբի հետ
Ջէմալ փաշան նրան ուղարկեց Մուամմէր դահապետի մօտ: Դա քա-
ղաքից վտարուող տղամարդկանց առաջին խումբն էր: Միայն սրբազանն
էր կառքով գնում: Ծանապարհին սկսուեցին խժոժութիւնները՝ ամենից
առաջ կողոպուտի նպատակով: Թուրքերը նախ դրամ պահանջեցին
առաջնորդից, իսկ նա պատասխանեց.

-Դ՛ո՛ւք էիք, որ մեզ պատուիրեցիք ոչինչ չվերցնել մեզ հետ, հետե-
ւաբար բնաւ դրամ չունեմ մօտս:

Քարաւանը Սեբաստիա ժամանեց առանց մէկ հոգու, որն ինքը՝
առաջնորդն էր: Եղեռնից մազապուրծ մի հայի վկայութեամբ (որ տեսել
էր զոհի բզկտուած հազուստները)՝ ներսէս եպիսկոպոսին զատում են
խմբից եւ մի ծառի տակ յայտնում մահուան դատապարտուելու վճիռը:
Վարդապետը գլխաբաց ծունկի է իջնում՝ իր աղերսները վերառաքելու
Աստծուն, երբ յանկարծ գնդակահարուած ընկնում է գետնին:

Նա եւս մտաւ լուսապսակ բանակի մէջ այն բազմաչարչար հայ
հոգեւորականների, որոնք, նահատակուելով, մնացին խոր ձորերում կամ
ճանապարհներին՝ անթաղ ու անշիրիմ:

Հայերի քարաւանը, հասնելով Սեբաստիա եւ մէկ գիշեր քանտում
մնալուց յետոյ, Մուամմէրի հրամանով ամբողջապէս սրի քաշուեց:



ՀՈԳԵՒՈՐ
ՄՇԼԿՈՅԹ

ԹՈՒԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՄ

Մեկնութիւններում թուային խորհրդաքանութիւնը հիմնականում ունի այլաբանական սրբազան նշանակութիւն, ինչպէս կենդանիներիցը եւ բոյսերիցը՝ կապուած անտարանական եւ հիմնականորեն իրականութիւնների հետ: «Գանձասարի» Բ եւ Գ հատորներում մենք խօսել ենք ձեռագիր մատենաներում խորանպատկերի համար նախանշուած գունային եւ գեղագիտական հարցադրումների մասին, որ տալիս են «Խորանների մեկնութիւնները»:

Առաջին իսկ՝ Ստեփանոս Սիւնեցու Մեկնութեան մէջ աչքի է ընկնում չորս թուի խորհրդաքանութիւնը (սիմվոլիկան): Այդ թուով հիմնաւորում է գոյների քանակը խորաններում, քանի որ չորսը համապատասխանում է բնափիլիսոփայութեան մէջ ընդունուած չորս տարրերի թուին: Երկրորդ՝ անանուն, եւ չորրորդ (Վանական Վարդապետին մեր վերագրած ԺԳ դարի) մեկնութիւններում այդ թիւը եռաստիճան խորհուրդ է ստանում՝ բացի չորս տարրերից նշանակելով նաեւ մարդու մարմնի չորս բաղադրամասերը, որոնք էլ, իրենց հերթին, խորհրդանշում են Հօրը, Որդուն, Սուրբ Հոգուն եւ այնուհետեւ՝ միաւորական Աստուածութեանը: Ներսէս Ընորհալու Մեկնութեան մէջ բացի չորս գոյնից չորս թուով են նշանակուած նաեւ ծառերը, միայն թէ այստեղ լրացուցիչ հանդէս են գալիս նաեւ հինգերորդ գոյնը (ծիրանի) եւ հինգերորդ ծառը (արմաւենի): Քանի որ այստեղ չորրորդ խորանը խորհրդանշում է երկրային դրախտը, որը բովանդակում էր չորս տարրերը, ապա այս խորանում նկարուած չորս սիւները եւս խորհրդանշում են չորս տարրերը: Գրիգոր Տաթեւացու Մեկնութեան մէջ չորսը քննուում է նախ միս թուերի հետ՝ ըստ կանոնների համաձայնութեան (կիսուտի առանձին), ապա՝ իբրեւ գոյների թիւ՝ ըստ չորս տարրերի, որոնց անելանում է հինգերորդը՝ ոսկին՝ ցոյց տալով երկնային էութիւնը: Այնու-

հետեւ չորսը հանդէս է գալիս իբրեւ չորս գոյների լրացում՝ չորս աստառ (գունամակերես), որ բաղկացած է երկու լուսաւոր եւ երկու ստուերոտ մասերից՝ մի ծիրանի եւ մի ոսկի, որ ստացում է տասը, այսինքն՝ խորանների (կանոնների) թիւը՝ ըստ Դ դարի հեղինակ Եւսեբիոս Կեսարացու, որ կազմել է կանոնների համաձայնութեան տախտակները (խորանները): Վերջապէս, չորսը հանդէս է գալիս իբրեւ խորանի կազմած քառանկեան խորհուրդ (Գրիգոր Տաթեւացու ժամանակ խորանների գլխազարդերը սիւների միջեւ գտնուող թուային ցանկերի հետ կազմում էին քառանկին, մինչդեռ մինչեւ ԺԱ-ԺԲ դարերն առանել տարածուած էր կամարածեւ գլխազարդը): Չորս անկիւնները խորհրդանշում են աշխարհի չորս կողմերը: Չորս է նաեւ կաքանների թիւն ութերորդ խորանում:

Չորսը Գրիգոր Տաթեւացին համարում է նաեւ գրերի համար տրուած գլխաւոր գոյների խորհուրդ, որոնք են՝ կարմիրը, կանաչը, կապոյտը, սեւը: Դրանց անելանում է նաեւ ոսկէ գիրը («Իսկ ոսկին նշանակ է զանստ եւ զանապական բանքն Տեառն ի սմա, որպէս ասաց՝ երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցցեն»): Վերջապէս, կայ յիշատակարաններին երբեմն կցուող մի նախադրութիւն, որը սկսում է՝ «Փա՛րք Ամենասուրբ Երրորդութեան ընդ Հայր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (ՄՄ, ձեռ. 3714, Աւետարան, 1419թ., գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի), եւ տալիս է չորս թուի ամենատարբեր մեկնութիւններ՝ ընդգրկուած ինչպէս «Խորանների մեկնութիւններում», այնպէս էլ՝ Ներսէս Ընորհալու եւ Գրիգոր Տաթեւացու՝ Մատթէոսի Աւետարանի Մեկնութիւնների նախադրութիւններում: Դա մի փառաբեղ գովք է Աւետարանների, որոնք չորսն են, եւ չորսն էլ՝ բազում պատճառներով, ինչպէս ասուած է Գրիգոր Խլաթեցու Յիշատակարանի նախաբանում. նախ՝ որովհետեւ աստուածաշնչեան կենդանիները չորեքկերպեան են (Եզեկիէլի տեսիլքը)՝ մարդ, առիծ, եգ, արծիւ [տե՛ս Եզեկ. Ա. 10]: Աշխարհը բաղկացած է չորս միութից՝ հող, ջուր, օդ եւ հուր՝ «թշնամիք անհաշտելիք», այլ ձեռագրերում (Կիլիկիա)՝ «հակառակք անհաշտելիք եւ սիրելիք անքակտելիք» (անտիկ փիլիսոփայութեան չորս տարրերը), Աստուածութեան չորս անունները (Երրորդութիւն, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի), Սեղանի չորս անկիւնները, հոգու չորս առաքինութիւնները (խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն), աշխարհի չորս կողմերը եւ այլն: Ինչպէս տեսնում ենք, չորսը մեծ բովանդակութիւն ունի իր այլաբանական երանգներով: Ընդ որում, այս բոլոր խորհուրդ-

ները գործում են՝ միացած ինչ-որ աստուածաբանական կապով¹:

Իր խորհրդաբանութեամբ նույնքան հարուստ է տասը թիւը: Կանոնների թիւն ընտրուել է տասը, որովհետեւ այն թիւ է սրբագոյն եւ նուէր Աստուծոյ²:

Տասն են մովսիսեան օրէնքները, տասն են «զգայարանք մարմնոյ»³ եւ «զարութիւնք հոգւոյ», տասն են Արիստոտելի ստորոգութիւնները (կատեգորիաները) եւ Տիրոջ աղօթքի խօսքերը, Նիկիայի Հաւատոյ հանգանակի հիմնական մասերը, հետեւաբար՝ տասն են նաեւ խորանները: Տասի խորհրդաբանութիւնն աւելի է ընդլայնում վանական վարդապետին մեր վերագրած «խորանների մեկնութիւնը». այսպէս՝ տասն են համարուել մոլորակների թիւը⁴ (եօթ մոլորակ եւ մէկ անմոլոր, այսինքն՝ Արեգակը, մէկ՝ Լուսինը, եւ մէկ՝ Աստուծոյ խօսքը, որ վարում է նրանց բոլորին. այդ ամէնը միասին ստացում է տասը), տարուայ ամիսների թիւը (տասը, ինչպէս Հռոմում էր ընդունուած)⁵՝ նշանակելով, որ երկու ամիսները «զուգարութիւնք են գարնան եւ աշնան»:

Գրիգոր Տաթեւացին աւելի է հարստացնում տասը թուի խորհրդաբանութիւնը. այսպէս՝ տասը բաղկացած է չորսից կամ չորս թուերի գումարից, այսինքն՝ $1+2+3+4=10$: Այդ պատճառով էլ

1 Չորս թուի հետ կապուած այդ «Փառքը» նշանութեամբ մեզ հանդիպում է Կիլիկիայում: «Փառքը» լինում է նաեւ ընդարձակ, երբ չորսի խորհրդով ասարտեւոց յետոյ խօսում է չորս անտարանիչների մասին: Արդէն Կիլիկիայում «Փառքի» այդ երկու տիպին էլ հանդիպում ենք 1299թ. Դրագարկի մի ձեռագրում (տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ դար, կազմ. Ա. Ս. Մաթեոսեան, Երեւան, 1964, էջ 213) եւ անտարանիչների մասին ծանօթութեամբ՝ 1290թ. Դրագարկի մէկ այլ ձեռագրում (Ռուսոնի Հանրային գրադարան, հայկ. ձեռ. 3. տե՛ս "A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States", by Avedis K. Sanjian, Berkeley, Los Angeles, London, 1976, p. 353-354: Չորսի մի քանի խորհրդամիջոց՝ չորս տարրերը, տարուայ չորս եղանակները, աշխարհի չորս կողմերը (ըստ Ա. Լուսինի՝ տարածական չորս պատկերները) նորպիսեացորական ոգով դիտարկում էր Փիլոն Ալեքսանդրացին (տե՛ս А. Ф. Лосев, "История античного эстетика. Поздний эллинизм", Москва, 1980, с. 95):

2 Փիլոն Ալեքսանդրացին (Երրայեցին) տասի մասին ասում է. «...Քանզի տա է ամենակատար, լիագոյն եւ վերագոյն թիւ՝ առանձին իր իսկ աստուածային խորհրդոյ» («Փիլոնի Երրայեցոյ մնացորդը չ'ալա, որ են՝ Մեկնութիւն Եճնոյց եւ Ելից, Մառց ի Սամիտն, ի Յովման եւ յերիս մանկունս կամ ի հրեշտակս՝ ի թարգմանութեան՝ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն արոց թարգմանչաց մերոց՝ յեղեալ ի լատին բարբառ...», աշխատ. հ. Մկրտչի՝ արտակալ վարդապետի Մխիթարեան Ազգերեանց, Վենետիկ, 1826, էջ 330):

3 «Իսկ հինգերեակն զգայութեանց չափ է» (նույն տեղում):

4 «Բայց այսչափ այժմ ասելի է, զի եւ յաշխարհի տասն ամենայն է եւ ի մարդ. յաշխարհիս են եօթմերեակը (մոլորակը) եւ որ ընդ յունանս մի տեսակ, փոփոխելի են ըստ ինքեանց. Աստուծոյ հանձն վարիչ եւ մատակարարն բոլորեցունց» (նույն տեղում, էջ 331): Ինչպէս տեսնում ենք, Փիլոնի միջոցով նորպիսեացորական ազդեցութիւնն ուղղակի է մեր մեկնիչների վրայ:

տասը կանոնները բաղկացած են չորս թուային համակցութիւններից, այսինքն՝ կանոնները կամ համաձայնութեան տախտակները կազմուած են հետեւեալ կերպ. չորս գումարելիներից նախակարգ է համարում 4-ը, ապա՝ 3-ը, ապա՝ 2-ը, եւ վերջում՝ 1-ը: Ինչպէս գիտենք, Եւսեբիոս Կեսարացին (մահ. 339 կամ 340թ.) գլխադրել է բոլոր Աւետարանները եւ կազմել այդ գլուխների համարների այսպէս կոչուած համաձայնութեան տախտակներ (աղիւսակներ), որոնցից օգտուելու կարգը բացատրել է ոմն եգիպտացի Կարպիանոսին ուղղուած թղթում: Ըստ այդմ՝ նա նախ համաձայնեցնում է չորս սիւնակում այն գլխահամարները, որոնք համապատասխանում են չորս Աւետարաններում («առաջին խորանն, յորս Դ-ն միաբանին՝ Մատթէոս, Մարկոս, Դուկաս, Յովհաննէս»), ապա՝ նրանք, որոնք համապատասխանում են երեք Աւետարաններում՝ երեք համակցութիւններով («Մատթէոս, Մարկոս, Դուկաս», «Մատթէոս, Դուկաս, Յովհաննէս», «Մատթէոս, Մարկոս, Յովհաննէս»), ապա՝ այն գլխահամարները, որոնք համապատասխանում են երկու Աւետարաններում՝ հինգ համակցութիւններով («Մատթէոս, Դուկաս», «Մատթէոս, Մարկոս», «Մատթէոս, Յովհաննէս», «Դուկաս, Մարկոս», «Դուկաս, Յովհաննէս»), վերջապէս, նա հաշուում է այն գլուխները, որոնք զուգահեռ չունեն միս Աւետարաններում («առանձնակի խասիկ»)՝: Գլխահամարները մենք դասատրեցինք այն կարգով, ինչպէս ներկայացնում է Գրիգոր Տաթեւացին: Այսպիսով, ստացում է տասն աղիւսակ (4+3+2+1):

Ինչպէս ցոյց է տալիս Կ. Նորդենֆալկը, տասը պահպանելու նպատակով Եւսեբիոսը բաց է թողել «Մարկոս-Դուկաս-Յովհաննէս» եւ «Մարկոս-Յովհաննէս»⁶ համակցութիւնները, քանի որ այդ դէպքում կստացուէր 12: Եւսեբիոսը, ինչպէս երեւում է Կոստանդին կայսեր յիսնամեայ կառավարութեան յրելեանին նուիրուած ճառից, մեծ ակնածանք ունէր խորհրդատր տասը թուի հանդէպ. «Չորս թիւը, - գրում է նա, - տալիս է տասը թիւը: Քանի որ մէկի եւ երկուսի եւ երեքի եւ չորսի գումարը տասն է: ...Վերստին, տասը թիւը, որ բովանդակում է բոլոր թուերի ասարտը եւ իրենով սահման դառնում նրանց վրայ, լիակատար եւ կատարեալ մի թիւ է, որն ընդգրկում է թուերի բոլոր տեսակները եւ չափերը, համամասները, համաձայնու-

5 Տե՛ս C. Nordenfalk, "Die spätantiken Kanontafeln", Textband und Tafelband, Göteborg, 1938, s. 46-47:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:

թիւնը եւ դաշնութիւնները⁷: Տասի կատարելութիւնն ընդունում էին դեռեւս պիւթագորականները (ընդ որում, նրանք էին տասը համարում երկնային մարմինների թիւը, ինչպէս նաեւ մի շարքում էին դնում տասը սկզբունքները, որոնք կազմում էին հինգ զոյգ հակադրութիւններ, որոնք յետագայում Արիստոտելի մօտ վերածուծ են տասը ստորոգութիւնների)⁸: Ներսէս Ծնորհալու եւ այլոց Մեկնութիւններում նշուած են արարածների տասը մասերը⁹: Տաթեւացին խօսում է քառանկեան մասին, որն ունի չորս կողմեր, որոնք ցոյց են տալիս աշխարհի չորս կողմերը: Քառանկեան չորս կողմերի եւ նրանց ներդաշնակութեան մասին խօսում է նաեւ Օգոստինոս երանելին: 1, 2, 3, 4 թուերի գումարի մասին (տասը) կայ նաեւ վերջինիս մօտ¹⁰: Այդ յարաբերութիւնը, ինչպէս տեսանք, տառացի բերում է Գրիգոր Տաթեւացին¹¹:

Հետաքրքիր խորհրդաբանութիւն է նաեւ տասի տրոհումը հինգ-հինգ մասերի: Սիւնեցու Մեկնութեան մէջ չորրորդ խորանում հինգական կարմիր եւ կապոյտ մասերի են բաժանուած «եղջիրք կամարաց անդրէն ի վերայ խոյակաց»՝ նշումակելով հինգ դասողական եւ հինգ օրէնքների տախտակները: Թ եւ Ժ դարերի ձեռագրերի խորանապատկերներում իրօք հանդէս են գալիս հինգական բլթակներով արմատներեւներ եզրային սիւների եւ կամարների հանդիպման տեղում: Դրանք էլ համարուած են սեղանի եղջիրներ (սեղան համարում էր ինչպէս խորանների կամարադաշտը, այնպէս էլ՝ աղիւսակային սիւնազարդ դաշտը): Ժ-ԺԱ դարերի Մեկնութեան մէջ, հաւանաբար՝ հինգերորդ եւ վեցերորդ խորանների համար, ասում է, որ այդ եղջիրներն՝ «առ վերին սեղանն» (կամարադաշտը կամ ուղղանկիւնաձեւ գլխազարդը), խորհրդանշում են Մովսէսին եւ Ահարոնին: Ներսէս Ծնորհալու մօտ (եօթերորդ եւ

ութերորդ խորան) սիւները հինգ-հինգ մասի են բաժանուած:

Սրանցով չի վերջանում թուային խորհրդաբանութիւնը խորաններում: Իններորդ խորանը Ժ-ԺԱ դարերի Մեկնութեան մէջ համարում է «խորհրդական» (միտիկ)՝ նշանակելով երեք անգամ երեք, այսինքն՝ համաբարբառ անտարանիչների՝ Մատթէոսին, Մարկոսին, Ղուկասին: Էլ անելի բարդ թուային համակարգ կայ Գրիգոր Տաթեւացու մօտ, որը կատարում է թուային այլաբանական գործողութիւններ չորս եւ տասը սրբազան թուերի հետ՝ ստանալով 24 «գլխաւոր արարածոց», 24 մարգարէների, երայական այբուբենի 24 գրերի, Քրիստոսի երկրային կեանքի 33 տարիների, դժոխքում 33 ժամ քարոզութեան թուերը եւ այլն: Երեք եւ չորս թուերի բազմապատկումով նա ստանում է առաքեալների, երեքը երեքով բազմապատկելով՝ հրեշտակների ինը դասերի թիւը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ թուային խորհրդաբանութիւնը «տրամանների մեկնութիւններում» նույնքան էական տեղ է գրաւում, որքան՝ գոյների, թոչունների եւ բոյսերի: Ընդ որում, շատ դէպքերում ելակէտային են համարում թուերի նորապիւթագորական ակունքները:

7 C. Nordenfalk, "The Beginning of Book Decoration", Beitrage für Swarzenski zum 11 Januar, 1951, Chicago. p. 16

8 Տե՛ս "Антология мировой философии в четырех томах", т. 1, часть 1, Москва, 1969, с. 283; Аристотель, "Сочинения в четырех томах", т. 1, Москва, 1976, с. 76 ("Метафизика", 1, 5):

9 Ըստ Եզնիկի՝ մարդու համար իբրեւ ժառանգութիւն Աստուծոյ տուեղծած աշխարհի մասերն են. «Այլ նախ՝ զերկինս եւ զերկիր եւ զչորս եւ զհոյս եւ զօդ եւ զբոյսս եւ զտունկս, զգազանս եւ զանասունս եւ զթոչունս» («Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 162):

10 Օգոստինոս Երանելու մօտ թուային խորհրդանշանների մասին տե՛ս К. Гилберт, Г. Куз, "История эстетика", Москва, 1960, с. 149-153:

11 Թում է՝ մեր մեկնիչներն այդ գործողութիւնը (1+2+3+4) փոխառել են Փիլոն Ալեքսանդրացոյ եւ Եւսեբիոս Կեսարացոյ (տե՛ս Ա. Լուս, նույն տեղում, էջ 95. նաեւ Nordenfalk, "The Beginning...", p. 16):



ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԸ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿԻԻՆԻՑ

Արդի հայ արուեստաբանութեան եւ մշակութաբանութեան բուն նպատակն է պարզաբանել հայ արուեստի ցանկացած երեւոյթի ակունքներն ու փոխադարձ կապերը յարակից երեւոյթների հետ՝ այն դիտելով հնարատրին չափ լայն մշակութային ու պատմական տեսանկիւնից, ինչպէս նաեւ՝ բնութագրել տունայ երեւոյթի արդի վիճակը, այսինքն՝ ժամանակակից մարդու կողմից նրա ընկալումն ու ժամանակակից արուեստի զարգացման ընթացքի վրայ նրա ունեցած ազդեցութիւնը: Այդ առումով շարականը, որպէս հայ միջնադարեան հոգեւոր օրհներգի ժանր, խիստ արժեքատու երեւոյթ է հանդիսանում: Մի կողմից՝ այն պատկանում է հայ ազգային հոգեւոր գանձարանի «էքսպորտային» նշանակութիւն ունեցող արժեքների շարքին եւ ի վիճակի է անկեղծ հետաքրքրութիւն յարուցել աշխարհի ցանկացած անկիւնում, միւս կողմից՝ շարականի զարգացման ընթացքը կարող է դիտուել իբրեւ իւրայատուկ մտուօրինակ (մոդել)՝ ամբողջ հայ, եւ ոչ միայն հայ, միջնադարեան արուեստի զարգացման օրինաչափութիւններն ուսումնասիրելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ շարականը մեր ժամանակներում բազմաթիւ անպատշաճ կամ, երբեմն, կեղծ գիտական մեկնաբանումների առարկայ է դարձել: Այդ մեկնաբանումները, բնականաբար, որոշակի ազդեցութիւն են ունեցել հասարակական գիտակցութեան կողմից ազգային արուեստի տունայ ճիշդի ընկալման վրայ: Այնպէս որ, կարելի է պնդել, որ երաժշտաբանաստեղծական արուեստի այդ ժանրի իսկական գեղագիտական հիմունքների վերականգնումն ու բացայայտումն արդի միջնադարագիտութեան մակարդակով, իրօք, հայ արուեստաբանութեան հրատապ ու կարեւոր հիմնահարցերից մէկն է:

Սոյն յօդուածի շրջանակներում մենք հնարատրութիւն չունենք սպառիչ պատասխաններ տալ բոլոր ծագող հարցերին, այլ կսահ-

Շարականների վերաբերեալ ժամանակակից մասնագիտական գրականութեան մէջ ձեւաորում պատկերացումը կարելի է ամփոփել մի քանի խօսքով. շարականները հոգեւոր բովանդակութիւն ունեցող երգեր են, որոնց եղանակներն ու բանաստեղծական տեքստերը յօրինուած են եղել ականատու գործիչների կողմից ինչպէս վաղ միջնադարում (Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Մովսէս Խորենացի, Անանիա Օհրակացի), այնպէս էլ անլի ուշ դարաշրջաններում (ընդհուպ մինչեւ Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի, Յովհաննէս Երզնկացի եւ ուրիշներ): Այսպիսով, տունայ գործիչներն իրենց դրսեւորել են իբրեւ բանաստեղծներ եւ կոմպոզիտորներ: Շարականների բովանդակութեան վրայ ազդեցութիւն են ունեցել ինչպէս ազգային ազատագրական պայքարի հետ կապուած զգացումները (օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի «Երեք մանկանց» օրհներգերում), այնպէս էլ խոր անձնական ապրումները (նոյն հեղինակի ապաշխարութեան շարականներում): Շարականների եղանակները միջնադարում գրի էին առնում այսպէս կոչուած խազային նշանների օգնութեամբ: Տունայ նշանների իմաստը ժԶ-ԺԷ դդ. ծանր ժամանակաշրջանում մոտացուել է, մինչդեռ շարականների եղանակները պահպանուել եւ տարածուել են բանատու կանգների եղանակները պահպանուել եւ տարածուել են բանատու կանգների շնորհիւ, իսկ ժԹդ. վերջապէս գրի են առնուել սովորական նոտային նշանների միջոցով: Նոտաներով գրի առնուած եղանակները, սակայն, ամենայն հաւանականութեամբ, չեն համապատասխանում միջնադարում երգուած նմուշներին, եւ վերջիններիս իսկական, բնագրային տեքստը վերականգնելու համար հարկատու է վերծանել խազային նշանները, որոնց նշանակութիւնը մինչեւ օրս էլ մնում է անյայտ՝ չնայած կոմիտասի եւ մի շարք այլ հետազօտողների ջանքերի:

Պէտք է ասել, որ այն արդիականացնող պատկերացումը, որը միջնադարեան արուեստի երեւոյթները ձգտում է գնահատել նոր ժամանակի արուեստին բնորոշ գեղագիտական չափանիշների տեսանկիւնից, իսկ ազգային հասկացութիւնը շփոթում է էթնիկականի հետ, սկզբունքօրէն անընդունելի է եւ չի համապատասխանում շարականի ստեղծման բուն էութեանը: Համաշխարհային միջնադարագիտութիւնն արդէն փաստօրէն ազատուել է այդ տիպի արդիականացնող մօտեցումներից. մեր միջնադարագիտութիւնում,

ասկայն, նման առողջ ընթացքը նոր է սկսում: Ծարականցների մասին խօսելիս պետք է էլենք այն անհերքելի դրոյթից, որ միջնադարեան հոգևոր մշակոյթն, ընդհանրապէս ասած, հիմնուած էր մի այնպիսի գեղագիտական ըմբռնման վրայ, որի շրջանակներում ստեղծագործողի անհատական անխաձեռնութեան հնարաւորութիւնները խիստ սահմանափակ էին. նորոյթի որոնումները եւ երեսակայութեան տարրերը համարում էին հպարտութեան յանցաւոր ու սկզբունքօրէն անընդունելի դրսեւորումներ, եւ ստեղծագործութիւնը հիմնականում հանդիսանում էր որպէս նախօրօք տրուած, Եկեղեցու հայրերի կողմից կանոնականացուած նմուշօրինակների ընդօրինակում: Արուեստագէտի գեղարուեստական հմտութիւնը գնահատում էր ըստ աստուածաբանական սկզբունքների եւ ծիսական արարողութեան բարդ պայմանների նկատմամբ ցուցաբերած իր հաւատարմութեան: Ասումը հաշուի առնելով՝ մենք չենք կարող միջնադարեան շարականագրին համարել բանաստեղծ կամ կոմպոզիտոր՝ տուեալ եզրերի արդի հմաստով:

«Հոգևոր երգ» եզրն առաջին անգամ հանդիպում ենք Պօղոս առաքելի մօտ. «Սաղմոսներով, օրհնութիւններով եւ հոգևոր երգերով՝ երգեցէք Տիրոջը» [տե՛ս Եփես. Ե 19]: *Սաղմոսներ* եւ *օրհնութիւններ* ասելով՝ Պօղոսն ի նկատի ունի Աստուածաշնչում գետնողում տեքստերը՝ Դաւիթ մարգարէի 150 սաղմոսները, ինչպէս նաեւ՝ աստուածաշնչեան զանազան գրքերում իրենց տեղը գտած օրհներգային դրուագները, որոնց ձեւն ու բովանդակութիւնն ինքնին ենթադրում են որոշակի երաժշտական ձեւաւորում (ինչպէս օրինակ՝ Մովսէսի յաղթական երգը [տե՛ս Ելք ԺԵ], Բաբելոնում հնոցի մէջ նետուած եւ հրաշքով փրկուած երեք պատանիների աղօթքը [տե՛ս Դան. Գ 52-90], ս. Աստուածածնի շնորհակալական աղօթքը [տե՛ս Դով. Ա 46-54] եւ այլն), մինչդէռ *հոգևոր երգեր* եզրն, ըստ ամենայնի, վերաբերում է ինքնուրոյնաբար ստեղծուած երաժշտաբանաստեղծական տեքստերին: Վաղ միջնադարեան հոգևոր երգի պարզագոյն ու ամենատարածուած տարատեսակը յունարէն կոչւում էր *տրոպարիոն*, ասորերէն՝ *էնէւանա*, իսկ հայերէն՝ *կցուրդ*. այն «կցում» էր աստուածաշնչեան այս կամ այն նմուշօրինակ տեքստին (այսինքն՝ սաղմոսին կամ օրհնութեանը) եւ զարգացնում, վերաշարադրում կամ մեկնաբանում տուեալ նմուշօրինակի գաղափարներն ու մոտիւները՝ երբեմն համադրելով դրանք Աստուածաշնչի այլ գրքերից քաղուած մոտիւների եւ խորհրդանիշերի հետ: Այսպիսով, կցուրդի բովանդակութիւնը լիովին պայմանաւորուած է նմուշօրին-

ակ տեքստի բովանդակութեամբ, այսինքն՝ ինքնուրոյն ստեղծագործութեան մասին այստեղ կարելի է խօսել միայն խիստ սահմանափակ առումով: Հայկական շարականն իրենից ներկայացնում է կցուրդների շարք¹, որն, անկախ նրանից, թէ եկեղեցական օրացոյցի որ օրուայ առթիւ է գրուած, պարունակում է հետեւեալ մասերը (տարբեր շարականներում այս կամ այն մասերը կարող են բացակայել).

1. **Օրհնութիւն**՝ կցուրդ Մովսէսի երգի («Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» [Ելք ԺԵ 1]): Երգում է գիշերային ժամին:
2. **Հարց**՝ կցուրդ երեք պատանիների («մանկանց») աղօթքի («Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց» [Դան. Գ 52]):
3. **Մեծացուցէ**՝ կցուրդ ս. Աստուածածնի երգի («Մեծացուցէ անձն իմ զՏէր» [Դով. Ա 46]):
4. **Ողորմեա՛**՝ կցուրդ Սաղմ. Ծ-ի («Ողորմեա՛ ինձ, Աստուած»):
5. **Տէր յերկնից**՝ կցուրդ Սաղմ. ԺԵԸ-ի («Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից»):
6. **Մանկունք**՝ կցուրդ Սաղմ ԺԺԲ-ի («Օրհնեցէ՛ք, մանկունք, զՏէր»): 2-6 մասերը երգում են առաւօտեան ժամին:
7. **Մաշու՛**՝ այս մասի նմուշօրինակ սաղմոսը կամ օրհնութիւնը փոփոխական է՝ նայած արարողութեան բնոյթին: Երգում է ճաշու ժամին:
8. **Համբարձի՛**՝ կցուրդ Սաղմ. ԺԻ-ի («Համբարձի՛ զաչս իմ ի յերինս»): Երգում է երեկոյեան ժամին:

Այս խստօրէն կանոնականացուած կարգի շրջանակներում շարականագիրն իր հմտութիւնն է ցուցաբերում նախ եւ առաջ որպէս աստուածաբան՝ եկեղեցական օրացոյցի տուեալ օրուայ բուն նիւթը հանդիսացող իրադարձութեան մեկնիչ (աստուածաշնչեան տեքստի ուղղակի վերապատումը շարականներում աննշան տեղ է գրաւում): Ծարականներում հանդիպում ենք աստուածաբանական մեկնութեան երկու հիմնական կերպերի: Այդ կերպերից առաջինի համաձայն՝ Քրիստոսի մշտնջենական, աստուածային Էրութիւնը վկայող իրաքանջիւթ թեզի հակադրում է այդ Էրութիւնն իր երկրային վարքի եզակի իրադարձութիւնների վրայ բեւեռող հակաթեզ, մինչդէռ կրկնեղբ՝ կայուն բանաձեւը, որն առանց փոփոխութիւնների կամ աննշան փոփոխութիւններով անցնում է մի երգից միւրը՝ իմաստային կապ հաստատելով աստուածաշնչեան նմուշօրինակի

¹ Ծարական երգի հիմքում ընկած է հենց շարք արմատը, այսինքն՝ շարականի իրեն առանձին օրհներգի մասին տարածուած պատկերացումը սխալ է:

հետ, սինթեզում է հակադրուող տարրերը: Որպես օրինակ կարելի է բերել Ասագ Հիգոզաբթունն նուիրուած՝ Սահակ Պարթևին վերագրուող շարականի հետևեալ հատուածը, որտեղ նման տեսանկիւնից դիտում է վերջին Հնթրիքի խորհուրդը.

«Որ յաթոտ փառաց նստիս ընդ Հօր, այսօր բազմի ընդ աշակերտսն յանձն ատեր՝ բաշխելով զՄարմին եւ զԱրիւն Բո սուրբ². օրհնեալ զԵկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան»:

Մեկնութեան առաւել տարածուած միւս կերպի համաձայն՝ շարականի միեւնոյն տան սահմաններում համեմատում են սրբազան պատմութեան տարրեր փոփոխում տեղի ունեցած իրադարձութիւնները՝ Հին եւ Նոր Կտակարանների ներքին խորհրդանշական կապը հաստատելու համար: Այդ համակարգում՝ նոյնպէս կրկնաբար կատարում է սինթեզող տարրի դեր:

Աստուծի լաւ օրհնակ է Պենտեկոստէին նուիրուած շարականներից մէկի հետևեալ հատուածը (հեղինակ՝ Ներսէս Շնորհալի), որտեղ Հոգեգալստեան իրադարձութիւնը [տե՛ս Գործ. Բ] դիտում է բարելոնեան աշտարակաշինութեան հետ ունեցած խորհրդանշական առնչութեամբ [տե՛ս Ծնունդ. ԺԱ 7].

«Որ զմիաբանեալսն յաշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց, այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ վերնատունն: Ամենայն հոգիք, օրհնեցէ՛ք զՀոգին Աստուծոյ»:

Հասկանալի է, որ նման գեղագիտական մօտեցումը բացառում էր անձնական կամ հրատապ ասպրումների եւ զգացմունքների անմիջական արտայայտութիւնները: Աստուծը վերաբերում է թէկուզ Մեսրոպ Մաշտոցին վերագրուող՝ Մեծ Պահքի Հարցերին («Երեք մանկանց» օրհներգերին), որոնցում որոշ հետազօտողներ տեսնում են հայոց ազգային-ազատագրական պայքարի հիմն, եւ որոնք իրականում գրեթէ ամբողջովին կազմուած են Դան. Գ-ից քաղուած բանաձեւերից՝ ոչ մի անմիջական ուղղակի կապ չունենալով հրատապ քաղաքական իրադարձութիւնների հետ³: Նմանապէս եւ Մաշտոցին վերագրուող Ողորմեաները, որոնցից իրաքանչիւրը ժամանակակից ընթերցողին կարող է թուալ հոգու խորքից եկող ապաշխարութեան ճիշտ, իրականում գրեթէ ամբողջովին հիմնուած

2 Հմմտ. Մատթ. ԻԶ 26-28, Մարկ. ԺԴ 22-25, Դով. ԻԲ 19-20, Թովհ. ԺԳ 5-11:

3 Թերեւս պէտք է նշել, որ շարականներում, ինչպէս եւ բոլոր միջնադարեան վարքագրական աւանդութիւններում, հանդիպում են անմիջականօրէն ազգային-պատմական իրադարձութիւններին առնչուող պահեր: Սակայն չպէտք է անտեսել, որ այդ դէպքերում էլ ստեղծագործութեան շարադրանքը հետեւում է որոշակի բանաձեւերի կանոնական համակարգի, որն ըստ էութեան ունի համաքրիստոնէական բնույթ:

են աստուածաշնչեան մէջբերումների վրայ: Դրանում համոզուելու համար բավական է թէկուզեւ ստորեւ բերուած հատուածը համեմատել Սաղմ. ԾԶ-ի կամ Բ Թագ. ԻԲ-ի հետ.

«Ծով մեղաց իմոց զիս ալեկոճէ: Որ ես Նառապետ բարի, շնորհեա՛ զիս նառահանգիստ, Հա՛յր ամենակալ»:

Ծարականների բանաստեղծական տեքստի խիստ կանոնական բնույթը ցոյց տալու համար կարելի է բերել հարիրատոր այլ օրինակներ: Իհարկէ, ԺԲ-ԺԳ-դդ., վերածնութեան գաղափարների ազդեցութեամբ, սկզբնական կանոնն ինչ-որ չափով խախտուեց, որի հետևանքով շարականների արուեստը հարստացաւ որոշ նոր բանաստեղծական հնարներով, սակայն այդ արուեստի հիմնական գեղագիտական նկարագիրը դրանից չի փոխուել: Նոյնպիսի կանոնական բնույթ ունի եւ շարականների երաժշտական բաղադրիչը:

Ամբողջ միջնադարեան քրիստոնէական աշխարհում գործում էր «ուր-ձայնի» օրէնքը, ըստ որի եկեղեցական երգացանկը հարկադրաբար սահմանափակուում էր 8 կանոնականացուած եղանակներով՝ «ձայներով» (ասորերէն՝ ռիշ-քոլո, յունարէն՝ իխոի): Կոնկրետ եղանակների ընտրութիւնը իրաքանչիւր երկրում, ըստ ամենայնի, պայմանաւորուած էր տեղի ֆոլկլորային աւանդոյթներով: Այդ իսկ պատճառով հայկական «ուր-ձայնը» տարբերում է յունականից, ասորականից, լատինականից, սլաւոնականից եւ միւսներից, բայց ուրբ, որպէս երաժշտութիւնը համակարգող խորհրդանշական թիւ, ընդհանուր է բոլոր նշուած մշակոյթների համար: Միշտ է, ԺԲ-ԺԳ-դդ. «նախատեսանաւեան» ժամանակաշրջանում որոշ չափով քայքայուել են նաեւ միջնադարեան «ուր-ձայնի» խիստ կանոնական նորմերը. եկեղեցական երգացանկի մէջ են ներթափանցել նոր եղանակներ, որոնք արհեստականօրէն կցուել են եղած 8 «օրինական» եղանակներին՝ որպէս դրանց ստորաբաժանումներ՝ սրբազան թիւը չխախտելու նպատակով: Այդ լրացուցիչ եղանակների հետ միասին Ծարակնոցի երաժշտական միաւորների ընդհանուր թիւը հասնում է 44-ի (ըստ Կոմիտասի հաշուումների՝ 40-ի), այսինքն՝ նոտագրուած Ծարակնոցի հսկայական հատորում պարունակուող, արտաքննապէս անսահման հարստութիւնն իրականում սահմանափակուում է ընդամենը 40-44 տարբեր մեղեդիներով կամ, աւելի ստույգ ասած, մեղեդիական տիպարներով: Այդ տիպարները, համապատասխանեցուելով զանազան ծաւալ ունեցող բառային տեքստերի, կարող էին ինչ-որ չափով փոփոխուել, սակայն դրանց խորքային ինտոնացիոն հիմքը, որը ներդաշնակ, սինթետիկ ամբողջ-

չութիւն էր կազմում տեքստի շարահիւսական, առոգանական ու կշռութային կառուցուածքի հետ⁴, մնում է անփոփոխ: Ուրեմն, կանոնականացում տիպարների վրայ հիմնուած բանաձեւային մտածողութիւնը պայմանաւորում է ոչ միայն շարականների բանաստեղծական տեքստերի, այլև՝ դրանց երաժշտական բաղադրիչի առանձնայատկութիւնները:

Ծարականների մասին խօսելիս չի կարելի շրջանցել խազային նշանների խնդիրը: Սկսած Կոմիտասի 1900-ական թուականների աշխատութիւններից՝ համարում է, որ խազերն ունեն ինչ-որ «մոռացուած» իմաստ: Հետեւաբար, խազերի «բանալին» գտնելուց եւ շարականների խազային տեքստերը վերծանելուց յետոյ մենք ստանալու ենք սկզբունքօրէն նոր արժէք, որն ամենեւին չի համընկնելու շարականների արդի, նոտային ձայնագրութիւններից յայտնի վիճակի հետ⁵:

Իրականում, ինչպէս վաղ միջնադարեան օրհներգը չէր կարող համարուել երաժշտական ստեղծագործութիւն՝ բառիս արդիական իմաստով, այնպէս էլ վաղ միջնադարեան երաժշտական նշանները (եւ այդ թում, իհարկէ, նաեւ խազերը), գործելով կանոնական, բանաձեւային մտածողութեան պայմաններում, ֆունկցիոնալ առումով ամենեւին նման չէին արդի նոտաներին: «Ութ-ձայնի» կանոնականացումը մեղեդիական տիպարներն ընդհանրապէս գրի չէին առնում. երգիչ-կատարողները պարտաւորուած էին դրանք յիշել անգիր, իսկ խազերը ծառայում էին այդ տիպարները զանազան բանաստեղծական տեքստերին համապատասխանեցնելուն եւ կատարողական տարբեր նրբերանգներով հարստացնելուն: Բացի այդ, որոշ բաղադրեալ, համեմատաբար աւելի բարդ կառուցուածք ունեցող խազերը իրայատուկ պայմանական նշանների դեր էին

խաղում՝ հնարաւորութիւն տալով բոլոր «լրացուցիչ», խիստ «ութ-ձայնից» շեղուող տիպարները միմեանցից տարբերել եւ համակարգել: Այսպիսով, խազային նշանների վերծանութեան ցանկացած փորձ սկզբունքօրէն չի կարող դուրս գալ Ծարակնոցի նոտային տեքստում պարունակուող ձայնեղանակների եւ դրանց «ստորաբաժանումների» մասին մեր ունեցած պատկերացումների շրջանակներից (իհարկէ, այստեղ խօսքն այս կամ այն չափով դիլետանտական փորձերի մասին չէ, որոնք խազագիտութեան բնագաւառում սակավաթիւ չեն): Հետեւաբար, տունալ ուղղութեամբ պետք չէ սպասել որեւէ նոր արժէք: Մենք ամենեւին չենք պնդում, թէ խազերի համակարգը հետազօտողի առջեւ ոչ մի էական խնդիր չի դնում: Խնդիրը, սակայն, կապուած է ոչ թէ նշանների «վերծանման», այլ՝ օրհներգերի շարահիւսութեան, առոգանութեան, կշռոյթի եւ ելեւէջի սինթեզի կազմակերպման մէջ նրանց ունեցած դերի բացայայտման հետ: Նման մօտեցումն, անշուշտ, ունի զուտ ակադեմիական բնոյթ եւ հետազօտողին թեթեւ դափնիներ չի բերի: Միս կողմից՝ այն, մեր համոզմունքով, լիակատար կերպով համապատասխանում է նիւթի բուն էութեանը:

Այժմ փորձենք ամփոփել ասուածը: Մեր նախնիների կողմից ստեղծուած շարականը բարձր, կանոնական, սինթետիկ հոգեւոր արուեստ է, որի շրջանակներում իսպառ բացառուել են բոլոր «ու-նայն», չափից դուրս անհատականացումը դրսեւորումները: Այդ արուեստի խորքային հիմքն ունէր համաքրիստոնէական, այսինքն՝ ինչ-որ չափով վերազգային բնոյթ՝ համաձայն Պօղոս առաքեալի խօսքի. «...այնտեղ չկայ հրեայ, ոչ էլ՝ հեթանոս, թլփատութիւն եւ անթլփատութիւն, բարբարոս, սկիւթացի, ծառայ, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամեն ինչ է եւ բոլորի մէջ» [Կողոս. Գ 11]: Հայ հոգեւոր երաժշտաբանաստեղծական արուեստը քրիստոնէական աշխարհի միս երկրների արուեստից առանձնացնող հիմնական գործօններն են գրաբար լեզուն եւ «ութ-ձայնի» հայկական տարբերակը: Երկուսն էլ միջնադարեան կանոնական մտածողութեան համակարգի տեսանկիւնից դիտում էին որպէս լոկ օժանդակ տարրեր, որոնք միայն չափազանց անկատար միջոցներ են՝ մշտնջենական աստուածային նշմարտութիւններն արտայայտելու համար: Այս կապակցութեամբ տեղին է յիշել առաքեալների եւ Յիսուս Քրիստոսի հետեւեալ երկ-խօսութիւնը.

«Ինչո՞ւ ես առակներով խօսում նրանց (ժողովրդի - Լ. Յ.) հետ: -Որովհետեւ ձեզ է տրուած իմանալ երկնքի արքայութեան

4 Այդ սինթեզի էութեան պարզաբանումը կազմում է մի առանձին գիտական հիմնահարց եւ կապուած է բազմաթիւ տեխնիկական մանրամասնութիւնների հետ, ուստի եւ այստեղ հնարաւորութիւն չունենք դրան անդրադառնալու:

5 խազերի վերծանութեան մեթոդաբանական հարցերին վերաբերող՝ Կոմիտասի միակ հրապարակուած յօդուածի վերլուծումը ցույց է տալիս, որ Կոմիտասի պատկերացումները համապատասխանում էին իր ժամանակի երոպական նշանագիտութեան (միջնադարեան բիզանդական երաժշտական նշանների մասին ուսումնքի) մակարդակին, որն այն ժամանակ բաւական ցածր էր: Միայն 1920-30-ական թուականներին Հ. Թիւնարդի եւ Է. Վելլէսի ջանքերով գիտութեան այդ բնագաւառը կարողացաւ որոշակի յաջողութիւնների հասնել բիզանդական նշանների էութիւնը բացայայտելու գործում: Հաշվի առնելով, որ հայկական խազերի համակարգն, ըստ էութեան, միջնադարեան երաժշտական նշանների ընդհանուր, միջազգային համակարգի մասնաճիւղ է (խազերը բիզանդական նշանների, ինչպէս նաեւ՝ լատինական եւ պատմական Ուրբանիայ նշանների նմանութեամբ հանդիսանում են հին լուսնական առոգանութեան նշանների համակարգի ընդլայնուած տարբերակ)՝ կարելի է պատասխանել խազերի էութեանը վերաբերող հիմնական հարցերին՝ դրանց վրայ տարածելով յարակից նշանային համակարգերի ուսումնասիրութեան արդիւնքում ստացած տուեալները:

խորհրդանքը, իսկ նրանց տրուած չէ» [տե՛ս Մատթ. ԺԳ 10-12]:

Այստեղ կարելի է մէջբերել նաեւ մէկ այլ դրուագ. «...ով որ լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստուծոյ հետ. քանզի չկայ մէկը, որ հասկանայ նրան, քայց նա Հոգով արտայայտում է խորհրդանք: Բայց ...Եկեղեցու մէջ ուզում եմ հիմա խօսք խօսել մտքով, քան՝ բազում խօսքեր՝ լեզուով» [Ա կորնթ. ԺԴ 2, 19]:

Լեզուներ եզրը պէտք է ընկալուի խորհրդական ոգով [հմմտ. Գործ. Բ 4]: «Երկնքի արքայութեան խորհրդանքի» լիակատար իմացութիւնը հնարատր է միայն խորհրդական (միստիկական) լուսաւորման ճանապարհով՝ առանց լեզուի միջամտութեան: Միջնադարեան արեւելաքրիստոնէական մեծագոյն մտածողներից մէկը՝ Դիոնեսիոս Արեոպագացին, մշակել է **ապոֆատիկ** (անճառելի) աստուածաբանութեան տեսութիւն, որի համաձայն՝ բարձրագոյն էութեան ճանաչողութեան ճանապարհին հարկատր է աստիճանաբար ձերբազատուել բոլոր մասնաւոր բնութագրումներից եւ որակաւորումներից՝ դրանք փոխարինելով բացասաբար՝ հակառակից ելնող բնութագրումների համակարգով: Նման մօտեցումը ճշգրիտ կերպով արտացոլուած է Աստուածածնի **Աւետման** կանոնի օրհներգերից մէկում (հեղինակ՝ Գրիգոր Պահլաւունի, ԺԲդ.), որտեղ Բրիստոսին բնութագրելու համար կիրառուած է եզրերի հետեւեալ շղթան՝ **անճառ-անժամանակ-անտանելի-անբերելոյք-անսահման**: Տուեալ ուղղութեամբ յաջորդ տրամաբանական քայլը կլինէր հրաժարուելը որեւէ բառից եւ հասնելը այն լիակատար լոռութեանը, որն իր մէջ է պարունակում ողջ «ինֆորմացիան» Աստուծոյ էութեան մասին: Նման քայլ կատարելը, սակայն, անմատչելի է սովորական մարդու համար: Այդ իսկ պատճառով Դիոնեսիոսն ընդունում է նաեւ աստուածաբանութեան աւելի ցածր, անկատար տարբերակ՝ **կատաֆատիկ** (ճառելի) աստուածաբանութիւնը, որը, Բրիստոսի առակների մասնութեամբ, կարող է օժանդակ միջոց ծառայել՝ հասարակ մարդկանց աստուածային ճշմարտութիւններին ծանօթացնելու համար: Կարելի է ասել, որ միջնադարեան կանոնական մտածողութեան համակարգում լեզուն եւ ձայնեղանակը կատարում էին հէնց այդպիսի **կատաֆատիկ** միջոցների դեր:

Այսպիսով, միջնադարեան շարականների արուեստում օրհներգերի բանաստեղծական լեզուի գրաբարը եւ «ուր-ձայնի» եղանակների հայկական երանգը, որպէս ընդհանուր սինթետիկ համակարգի լոկ մակերեսային, օժանդակ, մարդու բնութեան արտաքին յատկանիշներով պայմանաւորուած տարրեր, պէտք է դասուեն ոչ

այնքան **ազգային**, որքան **էթնիկական** արժէքների շարքին: Մեր ժամանակներում միջնադարեան արուեստի սինթետիկ ոգին պատշաճապէս չի ընկալոււմ. ամբողջական համակարգ հանդիսացող, լիակատար եւ համապարփակ քրիստոնէական հաւատքը կորցնելուց յետոյ մենք ի վիճակի ենք լաւագոյն դէպքում ըմբռնել միայն նշուած էթնիկական տարրերը՝ դրանք շփոթելով իսկական ազգային հոգեւոր արժէքների հետ: Բանասէրներն ուսումնասիրում են շարականների բառային տեքստերը, երածշտագէտները՝ մեղեդիներն ու խազային նշանները, կոմպոզիտորները՝ «ուր-ձայնի» կանոնական եղանակներն օգտագործում են իբրեւ «հումք» ռոմանսների եւ գործիքային պիեսների համար. այդ ամէնը, սակայն, արում է հիմնականում մակերեսային մակարդակով, առանց միտքի բուն, սինթետիկ էութիւնը հասկանալու: Սկզբնական ամբողջութեան աւերակների վրայ ծնուած արդի մշակոյթն, իհարկէ, ինքնին որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում որպէս ազգային իւրայատուկ դրսեւորում: Այդ նոր **ազգայինը**, սակայն, ունի անչափ աւելի սահմանափակ, **էթնիկականի** հետ համընկնող բնոյթ, եւ դա անխուսափելի է, քանի որ այն հոգեղինացած չէ իսկական քրիստոնէական հաւատքով:



ԳԱՆՁԱՍԱՐ

ՊԱՏԿԵՐՈՒՍՈՅՑ ԳԻՐՔ

(շարունակութիւն)

53-54. Իմաստասիրի եւ
զինւոյ վիճարանութիւնն է
գրուած¹:

55. Երեսին վերելք՝ կա՛մ
յետոյ գծագրած, կա՛մ հին գծերը



Հասարցուցած մեծամուղ մէկ
մի՛ գիրք կամ տոմս ի ձեռին.

դիմացը կայ հին եւ կարմիր
գծերով նոյնպէս գիրք մի բռնող
մէկն, բայց դէմքն խանգարած եւ
մաշած է: Վարի կողմն այլ կայ
կիսանձն պրակաւոր մի՛ մօրուա-
նի, մազերն նման Յովհ. Մկրտչի
նկարուած գլխոյ (Թիւ 25*^բ).
Կ՛օրհնէ դիմացը կեցող աւելի
փոքր պրակաւոր մի մանկադէմ
վայելուչ. ասոր մազերն այլ՝
ծածանեալ:

56. Հաւանօրէն է Մատթէոս
իւր Աւետարանը գրող. պարզ
գծածեւ:

57. Թանձր կարմրկէկ
գծերով եւ բաւական կենդանի
կերպարանօք Եսայի մրգէ (Թիւ
26*), Դանէլ (Թիւ 27*), երրորդն՝
անանուն, քայլողի ձեւով. վարի
կողմը՝ Ամովո մրգ՝ պրակը եր-
կու ձեռօք տարածած (Թիւ 28*),
Միքիա (Թիւ 29*) եւ Յովել:
Զգեստներուն վրայ նշանակուած
են գունոց անուանքն ԼՊ. ԿԷ.

¹ Տոնայ երկր (տե՛ս «Բազմավէպ» Բ.
ԾՂ, էջ 388-390) յայպատմ է սոյն վե-
րաճրատարակութիւնից՝ վերջինիս նպա-
տակին չառնչուելու պատճառով:

² Աստղանիշ թոյով համարակալուած
եմ մեր յանգած պատկերները:



Թիւ 26*

(կանաչ), սուկի, ալ. եւ շատ տեղ՝ բգ, որ չեմ գիտեր՝ ինչ գոյն նշանակէ:

58. Այս երեսիս վերեւն այլ են Աբգիւ եւ ուրիշ երկու փոքր մարգարէք. վարն ալ՝ երեք՝ առանց անուան. ասոնց լուսապսակաց միջոցը Թանձր կարմրով կամ սեւականաչով ձեփեր են յետոյ:

59. Վայրի մարգն է, եթէ այսպէս ուզեր է կարծել ընդօրինակողն, եւ ոչ՝ դեւ մի: Այլ ճիւղին մարմնոյն կիսէն վարը



Թիւ 27*

ձեռքերն, գլուխն եւ կրծոց մասն մի՝ սեւաներկ են, մնացեալ մասն՝ կարմիր կամ Թանձր աղիւսագոյն:

60. Այս երեսիս վերը Հաւասարամասն խաչ մի կայ՝ չորս թեւերն մէկմէկ գոյք թռչուններով ձեւացած. մէկ կողմը՝ խաչանիշ քահանայական զգեստով անձ մի՝ երկու ձեռք բռնած պրակ մի եւ դաստառակ կամ ուրարին փէշը. միւս կողմն այլ՝ քիչ մի ցած, ուրիշ խաչանիշ մի նոյնպիսի. աւելի վար՝ ս. Աստուածածին՝ Յիսուս ի գրկին. իր



Թիւ 28*

քովն այլ՝ ս. Յովսէփ՝ սրածայր դաւազանաւ. իսկ ի միւս կողմն՝ անճոռնի, թէև բաւական ճարտարագիծ, փետրամագ, երկայնաքիթ կլորաչուի բու Հաւն (Թիւ 21):

61-62. Ս. Աստուածածնի ի թաղումն տարուիլն՝ իբրև յանկողնի դազաղաւ, զոր վերցնեն ութ լուսապսակ առաքեալք եւ Հետեւողք. դազաղին եզերքէն կախուած են այն ամբարիշտ Հրէին երկու բազուկներն, որ կ'ուզէր կործանել զդազաղն, եւ Հիմա, կոճուպեալ թեւք ի ծունկ



Թիւ 29*

ինկած, թուի ներուան խնդրել: Թղթին միւս երեսն այլ ներկայացնէ Տիրամօր թաղումը, որ վերնոյն պէս բաց երեսօք տեղաւորուի ի գերեզմանի. մէկն՝ թիւուքէն բռնած, իսկ միւսն՝ ոտքերէն. ասոր քով՝ երկու մոմավառ կուսանք. միւսոյն քով այլ՝ երեք անձինք, որոց վերեւն՝ երկու թեւաբարձ Հրեշտակք, դիմացն այլ՝ երեք Հրեշտակք. իսկ ի միջին կեցած է Քրիստոս խաչանիշ լուսապսակաւ, ի ձեռին խանձարրապատ փոքրիկ մի, որ նշանակէ զՀոգի Մօրն, զոր տանի



Թիւ 22

յերկինս: Այս ամէնքն բացատրեն մեր հարց երգած շարականն ի վերափոխումն ս. Աստուածածնի. «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին, երանգի առաքեալքն եւ ս. կուսանքն, ջահագգետտիք

պայծառացեալք, լուցանէին զլապտերս իրեանց... Տեսոն իսկ ինքն գոյով եկեալ բազում հրեշտակօք» եւ այլն: Բոլոր պատկերն նուրբ կապոյտ գծերով է, եւ գէճերն՝ բաւական

վայելչութեամբ. ամէնքն այլ՝ մարդ եւ հրեշտակ, լուսապսակք են, բաց ի կուսանաց, որոց, թերեւ, բաւական համարուած է գէսն եւ քողն (Թիւ 22):

64. Համբարձումն կամ Յարութիւն Բրիստոսի. Բրիստոս յօդս բազմեալ՝ պրակիկ ի ձախումն, աջովն օրհնելով. չորս հրեշտակք՝ թեւատարածք եւ



Թիւ 23

63. Պատկերին վրայ գլորածքն վկայեն ինչ ըլլալը. երկու կանայք, իւզաբերքն, հրեշտակն նստեալ եւ վէժն գերեզմանին Բրիստոսի, զոր յետոյ մէկն կարմրով գծեր է, մինչ բնան կապուտագիծ է (Թիւ 23):

ծնգածալք, շրջանակ մի ձեւացրնեն Յիսուսի բոլորով: Պատկերն Բրիստոսի Համբարձման պատշաճի, բայց ներքեւ ուրիշ անձ չըլլալով՝ մէկն Յարութիւն կարծեր է եւ հինկէկ գրով գրեր

է. «Մարիամ ու Հրեշտակն յայս տեղս պիտրին»:

65. Յիսուս Փրկիչ՝ խաչապսակ բազմեալ յաթոռ չորեքկերպեան, աջովն օրհնելով, Աւետարանն ի ձախում. այս կողմէս՝ կիսանձն Յովհ. Մկրտիչ, յաջակողմն՝ ս. Աստուածածին: Յիսուսի պատմուճանաց վարի կողմերը այլ եւ այլ գոյնանիչ տառեր կան, լ-բ. հ. գ. (լազուարտ. բեհեզ. զնճուֆր): Նշանաւոր է այս պատկերիս ներքեւ մէկ կողմը գծանկար ծնրադիր կրօնաւոր մի, ինչպէս գուշակուի գլխէն վար կախուած կնգուղէն, եւ թուի պատկերացս նկարիչն:

66. Վերեւ՝ Հարեւանցի գծադրած խորան կամ ճակատ մի Աւետարանի, վարն այլ՝ անձ մի՝ մէկ ձեռքը կարկառած:

67. Ծգնաւոր կամ կրօնաւոր մի՝ խաչանիչ կնգողով, երկայն նեղ գաւազանաւ. յաջ կողմն՝ երկայնանիզակ եւ երկայնասրունգ զինաւոր մի. միւս կողմը՝ թագապսակ կոյս մի՝ լայն վերարկուաւ թեւերը ծածկած, եւ վերարկուին վերի մասերն իրարու եկած տեղէն՝ նաւու խարըսի ձեւով բան մի կախուած. ասոր քով՝ լուսապսակ, անծորուս, պրակաւոր երիտասարդ մի. ներքեւը՝ երկայնմօրուք, ծոնկ գրած աղօթաւոր մի՝ փոքրիկ պրակ կամ ծրար ի ձեռին (թիւ 30*). զիմացի կողմէն մեծկակ եւ երկայնամասն

ձեռք մի գծադրած է, թուի յետին գրչէ:

68. Մեծ ձեւ մի, դրոսէն՝ վեց կիսաբուրբ, մէջն՝ կիսաբուրբից



թիւ 30*

գծերն երկայնած եւ յիրար խառնած, ճարտար եւ վայելուչ:

69. Հմայական աղօթքն են, զոր ի սկզբան յիշեցինք¹:

70-75. Բարոյական խրատքն եւ խառնալեզու ոտանաւոր բանն. վերջի երեսին ներքեւ՝ կարճ յիշատակն նահատակութեան Սիրունի լաճին եւ թուականն²:

Յիշեցինք առաջացուց³ այս ոտանաւոր գրուածք նիւթն եւ լեզուն. Հեղինակն թուի վերջի կի-

1 Տե՛ս «Գամճասար», Գ, էջ 330:
2 Տե՛ս Աոյճ, էջ 329:
3 Տե՛ս Աոյճ, էջ 230

սուն մէջ յիշուած Թաղէոսն. այդ անուամբ ծանօթ է թխաղցի մղտեսի մի՝ երկլեզու քերթուածներով, եւ սեբաստացի երէց մի եւ: Քննելու է եւ Թաղոսի քով յիշուած՝ Հոգւով տկար Ղաւսին, որ այս գրուածին վերջի տան մէջ այլ գրուի Ղաւաս. մի թէ մականո՞ւն Թաղոսի, թէ՞ անոր բարեկամ կամ թէ՞ բուն Հեղինակ բանիս¹:

76. Ինն կիսանձն Փոքր մարգարէք, որոց պրակաց վրայ



թիւ 31*

գրուած են անուանքն, բայց ոմանց՝ ջնջուած, կարդացուին Զաքարայ?, Ամովո, Միքեայ, Յովէլ, Աբգիու (թիւ 31*), Նասու, Ամբայեւումայ (թիւ 32*):

1 Այս երկը (տե՛ս «Բազմավեպ», Բ, ԾԴ, էջ 394-396) Աոյճպէս ճապատու է:



թիւ 32*

77. Մեծ երկլեզուեան, ժաննուոր, ճիրանաւոր եւ բաշաւոր վիշապ մի (թիւ 24):

78. Զարդածեւք բուսեղէնք, որոց մէջ՝ մեծ աքաղաղ Հաւ մի. փոքրիկ մի եւ՝ արծուանման մաղջօք քառակուսի տուփ կամ տոմս մի բունած:

79. Երկու գագանք՝ ինձ կամ ընձառիւժ՝ ահարկու աչօք եւ կզակօք:


80. Այլեւայլ կենդանեաց փոքր պատկերք՝ միեղջերու, բորենի եւ այլն, որք սովորաբար Աւետարանի խորանաց եզերքներում նկարուին:

81. Չորս թռչնուհիք եւ երկու զարդախառն թռչունք:

82. Քրիստոս բազմեալ, զոր երկու ծրնկածալ Հրեշտակք վերցրնեն. վերեւ գրուած է՝ եթէ ոչ ի Հաւաքողէն, այլ՝ Հինկէկ. Տե՛ս թիւն Ենովքայ: Ներքեւն այլ

նոյն ոճով գրուած եւ նկարա-
գծեալ կիսանձը յայտնող. «Ա-
ռաջին թագաւորն Աղապար, որ
եզիտ զԲԺ Կենդանակերպսն.
յորդոց Սեթայ»: Ի գլուխն՝
երկայն ձագարածեւ գտակ՝ մէկ
ձեռն կէս վերուցած, միւսն՝ բան
մի ցուցընելու ձեւով. զգեստուց
գոյնն գրուի ոսկի, լազուարտ եւ
ճնարակ:

83. Այս երեսիս վրայ պատ-
կերքն գունաւորեալ են դեղնա-
կարմիր, բայց քիչ շատ մաշած.
յաջ կողմն՝ տասն կամ աւելի
անձանց խումբ մի կայ, որոց
շատին միայն գլուխք գծագրեալ
մօրուաւոր կամ անմօրուա եւն.
երկու կամ երեքն միայն ամբողջ
եւ գունաւոր. ասոնց դիմաց, միւս
երեսին եզերքին՝ գունաւոր մէկ
մի, որոյ ձեռաց ինչ դիրք
ունենալն յայտնի է: Այս երկու
եզերաց մէջ անձ մ'այլ կայ շատ
նշանաւոր դիրքով. պատմուճա-
նին ստորոտն կ'երեւի ճերմակ
մնացած, վերարկուն նեղ եւ
երկայն՝ մէկ թեւէն կախուած.
գլուխը սեւցուցեր են, վիզը



Թիւ 24

ձուած, թեւերն այլ գլխէն վեր
այնպիսի կերպով բարձրացու-
ցած, որ յուսահատութիւն եւ ող-
բալ երեւցընէ. միթէ Երեմիա՞
մարգարէ: Պատկերիս վերեւն այլ



Թիւ 25

երկու մեծ գլուխք կան սեւա-
նկարք՝ մին մօրուօք, միւսն՝ կլո-
րակ անմօրուա, բաւական ազդե-
ցիկ (Թիւ 25):

84. Նշանաւոր է եւ այս
պատկերս, որ ներկայացընէ իս-
րայիւացուց՝ յանապատին նուա-
ղիւն ծարաւով. Մովսէս կապոյտ
կանաչ զգեստուք եւ դեղին

լօղկաւ կ'երկընցընէ զգաւազանը
ի վէմն, որ ջնջուած է. ի ձախ
կողմն երկայնամօրուա աղաչաւոր
մի կայ դեղին վերարկուաւ.
յաջկողմն այլ՝ կէս դեղնագոյն եւ
այլ անգոյն ծարաւք՝ աղաչաւոր
ձեւօք. վարն այլ՝ ութ նոյն-
պիսիք, յորոց մին կանաչ գու-
նաւորած է, փոքր մօրուօք եւ
նայի դէպ ի Մովսէս՝ ի գիրկն
առած կիսանուաղ աղջիկը կամ
տղայն: Երեսին մէկ անկիւնում
այլ մեծկակ թեւի գծանկար մի
կայ:

85. Այս պատկերս այլ
նշանաւոր է. մէկ կողմում կան
տասնիւ չափ գլուխք արանց եւ
կանանց, որոց դիմաց չորս
ամբողջ կանգուն կերպարանք՝
պէսպէս գունաւորեալք. ասոնք
այլ աղաչաւոր թուին առ
կարմրագգեստ մէկ մի, որ կեցած
է ի միւս կողը եւ անոնց դարձած՝
լուսապսակ գլխովն. ձախ ձեւքը
վերուցած ցուցընէ բան մի, յա-
ջում՝ թուի նեղ գաւազան: Երե-
սին պարապ մասին վրայ յետոյ
մէկն Հարեւանցի եւ անարուեստ
գլուխ մի գծագրած է՝ թերեւ
նշանակելով վերելը դրած երկու
տողերը.

«Խաբեցա ի տես պատկերին
դէմ իգականին Եւ կապիալ գե-
րեցա ես տոռամբ նորին»:

86. Գունաւոր եւ նշանաւոր է
եւ այս. վերեւ յաջակողմն՝ Դա-
ւիթ՝ քնար ի ձեռին բազմած.

դիմացն՝ դեղնագգեստ ծնրադիր
ոմն, որոյ առջեւ Մառայքն
գրուած է, քովն այլ՝ ուրիշ մի
կանգուն կեցած. բայց առաջինն
թուի Ուռնա, վասն զի ներքեւն
նկարած է կալն. փոխանակ այս
բառիս գրուած է յարնէ, բայց
ոչ՝ Հին. աւելի Հին երեւի քովի
կարմրագիրն՝ Եզքն են, զի
երկու սեւականաչ եզինք կան ի
քառակուսի ոտքով արկղի նման
շինուածի մէջ, զոր շրջապատէ
մեծ դեղնագոյն բոլորակ մի:

87. Ասկէ առաջինին պատ-
շածի այս երեսս այլ, զի ներկա-
յացընէ Տապանակին փոխադրու-
թիւնը, զոր յայտնէ եւ գիրն՝
Տապանակն է. կառքն է.
սայլավար Հօտաղն նստած է,
երկուք այլ դիմացէն կ'երթան,
անոնց առջեւն՝ վայելչադէմ
մօրուանի ծեր մի՝ կապոյտ եւ
դեղին գոյներով զգեստաւորած.
աւելի առաջ՝ կապոյտ, կանաչ եւ
դեղին Հագած Դաւիթ՝ քնար ի
ձեռին եւ ոտքն ի կաքաւ, դէմքն
այլ գունաւորեալ, բայց խան-
գարած է:

88. Ետայի մարգարէն,
որոյ միայն գլուխն կ'երեւնայ,
վասն զի կու սղոցեն զայն,
մարմինը մեքենայի մէջ ծածկած,
մեծ քառակուսի շրջանակաւ
սղոցով երկու դահիճք՝ լաւ գծա-
գրեալք. Մանասէ թագաւորն՝
կարմրախառն զգեստով, կանա-
չով բարձր ծածկած աթոռի վրայ

նստած, իր անգլխովն զոհը կու դիտէ. բայց դէմքն գրեթէ բոլորովին մաշած է:

89. Մեծ բերանաբաց կէտ ձուկն՝ կապոյտ գունով, կարմիր գծերով. բայց բերնի եղածն յետոյ անարուեստ ծրագիր մ'է. դիմացը հինկէկ կարմրով գրած է Յունա՞ն է: Կայ մէկ անկեան մէջ գծագրեալ Յովնան մ'այլ՝ ձեռն ի ծնօտի՝ մտածելով. գլուխն վերջէն սեւագծելով այլայլած է: Ուրիշ յետոյ գծագրեալ անարուեստ ինչ այլ կայ:

90. Այս երեսիս ձախակողմը բռնէ երկայն պէսպէս բազմամանուած զարդ մի. յաջակողմն՝ վերեւը գրուածն նշանակէ՝ Փոտեմարտն Յակոբայ. զիրար գրկած երկու անձինք լուսապսակք, մէկուն մէջ խաչի նշմար կայ, որով գՔրիստոս նշանակել տայ հեղինակն:

91. Քառակերպեան աթոռի վրայ բազմած Փրկիչն՝ բիւզանդական կերպով, աջովն օրհնէ. ի ձախում՝ փոքր ծրար. զգեստը ներկեր են ի կապոյտ, լուսապսակին խաչաթեւքն՝ ի կարմիր: Ներքեւ՝ հակառակ դիրքով եւ նորագոյն գրչաւ, որ թուի զհինն այլայլած, կապոյտագգեստ թեւերը տարածած՝ փայտելու դիրքով մէկ մի, զոր հնածեւ գիրն յայտնէ՝ Երմիա:

92. Թուի ի վերնատան տաճարի կանգնած քահանա-

յապետ մի, որ կ'օրհնէ դիմացի երեսը սեւացուցած ձերուհին, որ ունի ի գրկին մանուկ մի, որոյ նրբագիծ դէմքն աղջկան թուի. քահանայապետն կարմիր հագած է, քովը՝ ուրիշ մի կանաչագգեստ, նոյնպէս մօրուանի:

93. Նման առաջնոյն. քահանայապետն տաճարի միջում է, դիմացը՝ թուի անելի Յովակիմ եւ Աննա, քան Յովսէփ եւ Մարիամ, որք կ'ընծայեն գառնուկ մի. մասամբ գունաւորեալ է պատկերս:

94. Կարմրագգեստ երկայնամօրուս եւ յետոյ գունաւորեալ քահանայապետ կ'օրհնէ ձեռաց տակ կանգնած կոյսը՝ վայելչապէս գծագրեալ եւ գունաւորեալ կապոյտ կանաչ գգեստուք. իսկ փեսային միայն գլուխն գունաւորուած է. չորս այլ նրբագիծ եւ վայելուչ անձինք կան. մէկն, որ ամբողջ գծագրուած է, զարմացական ձեռք վերուցեր է:

95. Տիրամօրն եւ Եղիսաբեթի ողջագուրանքն՝ բարակ գծագրութեամբ, անշուշտ յԱւետարանէ մի ընդօրինակուած:

96. Երեսին վարի կողմն ցուցընէ գՅովսէփ ի քուն, առ որ դայ հրեշտակն (գունաւորեալ)՝ յայտնել Մարեմայ յղովթեան սքանչելիքը. իսկ ի վերեւն թուի Յովսէփայ մտածելն արձակել

գնա: Սա, որ թուի ի դէմն կանգնած եւ բազկունքը հրաժարական ձեւով կանգնած, կիսամաշ դիմօք չերեւիր կոյս մի. գլխապատն եւ վերարկուն կապոյտ ներկած են:

97. Այս երեսիս մէջ այլեւայլ մասամբ ճարտարապէս բովանդակուած են՝ Քրիստոս ծնեալ եւ եղեալ ի մարի, Տիրամայրն կռթնած յանկողնի. աստղն ճառագայթածեւ. վերեւ՝ հրեշտակն անտաւոր եւ այլ հրեշտակք. հովիւքն, ներքեւ՝ երեք մոգքն, զորս կ'ընդունի Յովսէփ:

98. Քրիստոսի քառասնօրեայ զալուստն կամ բերուածն ի տաճարն. պատկերն ներկայացընէ Սիմէոն ձերուհու զարձնելն զՅիսուս առ մայրն, որ կարմիր եւ կապոյտ հագած է. ետեւը կանգնի ս. Յովսէփ. երկուքին միջոց՝ նոյնպէս լուսապսակ կին մի՝ թերեւս Աննա մարգարէուհին, բայց չէ պառաւ:

99. Այս երեսին մէջ տեղը գրաւողն աղիւսագոյն վայելչածեւ էչն է, վրայինն ոչ է հեծած, այլ՝ նստած, եւ ի հակառակ կողմ դարձած. դէմքն խանդարած ըլլալով՝ չի փարատեր մեր տարակոյսը, թէ արդեօք սրբազան եւ գերագոյն Անձին է, որ յԵրուսաղէմ կու մտնէ. նոյնպէս ձեռաց դիրքն այլ՝ մէկն՝ դէպ առաջ կարկառած, միւսն՝ ծընկին ներքեւ. զգեստներն՝ կարմիր: Քովսէփի երկար տա-

ճարի մի բարակ սիւներով պատ կ'երեւի. որուն դուռը կու բաղխէ կարմրագգեստ եւ բոկոտն բոկասրունգ պատանի մի. դիմացի կողմն (որ է իշուն գաւակին եւ նստողին դէմքին) ժայռերու նման կապոյտ բարձրութիւն կայ, որ կարծես թէ տաճարին ճակատը խափանէ. եւ անոր վրայ ելնել ուղող կարծուի մէկ տղայակերպ մի՝ խաչանիշ լուսապսակաւ, որչափ նշմարեմ. սա հեծած է յ'ուս հասակաւոր մարդու մի երկու ձեռքերն երկընցուցած, որպէս թէ ժայռը կ'ուզէ բռնել, կամ աչքերն կոյր են. միթէ Երիքովի՞ կոյրն:

100. Մկրտութիւն Քրիստոսի, զոր երկայն հասակաւ, ճակտին վրայ՝ Յովհաննու ձեռքն, գլխուն վերեւ՝ աղանակերպ Ս. Հոգին. ետեւը՝ հինգ հրեշտակք, որ մկրտուողին սրբուելիք կու բերեն. Յիսուս ժայռի մի վրայ կեցած է եւ կոխէ զգլուխ զայն պատող վիշապին, անոր մօտ այլ սատանայն պիտի ըլլայ, բայց ինչ ձեւով է՝ չորոշուի:

101. Կարմիր վերարկու մի վրան առած՝ մինակուկ կեցած է Յիսուս յանապատի. դիմացը՝ փորձիչն, ձեռք երկընցուցած, խօսի. վերը՝ ճանկաւոր ոտքով նոյն կամ ուրիշ փորձիչ մի՝ քար նետած է՝ իբր ըսելով առ Յիսուս. «Ասա՛, զի Հաց լինիցի այն քարն»: Ասոր դիմաց պարսպ

Թողուած է եղեր, ուր յետոյ մէկն Յիսուս մի ձեւացուցեր է անարուեստ: Պատկերին մէկ անկիւնը՝ Քրիստոսի ոտից մօտ, երկու կկգած խոզանման կենդանիք զծուած են:

102. Այս երեսի վրայ այլ նկարուած է վերոյգրեալ փորձանքն. Յիսուս, շուրջառի նման կարմիր լօղիկ մի առած ի վրայն, մէկ ձեռքով անոր փէշերը բռնէ, միւսով՝ պրակիկ մի. դիմացը շատ մի քարեր թափած է, աղաչաւորի կերպով կեցած, թասի ձեւով զլիսանոցով եւ կոկ հագուած



Թիւ 26

ծօրուանի սատանայն, որոյ ոտից կեռիքն եւ լեզուարձակ օձակերպ ցցուած ագին յայտնեն ինչ խայտառակ խաբեբայ հինաւորց

ըլլալը: Այս տեղ այլ Յիսուսի ոտից քով շնակերպ կենդանի մի կայ նստած:

Երեսին վարի կողմն ուրիշ տեսարան մի կայ՝ բաւական նուրբ զծած. առաքելոց նաւակօժիլն է, Պետրոսի՝ ի վերայ ալեաց երթալն եւ վախցած ատեն՝ Յիսուսի բռնելն զնա (Թիւ 26):

103. Հարսանիքն Կանայ սեղանի վրայ՝ շատ հաց, քանի մի բաժակք. բազմականք չեն երեւիր, այլ միայն՝ Յիսուս ի միջի, Տիրամայրն՝ աղաչաւոր ի քովն, միւս կողմն այլ՝ փաթթոցաւոր

կանաչազգեստ մէկ մի՝ գուցէ տաճարապետն կամ փեսայն. Տիրամօր կողմէն այլ՝ դռնէ մի կէս դուրս ելած ծառայ մի՝ վառած

ճրագ ի ձեռքն. վարի կողմ այլ նկարագծուած են վեց թակոյկքն, որոց մէկուն մէջ ջուր լեցընէ ոմն, միւս ոմն այլ բռնէ զթակոյկն (Թիւ 27):

104. Այլակերպուեթիւն Տեառն. Մովսէս եւ Եղիա՝ յաջմէ եւ յահեկէ, թմրած աշակերտքն՝ ի ստորոտ լերինն:

105. Ղազարու յարութիւնն, ինչպէս սովորաբար նկարուի յԱ-



Թիւ 27

ւետարանս, առ ոտս Յիսուսի միւսակ մէկ քոյրն կայ՝ պագնելով:

106. Յիսուսի մուտքն յԵրուսաղէմ. այս տեղ այլ նստած է Նա իշուն վրայ, բայց քովընտի. գունաւորեալ անձինք կան շուրջը, բայց շատ մաշուած, մանաւանդ՝ դէմքերն:

107. Յետին ընթրիքն. հինգ-վեց անձ միայն կ'երեսին. մէկ անձօրուս մի բարձր տեղ նստողի (որոյ դէմքն խանգարած է) գրկել կարծուի, անշուշտ Յովհաննէս՝ «որ անկաւ զլանջօքն Յիսուսի»:

108. Ունալուայն. առաքելոց ոմանք, գունաւորուած ըլլալով, դէմքերնին, որ բաւական բարակ զծագրուած են, խանգարուեր են. Յիսուսն՝ կանաչազգեստ, չափազանց նեղ եւ երկայն:

109. Յուզայի մատնութիւնն, Քրիստոսի (Որոյ դէմքն խանգարուած է ներկով) ըմբռնումն: Այս պատկերին զծագրութեան ոճն եւ դէմքերն կու տարբերին յայլոց. թուի յեւրոպական գրոց առնուած:

110. Խաչելութիւն. Յիսուս եւ խաչն կարմիր ներկած են, միայն Քրիստոսի գոգնոցն՝ կանաչ. նոյնպէս գունաւորեալ Տիրամայրն, որոյ քով գրուած է իր զգեստուց գունոց նկատմամբ. խաչին միւս կողմը կեցող եւ լացողն կանաչազգեստ՝ կի՞ն է, թէ՞ Յովհ. Աւետարանիչ:

111. Թաղումն Քրիստոսի. գունաւորելով խանգարուած է պատկերն. անձանց մէկուն անունն գրուած է Նիկիտաի-մոս:

112. Նոյնպէս ներկելով խանգարուած է այս պատկերս այլ, որ է Քրիստոսի էջքն ի դժոխս. քարայրի մէջ կեցած է՝

իրբեւ գետին չկոխելով, Աղամայ
ձեռքէն բռնած՝ ազատելու:
Գունոց խառնակութեան միջէն
կ'երեւին նրբագիծ գէմքեր:

113. Գարապ թողուած է այս
երեսս. յետոյ մէկն անշնորհք
մարդաձեւ մի գծեր է:

114. Կարմրագիծ Աւետումն.
Գաբրիէլ ցուցընէ առ Կոյսն
զՍուրբ Հոգին՝ «ի վերայ քո
եկեացէ» ըսելով: Այս պատկերս
այլ եւրոպական Հնարք է գգես-
տուց ծալքն շատ լաւ նկարած:

115. Չորս Աւետարանիչք՝
իրենց նշանակներով. Մատթէոսի
Հրեշտակն իրեն կլոր բան մի
ներկայացընէ. Յովհաննու քով

կայ եւ Գրոխորոն, երկուքին մի-
շոց՝ արծիւն:

116. Գարապ թողուած:

117. Չորս կլորակք՝ կանաչ
եւ կարմիր բազմամանուած զար-
դուք: Վերեւն՝ երկու կարմրագիծ
կենդանիք՝ մէկն՝ եզանման, բայց
երկայնացուով. միւսոյն միայն
երկայն եղջիւրները կ'երեւին եւ
յայտնեն զայն:

118. Կանաչ ու կարմիր
գոյներով երկայն տափակ զարդ
մի՝ թռչնովք, բարակ (որսի)
չուներով եւ վիշապով ճարտա-
րապէս բաղադրած: Այս վերջին
երեսին ներքեւ գրուած է Դեղոց
խրատն¹:

¹ Տե՛ս «Գանձասար», Գ էջ 330: